

ԼԵՎՈՆ Ղ. ՇԻՐԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՒՄ
(XX-XXI դդ.)

9(47.925)

Զ - 64

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
Քաղաքական հետազոտությունների բաժին

h

Լևոն Ղ. Շիրինյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎԱՔԱՆԱԲԱՎԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԱՓՈՒՄՆԵՐՈՒՄ
(XX-XXI դդ.)

6592



ԵՐԵՎԱՆ

ՀԵՆՐԱԿԱՅՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2020

ՀՏԴ 94(479.25):32
ԳՄԴ 63.3(52)+66.0
Շ 646

Հրատարակության է ներկայացրել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, ազգությունների և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժինը

Խմբագիր՝ Քոչարյան Տ. Տ., քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝ Մուքիսյան Հ. Հ., քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օրդուխանյան Է. Հ., քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրինյան Լևոն

Շ 646 Հայաստանը իրավաքաղաքական իրողությունների չափումներում (XX-XXI դդ.) / Լ. Շիրինյան. - Եր.: Հեղ. հրատ., 2020 - 448 էջ:

Շիրինյան Լևոն Ղ., Հայաստանը իրավաքաղաքական իրողությունների չափումներում (XX-XXI դդ.): - Աշխատանքում ուսումնասիրվում են, որոշակի ռազմավարական նկատառումով և քաղաքական որոշակի դիրքորոշումով, հայկական հարցի «ճգնաժամային զարգացումը» Հայաստանի և հայ ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանում՝ 1915-1921թթ.: Այդ շրջանի վերաբերյալ ստեղծվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, իրավաքաղաքական վերլուծություններ, սակայն, ինչ-ինչ պատճառներով, հազվադեպ աշխատանքներ են, որ արտացոլել են Հայաստանի և բովանդակ հայության ազգային շահերը: Ժողովածուում ներկայացված աշխատանքները հեղինակի տասնյակ տարիների հետազոտությունների արդյունքն են, որոնց շրջագծի մեջ էլ նպատակահարմար գտնվեց երեք աշխատանք՝ Յու. Բարսեղովից և Վ. Նավասարդյանից ընդգրկել առաջադրվող հայեցակարգի մեջ:

Նախատեսված է, առաջին հերթին, հայկական հարցի զարգացման պատմաքաղաքական ու քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների, քաղաքական գործիչների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 949(479.25):32
ԳՄԴ 63.3(52)+66.0

ISBN 978-9939-0-3464-5

© Շիրինյան Լևոն, 2020

Գիրքը տպագրվում է Լուս Անջելեսից պարոն Լևոն Թորոսի և ընկերների ֆինանսական աջակցությամբ:

The book is published with the financial support of Mr. Levon Toros and Friends from Los Angeles.

Книга издана при финансовой поддержке г-на Левона Тороса и друзей из Лос-Анджелеса.

Հանգամանքների բերումով հայոց հարցը իր զարգացման ընթացքում՝ Սան Ստեֆանոյից և Բեռլինի կոնգրեսից սկսած մինչև Լոզան, ենթարկվեց շրջադարձային փոխակերպումների, որի ընթացքում արձանագրվեցին ինչպես հաջողություններ, նաև տեղի ունեցավ մեծ աղետը հայոց ցեղասպանությունը, ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը, որը երկու տարվա ընթացքում առնականացավ, տարածապես ընդարձակվեց շուրջ վեց անգամ, ունեցավ մշակութային խոյանք, բայց նաև արտաքին ագրեսիայի ու ներքին դավաճանության արդյունքով օկուպացվեց: Այս ողջ ընթացքում կնքվեցին տարբեր պայմանագրեր, միջազգային համաձայնագրեր, որոնք ունեն որոշ մասով պատմական, իսկ նաև զգալիպես արդիական հնչեղություն: Այդ շարքի մեջ դարակազմիկ նշանակություն ունի 1915թ. Մայիսի 24-ի Անտանտի գլխավոր դաշնակից երեք երկրների՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, համատեղ հայտարարությւնը, որտեղ առաջին անգամ Բեռլինի կոնգրեսից սկսած Հայաստանը դիտվեց հայ ժողովրդի սեփականություն, իսկ թուրքական ոճիրը որպես հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ: Այդ միտումը իր արատացումը գտավ հետագայում Սևրի դաշնագրում և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռում: Հայտնի է, որ 1920թ. թուրք-ռուսական ագրեսիան ամփոփվեց Ալեքսանդրապոլի դաշնագրում, երբ Ռուսաստանի սեպարատ գործողության արդյունքում կնքվեց նաև 1920թ. Դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը, որը հայտնի է նաև Դրո-Լեգրան պայմանագիր անունով: Մասնավորապես «սովետականացման» այս պայմանագրում Ռուսաստանը «նոր» Հայաստանի հանդեպ վերցնում էր կոնկրետ հանձնառություններ, որի մեջ առաջին պլանում էր հանրապետության որոշակի տարածքի ընդգրկվածությունը (կոնկրետ՝ Երևանի նահանգն ամբողջապես): Այսպիսով, կարծես թե, մեկընդմիջտ վերջ էր դրվում մինչ այդ խնդրի վերածված Առաջին հանրապետության Նախիջևան-Շարուր տարածաշրջանի հարցին, Սուրմալուի գավառին և այլն: Մակայն, ինչպես ցույց տվեցին հետագա ռուս-թուրքական խարդավանքների ներքին պայմանավորվածությունները, 1921թ. Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանի Հայաստանի հանդեպ ստանձնած

պարտավորությունների դավաճանումով՝ Նախիջևան-Շարուրը որոշակի հատվածով որպես խնամակալություն փոխանցվեց Ադրբեջանի թյուրքական միավորին, որն էլ այնուհետև, շատ չնչին կյուրնասով, ամրագրվեց 1921թ. Կարսի (հոկտեմբեր 13-ի) դաշնագրով:

Ժողովածուն իր մեջ ամփոփում է որպես հազվագյուտ բացառություն նաև Յուրի Բարսեղովի, Վահան Նավասարդյանի մինչև օրս չգերազանցված բարձրորակ և բարձրարժեք հետազոտությունները:

1. Նկատի ունենալով բախտորոշ պայմանագրերի այն փունջը, որոնց հարյուրամյա տարելիցը լրանում է 1920-21 թթ. և որոնց իրավաբաղաքական լիցքը որոշակի կենդանի նյութ է պարունակում, որոշեցինք ստեղծել Վիլսոնի իրավարար վճռի, Ալեքսանդրապոլի դաշնագրի, Երևանի համաձայնության և, իր վերջո, Նախիջևանի երկրառագմավարական հանգուցային խնդրին ու իրավաբաղաքական արժևորմանը նվիրված աշխատանքների սույն ժողովածուն: Մրանց ենթատեքստում որոշակի լուսաբանում է ստանում նաև 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի դաշնագիրն ու նրա շրջանակներում Նախիջևանի խնամալակության (պրոտեկտորատ) հիմնախնդիրը (երկրաբաղաքական հանգույցի հարցը):

2. Պաշտպանելով այն տեսակետը, որ հայոց հարցը՝ որպես համաշխարհային քաղաքականության և համամարդկային քաղաքակրթության օրակարգային հարց է, ժողովածուի մեջ ընդգրկեցինք նաև դեպի Հայաստանի երկրաբաղաքական ու քաղաքակրթական վերակազմություն տանող որոշակի ուսումնասիրություններ՝ Արմենոցիսին ու Առաջին աշխարհամարտին նվիրված հետազոտություններ, որոնք ոչ միայն ներկայացնում են հիմնախնդիրների պատմական տեսանկյունները՝ նորագույն պատմափիլիսոփայական, քաղաքական փիլիսոփայության իմաստավորումով, այլև շատ կոնկրետ առաջարկաների համախումբ:

3. Ժողովածուի մեջ ընդգրկեցինք նաև հայոց «ճգնաժամային զարգացման» շրջանին վերաբերող հայ քաղաքական շրջանակների ընկալումների և մտային վերաբերմունքի որոշակի աշխատանք, որն, ըստ էության, մինչև օրս անհայտ է կամ շատ քիչ ծանոթ հայ և օտար հետազոտողներին և քաղաքական շերտերին:

Միով բանիվ՝ հետազոտական աշխատանքների՝ Վահան Լավասարյանի և Յուրի Բարսեղովի տեսավերլուծական աշխատանքների ընտրանին ունի ներքին անբակտելի կապ ու շատ որոշակի կառուցվածք: Երանք կազմում են մի ներդաշնակ ամբողջություն՝ ժողովածուին հաղորդելով որոշակի ներքին լիցք ու ռամվավարություն հայոց հարցի վերջնական լուծման գերբարդ և անհայտներով լի ճանապարհին:

Լևոն Ղ. Շիրինյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I 8

1. Անտանտի երեք գլխավոր դաշնակից տերությունների հայտարարությունը 8
2. Համաձայնագիր ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանում իշխանությունը Ռազմա-հեղափոխական կոմիտեին հանձնելու պայմանների մասին (Դրո-Լեզրան համաձայնագիր կամ Երևանի պայմանագիր) 9
3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը իշխանությունից հրաժարվելու և այն Ջորաբանակի ընդհանուր հրամանատարին հանձնելու մասին 11
4. Լավասարյան Վահան. Ո՞վ է հեղինակը Ալեքսանդրապոլի Դաշնագրի 12
5. Լավասարյան Վահան. Բուլնիզմը Նախիջևանի հարցին մեջ 67
6. Բարսեղով Յուրի Գ. ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի արբիտրաժային որոշումը 101
7. Շիրինյան Լևոն. Արևմուտքի անկումը (Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ձախողումը) 128

ՄԱՍ II 148

1. Շիրինյան Լևոն. 1918. Բոցկլտացող Հայաստանը և Աշխարհամարտը վերջնափուլում (Հայ զինական ուժը իր կերպի մեջ) 148
2. Շիրինյան Լևոն. Արմենցիդ. թուրքական էթնոֆորիան և հայոց ցեղասպանությունը 194
3. Շիրինյան Լևոն. Ռուբեն. Հայաստանի վերակազմության ռազմավարությունը 225
4. Շիրինյան Լևոն. Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը Հանթինգթոնի հիպոթեզի ոսպնյակում (հայեցակարգի քննական ուրվագիծ) 253

ՄԱՍ III 274

1. Դարբինյան Ռուբեն. Հայ քաղաքական մտքի դեգերումները 274

ՄԱՍ I

[Անտանտի երեք գլխավոր դաշնակից տերությունների հայտարարությունը]*

Հրատապ

Փարիզ, 24-ը մայիսի 1915թ.
[նաև Լոնդոն, Մանկտ-Պետերբուրգ]

Գրեթե մեկ ամսից ի վեր Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողությունյամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել և. տ. ապրիլի կեսերին Էրզրումում, Դերջունում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեթունում և համայն Կիլիկիայում: Վանի շրջակայքում գտնվող հարյուրի հասնող գյուղերի բնակիչներն ամբողջությամբ սպանվել են: Բուն քաղաքում հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հետ:

Սարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում:

* Պեղեքյան Արթուր, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հտ. 1, Փաստաթղթերի ժողովածու, թարգմ. ֆր., Եր., 2005, էջ 99:

Համաձայնագիր*

ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանում իշխանությունը Ռազմա-հեղափոխական կոմիտեին հանձնելու պայմանների մասին

(Դրո-Լեզրան համաձայնագիր կամ Երևանի պայմանագիր)

2 դեկտեմբերի 1920թ.

1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Հանրապետություն:

2. Մինչև Հայաստանի Խորհուրդների համագումարի գումարումը կազմավորվում է ժամանակավոր Ռազմա-հեղափոխական կոմիտե, որին անցնում է բովանդակ ողջ իշխանությունը Հայաստանում:

3. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ճանաչում է, որ Հայաստանի ԽՍՀ տարածքի կազմի մեջ անվիճելիորեն մտնում են Երևանի նահանգը՝ իր կազմի մեջ մտնող բոլոր գավառներով, Կարսի մարզի մի մասը, որն ապահովում է նրա համար ռազմական առումով Ջաջուռ կայարան – Արաքս կայարան երկաթուղագծի տիրապետումը, Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառը, նույն նահանգի Ղազախի գավառի մի մասը՝ օգոստոսի 10-ի Համաձայնագրի սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք գտնվում էին Հայաստանի տիրապետության տակ մինչև 1920թ. հոկտեմբերի 28-ը:

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը որևէ պատասխանատվության չի ենթարկվում գործողությունների համար, որ կատարվել են բանակի շարքերում մինչև Խորհրդային իշխանության հռչակումը Հայաստանում:

5. Դաշնակցություն կուսակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների ս. թ. անդամները ոչ մի ռեպրեսիաների չեն ենթարկվի կուսակցական պատկանելության համար:

* Արտասահմանյան պետությունների հետ ՌԽՖՍՀ կնքած գործող պայմանագրերի, համաձայնությունների և կոնվենցիաների ժողովածու, Պրակ 3, Մ., 1922, No 79, էջ 14-15 (ռուս.):

6. Ռազմա-հեղափոխական կոմիտեի կազմի մեջ մտնում են՝ 5 անդամներ, Կոմունիստական կուսակցության նշանակմամբ և ձախ դաշնակցականների խմբից 2 անդամ, կոմունիստների կուսակցության հետ համաձայնեցմամբ:

7. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ռազմական ուժերի անհապաղ կենտրոնացման ուղղությամբ, որ անհրաժեշտ են Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անկախության պաշտպանության համար:

8. Մույն համաձայնության ստորագրմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հեռացվում է իշխանությունից. իշխանությունը ժամանակավորապես մինչև Հեղկոմի ժամանումը, անցնում է ժամանակավոր հրամանատարությանը, որի գլխավոր դառնում է ընկ. Դրոն: Հայաստանի ժամանակավոր հրամանատարությանն առընթեր ՌԽՖՍՀ կոմիսար է նշանակվում ընկ. Միլինը:

Պատրաստված է երկու օրինակից:

ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ԼԵԳՐԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության

լիազորմամբ ԴԻՈ, ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշումը իշխանությունից հրաժարվելու և այն Ջորաբանակի
ընդհանուր հրամանատարին հանձնելու մասին*

2 դեկտեմբերի 1920թ.

Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր 1920թ. դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական ու քաղաքացիական բովանդակ իշխանությունը գորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ս. ՎՐԱՅՅԱՆ

Նախարարներ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ, Ա. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ, Հ.

ՏԵՐՏԵՐՅԱՆ, Դ. ԿԱՆԱՅԱՆ

* ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 4: Տպագիր օրինակ:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ
Ո՞Վ Է ՀԵՂԵՆԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍԻ ԴԱՇՆԱԳՐԻ

Ա.

Թուրքիոյ տեղը առաջին մեծ պատերազմի պատճառներու մեջ.- Պարսկաստանի երկայնությունը.- Սևր.- Լենին և Քեմալ.- 1920 նոյ. 29.- Ձեռքի պայքարը «թուրքե բաժանում»-ներու դեմ.- Ռուսիոյ բոլորակալութեան աջակցությունը Թուրքիոյ.- Սթալինի 1920 նոյ. 6-ի զեկուցումը.- Լենինի և Սթալինի հրահանգը Շահումյանի.- Պ. Միլլուկովի և «Մ.Խ.Հանրագիտակ»-ի վկայությունները.- 1920 ապր. 15-ի թուրքական կառավարչութեան համաձայնագիրը.- Գարապէթիի նամակը.- Քեմալի հայտարարությունը.- Մայիսի խառնություններու իմաստը.- Մ. Պավլովիչի վկայությունը.- Երկրի «Կոչ»-երը.- Նայիմ Ճևատ, Քեմալ և Գարապէթի.- Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան.- 1920 օգոստ. 10-ի համաձայնությունը:

. . .

1920 սեպտ. 23-ին սկսած վերջին թուրքական պատերազմը, որ վերջացավ 1920 դեկտ. 2-ի Ալեքսանդրապոլի դաշնագրով:

Գեթ հարևանի ակնարկով մը կուզենք պարզել, թե ի՞նչ ձևով և ի՞նչ պայմաններու տակ ստորագրվեցավ այդ դաշնագիրը:

Կուզենք մասնավորաբար ճշտել մասնակցության այն բաժինը, որ այդ պատերազմին մեջ ունեցավ Խորհրդային Ռուսաստանը:

Գիտենք, անշուշտ, որ հարցի սպառնիչ լուսաբանումը վերապահված է ապագային, երբ Մոսկվայի և Էնկյուրիի դիվանագիտական գոց դարակները կրացվին և հրատարակության կտրվին 1920 թվի պատերազմին հետ կապ ունեցող բոլոր գաղտնի փաստաթուղթերը:

Գիտենք նաև, որ մեզ կպակսին անգամ այն ժլատ աղբյուրները, որ Ռուսիոյ և Հայաստանի մեջ հրատարակված են արդեն:

Իր գիրքին մեջ անդրադառնալով թուրք-հայկական պատերազմին Հայաստանի վարչապետներէն Ալ. Խատիսյան կգրէր.

«1920 օգոստոսի կեսին Հայաստանի վրա սկսան կուտակվիլ ամպեր. թե՛ հյուսիսէն և թե՛ հարավէն կառաջանային մեր

թշնամիները. հարավէն՝ քեմալական թուրքերը, իսկ հյուսիսէն՝ բոլշևիկները, որոնք որոշած էին ամեն գնով խորհրդայնացնել Հայաստանը, այսինքն՝ կցել Ռուսիոյ: Վաղուց ի վեր պատրաստվող ռուս-թրքական, կամ, ավելի ճիշտը՝ քեմալական-բոլշևիկյան համաձայնությունը սկսած էր տալ իր գործնական պտուղները:

Հայաստանի Հանրապետության պատմության մեջ այս վայրկյանը շատ կարևոր է և անոր վրա պետք է ավելի երկար կանգ առնել: Այս խնդրի շուրջը ստեղծված են շատ առասպելներ և շատ բան է գրված, բայց վերջին խոսքը դեռ չէ ըսված, որովհետև այդ շրջանի վերաբերյալ դիվանագիտական պատմությունը չէ հրատարակված ոչ թուրքերու և ոչ ալ ռուսերու կողմէն: Երբ կհրատարակվի, մենք կիմանանք, անշուշտ, շատ դառն ճշմարտություններ և ցնդված կտեսնենք շատ հեքիաթներ բոլշևիկներու «փրկարար» դերի մասին» (Ալ. Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», 1930, Աթենք, էջ 218-219):

Այդ «դեր»-ին սպառնիչ պարզաբանումը ձգելով հանդերձ ապագային, այսօր իսկ, այնուամենայնիվ, ավելորդ չենք նկատեր քանի մը խոսք ըսել:

Առաջին համաշխարհային պատերազմը երկու մեծ հեղափոխությամբ ցնցեց Ռուսիան, և այս երկիրը պատերազմէն ելավ վերջնապէս ջախջախված:

Քիչ մը ավելի ուշ՝ պատերազմէն պարտված ելավ նաև Թուրքիան:

Երկու դարավոր ռոտխներ՝ Ռուսիա և Թուրքիա, որոնք պատերազմի մտած էին իբրև թշնամիներ, պատերազմի վախճանին դարձան բարեկամներ:

Պարտությունը սերտ բարեկամությամբ զոդեց երկու պարտված երկիրները՝ անոնց երկուքին ալ նույն քաղաքականությունը պարտադրելով:

«Մլավ քաղաքականության կնճիռը» խորագրով իր ուշագրավ աշխատության մեջ, խոսելով առաջին մեծ պատերազմի մասին, Չեխոսլովաքիո նախկին նախագահը Էտուարտ Պենեշ կնկատէր.

«Համաշխարհային պատերազմը ծագեցավ ամենէն առաջ անպահելի քայքայումովը թրքական կայսրության» («Վ. Ռուսիի», 1926, Փրակա, թիվ 10, էջ 84):

Եվ ճիշտ էր Պենեշ: Ապացույց – պատերազմին վախճանը: Առավելաբար թրքական ծավալուն կայսրության հաշվեհարդարով վերջացավ այդ պատերազմը:

Մերը հիմնովին նոր կացություն կատեղծեր բովանդակ Մերձավոր և Միջին Արևելքի մեջ:

Կատեղծեր նախ Թուրքիոն և ապա Ռուսիոն համար, որ պատմականորեն, իբրև բնական հետևանք իր դարավոր ծավալումին դեպի հարավ, զի՛նք տերը կնկատեր «քայքայվող» Թուրքիոն:

Մերը այս հնարավորություններեն կգրկեր Ռուսիան՝ անոր ծավալումին առջև պատնեշներ ցցելով:

Մինչև պատերազմը շահերով բաժան Ռուսիա և Թուրքիա, պատերազմի վախճանին, մանավանդ Մերի դաշնագրեն հետո, շահերով նույնացան:

Մոսկվա և Էնկյուրի ձեռք-ձեռքի պայքարի մտան Մերի դեմ: Հայաստանի կործանումը դարձավ քաղաքական առաջնահերթ առաջադրանքը թե՛ Մոսկվայի և թե՛ Էնկյուրիի համար:

Պատերազմի մեջ պարտվելով՝ թուրք վարիչները ծպտյալ վիճակի մեջ անմիջապես անցան Պերլին և հոնկե՛ Ռատեքի միջոցով կապվեցան Մոսկվայի:

Շատ չանցած՝ երիտասարդ թուրքերու բուն կեղրոնը դարձավ Մոսկվան, ուր խմբվեցան Էնվեր, տոքթ. Նազըմ, Ճեմալ փաշա և ուրիշներ:

Լենինի հատուկ կարգադրությամբ, Էնվերի անձին ապահովությանը համար իբրև հսկիչ և պատասխանատու կարգվեցավ հայազգի Քարախան, և առ այդ, նույն Լենինի հրահանգով, Էնվեր հաստատվեցավ Քարախանի բնակարանին մեջ:

Նույն ձևի գգուշություններ առնված էին նաև մյուս ջարդարարներուն համար, որոնք եղբայրացած էին Ռուսիոն վարիչներուն – երեկ՝ Ճեմալ, իսկ այսօր՝ կարմիր – միշտ նույն հայ ժողովուրդի և Հայաստանի դեմ:

Չուր չէին այդ գգուշությունները. ջարդարարներեն քանի մը հոգի հոս ու հոն գետին փոխված էին արդեն.– Մայիս Հալիմ փաշա Հոմի մեջ (1921 դեկտ. 6-ին), Թալեաթ՝ Պերլինի մեջ (1921 մարտ 15-ին), Ճիվանշիր՝ Պոլսո մեջ (1921 հուլիս 19-ին), Պեհաետտին Շաքիր և Ճեմալ Ազմի՝ Պերլինի մեջ (1922 ապր. 17-ին), իսկ Ճեմալ փաշա, իր գույզ սուրհանդակներով, բուն իսկ Թիֆլիսի մեջ, ամենեն բանուկ

փողոցին վրա (Մեծն Պետրոսի), Չեկայի շենքին առջև (1922 հուլիս 25-ին):

Լենին խնամքով իր գործակիցները կպահեր, անոնց հետ զինակցաբար «սոցիալիզմի շենքը» կառուցանելու համար Հայաստանի փլատակներուն վրա...

Այս նույն բարեկամությունը հաստատվեցավ նաև այն թուրքերու հետ, որոնք, գլխավորությամբ Քեմալի – 1917-ին թրքական 2-րդ բանակի հրամանատարը Կովկասյան ճակատի վրա – բուն Թուրքիոն մեջ արդեն կկազմակերպեին ուժերը Հայաստանի դեմ:

Այդ շրջանի մասին խոսելով՝ համայնավար գործոն դեմքերեն Մ. Փավլովիչ կգրեր.

«Համակրանքները դեպի բոլշևիկները այնքան ընդհանրացած են Թուրքիոն մեջ, որ անգամ ունևոր դասակարգերու ներկայացուցիչները չեն քաշվիր բաց կերպով իրենց հիացումը հայտնելու ռուս բոլշևիկներու կեցվածքին հանդեպ:

Բոլշևիկներու գործելու կերպը, անոնց անհաշտ և հաղթական պայքարը Անթանթի դեմ՝ վստահություն կներշնչե բոլոր թուրքերուն այն մասին, թե նույն ձևի հերոսական պայքար մղելով Անթանթի դեմ՝ իրենք ևս պիտի հաջողին տիրանալ իրենց երկրի անկախության» («Կրասնայա Նով», Մոսկվա, 1921, թիվ 1, էջ 220-221):

«Բոլշևիկները – մեր վերջին կովանն են», – վկայությամբ Փավլովիչի, 1919-20 թվականներուն կըսեին բոլոր թուրքերը, անհամբերությամբ անոնց գալուն սպասելով...

Իսկ Քեմալի կենսագիրը, Ա. Միլլեր, խոսելով Ազգային Մեծ ժողովի բացումի մասին Էնկյուրիի մեջ, 1920 ապր. 23-ին, «Մեծ խորհրդային հանրազիտարանի» մեջ, կգրեր.

«Այդ ժողովի առաջին քաղաքական աքթերեն մեկը եղավ Քեմալի 1920 ապր. 26 թվակիր նամակը, ուղղված Մոսկվա, Խորհրդային կառավարության, ուր անոր հեղինակը կառաջարկեր մնայուն հարաբերություններ հաստատել, և կլիսողրեր գորավիզ ըլլալ Թուրքիոն պայքարին օտարերկրյա միջամտության (intervention) դեմ: Մոսկվայեն դրական պատասխան առնելով՝ 1920 նոյ. 29 հեռագրով Քեմալ կհաստատեր իր համամտությունը երկուստեք դեսպանական և հյուպատոսային ներկայացուցիչներ կարգելու մասին, միաժամանակ մատնանշելով այն «խանդավառ զգացումը», որ թուրք ժողովուրդը կտածե դեպի ռուս երկիրը, որուն ժողովուրդը չգոհացավ միայն իր սեփական շղթաները կործանելով, այլև երկրորդ տարին է

ահա, ինչ անօրինակ պայքար կմղե ի խնդիր համայն աշխարհի փրկության» (Ա. Միլլեր, «Քեմալ».- «Մ. Խ. հանրագիտարան», հ. 32-րդ, Մոսկվա, 1936, էջ 165):

Թվականը – 1920 նոյ. 29 – մե՛նք ընդօժեցինք:

Ճիշտ նույն օրը – նոյ. 29-ին – Քարվանսարայի (Իջևան) մեջ, Պաքվեն դեպի Երևան մեկնող Հայաստանի անդրանիկ Հեղկոմը, Կարմիր Մոսկվայի այս տիպար գործակալներու շքախումբը կհոչակեր Հայաստանի «խորհրդայնացումը» (այլ խոսքով՝ մեր երկրի վերստին կցումը Ռուսիո), միաժամանակ իր «Հայտարարագիր»-ի մեջ Քեմալը ողջունելով և անոր իր գործակցությունը առաջարկելով Սևրի դեմ:

Ուշագրավ... «գուգադիպություն»:

1920 նոյ. 29-ին, երբ ձևապես Սևրը կգերեզմանվեր և փաստորեն մեր երկրի անկախությունը կոչնչացվեր, այդ նույն օրը, ի նշան ցնծության, Քեմալ Լենինի կառաջարկեր դիվանագիտական ներկայացուցիչներով փոխանակումներ կատարել...

1920 նոյ. 29 Մոսկվայի առաջին ծառայությունը չէր Քեմալին:

Բուլշևիկները իշխանության գալով՝ բարեկամության լավագույն ապացույցը արդեն տված էին Թուրքիո, 1917 նոյեմ. 24-ի դեկրետով չեղյալ հոչակելով «Թուրքիո բաժանման և իրմե Հայաստանը «խլելու» մասին եղած դաշինքը»:

Մակայն միայն հայտարարելը բավական չէր. Թուրքիան բաժանումե փրկելու համար նաև պայքարի լ պետք էր.

«Թուղթե բաժանում»-ները, – պաշտոնապես կնկատեր Քրեմլը, – նոր հանգրվանի մը մեջ մտան, սպասելով այն պահին, երբ հեղափոխական փոթորիկները Արևելքի մեջ կարելի պիտի դարձնեին դաշինքներու վերանայման սպառնալիքը գեների ուժով» («Ասիական Թուրքիո բաժանումը» – Հրատ. Խորհրդային Արտ. գործոց գործավարության, 1924, Մոսկվա, էջ 101):

Ռուսաստանը և ո՛չ մեկ գոհողության առջև կանգ առավ՝ գենքով Թուրքիո հետ այս պայքարը մղելու համար, մասնավորաբար Սևրի դաշնագրին դեմ:

Մոսկվա իր ամենեն փայլուն զինվորականը՝ գոր. Ֆրունզե՝ Թուրքիա դրկեց թրքական զինական ուժերը կազմակերպելու համար:

Մոսկվա լայնորեն ոսկի և ռազմամթերք տրամադրեց իր նոր զինակցին.

«Խորհրդային Միությունը բացառիկ օգնություն ցույց տվեց Թուրքիային, – երկրորդ մեծ պատերազմի նախասեմին կնկատեր «Մ. Հայաստան», – արդյունաբերական շինարարության ասպարիզում՝ խորհրդային ինժեներների ձեռքով խորհրդային նյութերից, խորհրդային վարկի հաշվին առաջնակարգ տեքստիլ կոմբինատների շինարարությունը Կեսարիայում ու Նազիլում, տեխնիկական կադրերի պատրաստումը և այլն» (Դ. Չավրին, «Թուրքիայի միջազգային դրությունը».- «Մ. Հայաստան», 10 հունիս 1939):

Մոսկվա հեղափոխական հոչակեց Քեմալը անգամ կարմիր, համայնավար գույն տալով քեմալական շարժման...

Ամեն կերպ Ռուսիա կաջակցեր Թուրքիո՝ գայն ոտքի կեցնելու համար.

«Անցյալին Խորհրդային Ռուսիա, – արևելյան ժողովուրդներու Պաքվի համաժողովին մեջ կհայտարարեր Ռատեք, – պաշարված էր թշնամիներե, սակայն այժմ ան այնքան գեևք կատրադրե, որ կրնա զինել և՛ հնդիկները, և՛ պարսիկ ռանչպարները, և՛ Անատոլուի գյուղացիները, կրնա զինել բոլոր կեղեքվածները՝ զանոնք միասնական հաղթանակի առաջնորդելու համար» («Արևելքի ժողովուրդներու առաջին համաժողովը», 1920, Մոսկվա, էջ 68-69):

Այս ցանկին մեջ էականը «Անատոլուի գյուղացիներն» են, որոնք իսկապես որ առատաբար կզինվեին խորհրդային գեևքերով:

Յուրաքանչյուր նոր գեևք, որ կավելնար թուրք բանակի ռազմամթերքին վրա, ցնծություն կպատճառեր Մոսկվայի:

Անօրինակ շնականությամբ մը, Պաքվի համաժողովի կազմակերպիչներեն Մ. Փավլովիչ կգրեր.

«Դաշնակ Հայաստանի դեմ մղված պատերազմը, Կարսի, Արտահանի և Ալեքսանդրապոլի գրավումը և հայկական բանակի ջախջախումը՝ Քյազիմ Գարապեքիի գորքերուն հնարավորություն տվին տիրանալու ռազմամթերքի հսկա պահեստներու, հարյուրավոր թնդանոթներու, զնդացիքներու, տասնյակ հազարավոր հրացաններու և մեծ քանակությամբ ռումբերու և փամփուշտներու, որոնցմով Դաշնակիցները լայնորեն զինած էին դաշնակցական կառավարությունը՝ Կովկասեն հարձակում նախապատրաստելով Խորհրդային Ռուսիո դեմ:

Այժմ Քյազիմ Գարապեքիի բանակը, – ցնծությամբ կավետեր հայ ժողովուրդի դահիճներեն այս վատը, – անկասկած թրքական ազգային բանակի ամենեն լավ զինված և թեքնիքորեն

2659

ամենն լավ սարքավորված մասն է, թեև իր գրաված ռազմավթերքներեն որոշ քանակ մը Քյազիմ Գարապեթի դրկած էր Քեմալի» (Մ. Փավլովիչ, «Քեմալական շարժումը Թուրքիո մեջ».- «Կրասնայա Նով», Մոսկվա, 1924, թիվ 1, էջ 223-224):

Անվերապահորեն այսքան ջերմ և բարեկամական էին հարաբերությունները Ռուսիո և քեմալական Թուրքիո միջև:

Ամբողջ երեք տարի, 1917 նոյ.-են մինչև 1920 դեկտ. 2, մինչև Հայաստանի կործանումը, ամեն կերպ Թուրքիո աջակցելով և գայն ոտքի կեցնելով, Մթալին, խոսելով ռազմա-քաղաքական այս մեծ վաստակի մասին Պաքվի Խորհուրդի 1920 նոյ. 6-ի հանդիսավոր նիստին, կհայտարարեր.

«Եթե երեք տարի առաջ կեղեքված Արևելքի երկիրներու մեջ մենք միայն անտարբերության կհանդիպեինք հեղափոխության հանդեպ, այժմ կտեսնենք, որ կիսրտի Արևելքը, և մենք Արևելքի մեջ վկա ենք շարք մը ազատագրական շարժումներու, ուղղված Անթանթի, ուղղված աշխարհակալության դեմ: Մենք այժմ Արևելքի մեջ, հանձին Քեմալի կառավարության, ունինք հեղափոխական բջջամիջուկ մը, որ իր շուրջ կխմրե բոլոր մնացյալ գաղութներն ու կես-գաղութները. այդ կառավարությունը, ճիշտ է, պուրժուական հեղափոխական է, սակայն ստույգ է, որ ան զեն ի ձեռին կկռվի Անթանթի դեմ:

Եթե երեք տարի առաջ երազել իսկ չէինք հանդգներ, թե Արևելքը կշարժի, այսօր մենք, հանձին պուրժուական-հեղափոխական Թուրքիո, ոչ միայն Արևելքի հեղափոխական բջջամիջուկը ունինք, այլև մեր ձեռքերու մեջ ունինք Արևելքի ընկերվար օրգանը «Գործողությանը և քարոզչության կոմիտեն»*:

Այս բոլոր փաստերը կուգան վկայելու, թե մենք հեղափոխական մարզի մեջ որքա և չքավոր էինք երեք տարի առաջ և որքա և հարստացած ենք երեք տարի վերջ. այս բոլոր փաստերը մեզի իրավունք կուտան պնդելու, որ Խորհրդային Ռուսիան պիտի ապրի,

* Այս «Կոմիտեն» ստեղծվեցավ 1920-ի սեպտ.-ին, Արևելյան ժողովուրդներու առաջին համագումարին, Պաքվի մեջ: «Կոմիտեն» իր վրա առած էր ազատագրական շարժման քարոզչությունը, կազմակերպումն ու պաշտպանությունը Արևելքի մեջ: Տարի մը գործելէ ետք՝ «Կոմիտեն» լուծվեցավ:

որ ան պիտի զարգանա և պիտի հաղթե իր թշնամիներուն» (Ի. Մթալին, «Ամբողջական գործեր», հ. 7, Մոսկվա, 1947, էջ 393):

Այսքան մեծ էր Թուրքիո կշիռը բոլշևիզմի մղած օրհասական պայքարին մեջ:

Երեք տարի անընդհատ Ռուսիա զոհողությանց առավելագույնը կատարեց՝ Թուրքիան Արևելքի «հեղափոխական» այս «բջջամիջուկը» իրեն հետ ունենալու համար:

Սակայն այս օգնության մեջ էականը Ռուսիո անմիջական կապն էր Թուրքիո հետ:

Ռուսիա կձգտեր սահմանակից դառնալ Թուրքիո:

1946 օգոստ. 8-ի ծանուցագրով Մոսկվա չեղյալ հռչակեց թուրք-խորհրդային բարեկամության ուխտը, կնքված Փարիզ, 1925 դեկտ. 17-ին:

Տարիներով համառոտաբար աշխատած էր Մոսկվան, 1917-ի հոկտեմբերեն սկսելով, հաստատուն բարեկամությամբ մը Թուրքիան իրեն կապելու համար:

Այս ճիզերն են ահա, որ 1925 դեկտ. 17-ին կպսակվեին փարիզյան Ուխտով:

Աշխարհ այս Ուխտի կարևորությանը անդրադարձավ միայն 1946-ին, երբ Ռուսիա օգոստոսյան ծանոթ հուշագրով գայն չեղյալ հռչակեց:

Դաշնագրի ստորագրումեն քանի մը ամիս վերջ, խորհրդային արտաքին քաղաքականության վարիչներեն Քիթայկորոտսկի՝ «Բոլշևիկ» երկշաբաթաթերթի 1926-ի մայիսյան թիվին մեջ, անդրադառնալով թուրքնոսս հարաբերությանց, խորհրդավորապես կնկատեր.

«Երիտասարդ մշակութայնացող Թուրքիան (Լենինի արտահայտությունը Թուրքիո մասին.- Ն.) վստահ է իր թիկունքի վրա: Դա - կարմիր թիկունքն է, Խորհրդային Միությունը: Քեմալական Թուրքիան միշտ անպարտելի կմնա Խ. Ռուսիո հետ ունեցած իր դաշնագրով: Ան պիտի կարենա երկար պաշտպանվիլ աշխարհակալներու հարձակումներուն դեմ»:

Ակնարկը՝ փարիզյան Ուխտին:

Ռուսիա այս Ուխտին դյուրությամբ չհասավ:

Գարմիր Քեմալը միշտ կձգտեր սահմանակից ըլլալ Թուրքիո, իր քաղաքական առաջադրանքները լայնորեն հետապնդել կարենալու համար Մերձավոր և Միջին Արևելքի մեջ:

Խ. Ռուսիա այս նպատակը կհետապնդեր մինչև իսկ այն օրերուն, երբ բարեկամությամբ տակավին կապված չէր Թուրքիո:

Գերմանիո (որ ըսել է՝ նաև Թուրքիո) պարտությունը կանխատեսելով՝ Ռուսիա կուզեր մասնավորաբար Հայաստանը իր իշխանության տակ ունենալ՝ Թուրքիո պարտության պարագային դուրսդրությամբ Հայաստանեն Թուրքիա մտնելու և անոր գլխավորությամբ Արևելքի իսլամ ազգերը Արևմուտքի «աշխարհակալության» դեմ հանելու համար:

1918 հունիս 8-ին Ցարիցինեն (այժմու Սթալինկրատը) Սթալին նամակ մը կզրեր կովկասյան համայնավար փոխարքային Ս. Շահումյանի՝ անոր ուշադրությանը հանձնելով հետևյալ ծանրակշիռ հարցերը.

«Որովհետև ժամանակս քիչ է - անմիջապես սկսում եմ գործի:

...Մեր ընդհանուր քաղաքականությունը Անդրկովկասի հարցի նկատմամբ կայանում է նրանում, որպեսզի գերմանացիք վրացական, հայկական և ազերբեյջանյան հարցերը պաշտոնապես ճանաչեն, որպես Ռուսաստանի ներքին հարցերը, որոնց լուծման մեջ նրանք չպետք է մասնակցեն: Ապա այդ է պատճառը, որ մենք չենք ճանաչում Վրաստանի անկախությունը, որը ճանաչվում է Գերմանիայի կողմից:

Հավանական է, որ մենք զիջենք գերմանացիներին Վրաստանի հարցի նկատմամբ, սակայն այդ զիջումը կանենք միայն մի պայմանով. - եթե գերմանացիները մեզ հավաստեն, թե չեն խառնվելու Հայաստանի ու Ադրբեյջանի գործերին» (Ս. Շահումյան, «Երկերի ժողովածու», Մոսկվա, 1926, էջ 216):

Իր նույն նամակին մեջ Սթալին հարկ կդատեր հիշեցնել Շահումյանի.

«Նկատի առեք, որ վերոհիշյալ կետերը իմ անձնական կարծիքը չէ, այլ Լենինի առաջարկն է, որի հետ խոսեցի ուղիղ գծով այդ բոլոր հարցերի մասին» (անդ, էջ 217):

Բոլոր ընդգծումները - մեզմե:

Մոսկվա կիժմարեր Վրաստանի անջատումին Ռուսիայեն, պայմանով, որ մասնավորաբար Հայաստանը՝ Թուրքիո վրա բացվող այս դուռը մնա Ռուսիո սահմաններուն մեջ:

Հետագային, երբ Թուրքիա պարտվեցավ, այս նպատակը այլևս ջացահայտ դարձավ համայն քաղաքական աշխարհի համար:

Եվ որովհետև Հայաստան անկախ էր այլևս, ուստի Խ. Ռուսիա ձգտեց իր նպատակի իրագործումին, այս անգամ ի գին Հայաստանի անկախության ոչնչացումի.

«Հայաստանը,- կնկատեր ռուս մեծանուն պատմաբանը՝ Միլյուկով,- բռնած էր խորհրդային ազդեցության ճամփան դեպի Առաջավոր Ասիա: Գրավելով Պաքուն և հոն 1920 օգոստ. 27-ին, համաձայն Երրորդ Միջազգայնականի որոշման, խմբելով արևելյան «ժողովուրդ»-ները (վերջին բառին չակերտումը՝ Միլյուկովե.- Ն.), որոնց քննությանը դրված էին Արևելքի մեջ հեղափոխության կապված հարցերը, խորհրդային կառավարությունը, այսքանով չգոհանալով, որոշեց երթալ ավելի հեռուները: Հայաստանը հարկադրվեցավ 1920 նոյ. 7-ին խաղաղություն կնքել Թուրքիո հետ՝ անոր իր երկու գավառները զիջելով՝ Զանգեզուր և Ղարաբաղ, որպեսզի ուղղակի հաղորդակցության համար միջանցք մը (քորիտոր) բացած ըլլա Թուրքիո և բուլշևիկներու միջև» (Պ. Միլյուկով, «Ռուսիա բեկվածքի մը ճամփուն: Ռուսական հեղափոխության բուլշևիկյան շրջանը», հ. Ա, Փարիզ, 1927, էջ 227-228):

Խոսքը Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին է. պատմական տեղեկություններու մեջ որոշ անճշտություններ կան (թվականի և հողային զիջումներու մասին), սակայն խորքին մեջ ականավոր քաղաքագետին դիտողությունը անխոցելի է:

Պատերազմի բուն նպատակն էր, ինչպես ըսինք, կապը Թուրքիո և Ռուսիո միջև դարձնել ուղղակի և անմիջական:

Այս պարագան բուլշևիկները բնավ չէին թաքցներ:

Հայկական Կիլիկիան և բուն Հայաստանը «աշխարհակալության» երկու «խարիսխ»-ները նկատելով և ցնծությամբ այդ «խարիսխ»-ներեն մեկուն՝ Կիլիկիո կործանումը ավետելով՝ «Մեծ Խորհրդային հանրագիտարանը» կգրեր.

«Այսպեսով, երկու «Հայկական խարիսխ»-ներեն մեկը հաշվեհարդարի ենթարկվեցավ: Հայկական հարցը կեղրոնացավ Անդրկովկասի մեջ, ուր դաշնակները, հակառակ իրենց բոլոր «մեծահայկական» հույսերուն այնքան բացահայտ կործանումին, կշարունակեին, այնուամենայնիվ, տանիլ ռազմատենչ ազգայնականության քաղաքականություն մը: Դաշնակներու կացությունը որոշ կերպով վտանգավոր դարձավ այն վայրկյանեն, երբ Խորհրդային սահմանը անցավ Հայաստանի հյուսիսեն. հոգնած՝ դաշնակներու ահաբեկչական կարգերեն, անվերջ ջարդերեն և

պատերազմներեն, միշտ ենթակա քրոնիկ սովի և զրկանքներու, Հայաստանի ժողովրդական զանգվածները տարերայնորեն կձգտեին դեպի Խորհրդային իշխանություն. արդեն Պաքվի մեջ, Խորհրդային իշխանության հաստատումեն երեք օր վերջ (Պաքուն խորհրդայնացավ 1920 ապրիլ 27-ին.- Ն.), Հայաստանի զանազան կետերու մեջ ըմբոստացումներ ծագեցան (Ալեքսանդրապոլի մեջ քակի մը ժամվան համար մինչև իսկ Խորհրդային իշխանություն հաստատվեցավ). որոնք դաշնակներու կողմե դաժանաբար ճնշվեցան: Մյուս կողմե 1920-ին սկսած բարեկամական հարաբերությունները Խորհրդային Ռուսիո և Էնկյուրիի միջև կրախեին ընդդիմությանը դաշնակ Հայաստանի, որ իբրև թշնամի ուժ ինկած էր երկու պետությանց հաղորդակցության ճամփաներու վրա (ընդգծումները մեզմե.- Ն.):

Առ այդ դաշնակները որոշեցին օգտագործել վայրկյանը և ապահովագրել զիրենք թրքական վտանգի դեմ. նկատելով, որ Էնկյուրիի կառավարությունը այդ պահուն արևմուտքի մեջ հունա-անգլիական ճակատի վրա զբաղած էր պայքարով, իսկ Խորհրդային Ռուսիան ալ հարձակողական գործողությանց որևէ նշան ցույց չէր տար: Ի պատասխան 1920-ի հուլիսին Խ. Ռուսիո կողմե եղած ռաջարկին իրեն հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և այլ հողեր, որոնք որոշապես կհակին դեպի Խորհրդային ֆետերասիոնը՝ Երևանյան կառավարությունը տվավ իր համաձայնությունը, միաժամանակ զադտնի հրահանգ արձակելով իր խմբապետներուն հայդուկային գործողությանց անցնելու այն հողերուն վրա, որոնց շուրջ խնդիր կդառնար (այսինքն Ղարաբաղի, Նախիջևանի և այլն.- Ն.): Այդ գործողությունները սկսան 1920-ի սեպտ.-ին» (Վ. Վուրքո-Քրյաժին, «Հայկական հարցը», - «Մ. Խ. Հանրագիտարան», հ. Գ, 1926, Մոսկվա, էջ 438):

Բոլոր ընդգծումները մենք կատարեցինք:
Այս ընդարձակ քաղվածքը բաց կերպով կուզա վկայելու այն ազդու աջակցությանը մասին, որ 1920-ի աշնանը տեղի ունեցած թուրքնայ պատերազմին մեջ - նախ այդ պատերազմի նախապատրաստության, իսկ ավելի ուշ, ինչպես պիտի տեսնենք, նաև բուն պատերազմի մեջ - Խ. Ռուսիա բերավ Թուրքիո:

Թե՛ 1920-ի Մայիսյան ըմբոստացումները և թե՛ 1920-ի հուլիսին Խ. Ռուսիո ներկայացուցած պահանջը Ռուսիո զիջելու Հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը,- հատկապես այս նպատակը

կհետապնդեին,- հայկական հողերու վրայեն ուղղակի կապ ստեղծել Ռուսիո և Թուրքիո միջև՝ Ռուսաստանը մինչև Թուրքիա բերելով:

Իսկ այս նպատակին կարելի էր հասնիլ միայն Հայաստանը փոշիացնելով:

Ազրպեյճանի պաշտոնական խորհրդայնացումեն 12 օր առաջ, 1920 ապրիլ 15-ին, Էրզրումի մեջ, համամտությամբը Խորհրդային Ռուսիո, թուրքնազրպեյճանյան համաձայնագիր մը կկնքվեր (ի փոխարինություն 1919 նոյ. 29-ին Պոլսո մեջ կնքված թուրքնազերի համաձայնության), մեկ կողմե՝ Ազրպեյճանի զինվորական փոխնախարար գոր. Ալի Աղա Շիխլինսկիի, իսկ մյուս կողմե՝ թրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Գարապեքիր փաշայի միջև:

Այդ համաձայնագրի 5-րդ և 7-րդ հոդվածները, համամտությամբն ու ներշնչումովը միշտ նույն Ռուսիո, ուղղված էին Հայաստանի դեմ:

Ակնարկելով այս համաձայնության, Քյազիմ Գարապեքիր իր մեկ նամակին մեջ կգրեր.

«Մեր, Ազրբեջանի և բոլշևիկների միջև կնքված պայմանների հիման վրա, մեր սպաների, բժիշկների և պաշտոնյաների մեծ թիվ գնացել են Ազրբեջան: Բոլշևիկները մեզ առաջարկեցին անհապաղ պատերազմական գործողություններ սկսել,- Հայկական սահմանների վրա հայերի դեմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսացիների դեմ: Դադստանում կազմված կանաչ բանակը՝ Էնվերի, Նուրիի և Խալիլի ղեկավարությամբ՝ պետք է ապրիլի սկիզբներին աշխատե մտնել Բագու: Ազրբեջանի զորքերը պետք է ցույց տան կեղծ դիմադրություն, որպեսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակների հանդեպ: Միանալով կանաչ բանակին՝ Ազրբեջանյան զորքերը պետք է առիթ որոնեն ընդհարվելու Հայաստանի հետ և Անատոլիայում գտնվող թուրք զորքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմաններն և սկսեն զինվորական գործողություններ Հայոց Հանրապետության դեմ» (Ս. Վրացյան, «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև», 1941, Բոստոն, էջ 59):

Ընդգծումները - դարձյալ մեզմե:
Մտաւորապես ճիշտ նույն օրերուն Մուսթաֆա Քեմալ Ազգային Մեծ ժողովին մեջ կհայտարարեր.

«Բոլշևիկները իրենց ծրագիրները իրականացնելու համար թուրք ժողովուրդի մեծ օգտակարությունը գնահատելով՝ մեր աջակցության դիմեցին: Նրանց առաջին ձեռնարկը եղավ 10-րդ և 11-րդ գորաբանակները կռվակայան ճակատը դրկել: Այս բանակները դյուրությամբ հաջողեցին անցնել Հյուս. Կովկաս և մտան Ագրբեջան շնորհիվ մեր ընծայած դյուրությունների և առաջնորդության: Ագրբեջանցիները մեծ հաճույքով դիմավորեցին այդ գորամասերին: Այս բանակները մեկ կողմից Հայաստանի, մյուս կողմից էլ Վրաստանի դեմ հարկ եղած զինվորական միջոցների ձեռնարկեցին» (անդ, էջ 60):

Այսօր, երբ տասնամյակներ անցած են այդ դեպքերու վրայեն և երբ գառնազգեստ գայլերը, իրենց ուղեկիցներով միասին, ամեն կերպ կթունավորեն հայ կյանքը՝ թուրքին իբր գործակից հռչակելով Դաշնակցությունը, հարկ կըլլա հավելյալ ճիգ սպասել իրողությունները իրենց իսկությանը մեջ վերականգնելու համար:

Այդպես չէր երեկ. մանավանդ հայրենի երկրին մեջ, ուր այս դավերը կդառնային և ուր հայ մարդը կզգար և կապրեր գալիք բոլոր սարսափները:

1925-ի Մայիսյան ապստամբությունը – թուրքնհայ պատերազմի առաջին, նախապատրաստական արարը – արտաքին պատճառներ ուներ և ոչ ներքին:

Այդ ապստամբության բուն հեղինակները, անոր վարիչ կեղրոնները Մոսկվան և Էնկյուրին էին:

Օրվան լույսին չափ հստակ ու պայծառ այս ճշմարտությունը Հայաստանի մեջ գիտեր հետին մանուկն իսկ:

Հայ-թրքական պատերազմի օրերուն Մոսկվայի ծանոթ գրիչներեն նույն Պ. Պավլովիչ-Վոլոնտյոր (Մ. Վոլթման) կգրեր.

«Եթե Հայաստանի ժողովրդական զանգվածները, որոնք ընթացիկ տարվա մայիսին ոտքի կեցած էին դաշնակներու կառավարության դեմ իրենց երկիրը խորհրդայնացնելու առաջադրությամբ և հաջողած էին կարճ ժամանակվա համար իշխանությունը իրենց ձեռքն առնել Ալեքսանդրապոլի, Կարսի և Հայաստանի այլ կետերու մեջ, եթե այդ զանգվածները կատարեն այն երդումը, որ իրենց ներկայացուցիչները տված են Արևելյան ժողովուրդներու Պաքվի առաջին սեպտեմբերյան (1920-ի) համագումարին մեջ, եթե այս անգամ անոնք եռապատկված ճիգերով պայքար տանին դրամատիրական կարգերու դեմ, կրկին զենք առնեն

դաշնակներու՝ աշխատավորական Հայաստանի այդ թշնամիներու և համաշխարհային կայսերապաշտության գործակալներու դեմ, մենք այս անգամ չենք կրկնել մեր գործած մայիսյան ճակատագրական սխալը, երբ մենք չպատասխանեցինք մեր հայ ընկերներու օգնության կոչին. այս անգամ մեր հայ ընկերները առանց օգնության չենք ձգեր, այլ, ընդհակառակն, մեր բոլոր միջոցներով օգնության կուզանք անոնց» (Պ. Պ.-Վոլոնտյոր, «Գաղութային և ազգային քաղաքականության հարցերը և Երրորդ Միջազգայնականը», Մոսկվա, 1920, էջ 44-45):

Հայ համայնավարները, ուրեմն, երդում տված էին Պաքվի համագումարին մեջ Էնկերներուն և Զինովիներուն, որ համագումարեն անմիջապես Հայաստան դառնալով – համագումարը ճիշտ սեպտեմբերին էր, երբ պիտի սկսեր նախածրագրված հայ-թրքական պատերազմը – եռապատկված նվիրումով զենք պիտի առնեն Հայաստանի դեմ*...

Նույն համայնավարները, Մայիսյան խռովությունները սարքելով, վերստին ճիշտ նույն նպատակները կհետապնդեին, այն է՝ բացահայտ օժանդակությամբը Ռուսիո և թաքուն օժանդակությամբը Թուրքիո, վերջ տալ անկախ Հայաստանի գոյության...

Մայիսյան դավը եթե հաջողեր՝ Հայաստանի անկախությունը ինքնին փոշիացած կըլլար, ձախողած պարագային կուժաքամվեր երկիրը և իր դիմադրական կորովը կտկարանար Մոսկվայի և Էնկյուրիի նախածրագրած պատերազմին մեջ:

* Իր նույն գրքույկին մեջ հեղինակը կգրե.

«Հայ և վրացի պատվիրակներեն շատեր բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով և իրենց հայրենիքի սահմաններուն վրա շատ մը ուղեփակներեն անցնելով՝ հասան Համագումարին: Պատվիրակներեն ոմանք կրցան վերադառնալ հայրենիք, իսկ ուրիշներ բռնվեցան սահմաններու վրա և անոնց արգիլվեցավ մուտքը իրենց երկրեն ներս: Անոնք տարագիր հռչակվեցան: Այն փաստը, որ տասնյակ վրացի և հայ պատվիրակներ, գիտնալով հանդերձ իրենց սպառնացող վտանգներու և անախորժությանց մասին, գացին, այնուամենայնիվ, Պաքվի համագումարին, ամենեն խոսուն ապացույցն է այն ջերմ զգացումներու, որ Վրաստանի և Հայաստանի աշխատավոր զանգվածները կտածեին դեպի Խորհրդային Ռուսիան և Ագրպեյճանը» (էջ 40):

Վատը զգուշացած և չէ տված նաև... Թուրքիո անունը:

Տազնապահար երկրի մեջ, այդ մոայլ օրերուն, ավելի քան հստակ, պայծառ ու տեսանելի էին այս ճշմարտությունները անխտիր ամենքին:

Ծանրագույն վտանգի հանդեպ իր մտածումներով և քայլերով միացած և ամբողջացած էր Հայրենի Աշխարհը:

1920 մայիս 13-ին տեղի ունեցած միջկուսակցական խորհրդակցության իբր հետևանք՝ Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունները հետևյալ «Կռչը» կիրառարակելին.

«Հայաստանի քաղաքացիներ,

Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Նոր-Բայազետի խռովություններին հետևեց Դիլիջանի գավառը:

Ներքին ոճրագործ տարրերի պետական դավաճանության հաջորդեց արտաքին նույնօրինակ տարրերի անհանդուրժելի արշավանքը դեպի մեր երկրի խորքերը:

Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները միացած՝ դիվային ծրագիրներ են որոճում Հայաստանի ազատության և անկախության դեմ: Հայ ժողովուրդը, որի ինքնորոշված կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախությունը, պիտի արթուն պահպանի, փայփայի ու պաշտպանի իր այնքա՛ն թանկ գնով նվաճած ազատությունն ու անկախությունը:

Թող հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդումը տա կազմ ու պատրաստ դիմագրավելու համար Հայաստանի անկախությանը բոլոր թշնամիներին – ո՛վ ո՛ր կողմից և ի՛նչ անվան տակ ուզում են թող լինեն նրանք:

Իսկ դու, հայ ժողովուրդ, մի սիրտ, մի հոգի դարձած՝ պետք է քո ուժն ու աջակցությունը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարության անշեղորեն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում:

Կեցցե՛ ազատ, անկախ և միացյալ Հայաստանը:

Կեցցե՛ Հայաստանի դեմոկրատիկ Հանրապետությունը» (Մ. Վրացյան, «Հայաստանը բոլջ. մուրճի և թրք. սալի միջև», էջ 99-101):

Այս հավաքական թռուցիկին տակ ստորագրած էին հետևյալ կուսակցությունները.–

Հայ ժողովրդական կուսակցության Հայաստանի կենտր. կոմիտե.

Հայ սոց-դեմ. կուսակցության Երևանի կոմիտե.

Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհուրդ.

Հայ անկուսակցականների միության վարչություն:

Այս հավաքական թռուցիկեն՝ գատ, որոշ կուսակցություններ, որոնք հայրենի հողին վրա գտնվելով, հայրենի երկրին ցավը ավելի մոտեն կզգային, հրապարակ եկան նաև անջատ թռուցիկներով:

Ասունցմե էին Հայ ռամկավարները, որոնց Հայաստանյան խորհուրդը հետևյալ անջատ թռուցիկը կիրառարակեր.

«Մեր ավերակ ու քանդված հայրենիքի մեջ, հայ ժողովուրդը բնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենյաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արյունով ներկող Բթթիհատ կուսակցությունը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրված էր Ազրբեջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, հանկարծ, Բաքվի մեջ հայտարարեց սովետական իշխանություն և առաջին օրն իսկ իր նշանավոր ուլտիմատումով պահանջեց հայկական հանրապետութենեն երեք օրեն հանձնել Ղարաբաղն ու Ջանգեզուրը և իր գորախմբերն արդեն շարժման մեջ դրավ Հայաստանի վրայեն երթալ միանալու Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որ մինչև այժմ կշարունակե ջարդել տասնյակ հազարավոր հայեր Կիլիկիո մեջ, հակառակ մինչև իսկ Ֆրանսական բանակի ցույց տված պաշտպանության:

Խելագար և երկու աչքերով կույրը միայն կարող էր չտեսնել այս կերպով Հայկական Հանրապետության ընդհանրապես և Թուրքահայաստանին մասնավորապես սպառնացող նոր վտանգը. և, սակայն, գտնվեցան հայ անունը կրող մարդեր և հայ իրականության մեջ գործող, բայց հայ ոգիին ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դեմ, կողմնակից հայտարարեցին զիրենք այդ հայադավ շարժման և Ալեքսանդրապոլի ու Կարսի մեջ դիմեցին եղբայրասպան կովի:

Այդ խելագարները ոչ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարվածը կուտան լուծման օրերու մեջ գտնվող Հայկական հարցին, այլ մինչև անգամ հոգ չըրին, որ երկրի սահմանները կբանան և կիրավիրեն տաճիկ-ազրբեջանյան գառնազգեստ գայլերը, որպեսզի մնացյալ հայության դիակներու վրայեն երթան ու միանան մեր դարավոր թշնամիին՝ Էնվերի և Թալեաթի հարազատ հաջորդ Մուսթաֆա Քեմալին:

Տարակույս չկա, որ ամեն հայ մարդ, որ իր երակներուն մեջ հայի արյուն կկրե և իր գլխուն մեջ փոքր-ինչ խելք ունի,

կղատապարտե այդպիսի խելագար շարժումը. ես առավել թուրքահայերս, որ անոր անմիջական հետևանքները կկրենք: Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ, և մենք մասնավորապես պետք է ծառանանք անոր դեմ և մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարության՝ իր բնին մեջ խեղդելու զայն և շեղեցնելու իր ոճրապարտ նպատակեն:

Հայ Ռամկավար կուսակցությունը, մանավանդ որ տոգորված է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արյունով գծած են նորա առաջ, ամենեն ավելի իրավունք ունի զայրույթով մերժելու այդ հայրենադավ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝ միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկա վտանգին հանդեպ:

Բնավ չենք կասկածիր, որ այդպես կմտածեն նաև բոլոր մեր ընկերները և բոլոր անոնք, որ հայ անուն և հայ զգացում կկրեն:

Կորչի՛ եղբայրադավ և հայրենադավ ոճիրը: Կեցցե՛ հայ ոգին: Կեցցե՛ Միացյալ և Անկախ Հայաստանը» (անդ, էջ 101-104):

Նույն ձևի այլ թուղթիկի մը մեջ Հայաստանի Մոց.-Դեմ. Բանվորական կուսակցությունը, ի միջի այլոց, կհայտարարեր.

«Դաշնակցած բոլշևիզմն ու պանիպամիզմը ծափ զարկեցին, որովհետև նրանց հոգեվաճառ ազենտներին հաջողվել էր անգամ ծվատված երկրիր, արյունաքամ ժողովուրդը, որբերի ու գաղթականների տխուր հայրենիքը Մոսկվայի և Էրզրումի քաղաքագետների դիվային ծրագիրներին ենթարկելու փորձեր անել» (Մ. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», 1928, Փարիզ, էջ 352):

Հորդոր մըն ալ հայ ժողովուրդին ուղղեց Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Գևորգ Ե. Վշտալի.

«Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, - իր «Կոչ»-ին մեջ կհայտարարեր Կաթողիկոսը, - նոքա, որոնք չտեսնող են ձևանում, որ մեր տան մեջ մեր դեմ դավեր են լարվում՝ պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագիրների քայլ առ քայլ և հետևողական իրագործումը, զգում են, թե ի՛նչ պատասխանատվություն է ծանրանում նոցա հանդեպ պատմության առաջ: Այս բոլորիս, երբ ամենքիս պարտականությունն է համախմբվել ոչ միայն հայրենիքի պահպանության և վերաշինության

գործի շուրջը, այլ նամանավանդ հայ ժողովրդի ֆիզիքական գոյությունը պահպանելու դժվարին աշխատանքի շուրջը, ցավալի է տեսնել ներքին երկպառակությունները:

Մենք, ինչպես և մեր երջանակահիշատակ նախնիքները, որ աշխատանք ենք թափել Տաճկահայ Դատի համար լավ օրերի հույսի ակնկալությամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ բուպեներին, և երբ վտանգված ենք տեսնում հայրենիքի միության գործը, բայց, նամանավանդ, հայ ազգի ֆիզիքական գոյության ճգնաժամային գործը, իբր ընդհանրական Հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական բուպեներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստության կոչ անել - Հայ ժողովուրդ, համախմբվի՛ր քո հայրենիքի հանրապետության պահպանության գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկության միակ ճանապարհը... Վտանգը և խիստ ծանր վտանգը քո դռանն է, հայ ժողովուրդ, զգույշ եղիր և պատմության առաջ ծանր պատասխանատվության բեռի տակ մի ընկնիր» (անդ, էջ 362-363):

Երբ հայրենի երկրի մեջ 1920-ի մայիսին այս դավերը կղանային դուրսը թուրքնոսու բանակները 1920 հունիսին արդեն գործի էին.

«Նայիմ Ճևատ պեյ ինչ կուզե թող ընե, բոլշևիկյան բանակը Նախիջևան թող բերե», - թրք. 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Գարապեթիր 1920-ի հունիսին կհեռագրեր «Իսլամական բանակ»-ի վարիչներեն Ճևատի.

«Ապահովեցի, - Էնկյուրիի դատարանին առջև կվկայեր Ճևատ, - որ օգոստոսին թրքական և բոլշևիկյան բանակները իրարու միանան, հետո, իմ ստացած հրահանգներուս համաձայն, Խալիլ փաշայի հետ աշխատեցա, որ երկաթուղիով ալ ապահովվի երկու բանակներու միացումը և Հայաստան չկարենա անոր ընդդիմանալ, և այս նպատակով Մոսկվա գացինք, Էնվեր փաշա արդեն հոն կգտնվեր» («Հուսաբեր», 25 սեպտ. 1926):

Ու ճիշտ նույն օրերուն, 1920-ի հուլիսին, վկայությամբը «Մ. Խ. Հանրագիտարանի», Խ. Ռուսիա մեզմե կպահանջեր «Լարաբաղը, Նախիջևանը և այլ հողեր», որոնք իբրև թե որոշապես կհակին եղեր դեպի Խորհրդային Ֆետերասիոն...

«Հանրագիտարանի» մեջ այս տողերը կստորագրեր այն նույն Վ. Կուրքո-Քրյաժին, որ նույն «Հանրագիտարանի» ուրիշ հատորի մը մեջ, Ագրպեյճանի մասին խոսելով և հոն Մեծն

Բրիտանիո կովկասյան ներկայացուցիչներու քաղաքականությունը քննադատելով Ղարաբաղի հարցին մեջ (1919-ին), կնկատեր.

«Անգլիացիները, իրավարարի դերին մեջ հանդես գալով, դիտավորյալ կերպով մուսուլմաններուն կուտային հայկական հողերը, օրինակ՝ Ղարաբաղը» (Վ. Կուրքոյ-Քրյաժին, «Ագրպեյճանյան Խորհրդային Շնկերվար Հանրապետությունը», - «Մ. Խ. Հանրագիտարան», հ. Ա., 1926, Մոսկվա, էջ 664):

Անցողակի նկատենք, որ համայնավար ուրիշ գրիչ մը՝ Մ. Միմխովիչ, նույն «Մեծ Խորհրդային հանրագիտարանի» մեկ այլ հատորին մեջ Լեոնային Ղարաբաղի մասին խոսելով, կգրե.

«1923 հունիս 7-ին, Ագրպեյճանի Կեդր. Գործադիր կոմիտեն, նախաձեռնությամբ Գ. Կ. Օրժոնիկիձեի և Ս. Մ. Քիրովի, Գանձակ նահանգի մեկ մասեն կազմեց Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որ կմտնե Ագրպեյճանյան Խորհրդային Շնկերվար Հանրապետության մեջ, որուն՝ Լեոնային Ղարաբաղը անխզելիորեն կապված է թե՛ աշխարհագրորեն և թե՛ իր տնտեսական պայմաններով» (Մ. Միմխովիչ, «Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը», - «Մ. Խ. Հ.», Մոսկվա, 1939, հ. 41-րդ, էջ 19)*:

Վերջին տողերը ընդգծեցինք ըսելու համար, որ Լեոնային Ղարաբաղը եթե այսքան «անխզելիորեն» կապված էր Ագրպեյճանի, այդ պարագային այլևս ինչո՞ւ չարամտությամբ ամբաստանել անգլիացիները: Իսկ եթե կապված չէր, ինչո՞ւ նույն չարամտությամբ չամբաստանել այն բոլշևիկները - և արդարորեն՝ ու իրավունքով - որոնք, հակառակ բազմաթիվ խոստումներու, հայտարարությանց և պաշտոնական արթերու, Լեոնային Ղարաբաղը, այնուամենայնիվ, բռնի պոկեցին մայր երկրեն և շիլ նպատակներով կցեցին օտար մարմնի մը:

Ամենքեն լքված հայությունը որքան կրնար՝ կընդդիմանար այս դավին:

* Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման 25-ամյակը տոնակատարելով՝ «Պրավդա» և «Իզվեստիա» իրենց 1948 հուլիս 24-ի թիվերը գրեթե ամբողջությամբ այդ հոբելյանին նվիրեցին, Ինքնավար Մարզի ստեղծման թվական մատնանշելով հուլիս 24-ը, բայց երբեք հունիս 7-ը...

Ռուս-բոլշևիկյան թափափածություն...

Կուրքոյ-Քրյաժին, դավը քողարկելու համար, կգրե, որ «Ղարաբաղ, Նախիջևան և այլ (հայկական) հողեր որոշապես կհակեին դեպի Խորհրդային Ֆետերասիոնը», դեպի Ռուսիա...

Ահա թե ի՛նչպես «կհակեին» անոնք.

«Օգնությամբը ռուս ժողովուրդի և անոր հառաջապահը կազմող բանվոր դասակարգի, օգնությամբը անդրկովկասյան բանվորության, որուն կաջակցեց Բանվոր-գյուղացիական Կարմիր բանակը,- կգրե համայնավար գրիչներեն Մ. Միմխովիչ,- 1920 ապր. 27-ին Ղարաբաղի մեջ վերջ տրվեցավ դաշնակներու և մուսավաթականներու տիրակալության և հաստատվեցավ Խորհրդային իշխանություն: Լեոնային Ղարաբաղի այս իշխանության առաջին տարիները, 1920-21 թվականներուն, ընթացան կատաղի պայքարներու մեջ իր զենքը վար չդրած ազգայնական հակահեղափոխության հետ, որուն վարիչներն էին հայ աշխատավորության ուխտյալ թշնամիները՝ դաշնակները: Դիզակի և Վարանդայի (այժմու Հաղորթի և Մարտունիի) շրջաններու մեջ Թևանի ավազակային խումբերը, որոնք սերտ կապ ունեին ոչ միայն Ագրպեյճանի և Հայաստանի մեջ ապրող, այլև արտասահման գտնվող դաշնակներու հետ, համառ պայքար կնդեին Խորհրդային իշխանության դեմ: Միայն Կարմիր բանակի և Լեոնային Ղարաբաղի կարմիր արձակազեններու միացյալ ուժերով կարելի եղավ ջախջախել Թևանի ավազակային խումբերը...» (Մ. Միմխովիչ, «Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը», - «Մեծ Խորհրդային հանրագիտարան», 1939, Մոսկվա, հ. 41-րդ, էջ 19):

Թևանը, զուր է ըսել, իր ժողովուրդի ընտիրներեն էր, մեկը Ղարաբաղի հայրենասեր քաջերեն:

Ա՛յս Ղարաբաղն է ահա, որ իբրև թե կհակի եղեր դեպի Ռուսիա...

Ա՛յս Ղարաբաղն է - հայկական - որ անգլիացիներու մեկնումեն ետքն իսկ, սուտի, նենգությանց, դավերու և խաբեբայություններու բոլոր ձևերով Խորհրդային իշխանությունները իվեցին հայ ժողովուրդեն և զայն տվին մուսուլմաններուն, և անոնց իշխանության տակ ալ, հակառակ բոլոր հանձնառությանց, պահեցին ամբողջ 28 տարի, 1920-են մինչև այսօր...

Իր հերթին մեզ արդեն ծանոթ Մ. Պավլովիչ-Վոլոնտյոր կգրե.

«Հայաստան իր պրովոկատորները դրկեց Ջանգեզուր և Ղարաբաղ՝ կազմակերպելու և պաշտպանելու համար կուլակային տարրերու ապստամբությունը կարմիր զորքերու դեմ» (տե՛ս հեղինակի հիշատակված գրքույկը, էջ 40):

Ահեղ և արյունալի եղավ մասնավորաբար Ջանգեզուրի հերոսամարտը կարմիր բռնակալներու դեմ:

Մակայն զուր անցավ հայ ժողովուրդի գերմարդկային ճիգը:

Հայաստանի դեմ հայտնապես կպատրաստվեալ պատերազմը Թուրքիո կողմէ՝ աջակցությամբը Ռուսիո:

Ազգային Մեծ ժողովին մեջ արտասանած իր պատմական ճառին մեջ Մուսթաֆա Քեմալը կվկայեր արդեն, որ Արևելյան հրամանատարության կողմէ առաջարկ եկած է թրքական պատվիրակությունը Կարինեն անմիջապես Կարսի և Պաթումի ճամփով դրկել Մոսկվա և առանց հապաղումի գրավել Սարրղամիշի և Մոզանլուխի կիրճերը:

«Այս առաջարկություններից մանավանդ վերջինը քննելով, իր կողմէ կհավելուր Քեմալ, զործադրությունը հարմար նկատվեց և հունիս 6-ին հրաման տրվեց, որպեսզի հարձակողականի համար պատրաստություն լինի» (Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», էջ 413):

Լոկ ռազմա-քաղաքական նկատումներով, իբրև հետևանք վերին հրամանատարության մեջ եղած որոշ տարակարծությանց, պատերազմը քիչ մը ուշացավ և սկսավ աշնան:

Մակայն բոլշևիկները աշնան չսպասեցին, այլ ամռան ամիսներուն իսկ արդեն անցած էին ռազմական գործողությանց Հայաստանի դեմ, մասնավորաբար Ղարաբաղ-Ջանգեզուր-Նախիջևան շրջաններու մեջ:

Երկրի մեջ իշխող տրամադրության մասին հստակ գաղափար կուտար այն խմբագրականը, որ «Հյուսիսային վտանգը» խորագրին տակ իր 1920 հունիս 26-ի թիվով (№ 100) լույս կընծայեր կովկասահայ ռամկավարներու Հայ ժողովրդական կուսակցության օրգանը «Ժողովուրդ»:

Պաշտոնաթերթը կհայտարարեր.

«Հյուսիսային վտանգը շարունակում է կախված մնալ մեր Հանրապետության գլխին: Նա ոչ միայն սպառնում է մեր ժողովրդի անկախության և դարավոր իդեալի իրագործման, այլև նա իր հետ

բերում է մեր տնտեսության վերջնական քայքայումը, խորհրդային դաժան կարգեր, քաղաքացիական կռիվ և այլն:

Եվ այսօր, թող զարմանալի չթվի, հյուսիսային վտանգը այնչափ խոշոր է, որ նրա առաջ նսեմանում են մերձ ի մահ Թուրքիայի սպառնալիքները:

Պատերազմի ամբողջ ընթացքում հայ ժողովուրդը եղել է Դաշնակիցների հետ, աջակցել է նրանց մեծ գործին հանուն իրավունքի և քաղաքակրթության շահերի հաղթանակի, մայիսյան դեպքերը նորից ապացուցանեցին, որ հայ ժողովուրդը անսասան կանգնած է Դաշնակիցների օրինատացիայի վրա և, ելակետ ունենալով իր սեփական կենսական շահերը, վճռականորեն դեմ է խորհրդային կարգերի և խորհրդային Ռուսաստանի:

Եվ հաշտության այն դաշնագիրը, որ կնքվելու է շուտով Մոսկվայում հայկական պատվիրակության և խորհրդային իշխանության մեջ, պիտի ձևակերպվեն հայ ժողովուրդի վերոհիշյալ քաղաքական գիծը և տրամադրությունները:

Առաջիկա դաշնագիրը պիտի ճանաչի բացարձակապես հայ ժողովրդի լիակատար գերակայությունը, Հայաստանի տերիտորիալ իրավունքները և լիակատար անկախությունը:

Որևէ միջամտություն այս կամ այն ձևով մեր ներքին կյանքին անթույլատրելի է: Եվ եթե դաշնագրի մեջ կլինեն այնպիսի կետեր, որպիսիք կան ռուս-վրացական պայմանագրի մեջ, մեր պետական շահերը խիստ վտանգված կլինեն:

Մեզ համար այնքան էլ շտապողական չէ մեր Հանրապետության ճանաչումը բոլշևիկների կողմից:

Հայաստանը արդեն իրավապես անկախ պետություն է, ճանաչված որպես այդպիսին դաշնակից մեծ պետությունների և եվրոպական բազմաթիվ մանր պետությունների կողմից, հետևապես պետական շահերի տեսակետից կարիք չկա անթույլատրելի զիջումներ անելու խորհրդային Ռուսաստանին:

Կառավարությունը մինչև հաշտության դաշնագրի վավերացնելը պիտի նրա պայմանները հասարակական կարծիքի բազմակողմանի քննության առարկա դարձնի:

Հակառակ դեպքում, ապագա դաշնագրի բոլոր վնասակար կողմերի համար պատասխանատվությունը կընկնի կառավարության վրա» («Ճակատամարտ», Պոլիս, 16 դեկտ. 1920):

Նույնն էին տրամադրությունները գրեթե ամբողջ երկրին մեջ, ուր «Հյուսիսի վտանգը» մահվան չափ ծանր կճնշեր հայ ժողովուրդի վրա:

Սակայն Հայաստանը ի վիճակի չէր ճակատելու Հյուսիսին, երբ իրեն կսպառնար նաև Հարավը:

Մայիսյան խռովություններն սկսարացած երկիրը, այս նոր կռիվներուն վերջ տալու համար, դիմեց Մոսկվայի միջնորդությանը, և 1920 օգոստ. 10-ին (ճիշտ նույն օրը, երբ Սևըը կստորագրվեր...), Թիֆլիսի մեջ, Ռուսիո լիազար-պատվիրակ Լըկրանի հետ, ստորագրվեցավ հաշտության ժամանակավոր համաձայնություն մը, որով Ջանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը կմնային բոլշևիկներու ձեռքը...

Վերակազմյալ Հնչակյաններու Պոսթրնի պաշտոնաթերթը «Պահակ», որուն քաղաքական ակնոցները այն օրերուն հիմնովին տարբեր էին այսօրվան Ազատականներու (նախկին Վերակազմյալներ) կրած ակնոցներէն, իր 1920 նոյ. 2-ի թիվով, դժգոհ հայտուս համաձայնութենէն, «Առինքնող խայծը» խորագրին տակ, կգրեր.

«Սովիեթ կառավարության Հայաստանի ուղղած վերջնագրին ամենէն հատկանշական պայմանն է՝ Ղարաբաղը և Ջանգեզուր փոխանակել Սևրի դաշնագրով հայ պետության կցված երեք արևմտյան նահանգներուն՝ Էրզրումի, Վանի և Պիթլիսի հետ:

Հանրապետության կառավարությունը երկու եական պատճառներ ուներ այս տեսակ առաջարկ մը մերժելու:

Առաջինը, դարերու համառ, արյունոտ աշխատանքով և անթիվ զոհողություններով կազմված և դաշնակից տերությանց հանդիսավոր կնիքովը վավերացված նոր, անկախ Հայաստանէն բունձ մը հող իսկ թշնամիին չզիջելու գերագույն պարտականությունն է ունէ հայ կառավարության, որ չի բաղձար իր իսկ տկարությամբ քանդել հայկական անկախությունը և սովերի մը վերածել հայ հայրենիքը:

Իսկ երկրորդ եական պատճառը այն ստույգ համոզումն է, որ թուրք ռճրագործության հետ դաշնակցած Սովիեթ Ռուսիան Հայաստանը չպիտի ազատէ բնաջնջումէ և թրքական հարձակումներէ, եթէ մինչև անգամ հայ կառավարությունը, հայրենիքը պաշտպանելու հոգեկան կամ ֆիզիքական տկարությանը

մեջ՝ ընդունի Ղարաբաղն ու Ջանգեզուրը փոխանակել Էրզրումի, Վանի և Պիթլիսի հետ:

Պահ մը սակայն ընդունինք՝ թէ այս ճակատագրական օրերուն, բոլշևիկ-թրքական միացյալ հորդաներուն զինվորական հաղթությունները ստեղծեցին այնպիսի կացություն մը, որ հայ կառավարությունը ստիպեց հաղթականներուն պայմաններն ընդունիլ: Կրնա՞ Հայաստանը ապահով ըլլալ, թէ երբ զինքը կբանտեն ներկա Հանրապետության նեղ սահմաններուն մեջ, իրեն արգիլելով ունէ հաղորդակցություն Արևմտյան պետությանց հետ, պիտի ապրի մինչև իսկ թշվառ ու ազագուն կյանք մը: Ռուս սովիեթական կառավարությունը իր արյունաբերութիւնը դաշնակիցներուն հողային ամբողջությունը ապահովելէ հետո, երբ օր մը ինքզինքը գտնէ ավելի գորավոր վիճակի մը մեջ, մեկ հարվածով պիտի կորզէ նաև այդ փոքր Հայաստանը՝ զայն կցելով ռուսական պետության: Նույնիսկ, եթէ Հայաստան վար դնէ իր զենքերը և պարտվի, Ղարաբաղն ու Ջանգեզուրը ստանալու գեղեցիկ խոստումէն, ամենէն հավանական բանը որ պիտի պատահի, այն է, որ թուրքերը, բոլշևիկներու լրիկ հավանությամբն ու դավաճանությամբը, քիչ ատենէն պիտի բնաջնջեն հայությունը այդ փոքր և առանձին մնացած Հայաստանին մեջ ու հայկական հարցը պիտի լուծվի այնպես, ինչպես ծրագրած էին Թալեաթն ու Էնվերը:

Բոլշևիկներու ներկա փորձող առաջարկը չի տարբերիր Հազկերտի առաջարկէն, որ, ի փոխարեն կրոնափոխության, Հայոց կխոստանար մարմնական ամեն հանգիստ, հաճույք և կյանքի ապահովություն» («Ճակատամարտ», 1920 դեկտ. 10):

Սակայն Վերակազմյալները այսքան քաջ ու խրոխտ էին, որովհետև Պոսթրն նստած էին. անոնք նույնպես մեզի նման պարտադրված օգոստ. 10-ի համաձայնությունը պիտի ստորագրեին, եթէ երբեք Հայաստան գտնվեին...

Մայիսյան խռովություններ, բանակցությանց ձգձգում Մոսկվայի մեջ, ռազմական շարժումներ Լեռնահայաստանի մեջ, օգոստ. 10-ի համաձայնություն, - ծրագրված Մեծ Դավի նախաքայլերն էին ասոնք:

Բուն պատերազմը սկսավ 1920 սեպտ. 23-ին: Առանց որևէ նախազդարարության, թրքական բանակները սեպտ. 23-ի արշալույսին տեղաշարժվեցան դեպի Հայաստան:

Հայ քաղաքական հոսանքները պատերազմի հարցին մեջ-
 Հայկությունը պատերազմի տարողությունը (Սըր Էտ. Կրիկ).- Կ.
 Կաուցկիի վկայությունը.- Լ. Շանթի պատվիրակությունը.- Լըկրան-
 Շանթ համաձայնագիրը.- 1920 նոյ. 4-ի Պաքվի ժողովը,
 գլխավորությամբ Սթալինի.- Մ. Պավլովիչի վկայությունը.- Սթալինի
 1920 նոյ. 6-ի զեկուցումը.- Սթալինի 1920 նոյ. 9-ի խորհրդավոր
 հեռագիրը.- Կոմկուսները աջակից Քեմալին.- Մ. Պավլովիչի
 մեկնությունը.- 1920 նոյ. 29.- Լըկրանի նոյ. 30-ի վերջնագիրը.- Ինը
 օրվա մեջ երեք կառավարություն.- Երևանի դաշնագիրը (1920 դեկտ.
 2).- Ալեքսանդրապոլի դաշնագիրը (1920 դեկտ. 3).- Խատիսյան-Դրո
 հեռախոսային խոսակցությունը.- Հալաձական պատվիրակները.-
 Խատիսյանի և Կապանի հայտարարությունները.- Ավելի ուշ ավելի
 մեծ զիջումներ (Մոսկվա և Կարս).- Սթալինի 1921 մարտ 4-ի
 հողվածը.- Երեկ՝ Սևրի դեմ, այսօր՝ Սևրի «կողմնակից».-
 Եզրափակում:

1920 սեպտ. 23-ին սկսավ հայ-թրքական պատերազմը:

Առանց նախազդարարության, Սարըղամըշի ուղղությամբ
 թուրքերը անցան հարձակման:

Մի էին ժողովուրդ և Կառավարություն՝ Հայրենիքին
 սպառնացող վտանգին հանդեպ:

Մի էին ոչ միայն զգացումով, այլև համոզումով:

Ամենքը զիտեին, որ արդար և անխոցելի էր
 Կառավարությունը շղթայազերծված աղետքին մեջ:

Բոլոր կուսակցությունները հավաքաբար հետևյալ «Կոչը»
 հրապարակեցին.

«Հայ ժողովուրդ,

Օգոստոսի 10-ի պայմանագրով (Սևրի դաշնագիր)
 Հաշտարար կոնֆերանսը և պարտված Թուրքիան ճանաչեցին մեր
 իրավունքը ստեղծելու Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանը: Մեր
 հայրենիքի մի մասը, որին տիրացել է Թուրքիայի ապստամբ
 փաշաներից մեկը՝ Մուսթաֆա Քեմալը, այդ պայմանագրի իմաստով
 պիտի պարպվի թուրք ուժերից և հանձնվի Հայաստանի

Հանրապետության: Պայմանագրի այդ պահանջը իրագործելու
 փոխարեն՝ Մուսթաֆա Քեմալը արշավանք է կազմակերպել դեպի
 մեր պետության սահմանները և նպատակ ունի իր բռնությամբ
 գրաված գավառներին կցել նոր հայկական հողեր ևս:

Ոչ միայն այդ:

Նա նպատակ ունի ջախջախել նաև հայ ժողովրդի
 դիմադրական ուժը, մի անգամ էլ մեզ արյունաքամ անել, որպեսզի
 հնարավորություն ունենա երկար պահել իր բռնավոր ճիրաններում
 մեր հայրենական ժառանգությունը: Քեմալը կամենում է անհնարին
 դարձնել գաղթի ճանապարհներին հյուսված մեր ժողովուրդի
 վերադարձը հայրենիք: Նա նպատակ ունի մեր ժողովրդի տարագիր
 գավակներին ընդմիջտ զրկել հայրենիքի քաղցրությունից ու
 հարազատ պետության հովանավորությունից:

Փորձության օրեր են, հայ ժողովուրդ: Արտաքին թշնամու
 արշավանքին մենք պիտի պատասխանենք կուռ դիմադրությամբ:
 Անպատկառ թշնամուն մենք պետք է դուրս շարտենք մեր երկրի
 սահմաններից: Նա այնպիսի հարված պիտի ստանա մեր զինյալ
 բազկից, որ խոնարհի օգոստ. 10-ի պայմանագրի առջև, ձեռք քաշե ոչ
 միայն մեր այսօրվա սահմաններից, այլև մաքրե նախկին Թրքա-
 Հայաստանը:

Արտաքին թշնամին թող իմանա, հայ ժողովուրդ, որ
 Անկախության և Հայրենիքի նվաճման խնդրում տարաձայնություն
 չկա հայ քաղաքական կուսակցությունների միջև: Մենք, հայ
 քաղաքական մտքի տարբեր հոսանքներս, այսօր վստահությամբ ենք
 վերաբերվում մեր Կառավարության այն բոլոր ջանքերին, որոնք
 նպատակ ունեն հաղթել և դուրս վանել թշնամուն մեր սահմաններից:
 Մենք այք չունենք դրած ուրիշի սեփականության վրա: Մենք
 կամենում ենք պահպանել և տիրանալ մեր հայրենի
 սեփականության: Այս խնդրում մենք համերաշխ ենք մեր
 Կառավարության հետ: Քեզ էլ, հայ ժողովուրդ, հրավիրում ենք
 միակամ լինել նրա հետ, նեցուկ կանգնել նրա ձեռնարկած
 միջոցներին և արտաքին թշնամու դիմաց մոռանալ ամեն
 տարաձայնություն ու պառակտում:

Արտաքին թշնամուց, թուրքական փաշաներից ու բեկերից,
 դու բարիք չպիտի սպասես, հայ ժողովուրդ: Ամեն բարիք ու
 երջանկություն դու պիտի նվաճես քո լարված աշխատանքով ու
 եռանդով:

Տույց տուր քո աշխարհաշեն ձիրքերը, քո դիմադրական կորովը, այսօր պատերազմի դաշտում, վաղը խաղաղ աշխատանքի մեջ:

Հանրապետության դրոշակի տակ դեպի՝ ռազմադաշտ, դեպի՝ հաղթություն:

Հ. Յ. Դաշնակցության Երևանի Կենտր. կոմիտե
Հայ ժող. կուս. Հայաստանի Կենտր. կոմիտե
Հայ Ռամկ. կուսակց. Հայաստանի Կենտր. կոմիտե
Հայաստանի Սոց. Դեմ. Բան. կուսակց. Կենտր.
կոմիտե
Սոց. Հեղ. կուսակց. Հայաստանի Կենտր. կոմիտե
Ս.-Դ. Հնչակյան կուսակց. Երևանի Կենտր. կոմիտե»
(«Ճակատամարտ», 1920 դեկտ. 14):

Իր գերմարդկային ճիգերուն մեջ մինակ էր Հայաստանը...

Լուս էր աշխարհը, և այդ լուս աշխարհը իր համակրանքներով թուրքին հետ էր և ոչ Հայաստանի. Իտալիա և Ֆրանսա հայտնապես կաջակցեին Թուրքիո. Ֆրեմլի դավադիր ձեռքը հասած էր մինչև Կարիսպոլիսի հայրենիքը և իտալական բանվորությունն իսկ ոտքի հանած նահատակ Հայաստանի դեմ. իտալացի համայնավարները թույլ չէին տար գորք բառնալ Հայաստանի և, ընդհանրապես, Կովկասի համար. անգլիական բանվորները խնայողություն և զորացրում կպահանջեին. ամենքը «հոգնած» էին, և «հոգնած»-ները լարված ճիգերով կղավեին իրարու դեմ...

Մեզ հետ չէին մինչև իսկ մեր հարևանները, որոնցմե մասնավորաբար Վրաստանը մահվան դողի մեջ կհետևեր պատերազմին, ստույգ գիտնալով, որ «քեմալական գորքերը, - ինչպես որ կգրեր վրացական կեդրոնական օրգանը «Պորպա» («Պայքար»), - կձգտին Հայաստանի վրայով միանալու բոլշևիկներուն», ետքեն, այս ծրագրին մեջ հաջողած պարագային, «Վրաստանը ևս քեմալական-բոլշևիկյան ուժերով օղակելու համար»:

Իրականին մեջ Թուրքիա ձևապես պատերազմ կհայտարարեր համայն աշխարհի, թեև այդ պատերազմը առայժմ և փաստորեն միայն Հայաստանի դեմ էր:

Այսքան ծանրակշիռ բնույթ ուներ Հայաստանի դեմ շղթայազերծված պատերազմը, որովհետև այդ պատերազմը ուղղված

էր հետպատերազմյան աշխարհի իրավական գլխավորագույն պատվանդաններեն մեկուն՝ Սևրի դաշնագրին դեմ.

«Այժմ ընդհանրապես մոռցված է, - պատերազմի ամենատաք օրերուն, 1944-ին, կխոստովաներ Սըր Էտ. Կրիկ՝ Մեծն Բրիտանիո պատերազմական նախարարը Մերձավոր և Միջին Արևելքի մեջ, - թե առաջին երկիրը, որ խախտեց 1919-ի խաղաղության կարգադրությունը (սեթլման), Ճապոնը չէր, այլ Թուրքիան» (Սըր Կրիկ, «Բրիտանական արտաքին քաղաքականությունը», 1944, Լոնդոն, էջ 112):

Հայաստանի դեմ պատերազմելով՝ 1919-ի այս «սեթլմանը» փոխելու նպատակը կհետապնդեին թե՛ Ռուսիա և թե՛ Թուրքիա:

Անցողակի նկատենք, որ ոչ միայն մինչև պատերազմը, այլև պատերազմի բովանդակ տևողության, անոր առաջին վայրկյանեն մինչև վերջին վայրկյանը, մինչև Ալեքսանդրապոլի դաշնագրին կնքումը, Ռուսիա ամեն կերպ - զենքով, ոսկիով, դիվանագիտությամբ, ռազմական շարժումներով՝ Հայաստանի հյուսիսեն և խռովություններով՝ երկրի ներսեն - կաջակցեր իր զինակցին.

- Երբ մեր նավը պահ մը կանգ առավ Տրապիզոնի առջև, մենք իսկ ակնատեսս վկաները եղանք, թե ինչպես ռուսական նավերն ռազմամթերք կկուտակեին ծովափը: Այս ցամաքահանումը սկսած էր մինչև մեր նավուն ժամանումը, որովհետև ծովափը մենք մթերված տեսանք հսկա քանակությամբ ռուսական զենքեր...

Այսպես հայտարարեց, իր տիկնոջը ներկայության, Համբարձում Մելիքյանի ապարանքին մեջ, Թիֆլիս, զինք Հայաստան հրավիրելու գացած հայ պատվիրակության, մեծանուն Կարլ Կաուցկի, նախագահը հանրաձանոթ ընկերվարներե բաղկացած այն շքախումբին - անդամակցությամբը Ռամզեյ Մաքտոնալտի, Թոմաս Շոուի և Տիկ. Սենտուրնի (Անգլիա), Վանտերվելտեի, Հյուսմանսի և տը Պրյուբերի (Պելճիգա), Ինկելսի և Ռենտոլի (Ֆրանսա), ու նաև մեծանուն Կարլ Կաուցկիի - որ թուրքնհայ պատերազմի օրերուն, վրացական կառավարության հրավերով, այցի եկած էր Վրաստան*:

* Այս պատվիրակությունը Թիֆլիս հասավ սեպտ. 14-ին և հոն մնաց երկու շաբաթ, Կ. Կաուցկի եկավ ավելի ուշ, սեպտ. 30-ին, և Թիֆլիս մնաց մինչև դեկտ.:

Մեծ Նենգը կզինեթ Թուրքիան, զինակցաբար թուրքին հետ կկռվեթ մեր դեմ, ներսեն, դավերով և ըմբոստացումներով, կուժաբամեր մեր հայրենիքը ճիշտ այն օրերուն, երբ իր համաձայնությամբը Մոսկվա մեկնած էր Հայաստանի պատվիրակությունը – գլխավորությամբ Լևոն Շանթի – մեր հայրենիքի անկախության շուրջ իրեն հետ իրավախոհության գալու համար**...

Պատվիրակությունը Մոսկվա հասավ մայիսի առաջին օրերուն:

Սակայն դավերը շարունակվեցան նաև այս Պատվիրակության շուրջ, թե՛ Մոսկվայեն դուրս և թե՛ բուն իսկ Մոսկվայի մեջ, ուրկե՛ Լ. Շանթ և իր ընկերները հարկադրվեցան վերադառնալ Հայաստանը՝ բանակցությունները, Չիչերինի առաջարկով, Երևանի մեջ շարունակելու համար...

Պատվիրակությունը Երևան հասավ սեպտ. 4-ին, երբ երկու շաբաթ վերջ, մեկեն և անակնկալաբար, պատերազմը պիտի սկսեր...

1920 հոկտ. 11-ին Թիֆլիսեն Երևան հասավ Ռուսիո լիազոր բանագնացը՝ Լըկրան, իրեն հետ բերելով... 47 հոգիներե բաղկացած պատվիրակություն մը և քարոզչական գրականությամբ լեցուն տոպրակներու ամբողջ վազոն մը:

Կ. Կաուցկի հոժարեցավ իր տիկնոջը հետ գալ Հայաստան, սակայն պատերազմը արգելք եղավ իր այս մտադրության. – Ես կճանչնամ ձեր ժողովուրդը և ծանոթ եմ ձեր Դատին, որուն հանդեպ ջերմ համակրանք ունիմ. շինարար ժողովուրդ մըն եք. տեղեկացա, որ Թիֆլիս քաղաքի անշարժ գույքերու շուրջ 70 %-ը հայերու կպատկանի, – ըսավ Կ. Կաուցկի հայ պատվիրակության, որուն կանդամակցեին հանգուցյալ Բախշի Իշխանյան (այս վերջինի գերմաներեն աշխատությունը Անդրկովկասի մասին կարդացած էր Կաուցկի և կնիշեր), բժ. Ռուբեն Յուզբաշյան և տողերս ստորագրողը:

** Պատվիրակության կանդամակցեին մեր ընկերներեն իրավաբան Համբարձում Տերտերյան և Հայաստանի Խորհրդարանի անդամներեն Լևոն Ջառիփյան:

Այս վերջինը՝ Լևոնը, և իր կյանքի ընկերուհին՝ Հռիփսիմե Ջառիփյան – երկու բյուրեղատիպ հանրային գործիչներ – 1921-ի ապրիլյան մեծ գաղթին Երևանեն դեպի Պարսկաստան, Ասրպատականի մեջ, երկու ուրիշ կիներու հետ, անհետ կորսվեցան:

Եղերաբախտ զոհերու դիակներն իսկ չգտնվեցան:

Իր ժամանումեն երկու օր վերջ, հոկտ. 13-ին, Լըկրան հանուն Ռուսիո հետևյալ երեք պահանջները դրավ Հայաստանի կառավարության հանձին Լ. Շանթի.

1.– Հրաժարիլ Սևրի դաշնագրեն:

2.– Հայաստանի մեջեն անցք տալ խորհրդային զորքերուն, որոնք իրենց ռազմամթերքով պիտի երթան միանալու Մուսթաֆա Քեմալին դաշնակիցներու դեմ կռվելու համար:

3.– Հայաստանի և իր հարևաններու միջև եղած սահմանային վեճերը կարգադրել Ռուսիո միջնորդությամբ:

Առաջին կետը – հրաժարում Սևրեն – վճռաբար մերժվելով, այլ կետերու շուրջ ստորագրվեցավ համաձայնության նախագիծ մը Լըկրանի և Հայաստանի կառավարության միջև:

Ահա այդ համաձայնության գլխավոր կետերը.

1.– Խ. Ռուսիա կճանչնա Հայաստանի անկախությունը և ներքին անձեռնմխելիությունը. Զանգեզուրը մաս պիտի կազմե Հայաստանի. Ղարաբաղի և Նախիջևանի վիճակը պիտի ճշտվի իրավարարությամբ:

2.– Խ. Ռուսիա անհապաղ պիտի միջամտե՝ կասեցնելու համար հայերուք պատերազմը. 1914 թվի սահմանին վրա պիտի ստեղծվի չեզոք գոտի մը և սահմանավեճը – հայերու և թուրքերու միջև – պիտի կարգադրվի Ռուսիո բարյացակամ միջամտությամբ:

3.– Հայաստան կհոժարի իր հողերու վրայեն դեպի Թուրքիա անցք տալ ռուսական զորքերուն. Հայաստանի մեջեն դեպի Թուրքիա փոխադրվելիք ռուսական զինամթերքին 30 %-ը պիտի մնա Հայաստանի:

4.– Հայաստան կընդունի Ռուսիո իրավարարությունը վիճելի հողամասերու հարցին մեջ իր հարևաններու հետ:

Մյուս կետերը – ուր կիստվի առավելաբար Ռուսիո աջակցությանը մասին Հայաստանի – երկրորդական արժեք ունին, եսկան չեն:

Լըկրան այս համաձայնությունը առնելով՝ կմեկնի Պաքու, ուր կմնա գրեթե մինչև պատերազմի վախճանը...

Կուգա նոյ-ի վերջերը, երբ Խատիսյանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլ պիտի մեկնեթ՝ Թուրքիո հետ ծանոթ դաշինքը ստորագրելու համար:

Լրկրանի ճամփորդության յս կարճատև շրջանին՝ իր Երևան – Պաքու երթուղարձին՝ բուն Պաքվի մեջ վերջնապես կվճռվի մեր տարաբախտ հայրենիքի ճակատագիրը:

1920 հոկտ. 30-ին ինկավ Կարսը, և ճիշտ նույն օրը, հոկտ. 30-ին, Սթալին հյուսիսեն հասավ Պաքու, ուր արդեն կգտնվեր Լրկրան:

Կարսի անկումը ինքնին բախտակշիռ դեպք մըն էր, որ պիտի անդրադառնար մեր բովանդակ երկրի ճակատագրին վրա:

Բազմաթիվ երևույթներ մեզ իրավունք կուտան խորհելու, որ Մոսկվա ստույգ գիտեր Կարսի վիճակված տագնապի մասին, և այս գիտնալով է, որ Սթալին կաճապարեր Պաքու*...

Տակավին Սթալինը Պաքու չհասած, արդեն Պաքու խմբված էին բազմաթիվ ականավոր բուլշևիկներ՝ Քիրով, Միկոյան և ուրիշներ (իսկ փոքրավորներեն՝ Ասքանազ Մոավյան, Ավիս Լուրիջանյան, Ս. Տովկեյան, Կասյան և այլն):

Ասոնք բոլորը խմբված էին Նավթաշխարհի կեդրոնին մեջ՝ հոնկե Հայաստանի կործանումը, ձեռք ձեռքի Քեմալի հետ, արագորեն և հաջողությամբ գլուխ հանելու համար:

Հայաստանի «խորհրդայնացում»-ով ինքնին պիտի «խորհրդայնանար» նաև Վրաստանը (որուն անկախությունը «ճանչցած» էր Մոսկվան և որուն մայրաքաղաքին մեջ՝ դեսպանի հանգամանքով՝ Ռուսիան կներկայացներ նույնինքն Քիրով), և այսպիսով բովանդակ Անդրկովկասը, առանց Քեմալին բաժին հանված պարզեր նկատի առնելու, վերստին պիտի միակցվեր Ռուսիո:

Պաքվի մեջ, 1920 նոյ. 4-ին, գլխավորությամբ Սթալինի, տեղի կունենա պատմական ժողով մը, որու մասին մեր ունեցած տեղեկությունը, թեև չափազանց աղքատիկ և ժլատ, սակայն, անկասկած, ավելի քան արժեքավոր է:

Սթալինի «Ամբողջական գործերու» Դ հատորի «Կենսագրական քրոնիկ»-ի մեջ, «1920 նոյ. 4»-ի տակ, կկարդանք.

«Ի. Վ. Սթալին կմասնակցի հարցերու քննությանը – բանակցությանց մասին Վրաստանի հետ և կացությանը մասին

* Մենք իսկ այս մասին ավելին կրնայինք ըսել, սակայն տակավին պահը չէ խոսելու, այս բոլոր հարցերը կպարզե լոկ ճշմարտության հետամուտ անաչառ ապագան...

Հայաստանի մեջ (ընդգծումը՝ մեզմե.– Ն.) – Ազրայեճանի Կոմկուսի Կեդր. կոմիտեի Պոլիտբյուրոյին և Համամիութենական Կոմկուսի Կեդր. Կոմիտեի Կովկասյան բյուրոյի անդամներու հետ տեղի ունեցած միատեղ նիստին» (Ի. Սթալին, «Ամբողջական գործեր», հ. Դ, 1947, Մոսկվա, էջ 476):

Դժվար չէ կուսակել, որ «կացությանը մասին Հայաստանի մեջ» տարբեր բան չէ, քան, առաջին հերթին, քննությունը այն համաձայնագրին, որ Լրկրան իրեն հետ Երևանեն բերած էր Պաքու:

Նույնքան ստույգ է, որ այդ ժողովին մեջ մերժվեցավ Լրկրանի տարած համաձայնագիրը, վերջնապես վճռվեցավ Հայաստանի «խորհրդայնացում»-ը, և այդ ժողովին մեջ ալ ճշտվեցավ Հայաստանի անդրանիկ շեղումի կազմը, գլխավորությամբ Ս. Կասյանի:

Այս մերժումի իմաստով արդեն ակնարկ մը կա մեզի ծանոթ Ս. Պավլովիչ-Վոլոնտյորի գրքույկին մեջ, որ զգալի չափով մը նվիրված է Հայաստանի:

Խորհրդային Ռուսիո հետ մենք երեք թուղթ ստորագրած ենք.– 1920 օգոստ. 10-ին, 1920 հոկտ.-ի վերջերը (բուն թվականը մենք չունինք) և 1920 դեկտ. 2-ին:

Այս երեք թուղթերն ալ ստորագրված են Խ. Ռուսիո անփոփոխ բանագնացին Լրկրանի հետ:

Առաջին երկու թուղթերու ուժով Հայաստան կշարունակեր պահել իր անկախությունը, մինչ երրորդով՝ վերջ կտրվեր իր անկախության:

Առաջին երկու համաձայնություններեն մեկնումեկը հիմ առնելով (թերևս օգոստ 10-ինը, որուն իր խորքին մեջ կնույնանար 1920 հոկտ.-ինը) Ս. Պավլովիչ-Վոլոնտյորը կգրե.

«Քեմալի Թուրքիան ծանր վայրկյան մը կապրեր, մինչ ռուսական զինադադարի պայմանները Հայաստանի հետ մեզ կպարտադրեին, մեզի համար բոլորովին անըմբռնելի պատճառներով, դաշնակներուն զիջելու Էրզրումի նահանգի որոշ մասերը և Շախթախթի – Ճուլփա երկաթուղագիծը. այս պայմանները երևակայական կդարձնեին Նախիջևանի շրջանի բռնագրավումը մեր կողմ և հարվածի տակ կդնեին մեր թույլ կապը Թուրքիո հետ, մինչ Հայաստանի դյուրություն կուտային ստանալու իրեն պակասող պարենը Իրանի հյուսիսային հարուստ շրջանեն (պարսկական Ատրպատականեն) և կապ պահելու անգլո-իրանյան գործերու հետ,

որոնք Թեհրանեն կշարժվեին դեպի Ռեշտ, Էնզելի, դեպի Իրանի հյուսիսային սահմանները: Այս ամենը սպառնական վիճակ կստեղծեին Պաքվի մեր շրջանին համար: Միաժամանակ այն ծանր կացությունը, որուն, նույն զինադադարի հետևանքով, կմատնվեին Քեմալի Թուրքիան, կմղեին թուրք երկրի առաջնորդը ըլլալ վճռական և խիզախիլ հարձակումի դաշնակներու դեմ, որպեսզի, նմանողությամբը Աղեքսանդր Մակեդոնացիի, կարելի ըլլար թուրքի հարվածով մը դիվանագետներու հյուսած գորոյան հանգույցը լուծել» (Մ. Պավլովիչ-Վոլոնտյոր, «Գաղութային և ազգային քաղաքականության հարցերը և Երրորդ Միջազգայնականը», էջ 44):

Այս բոլոր նկատումներով, ինչպես ըսինք, Պաքվի նոյ. 4-ի ժողովին կողմէ մերժվեցավ համաձայնության այն նախագիծը, որ Լըկրան Երևանեն իրեն հետ տարած էր Պաքու:

Եվ այդ պատճառով իսկ Լըկրան անմիջապես չվերադարձավ Երևան...

Ցավով պիտի նկատենք, որ այս պատմական ժողովին ո՛չ ատենագրությունը և ո՛չ ալ որոշումները ցարդ հրապարակված չեն:

Ուստի մեզ դժվար է ստուգապես ըսել, թե ի՞նչ էր այդ ժողովին վերաբերումը մասնավորաբար Թուրքիո՞ հանդեպ, որուն գորքերը հաղթականորեն կհառաջանային դեպի Ալեքսանդրապոլ:

Ուղղակի պատասխան այս հարցին մենք չունինք, սակայն անուղղակի պատասխան ունինք:

Նույն «Կենսագրական քրոնիկ»-են կտեղեկանանք, որ նոյ. 4-ի նիստեն անմիջապես վերջ, 1920 նոյ. 6-ին, Սթալին հանդես կուգա մեծակշիռ զեկուցումով մը – «Պրոլետարական դիկտատուրայի երեք տարիները» – Պաքվի Խորհուրդի նիստին:

Այդ զեկուցման մեջ Սթալին եռամյա դիկտատուրայի վաստակներեն կարևորագույնը կնկատեր Քեմալական Թուրքիան, բարեկամությունը այս երկրին հետ:

Այս իսկ նկատումով զեկուցումը անմիջապես, Պաքվի «Կոմունիստ» պաշտոնաթերթի 1920 նոյ. 4-ի և 11-ի թիվերով նույնությամբ կհրապարակվի հոն արձարձված տեսակետները հանրության լայն խավերու սեփականությունը դարձնելու համար:

Ու երբ այս էր հրապարակային վերաբերումը Թուրքիո հանդեպ, որոշ է այլևս, որ նույնն էր վերաբերումը – սերտորեն բարեկամական – նաև նոյ. 4-ի գաղտնի նիստին մեջ:

Իր զեկուցումով Սթալին կօրինականացներ այն զիջումները – քաղաքական և հողային – որ նոյ. 4-ի դրնփակ նիստին մեջ Խորհրդային իշխանությունները որոշած էին Հայաստանի հաշվին կատարել Թուրքիո:

Սակայն գաղտնիք չէ, որ այս զիջումները կատարված էին շատ ավելի առաջ, և հանդիսավորապես նվիրագործված էին Արևելյան ժողովուրդներու Պաքվի համաժողովին մեջ (1920 սեպտ.):

«Իզվեստիա» իր 1920 սեպտ. 25-ի թիվով (№ 213) հրատարակության կուտար այս համաժողովին մեջ արտասանված Ռատերի ճառը, ուր կային հետևյալ տողերը.

«Բանվորն է և գյուղացին է Արևելքի, վայրկյաններ կրնան ըլլալ, երբ մենք իսկ կհորդորենք ձեզ պատառ մը նետել աշխարհակալական զազանին բերանը, թույլ չտալու համար, որպեսզի ան փարատե մեզ» (Վ. Լեպետև, «Բոլշևիկները, Հայաստանը և Վրաստանը», – «Ռևոլյուցիոննայա Ռոսիա», Փրակա, 1921 հուլիս, № 10, էջ 18):

Եվ Ռատեր անցյալէն կհիշատակեր Պրեսօի պարագան, ըսել ուզելով, որ նույն ձևի զիջումներ կրնան ըլլալ նաև ապագային:

Համաժողովին մեջ չկար մեկը, որ չգիտնար, թե խոսքը Հայաստանի՞ մասին է:

Թուրքերը գիտեին այս պարագան, ուստի և անվախորեն կհառաջանային:

Անոնք գիտեին, որ Հայաստանի մեջ զիրենք պիտի դիմավորե ոչ թե թշնամի, այլ բարեկամ ուսուր.

«Թուրքերը, բնականորեն, կձգտեին օգտագործել բարենպաստ վայրկյանը, – ինչպես որ պիտի ըսեր «Մեծ Խորհրդային հանրագիտարանը», – հողային գրավումներ կատարելու համար» (հ. Գ, էջ 437):

Եվ որովհետև նոյ. 4-ի գաղտնի նիստին մեջ արդեն վճռված էր Հայաստանի ճակատագիրը, ուստի Սթալին, որ Պաքուն Մոսկվա դարձավ նոյ. 12-ին, իր մեկնումեն առաջ, նոյ. 9 թվականով, հետևյալ հեռագիրը կուտա – Չուդայի դասական համբույր մը – Հայաստանի «խորհրդայնացման» գործը վարող բոլշևիկ պետերուն.

«Անհրաժեշտ է ամեն գնով փրկել Հայաստանը, կարելի եղածին չափ շուտ պետք է ազատել Հայաստանը» (Հ. Աստուրյան, «Պատմություն Հայոց», Պուենտո Այրես, 1947, էջ 479):

Այս հեռագրին հետքը մենք Մթալինի «Ամբողջական գործերու» մեջ չգտանք:

Օր մը այս հեռագիրը իր ամբողջությանը մեջ կիրապարակվի անշուշտ և այն ատեն հայտնի կդառնա, թե ի՞նչ հեռագիր է այս և ինչո՞ւ տրված է*:

Սակայն այսօր իսկ որոշ է, որ Մթալին իր հեռագրով նոյ. 4-ի գաղտնի նիստին որոշումները կիրառանքեր փոքրավորներուն. արագացնել Հայաստանի «ազատագրումը» դաշնակ չարագործներու լուծեն և բարեկամ քեմալականներու հետ միասին շտապ ձեռնարկել – ներսն և դուրսն – հայ երկրի «խորհրդայնացման»...

Այս «փրկության» մասին էր խոսքը...

Այս էր անա պատկերը այն մթնոլորտին, որ հայ-թրքական պատերազմի օրերուն ստեղծված էր մեր երկրին շուրջ:

Ընդհանուր համակրանքի և փառաբանանքի մեջ Քեմալ կտրորեր Հայաստանը, որուն շուրջ, համայնավար քարոզչության ազդեցությանը տակ, ընդհանուր թշնամանք և ատելություն ստեղծված էին...

Պաքվի «Կոմունիստ» պաշտոնաթերթը իր 1920 հոկտ. 8-ի թիվով Հայաստանի և Հ. Յ. Դաշնակցության դեմ կիրատարակեր իր անբարոյությանը մեջ սահմոկեցուցիչ վավերագիր մը, գոր անդրկովկասյան համայնավար կազմակերպությունները ուղղած էին «համայն աշխարհ»-ի: «Կոչ»-ը կվերջանար հետևյալ բացականչություններով.

* Մեզ անմեկնելի կմնա, թե նման հեռագիր մը եթե կա – իսկ, ըստ երևույթին, այս «ծուխ»-ին տակ ինչ-որ «կրակ» մը կա – ինչո՞ւ այդ պարագային Մթալինի «Կենսագրական քրոնիկ»-ին մեջ հետքն իսկ չկա այդ հեռագրին, երբ գիտենք, որ «ազգերու հոր» ամեն քայլը ամենայն բարեխղճությամբ կարձանագրվի այդ «Քրոնիկ»-ին մեջ: Օրինակ, 1924 մայիս 23-ի տակ կկարդանք.

«Ի. Վ. Մթալին կնվիրե Ս. Մ. Քիրովի իր գործը «Լենինի և լենինիզմի մասին», հետևյալ մակագրությամբ. – «Բարեկամին իմ, եղբորը սիրելի հեղինակեն – Մթալին» (Ի. Մթալին, «Ամբողջական գործեր», հ. 2, Մոսկվա, 1947, էջ 422):

Կրնա՞ք բացատրել, թե ինչո՞ւ բարեկամի մը գրքույկ նվիրելը «Քրոնիկ»-ին մեջ կարձանագրվի, մինչ ամբողջ ժողովուրդի մը «փրկության»-ը մասին տրված հրահանգ-հեռագիր մը չարձանագրվիր:

– Մա՛հ Հայաստանի բանվորներու և գյուղացիներու վրա բռնություն կատարողներուն...

– Կեցցե՛ հեղափոխական Արևելքը...

Բռնություն և կատարողը... հայ կառավարությունն էր, իսկ հեղափոխական և Արևելքը... Քեմալը:

«Մնում է միայն ուրախանալ, – Քեմալի հաղթական հառաջխաղացումին առիթով կգրեր Թիֆլիսի «Կոմունիստ»-ը իր հոկտ. 24-ի թիվին մեջ, – որ դաշնակցական Հայաստանը գտնվում է պոզահարող կովի դրության մեջ, որին Աստված եղջյուրներ չի տվել*»:

Պաքվի «Կոմունիստը» «Անթանթի ճերմակ շուն» կանվաներ Հայաստանը՝ փառաբանական հողվածներ գետեղելով Քեմալի հասցեին...

Իսկ Մոսկվայի համայնավար գործակալները, ծպտյալ վիճակի մեջ, թե՛ հայ բանակեն ներս և թե՛ ժողովուրդի մեջ, ոչ միայն բերանացի, այլև տպագիր թռուցիկներով, ամեն կերպ կջլատեին արյունաքամ Հայաստանի դիմադրական կորովը Քեմալի հաղթանակը լրիվ և ամբողջական դարձնելու համար: Մ. Պ. Պավլովիչ-Վոլոնտյոր (Մ. Վելյաման), թրքական արշավի ամենեն տազնապոտ օրերուն, կգրեր.

«Թրքական արշավը Հայաստանի վրա, գրավումը Քեմալի գործերու կողմե Սարըղամիշի և Արտահանի, թիկնանցական

* Այս ուրախացողներեն չնչինն Գևորգ Աբով, 1929-ին իսկ խոսելով Բրեստի ամոթալի դաշինքի մասին, ուր Հայ Դատը վաճառվեցավ, և այս դաշնագրին մերժումը անդրկովկասյան Սեյմի «ամենախայտառակ գործ»-ը համարելով, կգրեր.

«Բրեստ-Լիտովսկի համաձայնագրին ամենակատաղի կերպով դեմ էին դաշնակցականները, որովհետև այդ համաձայնագրով Տաճկաստանը պետք է ստանար իր նախկին հողամասերը, 1878-ի սահմաններով, եթե միայն այդ մասին համաձայնություն տար տեղական բնակչությունը (որ բնակչությունը... – Ն.): Իսկ Դաշնակցությունն այդ մասին լսել անգամ չէր ուզում, որովհետև նրա նպատակն էր ծովից-ծով Հայաստան, Կիլիկիան էլ հետը» (Գ. Աբով, «Դաշնակցությունն անցյալում և այժմ», Երևան, 1929, էջ 69):

Իր հետևորդները խրատելով Լենինը կըսեր.

«Երբ դուն ընդունակ չես ցեխի մեջ փորի վրա պատկած սողալու՝ դուն հեղափոխական չես, այլ դատարկախոսի մեկը»:

Հավատարիմ իր ուսուցչի այս պատգամին՝ վատարին Աբով կշարունակե մինչև այսօր ցեխի մեջ փորի վրա պատկած սողալ...»

շարժումը Կարսի հյուսիսեն, որ արշավող բանակին հնարավորություն կուտա տիրանալու դեպի Կարս տանող Արտահանի շրջանի բոլոր ճամփաներուն և կտրելու Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը, այս հարձակողականը, որ կկատարվի բավական մեծ ուժերով և միաժամանակ հարվածի տակ կդնե Երևանը՝ դաշնակցական Հայաստանի մայրաքաղաքը, ու նաև Թիֆլիսը՝ մայրաքաղաքը մենջևիկ Վրաստանի, միջազգային հակահեղափոխության այս երկու որջերը Կովկասի մեջ, պիտի ունենա միջազգային խոշոր նշանակություն անկախաբար իր ելքեն» (տե՛ս հեղինակի քանիցս հիշատակված գրքույկը, էջ 30):

Նույն գրքույկին մեջ կրկին անգամ անդրադառնալով «մանավանդ Հայաստանի, այդ գարշահոտ, սև-հարյուրակային շարավախոցին Կովկասի և Թուրքիո սահմաններուն վրա, բովանդակ կովկասյան հակահեղափոխության այդ նողկալի օջախին» (էջ 42), Պ.-Վոլոնտյոր կգրեր.

«Հեղափոխական թուրք բանակներու հաղթական արշավը դաշնակներու դեմ, միջազգային աշխարհակապության այդ գործակալներուն Կովկասի մեջ, զինակիցներուն հելուզակ Վենիզելոսի, որու անուևը հույն ժողովուրդի լավագույն տարրերը կձգտին սրբել ու նետել աշխարհի երեսեն, այդ արշավը կխախտե հողը Հայաստանի հետադեմ կառավարության ոտքերուն տակ և կշրջե միջազգային հակահեղափոխության ամբողջ ծրագիրը Արևելքի մեջ, ծրագիր մը, որ կձգտեր պահել և ուժեղացնել Հայաստանն ու Վրաստանը, այդ երկու պուրժուական բռնակալությունները, որոնք համաշխարհային կայսերապաշտության ժանտարմի դերը պիտի խաղան Կովկասի մեջ, իբրև եվրոպական և ամերիկյան ընչապետներու (plutocrate) շղթայված շուներ՝ դավելու համար Խորհրդային Ռուսիո, Ազրպեյճանի և Թուրքիո աշխատավոր զանգվածներու դեմ» (անդ, էջ 41):

Այս անմարդկային տողերը կգրվեին Մոսկվայի՝ մեջ – և Մոսկվայի՝ գրիչներու կողմե – ճիշտ այն օրերուն, երբ Հայաստան մահվան դողի մեջ իր կյանքի վերջին օրերը կապրեր...

Այսքան խոր էր թշնամանքը Հայաստանի հանդեպ, և այսքան բացահայտ՝ բարեկամությունն ու զինակցությունը Քեմալի հետ:

Լի էր անսահման թույնով պայքարը մանավանդ Սևրի դաշնագրի դեմ.

«Սևրի դաշնագրի շնականությանը առջև բոլորովին կտժգունին թե՛ չարաբաստիկ Պրեսթի դաշնագիրը և թե՛ անգամ Վերսայլի դաշնագիրը», – կհայտարարեին համայնավար Մ. Պավլովիչները («Կրասնայա Նով», Մոսկվա, 1921, թիվ 1, էջ 218):

«Աշխարհակալ լուծեն ազատագրվող հասարակական Թուրքիո հետ ենք մենք Սևրի դաշնագրի դեմ...», – Թուրքիո ուղղած իր 1920 նոյ. 29-ի ողջույնի մեջ կվկայեր Հայաստանի անդրանիկ Հեղկոմը (Բ. Բոքյան, «Արմենիա», հ. Բ, էջ 151):

«Թուրքիայի վզին կապեցին Սևրի դաշնագիրը, այդ երկրորդ ասիական Վերսայլը, որի տակ կա դաշնակցական Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը», – «Նորք»-ի էջերեն ցավով և ցասումով կարձագանքեր Հայաստանի համայնավար վարչապետներեն Ալ. Մյասնիկյան:

Անգամ 1939 հունիս 10-ին, արձագանքելով «Իզվեստիայի» 1939 մայիս 15-ի խմբագրականին, «Խ. Հայաստան» կգրեր.

«Թուրքիայի գիշատիչ բաժանումն (ընդգծումը՝ մեզմե.– Ն.) սկսվեց Մուղրոսի զինադադարից անմիջապես հետո (1918 թ.), Սևրի պայմանների համաձայն (1920 թ.)»: Ուրեմն դեռ երեկ իսկ, 1939-ին, Սևրը գիշատիչ էր ա՛յն «Խ. Հայաստան»-ներու և «Իզվեստիա»-ներու համար, որոնք այսօր իբրև թե Սևր կպաշտպանեն եղեր...

Սևրի դեմ այս թունավոր մթնոլորտի մեջ էր ահա, որ կնդվեր թուրքնեայ պատերազմը...

Ռուսիա և Թուրքիա ձեռք ձեռքի կսարսեին հիմերը այն վաստակի, զոր դաշնակիցները շահած էին առաջին համաշխարհային պատերազմի վախճանին...

Կսարսեին, ճիշտ է, միասնաբար, սակայն կսարսեին, իհարկե, տարբե՛ր նպատակներով:

Սևրի տապալումով Թուրքիա երկար ժամանակի համար հասած կըլլար իր նպատակներեն գերագույնին, և, տապալելով Սևրը, կշարունակեր բարեկամ մնալ Ռուսիո, եթե երբեք Ռուսիա նոր պայքարներ չպարտադրեր իրեն Արևմուտքի դեմ:

Այլապես Թուրքիա կմիանար Արևմուտքի՝ ընդդեմ Խ. Միության:

Ճիշտ հակառակն էր Ռուսիո համար:

Սևրի տապալումով Ռուսիա լոկ հանգրվան մը անցած կըլլար իր պայքարին մեջ, և, տապալելով Սևրը, կշարունակեր

բարեկամ մնալ Թուրքիո, եթե երբեք Թուրքիա հոծարեր նոր պայքարներու ընդդէմ Արևմուտքի:

Այլապես Ռուսիա կլքեր իր զինակիցը և ճակատ կհարդարեր անոր դէմ:

Այսինքն կըլլար այն, ինչ որ մենք այսօր ունինք:

«Քանի տակավին Վոսփորն ու Տարտանները կգտնվին դրամատիրական Եվրոպայի ձեռքը, – այն հի՛ն ու բարի՛ օրերուն, 1920-ին, ազատորեն կգրեր Ռուսիա, իսկ քաղցրորեն և... կունկնդրեր Թուրքիա, – քանի տակավին անգլիական ռազմատորմիդները ազատ մուտք կունենան դեպի Սև ծով, մինչ այդ Ուքրաինա և Խորհրդային Կովկաս կշարունակեն արյունաքամվիլ միջազգային հակահեղափոխության և անոր վարձկաններու դէմ մղված պայքարին մեջ: Միայն այն վայրկյանն սկսելով, երբ Սև ծովը կանցնի խորհրդային ձեռքերու մեջ, երբ Պոլսո վրա կծածանի կա՛մ թրքական կարմիր դրոշը, կա՛մ սևծովյան պետությանց խորհրդային դաշնակցության դրոշը, միայն այդ վայրկյանն սկսելով մենք կապրինք խաղաղ կյանքով և հնարավորություն կունենանք մեզ նվիրելու շինարար ստեղծագործ աշխատանքի» (Մ. Պավլովիչ-Վոլոնտյոր, «Գաղութային և ազգային քաղաքականության հարցերը և Երրորդ Միջազգայնականը», 1920, Մոսկվա, էջ 19):

1920-ին, երբ Լենինն տակավին տիրացած չէր ամբողջական Անդրկովկասին, իսկ Քեմալ դեռ մտած չէր Պոլիս, այդ ճակատագրական օրերուն երկու տազնապահար առաջնորդները նույն խոսքերը կկրկնէին, թէև անոնց տակ տարբէ՛ր բան կհասկնային և տարբէ՛ր նպատակներ կհետապնդէին...

Սերեն ետք, հերթը պիտի գար... Վերսայլի...

Ավելի ուշ Լենինի և Քեմալի օրինակին պիտի հետևէին Մուսուլինի, Հիթլեր և ուրիշներ...

Աշխարհին օրոր կարդալով՝ պարտվածները – Ռուսիա, Թուրքիա, Գերմանիա և Իտալիա – երկրորդ համաշխարհային պատերազմը կնախապատրաստէին:

1920 սեպտ. 23-ին սկսված պատերազմը վերջացավ երկու դաշինքներով, կնքված գրեթե միաժամանակ, ձևապես նույն օրն իսկ, 1920 դեկտ. 2-ին, զինակցաբար մեր դէմ կովող երկու պետություններու՝ Ռուսիո և Թուրքիո հետ, – Ռուսիո հետ՝ Երևանի մեջ, իսկ Թուրքիո հետ՝ Ալեքսանդրապոլի մեջ:

Այս դաշինքներով Հայաստան կբաժնվեր երկու հաղթականներու միջև, և երկու տապանաքար կդրվեր – ռուսական և թրքական – Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի գերեզմանին վրա...

Ալեքսանդրապոլի դաշնագիրը քեմալական Թուրքիո շահած առաջին միջազգային իրավաթուղթն էր:

Այդ դաշինքով առաջին պետությունը, որ կճանչնար քեմալական Թուրքիո իրավական գոյությունը, կհանդիսանար Հայաստանը...

Ատկե ավելի քան երկու տարի առաջ, 1918 հունիս 4-ին, Պաթումի դաշինքով, առաջին պետությունը, որ կճանչնար նորաստեղծ Հայաստանի իրավական գոյությունը, կհանդիսանար նախաքեմալական Թուրքիան...

Այսքան քմահաճ և այսքան անիմանալի են Պատմության խաղերը...

Տակավին դեկտ. 2-ը չէկած, արդէն 1920 նոյ. 29-ին, Հայաստանի անդրանիկ շեղկոմը Պաքվեն Իջևան հասած և հատուկ Հայտարարագրով մը հռչակած էր Հայաստանի «խորհրդայնացումը»...

Օր մը վերջ, նոյ. 30-ին, կառավարության ուղղած վերջնագրով մը, Հայաստանի «խորհրդայնացման» ճանաչումը կպահանջեր Լըկրան, Երևանի մեջ:

Եվ Հայաստանի Հանրապետության վերջին կառավարությունը, որ Ս. Վրացյանի վարչապետությամբ իշխանության եկավ նոյ. 25-ին, ընդամենը յոթը օր իշխանության վրա մնալով, 1920-ի դեկտ. 2-ին իր հրաժարականը կուտար՝ կանխապես ռուսահայ դաշնագիրը կնքելով:

Դաշինքը կստորագրէին, մեկ կողմէ՝ Դրո և Համբարձում Տերտերյան (Հայաստանի լիազոր-պատվիրակները), իսկ, մյուս կողմէ՝ Լըկրան (Ռուսիո լիազոր-բանագնացը):

Երևանի դաշնագրով ոչ միայն իշխանություն մը կփոխվեր (կերթար դահլիճ մը և կուգար նոր մը), այլև կփոխվեր ամբողջ պետական կառույց մը:

Հայաստանը կդադրեր գոյություն ունենալէ իբրև անկախ և գերիշխան երկիր մը և կդառնար խորհրդային հողամաս մը բովանդակ Խորհրդային Աշխարհին մեջ՝ իբրև անկէ անբաժան երկիր մը:

Թե՛ ձևապես և թե փաստորեն մեր երկրի գերիշխան իրավունքները – օտար երկրի մը հետ խաղաղություն կնքելու, դաշինք ստորագրելու և այլն – կփոխանցվեին Խորհրդային Աշխարհի կեղրոնին՝ Մոսկվայի:

Երբ Երևանի մեջ ռուսահայ դաշնագիրը կկնքվեր, Հայաստանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլի մեջ տակավին բանակցությանց մեջ էր:

Ջույգ դաշնագիրներեն նախ կնքվեցավ Երևանինը (ռուս-հայկականը) և ապա՝ Ալեքսանդրապոլինը (թուրք-հայկականը):

Երևանինը կնքվեցավ դեկտ. 2-ի ցերեկը, իսկ Ալեքսանդրապոլինը՝ դեկտ. 2-են լույս դեկտ. 3՝ գիշերվան ժամը 2-ին:

Թուրքերու հետ բանակցելու համար Հայաստանի պատվիրակությունը Երևանեն մեկնած էր 1920 նոյ. 23-ին, գլխավորությամբ Ալ. Խատիսյանի:

Այս պատվիրակությունը կարգված էր վարչապետ Հ. Օհանջանյանի դահլիճին կողմէ:

Բանակցությունները Ալեքսանդրապոլի մեջ սկսված էին նոյ. 25-ին և վերջացած դեկտ. 3-ի երկրորդ ժամուն:

Այս ինը օրերու մեջ Հայաստան երեք դահլիճ փոխած էր:

Պատվիրակությունը Ալեքսանդրապոլ մեկնած էր Հ. Օհանջանյանի դահլիճին կողմէ, բանակցությանց անցած Ս. Վրացյանի կարճատև վարչապետության շրջանին, և դաշինք ստորագրած Դրո-Միլին (դաշնակցական-բոլշևիկ) խառն դահլիճին հրահանգով:

Ընկ. Դրոն, անգուգական զավակը հայ ժողովուրդի, իրականին մեջ պատանդ մըն էր բոլշևիկներու ձեռքը և ոչ իշխանավոր մը:

Բուն իշխանավորը բոլշևիկ Միլինն էր՝ Ռուսիո կողմէ խորհրդայնացած Հայաստանի գորահրամանատարության կից կարգված քուխսարը (գործավար), որ իրականին մեջ, Մոսկվայի հրահանգներով, կվարեր մեր դավված և համայն աշխարհի կողմէ ուրացված հայրենիքի ճակատագիրը:

Ալեքսանդրապոլի մեջ դեկտ. 3-ի երկրորդ ժամուն թուրքնահայ դաշնագիրը, ճիշտ է, կստորագրեին *դաշնակցական* պատվիրակները, սակայն կստորագրեին հրահանգովը արդեն իսկ խորհրդայնացած Հայաստանի խառն իշխանության, որուն բունը տերը այլևս *բոլշևիկներն* էին:

Կարմիր Քրեմլը կդավեր Հայաստանի դեմ ոչ միայն Երևանեն, այլև բուն իսկ Ալեքսանդրապոլի մեջ:

Հոն էր՝ Ալեքսանդրապոլի մեջ՝ թիվ 2 Լըկրանը՝ Բուրու Մոլիվանի (վրացի)՝ որ Լըկրանի հետ Երևան եկած էր և Երևանեն նոյ. 24-ին (Խատիսյանի պատվիրակության մեկնումեն օր մը վերջ) անցած Ալեքսանդրապոլ՝ բանակցությանց մեջ իբրև թե Ռուսիան ներկայացնելու և մեզ օգնելու համար...

Թուրքերը արտոնած էին Մոլիվանիի մուտքը... Ալեքսանդրապոլ, սակայն մերժած անոր մասնակցությունը... բանակցությանց մեջ:

Անկասկած դավ մըն էր նաև ա՛յս խաղը...

Խոսելով համայնավար այս «ասպետի» մասին՝ Ալ. Խատիսյան կգրե.

«Հարկ կհամարեմ վճռականապես հայտարարել, թե Բուրու Մոլիվանի ավելի շատ խանգարեց մեզ, քան թե օգնեց: Խանգարեց այն բանով, որ, ինչպես Ալեքսանդրապոլի մեջ, այնպես և Կարս, կկազմեր միտինգներ, ճառեր կարտասաներ մեր դեմ, կպախարակեր Հայաստանի կառավարությունը և Պատվիրակությունը, կքարոզեր բոլշևիկյան ծրագիրներ և այսպիսով ցույց կուտար թուրքերուն, թե ան իրոք մեր դեմ է և ոչ թե մեզ հետ» (Ալ. Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 262):

Ռուսիո ներկայացուցիչները համախորհուրդ կդավեին Հայաստանի դեմ, – Լըկրան ու Միլին՝ Երևանի մեջ, իսկ Բուրու Մոլիվանի՝ Ալեքսանդրապոլի մեջ...

Պատվիրակության նախագահը՝ Ալ. Խատիսյան, իր գիրքին մեջ հետևյալ ձևով կուտա դաշնագրի ստորագրման մանրամասները.

«Վաղ առավոտյան, դեկտ. 2-ին, մենք իմացանք, որ բոլշևիկ հրամանատարը Քարվանսարայեն ուղարկած է Քարաբեքիր փաշային հետևյալ շնորհավորական հեռագիրը. «Ռուսաստանի պրոլետարիատից ողջուն թուրքական պրոլետարիատին»:

Մենք կսպասեինք հեռագրի, Հայաստանի նոր կառավարութենն:

Երեկոյան ժամը 6-ին ինձ հրավիրեց ուղղակի հեռագրաթելի մոտ Դրոն, ու ըսավ հետևյալը.

«Հեղափոխական կառավարության անունից հայտնում եմ ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել դաշնագիրը կամ ոչ»:

Լավ գիտակցելով դաշնագրի ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատվությունը, ես երկրորդ անգամ հարցուցի.

«Արդյոք կառավարությունը ստորագրելու կողմն է, թե մերժելու: Մենք սպասում ենք որոշ և պարզ հրահանգների»:

Դրոն պատասխանեց.

«Ես ձեզ ասացի արդեն: Գործեցեք համաձայն ձեր հասկացողության: Ես խոսում եմ ընկ. Միլինի և իմ անունից»:

Միլինը բոլշևիկների ներկայացուցիչն էր» (անդ, էջ 270):

Եվ Միլինն ալ միակ իրավատերն էր մեր երկրի:

Ռուսիա էթե կամենար և՛ ուժ ուներ, և՛ իրավական հիմ Ալեքսանդրապոլի դաշնագիրը չստորագրելու:

Սակայն Ռուսիա չստորագրելու համար ո՛չ իր ուժը գործածեց և ոչ ալ իր իրավունքը:

Ընդհակառակն, Քրեմլը այս երկուքեն թե՛ մեկը գործածեց և թե՛ մյուսը՝ Ալեքսանդրապոլի դաշնագիրը Թուրքիո միջոցով մեզ պարտադրելու համար:

Ուշագրավ մանրամասնություն:

Ճիշտ այն պահուն, երբ Ալ. Խատիսյան հանուն հայ կառավարության կհայտարարեր թուրք պատվիրակության, որ Հայաստան կհրաժարի Սերի դաշնագրեն, այդ նույն պահուն թուրք զինվորական նվազախումբը, որ թուրքերու կանխահոգ կարգադրությամբ տեղավորված էր Խորհրդաժողովի շենքի պատուհաններուն առջև, կսկսի նվազել – ի նշան ցնծության – «Էնթերնասիոնալ»-ը համայնավար կուսակցության օրհներգը...

Թուրքիա և Ռուսիա միասնաբար կհրճվեին, որովհետև զինակցաբար գերեզման կդնեին արդար ժողովուրդի մը վեց դարերու երազը...

Մի՛ շտ հիշենք և երբե՛ք չմոռնանք.

Ղեկտ. 2-ին արդեն իսկ խորհրդայնացած Հայաստանի համայնավար իշխանությանց հրահանգով դաշնակցական անիրավատու պատվիրակները, որոնք այլևս ո՛չ զիրենք կարգող իշխանությունը և ոչ ալ անկախ հայ հայրենիքը կներկայացնեին (երկուքն ալ անգո՛ղ ղեկտ. 2-են ի վեր, իսկ, ըստ բոլշևիկներու, անգո՛ղ նոյ. 29-են ի վեր), ղեկտ. 3-ին Ալեքսանդրապոլի մեջ կստորագրեին թուրքնհայ դաշնագիրը:

Այս պարագան ստույգ գիտեին թե՛ Երևանը (Մոսկվան) և թե՛ Էնկյուրին:

Անոնք գիտեին, որ Ալեքսանդրապոլի դաշնակցական պատվիրակները իրենց ետին Երևանի մեջ ո՛չ մեկ կովան ունեին, ո՛չ իրավական և ոչ ալ փաստական:

Գիտեին, որ հոն, Երևանի մեջ, այդ երկուքն ալ – թե՛ իրավունքը և թե՛ ուժը – դաշինքը ստորագրելէն օր մը առաջ, դաշինքը ստորագրած պահուն և դաշինքը ստորագրելէն ետքը, թե՛ ձևապես և թե՛ փաստորեն, արդեն իսկ փոխանցված էին բոլշևիկներուն:

Ահա մեր «լիազոր» պատվիրակները դաշինքը ստորագրելէն ետքը.

«Գիշերվա ժամը 2-ին (ղեկտ. 2-են լույս 3-ը),– կ'պատմե Ալ. Խատիսյան,– դաշնագիրը ստորագրվեցավ երկու պատվիրակություններու կողմն:

Մյուս օրը, ղեկտ. 4-ին, առավոտյան ժամը 8-ին, ուղղակի հեռագրաթելով հաղորդեցի Դրոյին, որ դաշնագիրը ստորագրված է և հարցուցի, կարո՞ղ է արդյոք Պատվիրակությունը Երևան գալ, և կարո՞ղ է արդյոք իր ազատության մասին երաշխավորություն ստանալ:

Ժամ մը ետքը Դրոն պատասխանեց.

– Խորհրդային իշխանության ներկայացուցիչը խոստանում է ազատություն Պատվիրակության անդամների համար, բայց չի կարող երաշխավորել այն» (ընդգծումը՝ Խատիսյանե. – Ն.):

Ու հակառակ այս երաշխիքի մերժումին՝ 16 հոգիներե քաղկացած պատվիրակությունը միաձայնությամբ կորոշե վերադառնալ Երևան:

Հայաստանի պատվիրակներու անպաշտպան վիճակի մասին լուր ուներ նաև թուրքը:

Պատվիրակության մեկնումեն քանի մը ժամ առաջ, Ալ. Խատիսյանի կներկայանա Գարապեթիբի ներկայացուցիչը՝ թուրք սպայակույտի ծանոթ սպաներեն Պեհաւտոսին Շաքիր – հետագային Թուրքիո ղիվանագիտական ներկայացուցիչը Երևանի մեջ – և փաշայի անունեն կառաջարկե անոր.

«Կարաբեթիբ փաշան աչքի առաջ ունենալով ձեզ համար Երևան գնալու վտանգը, կառաջարկե գնալ Կարս, իսկ այնտեղէն Էրզրումի վրայով Տրապիզոն կամ Արդվինի վրայով Բաթում՝ անցնելու համար Պոլիս կամ Թիֆլիս ըստ ձեր ընտրության: Հայտնեց նաև, որ ճանապարհորդության բոլոր հարմարությունները ինձ և իմ ընկերներու համար ապահովված կլինին: Անձամբ իմ կողմեն ես

շնորհակալություն հայտնեցի և ըսի, որ պիտի երթամ Երևան» (Ալ. Խատիսյան, «Հ. Հանր. ծագումն ու զարգացումը», էջ 271-272):

Մոսկվա և Էնկյուրի Ալեքսանդրապոլի դաշնագրի տակ դնել կուտան ստորագրությունները ահա այս պատվիրակներու, հալածական և իրավագուրկ, թե՛ քեմալական թուրքի և թե՛ ռուս բոլշևիկի աչքին...

Պատվիրակությունը ամբողջ կազմով դեկտ. 3-ին (երեկ. ժամը 9-ին) գնացք կառնե դեպի Երևան և հոն կհասնի հետևյալ առավոտ.

«Ժամը տասին առավոտյան հասանք Երևան: Հեռունենկատեցի կայաքանի կարմիր դրոշակը: Այնտեղ մեզ կապասեր քաղաքապետի օգնական Շահումյանը ինքնաշարժով:

Տուն գալով՝ ես հեռախոսով կանչեցի Դրոն և խնդրեցի անկե նշանակել կառավարության նիստ՝ Պատվիրակության գեկուցումը լսելու համար: Զեկուցումը նշանակվեցավ նույն օրը ցերեկվա ժամը 12-ին: Մենք ամբողջ կազմով գնացինք կառավարության տունը: Մեզ ընդունեցին Դրոն և Սիլինը: Մենք մանրամասն գեկուցում տվինք: Դրոն մեզ ըսավ, թե գործած ենք շատ ճիշտ, ստորագրելով դաշնագիրը, և թե իր խուսափողական պատասխանը ինձ՝ դաշնագիրը ստորագրելու մասին (երբ Ալեքսանդրապոլեն անոր հետ կխոսեի հեռագրով), պետք էր հասկնալ այնպես, ինչպես որ մենք հասկցած էինք: Պարզ էր, որ հեղափոխական նոր իշխանությունը չէր ուզեր իր վրա վերցնել պատասխանատվությունը դաշնագիրը ստորագրելու համար ո՛չ թուրքերու և ոչ ալ հայ ժողովրդի առաջ. Երևանի նոր իշխանությունը կուզեր դաշնագիրը ստորագրվեր, բայց մե՛ր և ոչ իր ձեռքով» (անդ, էջ 272-273):

Նվազ ուշագրավ չէ նաև այն խոսակցությունը, որ 1920 դեկտ. 7-ին, վարչապետարանի շենքին մեջ, Ալ. Խատիսյան պաշտոնապես կուեննա Հայաստանի անդրանիկ Հեղկոմի նախագահին՝ Ս. Կասյանի հետ.

«Դուք օրինավոր վարվեցաք, - կհայտարարեր Կասյանը Ալ. Խատիսյանի, - այն բոլորին անկարելի էր վարվիլ ուրիշ կերպ: Բայց դուք հասկանում էք, որ մենք խորհրդային իշխանություն ենք. մենք չենք կարող վերցնել մեր վրա պատասխանատվությունը այս դաշնագրի համար: Եվ այդ պատճառով մեր մամուլի մեջ շատ խիստ կերպով կքննադատենք և կպատասխանենք ու կպախարակենք ձեզ: Բայց դա տաքթիքական հարց է: Մեր նպատակն է չճանաչել այդ

դաշնագիրը և կազմել նոր համաձայնություն: Բայց եթե երբևիցե դուք հրապարակ հանեք մեր կարծիքը, թե դուք հարկադրված էիք ստորագրել, մենք կհերքենք մեր այսօրվա խոսակցությունը» (անդ, էջ 281):

Ու «կհերքե՛ն»... մինչև այսօր:

Ալեքսանդրապոլի դաշնագիրը հետագային Ռուսիա փոխարինեց Մոսկվայի 1921 մարտ 16-ի և Կարսի 1921 հոկտ. 13-ի դաշինքներով:

Այս նոր ուխտերով Ռուսիա ոչ թե մեղմացուց, այլ զգալապես շատ ավելի ծանրացուց Հայաստանի վիճակը.

«Հայաստանի խորհրդայնացումեն հետո, - կվկայե Բ. Բորյան, - հողային առավելագույն զիջումները կատարվեցան Թուրքիո՝ Հայաստանի հաշվին, Կարսի մեջ»:

Եվ Ռուսիա այս զիջումները կկատարեր ոչ այն պատճառով, որ Թուրքիա չափազանց գորավոր էր, իսկ ինք՝ հայտնապես տկար:

Բնավ և երբեք.

«Հասկնալի է, - կվկայե միշտ նույն Բ. Բորյան, - որ Խորհրդային դիվանագիտությունը այս զիջումը կատարելով (այսինքն՝ Կարսի դաշնագիրը ստորագրելով. - Ն.), նկատի ուներ բացառաբար այն քաղաքական կշիռը, որ կներկայացներ Թուրքիան արևելքի մեջ ընդդեմ արևմտյան աշխարհակալության և ոչ թե այն իրական ուժը (ըսել կուզե՛ շատ համեստ ուժ մը Ռուսիո բաղդատմամբ. - Ն.), որով դաշնակցական կառավարության աստեն Թուրքիա եկավ և տիրացավ Հայաստանի հողերու մեկ մասին: Ղեկավարվելով միջազգային հեղափոխության շահերով ընդդեմ աշխարհակալության՝ Ռուսիա նվիրագործեց թուրքերու կատարած բռնագրավումը» («Արմենիա», հ. Բ, էջ 285):

Ընդգծումները մենք կատարեցինք:

Հեղինակը պարզորեն կհասկցնե, որ բացառաբար քաղաքական նկատումներով - և «միջազգային հեղափոխության» շահերը էլակետ առնելով - Ռուսիա գորավիզ հանդիսացավ Թուրքիո՝ թույլ տալով անոր Ալեքսանդրապոլի դաշնագրի ծանր պայմանները պարտադրելու Հայաստանի:

Նույն նկատումներով Քրեմլը ավելի ուշ Ալեքսանդրապոլի դաշինքը փոխարինեց, ինչպես ըսինք, Մոսկվայի և Կարսի ավելի ծանր ուխտերով:

Բորյանի տողերը գրված են 1929-ին, սակայն նույն են վկայությունները նաև այն խորհրդային գրիչներու, որոնք անցնող շրջանի պատմությունը կգրեն:

Ասունցմե Ն. Ռուբինշթեյն կվկայե.

«Օտարերկրյա intervention-ի (միջամտություն) ջախջախումը և խորհրդային իշխանության հաստատումը Վրաստանի, Ազրպեյձանի և Հայաստանի մեջ, հնարավորություն ստեղծեցին Խորհրդային Ռուսիո համար սերտ կապեր հաստատելու և իր բարեկամությունը ամրացնելու Արևելքի ժողովուրդներու հետ...» (Ն. Ռուբինշթեյն, «Մ. Ռուսիա և դրամատիրական պետությունները պատերազմեն դեպի խաղաղություն տանող փոխանցման տարիներուն, 1921-ին և 1922-ին», Մոսկվա, 1948, էջ 54):

Խոսքը, իհարկե, Թուրքիո մասին է, որուն խաղալիք դերին – ռազմա-քաղաքական և բարոյական – Արևմուտքի դեմ ձեռնարկված պայքարին մեջ Ռուսիա բացառիկ արժեք կուտար:

Իսկ Թուրքիա ո՛չ ռուսասեր էր, ոչ ա առավել նա բոլշևիկասեր:

Թուրքիա կարելի էր «սերտ բարեկամությամբ» գողել Ռուսիո միայն Հայաստանը ծախելով և այդ ձևով հիմեն Սևրը ցնցելով:

Այս պարագան գիտեին նաև դաշնակից երկիրները, որոնք Սևրի շուրջ գաղտնի խոսակցություններ կունենային Թուրքիո հետ՝ զայն Ռուսիայեն պոկելու համար*:

Խորհրդային Ռուսիո արտ. գործոց գործավարությունը իր «Տեղեկատու»-ի 70-րդ թիվով (1921 մարտ 28, էջ 4) կգրեր.

«Փերթինաքսի տեղեկատվությամբ, դաշնակիցներու Փարիզի խորհրդածողովին, գումարված 1921 հունվարի վերջերը, Պրիան և իտալական արտ. գործոց նախարար Սֆորցա միասնաբար կպնդեին Սևրի դաշնագրի վերանայման վրա՝ «մատնանշելով այն պարագան, որ այս վերանայումը նախապայման է, եթե երբեք մենք կուզենք բոլշևիկները և թուրք ազգայնականները բաժնել իրարմե»

* Այս մասին կխոսի նաև Մուսթաֆա Քեմալը իր հուշերու մեջ. – «Նոր Թուրքիո ճամփան», հ. Դ, Մոսկվա, էջ 289 (Լոյտ ճորճի և Պեթիո Սամի պնդի տեսակցությունը, Լոնտոն, 1921-ի մարտին):

Տե՛ս նաև մեր «Նեղուցները», 1947, Գահիրե, էջ 202-208:

(մենք քաղեցինք քիչ վերը հիշատակված Ն. Ռուբինշթեյնի գիրքեն, էջ 72):

Մոսկվա լրիվ գիտեր Թուրքիան իրեն կապելու խաղին բոլոր գաղտնիքները, ուստի քայլ առ քայլ, Պրեսթեն սկսելով, կհարթեր ճամփան դեպի Մոսկվա (1921 մարտ 16) և դեպի Գարս (1921 հոկտ. 13):

Այս ճամփուն վրա Ալեքսանդրապոլը հանգրվան մըն էր միայն:

Վավերաթուղթ մը լրիվ կքողամերկե աղբյուրը այն քաղաքականության, որ Հայաստանի նկատմամբ տարվեցավ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Գարսի մեջ:

Մեր խոսքը այն առաջնորդող հողվածի մասին է, որ լույս տեսած է «Ազգությանց կյանքը» պաշտոնաթերթի 1921 մարտ 4-ի թիվով**:

Մթալին, որ այդ ատեն ազգությանց գործերու գործավարն էր, պաշտոնաթերթի հիշատակված թիվով լույս կընծայե քաղաքական բացառիկ կշիռ ունեցող հողված մը՝ «Հայաստան և Թուրքիա» խորագրին տակ:

Եվ, նկատի առնելով թե՛ իր գրաված աթոռին կշիռը և թե՛ իր հեղինակած հողվածին բացառիկ կարևորությունը, Մթալին հողվածը լույս կընծայե կեղծանունով:

Հողվածին թվականն իսկ – 1921 մարտ 4 – որոշ իմաստով դարձյալ պատմական կշիռ ունի:

Այդ թվականեն 12 օր վերջ, 1921 մարտ 16-ին, Մոսկվայի մեջ պիտի ստորագրվեր թուրքևոռուս բարեկամության հանրաձայն ղաշինքը, որով Ռուսիա տմարդաբար ու դաժանորեն վաճառքի պիտի հաներ հայ հողն ու հայ ժողովուրդը:

Մարտ 4-ին, ուրեմն, այս դավը կա՛մ կձևավորվեր և կամ վերջնապես ձևավորված էր արդեն:

Այդ օրերուն, ինչպես հայտնի է, հայ երկրի տերը վերստին հայ ժողովուրդը դարձած էր: Տեղի ունեցած էր 1921 փետր. 18-ի

** «Ազգությանց կյանքը» պաշտոնաթերթն էր Ազգային գործերու ժողովրդական գործավարության. կիրատարակվեր Մոսկվա, 1918 նոյ. 9-են մինչև 1922 փետր. 16՝ իբրև շաբաթաթերթ, իսկ 1922 փետր. 25-են մինչև 1924 հունվար՝ իբրև պարբերաթերթ (տե՛ս Բ. Մթալին, «Ամբողջական գործեր», հ. Դ, էջ 438):

համաժողովրդական ապստամբությունը և եկվոր դահիճները, բահերով և հրացաններով, համայն ժողովուրդի անեծքի և ատելությանը մեջ, դուրս քշված էին մեր երկրեն...

Ու 1921 մարտին թեև մենք էինք մեր երկրի տերը, սակայն Կարմիր Մոսկվան, այդ պարագան իսկ հաշվի չառնելով և Հայաստանը իր պապենական կալվածք նկատելով, ազատորեն թուրքին հետ կզներ ու կծախեր մեզ ի հարգանս և ի գործադրություն և իր կողմե իսկ հռչակված... «ազգերու ազատ ինքնաբռնման»...

Դառնանք հողվածին*:

Գրության նախամուտին իսկ Սթալին կպարզե իր հիմնական տեսակետը Ազգության և Հայրենիքի մասին.

«Անգարայի կառավարության համար, - կնկատե Սթալին, - որ հետամուտ է ազգայնական շահերու, շատ մեծ կարևորություն ունի հողերը նույնությամբ պահել և եթե հնարավոր ըլլա՝ ընդարձակել: Մինչ ընկերվար պետությանց համար ոչ մեկ արժեք ունին հողը և ազգային միությունը ըսված բանը»:

* Տարաբախտաբար, մեր տրամադրության տակ չունինք «Ազգությանց կյանքը». հողվածին թարգմանությունը հղած է իր թերթին «Ճումհուրիեթի» թղթակիցը Մոսկվայի մեջ. 1948-ի օգոստ. -ին. «Ճումհուրիեթե» նույն օրն իսկ առնելով՝ զայն իր 1948 օգոստ. 13-ի թիվով հրատարակած է «Ժամանակ», որմե կօգտվինք նաև մենք՝ հարկադրաբար թերթին «հայերեն»-ը պահելով:

Ինչպես ըսինք, Սթալին իր հողվածը լույս ընծայած է կեղծանունով. - Ա. Արաչը ըստ «Ճումհուրիեթի» («Ժամանակ», 13 օգոստ. 1948), Ատազը ըստ «Միլլեթի» («Հուս.», 8 սեպտ. 1948):

Այս ծածկանուններու մեջ հայտնապես վրիպակ կա, կա մ թղթակցին կողմե, կա մ թերթին (վրիպակին մեջ իսկ վրիպակ կա, մեկը կգրե Ա. Արաչը, իսկ մյուսը Ատազը):

Թրոցքիի «Սթալին» գիրքին թարգմանիչը (ռուսերենէ՝ անգլիերեն) կհայտնե, որ Սթալին հետևյալ 17 ծածկանունները գործածած է. -Շ. Բեգոշվիլի, Զիծիկով, Դավիթ, Իվանով, Իվանովիչ, Կ. Կատո, Կո, Կոբա, Կ. Սո., Նիժերաձե, Ռյաբո, Մոսելո, Մոսո, Վեսյոլի, Վասիլին, Օգանես Վարդանովիչ Տոտոյանց և Սթալին (տե՛ս Trotsky, «Stalin», 1947, Լոնտոն, էջ 475):

Էականը, սակայն, ստորագրությունը չէ, այլ այն, որ այդքան ծանրակշիռ բովանդակությամբ գրություն մը լույս տեսած է Սթալինի զխավորած Գործավարության պաշտոնաթերթին մեջ:

Բոլշևիկյան բարբեր գիտնալով՝ խղճի կատարյալ հանգստությամբ մենք այդ հողվածը կվերագրենք Սթալինի և Լենինի միասնական գրչին:

Եվ որոհետև խոսքը Հայաստանի մասին է - հողվածին խորագիրն իսկ արդեն այդ կվկայե - ուստի Սթալին ըսել կուզե, որ Հայության գույգ պահանջները - ամբողջացած տեսնել հայ ժողովուրդը իր ամբողջական հայրենիքի մեջ - արժեք չունին «ընկերվար» Ռուսիո համար:

Արժեք ունի հետևյալը.

«Ամեն օժանդակություն մենք պետք է ընծայենք Թուրքիո, - կգրե ազգային գործերու գործավարը, - որ բաց է ի բաց պայքար բացած է կայսերապաշտ համաձայնական պետությանց դեմ և առ այժմ Արևելքի միակ կես-գաղթավայր պետությունն է: Եվ որպեսզի այս պայքարին մեջ կարենանք օժանդակել Թուրքիո, պայման է, որ այն պետությունները, որոնք ի մոտոտ անոր հետ բանակցության պիտի ձեռնարկեն (ընդգծումը մեզմե. ակնարկը՝ մարտ 16-ի դաշնագրին. - Ն.)՝ գոհացուցած ըլլան անոր ազգային շահերը»:

Եվ անմիջապես բուն նյութին դառնալով՝ Սթալին անվարան կհայտարարե.

«Եթե նույնիսկ կասկածինք, որ Անգարայի կառավարությունը կհետապնդե կայսերապաշտ, ծավալողական ու համաթրքական քաղաքականություն և կուզե ի ձեռին պահել հայ ժողովուրդի բնական հողերը և նույն իսկ ձեռք անցընել Կովկասը, պետք չէ վախնանք անոր այս ծավալապաշտական հակումներեն»:

Մեր կողմե ընդգծված այս տողերու մեջ կվկայագրվի արդեն հողային այն կարևոր զիջումը, որ հողվածի հրապարակումեն քանի մը օր վերջ, 1921 մարտ 16-ի դաշնագրով, Ռուսիա պիտի կատարեր Թուրքիո:

Հողվածը միաժամանակ կուզա վկայելու, որ զիջումը մինչև մարտ 4 կատարված էր արդեն:

Որովհետև եթե կատարված չըլլար՝ մարտ 4-ին չէր հիշատակվեր կատարվելիք զիջումի մասին:

Եվ արդեն ինքն իսկ Սթալին իր հողվածի շարունակության մեջ բոլորովին անատարկելի կդարձնե այս կարևորագույն պարագան:

Մոսկվայի խորհրդաժողովին ակնարկելով՝ ուր մարտ 16-ին պիտի ստորագրվեր արդեն իսկ մշակված ու ձևավորված դաշինքը, այդ դաշինքի հեղինակներեն Սթալին կգրեր.

«Որպեսզի Հայաստան այս խորհրդաժողովին մեջ ի հարկին մեծագույն ազգային զոհողություններն ընե, պետք է Լենինի սկզբունքներով շարժի: Հայաստան ոչ միայն պետք է հրաժարի իսկ մը

կայսերապաշտական բաղձանքներե, այլս պետք է հրաժարի միշտ հայկական հորջորջված հողերը մայր հայրենիքին կցելու նման շատ համեստ բաղձանքներե»:

Ու ճիշտ այս հիմունքներով, իր նույն հողվածին մեջ, Սթալին կհորդորե «անվախորեն հողային զիջումներ կատարել» Թուրքիո, հիշատակելով ոչ միայն Վանի ու Պիթլիսի, այլս Կարսի ու Արտահանի անունները...

«Խորհրդային Ռուսիա իրավունք ունի պնդելու, - Մոսկվայի խորհրդաժողովի նախասեմին հրապարակով կհայտարարեր Սթալին, - որ Հայաստանի համար անընդունելի պայման մը չնկատվի Կարսն ու Արտահանը առժամապես թողուլ Թուրքիո...»:

Հոս «առժամապես»-ը այն տուրքն է, որ արատը կրերե առաքինության...

Աշխարհ պիտի հեղաշրջվի եղեր, համայնավարությունը պիտի ծավալի եղեր հյուսիսեն հարավ և արեւքեն արևմուտք, Թուրքիա ևս պիտի համայնավարանա եղեր, և այն ատեն ամենքը Սթալիններու նման պիտի համոզվին եղեր, որ մեր մոլորակին վրա ոչ Ազգը արժեք ունի և ոչ Հայրենիքը...

Ու երբ համոզվին, երբ «գառնուկ»-ներն ու «գայլ»-երը եղբայրանան իրարու, այն ատեն հայերը պիտի տեսնեն եղեր, որ իրենք Կարսն ու Արտահանը զիջած են եղեր Թուրքիո... «առժամապես»:

1921 մարտ 16-ի ռուսերուրք դաշնագրի բացառիկ արժեքը գիտնալով մեզ իրավունք կուտանք հայտարարելու, որ «Ազգությանց կյանք»-ի մարտ 4-ի թիվով լույս տեսած հողվածին անձնապես կապված էր ոչ միայն Սթալին, այլ կապված էր նաև Լենին:

Ինչպես հայտնի է, թուրք պատվիրակությունը, գլխավորությամբ Յուսուֆ Քեմալ պեյի, Մոսկվա հասավ 1921 փետր. 18-ին (այսինքն ճիշտ նույն օրը, երբ Հայաստանի մեջ փետր. 18-ի հեղափոխությունը ծագեցավ):

1921 փետր. 26-ին տեղի ունեցավ ռուսերուրք խորհրդաժողովին բացումը (ասկե օր մը առաջ, փետր. 25-ին, Վրաստանը ենթարկված էր խորհրդայնացման):

Թուրք գրիչներեն Ճեմալ, ցույց տալու համար, թե Լենին և Սթալին որքա ն լայնահոգի ու առատաձեռն էին իրենց զիջումներու մեջ (իհարկե, Հայաստանի հաշվին), կգրեր.

«Հայացքներու մեծ լայնությամբ Լենին և Սթալին կըմբռնեին և՛ ազգային Թուրքիո ոգին, և՛ խորհրդային իշխանության առաջադրանքները» (Մուսթաֆա Քեմալ, «Նոր Թուրքիո ճամփան», հ. Գ, Մոսկվա, 1934, էջ 295):

Իսկ խորհրդային գրիչներեն Ն. Ռուբինշթեյն, 1948-ին խոսելով 1921-ի բանակցությանց և դաշինքի մասին, կգրե.

«Բանակցությունները կընթանային բարենպաստ ձևով: Լենին և Սթալին անձնապես կհետևեին անոնց ընթացքին: Ամեն երեկո Լենինը հեռախոսով կտեղեկանար Չիչերինե, թե այդ օրը Խորհրդաժողովի մեջ ի՛նչ արդյունքի հասած են» (տե՛ս Ն. Ռուբինշթեյնի արդեն հիշատակված գիրքը, էջ 68):

Նորեն կկրկենք. գրեթե համոզված ենք, որ 1921 մարտ 4-ի հողվածին հեղինակությունը կպատկանի ոչ միայն Սթալինի, այլս Լենինի:

Այն համոզումին ենք, թե ան՛նք իսկ, որ որոշած են հավետ կույր ու խուլ մնալ, անգամ անոնք, Սթալին-Լենինի այս հողվածը կարդալով, այլևս չեն կրնար որևէ տարակույս ունենալ այն մասին, թե իսկապես ո՞վ էր բուն հեղինակը Ալեքսանդրապուլի դաշնագրի:

Այդ դաշնագիրը պարզ հանգրվան մըն էր դեպի Մոսկվա և Կարս, ուր, վկայությամբ բուն իսկ Սթալին-Լենինի, նախորոշված էր ողջակիզել Հայաստանը հանուն համաշխարհային հեղափոխության, հանուն Բոլշևիզմի...

Ու նույն նկատումներով, - խոստովանությամբ Բորյանի, - Ռուսիա չհարգեց նաև այն դաշնագիրը, որ 1920 դեկտ. 2-ին Երևանի մեջ ստորագրած էր Հայաստանի հետ (տե՛ս «Արմենիա», հ. Բ, էջ 299-300):

Ռուսիա խախտեց երկու դաշինքներն ալ - թե՛ Ալեքսանդրապուլինը և թե՛ Երևանինը - երկուքն ալ ի վնաս Հայաստանի և ի նպաստ Թուրքիո:

Չեոք ձեռքի Թուրքիո հետ՝ ան հիմեն փոշիացուց Սևրի դաշնագիրը:

Ահա թե ինչու մենք այսօր Դանայացիներ կտեսնենք բոլշևիկներու մեջ, երբ անոնք Ուիլսոնյան սահմանագծով Սևրի դաշնագիր կպահանջեն...

Ելու Յորքի համայնավար պաշտոնաթերթը՝ «Լրաբեր», իր 1948 հունիս 1-ի խմբագրականով, կգրեր.

«Իբրև հայեր, մենք կտեսնենք, որ Թրումընյան վարդապետությունը կժխտե Նախագահ Վուտրո Ուիլսոնի արձակած իրավարարական վճիռը հայ ժողովուրդի ցանկությանց մասին, որոնք բիրտորեն ճգնված են թուրք տիրակալներու կողմե, գոր այժմ Թրումընյան վարդապետությունը կզինե: Այդ վարդապետության շրջվիլը նախապայման է մեր նախնյաց դարերով սնուցած հույսերու իրականացման համար» («Հուս.», 13 հունիս 1948):

Ամեն ոք իրավունք ունի Թրումընյան վարդապետության դեմ բողոքելու, սակայն բոլշևիկները – երբեք:

Որովհետև Թրումընյան վարդապետությունը ճիշտ նույն գիծը կտանի Թուրքիոյ նկատմամբ, ինչ որ տարավ բոլշևիկները իր իշխանության ամբողջ շրջանին, 1917-ի հոկտեմբերյան օրերեն սկսելով:

Թրումընյան վարդապետության հետևորդները միայն հեզնա՛նք ունին բոլշևիկների հանդեպ, երբ ան այսօր իբրև թե Սեր կպաշտպանեն. որովհետև անոնք գիտեն, որ երեկ Սերի բուն գերեզմանավորները բոլշևիկները եղան:

Թրումընյան վարդապետության քարոզիչները ծիծաղ ունին միայն բոլշևիկների համար, երբ ան այսօր «հայության ցանկությունները բիրտորեն ճգնված թուրք տիրակալ»-ներու դեմ կխոսի. որովհետև անոնք գիտեն, որ այդ զգետնված «տիրակալ»-ները ոտքի կեցան բոլշևիկների՝ օժանդակությամբ և Հայաստանը տրորեցին Մոսկվայի՝ ներշնչումով:

Թրումընյան վարդապետության պաշտպանները միայն անհաղթահարելի տարակույս ունին անկեղծությանը մասին բոլշևիկների, երբ ան «նախնյաց դարերով սնուցած հույս»-երու մասին կխոսի՝ ամերիկյան քաղաքականության «շրջվիլ»-ը պահանջելով. որովհետև անոնք գիտեն, որ այդ «հույս»-երու դեմ տմարդորեն դավողը Բոլշևիկները եղավ, զինակցաբար թուրքին հետ:

Եվ ո՞վ գիտե, ո՞վ կրնա ըսել, թե Թրումընյան վարդապետությունը այնքան ազդուորեն այսօր պաշտպան պիտի կենար արդյոք Թուրքիոյ, եթե երբեք բոլշևիկները երեկ կործանած չլլար մեր Տունը, եթե երբեք կանգուն մնացած ըլլար վեց դարերու արյունալի մարտերէ ծնած մեր Մանուկ Հանրապետությունը՝ Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանը:

Չենք կարծեր. եթե մնար այդ Հանրապետությունը, Թրումընյան Վարդապետությունը այսօր ընելիք գործ պիտի չունենար մեր աշխարհամասին մեջ:

Ո՛չ, երբեք փոխված չէ այն քաղաքականությունը, գոր Հայկական հարցի մեջ երեկ Բոլշևիկները կտանէր:

Նաև այսօր Բոլշևիկները Թուրքիան կորոնեն՝ զա՛յն իրեն հետ ունենալու համար:

Նաև այսօր ան, թուրքնուս հարաբերությանց հարցին մեջ, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի օրերը կերագեն...

Ու ճիշտ այս նկատմամբով ալ ան այսօր Թուրքիոյ կսպառնա Սերով, կսպառնա էտ առնել այն պարզը, որով օր մը սիրաշահած էր զայն...

Եզրափակենք:

Փորձեցինք շատ սեղմ և ամփոփ ձևով տալ համառոտ պատմությունը մեր մոտավոր անցյալի մեկ կարևորագույն էջին:

Փաստերը, դեպքերը կուգան անատարկելի կերպով հետևյալը վկայելու.

1.- 1917 հոկտ.-ին Ռուսիոյ մեջ իշխանության տիրանալով՝ բոլշևիկները առաջին մեկ օրեն ամեն զոհողությանց գնաց իր հետագա պայքարին մեջ Թուրքիան իրեն հետ ունենալու համար:

2.- Այս աջակցությունը անխախտ, ազդու և տևական դարձնելու համար Մոսկվա որոշեց իջնել հարավ և սահմանակից դառնալ Թուրքիոյ:

3.- Թե՛ այս նպատակին հասնելու և թե՛ Թուրքիան ամբողջին իրեն կապելու համար, Մոսկվա հատուկ պայքար բացավ Սերի դաշնագրի դեմ՝ անոր ոչնչացումը պահանջելով:

4.- Սերի դաշնագրի ոչնչացումը հետապնդելով՝ Մոսկվա և Էնկյուրի, համախորհուրդ և զինակցաբար, ծրագրեցին 1920 սեպտ. 23-ի պատերազմը Հայաստանի դեմ:

5.- Եթե Ռուսիոյ համամտությունը և զինակցությունը չլլար՝ Թուրքիա երբեք պիտի չհանդգներ պատերազմի մտնել Հայաստանի հետ և խուժել Անդրկովկաս:

6.- Ալեքսանդրապոլի դաշնագրի բուն հեղինակը Ռուսիան եղավ, և այդ դաշնագիրը Թուրքիոյ միջոցով Ռուսիան թելադրեց մեզի:

7.- Դաշնագիրը ձևապես, ճիշտ է, ստորագրեցին դաշնակցական պատվիրակները, սակայն այս պատվիրակները կներկայացնէին կառավարություն մը, որ, ըստ բոլշևիկներու, նոյ. 29-

են ի վեր անգո էր, և երկիր մը՝ որ արդեն զրկված էր իր անկախութենէն և բաժնված երկու հաղթական զինակիցներու՝ Ռուսիո և Թուրքիո միջև*:

8.- Խորհրդայնացած Հայաստանի իշխանությունը, որուն ամենավերջին հրահանգով դաշնակցական պատվիրակները կստորագրեին Ալեքսանդրապոլի դաշնագիրը, կգտնվեր ոչ թե Դաշնակցության, այլ բոլշևիկներու ձեռքը:

9.- Եւս Ալեքսանդրապոլի դաշնագիրէն ետք Ռուսիա մնաց հավատարիմ այն քաղաքականության, զոր վարած էր մինչև այդ, և առ այդ, այդ քաղաքականության հավատարիմ մնալով, նոր դաշինքներով – Մոսկվայի և Կարսի – ալ ավելի ծանրացուց Ալեքսանդրապոլի դաշնագրի պայմանները Հայաստանի համար:

10.- Եւս այսօր Ռուսիա միշտ նույն Թուրքիո բարեկամությունը կորոնէ, պատրաստ, ի ինդիր այդ բարեկամության, նորանոր զիջումներ ընելու անոր Հայկական հարցին մեջ**:

Նավասարդյան Վ., Բոլշևիզմը և Դաշնակցությունը...

Գահիրե, 1949, 141-218 էջ:

* Ալեքսանդրապոլի պատվիրակությունը, ինչպէս հայտնի է, բաղկացած էր դաշնակցականներէ և սոցիալիստ-հեղափոխականներէ:

** Այս գլուխը մամուլի տակ էր, երբ, ի վերջո, մեր ձեռքը հասավ «Ճումհուրիէթի» 1948 օգոստ. 13-ի թիվը, ուր թարգմանաբար տեղ գտած է «Ազգությանց կյանք»-ի 1921 մարտ 4-ի թիվէն (№ 6/104) առնված «Հայաստան և Թուրքիա» հոդվածը:

«Ճումհուրիէթի» հոդվածը բաղդատելով «Ժամանակի» թարգմանությանը հետ, մենք միայն հապավումներ գտանք («Ժամանակի» թարգմանության մեջ), սակայն խորքին և էությանը մեջ տարբերություններ չգտանք:

ԲՈՒՇԵՎԻԶՄԸ ՆԱԽԻԶԵՎԱՆԻ ՀԱՐՑԻՆ ՄԵԶ

1.

1949 մայիս 28-ին Խ. Միության մեջ տոնակատարված է Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Ընկերվար Հանրապետության 25-ամյակը:

Այս շրջանը նախ «ինքնավար երկրամաս» հռչակվեցավ Մոսկվայի (1921 մարտ 16-ի) և Կարսի (1921 հոկտ. 13-ի) դաշինքներով, իսկ ետքէն, 1924 մայիս 28-ին, «ինքնավար երկրամասը» վերածվեցավ Ինքնավար Խորհրդային Ընկերվար Հանրապետության:

Ռուսական թափափածությունը անգամ մը ևս վկայած ըլլալու համար, անցողակի նկատենք, որ այս փոփոխությանը մասին ոչ մեկ հիշատակություն այն գլուխի մեջ, որ «Մեծ Խորհրդային հանրագիտարանը» նվիրած է Նախիջևանի (տե՛ս «Մ. Խ. Հանրագիտարան», հ. 41-րդ, Մոսկվա, 1939, էջ 331-338):

«Պրավդա» և «Իզվեստիա» մայիս 28-ի իրենց թիվերուն առաջին էջերը նվիրած են օրվան տոնակատարության:

Խ. Միության Նախարարական խորհուրդը, Համամիութենական Կոմկուսի Կեդր. կոմիտեն և Խ. Միության Գերագույն խորհուրդի Նախագահությունը օրվան տոնին առթիվ շնորհավորանքի ջերմ հեռագիրներ հղած են Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհուրդի Նախագահության:

Շնորհավորանքի հեռագիրներ տեղացած են նաև Խ. Միությունը կազմող հանրապետություններէն, որոնց կարգին նաև Խ. Հայաստանէն:

Խորհրդային ռադիոկայաններէն ճառեր արտասանված են օրվան տոնին առթիվ:

«Պրավդա» և «Իզվեստիա» իրենց առաջին էջերուն վրա տեղ տված են երախտագիտական ընդարձակ ուղերձի մը, զոր Ինքնավար Հանրապետության համայնատնտեսները, բանվորները և մտավորականները հղած են «Խորհրդային ժողովուրդի մեծ առաջնորդին և ուսուցչին Ի. Վ. Սթալինի»:

«Ձեզի՛, մեր իմաստուն առաջնորդ,- կվկայեն ուղերձին հեղինակները,- մենք պարտական ենք այն բանին համար, որ

Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Ընկերվար Հանրապետությունը, ինչպես և բովանդակ Ագրայեյճանը, վերածված են այսօր ընկերվար հանրապետության»:

Ուշագրավ է, որ նախիջևանցիները կխոսին ոչ միայն Նախիջևանի, այլև Ագրայեյճանի մասին, որուն հովանավորությանը տակ կգտնվի իրենց «Ինքնավար»-ը...

Երախտագիտական գրություն մըն ալ «Իզվեստիա»-ի մեջ գետնդած է Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհուրդի Նախագահության նախագահը Ճեպրայիլ Մամետով.

«Հանրապետության 25-ամյակը տոնակատարելով, - կվկայե նախագահը, - Նախիջևանի աշխատավորները ամբողջ հոգիով կհղեն իրենց որդիական ողջույնը եղբայրական ռուս ժողովուրդին Խորհրդային ժողովուրդի բոլոր հաղթանակները ոգեշնչող ընկ. Մթալինի»:

Նախիջևանի հարցը բացառիկ տեղ կգրավե բովանդակ Խ. Միության քաղաքականության մեջ:

Առանց երբեք չափազանցելու մեր ըմբռնումը երևայթերու մասին, վճռաբար կհայտարարենք, որ ոչ մեկ հարցի մեջ այնքան որոշապես ի հայտ կուգա բոլշևիզմի էությունը, որքան Նախիջևանի հարցին մեջ:

Նույնը մասնավորաբար և հատկապես մեր նկատմամբ:

Ոչ մեկ հարցի մեջ, Հայ Դատի կապակցությամբ, այնքան հստակորեն չի գծվիր բոլշևիզմի դավադիր պատկերը, որքան Նախիջևանի հարցին մեջ:

Ըմբռնել այս հարցը, ըմբռնել զայն հիմնովին ու խորապես, իր բոլոր ծայրերով և իր բովանդակ բարդությանը մեջ, այս պիտի նշանակեր, նախ՝ ճանչնալ ընդհանրապես բոլշևիզմը, երկրորդ՝ ճանչնալ զայն մասնավորաբար այն ցավոտ հարցին մեջ, որ Հայ Դատ կկոչվի:

Նախիջևանի «Ինքնավարը» կազմված է նախկին Շարուր-Դարալագյազի և Երևանի գավառներու որոշ մասերին:

«Ինքնավարը» կգրավե 5.088 քառ. քիլ. տարածությամբ հողամաս մը, 124.800 բնակիչներով (1936-ի վիճակագրությամբ):

«Ինքնավարը» հյուսիսեն և արևելքեն կսահմանակցի Հայաստանի, արևմուտքեն և հարավեն (Արաքսի հունով) Իրանի, և ծայրագույն հյուսիս-արևմուտքեն աննշան - սակայն ռազմագիտորեն չափազանց կարևոր - անկյունի մը վրա Թուրքիո:

1921 մարտ 16-ին Մոսկվայի մեջ կնքվեցավ թուրքնխորհրդային պատմական դաշինքը:

Այդ դաշինքի մեջ Հայաստանեն զատված է Նախիջևանի շրջանը և անոր նվիրված է հատուկ հոդված մը:

Ահա այդ հոդվածը.

«Հոդված 3-րդ. - Երկու դաշնադրող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի շրջանը - սույն դաշնագրի 1 (Գ) հավելվածի մեջ մատնանշված սահմաններով - կազմե ինքնավար երկրամաս մը, Ագրայեյճանի հովանավորությանը տակ, պայմանով, որ Ագրայեյճանը սույն հովանավորությունը պիտի չզիջի ոևէ երրորդ պետության» («Ժողովածու օտար պետությանց հետ կնքված դաշինքներու, համաձայնությանց և ուխտերու», Մոսկվա, 1935, էջ 159, հրատ. Արտ. գործոց գործավարության):

Հարկ պիտի ըլլար ամբողջ հատոր մը գրել՝ այս բացառիկ, արտակարգորեն կարևոր, մասնավորաբար մեզի համար ավելի քան կենսական, ուղղակի ճակատագրակշիռ հոդվածի բարդ ու դավալից բովանդակությունը հայ ընթերցողին ըմբռնելի ընծայելու համար:

* Շտապենք հայտնել, որ Պրեսթի «խայտառակ» դաշնագրով իսկ - որակումը «խայտառակ» իրմե Լենինե - Նախիջևանի ամբողջ շրջանը կմնար Հայաստանի:

Հակառակ այն իրողության, որ 1918-ի մարտյան օրերուն Պրեսթի մեջ կիշխեր Գերմանիո և Թուրքիո բացարձակ կամքը, այս վերջինները, այնուամենայնիվ, անվայել գտան պարտված Ռուսիայեն Նախիջևանի շրջանը պահանջելու...

Հիշատակություն մը մեր մոտավոր անցյալեն:

1918 հուլիս 14-ին, Հայկական Ա գնդի ռադիոհեռագրական պաշտոնյաները՝ Տերյան և Աշոտ Մելիք-Մուսայանց՝ Նախիջևանի Ապրակունիս գյուղեն, ուր կգտնվեր Անդրանիկը, անոր հետևյալ ռադիոհեռագիրը կհղեին Կովկասյան ժողովուրդ. գործավարին՝ Մտ. Շահումյանի:

«Անվերապահորեն ենթարկվելով Պրեսթ-Լիթովսքի դաշնագրին՝ Նախիջևանի գավառը, ուր կգտնվիմ ներկայիս իմ գորամասով, անբաժանելի մաս հայտարարեցի ռուսական հանրապետության» (Հ. Ա. Գրայան, «Անդրանիկ Նախիջևանի շրջանին մեջ», - «Ժողովուրդ», Փարիզ, 14 հունիս 1947):

Անդրանիկ չէր կրնար խորհիլ իսկ, թե «անբաժանելին» երեք տարի վերջ պիտի բաժնվի Հայաստանեն և Ռուսական Հանրապետության նախաձեռնությամբ դրվի թաթար Ագրայեյճանի հովանավորության տակ...

Այդ հնարավորությունը, տարաբախտաբար, մենք չունինք:
Ուստի շատանանք մատնանշելով հողվածի քանի մը կարևոր կետերը միայն:

Մոսկվայի դաշնագրի տակ դրված են հետևյալ ստորագրությունները՝ Գեորգի Չիչերին և Ճիլալ Քորքմասով (Խ. Ռուսիո կողմե), և Յուսուֆ Քեմալ, տորթ. Ռիզա Նուր ու Ալի Ֆուատ (Թուրքիո կողմե):

Իրականին մեջ Չիչերին և Քորքմասով, իբրև քաղաքական դեմքեր, ոչի՛նչ կներկայացնեին Մոսկվայի բանակցությանց մեջ:

Դաշինքի պատմակշիռ արժեքը նկատի առնելով՝ բուն բանակցությունները կվարեին, մեկ կողմն՝ Լենին (Գործավարներու խորհուրդի նախագահ), իսկ մյուս կողմն՝ Սթալին (Ազգությանց գործերու գործավար):

Խոսելով Մոսկվայի բանակցությանց մասին՝ Խորհրդային գրիչներեն՝ Ն. Ռուպինշթեյն կնկատե.

«Բանակցությունները կրնանային բարենպաստ ձևով: Լենին և Սթալին անձնապես կհետևեին անոնց ընթացքին: Ամեն երեկո Լենինը հեռախոսով կտեղեկանար Չիչերինե, թե այդ օրը խորհրդածողովի մեջ ի՛նչ արդյունքի հասած են» (Ն. Ռուպինշթեյն, «Խ. Ռուսիա և դրամատիքական պետությունները պատերազմեն դեպի խաղաղություն տանող փոխանցման տարիներուն», Մոսկվա, 1948, էջ 68):

Ավելի անմիջական էր Սթալինի՝ մասնակցությունը:

Իր «Ամբողջական գործերու» Ե հատորի «Կենսագրական բաժին»-ին մեջ, 1921 մարտ 9 թվականով, կկարդանք հետևյալը.

«Ի. Վ. Սթալին կմասնակցի կառավարության վարած բանակցությանց թուրք պատվիրակության հետ» (Ի. Սթալին, «Ամբողջական գործեր», հ. Ե, 1947, Մոսկվա, էջ 424):

Թուրքխորհրդային բանակցությանց մեջ բուն բանագնացները այս երկուքն էին՝ Լենին և Սթալին:

Բանակցությանց մեջ այս երկուքի ցուցաբերած ոգիի մասին խոսելով՝ թուրք գրիչներեն Ճեմիլ կնկատե.

«Հայացքներու մեծ լայնությամբ Լենին և Սթալին կըմբռնեին և՛ ազգային Թուրքիո ոգին, և՛ Խորհրդային իշխանության առաջադրանքները» (Մուսթաֆա Քեմալ, «Նոր Թուրքիո ճամփան», հ. Գ, Մոսկվա, 1934, էջ 295): Արդեն ինքն իսկ Սթալին, իր խմբագրությամբ լույս տեսնող «Ազգությանց կյանքը» պարբերականի

1921 մարտ 4-ի թիվով հողված մը կիրապարակեր, «Հայաստան և Թուրքիա» խորագրին տակ, ուր բացառիկ «լայնախոհությամբ» մը, ճիշտ խորհրդածողովի օրերուն, կգրեր.

«Որպեսզի Հայաստան Մոսկվայի խորհրդածողովին մեջ ի հարկին մեծագույն ազգային գոհողություններ ընե, պետք է Լենինի սկզբունքներով շարժի, Հայաստան ոչ միայն պետք է հրաժարի խել մը կայսերապաշտական բաղձանքներե, այլև պետք է հրաժարի միշտ հայկական հորջորջված հողերը մայր հայրենիքին կցելու նման շատ մը համեստ բաղձանքներե» («Ժամանակ», 13 օգոստ, 1948):

Այս մթնոլորտին մեջ է ահա, որ տեղի կունենային թուրքխորհրդային բանակցությունները Մոսկվայի մեջ:

Այդ բանակցությունները սկսան 1921 փետր. 18-ին, այսինքն ճիշտ այն օրը, երբ Հայաստանի մեջ պայթած էր արդեն Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը:

Բանակցությունները վերջացան և դաշինքը կնքվեցավ ու ստորագրվեցավ 1921 մարտ 16-ին, երբ Հայաստան վերստին տիրացած էր իր անկախության և երբ կառավարական իշխանությունը Երևանի մեջ կգլխավորեր Փրկության կոմիտեն, նախագահությամբ տակ Ս. Վրացյանի:

Այլ խոսքով՝ բանակցությանց առաջին օրեն մինչև վերջին օրը Խորհրդային իշխանություն չկար մեր հայրենիքին մեջ:

Հակառակ այդ իրողության, այնուամենայնիվ, Թուրքիա և Ռուսաստան առանց Հայաստանեն ոնե ներկայացուցիչ ունենալու Մոսկվայի խորհրդածողովին մեջ, գլուխ գլխի և սիրտ սրտի, կհոշոտեին մեր հայրենիքը և գայն կբաժնեին իրենցք միջև:

«Որո՞նք են, ձեր կարծիքով, ռեսպուբլիկաների միասնական Միության մեջ միավորվելու բնույթն ու ձևը»:

«Պրավդայի» այս հարցումին, ուղղված Սթալինի, այս վերջինը հետևյալ պատասխանը կուտար 1922 նոյ. 18-ին, Խ. Միության ստեղծումի նախօրեին.

«Միավորման բնույթը պետք է կամավոր լինի՝ յուրաքանչյուր ազգյին ռեսպուբլիկային վերապահելով Միության կազմից դուրս գալու իրավունք: Կամավորության սկզբունքը, այդպիսով, պետք է դրվի Մովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմելու պայմանագրի հիմքում» (Ի. Սթալին, «Երկեր», հ. 5-րդ, 1948, Երևան, էջ 158):

«Կամավոր», «բացառաբար կամավոր», – այսբան որոշաբար կշեշտեր բառը Ազգությանց գործերու գործավարը, ցույց տալու համար, որ բռնությամբ և ազգությանց կամքին հակառակ ոչինչ կկատարվի Խ. Միության մեջ:

Ճիշտ նույն օրերուն նույնը կվկայեր նաև իր վարդապետը Լենին.

«Միանգամայն կամավորաբար, առանց կեղծիքի և երկաթի, պիտի աճի Խորհրդային դաշնակցությունը, և այդ դաշնակցությունը պիտի ըլլա անխորտակելի» (Լենին, «Ամբողջական գործեր», հ. 22-րդ, 1948, Մոսկվա, էջ 224):

Այս «կամավորաբար»-ը տեղ չունեցավ այն դաշինքին մեջ, որ 1921-ի մարտյան խավար օրերուն Մոսկվայի մեջ կկնքվեր Թուրքիո և Ռուսաստանի միջև, առանց Հայաստանի մասնակցության, Հայաստանի կամքին հակառակ և Հայաստանի կենսական շահերուն դեմ:

Տեղ չունէր երկու ուղղությամբ.

Առաջին՝ Հայաստանէն կպոկվեր իր շնչափողը հանդիսացող երկրամաս մը և այն կդրվեր աշխարհագրորէն իրմէ բաժան թաթար Ազրպեյճանի հովանավորությանը տակ:

Երկրորդ կդրվեր Ազրպեյճանի հովանավորության տակ, «պայմանով, որ Ազրպեյճանը սույն հովանավորությունը պիտի չզիջի ոնէ երրորդ պետության»:

Այլևս «կամավորաբար»-ի մասին ո՛չ մէկ խոսք:

Պարզ ու մեկին բառերով Ռուսիա և Թուրքիա կհամաձայնէին «երկաթ»-ով արգիլել հովանավորության փոխանցումը Ազրպեյճանի կողմէ ոնէ այլ պետության, և զայն այդ հովանավորությունը հակառակ Լենինի պատգամին՝ նույն Լենինի համամտությամբ «երկաթ»-ով կապված կպահէին Ազրպեյճանի:

Ավելի ուշ պիտի անդրադառնանք այս բռնի հովանավորության փորձելով թափանցել անոր բարդ ու դավալից իմաստին:

Անցողակի կուզենք անդրադառնալ հարցի մը ևս՝ 1921 մարտ 16-ի դաշինքին պատկերը բոլորովին հստակ դարձնելու համար:

Ինչպէս հայտնի է, Ալեքսանդրապոլի հայկերաբար դաշինքը ստորագրվեցավ 1920 դեկտ. 3-ին:

Այլ առիթով մը ամսագրի մեջ հանգամանորէն խոսած ենք այդ դաշնագրի մասին և անհերքելի փաստերով ցույց տված, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը տարբեր բան չէ, քան թուրքնուս գինակցությամբ հղացված և գործադրված ոճիր մը Հայաստանի նկատմամբ:

Այն պատվիրակությունը – դաշնակցականներէ և սոցիալիստ-հեղափոխականներէ բաղկացած – որ Ալեքսանդրապոլի մեջ բանակցություններ կվարէր թուրք պատվիրակության հետ, Երևանէն Ալեքսանդրապոլ մեկնած էր 1920 նոյ. 23-ին (երբ Հայաստանի կառավարությունը կգլխավորէր վարչապետ Ն. Օհանջանյան), պատվիրակությունը բանակցությանց անցած էր 1920 նոյ. 25-ին (երբ Ն. Օհանջանյանի դահլիճը արդէն քաշված էր իշխանութենէ՝ իր տեղը զիջելով Ս. Վրացյանի դահլիճին) և ստորագրած թուրքնայ դաշինքը 1920 դեկտ. 3-ին (երբ ատկէ օր մը առաջ, 1920 դեկտ. 2-ին, Հայաստան խորհրդայնացած ըլլալով իշխանութենէ քաշված էր արդէն Ս. Վրացյանի դահլիճը, իր տեղը զիջելով Դրո-Միլին խառն դահլիճին):

Ո՛չ որի համար գաղտնիք էր, որ ընկ. Դրո խորհրդայնացած Հայաստանի մեջ պարզ պատանդ մըն էր և իշխանության բուն տերը Մոսկվայի ներկայացուցիչն էր «ընկ.» Միլին:

Ինը օրերու մեջ Հայաստան երեք դահլիճ փոխած էր՝ դաշինքի ստորագրությունը վերապահելով այն դահլիճին, որուն բուն տերը բոլշևիկ Միլինն էր:

Համաձայն Հայաստանի և Թուրքիո մեջ գործող Սահմանադրությանց, դաշինք մը միայն այն ատեն պետական իրավաթուղթի մը արժեքը կստանա, երբ այդ դաշինքը վավերացված է պայմանադիր կողմերու օրենսդիր մարմիններու կողմէ:

Նույնը նաև Ալեքսանդրապոլի դաշնագրի նկատմամբ:

Պետական իրավաթուղթի մը արժեքը ստանալու համար, անհրաժեշտ էր, որ այդ դաշինքը իր վավերացումը ստանա թէ՛ Հայաստանի Խորհրդարանի և թէ՛ Թուրքիո Ազգային Մեծ ժողովին կողմէ:

Մինչ իրողությունը այն է, որ ճիշտ դաշնագրի ստորագրման պահուն Ալեքսանդրապոլի մեջ, Հայաստան դադրած էր արդէն գոյություն ունենալէ իբրև անկախ պետություն, և դադրած էր գոյություն ունենալէ նաև իր Խորհրդարանը:

Այս ուղղությամբ Ալեքսանդրապոլի դաշնագրի վավերացումը փաստորեն անկարելի դարձած էր Հայաստանի Խորհրդարանին կողմէ:

Այս պարագան նկատի առնելով՝ դաշնագիրը չվավերացվեցավ նաև Թուրքիո Ազգային Մեծ ժողովին կողմէ:

Դաշնագիրը մնաց իբրև արատավոր իրավաթուղթ մը, զուրկ ունէ արժեքէ:

Զգործադրվեցավ անոր 14-րդ հոդվածը, որ կսահմաներ հետևյալը.

«Այս դաշնագիրը պետք է վավերացման ենթարկվի Հայաստանի Խորհրդարանի և Անգարայի Ազգային Մեծ ժողովի կողմից մի ամսվան ընթացքում» (Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», 1928, Փարիզ, էջ 438):

Այս հոդվածը կստորագրվեր դեկտ. 3-ին, երբ օր մը առաջ, դեկտ. 2-ին, մեր երկիրը, ինչպես ըսինք, դառնաւ էր գոյություն ունենալէ իբրև անկախ պետություն:

Դաշնագրին ո՛չ ոք տեր կեցավ, բացառությամբ հայ «ուղեկից»-ներու, որոնք միայն և բացառաբար Դաշնակցությունը վարկաբեկելու համար ճիգ կընէին Ալեքսանդրապոլի դաշնագրին մեջ պետականորեն ամենէն անարատ իրավաթուղթը տեսնել...

Ալեքսանդրապոլի դաշնագրին տեր չկեցան նաև Մոսկվայի մեջ, ո՛չ Խորհրդային Ռուսիան (որուն լիազոր-ներկայացուցչի՝ Միլինի հրահանգով ստորագրված էր այդ դաշնագիրը) և ոչ ալ քեմալական Թուրքիան (որուն պատվիրակները՝ գոր. Քյազիմ Գարապեքիր, Խալիտ պեյ և Նեճաթի պեյ, կշարունակէին վայելել իրենց կառավարության վստահությունը):

«Ո՛չ մեկ հարցի մեջ, Հայ Դատի կապակցությամբ, - ըսինք քիչ վերև, - այնքան հստակորեն չի գծվիր բոլշևիզմի դավադիր պատկերը, որքան Նախիջևանի հարցին մեջ»:

Փորձէք հիմնավորել մեր այս ամբաստանությունը:

Ռուս անվանի գրիչներէն պրոֆ. Բ. Նոլդե - նախագահը Միջազգային իրավունքի ինստիտուտի - կվկայե, որ իր հայրենիքին մեջ կապրին մեծ թէ փոքր քանակությամբ 197 այլևայլ ժողովուրդներ:

Այս 197 ժողովուրդներէն միայն 16-ը տեր են «անկախ» հանրապետությանց:

Մյուսները տեղավորված են վարչական տարբեր միավորներու մեջ, կա՛մ երկրամասերու (6), կա՛մ բնագավառներու

(126), կա՛մ ինքնավար հանրապետությանց (16), կա՛մ ինքնավար մարզերու (9) և կա՛մ ազգային շրջաններու (10):

Ի՞նչ հիմունքով Խ. Միության 197 ժողովուրդներէն միայն 16-ը «երջանիկ»-ներու շարքը դասված և միայն անոնք օժտված են «անկախության» տիտղոսով:

Պատասխանելով այս հարցումին՝ Սթալին, Խորհուրդներու համամիութենական 8-րդ (արտակարգ) համագումարին տված իր գեկուցմանը մեջ, 1936 նոյ. 26-ին, կհայտարարեր.

«Որո՞նք են այն հատկանիշները, որոնք իրավունք կուտան ինքնավար հանրապետություն մը վերածելու անկախ հանրապետության»:

Ձեկուցարէրը կմատնանշեր երեք հատկանիշ.

Առաջին անհրաժեշտ է, որպէսզի տվյալ երկրի ժողովուրդը իր քանակով շատ փոքր չըլլա, այլ ունենա «գոնէ մեկ միլիոնէն ոչ նվազ, այլ ավելի բնակիչ»:

Դառնալով երրորդին, որ մեզ ամենէն ավելի շահագրգռող կետն է, Սթալին կհայտարարեր.

«Անհրաժեշտ է, որպէսզի հանրապետությունը եզրային ըլլա, իր բոլոր կողերէն շրջապատված չըլլա Խ. Միության հողերով:

Ինչո՞ւ:

Որովհետև մեր Սահմանադրությամբ միութենական հանրապետություն մը իրավունք ունի Խորհրդային Ընկերվար Հանրապետությանց Միութենէն դուրս գալու. արդ, քանի որ այդ իրավունքը կա, անհրաժեշտ է, որպէսզի հանրապետություն մը, որ դարձած է միութենական, տրամաբանորեն և փաստորեն կարելիություն ունենա անջատման խնդիր հարուցանելու Միութենէն: Իսկ նման խնդիր միայն այն հանրապետությունը կրնա հարուցանել, որ սահմանակից է ունէ օտար պետության և որ, հետևաբար, իր բոլոր կողմերէն շրջապատված չէ Խ. Միության հողերով» (Ի. Սթալին, «Լենինիզմի հարցերը», 1945, Մոսկվա, 11-րդ հատ., էջ 528):

Ինչպէս կտեսնենք, անկախ հանրապետություն մը դառնալու համար՝ այսքան կարևոր է սահմանակցությունը ունէ օտար պետության մը հետ:

Եթէ, օրինակ, Խ. Միության մեջ կա ժողովուրդ մը, որ ոչ թէ մեկ, այլ քանի մը տասնյակ միլիոն բնակիչ ունի, և այդ ժողովուրդը իր երկրին մեջ կկազմէ ոչ թէ «քիչ-շատ հոծ մեծամասնություն մը», այլ

կկազմեն այդ երկրի բնակիչներուն ճնշող մեծամասնությունը, տվյալ երկիրը, հակառակ իր այս բացահայտ առավելությանց, այնուամենայնիվ, անկարող է Խ. Միության մեջ անկախ հանրապետություն դառնալու, որովհետև ան սահմանակից չէ ունեցող օտար պետության:

Այսքան մեծ է աշխարհագրական ազդակին իրավական կշիռը Խ. Միության մեջ:

Բայց մի թե այս ազդակը իրավական ունեցող կշիռ չունի այն պարագային միայն, երբ շրջան մը հովանավորության հիմունքով ենթակա կհռչակվի Խորհրդային ունեցող հանրապետության մը:

Մի թե նախապայման չէ, որպեսզի հովանավորվող հողաշրջանը աշխարհագրորեն մաս կազմեն հովանավորող հանրապետության:

Անկե բաժան չըլլա, այլ միացած ըլլա անոր:

Որովհետև այս հովանավորությունը կկիրառվի ոչ թե Խ. Միության (և կամ անոր մաս կազմող հանրապետության մը) կողմէ այդ Միության (և կամ հանրապետության) սահմաններէն դուրս գտնվող երկրի մը նկատմամբ, այլ կկիրառվի Խ. Միության (և կամ անոր մաս կազմող հանրապետության մը) կողմէ իրմէ ներս գտնվող երկրի մը նկատմամբ:

Եթե Խ. Միության մեջ այս հովանավորությունը կրնա կիրառվի միայն հանրապետությանց ներառյալ շրջաններու նկատմամբ, այդ պարագային ինչո՞ւ նույնությամբ այդ սկզբունքը չի կիրառվիր նաև Նախիջևանի նկատմամբ:

Ինչո՞ւ Նախիջևանը բացառություն կկազմեն բովանդակ Խ. Միության մեջ:

Ինչպէս վերը ըսինք, 16 «անկախ» հանրապետություններ՝ «կամավորաբար» միանալով՝ ստեղծած են 17-րդը, որ կկոչվի Խորհրդային Ընկերվար Հանրապետությանց Միություն:

Այս 16 հանրապետություններէն միայն 6-ը ազգագրորեն միաձույլ են, և, հետևաբար, մի են և ամբողջական նաև երկրորդէն:

Այս վեց հանրապետություններն են՝ Քարեյլ-Ֆիններու Հանրապետություն, Էսթոնիա, Լիթվանիա, Լեթոնիա, Մոլտավիա և Հայաստան:

Մյուս տասը իրենց մեջ տարբեր ազգությանց պատկանող վարչական գանազան միավորներ ունին, ինքնավար հանրապետություններն մինչև ազգային շրջանները

(վարչականորեն փոքրագույն միավորները, սահմանափակ իրավասություններով):

Այս 10 հանրապետություններէն միայն բուն Ռուսիան, որ ներքնաբար դաշնակցային հանրապետություն մըն է, իր կազմին մեջ ունի 6 երկրամասեր, 47 բնագավառներ, 12 ինքնավար հանրապետություններ, 6 ինքնավար մարզեր և 12 ազգային շրջաններ:

Սակայն 10 հանրապետություններէն և ո՛չ մեկը, մեջը նաև բուն Ռուսիան հաշվելով, չունի իր կազմին մեջ տարբեր ազգությամբ բնակված միավոր մը, որ ենթակա ըլլար հովանավորությանը Խորհրդային այլ հանրապետության մը:

Այս բացառությունը, նորէն ու դարձյալ կկրկնենք, կկատարվի համայն Խ. Միության մեջ միմիայն Հայաստանի կապված Նախիջևանի նկատմամբ:

Հայաստանի մաս կազմող Չանգեզուրը աշխարհագրորեն Նախիջևանի շրջանը իսպառ կբաժնեն Ազրպեյճանէն:

Այս վերջինը ո՛չ մեկ տեղ միացման կետ չունի Նախիջևանի հետ. Չանգեզուրը, Տանցիկյան միջանցքի մը նման, Նախիջևանի շրջանը աշխարհագրորեն կկտրեն ու կգտնեն Ազրպեյճանէն: Միայն Չանգեզուրի վրայէն անցնելով՝ Ազրպեյճանը կրնա կապվի Նախիջևանի և իր «հովանավորություն»-ը տարածել անոր վրա:

Երբ այս է իրողությունը, ինչո՞ւ, ուրեմն, բոլշևիկյան բոլոր սկզբունքները խախտելով և անիրավաբար Հայաստանի վտիտ մարմինը հռչակելով, անկե գատել ամբողջ շրջան մը և զայն դնել հեռո՞ւ ու բաժան երկրի մը «հովանավորությանը» տակ:

Թերևս ըսվի, թե Նախիջևանը առավելաբար թաթարաբնակ է, ուստի և այդ շրջանը դրված է թաթար Ազրպեյճանի հովանավորությանը տակ:

Սակայն ինչո՞ւ հայաբնակ Լեռնային Ղարաբաղը՝ իբրև ինքնավար Մարզ, կարելի է պահել թաթար Ազրպեյճանի կազմին մեջ, իսկ թաթարաբնակ Նախիջևանը կարելի չէ պահել Հայկական Հանրապետության կազմին մեջ:

Ինչո՞ւ Վրաստանը իր կազմին մեջ կրնա ունենալ երկու ինքնավար հանրապետություններ՝ Ապխազիո և Աճառիո, ինչպէս նաև ինքնավար մարզ մը՝ Հարավային Օսեթիո, իսկ Հայաստանը չի կրնար ունենալ ոչ իսկ մեկ հատ ինքնավար շրջան:

Չո՞ւր հարցումներ:

Մեր հայրենիքի նկատմամբ գործադրված անարգ արթի բացատրությունը որոնել պետք է ոչ թե աշխարհագրության և իրավունքի, այլ միայն և բացառաբար ռազմա-քաղաքական ստորին և անավոր դավերու աշխարհին մեջ:

1920 ղեկտ. 2-ին մեզի հետ Երևանյան ծանոթ դաշինքը կնքելով՝ Ռուսիա այդ դաշնագրի 3-րդ հոդվածով իր վրա հետևյալ հանձնառությունը կատներ.

«Ռուս Խորհրդային կառավարությունը կրնդունի, որ անվիճելիորեն Խորհրդային Հայաստանի մաս կկազմեն հետևյալ հոդերը, - Երևանյան նահանգը իրեն մաս կազմող բոլոր գավառներով, Կարսի շրջանի այն մասը, որ ռազմապես կապահովե տիրապետությունը Ջաջուր կայարանեն մինչև Արաքս կայարանը երկարող երկաթուղագծին, Գանձակ նահանգի Ջանգեզուր գավառը, նույն նահանգի Ղազախ գավառի մի մասը, օգոստ. 10-ի համաձայնագրի (ակնարկը՝ 1920 օգոստ. 10-ի ռուսահայ համաձայնագրին.- Ն.) սահմաններուն մեջ, և Թիֆլիս նահանգի այն մասերը, որ Հայաստանի տիրապետության տակ էին առ 28 հոկտ. 1920 թվականը» («Ժողովածու գործող դաշինքներու, համաձայնությանց և պայմանագրություններու», հ. Գ, 1922, Մոսկվա, էջ 14, հրատ. Արտ. գործոց գործավարության):

Ընդգծումները - մե նք կատարեցինք:

Նախիջևանի գավառը, ինչպես հայտնի է, կմտներ Երևանի նահանգին մեջ:

Հայնոուս դաշնագրի 3-րդ հոդվածով Ռուսիա այդ գավառը կնկատեր Հայաստանի անվիճելի՝ սեփականությունը և հանձնառու կըլլար գայն պահել Հայաստանի սահմաններուն մեջ:

Մինչ Դաշնագրի մեկանն իսկ չչորացած, իր ստորագրությունը դրժելով և վատաբար հայ ժողովուրդը խաբելով, Ռուսիա, Մոսկվայի 1921 մարտ 16-ի համաձայնությամբ ընդատաջելով Թուրքիո, Նախիջևանի շրջանը կպոկեր Հայաստանեն և գայն կդներ թաթար Ազրպեյձանի հովանավորության տակ:

Ինչպես հայտնի է, Կարսի դաշնագիրը նույնն է, ինչ որ Մոսկվայինը:

1921 հոկտ. 13-ին Խ. Հայաստանի պատվիրակները - Ասքանազ Մոավյան (արտ. գործոց գործավար) և Պողոս Մակինցյան (ներքին գործոց գործավար) - Կարսի մեջ վավերացուցին այն ամենը, ինչ որ 1921 մարտ 16-ին Թուրքիան և Ռուսաստանը, առանց

Հայաստանի մասնակցության, մշակած և հատուկ դաշինքով նվիրագործած էին արդեն:

Այս վերջին դաշնագրի 15-րդ հոդվածով հավիտենական Նենգը իր վրա հետևյալ հանձնառությունը կատներ.

«Հոդված 15-րդ.- Ռուսիա կպարտավորվի (Թուրքիո առջև.- Ն.) անհրաժեշտ քայլերը առնել Անդրկովկասի հանրապետությանց մոտ, որպեսզի այս վերջինները հետագային Թուրքիո հետ կնքելիք իրենց դաշինքներու մեջ ճանչնան տվյալ Դաշնագրի (Մոսկվայի) այն հոդվածները, որոնք անմիջորեն կվերաբերեին իրենց» («Ժողովածու գործող դաշինքներու...», 3-րդ հրատ., 1935, Մոսկվա, էջ 162, հրատ. Արտ. գործավարության):

Իրականին մեջ խոսքը միայն Հայաստանի՝ մասին էր, որովհետև Մոսկվայի դաշնագրով միայն Հայաստանը հռչակված էր:

Հանրապետություննե՛ր, վերջիննե՛ր,- հոգնակի այս կեղծ ու անիմաստ ձևը կգործածվի՝ պարզապես Հայաստանի նկատմամբ գործադրված դավը քողարկելու համար:

Ռուսիա Մոսկվայի դաշնագրի 15-րդ հոդվածով իր վրա առած պարտականությունը ամենայն սրբությամբ գործադրեց Կարսի մեջ:

Հայտնապես գերման գործակալ մը՝ Կուրա ծածկանունով՝ Լենինի մտերիմներեն ծանոթ Կանեցքի (Ֆյուրսթենպերկ), իրեն հետ Երևանեն երկու դոլամներ առնելով՝ Ասքանազ Մոավյան և Պողոս Մակինցյան, Կարս եկավ և հոն անոնց 1921 հոկտ. 13-ին վավերացնել տվավ Մոսկվայի մարտ 16-ի դաշնագիրը:

Այս ստորագրությամբ նաև Խ. Հայաստանի հայ պատվիրակները կճանչնային Նախիջևանի շրջանի անջատումը մեր հայրենիքեն և այդ շրջանի հովանավորության փոխանցումը թաթար Ազրպեյձանի:

Խորհրդային դահիճը Կարսի մեջ կպարտադրեր իր գոհը՝ անպաշտպան Հայաստանը վավերացնել այն մահավճիռը, որ իր նկատմամբ հանված էր Մոսկվայի մեջ:

Խոսելով Կարսի «բարեկամության դաշինք»-ի մասին, Բ. Բոբյան կնկատե.

«1921 հոկտ. 13-ի «բարեկամության դաշինք»-ը թե՛ ըստ էության և թե՛ ըստ ձևի, քաղաքական տեսակետե, չէր հանդիսանար իբրև միջազգային իրավական ըմբռնումի ինքնուրույն արթ մը, այլ այդ դաշինքը կկրկներ և կհաստատեր այն ուխտը, որ 1921 մարտ 16-

ին Մոսկվայի մեջ կնքված էր Ռուսիո և Թուրքիո միջև» (Բ. Բորյան, «Հայաստան», հ. Բ, 1949, Մոսկվա, էջ 300-301):

Ինչպես ըսինք արդեն, Մոսկվայի դաշնագրի 15-րդ հոդվածով Ռուսիա հանձնառու եղած էր Թուրքիո առջև՝ այդ դաշնագիրը պարտադրելու Անդրկովկասի «հանրապետությանը»:

Ըսինք նաև, որ գրության հոգնակի ձևը պետք չէ շփոթանքի մատնե մեզ:

Խոսքը միայն և բացառաբար Հայաստանի՝ մասին է, որովհետև Մոսկվայի դաշնագրով իրականին մեջ միայն Հայաստանի ճակատագիրը կորոշվեր, առանց, սակայն, Հայաստանի մասնակցության:

«Մակայն թուրքերը, - խորհրդավորապես կնկատե Բ. Բորյան, - ինչ-որ հիմ մը ունեին Մոսկվայի դաշնագրի մեջ 15-րդ հոդվածը մտցնելու և, ըստ երևույթին, այդ իմաստով ալ անոնք որոշ խոստում մը առած էին Ռուսիայեն, որովհետև անոնք բանակցությանց մտած էին ռուս խորհրդային կառավարության հետ տակավին 1920 հունիսին, Մոսկվայի մեջ, ինչպես որ այս մասին կգրեր Թուրքիո Ազգ. Մեծ ժողովի արտ. գործավար Պեքիր Սամի» (Ա. Կարինյան, «Դաշնակցությունը փաստերի դեմ», էջ 69-70. մենք կքաղենք Բ. Բորյանե՝ «Հայաստան», հ. Բ, էջ 302):

Կարինյան և Բորյան ըսել կուզեն, որ Հայաստան ծախված էր ոչ միայն Կարսեն ու Մոսկվայեն, այլև Ալեքսանդրապոլն՝ ալ առաջ, տակավին 1920-ի ամռան:

Համոզված ենք, որ մեր հայրենիքը Ռուսիո կողմե վաճառված էր ատկե ալ շատ ավելի առաջ, Հոկտեմբերյան հեղաշրջումեն անմիջապես հետո, երբ թուրքնուս սիրաբանության մեղրալուսինը սկսավ...

Պարզ ենթադրություն չէ մեր խոսքը, այլ հավանականության մոտ վարկած մը, որուն հոս անկարող ենք անդրադառնալ:

Գոհանանք մատնանշելով միայն 1920-ի հունիսը:

Ուրեմն, լավատեղյակ բոլշևիկներու վկայությամբն իսկ, Հայաստանը, իբրև անկախ երկիր, կգերեզմանվեր ու կհռչակվեր ռուսերուրք զինակցությամբ:

Թուրքիո և Ռուսիո այս գաղտնի համաձայնությունը, 1920 սեպտ. 23-ի թուրքնահայ պատերազմի հետևանքով, առաջին անգամ իրավական կերպարանք առավ երկու դաշինքներով՝ Երևանի և

Ալեքսանդրապոլի, կնքված գրեթե միաժամանակ, առաջինը՝ 1920 դեկտ. 2-ին, իսկ երկրորդը՝ 1920 դեկտ. 3-ին:

Արդ, քանի որ Թուրքիա և Ռուսիա զինակցորեն և համաձայնաբար հռչակեցին մեր հայրենիքը, մենք, փաստեն գորավոր այս ճշմարտությունը հիմ առնելով, կրնանք արդյոք հայտարարել, թե զույգ դաշինքները՝ Երևանի և Ալեքսանդրապոլի, բնական ձևով և նախասահմանված եղանակով աշխարհ եկան ա յդ համաձայնության արգանդեն:

Այս հարցումին մենք կրնանք դրապես պատասխանել՝ երբ հակասություն չգտնենք զույգ դաշինքներու մեջ, և բացառաբար երբ հակասություն գտնենք:

Ելակետ առնելով վերլուծման այս ճիշտ եղանակը, մենք կտեսնենք, որ զգալի տարբերություններ կան զույգ դաշինքներու մեջ:

Բավական է հիշատակել միայն այն փաստը, որ Երևանի ռուսնահայ դաշնագրով բովանդակ Երևանյան նահանգը հայկական հող կնկատվի, մինչ Ալեքսանդրապոլի թուրքնահայ դաշնագրով չի նկատվիր:

Կմնա ենթադրել ուրեմն, որ մեր երկրի հռչակումը ռուսերուրք համաձայնությամբ նախաձշտված էր ոչ թե իր բոլոր մանրամասնություններով, այլ ընդհանուր գիծերու մեջ միայն:

Այդ համաձայնության մեջ որոշ տարածությամբ շրջան մը նկատված էր, ըստ երևույթին, իբրև res nullius, իբրև ոչ ոքի պատկանող հողամաս մը, ուր միայն զենքով «իրացած փաստերը» կրնային իրավունք ստեղծել:

Ասկե՛ այն տարբերությունները, որ կան երկու դաշինքներու մեջ:

Օգտվելով առիթեն՝ Թուրքիան կատարված փաստերու առջև կդնե Ռուսիան և Հայաստանեն կշորթեր ավելին, քան իրավունք ուներ ռուսերուրք գաղտնի համաձայնությամբ:

Ու հոս որոնել պետք է բացատրությունը նաև մեր «Մեծ Հոր» 1920 նոյ. 9-ի ուշագրավ հեռագրին:

«1920-ի աշնան ընկեր Սթալինը բոլշևիկյան կազմակերպություններու առաջ ռազմական խնդիր մը դրավ, - հայ ժողովուրդի ազատությունը, անոր փրկությունը՝ ֆիզիքական ոչնչացումի սպառնալիքեն: - «Հարկավոր է ամեն գնով ազատել Հայաստանը, շուտով ազատել, փրկել Հայաստանը»: Ընկ. Սթալինի այս բառերը, որ ան ըսած է 1920 նոյ. 9-ի Կովկասյան բյուրոյի և

Ազրպեյճանի Կոմկուսի Կեդր. վարչության միացյալ պատմական նիստին մեջ՝ հեղափոխական գործողության ռազմաճարգիր դարձավ*:

Ամրորեն հիշել պետք է հեռագրին թվականը – 1920 նոյ. 9:

Թուրքիան, օգտվելով առիթեն, կատարված իրողություններու առջև կոներ իր զինակիցը ռուսներուը գաղտնի համաձայնութենեն դուրս նորանոր հողեր գրավելով:

Մթալին կհորդորեր արագացնել Հայաստանի խորհրդայնացումը՝ Թուրքիո հառաջացումին արգելք ըլլալու համար:

Երբ պատերազմը վերջացավ՝ զինակիցները զիրենք գտան երկու տարբեր դաշինքներու առջև, գրեթե նույն օրը երկու տարբեր քաղաքներու մեջ պարտադրված իրենց գոհին՝ Հայաստանի:

Այս տարբերությունները հարթվեցան Մոսկվայի մեջ:

Այն համոզումին ենք, որ 1920-ի հունիսյան համաձայնությամբ Թուրքի պետք չէ գրավեր Նախիջևանի շրջանը:

Այլ խոսքով՝ Մոսկվայի մեջ կամովին այդ շրջանեն պետք է հրաժարեր՝ զայն հայկական նկատելով:

Չհրաժարեցավ սակայն:

Ընդհակառակն. Ռուսիո մեջ լայնորեն զիջողական ու թրքասեր տրամադրություններ տեսնելով՝ Թուրքիա բուն իսկ

* Ավելորդ չենք նկատեր հոս նույնությամբ հրատարակության տալ այն, ինչ որ կա գրված Մթալինի «Երկերու» «Կենսագրական քրոնիկ»-ին մեջ Ա. Սարգիսյանի կողմե ակնարկված նիստի մասին.

«1920 նոյ. 9.– Բ. Վ. Մթալին հանդես եկավ զեկուցումով մը Ազրպեյճանի Կոմկուսի Կեդկոմի, Համամիութենական Կոմկուսի Կեդկոմի Կովկասյան բյուրոյի և Պաքվի կուսակցական և Խորհրդային կազմակերպությանց միացյալ նիստին մեջ՝ կուսակցական և Խորհրդային աշխատանքի առաջադրությանց մասին Ազրպեյճանի մեջ» (Բ. Վ. Մթալին, «Երկեր», հ. 7, 1947, Մոսկվա, էջ 477):

Ինչպես կտեսնենք, և ոչ մեկ խոսք ոչ Հայաստանի և ոչ ալ Հայաստանի «փրկության»-ը վերաբերող նոյ. 9-ի «ռազմաճարգիրի» մասին...

«Օուխը» կա, սակայն «կրակը» չկա...

Եվ չկա «կրակը» պարզ այն պատճառով, որովհետև այդ «կրակով» մեր տունը ոչ թե փրկել, այլ բոցավառել կուզեին...

Նոյ. 9-ի «ռազմաճարգիր»-ին կտեղեկանան մեր հետևորդները միայն, սակայն մենք – երբեք:

Մոսկվայի մեջ շատ ավելի ծանր պայմաններ գծեց Հայաստանի համար՝ զայն նորանոր անդամատումներու ենթարկելով:

Վերջին վատին վայել նենգությամբ՝ Ռուսիա Մոսկվայի մեջ ուրացավ Երևանի դաշինքը:

Չավով մը ուրացավ նաև Ալեքսանդրապոլի դաշինքը, սակայն ոչ թե ի շահ, այլ ի վնաս Հայաստանի:

Այս դաշինքները Մոսկվայի մեջ Քրեմլը փոփոխությանց ենթարկեց ոչ թե Հայաստանի իրավագրկումները մեղմացնելով, այլ զանոնք ալ ավելի ծանրացնելով:

«Հայաստանի խորհրդայնացումեն հետո,– կնկատե Խորհրդային պատմաբանը՝ բոլշևիկ Բ. Բորյան,– հողային առավելագույն զիջումները կատարվեցան Թուրքիո, Հայաստանի հաշվին, Կարսի մեջ» (Բ. Բորյան, «Հայաստան», հ. Բ, էջ 285):

Ինչպես ըսինք, կատարվեցան նախ Մոսկվայի և ապա Կարսի մեջ:

Ամենեն առաջ ուրացվեցավ հայ ժողովուրդի անժամանցելի իրավունքը իր դարավոր հայրենիքի՝ թրքապատկան Հայաստանի վրա, թե՛ Մոսկվայի և թե՛ Կարսի դաշինքներով:

Այս գույգ ուխտերով Ռուսիա թրքական հող նկատեց բովանդակ թրքահայաստանը:

Եվ նույն ճանաչումը պարտադրեց նաև մեզի:

Միաժամանակ ընդարձակ հողաշրջաններ զիջեց Թուրքիո բուն իսկ անդրկովկասյան Հայաստանի մեջ:

Ձիջեց անգամ Սուրմալուի գավառը, որ չէր մտներ քենալական Ազգային ուխտով գծված Թուրքիո սահմաններուն մեջ:

Եվ արյունաքամող պալար մը բացավ մեր վտիտ մարմնին վրա՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը, զայն ենթակա պահելով Ազրպեյճանի:

Պետք չէ մոռնալ, որ Սևրի դաշնագրին ուրացումը մեզմե առաջին անգամ Խորհրդային Ռուսիան պահանջեց և ոչ Թուրքիան:

Այն Ռուսիան, որ այսօր իր հայանուն «ուղեկից»-ներու բերնով Սևր կպահանջե եղեր... Հայաստանի համար:

Հայկերուը պատերազմի ամենատաք օրերուն, 1920 հոկտ. 13-ին, Երևանի մեջ բանակցությանց մտնելով մեզի հետ՝ Ռուսիա իր լիագոր-ներկայացուցչի՝ Լըկրանի միջոցով՝ մեզմե կպահանջեր հրաժարիլ Սևրեն:

Ինչ որ ետքեն, Ալեքսանդրապոլի մեջ, 1920 դեկտ. 3-ի դաշնագրով, Թուրքիա պահանջեց պարտված Հայաստանեն – հրաժարում Սևրեն – զայն ավելի առաջ, երբ Հայաստան պատերազմի մեջ պարտված չէր տակավին, մեզմե պահանջած էր Ռուսաստանը:

Այն Ռուսաստանը, որ ատկե քիչ ավելի առաջ, Պաքվի մեջ, գլխավորությամբ Էնվերի և Զինովիևի, «արևելյան ժողովուրդները» ոտքի հանած էր մեր դեմ...

1920 հոկտ. 13-ին մեզմե պահանջածն է ահա, որ ետքեն՝ թե՛ 1920 դեկտ. 3-ին, թե՛ 1921 մարտ 16-ին և թե՛ 1921 13-ին, Ռուսիա, զինակցաբար Թուրքիո հետ, համառորեն կհետապնդեր ու կիրագործեր:

Մակայն դառնանք Նախիջևանի:

Կարսի դաշնագիրը իր ներածական բաժնին մեջ հետևյալ հատվածն ուներ.

«Դաշնադրող կողմերը, ընդունելով ազգերու եղբայրության սկզբունքը և ժողովուրդներու ինքնորոշման իրավունքը, տոգորված ցանկությամբ՝ անոնց միջև բնականորեն սրտակից հարաբերություններ և անկեղծ ու մշտատև բարեկամություն ստեղծելու, հաստատված երկու կողմերու փոխադարձ շահերու վրա, որոշեց Ռուսիո մասնակցությամբ բարեկամության հետևյալ դաշինքը կնքել»:

Անարգ դավի բոլոր ծալքերուն լավատեղյակ Բ. Բորյան՝ այս առթիվ կնկատեր.

«Կարսի դաշնագրի այն հոդվածը, որով Նախիջևանի շրջանը կկազմեր ինքնավար երկրամաս մը Ազրպեյճանի հովանավորության տակ, կլրացներ Հայաստանի անձնատվությունը Թուրքիո առջև և գերոյի կվերածեր դաշնագրի ներածական մասը» («Հայաստան», հ. Բ, էջ 303):

Ջերոյի կվերածեր դաշնագրի քիչ վերը հիշատակված «ներածական մասը», որովհետև դաշնագրով նախ գերոյի կվերածեր բուն իսկ Հայաստանը՝ իբրև ռազմա-քաղաքական ուժ և իբրև անկախ երկիր:

Մոսկվայի և Կարսի դաշինքներով Մոսկվան մեր հայրենիքը կդարձներ բաց սահմաններով անպաշտպանելի երկիր մը դուրսեն մեր դեմ թուրքը հանելով, իսկ ներսեն թաթարը...

Ինքնավար Նախիջևանի ստեղծումով, թաթար Ազրպեյճանի հովանավորությանը տակ, Մոսկվա միայն մեկ նպատակ ուներ,–

ինպառ խորտակել Հայաստանի դիմադրական կորովը, հիմնովին զինաթափել մեր երկիրը, զայն անպաշտպանելի դարձնել թե՛ դուրսեն և թե՛ ներսեն մեզի սպառնացող վտանգներու դեմ, և այս ձևով գլուխ հանել ու ամբողջացնել մեր լիակատար անձնատվությունը Թուրքիո առջև...

Ահա թե ինչո՛ւ այդ դաշինքներու մասին խոսելով՝ բոլշևիկ պատմաբանը սեով ճերմակի վրա կարձանագրեր.

«Ավելի ծանր և ավելի աննպաստ խաղաղություն քան Կարսին է՝ պատմության էջերուն վրա հազիվ թե կարելի է գտնել» (անդ, էջ 319):

Ավելի՛ն.

«Կարսի դաշնագիրը ըստ էության ամենավատթար և ամենախայտառակ խաղաղությունն էր Հայաստանի համար» (անդ, էջ 300):

Բոլշևիկ Բորյանները այսքան աղեխարշ ճիշով մը կահակոչեին ո՛չ թե ազատության մեջ, այլ ահավորագույն բռնության մը տակ...

Ինչե՛ր պիտի չպատմեին անոնք մեզի, եթե երբեք ազատությա՛ն մեջ խոսեին...

Հայաստանի մարմնին վրա թաթար Ազրպեյճանի ենթակա Ինքնավար Նախիջևան մը ստեղծելով՝ Մոսկվայի դաշնագիրը միաժամանակ կնախասահմաներ, որ Ազրպեյճանը իրեն վստահված այս հովանավորությունը «պիտի չզիջի ուն երրորդ պետության»:

Նաև այս հիմնական կետն է, որ փոփոխության ենթարկվեցավ Կարսի մեջ:

Ահա այս վերջին դաշնագրի մեջ Նախիջևանին վերաբերող հոդվածը:

«Հոդված 5-րդ.– Թուրքիո կառավարությունը, ինչպես և կառավարությունները Խորհրդային Հայաստանի և Ազրպեյճանի կընդունին, որ Նախիջևանի շրջանը – սույն Դաշնագրի 3-րդ հավելվածի մեջ մատնանշված սահմաններով – կկազմե ինքնավար երկրամաս մը, Ազրպեյճանի հովանավորության տակ» («Ժողովածու գործող դաշինքներու», 1935, Մոսկվա, էջ 168):

Այս վերջին հոդվածով Ազրպեյճանը այլևս չի պարտավորվիր Նախիջևանի վրա իր ունեցած հովանավորության իրավունքը ուն երրորդ պետության մը չզիջելու:

Այս արգելքը ջնջված է:

Վերափոխված հողվածով Ագրպեյճանը կարտոնվի, եթե երբեք կամենա, հովանավորության իր իրավունքը ուրիշի մը զիջելու...

Որո՞ւ սակայն...

Ճիգ մը կատարենք այս դժվարին հարցը պարզելու:

Ալեքսանդրապոլի 1920 դեկտ. 3-ի դաշնագիրը իր 13-րդ հոդվածով կսահմաներ.

«Շարուրը և Նախիջևանը ժամանակավորապես օժտվում են ինքնավարությամբ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որոշվի նրանց բախտը» (Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», 1928, Փարիզ, էջ 438):

Մոսկվայի դաշնագրի 3-րդ և Կարսի դաշնագրի 5-րդ հոդվածները հետևյալ փոփոխությունները կմտցնեին Ալեքսանդրապոլի դաշնագրի 13-րդ հոդվածին մեջ.

1.- Ալեքսանդրապոլի դաշնագրով մեզմե Նախիջևանի շրջանը կխլվեր առժամաբար, մինչ Մոսկվայի և Կարսի դաշինքներով վերջնապես:

2.- Ալեքսանդրապոլի դաշնագրով Նախիջևանի հովանավորը Թուրքիան էր, մինչ Մոսկվայի և Կարսի դաշինքներով Ագրպեյճանը:

Այս զույգ հոդվածները կմատենն ոգին այն զիջումի, որ Նախիջևանի հարցին մեջ կատարվեցավ Թուրքիո կողմե:

Մոսկվայի մեջ, ճիշտ է, Թուրքիա հոժարեցավ հրաժարիլ հովանավորության իր իրավունքեն Նախիջևանի վրա (կենթադրենք 1920-ի հունիսյան համաձայնության պարտադրանքի տակ.- Ն.), պայմանով սակայն, որ, նախ այդ շրջանը ռազմա-քաղաքականորեն մաս չկազմե Հայաստանի, այլ դրվի զինակից Թուրքիո հովանավորության տակ և իրավականորեն մաս կազմե այս վերջին երկրին. երկրորդ Թուրքիա հոժարեցավ հրաժարիլ հովանավորության իր իրավունքեն նաև այն պայմանով, որ Ագրպեյճանի հովանավորությունը ըլլա տևական և անփոխանցելի:

Տրամադիր ենք կարծելու, որ Թուրքիա տվյալ պարագային, իբրև հովանավորության հավանական թեկնածու Նախիջևանի հարցին մեջ, նկատի ուներ Հայաստանը:

Արգելք ըլլալու համար հովանավորության այս փոխանցումին Հայաստանի, Թուրքիա պահանջեց և Ռուսիա ընդառաջեց անոոր և հոժարեցավ, որպեսզի Մոսկվայի դաշնագրի 3-

րդ հոդվածին մեջ դրվի մեզի արդեն ծանոթ արգելքը հովանավորության փոխանցումին մեջ:

Այսպես կխորհիսք նաև հետևյալ պատճառով:

Բացառիկ էր Նախիջևան-Ջանգեզուր-Լեոնային Ղարաբաղի ռազմա-քաղաքական արժեքը թե՛ Թուրքիո և թե՛ Ռուսիո համար:

Նույնն էր երկուքին բաղձանքն ալ այս հողամասին նկատմամբ. անոնք երկուքն ալ կջանային զայն խլել մեզմե՝ ուղղակի և անմիջական կապ հաստատելու համար իրենց միջև:

Թուրքեն ոչ նվազ աստելությամբ մեզ կատեր ու մեր դեմ կդավեր նաև Ռուսիան «Դաշնակցական» Հայաստանի մեջ «Անթանթի ճերմակ շուն»-ը տեսնելով, ինչպես որ լրբաբար կգրեր մեր հայրենիքի հասցեին Պաքվի «Կոմունիստ» թերթը:

Արդեն 1920 օգոստ. 10-ի հայեռուս համաձայնությամբ, Հայաստանը, ակամա, թուրքնուս զինակցության ճնշումին տակ, հարկադրվեցավ ընդունիլ, որ Թուրքիո զինակցին ռուսական բանակին կողմե գրավվին Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի շրջանները, դյուրացնելու համար անմիջական կապը երկու երկիրներու Թուրքիո և Ռուսաստանի միջև:

Ավելի ուշ, 1920 հոկտ.-ին, մշակվեցավ հայեռուս նոր համաձայնության նախագիծը, որուն մաս կկազմեին, ի միջի այլոց, հետևյալ կետերը.

1.- Ջանգեզուր մաս պիտի կազմե Հայաստանի, իսկ Ղարաբաղի և Նախիջևանի վիճակը պիտի ճշտվի իրավարարությամբ:

2.- Հայաստան կհոժարի իր հողերու վրայեն դեպի Թուրքիա անցք տալ ռուսական զորքերուն (Վ. Նավասարդյան, «Բոլշևիզմը և Դաշնակցությունը», 1949, Կահիրե, էջ 183):

Այս բանակցությունները մեզի հետ կվարեր, ճիշտ է, ձևապես միայն Ռուսիան, սակայն գաղտնիք չէր, որ ան կվարեր այդ բանակցությունները համախորհուրդ Թուրքիո հետ:

Նախիջևանի շրջանը ձևով մը թուրքնուսական հասարակաց հող մըն էր, ան միաժամանակ կպատկաներ թե՛ Թուրքիո և թե՛ Ռուսիո:

Իբրև արտակարգորեն կարևոր ռազմա-քաղաքական խարիսխ՝ միաժամանակ երկուքն ալ հոն էին:

Տրամադիր ենք խորհելու, որ ճիշտ այս հիմունքով նաև հետագային, Մոսկվայի 1921 մարտ 16-ի դաշինքով, երբ Թուրքիա հովանավորության իր իրավունքը փոխանցեց Ագրայեճանի, ինք, հակառակ այս փոխանցումին, ձևով մը, իր մեկ ոտքով, այնուամենայնիվ, շարունակեց մնալ այդ շրջանին մեջ:

Եթե ճիշտ է մեր այս վարկածը, ապա Ագրայեճան նաև այս տեսակետով լավագույն «հովանավորն» էր՝ Թուրքիո ներկայությունը Նախիջևանի մեջ քողարկելու համար:

Մոսկվայի և Կարսի դաշինքները գաղտնի հողվածներ ունեին:

Անշուշտ որ ունեին, ինչպես որ ունին այդ կարգի բոլոր դաշինքները:

Պիտի ենթադրել, որ ճիշտ այդ գաղտնի հողվածներուն մեջ գծված պիտի ըլլան Թուրքիո ներկայության պայմանները Նախիջևանի մեջ, ռազմակովան մը, որ հավասարապես անհրաժեշտ էր թե՛ Ռուսիո և թե՛ Թուրքիո իրենց մղած ընդհանուր պայքարին մեջ Արևմուտքի դէմ:

Շատ նուրբ ձևով Բ. Բոքյան մեզի կուգա այս պարագան հասկցնելու, կուգա վկայելու, որ Թուրքիա թե՛ Մոսկվայի և թե՛ Կարսի դաշինքներով կշարունակեր քողարկված ձևերու տակ մնալ Նախիջևանի մեջ:

Մոսկվայի դաշնագրի 7-րդ, ինչպես և Կարսի դաշնագրի 3-րդ հողվածները ճիշտ նույն բառերով հետևյալը կսահմանենք, Մոսկվայի դաշնագրի մեջ՝ Ռուսիո համար, իսկ Կարսի դաշնագրի մեջ՝ անդրկովկասյան հանրապետությանց.

«Հայաստանի, Ագրայեճանի և Վրաստանի Ընկերվար Խորհրդային Հանրապետությանց կառավարությունները, անձնատվության (capitulation.- Ն.) իրավիճակը անհամատեղելի (incompatibe.- Ն.) գտնելով ամեն երկրի ազգային ազատ ձգտումին, ինչպես և անոր գերիշխան իրավունքներու լիակատար իրացումին հետ, ուժե գուրկ և չեղյալ կհայտարարեն ամեն կարգի գործողություն և իրավունք, որ ունե անչություն ունին այդ իրավիճակին հետ» («Ժողովածու գործող դաշինքներու...», 1935, Մոսկվա, էջ 167-168):

Այս առթիվ Բ. Բոքյան խորհրդավորապես կնկատե.

«Ճանաչումը Խորհրդային հանրապետությանց կողմե, թե՛ «անձնատվության իրավիճակը անհամատեղելի է ամեն երկրի ազգային ազատ ձգտումին հետ», իրականին մեջ նույն ճանաչումը

չպարտադրեց նաև Թուրքիո՝ Հայաստանի նկատմամբ: Ըստ էրևույթին, Թուրքիա, իր գերիշխան իրավունքները իրագործելով, մինչև իսկ չնկատեց, որ Հայաստանի քափիթյուլասիոնը (բառը Բոքյանինն է.- Ն.) լիակատար է» («Հայաստան», հ. Բ, էջ 303):

Եվ, իբրև ապացույց իր այս խոսքին, Բ. Բոքյան կհիշատակե Նախիջևանի վերաբերող Կարսի հողվածը, որ խորքին մեջ նույնն է, ինչ որ Մոսկվայինը, սակայն շատ ավելի ծանրակշիռ բնույթով:

Բուն բառը – capitulation – գործածելով՝ Բոքյան կհասկցնե մեզի, որ օտարը Թուրքիան, իբրև իրավատեր կմնար ու կմասնակցեր այն համատիրության (condominium) մեջ, որ Ագրայեճանի խողովակով կհաստատվեր Նախիջևանի վրա:

Այս բոլոր ենթադրությունները, վարկածներն ու տվյալները հիմ առնելով՝ այն համոզումին ենք, որ Կարսի մեջ Մոսկվայի դաշնագրի արգելքը ջնջելով (հովանավորության փոխանցումի հարցին մեջ), կողմերը՝ Ռուսիա և Թուրքիա, այս անգամ այլևս նկատի ունեին ոչ թե Հայաստանը, այլ միայն և բացառաբար Թուրքիան:

Դաշնագիրը նախկին արգելքը ջնջելով՝ ստով իսկ կարտոներ Ագրայեճանը, ռազմա-քաղաքական որոշ պայմաններու տակ, հովանավորության իր իրավունքը Նախիջևանի վրա Թուրքիո՝ զիջելու:

Թող տարօրինակ չգա ընթերցողին, որ Մոսկվայի դաշնագրին մեջ հովանավորության փոխանցումին արգելք դնելով կողմերը՝ Թուրքիա և Ռուսաստան նկատի ունեին Հայաստանը:

Մինչ Կարսի դաշնագրին մեջ այդ արգելքը ջնջելով կողմերը, ընդհակառակն, նկատի ունեին Թուրքիան:

Տարբեր ձևերով անոնք միշտ միևնույն նպատակը կհետապնդեին:

Թե՛ Մոսկվայի և թե՛ Կարսի մեջ պաշտպանվածը Թուրքիան էր, իսկ անպաշտպանը՝ Հայաստանը:

Իրավատերը՝ առաջինն էր, մինչ իրավագրկվածը՝ երկրորդը:

Ջույգ դաշինքներու մեջ միայն պաշտպանության ձևերը կփոխվին, բայց երբեք պաշտպանության ենթական (subjet):

Մի թե՛ նվազ ուշագրավ ու նշանացուցական է նաև այն պարագան, որ ոչ դաշինքներու մեջ խոսք կա այս էական, չափազանց կարևոր փոփոխության մասին, և ոչ ալ այս մասին երբևէ խոսք եղավ Խորհրդային մամուլին մեջ:

Խորհրդային գրիչները լռությամբ անցան այս անլուր դավին վրայեն...

Միայն մեծ ոճիրներն են, որ լռություն կորոնեն...

Եթե Նախիջևանի հարցին մեջ Մոսկվայի դաշինքով ողջակիզված Հայաստանը Կարսի դաշինքով փրկված ըլլար ձայն մը Երևանեն կամ Մոսկվայեն անպայման կհասներ մեզի...

Տեղ մը իր երկհատոր «Հայաստան»-ի մեջ Բ. Բորյան մեր մասին կնկատե.

«Դաշնակցականները, այդ աշխարհակալական տականքները, Խորհրդային Միությունը կամբաստանեն այն բանով, որ Միությունը... իբրև թե 1926-ին զինակցություն կնքած է Թուրքիո հետ, որով Խ. Միությունը, պատերազմի մը պարագային, պիտի քաշվի Երևանեն և Ալեքսանդրապոլեն» (անդ, էջ 392):

Ինչո՞ւ Բորյան հիշատակած է Դաշնակցության այս ամբաստանությունը...

Հերքելո՞ւ համար արոյոք, թե՞ Դաշնակցության հասցեին շռայլված լուտանքի քողին տակ, իբրև ինքնապաշտպանության վահան մը, զայն հաստատելու...

Իրողությունն այն է սակայն, որ Խորհրդային դավին գաղտնի ծալքերուն լավատեղյակ Բորյան, գիտնալով մեկտեղ, որ Մոսկվայի և Կարսի դաշինքները նույնն են թե՛ իրենց ձևին և թե՛ իրենց խորքին մեջ, այնուամենայնիվ միայն Կարսի մասին է - Նախիջևանի հարցի կապակցությամբ - որ կգրե.

«Կարսի դաշնագրի այն հոդվածը (փոփոխվածը և ոչ Մոսկվայինը.- Ն.), որով Նախիջևանի շրջանը կկազմե ինքնավար երկրամաս մը Ազրպեյճանի հովանավորության տակ, կլրացնե Հայաստանի անձնատվությունը Թուրքիո առջև»:

Բ. Բորյան չի խոսիր այս անձնատվության լրացումին և ամբողջացումին մասին Մոսկվայի դաշնագրին կապակցությամբ (ուր Ազրպեյճանի կարգիլվի հովանավորության իր իրավունքին փոխանցումը երրորդի մը), մինչ կխոսի Կարսի դաշնագրին կապակցությամբ (ուր Ազրպեյճանի չարգիլվիր հովանավորության իր իրավունքին փոխանցումը երրորդի մը):

Որո՞ւ:

Անտարակույս Թուրքիո, նորե՛ն ու դարձյա՛լ կկրկնենք:

Եթե երբեք Հայաստանի ըլլար, Բ. Բորյան բնավ պիտի չահակոչեր և երբեք պիտի չխոսեր հայ ժողովուրդի լրիվ և ամբողջական անձնատվությանը մասին Թուրքիո առջև:

Միամիտ ընթերցողը, որ չի գիտեր ու չի ճանչնար բոլշևիզմը, ծանոթ չէ անոր ներքին էության և անոր վարած բարդ ու դավալից քաղաքականության, տարակույսե մթագնած ապշանքով մը պիտի հարցնե.

- Սակայն ի՞նչպես կրնա Ազրպեյճանը, փաստորեն ռուսական իրավագուրկ նահանգ մը, իր հայեցողությամբ ռուսական ամբողջ երկրամաս մը - Նախիջևանի շրջանը - օտար պետության մը Թուրքիո զիջիլ:

Այս տարակույսը և՛ տեղին է, և՛ տեղին չէ:

Հարցումը և՛ ճիշտ է, և՛ ճիշտ չէ:

Ազրպեյճանը, իհարկե, չի կրնար ոչ թե ափ մը հող, այլ այդ հողեն ոչ իսկ ծառ մը զիջիլ օտարի մը, եթե երբեք Ռուսիա ներքնաբար այս զիջումին համամիտ չէ:

Սակայն Ազրպեյճանը, իբրև «անկախ» և «գերիշխան» երկիր մը, կրնա, համաձայն Խորհրդային Սահմանադրության, իր ուզած հողերը զիջիլ իր ուզած պետության:

Ան կրնա մինչև իսկ ամբողջությամբ անջատվիլ Խ. Միութենեն և ամբողջությամբ այդ օտար պետության միանալ:

Բայց կրնա ընել այս քայլը այն պարագային միայն, երբ Ռուսիա գաղտնորեն ու ներքնաբար համամիտ է իրեն:

Դաշնագիրներու մեջ հովանավորության իրավունքի փոխանցումի մասին բնավ խոսք պիտի չըլլար, եթե երբեք խնդիրը Խ. Միության ներքին կյանքին, զայն կազմող հանրապետություններեն մեկուն շուրջ դառնար, օրինակ Հայաստանի:

Եթե երբեք Հայաստան ըսելով կամ չըսելով օտար մը չհասկցվեր:

Այս կարգի խնդիրներեն և ո՛չ մեկուն մասին ոնե խոսք չկա ոնե դաշնագրի մեջ:

Ինչպես որ ո՛չ Մոսկվայի և ո՛չ ալ Կարսի դաշնագիրներու մեջ ոնե խոսք չկա Լեռնային Ղարաբաղի մասին, որ հակառակ Խ. Բշխանությանց և Խ. Ազրպեյճանի կողմե՛ բազմիցս եղած հայտարարությանց և խոստումներուն, կկցվեր ոչ թե Հայաստանի, այլ Ազրպեյճանի, իբրև Հայկական Ինքնավար Մարզ մը:

Նախիջևանի հովանավորության փոխանցումի և ոչ-փոխանցումի հարցը բացառաբար արտաքին հանգամանք ունենալով և արտաքին ուժի կապված ըլլալով այս մասին, ճիշտ այդ պատճառով, կհիշատակվեր Մոսկվայի և Կարսի դաշինքներուն մեջ, առաջինին մեջ հայտնապես, իսկ երկրորդին մեջ լռությամբ:

Խորհրդային Սահմանադրությամբ այս կարգի հարցերը ի նշ ձևով կլուծվին, երբ անոնք ներքին բնույթ կկրեն:

Խոսելով այս մասին Մթալին Սահմանադրության հեղինակը որու անունը, ի դեպ, տրված է նաև այդ Սահմանադրության – Մթալինյան – Խորհուրդներու համամիութենական 8-րդ (արտակարգ) համագումարին տված իր 1936 նոյ. 25-ի զեկուցման մեջ, կհայտարարեր.

«Կառաջարկվի Սահմանադրության 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ հոդվածներեն ջնջել Միութենական հանրապետությանց վարչա-երկրային բաժանման մանրամասն հիշատակությունը՝ բնագավառներու և շրջաններու վրա: Ես այդ առաջարկը կգտնեմ անընդունելի: Խ. Միության մեջ մարդիկ կան, որոնք պատրաստ են մեծ հաճույքով և առանց հոգնության վերաձևելու մեր երկրի բնագավառներն ու շրջանները, ատով իսկ շփոթ և անվստահություն մտցնելով աշխատանքի մեջ: Սահմանադրության նախագիծը սանձ մըն է այդ կարգի մարդոց համար: Եվ շատ լավ է, որ այդպես է, որովհետև ինչպես այս, նույնպես նաև ուրիշ շատ մը բաներու մեջ անհրաժեշտ է, որ ստեղծվի վստահության, կայունության և հստակության մթնոլորտ մը» (Ի. Մթալին, «Լենինիզմի հարցերը», 11-րդ հրատ., Մոսկվա, 1945, էջ 529):

Նախագիծը, ինչպես հայտնի է, 1936 դեկտ. 5-ին համագումարին կողմե ընդունվեցավ և դարձավ գործող Սահմանադրություն, պահելով իր մեջ քիչ վերը հիշատակված հոդվածները, ուր նախաձշտված են Միութենական հանրապետությանց վարչական վերաձևման պայմանները:

Ըսել կուզենք, որ Մոսկվայի և Կարսի դաշնագիրներուն մեջ տեղ գտած հոդվածը կվերաբերի Թուրքիո, բայց երբեք Հայաստանի:

Ընդառաջելով Թուրքիո՝ Ռուսիա Կարսի մեջ կհոժարեր, ռազմա-քաղաքական որոշ պայմաններու տակ, Թուրքիան իբրև բարեկամ ու զինակից երկիր՝ Անդրկովկաս մտցնել...

Եթե այդ պահը զար՝ Ռուսիա այս ռճիրը պիտի գործեր օրինավորապես ու սահմանադրորեն...

Ան այդ գործը պիտի կատարեր Ագրպեյճանի միջոցով...

Այս վերջինը իբրև անկախ և գերիշխան երկիր՝ Նախիջևանի այս կարևորագույն ռազմա-քաղաքական խարխախի վրա ունեցած հովանավորության իր իրավունքը պիտի զիջեր Թուրքիո...

Ահա այս անձնատվության մասին է Թուրքիո առջև – լրիվ և ամբողջական – որ իր երկհատոր գործին մեջ կահակոչե Բ. Բոքյան:

Առկայծ կրակի անխարդախ վկան – ծուխն է:

Այս «ծուխը» բարձրացավ նաև Կարսի դաշնագրի ստորագրման օրերուն:

Լուր հասավ արտասահման, որ հայ պատվիրակներեն Ասքանազ Մոավյան՝ մեր երկրի արտ. գործոց գործավարը Կարսի մեջ ըմբոստացած և չէ հոժարած դաշինքը ստորագրել. զայն այս ստորագրությունը՝ իրմե իբրև թե առած են բարոյական ծանր պարտադրանքի տակ. Մոսկվայեն Մոավյանը հեռագրաթելի մոտ կանչելով իբրև թե անձնապես Լենին, որու հանդեպ պաշտամունքի զգացում ուներ մեր գործավարը, հրահանգած է անոր ստորագրել դաշնագիրը...

Նաև լուր հասավ, որ Կարսեն Երևան դառնալով՝ Ա. Մոավյան՝ դաշնագրի ծանր ու խեղդող տպավորությանը տակ անձնասպանությամբ վերջ տված է իր կյանքին...

Տարօրինակ ոչինչ կա այս լուրերուն մեջ:

Ապացոյց – նաև մոլեռանդորեն հակադաշնակցական Բ. Բոքյանի երկհատոր «Հայաստան»-ը, որուն զոհ բերավ անոր հեղինակը իր զուխը...

Ապացոյց – եղերական մահը Կարսի նաև մյուս պատվիրակին՝ Պողոս Մակինցյանի՝ մեկը ետքեն սրածված համայնավար վարիչներեն...

Անուրանալի է, որ բուն իսկ Խ. Հայաստանի մեջ Քրեմլի հակահայ դավերուն և ռճիրներուն դեմ խուլ ու համառ ընդդիմություն կար անգամ խորհրդահայ վարիչներու կողմե...

Բոքյանը բացառություն չէր. ան արտահայտիչն էր Բոքյաններու, որոնք թե՛ որակ և քանակ կներկայացնեին մեր երկրին մեջ:

Մոսկվայի ո՛չ մեկ ռճրային արարքին դեմ, ոչ իսկ եղերաբախտ Խորեն Ա-ի խեղդամահության, բնավ բողոքի ձայն չէլավ միայն Գաղթաշխարհի մեջ, հայանուն «ուղեկից»-ներու կողմե...

Ասոնք Խորհրդային իշխանությանց ամեն գործին մեջ մեր հայրենիքի «շահ»-երու պաշտպանությունը տեսնելով՝ մեղսակից դարձան նույն իշխանությանց գործած բոլոր ոճիրներուն, ինչպես որ մեղսակից կնկատվի սպանությանը մանուկի մը այն մարդը, որ անտարբերորեն այդ սպանությունը կդիտե...

Բայց դառնանք մեր հարցին:

Մենք ցարդ խոսեցանք գրեթե բացառաբար այն գործնական քաղաքականության մասին, որ Մոսկվա տարավ Նախիջևանի հարցին մեջ:

Հետաքրքրական է գիտնալ, սակայն, թե վարդապետորեն ու սկզբունքով, զուտ համայնավար տեսաբանությամբ, ներելի՞ է արդյոք այն ոճիրը, որ մասնավորաբար Նախիջևանի հարցին մեջ գործվեցավ Հայաստանի նկատմամբ:

Կուսակցության 12-րդ համագումարին մեջ, 1923 ապրիլ 23-ին, խոսելով այն դերի մասին, որ ազգային ազդակը ունի Պետության և Կուսակցության քաղաքականության մեջ, Սթալին կհայտարարեր.

«Հարկավոր է հիշել, որ բացի ժողովուրդների ինքնորոշման իրավունքից կա նաև բանվոր դասակարգը՝ իր իշխանությունն ամրապնդելու իրավունքը, և այս վերջին իրավունքին է ենթարկված ինքնորոշման իրավունքը: Դեպքեր են լինում, երբ ինքնորոշման իրավունքը հակասության մեջ է մտնում մի ուրիշ, ավելի բրձր իրավունքի հետ – իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգի կողմից իր իշխանությունն ամրապնդելու իրավունքի հետ: Այսպիսի դեպքերում, – այս ուղղակի պետք է ասել, – ինքնորոշման իրավունքը չի կարող և չպետք է խոչընդոտ հանդիսանա բանվոր դասակարգի կողմից իր դիկտատուրայի իրավունքն իրականացնելու գործին» (Բ. Սթալին, «Երկեր», հ. 5-րդ, Երևան, 1948, էջ 294):

Հիմնական սկզբունք մը ձևավորված ու արտահայտված է ավելի քան հստակ ու մեկին բառերով:

Կա «բանվոր դասակարգ»-ը՝ իր իշխանությունը ամրապնդելու իրավունքով, և կան ազգերը՝ իրենց ինքնորոշման իրավունքով:

Այս երկու «իրավունք»-ները հավասար չեն իրարու. անոնցմե առաջինը «ավելի բարձր իրավունք» մըն է, քան երկրորդը:

Ու քանի որ «բարձր» է, ուստի և «ստորին»-ը – ազգերու ինքնորոշման իրավունքը – պետք է զոհ բերվի «բարձր»-ին՝

«բանվորության» իշխանապետելու, իր «դիկտատուրայի իրավունքն»-ն ամրապնդելու գործին...

Այս հրեշային բարոյականն է ահա, որ գործադրվեցավ նաև մեր նկատմամբ, մասնավորաբար Նախիջևանի հարցին մեջ: Ռուսաստանը հայտնապես զոհեց մեր ժողովրդի գոյության «ստորին իրավունքը»՝ «համաշխարհային հեղափոխության» ավելի «բարձր» իրավունքին...

Արևելքի հետադիմականության որջը՝ Թուրքիան սիրաշահելու համար՝ ան ծվեն-ծվեն ըրավ մեր հայրենիքը և արյուննվա Հայ Դատը փոեց թուրքին ոտքերուն առջև...

Հայկական շահերու լույսին տակ Կարսի դաշնագրի – որ ըսել է՝ նաև Նախիջևանի հարցի – բնույթը սահմանելով՝ բոլշևիկ պատմաբանը՝ Բ. Բորյան, կնկատե.

«Կարսի դաշնագրով Հայաստանը ծախու դրվեցավ Խորհուրդներու արևելյան քաղաքականության ճանապարհին ի շահ համաշխարհային հեղափոխության» («Հայաստան», հ. Բ, էջ 164):

Այս նույն դաշնագրով Հայաստանը ծախու դրվեցավ նաև Նախիջևանի հարցին մեջ:

Այս «Ինքնավարի» 25-ամյակն է ահա, որ մայիս 28-ին, ճիշտ Հայաստանի անկախության հռչակման օրը, բացառիկ շուքով ու հանդիսությամբ տոնակատարվեցավ Խ. Միության մեջ:

Տոնակատարվեցավ... նաև Հայաստանի մեջ՝ իբրև բարեկամական ցույց մը Երևանի կողմե եղբայրակա և Ազրայեյճանի հանդեպ...

Իր մարմնի բաց պալարեն հոսող արյունը լիզելով՝ Հայաստան, մայիս 28-ին, անկեղծաբար ու ազատորեն, երախտագիտական փառաբանանքներ կձռներ «Մեծ Հոր» անունին, որ ճիշտ «հայրաբար», հոգած ու սրտով ու գուրգուրանքով, Հայաստանեն պոկած է Նախիջևանի շրջանը և զայն դրած Նախիջևանեն հեռու և անկե բաժան թաթար Ազրայեյճանի հովանավորության տակ...

Մեր խոսքը միայն պատմական հանգամանք չունի և միայն անցյալին չի վերաբերիր:

Կենդանի, այսօր իսկ գործող ու մեր կյանքը գունավորող քաղաքականության մը մասին է մեր խոսքը, Պետության մը կողմե, որմե մեզմե շատեր կակնկալեն եղեր Հայ Դատին լուծումը...

Նախիջևանը բացառիկ երևույթ մը չէ Խորհրդային քաղաքականության մեջ:

Այն ոգին, որ ասկէ 25 տարի առաջ կյանքի կոչեց 1921 մարտ 16-ի և 1921 հոկտեմբեր 13-ի դաշինքները, այդ ոգին նույնն է նաև այսօր, ան երբեք փոխված չէ:

1921-էն ասդին նույնը մնացած են թե՛ Քրեմլի անթագահակալը, և թե՛ իր քաղաքականությունը:

Որովհետև – և այս է ամենէն հիմնականը – փոխված չէ բոլշևիզմի պետական և կուսակցական morale-ը՝ այն բարոյականը, որ ոգի և ուղղություն կուտա Խորհրդային քաղաքականության, պետական թե՛ կուսակցական:

«Մեր հասարակության մեջ ընդունված բարոյականը, – կնկատե համայնավար գրիչ մը՝ Մ. Կարևա, – ամենէն բարձրն է աշխարհի մեջ: Պուրժուազին Խորհրդային իշխանության դեմ մղած իր պայքարին մեջ գրպարտության կղիմե հայտարարելով որ համայնավար բարոյական չկա, որ Խորհրդային պետության մեջ բարոյականը ընդհանրապէս կբացակայի»:

Այս «գրպարտություն»-ը հերքելով՝ Մ. Կարևա կգրէ.

«Լենինը ուսուցած է, որ համայնավարներու համար բարոյականը (morale) «այն է, ինչ որ կծառայէ հին կեղեքող հասարակության քայքայումին և բոլոր աշխատավորներու համախմբումին բանվորության շուրջ, այն դասակարգի, որ համայնավարներու նոր հասարակությունը կստեղծէ» (Մ. Կարևա, «Խ. Միության Սահմանադրությունը», 1948, Մոսկվա, էջ 239):

Այս ահավոր անբարոյությունն է ահա, որ կիշխէ այսօր Համայնավար Աշխարհին մեջ և կձևավորէ այդ Աշխարհի վարիչ ուժերու, թե՛ Խորհրդային պետության և թե՛ Համայնավար կուսակցության, ներքին և արտաքին քաղաքականությունը:

Բացարձակ առումով սուտ չկա. եթէ ստելով դուն կփորեա «հին կեղեքող հասարակության» գերեզմանը և ատով իսկ կոյուրացնես «բանվորության» գործը՝ «համայնավարներու նոր հասարակություն»-ը ստեղծելու, դուն խոսած կըլլաս մեծագույն ճշմարտությունը:

Իսկ եթէ ճշմարտությունը խոսելով, դուն, անկախ քու կամքէդ, ամրացուցած կըլլաս հիմերը «հին կեղեքող հասարակության» և ատով իսկ դժվարացուցած «բանվորության»

գործը՝ «համայնավարներու նոր հասարակություն»-ը ստեղծելու, դուն խոսած կըլլաս ամենէն անբավելի սուտը:

Նույնը նաև բարոյական աշխարհին վերաբերող մարդկային մյուս առաքինությանց նկատմամբ՝ ազնվության, հավատարմության, ասպետության, անկեղծության, խղճմտության, մարդասիրության և այլն, և այլն:

«Քաղքենի» հասկացողություններ են ասոնք ամենքը, և վճռաբար ու վախճանապես մերժելի՝ համայնավարին համար, եթէ երբեք այդ առաքինությունները չեն ծառայեր Խորհրդային իշխանության ամրապնդումի և ծավալումի գործին:

Նույնը նաև ժողովուրդներու ինքնորոշման, անոնց գոյությանը և հարատևումին կապված ամենէն հիմնական հարցին մեջ:

Եթէ այս «ինքնորոշում»-ը չի գուգադիպիր «համաշխարհային հեղափոխության» շահերուն այդ պարագային այդ ժողովուրդը իր գոյության իրավունքով միասին պետք է գոհաբերվի համայնավար շարժման ընդհանուր շահերուն...

Այս էր ահա համայնավար բարոյականը 1921-ի պատմական օրերուն, երբ կկնքվէին Մոսկվայի և Կարսի դաշինքները:

Այդ օրերուն Կարմիր Քրեմլը միայն մեկ մտածում ուներ՝ իրեն կապել Թուրքիան, անոր գլխավորությամբ մահմեդական աշխարհը Արևմուտքի դեմ հանելու համար:

Համամիութենական Կոմկուսի 10-րդ համագումարին մեջ, 1921 մարտ 10-ին – այսինքն ճիշտ այն օրերուն, երբ Մոսկվայի մեջ Հայ Դատի գերեզմանումով թուրքնոս դաշինքը կստորագրվեր – Սթալին, խոսելով «Պարտիայի հերթական խնդիրների մասին ազգային հարցում», կհայտարարէր.

«...Ազգային հարցն ընդլայնվեց, զարգանալով դարձավ համագաղութային հարց, որը ընդգրկեց ամբողջ երկրագունդը սկզբում ազատագրական շարժման կայծերով, իսկ հետո նաև բոցով, դա իմպերիալիստական խմբերի կողմից Թուրքիան բաժանելու և նրա պետական գոյությունը դադարեցնելու փորձն է: Թուրքիան, որը մուսուլմանական ժողովուրդների մեջ պետական տեսակետից առավել զարգացած երկիրն է, չէր կարող հաշտվել այդպիսի հեռանկարի հետ, նա պայքարի դրոշը պարզեց և իր շուրջը

համախմբեց Արևելքի ժողովուրդներին ընդդեմ իմպերիալիզմի» (Ի Սթալին, «Երկեր», 1948, Երևան, էջ 41):

Խ. Ռուսիան այն երկիրը եղավ, որ Թուրքիոյ այս պայքարին մեջ կռվան հանդիսացավ անոր և թույլ չտվավ, որպէսզի «իմպերիալիստական խումբ»-երը զայն բաժնեն և վերջ տան անոր պետական գոյության:

«Թրքասեր» դարձավ ոչ միայն իր արտաքին քաղաքականության մեջ, այլ դարձավ «թրքասեր» անգամ իր ներքին քաղաքականության մեջ:

Համամիութենական Կոմկուսի 12-րդ համագումարին մեջ, 1923 ապր. 25-ին, խոսելով ազգային հարցի մասին, նույն Սթալին կհայտարարէր.

«Եթե մենք Ուրբախնայում մի փոքրիկ սխալ կատարենք, այդ այնքան զգալի չի լինի Արևելքի համար: Բայց բավական է մի փոքրիկ սխալ կատարել մի փոքրիկ երկրում, Աջարստանում (120 հազար բնակիչներով), որ այդ անդրադատնա Թուրքիայի վրա և անդրադատնա ամբողջ Արևելքի վրա, որովհետև Թուրքիան ամենասերտ կերպով կապված է Արևելքի հետ» (Ի. Սթալին, «Երկեր», հ. 5-րդ, Երևան, 1948, էջ 307):

Աջարիան մահմեդական երկիր մըն է (Վրաստանի կազմին մեջ փոքրիկ Ինքնավար Հանրապետություն մը), մինչ Ուրբախնան՝ քրիստոնյա հանրապետություն մըն է, բուն Ռուսիայեն ետք մեծագույնը Խ. Միությունը կազմող հանրապետություններուն մեջ, ավելի քան 32 միլիոն բնակիչներով:

Սթալին համագումարի ամբիոնեն հեղնակավորապես կուզար վկայելու, որ ներելի է սխալ մը գործել քրիստոնյա Ուրբախնայի նկատմամբ (որովհետև այդ սխալեն չազդվիր Թուրքիան), մինչ ներելի չէ նման սխալ մը գործել մահմեդական Աջարիոյ նկատմամբ (որովհետև ատկէ կազդվի մահմեդական Թուրքիան, որ ամենասերտ կապերով կապված է մահմեդական Արևելքի հետ):

Քրեմլը իր քաղաքականության մեջ ասա այսքան հաշվի կառնէր Թուրքիան՝ իբրև բարեկամ ու զինակից երկիր...

Խոսելով այս քաղաքականության մասին մասնավորաբար Հայաստանի ու Հայ Դատի առնչությամբ Բորյան կնկատէ.

«Ռուսիոյ արևելյան քաղաքականությունը իր ամբողջությանը մեջ կպահանջէր, որպէսզի բավարարվին թրքական

«երիտասարդ» դրամատիքային ախարհակալական-բռնատիրական բնագոյները ի հաշիվ հայ ժողովուրդի, ի խնդիր գաղութային պետությանց աշխարհակալության կործանումին Արևելքի մեջ, և, հետևաբար, հանուն բանվորության ազատագրումին Արևմուտքի մեջ» («Հայաստան», հ. Բ, Մոսկվա, 1929, էջ 299):

Նույնը կվկայէր նաև կառավարական պաշտոնաթերթը՝ «Իզվեստիա» իր 1928 հոկտ. 28-ի թիվով.

«Մենք հրաժարեցանք քափիթոյլասիոններէ և բավականաչափ հողեր զիջեցինք Թուրքիոյ Անդրկովկասի մեջ»:

Այս «բավականաչափ հողեր»-ը Անդրկովկասի մեջ զիջվեցան Թուրքիոյ ոչ թէ ի հաշիվ Վրաստանի և Ազրայճանի, այլ միայն և բացառաբար ի հաշիվ Հայաստանի...

Հուշ անցյալեն՝ գալիքը լուսավորելու համար...

1921-ի ամռան Խորհրդային դեսպանը Վարշավայի մեջ հայազգի Քարախանն էր, մեկը Քրեմլի ակնառու դիվանագետներէն (զնդակահարվեցավ Մոսկվայի մեջ, 1937 դեկտ. 16-ին, իբրև թրքական «լրտես»...):

Այդ օրերուն Հայկական հարցով իր աջակցությանը դիմած էին երկու հայ գործիչներ, որոնցմէ մեկը՝ մեր տարաբախտ ընկերը՝ Արշակ Ջամալյան:

Դեսպանատան մեջ հայ բանագնացները ընդունելով Քարախան, ի ներկայության Ստեփան Շահումյանի մեծ որդիին՝ Սուրենի, կհայտարարէր անոնց.

– Դուք պատասխանատու քաղաքական գործիչներ եք, անկեղծորէն կարելի է խոսիլ ձեզի: Դուք կըսէք, որ մենք կօգնենք Թուրքիոյ զենքով, ոսկիով և մարզիչներով: Կարևորագույնը կմոռնար: Մենք անոր կօգնենք նաև խոսքով: Մեր կարմիր քարոզչությամբ վկայյալ հակահեղափոխականը՝ Մուսթաֆա Քեմալ մենք աշխարհի կկերցնենք իբրև հեղափոխականի: Դուք միամիտ չէք խորհելու համար, որ Խ. Ռուսիան և կամ Լենին թշնամական ունէ զգացում ունին հայ ժողովուրդի հանդէպ և կուզեն զուր տեղը անոր արյունը թափել: Մակայն բնավ պետք չէ միամիտ ըլլաք խորհելու համար – հոս միթիսն չէ, այլ լուրջ խոսակցություն ձեզի հետ, ուստի ես զիս պարտավոր կզգամ այս բանը ըսելու ձեզի – որ եթէ վաղը մեր ընդհանուր շարժման շահը պահանջէ մեզմէ զոհել Անդրկովկասի բովանդակ հայությունը մինչև վերջին հայը, մենք կըրնանք ոչ իսկ մեկ վայրկյան տատանում ունենալ այդ զոհողության առջև:

Այս Ռուսիան է, որ երեկ մեզ ողջակիզեց իր «արևելյան քաղաքականության» զոհասեղանին նաև Նախիջևանի հարցին մեջ:

Այս Ռուսիան է, որ նույնը մնացած է նաև այսօր:

Անոր համար ազգեր և հայրենիքներ չկան, չկա հայ ժողովուրդ՝ իր գոյության և ինքնորոշման «ստորին» իրավունքով, այլ կան միայն և բացառաբար համայնավար ընդհանուր շարժման վսեմ և բարձր շահեր...

Այդ շարժումը եթե վաղը իրմե պահանջե մեր զոհաբերումը՝ Քրեմլը ոչ իսկ վայրկյան մը կանգ պիտի առնե նաև այդ զոհողության անջև:

Հեքիաթ չէ ինչ որ կգրենք, այլ մերկ ու դաժան իրողություն:

Որ ունիցի ականջս լսելոյ լուիցե...

«Հայրենիք» (Բոստոն), 1949, սեպտեմբեր, էջ 13-44:

ԲԱՐՍԵՂՈՎ ՅՈՒՐԻ Գ.

ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴԴՈՎ ՎԻԼՍՈՆԻ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

1920 թվականի նոյեմբերի 22-ին կայացվեց ԱՄՆ-ի նախագահի արբիտրաժային որոշումը

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի արբիտրաժային որոշումը Հայաստանի և Թուրքիայի տարածքային սահմանազատման մասին

Հայաստանի միջազգային իրավասուբյեկտայնության վերականգնումը իբրև Թուրքիայի քաղաքական պատասխանատվության ձև

Պետությունների միջազգային ընկերակցության կողմից Օսմանյան կայսրության քաղաքական պատասխանատվության ճանաչումը արտահայտվում էր հիմնականում երկու փոխկապակցված ձևերով.

1) Թուրքիայից Հայաստանի՝ որպես ազգային պետության, անջատմամբ,

2) թուրքական և հայկական պետությունների տարածքային սահմանազատմամբ: Հիմնավորելով Հայոց ցեղասպանության համար քաղաքական պատժամիջոցների (սանկցիաների) անհրաժեշտությունը, Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսարի տեղակալ Վերը, 1919թ. ապրիլի 6-ին Փարիզի Խաղաղության կոնֆերանսին հղած հեռագրում, գրում էր. «Հայերի հանդեպ գազանությունների մեջ մեղավոր բոլոր անձանց պատժելու համար, անհրաժեշտություն կառաջանար մահապատժի ենթարկել բոլոր թուրքերին անխտիր, ուստի և ես առաջարկում եմ, որ պատիժն ավելի շուտ ընդունի ազգային հատկանիշով նախկին Թուրքական կայսրության մասնատման ձև և անհատական կարգով՝ բարձրագույն պաշտոնատար անձանց նկատմամբ, այն անձանց նկատմամբ դատաստանի ձև, ովքեր նշվում են իմ ցուցակում, որոնց ճակատագիրը օրինակ կձառայի մյուսների համար»¹⁹:

¹⁹ Dadrian V. N., The History of the Armdnian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence-Oxford: Berghahn

Այդպիսի դիրք գրավեցին բոլոր մեծ տերությունները, որոնք մասնակցում էին Փարիզի Խաղաղության համաժողովին, այդ թվում ԱՄՆ-ը, որ պատերազմ չէր վարել Թուրքիայի հետ: Օսմանյան կայսրության կառավարությանն ուղղված ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հուշագրում, որը 1919թ. օգոստոսի 22-ին հանձնվեց Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի գերագույն հանձնակատար Բրիստոլի կողմից, ընդգծվում էր Հայաստանի անջատման հարցի ուղղակի կապը ցեղասպանության քաղաքականության հետ²⁰:

Հայաստանի նկատմամբ թուրքական պետության ինքնիշխանության (սուվերենիտետի) դադարեցման քաղաքական և իրավական հիմունքների հարցն ուսումնասիրել էր նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից հատուկ նշանակված Քինգ-Քրեյնի կառավարական հանձնաժողովը: Ջեկույցում, որ նա ներկայացրեց 1919 թ. օգոստոսի 28-ին, ամերիկյան տեսակետը շարադրված էր սպառիչ լիակատարությամբ. «Հայաստանի անջատման համար հիմնավորումներ կարող են լինել հետևյալ փաստերը. ուրիշներին թուրքերի կառավարելու դրսևորված անկարողությունը "...". կրկնվող ջարդերը որպես կանխամտված պետական քաղաքականություն յուրացնելը. կոտորածի համար զոջման կամ այդ հանցագործությունը դատապարտելու մտադրության գրեթե լիակատար բացակայությունը – ավելի շուտ նրանք փորձում են արդարացնել դա. թուրքերի կողմից գործնականորեն ոչինչ չի արված հայերի հայրենադարձման և նրանց վնասի հատուցման համար – հանգամանք, որը, բնականաբար, թուրքական կառավարման փորձը կրկնելու միտք չի առաջացնում. ընդհակառակն, ակնհայտ է հայերի հանդեպ շարունակվող ծայրաստիճան թշնամության գոյությունը և կոտորածի մշտական սպառնալիքը. բավարար ասպացույցների առկայությունը, որ այս երկու ռասաները (ցեղերը) չեն կարող միասին խաղաղ և լավ ապրել, ուստի և երկուսի համար էլ ավելի լավ է ունենալ իրենց առանձին պետությունները. հայերին պաշտպանելու 1878թ. պայմանագրի հոդվածների լիակատար անհաջողությունը. ամենատարրական արդարությունը պահանջում է ծայրահեղ դեպքում Թուրքիայից

անջատել երկրները/տարածքները, որտեղ հայերը կկարողանային կենտրոնանալ, հարկադրված չլինելով ապրել թուրքական իշխանության ներքո. ոչինչ, դրանից բացի, չի կարող հայերին տալ անվտանգության դույզն-ինչ բավարար երաշխիք. ոչ մի այլ բան չի գոհացնի աշխարհի խիղճը այս հարցում... Ի շահ հայերի, ի շահ թուրքերի, նույնն է թե ի շահ խաղաղության ամբողջ աշխարհում, անհրաժեշտ է համառորեն պնդել առանձին հայկական պետության կազմավորման վրա»²¹:

Հայաստանի երկու՝ թուրքական և ռուսական մասերը միավորող հայկական պետությունը ճանաչելու Անտանտի դաշնակից տերությունների պարտավորությունը հաստատվում է և Անդրկովկասի վերաբերյալ հատուկ հուշագրում, որ պատրաստել էր Ֆորին օֆիսը բրիտանական կաբինետի հանձնարարությամբ 1919թ. դեկտեմբերի 24-ին. «Անհրաժեշտ է անմիջապես էլ խոստովանել, որ այդ առումով Հայաստանը գտնվում է այլ վիճակում, քան Վրաստանը և Ադրբեջանը: Քանի որ բոլոր Դաշնակից տերությունները պատերազմի ժամանակ շատ թե քիչ ուղղակի ձևով իրենց կապել են եվրոպական կամ ամերիկյան մանդատի ներքո անկախ Հայկական պետություն ստեղծելու պարտավորությամբ: Միակ հարցը, որ մնում է լուծել Հայաստանի դեպքում, դա թուրքական տարածքի չափն է, որ պետք է ավելացվի Երևանի հանրապետությանը, նոր պետություն ստեղծելու համար»²²:

Միջազգային իրավունքի հիման վրա թուրքական պետության քաղաքական պատասխանատվության հաստատման համար մեծ նշանակություն ուներ Գլխավոր Դաշնակից տերությունների կոլեկտիվ դիրքորոշումը իբրև էտպատերազմյան աշխարհակարգի կառուցման գործառույթն իրականացնող միջազգային մարմին: Փարիզի Խաղաղության համաժողովի որոշումներում անհատական շարժառիթները նշանակալի չափով նահանջում էին միջազգային իրավունքի և միջազգային քաղաքականության հրամայականների առջև:

Books, 1995, p. 306 / British Foreign Office Archives 371/4173/53351 (folio 192-193).

²⁰ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference, Vol. VII, p. 858.

²¹ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, Vol. XII, p. 811-914.

²² Հրապարակված է հուշագրի տեքստի միայն մի մասը. Documents on British Foreign Policy. 1919-1939. First Series. Vol. III. 1919 (London, 1949). Doc. No 613. Note 1, p. 700-702.

Արխիվային փաստաթղթերը թույլ են տալիս հետևել միջազգային իրավունքի հիման վրա հայերի ցեղասպանության համար թուրքական պետության քաղաքական պատասխանատվության հաստատման գործընթացին: Այդ հարցում Գլխավոր Դաշնակից տերությունների և մյուս բոլոր պետությունների դիրքորոշումները աչքի էին ընկնում բացառիկ միահամուռությամբ, որ աներևակայելի էր աշխարհում գոյություն ունեցող հակասությունների պայմաններում:

Թուրքական կառավարության գործողությունները որակելով իբրև «ամբողջ ժողովրդի սպանություն» և, հետևաբար, որպես հանցագործություն մարդկության դեմ, միջազգային ընկերակցությունը Փարիզի Խաղաղության համաժողովում հաստատեց ցեղասպան թուրքական պետության քաղաքական պատասխանատվությունը և նկատի առնելով նրա «ուրիշ ժողովուրդների կառավարելու անընդունակությունը» որոշեց դադարեցնել նրա ինքնիշխանության գործողությունը այն տարածքների նկատմամբ, որ բնակեցված են ոչ թուրքական ժողովուրդներով:

Մեծ Բրիտանիայի ԱԳՆ տեղեկատուում, հրատարակված 1919թ., մատնանշվում էր Հայաստանի անջատման անհրաժեշտությունը Թուրքիայից որպես վերջինիս կողմից ցեղասպանության քաղաքականության հետևանք. «Այն, որ հայերը պետք է ազատվեն թուրքական ուղիղ կառավարումից և հայտնվեն որևէ տերության կամ տերությունների խմբի պրոտեկտորատի տակ, դա, հավանաբար, անվիճելի սկզբունք է: Պարզ չէ, արդյոք երբևէ Ռուսաստանը կօժանդակի այս խնդրին»²³:

Բնութագրելով խաղաղության համաժողովի մասնակից պետությունների պաշտոնական դիրքորոշումը իր կատարած հանցագործության համար Թուրքիայի պատասխանատվության նկատմամբ և Հայկական հարցի ետպատերազմյան կարգավորման հարցում, բանակցությունների ակտիվ մասնակիցներից մեկը Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լոյդ-Ջորջը նշում է. «Հայաստանը մեզ համար բոլորովին այլ կարգի խնդիր էր: Մի սերունդ առաջ Հայաստանի բնակիչները և ցեղային, և կրոնական հատկանիշով

կտրուկ տարբերվում էին տիրապետող թուրքական ազգից: Հավատով նրանք քրիստոնյաներ էին: Տիրահիշատակ Աբդուլ Համիդը վարում էր իրենց բնակության հովիտներից այդ հինավուրց ժողովրդին արտաքսելու քաղաքականություն: Հայկական մեծամասնությանը խղճուկ ահաբեկված փոքրամասնության վերածելու այդ վայրենի մեթոդը իրականացվեց Հայաստանի արգավանդ շրջանների մեծ մասում: Դաշնակից տերությունները միահամուռ այն կարծիքն էին պաշտպանում, որ չի կարելի թույլ տալ թուրքերին օգտվելու իրենց զազանությունների պտուղներից, իսկ հայ ժողովրդին պետք է լիովին վերադարձվի նախնիների ժառանգությունը և հնարավորություն ստվի վերականգնելու իր երբեմնի հզորությունը»²⁴:

1919թ. հունվարի 30-ին Փարիզի Խաղաղության համաժողովի Գերագույն խորհուրդը ճանաչեց Հայաստանի միջազգային իրավասուբյեկտայնության վերականգնման անհրաժեշտությունը: Նրանց ընդունած որոշման մեջ նշվում էր, որ ըստ շատ հիմնավորումների, և «հատկապես նվաճված ժողովուրդների նկատմամբ թուրքերի կողմից իշխանության պատմական չարաշահման և նախընթաց տարիներին հայերի սարսափելի կոտորածների հետևանքով, Դաշնակից և Միավորված տերությունները համաձայնեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը և Արաբիան պետք է լիովին անջատվեն Թուրքական կայսրությունից»²⁵:

Դաշնակից և Միավորված տասը տերությունների խորհուրդը մերժեց Օսմանյան կայսրության նոր սուլթանական կառավարության 1919թ. հունիսի 17-ի հայտարարության մեջ ներկայացված բոլոր փաստարկները, որ նպատակառոտորեն էին վերացնելու թուրքական պետության պատասխանատվությունը հայ ժողովրդի ոչնչացման համար և ամբողջը հանգեցնելու երիտթուրքական կառավարության անդամների քրեական պատասխանատվության և այդ կերպ իրեն պահելու Հայաստանի տարածքը: Խորհուրդը ձևակերպեց իր եզրակացությունը թուրքական պետության իշխանությունը միայն թուրքերի նկատմամբ

²⁴ Ллойд Джордж. Правда о мирных договорах. М., 1957, т. 2, с. 109-200, 417-418, 439.

²⁵ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, 1919, Vol. III, p. 785-796.

²³ Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948 / Burdett A. 1. P. 9 (ed) Archive editions, 1998, p. 548-552, 559.

սահմանափակելու անհրաժեշտության և, համապատասխանաբար, բազմազգ Թուրքական կայսրության տարբեր ժողովուրդների ճակատագիրը որոշելու մասին և հայտարարեց այդ պարտքը կատարելու իր մտադրության մասին այդ ժողովուրդների ցանկություններին և մշտական շահերին առավելագույն համապատասխանությամբ²⁶:

Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերտելոյի Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Քերզոնին 1920թ. հունվարի 11-ին հասցեագրած նոտայում շարադրվում էր Հայաստանի իրավասուբյեկտայնության և նրա տարածքային կազմի մասին նախատեսվող որոշումը:

«Հայաստանը կստեղծվի որպես լիովին անկախ հանրապետություն Ազգերի լիգայի բարձր պաշտպանության տակ:

Նշանակալի չափով նա կստեղծվի ռուսական Հայաստանի Հանրապետության (որտեղ ապրում է մոտ 1.500.000 հայ) և նախկին թուրքական Հայաստանի միավորման հիման վրա, որտեղ անհրաժեշտ կլինի վերադարձնել որքան կարելի է մեծ թվով մարդկանց այն 500.000 հայերից, որոնք այժմ ապրում են Փոքր Ասիայում, Կոստանդնուպոլսում, ԱՄՆ-ում, Պարսկաստանում, Բուլղարիայում և այլն: Այդ ճանապարհով կվերականգնվի խելամիտ սահմաններում այն, ինչ նախկինում Մեծ Հայքի թագավորությունն էր: Կարելի է նկատել, որ Ռուսաստանի սահմաններին հարակից բոլոր պետություններից, որոնք փորձում են հասնել անկախության, անկախ Հայաստանը այն պետությունն է, որ ռուսները մեծապես պատրաստ են ճանաչել:

Հայաստանի Հանրապետության տարածքը կներառի.

1) Երևանյան Հայկական հանրապետության առկա տարածքը, ներառյալ Բորչալուի, Վերին Փամբակի և Զանգեզուրի շրջանները, որոնց նկատմամբ ներկայումս հավակնություններ են ներկայացնում Վրաստանը և Ադրբեջանը:

2) Թուրքական կայսրության մի մասը՝ Էրզրումի վիլայեթի արևելյան մասը, ներառյալ Էրզրում քաղաքը և Էրզրումի շրջանը, Մշո դաշտը, Բիթլիսի շրջանը և Վանա լճի շրջանը մինչև պարսից սահման: Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի

²⁶ Documents on British Foreign Policy. 1919-1939. First Series. Vol. IV. 1919. London, 1952, p. 645-647.

հանրապետությունների հետ, Թուրքիայի, ֆրանսիական գոտու և Քուրդիստանի հետ կորոշվեն տեղում Միջդաշնակցային հանձնաժողովի կողմից²⁷:

Ոչ միայն ագրեսիայի համար, այլ նաև հայերի ցեղասպանության համար քաղաքական-իրավական սանկցիայի տարր բովանդակում էր և Գլխավոր Դաշնակից տերությունների որոշումը թուրքական պետության իշխանության տակից Հայաստանը հանելու մասին: Խոսքը թուրքական պետության քաղաքական և հասարակական-իրավական պատասխանատվության մասին էր իր կատարած ծանրագույն միջազգային հանցագործության հայերի ցեղասպանության համար:

Միջազգային իրավունքի տեսակետից տվյալ դեպքում խոսքը ոչ թե տիտղոսի փոխանցման (ցեսսիայի) մասին էր, այլ տիտղոսից զրկելու (օտարելու), միջազգային ընկերակցության անունից Դաշնակից տերությունների կողմից նրա ավերման մասին:

1920թ. հունվարի 19-ին վարչապետը և Դաշնակից տերությունների արտաքին գործոց նախարարները որոշում ընդունեցին «ճանաչել Հայկական պետության կառավարությունը որպես դե-ֆակտո կառավարություն պայմանով, որ ճանաչումը որևէ կերպ չի կանխորոշում այդ պետության ապագա սահմանների հարցը»²⁸: Հայկական հանրապետությունը ճանաչվում էր պատմական հայրենիքի՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանի վերամիավորման հիման վրա: Այս ճանաչման ակտի գործողությունը տարածվում էր ոչ միայն բոլոր հինգ մեծ տերությունների վրա, որ ներկայացված էին Գերագույն խորհրդում, այլև որոշակի չափով իր իսկ խաղաղության համաժողովի վրա:

Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Ուոլլեսը հեռագրով պետական քարտուղարին հաղորդեց Դաշնակից և Միավորված տերությունների Գերագույն խորհրդի այս որոշման մասին: Հեռագրում, որ ուղարկեց 1920թ. հունվարի 24-ին ԱՄՆ-ի պետական քարտուղարի պարտականությունները կատարող Պոլքը Ֆրանսիայում ամերիկյան դեսպան Ուոլլեսին, հաղորդվում էր, որ

²⁷ Documents on British Foreign Policy. 1919-1939. First Series. Vol. IV. 1919. p. 1024.

²⁸ Documents on British Foreign Policy. 1919-1939. First Series. Vol. II. 1919. p. 914-925.

«ԱՄՆ-ի կառավարությունը համաձայնում է Խորհրդի ընդունած որոշմանը ճանաչել հայկական պետության կառավարությունը որպես դե-ֆակտո կառավարություն պայմանով, որ այդ ճանաչումը որևէ կերպ չի կանխորոշում ապագա սահմանների հարցը» և որ պետական քարտուղարը դրա մասին տեղյակ կպահի Վաշինգտոնում հայկական ներկայացուցչին²⁹:

Ստացված հանձնարարականի համաձայն, Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Ուոլլեսը հունվարի 26-ին Դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարների և դեսպանների խորհրդակցության ժամանակ հանդես եկավ հայտարարությամբ Հայաստանի Հանրապետությունը դե-ֆակտո ճանաչելու կառավարության ղեկավարների խորհրդի որոշման հետ իր կառավարության համաձայնության մասին:

Հայաստանի միջազգային իրավասուբյեկտայնության ճանաչման և թուրքական պետության հետ տարածքային սահմանազատման պայմանների կապը վերստին հաստատվեց Փարիզի Խաղաղության համաժողովի կողմից թուրքական պատվիրակությանը խաղաղ կարգավորման պայմանները հանձնելիս:

Դաշնակից տերությունների համաժողովը, որ անցկացվում էր Սպայում 1920թ. հուլիսի 7-ից 11-ը, մերժեց թուրքական հակընդդեմ առաջարկները: Ֆրանսիայի վարչապետ Միլիերանի ստորագրած Դաշնակից տերությունների նոտայում, ուղղված Օսմանյան կայսրության կառավարությանը 1920թ. հուլիսի 17-ին, կրկին մատնանշվում էր, որ կատարված հանցագործության միակ հնարավոր իրավաբանական հետևանքը կարող է լինել Հայաստանի անջատումը Թուրքիայից. «Վերջին քսան տարիների ընթացքում հայերը ենթարկվել են կոտորածների անօրինակ բարբարոսության իրադրության մեջ, իսկ պատերազմի ժամանակ Թուրքական կառավարության կողմից իրականացված կոտորածների, տեղահանությունների և ռազմագերիների հետ վատ վերաբերմունքի մասշտաբները անչափելիորեն գերազանցեցին անգամ իր սեփական նախկին արարքները: Հաշվված է, որ 1914թ.-ից նա կոտորածի է ենթարկել, մտացածին ապստամբության կեղծ պատրվակով, 800.000

²⁹ Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, Vol. III, p. 775-776.

հայերի, ներառյալ կանանց և երեխաների, և արտաքսել կամ տեղահանել ավելի քան 200.000 հույների և 200.000 հայերի իրենց բնակության վայրերից: Թուրքական կառավարությունը ոչ միայն չի պաշտպանել այլ ցեղերի պատկանող իր հպատակներին կողոպուտներից, գազանություններից և սպանություններից, այլև կան բազում ապացույցներ, որ նա պատասխանատվություն է կրում այն բանի համար, որ ղեկավարել ու կազմակերպել է գազանությունները ժողովրդի դեմ, որին պարտավոր էր պաշտպանել»: Այդ պատճառով Դաշնակից տերությունները «չեն կարող ոչ մի փոփոխություն մտցնել դրույթների մեջ, որոնք նախատեսում են ազատ Հայաստանի ստեղծումը այն սահմաններում, որ Միացյալ Նահանգների նախագահը կսահմանի որպես արդարացի և հիմնավորված»³⁰:

Թուրքական կայսրության կառավարությանը հանձնելով խաղաղության պայմանագրի պայմանները, որ նախատեսում են հայկական պետության գոյությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, Դաշնակից տերությունները հաստատեցին, որ ճանաչում են Հայաստանը դե-յուրե: Թուրքական պետությունն ինքը, ընդունելով Դաշնակից տերություններից աշխարհի ետպատերազմյան կառուցվածքի պայմանները, դրանով իսկ ճանաչեց Հայաստանը որպես կողմ և, հետևաբար, որպես ինքնիշխան պետություն: Հայաստանը հրավիրվեց Փարիզի Խաղաղության համաժողովին որպես դաշնակից, դե-յուրե ճանաչված, պետություն և իբրև այդպիսին ստորագրեց Սևրի խաղաղության պայմանագիրը³¹:

Այն, որ Հայաստանի պաշտոնական ճանաչումը դե-յուրե տեղի է ունեցել մինչև և անկախ Սևրի պայմանագրի ստորագրումից և որ այն որևէ կերպ չէր կարող կախված լինել նրա վավերացումից կամ չվավերացումից, հաստատվում է այդ նույն պայմանագրի հոդ. 88-ի տեքստով. «Թուրքիան հայտարարում է, որ նա ճանաչում է Հայաստանը, ինչպես դա արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ Պետություն»:

³⁰ Documents on British Foreign Policy, 1919-1939. First series. Vol. VIII. 1920. p. 443-449, 543-546, 533-556.

³¹ St. u Fauchille. Traite de droit international public. Tome I-er, premiere partie. Paris, 1922, p. 329-330. No 213]: Toynbee A. J. Survey of International Affairs. 1920-1923. British Royal Institute of International Affairs. London, 1925, p. 367.

Բազմակողմ խաղաղության պայմանագրի Հայաստանի կողմից բուն ստորագրման ակտը սոսկ հաստատեց Հայաստանի դե-յուրե ճանաչումը մինչև և անկախ Սևրի պայմանագրից և, հետևաբար, նրա ճակատագրից անկախ:

Հայաստանի դե-յուրե ճանաչումը հաստատվում է և փոքրամասնությունների մասին միջազգային պայմանագրով, որ ստորագրվել է 1920թ. օգոստոսի 10-ին Հայաստանի կողմից որպես ինքնիշխան պետություն:

Ազգերի լիզայում Հայկական հարցի քննարկման նյութերը, ներառյալ և այդ միջազգային կազմակերպության մեջ Հայաստանի ընդունելության հարցը, ցույց են տալիս, որ Հայաստանի անջատումը ցեղասպան թուրքական պետության իշխանությունից, որպես իր քաղաքական պատասխանատվության ձև, ընդհանուր դիրքորոշումն էր ոչ միայն Դաշնակից և Միավորված տերությունների: Բացի Դաշնակից և Միավորված տերություններից Հայաստանը պաշտոնապես ճանաչեցին նաև Արգենտինան, Բրազիլիան և ԱՄՆ-ը:

Հայ-թուրքական սահմանագատման հարցը Փարիզի Խաղաղության համաժողովում

Ճանաչելով վերամիավորված հայկական պետության միջազգային իրավասուբյեկտայնությունը, Դաշնակից և Միավորված տերությունները պետք է պայմանավորվեին նոր պետության թուրքականից տարածքային սահմանագատման մասին՝ հաշվի առնելով հայերի ցեղասպանության հետևանքների հնարավոր առավել լիակատար վերացման անհրաժեշտությունը:

Ինչպես միջազգային իրավասուբյեկտայնության ճանաչման առումով, այնպես էլ Հայաստանի և Թուրքիայի սահմանագատման պաշտոնապես հռչակվող չափորոշիչների կամ սկզբունքների առումով տարակարծություններ չկային:

Բոլորը հրապարակավ ճանաչում էին, որ թուրքական պետության կողմից կատարված հանցագործությունը չի կարող զրկել ցեղասպանության զոհին իր տարածքից կամ կրճատել այն: Այսպես, պատասխանելով խորհրդարանական հարցապնդումներին, որոնցում նշվում էր, որ հայերի կոտորածները չի կարելի ընդունել «հիմք Հայաստանի տարածքի կրճատման համար» և որ «դա անելը

կնշանակեր պարզևստրել կոտորածի համար», լորդ Մեսսիլը Մեծ Բրիտանիայի կառավարության անունից ձևակերպեց Հայկական հարցի կարգավորման հետևյալ սկզբունքը. «Մենք չպետք է թույլ տանք թուրքերին իրենց չարագործություններով կրճատել հայերի տարածքը: Սա ընդհանուր սկզբունք է <...> չպետք է լինի Հայաստանի ոչ մի բաժանում, և նրան հարկ է վերաբերվել որպես մեկ-միասնական ամբողջության»³²:

Թուրքական կամայականությունից հայերի ազատագրման մասին բրիտանական Համայնքների պալատում անընդմեջ հայտարարում էին արտաքին գործերի նախարար Ա. Բալֆուրը և կառավարության այլ անդամներ: Հայաստանի տարածքի կրճատման անթույլատրելիությունը կոտորածի հետևանքով նշվել է և Փարիզի խաղաղության համաժողովում բրիտանական պատվիրակության անդամ Է. Կրոուի 1919թ. դեկտեմբերի 1-ի նամակում՝ ուղղված Ջ. Քիդսթոնին (ԱԳՆ). «Քննության առնել և լուծել Հայկական հարցը սոսկ միայն [հայերի] ներկայիս թվաքանակի հիման վրա, հավասարագոր կլինեք, անշուշտ, անցյալում թուրքերի կողմից իրենց ենթակայության տակ գտնվող ժողովուրդների խնդիրների լուծման կիրառված մեթոդի հավանությանն ու խրախուսմանը»³³:

Համանման դիրք գրավեցին և մյուս մեծ տերությունները, որ մասնակցում էին Փարիզի խաղաղության համաժողովին, այդ թվում ԱՄՆ-ը, որը չէր պատերազմել Թուրքիայի հետ:

Թեպետ բոլորը ընդունում էին, որ Թուրքիային ենթակա հայկական տարածքների անցումը հայկական պետության իշխանության տակ թելադրված էր ժողովրդի վերականգնման համար պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ, որը զոհ էր դարձել հանցագործության, հայ-թուրքական սահմանագատման այդ բարդ խնդրի գործնական լուծումը բխվեց խաղաղության համաժողովի մասնակիցների շատ սուր հակասությունների:

Պատերազմի ավարտով Հայաստանում, այն տարածություններում, որ կարող էին վճռական դեր խաղալ աշխարհի բաժանման համար պայքարում, բախվեցին մեծ տերությունների շահերը: Վճռորոշ էին հակասությունները ԱՄՆ-ի և Անգլիայի միջև,

³² Parliamentary debates. House of Lords. 1918. Nov. 13.

³³ Documents on British Foreign Policy. 1919-1939. First series. Vol. IV. 1919, p. 914.

որը միշտ համարել է, որ «Հնդկաստանի սահմանը անցնում է Եփրատով» (Քերզոն): Ֆրանսիան, որ պաշտպանել էր իր «շահերը» Կիլիկիայում և Միդիայում, նույնպես կարծում էր, որ «վտանգավոր է ԱՄՆ-ի մուտքը Փոքր Ասիա» (Կլեմանտ):

Անտանտի տերությունների գաղութային շահերին ավելացավ քաղաքականության նոր գործոն՝ թուրքական նացիոնալիզմի և պանթուրքիզմի օգտագործումը որպես ուժ, ընդունակ «կարմիրներին դուրս քշելու Բաքվից»: Թուրքերի տարածքային էքսպանսիան ուղղելով «բնական» ճանապարհով՝ դեպի Ադրբեջան և Միջին Ասիա, անգլիացիները ձգտում էին հասնել մեկ այլ նպատակի ևս՝ դրանով փոխհատուցում էին Օսմանյան կայսրության կողմից նավթով հարուստ արաբական տիրույթների կորուստը:

ԱՄՆ-ը, որտեղ հայերի ցեղասպանությունն առաջացրել էր հասարակության առանձնապես ուժեղ հակազդեցությունը, սկզբնապես հանդես էր գալիս Հայաստանի «պատմական սահմանների» վերականգնման օգտին: Հետագայում, Դաշնակից տերությունների ազդեցության տակ հրաժարվելով «պատմական սահմանների» հայեցակարգից, սկսեց հենվել էթնիկական հիմնավորման վրա, իր ջանքերը կենտրոնացնելով հայկական պետության Կիլիկիայում Միջերկրական ծով ելքի հասնելու վրա: Հայաստանի հետ Կիլիկիայի վերամիավորման հարցը բարձրացվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից Չորսի խորհրդի նիստում 1919թ. մարտի 20-ին: Դեմ արտահայտվելով Կիլիկիայի հանձնմանը ֆրանսիական մանդատի տակ, նախագահը ԱՄՆ-ի դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, որ «Կիլիկիան, օրինակ, իր աշխարհագրական դիրքով Հայաստանը կտրում է Միջերկրական ծովից»³⁴:

ԱՄՆ-ի նախագահը կրկին բարձրացրեց այդ հարցը 1919թ. մայիսի 14-ի նիստում, առաջարկելով Չորսի խորհրդին Հայաստանի քարտեզը, որ պատրաստել էին ամերիկացի փորձագետները: Նա հայտարարեց, որ նրանում նախատեսված են հարմար սահմաններ, որոնք Հայաստանին ապահովում են ելք դեպի Միջերկրական ծով:

³⁴ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, 1919. Vol. IX, p. 9.

Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը փոխանցեց իր հերթին անգլիացի փորձագետների պատրաստած քարտեզը: Որոշվեց, որ Հայաստանի սահմանները պետք է որոշվեն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պատվիրակությունների կողմից: Միաձայնության դեպքում որոշումը կընդունվեր առանց հարցի հետագա հանձնմամբ Խորհրդի քննարկմանը, սակայն նախասահմանվում էր, որ «Հայաստանի առաջարկվող սահմանները դուրս չեն գալիս դեպի Միջերկրական ծով»:

Հայ-թուրքական սահմանագատման գործընթացի վրա ազդեցություն գործեց և Հայաստանի ժամանակավոր կառավարման համար ԱՄՆ-ի մանդատի հաստատման հեռանկարը: Մանդատարիումի շահագրգռվածությունը, որ Հայաստանը ելք ստանա դեպի Միջերկրական ծով Կիլիկիայում, Մեծ Բրիտանիայի համար դարձավ լրացուցիչ նկատառում, որ նրան դրդեց սահմանափակել Հայաստանի տարածքը: Մրանում նա հանդիպեց Ֆրանսիայի աջակցությանը, որը, ինչպես արդեն նշվել է, ուղղակիորեն հավակնում էր հայկական Կիլիկիային:

Քաղաքական գործոնի ազդեցությունը արտահայտվեց այլընտրանքային մոտեցման առաջադրմամբ՝ հիմնավորված Քինգ-Քրեյնի զեկույցում³⁵:

Քինգ-Քրեյնի հանձնաժողովը պատրաստակամություն էր հայտնում հրաժարվել «չափերով մեծ թուրքական Հայաստանի» տարբերակից (Larger Turkish Armenia), որ ներառում էր Մեծ և Փոքր Հայքի և Կիլիկիայի բոլոր պատմական հողերը, և ընդունել «չափերով փոքր թուրքական Հայաստանի» (Smaller Turkish Armenia) տարբերակը՝ «առավելագույնս սահմանափակ տարածքով»՝ նախկին բուն Մեծ Հայաստանի մի մասով: Հանձնաժողովի անդամների կարծիքը հայկական պետության սահմանների մասին արտահայտվեց գլխավոր խորհրդական դոկտոր Լիբիերի կողմից:

Արձանագրվում էր, որ հայ ժողովրդի վերամիավորումը ենթադրում է ռուսական և թուրքական Հայաստանի վերամիավորման անհրաժեշտություն, քանի որ «XIX դ. պատերազմները ըստ էության բաժանել են հայկական հողերը այդ երկու կայսրությունների միջև»: Հայկական տարածքների թուրքական

³⁵ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, 1919. Vol. XII, p. 749-863.

մասը որոշելիս ըստ էթնիկական սկզբունքի՝ «հայերը իրավունք ունեն թուրքական տարածքի այնպիսի մասի, որը ուշադրության է առնում իրենց կորուստները 1894-1896, 1908-1909 և 1915-1916թթ. կոտորածներից: Այդ կորուստները կարող են գնահատված լինել մեկ միլիոն»: Հանձնաժողովը արձանագրում էր, որ «մեծամասնության սկզբունքի վրա հիմնված արդարությունը» պահանջում է, որ հայերի կորուստները պատերազմի ժամանակ մեկ միլիոն, «ավելացվի հայերի թվաքանակին»: Հանձնաժողովը սահմանեց, որ «թուրքական տարածքը, որ ռուսները բռնագավթել էին 1917թ., կարող է մոտավորապես ընդունված լինել որպես այդ «չափերով փոքր թուրքական Հայաստանի» թուրքական մաս, իսկ ներկայիս ռուսական Հայաստանի տարածքը՝ որպես մնացած մաս»: Նշվում էր, որ Հայաստանի այդ մասերը ունեին հայկական մեծամասնություն մինչև պատերազմը և որ այդ տարածքում հայրենադարձության արդյունքում «հայերը կարող էին փաստացի դառնալ բնակչության մեծամասնություն մի քանի տարվա ընթացքում»³⁶:

ԱՄՆ-ի դիրքորոշմանը հակառակ, որը, փաստարկելով հայ ժողովրդի «արդար» և «օրինական» իրավունքներով և շահերով, ձգտում էր հասնել «մեծ» Հայաստանի ծրագրի իրականացման հարմար և ազատ ելքով դեպի Միջերկրական ծով Կիլիկյան Հայաստանի միջոցով, Մեծ Բրիտանիան և Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի մյուս անդամները հայ-թուրքական սահմանային գիծը ամփոփեցին Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների սահմաններով: Անգլո-ֆրանսիական պայմանավորվածությունը Հայկական հարցի շուրջ արտահայտվում էր հետևյալ ընդհանուր ձևակերպմամբ՝ «Հայաստանի անկախության ճանաչում պատմությամբ, արդարությամբ ու ողջախոհությամբ որոշված սահմանների մեջ»³⁷:

Մերժելով Միացյալ Նահանգների կողմից առաջ քաշվող «պատմական» սկզբունքը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բանակցությունների համար որպես հիմք ընդունեցին լորդ Քերզոնին

³⁶ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, 1919. Vol. XII, p. 749-821.

³⁷ Կլեմանտյի նոտան Լյոդ Ջորջին 1919 թ. դեկտեմբերի 12-ին: See Lloyd George D. The Truth about the Peace Treaties. Vol. II. London, 1938, p. 1101.

ուղղված Բերտելոյի 1920թ. հունվարի 11-ի նոտայի առաջին մասը՝ բրիտանական խաղաղ պատվիրակության քաղաքական բաժնի մեկնաբանություններով. «Ավելի խելամիտ է հայերին հատկացնել միայն այն շրջանները, որտեղ նրանք մեծամասնություն էին մինչև 1895թ. կամ 1914թ., և որոշ հարևան շրջաններ, որտեղ նրանք ներկայացնում էին ողջ բնակչության նշանակալի մասը»:

Այդ կերպ հաստատվում էին սահմաններ, որոնցով Հայաստանին փոխանցվում էին միայն այն պատմական հայկական տարածքները, որոնք պահպանել էին հայկական էթնիկ նկարագիրը և բացարձակապես անհրաժեշտ էին ցեղասպանությունից փրկված գոհերի հայրենադարձության համար:

1919-ի դեկտեմբերից 1920թ. հունվար անգլո-ֆրանսիական բանակցությունների արդյունքում ձեռք բերվեց համաձայնություն առ այն, որ գոյություն ունեցող կովկասյան Հայաստանին, որը ներառում էր այն ժամանակ նաև Կարսի մարզը, պետք է միացվեն Էրզրումի վիլայեթի արևելյան մասը, ներառյալ քաղաքը և Էրզրումի օկրուգը, Մշո դաշտը, Բիթլիսի շրջանը և Վանա լճի շրջանը մինչև պարսկական սահման³⁸:

Սակայն, քանի որ Մեծ Բրիտանիայի Հնդկաստանի գործերի նախարարությունը և Գլխավոր շտաբը կարծում էին, որ Էրզրումը անհրաժեշտ է Թուրքիային «իր ավանդական թշնամի Ռուսաստանի» դեմ պայքարի համար, նախագծում, որ պատրաստել էր Մոնտեգյուն վարչապետի խնդրանքով, նշվում էր, որ այդ դեպքում «սահմանը կարող է անցկացվել Էրզրումից մի քանի մղոն դեպի արևելք, մոտիկից հետևելով գոյություն ունեցող կազայի սահմանին և թողնելով... հովիտը [Արաքսի] Հայաստանին»: Տարածքային կարգավորման այսպիսի ծրագիր Անգլիան և Ֆրանսիան ներկայացրին Դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարների և դեսպանների համաժողովում, որ տեղի էր ունենում Լոնդոնում 1920թ. մարտի 4-ից ապրիլի 7-ը:

Լոնդոնի համաժողովում ԱՄՆ-ը ներկայացված չէր: Սենատում 1920թ. մարտի 19-ի բացասական քվեարկությունից հետո ԱՄՆ-ը դուրս եկավ Դաշնակից տերությունների Գերագույն

³⁸ Documents on British Foreign Policy, 1919-1939. First series. Vol. IV. 1919, p. 1024.

խորհրդից և հետագալ խաղաղ պայմանագրերի նախապատրաստմանը մասնակցելուց:

Հայաստանի սահմանների որոշման համար համաժողովին առնթր ստեղծվեց հատուկ հանձնաժողով Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների կազմով: Արդյունքների մասին, որոնց հանգել էին համաժողովում ներկայացված պետությունները, Ֆրանսիայի դեսպան ժյուսսերանը 1920թ. մարտի 12-ին հաղորդեց ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտին: Մասնավորապես, նշվում էր, որ «Հայաստանի անկախությունը... կճանաչվի: Լազիստանի նկատմամբ հատուկ իրավունքները նրան կապահովեն ելք դեպի ծով»: Դա նշանակում էր, որ համաժողովում ներկայացված պետությունները ձեռնպահ են մնում Հայաստանի հետ Կիլիկիայի վերամիավորումից, թեև նա դուրս էր մնում Թուրքիայի սահմաններից Ֆրանսիայի խնամակալության ներքո:

Թեև ԱՄՆ-ը պաշտոնապես արդեն չէր մասնակցում Օսմանյան կայսրության հետ խաղաղության պայմանագրի մշակմանը, այդ երկիրը և նրա արդեն անկողնուն գամված նախագահ-իդեալիստը շարունակում էին ձգտել Հայկական հարցի հնարավորինս ավելի արդարացի լուծման: Դաշնակից տերությունները համոզվեցին դրանում, ստանալով 1920թ. մարտի 24-ին իրենց հասցեագրված ԱՄՆ-ի պետական քարտուղար Բ. Կոլբիի ուղերձը, որ թելադրել էր անձամբ Վ. Վիլսոնը³⁹:

Այդ փաստը նշված է այդ ժամանակվա բրիտանական վարչապետ Լլոյդ Ջորջի հուշերում. «Սակայն Վուլդրո Վիլսոնի անհանգիստ հոգին այնքան թույլ չէր, որքան իր մարմինը, որի մեջ կյանքը հազիվ էր շոգում: Երբ Դաշնակից տերությունները ձեռնամուխ եղան Թուրքիայի հետ Խաղաղության պայմանագրի պայմանների մշակմանը առանց Ամերիկայի մասնակցության, ի զարմանս մեզ, Մպիտակ տնից եկավ երկարաշունչ մի ուղերձ, թելադրված կաթվածահար, բայց դեռևս անզուգույն իդեալիստի կողմից, ուղերձ, որը ցույց էր տալիս, որ իր հետաքրքրությունը

Թուրքական կայսրության կեղեքված քրիստոնեական բնակչության հանդեպ չի թուլացել»⁴⁰:

Այդ ուղերձը հաստատում էր ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը Հայկական հարցի լուծման առնչությամբ. «Հայաստանին առնչվող պլանի հանդեպ Միացյալ Նահանգների կառավարության ճշմարիտ շահագրգռվածությանը պետք չէ կասկածել, և կառավարությունը համոզված է, որ քաղաքակիրթ աշխարհը սպասում է և պահանջում ամենաբարյացակամ վերաբերմունքը այդ երկրի հանդեպ»: Պետական դեպարտամենտը հայտարարում էր, որ Հայաստանի սահմանները «պետք է հաստատվեն այնպես, որ բավարարեն հայ ժողովրդի բոլոր օրինական պահանջներին և, մասնավորապես, ապահովեն հայերին հարմար և ազատ ելք դեպի ծով»: Հայտարարելով, որ «Լազիստանի նկատմամբ հատուկ իրավունքները հազիվ թե ապահովեն Հայաստանին այն ելքը դեպի ծով, որ անհրաժեշտ է նրա գոյության համար»: ԱՄՆ-ը, այնուամենայնիվ, հույս էր հայտնում, որ «Տերությունները, ուշադրության առնելով այն փաստը, որ Տրապիզոնը միշտ եղել է Հայաստանի միջով անցնող առևտրական ճանապարհի վերջնական կետը... կորոշեն զիջել Տրապիզոնը Հայաստանին»:

Հայաստանի սահմանների հարցի քննարկումը շարունակվեց Սան-Ռեմոյի համաժողովում 1920թ. ապրիլի 18-26-ը: Այն անցնում էր հակասությունների հետագա սրման պայմաններում: Չնայած դեպի Միջերկրական ծով Հայաստանի ելքի հասնելու ԱՄՆ-ի բոլոր ջանքերին, հայ ժողովրդի «իրավունքների» ու «արդարացի շահերի» վկայակոչմամբ, համաժողովը քննարկում էր հայկական սահմանների հարցը Լոնդոնի համաժողովի առաջարկությունների հիման վրա:

Այդ ժամանակ անգլիական դիվանագիտությունը արդեն ակտիվորեն սիրախաղերի մեջ էր քեմալականների հետ, որպեսզի հասնի նրանց համաձայնությանը զիջելու արաբական տիրույթները և օգտագործի թուրքական նացիոնալիզմը բոլշևիկյան Ռուսաստանի դեմ պայքարի համար: Չգտելով, ակնհայտորեն, խափանել բոլշևիկների համաձայնությունը քեմալականների հետ «համաշխարհային իմպերիալիզմի» դեմ համատեղ հանդես գալու

³⁹ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 751-752.

⁴⁰ Ллойд Джордж Д. Правда о мирных договорах. М., 1957, т. II, с. 418.

մասին, Լյոդ Ջորջը կասկածի տակ դրեց Էրզրումի շրջանը Հայաստանին հանձնելու նպատակահարմարությունը⁴¹: Որպես Հայաստանում թուրքական տիրապետության ռազմա-վարչական կենտրոն այն պետք է թուրքական նացիոնալիզմի համար հենարան և ռազմա-ստրատեգիական բազա ծառայեր պանթյուրքիստական ներթափանցման համար Ադրբեջան, որտեղ այդ ժամանակ հաստատվել էր խորհրդային իշխանություն, և Միջին Ասիա:

Համաժողովը չընդունեց անգլիական վարչապետի առաջարկությունները: Ֆրանսիայի ԱԳՆ գլխավոր քարտուղար Ֆ. Բերտելոն նշեց. «Որքան էլ, հավանաբար, ծանրակշիռ լինեն փաստարկները հոգուտ Էրզրումը թուրքերի ձեռքին թողնելու, նա կարծում է, որ դրա դեմ փաստարկումները շատ ավելի համոզիչ են: Նա կարող է հեշտությամբ հասկանալ պրն. Լյոդ Ջորջի տեսակետը, որ ցանկալի է ինչ-որ զիջումներ անել, թուրքերին հաշտեցնելու և դրդելու նրանց ստորագրելու պայմանագիրը, բայց կարծում է, որ դաշնակիցները կապված են իրենց հանդիսավոր հանձնառությամբ Էրզրումը ներառելու նոր Հայկական պետության կազմում»:

Ֆրանսիայի վարչապետ Ա. Միլիերանն ասաց, որ ոչինչ համաժողովում իր լսածից չի հակասում Էրզրումը Հայաստանին հանձնելու անհրաժեշտությանը: Հայաստանը թողնել առանց Էրզրումի՝ «նշանակում է ոչինչ չլուծել»: Միլիերանը հանդես եկավ Գերագույն խորհրդի կողմից արտաքին գործերի նախարարների և դեսպանների Լոնդոնի համաժողովի եզրակացության ընդունման օգտին, այսինքն «Էրզրումը հանձնել Հայաստանին և պայմանագրում նախատեսել անհրաժեշտ պայմանները»:

⁴¹ Հայաստանին հանձնվող տարածքների կազմից Էրզրումը հանելու առաջարկությունը Լյոդ Ջորջը հիմնավորում էր նրանով, որ արդեն մինչև 1915թ. կոտորածը հայերն Էրզրումում փոքրամասնություն էին կազմում: Նա պարզապես անտեսում էր, որ դա արդյունք էր պատմականորեն վկայագրված հայերի բազմադարյան հալածանքների: Հայտնի է, մասնավորապես, որ երբ Էրզրումը, 1829թ. Պասկևիչի կողմից գրավվելուց հետո, վերադարձվեց Թուրքիային ըստ Ալեքսանդրապոլի խաղաղ պայմանագրի, 60 հազար հայեր, խուսափելով կոտորածից, գաղթեցին Ռուսաստանի տարածք: Քաղաքը, ուր XIX դ. 20-ական թթ. հաշվվում էր 100 և նույնիսկ 130 հազար, 30-ական թթ. կեսին հաշվում էր միայն 15 հազար («Русские ведомости», 6 փետրվարի 1916թ.):

Ամփոփելով համաժողովի աշխատանքի արդյունքները, Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը տեղեկացրեց ԱՄՆ-ի նախագահին Միացյալ Նահանգների կողմից արծարծվող «մեծ» Հայաստանի պլանի հանդեպ վերաբերմունքի մասին:

«Տեղի ունեցած բոլոր բանավեճերում չի եղել խնդիր, որ ենթարկվեր ավելի մանրակրկիտ քննարկման և լիներ ավելի դժվար լուծելի, քան սահմանների հարցը, որ լավագույն ձևով կհամապատասխաներ Հայկական պետության շահերին: Միացյալ Նահանգների նախագահը անընդհատ հանդես էր գալիս ի պաշտպանություն չափերով ավելի մեծ Հայաստանի. նկատառումները, որ լավ հայտնի էին նախագահին, ամեն անգամ անխուսափելիորեն ստիպում էին մասամբ կրճատել այդ ցանկությունները, և Հայաստանի ստեղծման հեռանկարները, որի մեջ կմտնեի Կիլիկիան և որը կտարածվեր մինչև Միջերկրական ծով, մնացին որպես անիրականանալի:

Մնաց, սակայն, հարցը, թե Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների որ մասերը, որոնք դեռևս գտնվում էին թուրքական իշխանությունների ձեռքում, կարող էին հանգիստ և իրավականորեն միացվել Երևանում գոյություն ունեցող Հայկական պետությանը և դեպի ծով ինչպիսի ելքը կարող էր ապահովել գոհացուցիչ գոյություն Հայաստանի համար: Այլ կերպ ասած, մնացել էր լուծել, թե ինչպիսի սահմաններ է արևմուտքում և հարավում հարկավոր սահմանել Թուրքիայի հետ Խաղաղության պայմանագրում»⁴²:

Հայ-թուրքական սահմանի որոշումը Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը ներկայացրեց ԱՄՆ-ի նախագահի արբիտրաժին (իրավարարությանը): Վուդրո Վիլսոնի իդեալիստական կերպարը, ետպատերազմյան կարգավորման իր ծրագրի գրավչությունը և հատկապես այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը պատերազմի մեջ չէր մտել Թուրքիայի հետ և գտնվել էր շփման մեջ ոչ միայն Օսմանյան կայսրության օրինական կառավարության, այլև թուրք նացիոնալիստների հետ, ԱՄՆ-ի նախագահի թեկնածությունը առավել հարմար էին դարձնում Հայաստանի և Թուրքիայի տարածքային սահմանազատման մեջ իրավարարի դերի համար:

⁴² Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 779-783.

Իրավաբարության պայմանները: ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի արքիտրածային որոշումը Թուրքիայի և Հայաստանի տարածքային սահմանազատման մասին

Իրավաբար կաշկանդված էր սահմանափակող պայմանով հոգուտ Թուրքիայի. սահմանը պետք է անցներ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների միջով: Կողմերը համաձայնեցին ընդունել ցանկացած միջոց, որ նախագահը կարող էր նախատեսել դեպի ծով Հայաստանի ելքի առնչությամբ:

Արքիտրածի պայմանները բացառում էին Կիլիկիան, ինչպես նաև երեքը յոթ վիլայեթներից, որ ճանաչվել էին «հայկական» բարենորոգումների վերջին նախագծով և 1914թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագրով, այն է՝ Սվազի, Խարպուտի* և Դիարբեքիի վիլայեթները: Բացառվում էին այն «վեց հայկական վիլայեթներից» երկուսը, որոնք ճանաչվել էին այդպիսին Թուրքիայի և Դաշնակից տերությունների կողմից Մուդրոսի հաշտության ակտով: Այդ «վեց հայկական վիլայեթների» մակերեսը կազմում էր 96.000 քառ. մղոն: Ըստ արքիտրածի պայմանների ստույգ իմաստի, հայ-թուրքական սահմանը չպետք է դուրս գար Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններից, որոնց ամբողջ մակերեսը կազմում էր 54.000 քառ. մղոն:

Մերկացնելով Անտանտի և հատկապես Անգլիայի քաղաքական ինտրիգները, ամերիկյան «Նյու ռիփաբլիկ» հանդեսը գանգատվում էր. «Մակայն նրանք չէին ցանկանում որոշել տարածքի սահմանները, որը մենք պետք է պաշտպանեինք, և չէին ճանաչում բացեիքաց և անկեղծորեն, որ Հայաստանը պետք է կազմված լինի նախկին թուրքական Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարպուտի, Դիարբեքիի, Սվազի և Ադանայի վիլայեթներից ռուսական նախկին Կարսի և Երևանի նահանգների և Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի, Շուշիի և Ջանգեզուրի գավառների որոշ մասերի հետ միասին կամ գոնե այդ տարածքների այն մասի, որոնք մեծապես ավելի հայկական են, քան Թրակիան և Ջմյուռնիան էին հունական, Դալմաթիան իտալական կամ Պոզնանը և Դանցիգը լեհական»⁴³:

* Խարբեքի Լ.Շ.

⁴³ What about Armenia? – The New Republic. March 31, 1920.

Արքիտրածի պայմանները՝ որպես խաղաղ կարգավորման բաղկացուցիչ մաս թուրքական պատվիրակությանը փոխանցվել էին նախօրոք՝ դեռ 1920թ. մայիսի 11-ին:

1920թ. հուլիսի 22-ին Կոստանդնուպոլսում Սուլթանի խորհուրդը լրիվ կազմով, բացառությամբ մեկի, քվեարկեց խաղաղ պայմանագրի ստորագրման օգտին, և օգոստոսի 10-ին Թուրքիան պաշտոնապես ստորագրեց Սերի խաղաղության պայմանագիրը, դրանով իսկ ճանաչելով իր պատասխանատվությունը հայերի ցեղասպանության համար:

Արքիտրածի մասին առաջարկությունն արվեց ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին և ընդունվեց նրա կողմից մինչև Սերի խաղաղության պայմանագրի ստորագրումը: Այն մասին, որ, բացի միջնորդական իրավասության ծավալի տարածքային սահմանափակումներից, արքիտրածը պայմանավորված չի եղել այլ պահանջներով և որ նա, մասնավորապես, որևէ ձևով շաղկապված չի եղել ապագա խաղաղության պայմանագրի ստորագրման հետ, ասում է իրավաբար ինքը: 1920թ. մայիսի 24-ին Կոնգրեսին ուղղված ուղերձում նախագահը փաստում էր, որ մինչև Սերի պայմանագրի ստորագրումը «որոշվեց խնդրել Միացյալ Նահանգների նախագահին հանձն առնել իրավաբարությունը Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում սահմանի մասին բարդ հարցում և ընդունել իր որոշումը այդ հիմքի վրա, նույնպես և ցանկացած պայման, որ նա կարող է հանձնարարել Հայաստանի անկախ պետության համար դեպի ծով ելքի առնչությամբ»⁴⁴:

Արքիտրածային որոշմանը կից նամակում, որ հասցեագրված էր Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին, իրավաբար փաստում է. «Գերագույն խորհրդի որոշմամբ այս տարվա ապրիլի 26-ին ինձ հրավեր էր ուղարկվել հանդես գալու որպես իրավաբար Թուրքիայի և Հայաստանի նոր պետության միջև սահմանների հարցի առնչությամբ»⁴⁵:

Բուն որոշման ներածականում իրավաբար մատնանշում է Գերագույն խորհրդի հրավերը որպես արքիտրածի իրավական հենք.

⁴⁴ 66-th Congress. 2nd Session. House of Representatives Doc. No 791.

⁴⁵ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 790-795.

«Քանի որ 1920թ. ապրիլի 26-ին Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը Ման-Ռեմոյի համաժողովում դիմեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին հրավիրելով հանդես գալ որպես իրավարար Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի հարցում, որ պետք է հաստատվի չորս վիլայեթներում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի:

Եվ քանի որ 1920թ. մայիսի 17-ին այդ առաջարկությանն իմ համաձայնության մասին հետագրով հաղորդվեց Փարիզի ամերիկյան դեսպանին՝ փոխանցելու համար Գերագույն խորհրդում ներկայացված տերություններին. "...»:

Ուստի, ես, Վուդրո Վիլսոն, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ, որի վրա այդ կերպ դրվել են իրավարարի լիազորությունները...» և այլն⁴⁶:

1920թ. մայիսի 17-ին, այսինքն դարձյալ մինչև Սևրի պայմանագրի ստորագրումը, ԱՄՆ-ի նախագահը հաղորդել է տերություններին «հայկական սահմանների իրավարարի» պարտավորություններն իր կողմից ընդունվելու մասին:

Այսպիսով, փոխզիջումը իրենից ներկայացնում էր ինքնուրույն և Սևրի պայմանագրից չկախված համաձայնություն իրավարարության մասին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների, գործելով որպես Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի անդամներ, և Վուդրո Վիլսոնի միջև, գործելով որպես ԱՄՆ-ի նախագահ: Դրանով իսկ այդ տերությունները համաձայնեցին, որ իրավարարի կարգադրությունները կլինեն վերջնական, որովհետև դա վերաբերում է իրենց:

ԱՄՆ-ի նախագահի իրավարարության պարտադրող ուժը ճանաչեցին փոխզիջման բոլոր մասնակիցները: Այն միանշանակ հաստատվեց, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի կողմից 1920թ. ապրիլի 24-ին Գերագույն խորհրդի Ման-Ռեմոյի նիստում, որ տեղի էր ունենում ԱՄՆ-ի ներկայացուցիչների ներկայությամբ: Բերենք համապատասխան հատվածը նիստի արձանագրությունից.

«Պրն. Լլոյդ Ջորջը ընդգծեց, որ անհրաժեշտ է միայն հայտարարել, որ, ինչպիսին էլ լինի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը, այսինքն կորոշի արդյոք նա, որ ողջ տարածքը կամ նրա մի մասը պետք է հանձնվի կամ Հայաստանին կամ Թուրքիային, կամ արդյոք Հայաստանը կունենա ելք դեպի ծով, այն կընդունվի Դաշնակից տերությունների կողմից, ինչպես նաև Թուրքիայի կողմից: Անձամբ նա առանձնակի դժվարություններ չի զգում այդ գործում, և մեծ օգուտ կլինեք, եթե Միացյալ Նահանգները որոշակի հետաքրքրություն դրսևորեք ապագա Հայաստանի հանդեպ»⁴⁷:

Այդ պատճառով ԱՄՆ-ում նկատում էին, որ «այնքանով, որքանով դա վերաբերում է Ամերիկային և Դաշնակիցներին, Սևրի պայմանագրի մերժումը կամ չեղյալ հայտարարելը չի կարող ազդել Վիլսոնի իրավարարական որոշման վրա, քանի որ նախագահի որոշումը հենվում է ոչ թե 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի վրա, այլ Դաշնակիցների Գերագույն խորհրդի 1920թ. ապրիլի 26-ի հրավերի վրա: Խորհրդի հրավերը և Սևրի պայմանագիրը կապված չեն մեկը մյուսի հետ և անկախ են մեկը մյուսից: Նախագահին ուղղված հրավերում դրված չի եղել ոչ մի պայման»⁴⁸:

Այս իրավարարության յուրահատկությունն այն է, որ նրանում կողմեր են հանդիսանում նախ և առաջ ետպատերազմյան խաղաղ կարգավորման համար պատասխանատու տերությունները: Ինչ վերաբերում է սահմանագատվող կողմերի կառավարություններին, այն է՝ Հայկական հանրապետությանը և Օսմանյան կայսրությանը՝ այն ժամանակ միակ թուրքական կառավարությանը, որ ճանաչված էր միջազգային ընկերակցության կողմից, ապա նրանք մի շարք այլ պետությունների հետ միասին միացել էին փոխզիջմանը, ստորագրելով 1920թ. օգոստոսի 10-ին Սևրի խաղաղության պայմանագիրը: Պայմանագրի 89-րդ հոդվածը արձանագրում էր, որ «Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև մյուս Բարձր Պայմանավորվող Կողմերը համաձայնում են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի միջնորդական որոշմանը ներկայացնել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշումը

⁴⁶ Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 795-804.

⁴⁷ Documents on British Foreign Policy. 1919-1939. First series. Vol. VIII, p. 1-230.

⁴⁸ St. u Lausanne Treaty, Turkey and Armenia, N. Y., 1926, p. 166.

Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել այն, ինչպես նաև ցանկացած միջոց, որ նա կարող է նշանակել դեպի ծով Հայաստանի ելքի վերաբերյալ և նշված սահմանին հարակից օսմանյան տարածքի ցանկացած մասի ապառազմականացման վերաբերյալ»:

Հոդ. 90-ի պարբ. 1-ը լրացուցիչ պարզաբանում էր, որ «այն դեպքում, եթե սահմանի հաստատումը 89-րդ հոդվածի ուժով կհանգեցնի նշված վիլայեթների տարածքի մի մասի կամ ամբողջի հանձնման Հայաստանին, Օսմանյան կայսրությունը այժմ նեթ հայտարարում է, որ նա որոշման օրվանից հրաժարվում է հանձնված տարածքի հանդեպ ամենայն իրավունքներից և իրավահիմնավորումներից: Սույն Պայմանագրի որոշումները, որ կիրառելի են Թուրքիայից անջատված տարածքների նկատմամբ, այդ պահից կլինեն կիրառելի և այդ տարածքի նկատմամբ»⁴⁹:

Կապված այն բանի հետ, որ Օսմանյան կայսրությունը և Հայաստանը, ինչպես նաև պետությունները, փոխզիջման սկզբնական մասնակիցներից տարբեր, որոնք միացել են նրա պայմաններին Սևրի խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո, որը չի վավերացվել և իրավական ուժ չի ստացել, կարող է հարց առաջանալ այդ պետությունների նկատմամբ արբիտրաժի պարտադիր ուժի մասին:

Օսմանյան կայսրության և Հայաստանի կողմից հարցի հանձնումը միջնորդական որոշման կատարվել է այդ երկրների գործող օրենքներին՝ որպես ազգային, պետական, այլ ոչ թե միջպետական ակտերին համապատասխան և, հետևաբար, միջազգային պայմանագրի վավերացումից կախված չէր:

Ըստ արբիտրաժի բուն բնույթի իրավաբարի որոշումը կողմերն ընդունում են ապրիորի, այն պարտադիր է նրանց համար և, բնականաբար. վավերացման կարիք չունի: Իրավաբարական որոշումը, այն բանից հետո, երբ այն կայացվել է, դառնում է պարտադիր կողմերի համար և պետք է բարեխղճորեն կատարվի: Թուրքիան և Հայաստանը, դիմելով արբիտրաժի, համաձայնել են, որ իրավաբարի կարգադրությունները, քանի որ դա վերաբերում է

⁴⁹ Севрский Мирный договор и Акты, подписанные в Лозанне. М., Лит-издат НКВД. 1927, с. 3, 5, 31, 32, 41-43, 67, 68.

իրենց, կլինեն վերջնական: Նրանք պարտավորվում էին ճանաչել և կատարել այդ իրավաձևակերպող միջազգային համաձայնագիրը:

Միջազգային պայմանագրերի իրավունքին համապատասխան արբիտրաժից բխող պարտավորությունների վերանայում հնարավոր է միայն համաձայնության բոլոր կողմերի համաձայնությամբ և առանձնապես այն կողմի, որի օգտին կայացվել է իրավաբարական որոշումը:

ԱՄՆ-ի նախագահի իրավաբարական որոշումը կայացվեց 1920թ. նոյեմբերի 22-ին: Իրավաբարի որոշմամբ սահմանվում էր, որ «պարսկական սահմանից Կոտուր քաղաքից հարավ-արևմուտք Հայաստանի սահմանային գիծը որոշված է մեծ բարձրության գանգվածային բնական պատնեշով, որ տարածվում է Վանա լճից հարավ և հայկական Բիթլիս և Մուշ քաղաքներից հարավ-արևմուտք: Այս սահմանային գիծը թողնում է, իբրև թուրքական պետության մաս, Հաքքիարի ամբողջ սանջակը կամ Վանի վիլայեթի մոտ կեսը և Մղերդի սանջակը գրեթե ամբողջությամբ»: Դա հիմնավորվում էր «խելամիտ ֆիզիոգրաֆիկական նկատառումներով» և ամրագրվում էր նրանով, որ Հաքքիարին և Մղերդը «առավելապես քրդական են բնակչության կազմով և տնտեսական կապերով»: Հայկական տարածքից դուրս էր մնում նաև Մեծ Զաբ գետի վերին հովիտը, որը բնակչության կազմով նշանակալի չափով քրդական էր և նեստորական-քրիստոնեական, իսկ տնտեսական առումով Տիգրիս գետի ոռոգման մեծ համակարգի մաս էր կազմում թուրքական Քուրդիստանում և Միջագետքում: Այնուհետև «սահմանը Բիթլիսից և Մուշից արևմուտք, որ ձգվում էր հյուսիսային ուղղությամբ Երզնկայից ոչ հեռու», անցկացվել էր ըստ «բնական աշխարհագրական պատնեշի, որն ապահովում է Հայաստանին լիակատար անվտանգություն և Թուրքական պետությանն է թողնում շրջան, որ զգալի չափով քրդաբնակ է»: Հայկական գյուղերը և գյուղական կենտրոնները, ինչպիսին են Կիզին և Թեմրանը, որ տնտեսական և եկեղեցական առումով կապված են Խարպուտի հետ, մնում են թուրքական որպես անխուսափելի հետևանք, որ Թուրքիային է մնում Խարպուտը արբիտրաժի պայմանների ուժով: «Դերսիմի հյուսիսային ծայրից սահմանի բնույթի և ուղղության մասին որոշումը առաջին հերթին ստորադրվել է դեպի ծով

Հայաստանի պետությանը հարմար էլքի տրամադրման կենսականորեն կարևոր հարցին»⁵⁰:

Ըստ ԱՄՆ-ի նախագահի պաշտոնական հայտարարության, այդ որոշումը հիմնված է «գործին առնչվող վստահության առավել արժանի տեղեկատվության լույսի ներքո և արդարության բարձրագույն շահերի գիտակցությամբ հարցի քննության վրա»⁵¹:

Հայկական հանրապետությունը, որն այն ժամանակ ներառում էր Կարսի մարզի և Նախիջևանի տարածքները մինչպատերազմական ռուս-թուրքական սահմանի շրջանակներում, աճում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների մոտավորապես կեսին հավասար 40.000 քառ. մղոն ընդհանուր մակերեսով: Ամերիկյան հաշվարկներով, դա կազմում էր Օսմանյան կայսրության պատմական Հայաստանի տարածքի մոտ 40 տոկոսը:

Այսօր, այդ իրավարարական որոշման կայացման ժամանակից գրեթե 90 տարի անց, նկատի առնելով փոփոխությունները միջազգային իրավունքի իր շոշափած սուբյեկտների վիճակի մեջ և հաշվի առնելով գործնականորեն անդառնալի փոփոխությունները այդ տարածքի բնակչության կազմում, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը արբիտրաժի հաստատած սահմանագատման գծին համապատասխանեցնելու հարց բարձրացնելը հնարավոր չէ ոչ գործնականորեն, ոչ միջազգային-իրավական առումով:

ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարարական որոշմանը կարելի է հղում անել որպես միջազգային ընկերակցության կողմից ընդհանրապես և Միացյալ Նահանգների կողմից մասնավորապես՝ Հայաստանի այդ մասի վրա ինքնիշխանություն իրականացնելու իրավունքի որպես պետության քաղաքական պատասխանատվության ձև, Թուրքիայի կողմից կորստյան պատմական փաստի հեղինակավոր հաստատում, որը ծանր հանցագործություն է կատարել մարդկայնության դեմ «ժողովրդի սպանության» ձևով:

⁵⁰ Տե՛ս ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի ուղերձը Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին և արբիտրաժային որոշման տեքստը. Papers Relating to the Foreign Relations of the United States. 1920. Vol. III, p. 790-804.

⁵¹ Տե՛ս արբիտրաժային որոշման տեքստը:

Քանի որ Վ. Վիլսոնին դիմել են իբրև ԱՄՆ-ի նախագահի և քանի որ նա գործել է ոչ անհատական կարգով, այլ իբրև ԱՄՆ-ի նախագահ, ապա իր որոշումը պետք է դիտարկվի որպես այդ տերության վերաբերմունքի արտահայտություն ինչպես իրավարարի որոշման բովանդակության, այնպես էլ այն խնդրի հանդեպ, որն առաջացրել է Հայաստանի և Թուրքիայի սահմանագատման անհրաժեշտությունը, այն է՝ որպես վերջինիս կողմից այդ տարածքի հայ բնակչության նկատմամբ պետական իշխանություն իրականացնելու իրավունքի կորստյան հետևանք:

Հայ-թուրքական սահմանագատման առնչությամբ ԱՄՆ-ի նախագահի իրավարարական որոշման իրականացման տապալման փաստն ինքնին, մի շարք այլ քաղաքական-իրավական գործոնների համադրմամբ, հաստատում է թուրքական ցեղասպան պետության էքսպանսիոնիզմը և երկու պետությունների ու ժողովուրդների միջև միջազգային իրավունքի գործող նորմերի հիման վրա նոր բարիդրացիական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը:

Saturday, 24 November 2007

ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ
ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ԱՆԿՈՒՄԸ
(Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման
ամերիկյան փորձի ծախսողումը)

*«Ամեն ինչ պատրաստ է,
բախտի նախասահմանումը
ցույց է տալիս մեզ
ճանապարհը... մեզ
ղեկավարում է Աստված...
Ամերիկային վճռված է ցույց
տալ ճշմարիտ ուղին»:*

Վուդրո ՎԻԼՍՈՆ

Ուրվագծվող (վիլսոնյան) աշխարհակարգը

Եվրոպան 20-րդ դար թևակոխեց սուր հակասությունների
թնջուկով: Եռյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Յունգարիա,
Թուրքիա) Գերմանիայի գլխավորությամբ աշխարհի վերաբաժանման
և համաշխարհային տիրապետության հայտ էր ներկայացրել
հակադրվելով Անգլիայի կողմից գլխավորվող Անտանտային
(Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ճապոնիա): Իրար
հասկացողության լեզուն, դժբախտաբար, գտնվել էր պատերազմի
սանձազերծման մեջ: Հին աշխարհը ընթանում էր պատմությունից
իրեն քաջածանոթ արահետներով: Հակառակ «կայծակնային»
(բլիցկրիգ) հաղթանակի ակնկալիքին, պատերազմն արագորեն ձեռք
բերեց *տևական* ընթացք և *համաշխարհային* ընդգրկում:
Պատերազմի հրձիգների վառած կրակին հրո ճարակ դարձավ
քաղաքակիրթ աշխարհը, ինչպես և սպասելի էր առաջին հերթին
Հայաստանը:

Խոշոր տերություններից միայն ԱՄՆ-ն էր, որ Եվրոպայից
հեռու և ապավինած «Մոնրոյի վարդապետությանը», ընդհուպ մինչև
1917 թվականի ապրիլի 6-ը, զերծ մնաց համաշխարհային սպանդից:
Իսկ պատերազմի մեջ մտավ Անտանտայի կողմից ոչ որպես
«դաշնակից», այլ նրան «հարող» («to beat, to churn») երկիր, որպես
դաշնակիցներին «զուգորդված (ասոցիացված) տերություն»:

Մինչ երկու խմբավորումն էլ արնաքամ էին լինում,
ռազմաճակատում արձանագրելով փոփոխական հաջողություններ,
ԱՄՆ-ի նախագահ Thomas Woodrow Wilson-ը* (1856.28.XII-1924.3.II)
հանդես եկավ աշխարհի միջազգային-իրավական
վերակազմավորման վիթխարի ծրագրով. Հին աշխարհի
հակասությունները, հանուն նրա հիմնավոր ու տևական
խաղաղության և ընդգրկուն անվտանգության, անհրաժեշտ էր լուծել

նոր սկզբունքների հիմքի վրա ու աննախընթաց
նախաձեռնություններով: Այդ մասին Վիլսոնն արտահայտվեց ԱՄՆ-ի
Սենատին հղված 1917 թվականի հունվարի 22-ի ուղերձում: Այնտեղ
շարադրվեցին Վիլսոնի հիմնական պատկերացումները
հետպատերազմյան աշխարհակառույցի վերաբերյալ, որը պետք է
ցնցեր առկա աշխարհակարգի հիմքերը հիմնավորապես:

Դատե՛ք ինքներդ:

Մեր հմայքն ու մեր հզորությունը, ազդարարում է նախագահը,
պետք է միացվեն մյուս ժողովուրդների հմայքին ու հզորությանը՝ ողջ
աշխարհում խաղաղությունն ու արդարությունը ապահովելու համար:
Դրա համար, ակնարկում է նախագահը, անհրաժեշտ է այն
ապահովել ողջ մարդկության «կազմակերպված ուժի կողմից», որն է
Ազգերի դաշնակցությունը: Ըստ Վիլսոնի, քաղաքական աշխարհը
կանգնած է երկընտրանքի առաջ. այժմյան պատերազմը արդյո՞ք
պատերազմ է արդար և կայուն խաղաղության համար, թե՞ պայքար է
միայն հանուն տերությունների միջև նոր հավասարակշռության: Եթե
դա պայքար է հանուն քաղաքական նոր հավասարակշռության նոր
համակարգի, ապա այդ դեպքում ո՞վ կարող է երաշխավորել
համակարգի նոր հավասարակշռությունը: Եվրոպան կարող է կայուն
լինել, երբ նա հանգիստ է: «Այդտեղ,- ասում է նախագահը,- պետք է ոչ
թե հավասարակշռություն, այլ ուժերի ընդհանրություն, ոչ թե
մրցակցություն, այլ ընդհանուր խաղաղություն»: Արդի աշխարհում,
բացատրում էր նախագահը, «չպետք է լինի ուժերի հաշվեկշիռ
(բալանս), ազգերի մի հզոր խմբավորման հակադրություն մյուսին,
այլ պետք է ձևավորվի ազգերի միասնական խումբ, որոնց ձեռքում
պետք է լինի խնամակալությունն աշխարհի խաղաղության վրա»:

Ավելին: Վիլսոնի կարծիքով, հետպատերազմյան աշխարհը
պետք է, որ ձևավորվի երկու խմբավորումներից որևէ մեկի
հաղթանակի հիման վրա: Խաղաղությունը կլինի տևական («Peace
Without Victory»), ամուր, եթե կնքվի հավասարների միջև, որն
ամբողջությամբ հիմնված կլինի հավասարության սկզբունքի և
ընդհանուր բարօրությանը հավասար մասնակցության վրա:
Ճշմարտության զգացումը, համաշխարհային արդարության
զգացումը այնքան է անհրաժեշտ կայուն խաղաղության
հաստատման համար, որքան անհրաժեշտ է «տարածական,
ցեղային, կամ ազգագրական բնույթի հրատապ հարցերի ճիշտ
լուծումը»: Ազգերի հավասարությունը, որի վրա պետք է հանգչի
կայուն խաղաղությունը, պետք է արտահայտվի նրանց
իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր
ազգերի ընդհանուր հզորության վրա, որոնց համաձայնությունից է
կախված լինելու բոլոր ազգերի ընդհանուր հզորությունը, այլ ոչ թե
նրանցից մեկի հզորությունից:

Իհարկե, դա չի նշանակում տարածքների և այլ պաշարների հավասարություն, և ընդհանրապես, բարիքների բաշխման հավասարություն, որքանով դրանք ժողովուրդների սովորական համաշխարհային զարգացման արդյունք չեն եղել: «Սակայն, - գտնում է նախագահը, - ոչ ոք չի սպասում և չի էլ պահանջում ոչինչ, բացի իրավունքների հավաստիությունից: Այժմ մարդկությունը ծարավ է գոյության ազատության, և ոչ թե ուժերի հավասարության»: Կազմակերպված ժողովուրդների միջև չի կարող և չպետք է լինի կայուն խաղաղություն, որը չի բխում այն սկզբունքից, թե «կառավարությունն իր բոլոր արդարացի իրավասությունները փոխ է առնում միայն ժողովրդի կամքից, և ոչ մեկը իրավունք չունի ժողովուրդներին հանձնելու մի պետությունից մյուսին, կարծես թե նրանք իրեր լինեն» (ընդգծումը իմն է. - Լ. Շ.): Իսկ այն ժողովուրդների համար, որոնք ապրել են այլ հավատ դավանող և նույնիսկ նրանց նկատմամբ թշնամական նպատակներ հետապնդող ժողովուրդների իշխանության տակ, առաջիկայում պետք է ապահովվի գոյության, հավատի, արդյունաբերության և հասարակական զարգացման ազատություն...

Ուշադրության է արժանի նախագահ Մոնրոյի վարդապետության «վիլսոնյան» ընթերցումը, որը «վիլսոնյան աշխարհակարգի» հաստատման ճանապարհին խոչընդոտից վերածվում էր իր հակադրությանը: Վիլսոնն առաջարկում էր, որ բոլոր ազգերը «ընդհանուր համաձայնությամբ» ընդունեն այն, որպեսզի «ոչ մի ազգ չձգտի իր գերիշխանությունը տարածել ուրիշների վրա, այլ որպեսզի յուրաքանչյուր ժողովրդի հնարավորություն տրվի ազատ ինքնորոշվելու, ինչպես նաև իրավունք՝ հետևելու իր ընտրած զարգացման ուղուն առանց արգելքների և առանց սպառնալիքի. թույլերին նույնպես, ինչպես և ուժեղներին»:

Միջազգային հարաբերությունների որակապես նոր համակարգի օգտին Վիլսոնը որոշակիությամբ արտահայտվում է Յոննի պապ Բենեդիկտոս XV-ի խաղաղության առաջարկի պատասխան ուղերձում, 1917 թվականի օգոստոսի 29-ին: Դեմ լինելով պատերազմից հետո կայսրությունների տրոհմանը, Վիլսոնը միաժամանակ հռչակում է ժողովուրդների «մեծ» ու «փոքր», ինքնակառավարման, անվտանգության ու աշխարհի գործերին իրավահավասար մասնակցության իրավունքը:

Այդուհանդերձ, գլոբալ մտածողության ճանապարհին և՛ տեսական-քաղաքական իմաստով, և՛ ընդհանուր ռազմավարության տեսանկյունից, և՛ գործնական քաղաքականության առումով վերափոխիչ նշանակություն ունեցան ԱՄՆ-ի Սենատի միացյալ նիստում Վիլսոնի հռչակած «14 կետերը», որոնք, ըստ էության, նախատեսում էին հետպատերազմյան աշխարհակառույցի

հաստատում՝ համապատասխան «ազատականության սկզբունքների և հակահիմպերիալիզմի»:⁵² Ուստի և միջազգային քաղաքականության տեսակետից, Վիլսոնի պլանը ոչ այլ ինչ էր, եթե ոչ «դաշնակցային (ֆեդերալիստական) ծրագիր համաշխարհային մասշտաբով, միաժամանակ համաշխարհային ազատականության ամենամավարտուն ծրագիրը»:⁵³

Գլոբալ նախագծի վեց կետերը (1-5, 14; 1. բաց խաղաղ դաշնագրեր, 2. խաղաղ և պատերազմական ժամանակ լրիվ ազատություն առևտրական նավագնացությանը, 3. միջազգային առևտրին խանգարող խոչընդոտների վերացում, 4. գեներալ կրճատումն ապահովող երաշխիքների հաստատում, 5. գաղութային հարցերի կարգավորում, 14. Ազգերի դաշնակցության ստեղծում) վերաբերում էին աշխարհակառույցի միջազգային իրավական վերակազմավորման գլխավոր տեսանկյուններին, իսկ ութը (6-13) հրատապ ու արմատական լուծում պահանջող, սակայն լրկալ (տեղական) հիմնախնդիրներին: Դրանով իսկ նախագահ Վիլսոնի ծրագիրը ձեռք էր բերում, հիրավի, «տիեզերական» ընդգրկում. արմատական փոփոխությունների գլխավոր ուղղությունները լրացվում էին ցնցումներից հոգեվարք ապրող աշխարհի տարածքային, ազգագրական, մշակութային-քաղաքակրթական անլուծելի թվացող կնճիռների հաղթահարումով: Հետպատերազմյան ռազմավարական աշխարհի առջև բացվում էին անվտանգ ու իրավահավասար զարգացման դռները:

Խաղաղության վեհաժողովի ԱՄՆ-ի պատվիրակությանը հաջողվեց «Վիլսոնի վարդապետությունը» դաշնակիցներին դիտել տալ որպես բանակցությունների հիմք: Նրանք ստացան գնդապետ Էդուարդ Յաուզի հանձնարարությամբ «Ուորլդ» թերթի խմբագիր Ֆրենկ Կոբի կողմից (Ուոլտեր Լիպմանի օգնությամբ) մշակված և նախագահի կողմից հաստատված 14 կետերի «պաշտոնական մեկնաբանությունները» (1918թ., օգոստոս) որպես «խաղաղության պայմաններ»: Այստեղ ևս, աշխարհի լրկալ (արյունահոս) վերքեր էին դիտվում և հանուն աշխարհի խաղաղության ու քաղաքակրթության անվտանգության հրատապ լուծում պահանջում Ռուսաստանի (կետ 6), Բելգիայի ազատագրության (կետ 7), Գերմանիայի կողմից Ֆրանսիայից բռնազավթված տարածքների, Էլզաս-Լոթարինգիայի վերադարձի (կետ 8), Իտալիայի սահմանների ուղղման (կետ 9), Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ինքնավար զարգացման (կետ

⁵² Мальков В. А. Вудро Вильсон и новая Россия, февраль 1917—март 1918 г. — "Новая и новейшая история", 1999, N 6, с. 124.

⁵³ Ключников Ю. В. На великом историческом перепутьи, Берлин, 1922, с. 107.

10), Բալկանյան թերակղզու երկրների ու ժողովուրդների կյանքի կարգավորման (կետ 11), լեհական անկախ պետության ստեղծման (կետ 13) և, վերջապես, Օսմանյան կայսրության ճակատագրի և «թրքական ջրուղիների» (կետ 12) թնջուկները:

**Մերձավոր Արևելքի վերակազմման վիլսոնյան ծրագիրը.
օսմանյան (թարախա) պալարը**

Մեր հետաքրքրության կիզակետն, անշուշտ, 12-րդ կետն է: Նախ որովհետև թուրքական թնջուկը արնածոր էր, իսկ Օսմանյան կայսրությունը վերածվել էր պատմական անախորհիգմի, մահ ու ահաբեկչություն տարածելով աջ ու ձախ, երկրորդ՝ քրիստոնեական (արևմտյան) քաղաքակրթության հետ թյուրք-խալանական ենթաքաղաքակրթության դիմաբախման դասական գոտի էր և, երրորդ, հաղթական Անտանտայի կրտսեր դաշնակից հռչակված Չայաստանի խնդիրը քննարկվում էր Օսմանյան կայսրության լուծարում-անդամահատման ենթատեքստում: Ուստի և մեզ թույլ ենք տալիս ամբողջությամբ մեջբերել ճակատագրական 12-րդ կետը, որն ասում էր. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը, իր ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և կայուն վեհապետություն, սակայն մյուս ազգությունները, որոնք այժմ գտնվում են թուրքերի իշխանության տակ, պետք է ստանան գոյության աներկբա երաշխիքներ և ինքնավար զարգացման բացարձակապես անխախտ պայմաններ: Դարդանելը պետք է մշտապես բաց լինի նավերի ազատ անցումի և բոլոր ազգերի առևտրի համար միջազգային երաշխիքներով»: Իսկ մեկնաբանություններում, որոնք ամենաշատն էին արտացոլում «պաշտոնական ամերիկյան ծրագիրը», թուրքական բուն տարածք էր դիտվում Անատոլիան (նույնն է և Սևրի դաշնագրում), «Չայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ Միջերկրական ծովում որևէ տերության հովանավորությամբ»: Նշվում էր, որ դրան կհավակնի, հավանաբար, Ֆրանսիան, «սակայն հայերը կգերադասեին Անգլիային»:

Չէին անտեսված, ի դեպ, Օսմանյան կայսրության այլ ժողովուրդների հույների, արաբների և այլն, իրավունքները, դրանով, կարծես թե, տուրք էր տրվում քաղաքակրթական ու պատմական անհրաժեշտության պահանջներին: Վիլսոնյան ծրագրով առաջարկվում էր խաղաղության դաշնագրում «ներգրել» «երաշխիքների ընդհանուր կողմբա» իմպերատիվ հատկանիշով: Պարտադրվում էր կնքվելիք դաշնագրում ապահովել փոքրամասնությունների իրավունքներն ու բաց դռների սկզբունքը,

իսկ գլխավոր երկաթուղագծերը պետք է միջազգայնացվեին: Նեղուցներն ու Կ. Պոլիսը, թեկուզև անվանապես, կարող էին մնալ թուրքական, սակայն պետք է ենթարկվեին կոլեկտիվ կամ Ազգերի դաշնակցության իրավարար որևէ տերության «միջազգային վերահսկողության»:

Չայաստանի կենսական շահերն առկա էին նաև «ռուսական հարցի» (կետ 6) «կովկասյան» առաջարկներում՝ «հավանաբար» «որպես թուրքական կայսրության պրոբլեմի մաս»: Սգբունքային նշանակություն ուներ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի չեղյալ հայտարարման պահանջը որպես «ակնհայտորեն սրիկայական պայմանագրի»:

Չայտնի է, որ ամերիկյան պատվիրակությունը ներկայացավ Փարիզի խաղաղության վեհաժողով կատարելապես նախապատրաստված, ձեռքի տակ ունենալով բազմաթիվ տեղեկանքներ և փաստաթղթեր, խորհրդականների ու փորձագետների նշմարելի քանակ, պետքարտուղար Ռ. Լանսինգի կողմից մշակված հատուկ հրահանգ, որն, ըստ էության, իր մեջ պարունակում էր բոլոր հիմնական հարցերի լուծման նախագծերը: ԱՄՆ-ի ծրագիրն իր արտացոլումը գտավ նաև Պետական դեպարտամենտի կողմից 1919 թվականի հունվարի 21-ին կազմված քարտեզներում: Այդ քարտեզներով, որոնք արտացոլում էին «Վիլսոնի վարդապետությունը», Օսմանյան կայսրությունը բաժանվում էր երեք պետության՝ 1) Թուրքիա, 2) Չայաստան, 3) Կ. Պոլիս: Թուրքական պետությունը պետք է իր մեջ ընդգրկեր ողջ Անատոլիան, արևելքից՝ Անտի-Տավրոսյան լեռներից մինչև Բուրսա քաղաքով անցնող գիծը՝ զուգահեռաբար Բոսֆոր և Դարդանել նեղուցներին: Նախատեսվում էր Թուրքիայի մայրաքաղաքը դարձնել Կոնիա քաղաքը:⁵⁴ «Կ. Պոլիսի» պետության մեջ պետք է մտնեին եվրոպական տարածքները՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցներով, Մարմարա ծովի ողջ ծովափը, ինչպես նաև Անատոլիայի արևմտյան մասերը՝ Բուրսա և Բանդրմա քաղաքներով: Պոլսական պետության կազմում պետք է հետագայում ընդգրկվեին, ըստ քարտեզի մեկնաբանությունների, ինչպես ամբողջ Արևելյան, այնպես էլ Արևմտյան Թրակիան: Վերջինս կանխավ խոստացել էին Բուլղարիային:

Լանսինգի հրահանգի համաձայն, Կ. Պոլիսն ու նեղուցները պետք է որ առանձնացվեին որպես առանձին պետություն՝ միջազգային վերահսկողության տակ, կամ Ազգերի դաշնակցության անունից տրվեին որևէ տերության որպես ենթահոգատար տարածք:

⁵⁴ Кунина А. Е. Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920 гг. Изд. 2-е. М., 1954, с. 294.

Եվրոպայից թուրքերը պետք է վերաբնակեցվեին Անատոլիա: Անատոլիայի մերձափնյա տարածքներում, որը բնակեցված էր հույներով, պետք է հաստատվեր միջազգային վերահսկողություն և դրվեր Զուհաստանի տրամադրության տակ որպես ենթահոգատար տարածք: Պաղեստինի, Միջագետքի և Արաբիայի համար հոգատար էր դիտվում Անգլիան, Սիրիայի համար՝ Ֆրանսիան: Հայաստանի, Կ. Պոլսի ու նեղուցների, Անատոլիայի հոգատար երկիրը չէր նշվում:⁵⁵

1919 թվականին ամերիկյան կառավարությունը մանրակրկիտ քննության ենթարկեց Օսմանյան կայսրությունը (Քինգ-Քրեյնի հանձնաժողով, Հարբորդի առաքելություն և այլն)՝ նրա հանդեպ մանդատ հաստատելու նպատակահարմարության և հնարավորության հարցը պարզելու համար: Այսպիսով, 1919 թվականի ամռանն ու աշնանը հետազոտվեցին Սիրիան, Անատոլիան, Հայաստանը, Անդրկովկասը:⁵⁶

Ալևիայտ է, որ Վիլսոնի ծրագրերը հակասում էին եվրոպական գլխավոր դաշնակից երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի Օսմանյան կայսրության տրոհման (զաղտնի) պայմանագրերին: Ուստի և նախագահը հաստատեց տվյալ պայմանագրերը անիրական համարող ամերիկյան դիվանագիտական թեզիսը:⁵⁷ Եվ հանդես եկավ Միջին Արևելքի արմատական վերակազմման հիմնավոր ու հեռատես ծրագրով:

Վիլսոնը հետևողական էր:

Ամերիկյան կողմի ճնշման տակ անգլիական պատվիրակությունը 1919 թվականի մայիսի 13-ին «Երեքի խորհրդի» (Վ. Վիլսոն, Դ. Լլոյդ Ջորջ, Ժ. Կլեմանսո) քննարկմանը ներկայացրեց Օսմանյան կայսրության տրոհման սխեման, որը նախատեսում էր Միացյալ Նահանգներին հանձնել Հայաստանի, Կ. Պոլսի և նեղուցների (Բոսֆոր և Դարդանեյ), Մարմարա ծովի ու մերձափնյա ոչ

մեծ տարածքի հոգատարությունը (մանդատը):⁵⁸ Միաժամանակ, սխեմայի մեջ առաջարկվում էր Անատոլիայի բաժանումը Ֆրանսիայի, Իտալիայի ու Զուհաստանի միջև: Վիլսոնն իր պաշտոնական պատրաստակամությունը հայտնեց ԱՄՆ-ի անունից ընդունել նեղուցների հետ միասին Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը, պայմանով, եթե ստացվի ԱՄՆ-ի Սենատի համաձայնությունը:⁵⁹ Ընդսմին, նախագահը դեմ արտահայտվեց Անատոլիայի բաժանմանը...

Լլոյդ Ջորջը նոր առաջարկում, որը ներկայացվեց «Երեքի խորհրդի» քննությանը, մայիսի 21-ին, հաշվի առնվեցին ամերիկյան պահանջները՝ «թեթև հոգատարությունը» Անատոլիային և Ույնիսկ «ժամանակավոր հոգատարությունը»՝ ռուսական Հայաստանին, Ադրբեջանին և Կովկասի ամբողջ շրջանին ընդհուպ խնդրի լրիվ լուծում:⁶⁰ Այսպիսով, քաղաքակրթությունների այս խառնարանում հայ ժողովուրդը, թվում է, դուրս էր պրծնում թուրքական գեղեցիկ և կարող էր, ի վերջո, վերականգնել իր հայրենիքը՝ աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը (301թ.), տևականորեն վայելելով ամերիկյան երիտասարդ ու կենսունակ ժողովրդավարության պաշտպանությունը: Սակայն, ուրիշ էին եվրոպական մեծերի հաշիվները: Մասնավորապես, Ֆրանսիան պնդեց Անատոլիայի հանդեպ ֆրանսիական հոգատարության նախագծի վրա, չէր քաբցնում Կիլիկիայի հանդեպ իր երկրի բացառիկ հետաքրքրությունները:

Ինչևէ: Դեռևս 1919 թվականի մարտի 7-ին Լլոյդ Ջորջի հետ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ նախագահ Վիլսոնի ընկեր ու հավատարմատար, հայտնի գնդապետ եղուարդ Հաուզը Հայաստանի ու Կ. Պոլսի հոգատարության հարցի առնչությամբ հայտնել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ էր իր վրա վերցնել Անատոլիայի «հսկողությունը»:⁶¹ Իսկ 1919թ. մայիսի 20-ին «Չորսի խորհրդի» (Վուդրո Վիլսոն, Դեյվիդ Լլոյդ Ջորջ, Ժորժ Կլեմանսո, Վիտտորիո Օռլանդո) նիստում նախագահ Վիլսոնը շարադրեց ԱՄՆ-ի պլանները Հայաստանի վերաբերյալ: Նա հայտարարեց. քանի որ Ռուսաստանը ջախջախվել է, ապա փոխվում է 1916թ. պայմանագրերի հիմքը (Վիլսոնը նկատի ուներ Սայքս-Պիկո համաձայնագիրը.- Լ. Շ.) և դա թույլ է տալիս «հայկական հարցը» դիտել ավելի լայն պլանով:

⁵⁵ Lansing R. The Peace Negotiations. A Personal Narrative, London, 1921, էջ 172-175.

⁵⁶ Howard H. N. The King-Crane Commission. An American Inquire in the Middle East, Beirut, 1963; "The King-Crane Report on the Near East. A suppressed official document of the US government". Editor and Publisher, LV. 27 (December 2.1922), I-XVII, նաև "Papers relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Conference, 1919". 13 vols. Vol. XII, էջ 747-848: "Report of the American Military Mission to Armenia. 16/X-1919. International Conciliation". June 1920. N 151, p. 275-312, "Foreign Relations", 1919, Vol. II, էջ 841-879; Խաչատրյան Յ. Յ. Ամերիկյան զինվորական առաքելությունը դեպի Հայաստան.- «Հայրենիք», 1940, N 1-3, 1941, N 4-7:

⁵⁷ Howard H. N. The Partition of Turkey, a Diplomatic History 1913-1923. Oklahoma, 1931, p. 231.

⁵⁸ Papers Relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Conference, 1919., Vol. V, p. 622.

⁵⁹ Նույն տեղը, էջ 614:

⁶⁰ Նույն տեղը, էջ 770-771:

⁶¹ Lloyd George D. The Truth About the Peace Treaties, 2 vols. London, 1938, vol. I, p. 228.

Վիլսոնը պահանջում էր Հայաստանի կազմի մեջ ընդգրկել նաև Կիլիկիան, քանզի այլ կերպ «Հայաստանը կկտրվի Միջերկրական ծովից»:⁶²

Քաղաքակրթական առումով ողջախոհ և հեռանկարային դիրքորոշումը չէր կարող ունենալ 1916թ. պայմանագրերը երկնած ֆրանսիական և անգլիական կողմերին: Սակայն, Գերմանիայի հետ «խաղաղության պայմանագիրը» դեռևս չէր կնքված և, խորքի մեջ, վիլսոնյան տեսակետը մերժող գլխավոր դաշնակիցները դեռևս պետք է հաշվի նստեին ամերիկյան դիրքորոշման հետ:

Ինչքան էլ տարօրինակ թվա, «14 կետերի» սեփական մեկնաբանությունն ունեին խոշոր եվրոպական տերությունների տարածայնությունների ու խուլ հակասությունների վրա հավերժորեն դրեյֆող թուրքերը: Նկատի ունենալով կայսրությունները չտրոհելու վիլսոնյան տեսակետը, հայ կանանց և անհաշիվ որբերի դահիճ, «արևմտականացած» Հալիդե Էդիպը հանդես է գալիս Թուրքիայի նկատմամբ ամերիկյան հոգատարության օգտին:⁶³ Սույն ճիզվիտը այն հույսն է հայտնում, որ Վիլսոնի «14 կետերը» թույլ են տալիս հուսալու, որ «թուրքերին կթողնվեն այն հողերը, որտեղ նրանք կազմում են անվիճելի մեծամասնություն (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)», ընդամին նկատի ունենալով, որ այդ հողերը հենց վերջերս ցեղային մաքրագործման («epuration ethnique») հետևանքով անայացած Հայաստանն են, ուստի և դաշնակիցները չեն գնա «Հայաստանի ստեղծմանը Թուրքիայի արևելքում և հարավում»:⁶⁴ Նշանակում է, կղաճան լուռ հանցակիցը թուրքական հանճարի ստեղծագործության Ցեղասպանության ակտի կիրառմանը որպես ՀԱՅՐԵՆԻՔ և ՄՇԱԿՈՒՅԹ կողոպտելու ու սեփականելու միջոցի: Սկսված էր, ինչպես և հասկանալի է, Մեծ ոճիրի արդյունքների իրացման և ուրացման դժվարին ու հաճելի շրջանը: Օրինակ, այսպես, «հայկական տարրից» 1915 թվականի մայիսին մաքրագործված հայկական երզնկա քաղաքի կառավարական շենքի «սանդուխթներու վրա», Հարբորդի առաքելությունը դիմավորելիս (1919 թ. սեպտեմբերի 23), «խոշոր գիրերով «Viva L'Art. 12 des Principes de Wilson» գրված լաթը կցուցադրվեր»:⁶⁵

Ուշագրավ է Կ. Պոլսի ամերիկյան կոմիսար Լ. Հեկի (Lewis Heck) 1919 թվականի հունվարի 4-ի հաղորդումը Ֆրանսիայում ամերիկյան դեսպանին առ այն, թե թուրքերը շատ են վախենում

⁶² Նույն տեղը, էջ 9:

⁶³ Halide Edib. The Turkish Ordial. London, 1928, p. 10-11.

⁶⁴ Նույն տեղը, էջ 3:

⁶⁵ Խաչատրյան Դ. Դ. Ամերիկյան զինվորական առաքելությունը դեպի Հայաստան.- «Հայրենիք», 1940, N 3, էջ 130:

խաղաղության վեհաժողովում դաշնակից գլխավոր տերությունների, բացառությամբ ԱՄՆ-ի, իրենց հանդեպ սպասվելիք չափազանց խիստ վերաբերմունքից և իրենք ապավինում են բացառապես Վիլսոնի ու նրա «14 կետերի» վրա:⁶⁶ Անշուշտ, թուրքերը վախենալու հիմք ունեին. անդամահատման սեղանի վրա էր ոճիրների մեջ թաղված ենիչերիների «վաթանը», իսկ վերնախավ կոչված թուրք կառավարիչների, զինվորականների ու մտավորականների գլխին կախված էր Անտանտայի գլխավոր երկրների Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915 թվականի մայիսի 24-ի հայտարարության սպառնալիքը, որով կոտորածների համար գլխավոր դաշնակից երկրները հրապարակավ պատասխանատու էին հռչակում օսմանյան պետությունն ու անձնապես կառավարության բոլոր անդամներին և տեղական այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին ոճրագործություններին, գործողություններ, որոնք որակվել էին որպես «ոճիր մարդկության և քաղաքակրթության դեմ»: Պարզ է, որ թուրքերը նպատակ էին դրել օգտվել XX դարի խոշորագույն քաղաքական գործչի ահռելի հեղինակությունից, ապականել մեծ մարդասեր-քրիստոնյայի անունն ու աշխարհի վերակազմման հուսատու ծրագիրը՝ բովանդակագրկելով այն սեփական մեկնաբանությամբ: Ու ամերիկյան հովանոցի տակ թաքնվելու նպատակով, ստեղծում են այսպես կոչված «Ազգային կոնգրես» և համանման այլ կազմակերպություններ, որոնք, այդուհանդերձ, մեծ ազդեցություն չեն կարողանում ձեռք բերել: Սակայն, այս կազմակերպությունների առկայությունը Վիլսոնին թույլ է տալիս ապացուցելու, որ թուրքերը գերադասում են ամերիկյան հոգատարությունը: Այդպիսով, թերևս «Վիլսոնի վարդապետությունը», իր ամբողջության մեջ, բացում էր հակասություններից բզկտվող Մերձավոր ու Միջին Արևելքի առջև իրավահավասար, անվտանգ և ներդաշնակ զարգացման հեռանկար, ստեղծում էր քաղաքակրթությունների սինխրոն երկխոսության նախադեպ: Իրոք որ «հարատև» խաղաղությունն այստեղ դառնում էր շոշափելի ներկայություն:

Բայց, սկսած 1919 թվականի երկրորդ կեսից, եվրոպական գլխավոր դաշնակից երկրները, երբ արդեն կնքված էր հաշտության դաշնագիրը Գերմանիայի հետ (28 հունիսի, Վերսալ), այլևս չվերադարձան մայիս-հունիսին քննարկված Թուրքիայի հանդեպ ամերիկյան հոգատարության նախագծին: Եվ վերցրեցին Կ. Պոլսի ու Անատոլիայի հանդեպ ամերիկյան հոգատարության վերաքննության հաստատուն ուղղություն: Այժմ խոսք կարող էր լինել միայն

⁶⁶ "Papers Relating to the Foreign Relations of the US. The Paris Peace Conference, 1919". Vol. II, p. 282.

Հայաստանի հոգատարության մասին: Հայաստանն այսպես առանձնացվեց և, բնականաբար, մեկուսացվեց Օսմանյան ընդհանուր թնջուկից, որն, ըստ էության, ամբողջության մեջ իրենով ծածկում էր Մերձավոր Արևելքը: Վատթարն այն էր, որ նույն շրջանում էր (1919թ. նոյեմբեր), որ ծայրակետին հասավ խզումը Վիլսոնի և հանրապետականների ղեկավարության միջև, երբ Սենատը հրաժարվեց վավերացնել Վերսալյան դաշնագիրն ու թույլ տալ Միացյալ Նահանգներին դառնալ Ազգերի դաշնակցության անդամ: [Վավերացման հասնելու երկրորդ փորձը, ծայրերի 2/3-ի գերազանցության պահանջով, անհաջողության մատնվեց 1920 թվականի մարտին]:⁶⁷ Առաջիկայում տապալվելու էր, ներքին, թե արտաքին ազդակների ճնշման տակ, վիլսոնյան խոյանքը դեպի համաշխարհային հզորության շողացող բարձունքներ, երևակայությունից զուրկ քաղթեմուն անըմբռնելի էր մնալու նախագահի մտքի թռիչքը, որը թերևս սեփական անձի ներքին ծալքերի հակասությունների մեջ խճճված Ջիզմունդ Ֆրոյդին առիթ էր տալու նախագահի անձը և մտային ուստյունները հետագայում տեղավորելու «հոգեվերլուծության» (պսիխոանալիզ) կասկածելի եզրահանգումների շրջանակներում: Մինչդեռ, Վիլսոնի մահից ինը տարի հետո ԱՄՆ-ի նոր նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը «հավելու» էր Վիլսոնի ժառանգությանը, ցավոք առանց թոմաս Վուդրո Վիլսոնի և առանց «Վիլսոնյան Հայաստանի»:

Վիլսոնը ծախողվեց:

Գլխավորը նրա ծախողման մեջ, նկատենք, այդուհանդերձ, եվրոպական գլխավոր դաշնակից երկրների ռազմական գերազանցության մեջ չէր, և ոչ էլ նույնիսկ նրանց բազմամիլիոն բանակների հզորության: Խարդավանքը (ինտրիգա) «եվրոպական համանվագի» գործողության մեխանիզմի մեջ էր: Վիլսոնը և Լլոյդ Ջորջը 1918 թվականին հայտարարեցին. «ցարիզմի կործանումը արմատապես փոխեց արևելյան խնդիրը՝ «գլանակը» կանգնեց, պայթեց պատերազմից ու հեղափոխությունից... Ռուսական վտանգը վերացավ: Առաջին հետևությունը՝ թուրքիան այլևս պետք չէ, թուրքիան իր հերթին ենթակա է ոչնչացման» (Ե. Ա. Ադամով): Զբացավ «եվրոպական համանվագը»: 1919 թվականի հունվարի 30-ին եվրոպական տերությունները հանդիսավոր կերպով հայտարարեցին. Օսմանյան կայսրությունը դադարեցրեց իր

⁶⁷ Ованнисян Р. США и Армения: мандат и границы, 1920г. - «Պատմա-բանասիրական հանդես», 1995, N 2, с. 120.

գոյությունը: Իսկ Վիլսոնն ազդարարեց. «Անցյալին վերադարձ չկա»: Այդպես, սակայն, թվում էր միայն:

Մինչ Վիլսոնը ուժերի բարդ հարաբերակցության մեջ ուրվագծում էր «կայուն համաշխարհային հավասարակշռություն», կարդինալ Ռիշելյեի հայրենակից Կլեմանսոն մարտնչում էր «ուժերի նոր հաշվեկշիռ» համար, մինչ Վիլսոնը պայքարում էր հանուն «միջազգայնորեն կազմակերպված աշխարհի», «իրավունքին ընդհանուր հավատարմության», Կլեմանսոն «իր առջև տեսնում էր միայն Ֆրանսիային», որի «նկատմամբ տածում էր նույն զգացմունքները, ինչ որ Պերիկլեսը Աթենքի. այն ամենը, ինչ որ գին ունի, ամփոփված է նրա մեջ, մնացածը ոչինչ չարժե...», որ «ուժի վրա հիմնված քաղաքականությունը անխուսափելի է» (Ջ. Մ. Քեյնս):

Փարիզի խաղաղության վեհաժողովում, գրում է քաջածանոթ Ջոն Մ. Քեյնսը, «համաշխարհային հարաբերությունների ապագա կառուցվածքի վերաբերյալ միմյանց միջև պայքարում էին երկու հակադիր պլաններ՝ Վիլսոնի *Տասնչորս կետերը* և Կլեմանսոնի *Կարթագենյան խաղաղությունը*: Սակայն, միայն նրանցից մեկն է, որ իրականացման իրավունքն ուներ...» (ընդգծումը իմն է, - Լ. Շ.):⁶⁸ Այն իր դաժանությամբ իր արտացոլումն էր գտնում թուրքական հարցի շուրջ ընթացող համաշխարհային դավերի շրջանակում՝ «վերսալյան գործընթացի» գլխավոր խարդավանքներում: Եվ ժամանակի ընթացքում սկսեց գերակշռել «Կլեմանսոնի *Կարթագենյան խաղաղությունը*». Եվրոպան հակվեց «երջանիկ անցյալին», շրջվեց դեպի անցյալի «մեծ տիպարները», դեպի «եվրոպական համանվագ», որի ծնունդն էր համաշխարհային առաջին սպանդը և բոլոր ժամանակների Մեծ ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը... Իսկ թուրքիան առաջիկայում Արևմուտքի համար ձեռք էր բերելու ռազմավարական ավանդական նշանակությունը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը դառնում էր *հնուտ բանաձև սեփական շահի տեսանկյունից ուժերի հավասարակշռությունը վերադասավորելու համար...*

⁶⁸ Кейнс Д. М. Экономические последствия Версальского мирного договора. Пер. с англ. 2-е изд. М.-Л., 1924, с. 25.

Մինչ նախագահի հայրենիքում նրան սպասում էր դաժան և անզիջում պայքարը խաղաղության դաշնագրի վավերացման, «ազգերի համաշխարհային խորհրդարանի» Ազգերի դաշնակցության ու Հայաստանի հոգատարության համար, Փարիզում իր վճռին էր սպասում «թուրքական թնջուկը»: Աշխարհի հզորները պետք է լուծեին՝ ա) Կ.Պոլսի և նեղուցների, բ) Օսմանյան կայսրության փոքրասիական տիրույթների, մասնավորապես, արևածոր Հայաստանի, գ) արաբական տարածքների Պաղեստին, Սիրիա, Միջագետք, ճակատագրերը: Անգլիան ու Ֆրանսիան, անտեսելով ԱՄՆ-ին, արագացրին իրենց քայլերը թուրքիան բաժանելու ուղղությամբ: Դեկտեմբերի 11-ին Լոնդոնում գումարվեց անգլո-ֆրանսիական համաժողովը, որտեղ քննվեցին մերձավորարևելյան նավթի, Կ. Պոլսի համատեղ գրավման, Անատոլիայում ազդեցության ոլորտների ձեռք բերման հարցերը: Իսկ 1920 թվականի փետրվարին, խաղաղության վեհաժողովի պաշտոնական փակումից (1920թ. հունվարի 21) անմիջապես հետո, Լոնդոնում, տեղի ունեցավ անգլո-ֆրանս-իտալական համաժողովը (Լլոյդ Ջորջ, Միլերան, Նիտտի): ԱՄՆ-ից մասնակցում էր միայն դիտորդ: Այս անգամ թուրքական հարցի վերաբերյալ ընդունվեցին կոնկրետ որոշումներ, որոնք այնուհետև ընկան Սան-Ռեմոյի (1920թ. ապրիլի 18-26) համաձայնության և Սևրի (1920թ. օգոստոսի 10) դաշնագրի հիմքում: Այստեղ արդեն պաշտոնապես մերժվեցին թուրքիային վերաբերող ամերիկյան առաջարկները, բացառությամբ Հայաստանի հոգատարության: Նախատեսվում էր, առանց սահմանները նշելու, Հայաստանը ստեղծել էրզրումի (Կարին), Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի (Բաղեշ) նահանգներում դեպի Սև ծով ելքով, որն իր չափերով արդեն շատ էր հեռու «Մեծ Հայաստանի» («Larger Armenia») վիլսոնյան նախագծից: Կիլիկիան անցնում էր Ֆրանսիայի «ազդեցության գոտի»:

Աշխարհում ռազմավարական հաշվեկշռի արմատական փոփոխության պայմաններում ԱՄՆ-ի համար «նախատեսվում» էր, մասնավորապես, Հայաստանի հոգատարության և նրա սահմանների որոշման հարցը: Նկատենք, որ ԱՄՆ-ի, որպես *հոգատարակիր* երկրի, վերաբերյալ առաջին հրապարակային խոսքը եղել էր դեռևս 1919 թվականի մարտի 7-ին, երբ Գերմանիայի զինաթափման հարցի քննարկման ընթացքում շոշափվել էր նաև թուրքիայի հարցը: Լլոյդ Ջորջը Կլեմանսոյի ներկայությամբ նախագահ Վիլսոնի «ամպաշտոն

խորհրդական» գնդապետ Հաուզին հարց էր տվել. կարո՞ղ է ԱՄՆ-ը իր վրա վերցնել Օսմանյան կայսրության, հատկապես Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը: Հաուզը պատասխանել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ է իր վրա վերցնել Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը, որ ԱՄՆ-ը կարող է նույնիսկ իրականացնել Անատոլիայի «ընդհանուր հսկողությունը»:⁶⁹

Նախագահ Վիլսոնն իր հերթին, փետրվարի 26-ին, արտաքին գործերի սենատական հանձնաժողովի հետ կոնֆերանսում, երբ քննվում էր նաև Հայաստանի հոգատարության հարցը,⁷⁰ Սպիտակ տանը հայտարարել էր. եթե ԱՄՆ-ը երբևէ հանձն առնի որևէ հոգատարություն Ազգերի դաշնակցությունից, ապա դա կլինի առաջին հերթին Հայաստանը:⁷¹ Եվ ահա, Սան-Ռեմոյում ընդունված ռազմավարության համաձայն, թուրքական պայմանագրի տեքստ պետք է մտցվեր հատուկ մի կետ, որը դաշնագիրը ստորագրած բոլոր կողմերին պարտավորեցնում էր կանխավ ընդունել այն սահմանները, որոնք պետք է «գծագրվեին» նախագահի կողմից օսմանյան նախկին նահանգների սահմաններում: Եվ դեռևս հոգատարության հարցը չլուծված, նախագահը, որպես յուրատեսակ պատասխան Դաշնակիցների գերագույն խորհրդի առաջարկի, ստեղծել էր հատուկ կոմիտե՝ գծելու համար ապագա («Սևրյան») Հայաստանի սահմանները: Որոշումը պետք է կայացվեր «բանականության սահմաններում»՝ հիմնված *ազգագրական* (էթնիկական), *աշխարհագրական*, *տնտեսական*, *ռազմավարական* և այլ նկատառումների վրա: «Կոմիտեի այդ աշխատանքի մեջ էլ ստեղծվել է «Վիլսոնյան Հայաստանի» ուրվագիծը»:⁷²

...1920թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի խորհրդաժողովը որոշում էր դիմել նախագահ Վիլսոնին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հոգատարությունը ստանձնելու առաջարկով,⁷³ իսկ ձախողման դեպքում՝ հանդես գալ Հայաստանի և թուրքիայի միջև սահմանազատման իրավարար (արբիտր) հիշյալ նահանգներում: Հայաստանի կառավարությունը ևս ԱՄՆ հոգատարության հաստատման ուղղությամբ լայնածավալ աշխատանք էր տանում:

⁶⁹ Lloyd George D. The Truth About the Peace Treaties, p. 288.

⁷⁰ Logan R. W. The Senate and the Versailles Mandate System, N. Y., 1945, p. 54.

⁷¹ America as Mandatory for Armenia, N. Y., 1919, p. 26.

⁷² Ованнисян Р. США и Армения: мандат и границы, 1920 г., с. 119.

⁷³ Batsell W. R. The United States and the System of Mandates. N. Y., 1925, p. 271.

Ամերիկյան կողմի հետ նա Փարիզում պատրաստել էր ԱՄՆ-ՀՀ համաձայնագրի նախագիծ (1919թ. հուլիսի 18) հոգատարության հարցի դրական լուծման դեպքում:⁷⁴ 1919 թվականի փետրվարի 4-ին Եվրոպա և ԱՄՆ էր գործուղվել, նույն առաքելությամբ, ՀՀ առաջին (Նախկին) վարչապետ Հովհաննես Քաջազնունին:

1920թ. մայիսի 17-ին Վիլսոնը Փարիզում ԱՄՆ-ի դեսպանի միջոցով Անտանտայի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝ լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը (միջնորդ դատավոր.- Լ. Շ.)⁷⁵, և մայիսի 24-ին դիմում է ԱՄՆ-ի Կոնգրեսին ուղերձով՝ Հայաստանի հոգատարությունը ընդունելու առաջարկով:⁷⁶ Վիլսոնը նկատելով, որ Կոնգրեսի մեծամասնությունը հանդես է գալիս Հայաստանի հոգատարության դեմ, այն հիմնավորումով, թե ԱՄՆ-ը Հայաստանում չի կարող պահել 100 հազարանոց խոշոր բանակ, ինչպես գտնում էր Հարբորդի առաքելությունը, հարցնում է ռազմական փորձագիտական կարծիք՝ հոգատարությունը իրականացնելու մասին: Նոր հաշվարկով Հայաստանում ԱՄՆ-ի հոգատարությունը իրականացնելու համար բավարար է դիտվում 27 հազար մարդը, պայմանով, որ երեք տարի հետո այն հասցվի մինչև 10 հազար մարդու: Սակայն, այդ քայլը ևս հաջողություն չի բերում նախագահին:

Հայաստան «փորձաքարը. Վիլսոնը՝ իրավարար

ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեն 1920 թվականի մայիսի 27-ին պատրաստում է մի բանաձև, որով 4 դեմ, 11 կողմ ձայնով Կոնգրեսի երկու պալատներին էլ հանձնարարում է Հայաստանի հոգատարությունն ստանձնելու իրավունք գործադիր իշխանությանը չտալ: Որպես կատարում հանձնարարականի, Սենատը երկար վիճաբանությունից հետո, 23 դեմ, 52 կողմ ձայնով, հուլիսի 1-ին ընդունում է հանձնախմբի նախագահ (հանրապետական) Լաջի (Henry Cabot Lodge) բանաձևը, որը «հարգանքով կիրառարկի նախագահին տալ իրավասություն՝ ընդունելու Հայաստանի հոգատարությունը»:

⁷⁴ Նախագիծը տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 2, էջ 32-34:

⁷⁵ "Foreign relations of the U. S. 1920", Vol. III, p. 783, 793.

⁷⁶ Logan R. W. The Senate and the Versailles Mandate System, p. 97.

ԱՄՆ-ում այսպես տապալվում է Վուդրո Վիլսոնի «Հայաստանի հոգատարության» ռազմավարությունը: Այստեղ ևս, ի վերջո, հաղթում է «Կլեմանտյի կարթագենյան խաղաղությունը»: Արևմուտքը անկասելիորեն մղվում է ուժերի հավասարակշռության նոր հարթություն: Հայ գիմվորականության կողմից Կարսի ամրոցը «հաջողությամբ» Կարաբեքիրին հանձնելուց հետո անգլիական «Daily Herald»-ը 1920 թվականի նոյեմբերի 13-ի համարում գրում է. «Սկզբնապես պլանը ամփոփված էր Վրաստանն ու Հայաստանը Բաքուն գրավելու համար օգտագործելու մեջ: Սակայն Քեմալ փաշան իրեն ցույց տվեց ավելի ուժեղ, քան դա սպասում էին: Թուրքական բանակը մխրձվեց Հայաստանի սիրտը: *Դրանով վերջանում է հին քաղաքականությունը* (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): Պարզ է, որ թույլ Հայաստանը չի կարող Բաքվից դուրս մղել կարմիրներին: Ո՞վ կանի դա: Ինչո՞ւ ոչ Քեմալը: Պետք է ճանաչել Քեմալին, նրան տալ փոխհատուցում... և նա կհամաձայնի վճռել կարմիրներին Բաքվից»:⁷⁷ Անշուշտ, Քեմալը կարմիրներին Բաքվից չվճռեց և չէր էլ պատրաստվում վճռել: Քեմալն էր 1920 թվականի ապրիլի 26-ին Լենինին հղած իր նամակով** առաջարկում իրար միջև բաժանել Հայաստանի Հանրապետությունը (կարդա՝ Արևելյան Հայաստանը), փոխարենը նվիրաբերելով Բաքուն: Իսկ Արևմուտքը Սևրին դավաճանելուց հետո և լքելով Հայաստանը, ըստ էության, կացնահարեց արևմտյան քաղաքակրթության ԱՌԱՋԱԴԻՐՔԻ հիմքերը տեղում, բացելով վերջինիս *անընդհատ* (պերմանենտ) նահանջի ճանապարհը Առաջավոր Ասիայում և Միջին Արևելքում, ստեղծելով տարածաշրջանում քաղաքակրթությունների անհավասարակշռությունն ու նրանց հավանական բախման անկանխատեսելի նախադեպ, հեռանկարի մեջ ցանցելով ռազմավարական աղետի (կատաստրոֆա) թունավոր սերմեր, ինչի մասին վերջին շրջանում հիշեցնում է պրոֆ. Սամուել Հանթինգթոնը (Samuel P. Huntington): Այս առումով, սակայն, պարզվում է, Հանթինգթոնը առաջինը չէ: Հայաստանի հոգատարության հարցի քննարկման ժամանակ, 1920թ. հունիսի 1-ին Արկանզասից սենատոր Ջոզեֆ Ռոբինսոնը ասում էր. եթե Կոնգրեսը մերժի նախագահի Վիլսոնի առաջարկը, ապա «*քրիստոնեությունը* (կարդա՝ արևմտյան

⁷⁷ Шпилькова В. И. Империалистическая политика США в отношении Турции. 1914-1920 гг., М., 1960, с. 131.

քաղաքակրթությունը.- Լ. Շ.) *իր արևելյան ճակատում կստանա ջախջախիչ հարված*»:

Թերևս, այս նկատառումով էր, որ Թոմաս Վուդրո Վիլսոնը, առաքյալի պայծառատեսությամբ, հավատալով Հայաստանի լուսե ապագային, Հայաստան-Միացյալ Նահանգներ անխաղի բարեկամությանը, միջազգային իրավունքի օրենսդրի արդարամտությամբ ու վստահ ամերիկյան ժողովրդի ժողովրդավար *կամքին*, կատարեց հանձն առած *իրավարարի* (arbitrator) պարտականությունը՝ սահմանափակված (այդուհանդերձ՝ հօգուտ Թուրքիայի) Վան, Բաղեշ (Բիթլիս), Կարին (Էրզրում), Տրապիզոն նահանգներով: Տեղին է նշել, որ իրավարարության բնույթով իրավարարի որոշումը կողմերն ընդունում են «ապրիորի, այն պարտադիր է նրանց համար և վավերացման (ռատիֆիկացիա) կարիքը չունի» (Յու. Բարսեղով): Սևրի դաշնագրի ստորագրումը՝ կատարված աշխարհի ազգաբնակչության 66 %-ը ներկայացնող 14 երկրների կողմից,⁷⁸ ստեղծել էր միջազգային բազմակողմանի պարտավորություն՝ ընդունել իրավարարության պայմանները: Ընդամեն, այդ կարգի պարտավորությունների վերանայումը «հնարավոր է միայն բոլոր կողմերի և հատկապես այն կողմի, որի օգտին կայացվել է իրավարարական որոշումը, համաձայնությամբ» (Յու. Բարսեղով), ինչը, բնականաբար, Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո, մասնավորապես ՀՀ կողմից, տեղի չի ունեցել:

Վիլսոնը, մշակված ընթացակարգի համաձայն, իրավարարության առաջարկն ստանալուց յոթ ամիս հետո, իսկ հոշոտված Հայաստանի բռնի խորհրդայնացումից յոթ օր առաջ, 1920 թվականի նոյեմբերի 22-ին կայացրեց ու հռչակեց իրավարարական իր վճիռը,⁷⁹ որը, ինչպես ամեն մի իրավարարական վճիռ, ծնել ու ծնում է «որոշակի իրավական հետևանքներ նրա մասնակիցների համար»: Գլխավոր դաշնակից երկրները, երբ դիմում էին իրավարարության, տվյալ դեպքում ևս, անշուշտ, համաձայն էին, որ «իրավարարի կարգադրությունները, որքանով այն վերաբերում է իրենց, լինելու են վերջնական և, համապատասխանաբար, պայմանավորվեցին հարգել այդ իրավաձևավորող միջազգային

⁷⁸ Սահակյան Տ. Ղ. Վուդրո Վիլսոն. մարդը և քաղաքագետը, Եր., 2006, էջ 63:
⁷⁹ “Papers Relating to the Foreign Relations of the U. S. The Paris Peace Conference 1919”, Vol. III, p. 790-804.

համաձայնությունը» (Յու. Բարսեղով): Ընդամեն, նախագահ Վիլսոնի բացատրությամբ, իրավարարական վճիռը կայացվել է ամենահավաստի տեղեկատվության (information) և «արդարության բարձրագույն շահերի գիտակցումով»:⁸⁰

Վիլսոնի վճիռը պետք է հրապարակվեր դեկտեմբերի 17-ին, սակայն անգլիական կողմը, որը որոշ տեղեկություններով քեմալականների հետ շփման ուղիներ էր որոնում դեռևս 1919 թվականի սեպտեմբերից⁸¹ և նրանց հետ գործարքի մեջ էր 1920 թվականի աշնանը, քաղաքական ճնշում էր գործադրում ամերիկյան կողմի վրա վճռի հրապարակումը կանխելու համար, իբրև թե մինչև «որոշ նկատառումների» ներկայացում: Անգլիացիներին, սակայն, հաջողվեց միայն վճռի հրապարակումը որոշ ժամանակով հետաձգել: ԱՄՆ-ի 28-րդ (դեմոկրատ) նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնի իրավարարական վճիռը հրապարակվեց 1921 թվականի հունվարի 22-ին Վաշինգտոնում, դրանով իսկ ընդգծելով վճռի *անշրջելիությունն* ու *անբեկանելիությունը*^{***} (Հայաստանի Հանրապետությունն արդեն բռնազավթվել ու խորհրդայնացվել էր), հայ ժողովրդի՝ իր հայրենիքի հանդեպ, միջազգայնորեն հռչակված սահմաններում, իրավունքի *անժամանցելիությունն* ու *վերանցականությունը* (transcendental):

Այսպիսով, ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնը (դեմոկրատ, կալվինիստ), 20-րդ դարի բարոյապես անբասիր ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ, անկաշառ և նյութապես անշահախնդիր բարեփոխիչը, խորունկ ու խստապահանջ կրոնասերը, գաղափարապաշտն ու քաղաքական իրապաշտը՝ պայծառ մտքով, կրթոտ, երբեմն անկոտրում մարտիկն այն բանի, ինչը համարում էր բարի գործ (Կլաուս Շվաբե), մեկնելով անվտանգ աշխարհակարգի ու քաղաքակրթության արմատական ու հեռագնա շահերից և իրավագիտակցության բարձր սկզբունքներից, անկողնում գամված վիճակում էլ (1919 թվականի հոկտեմբերի 2-ին ուղեղի արյունազեղման հետևանքով անդամալուծվել էր նախագահի աջ կողմը) մնաց հարազատ ՀԱՅԱՍՏԱՆԻ իր տեսլականին, թերևս, որպես *միակ և իրական հուշարձանը* Հայաստանի կորուստների ու

⁸⁰ “Papers Relating to the Foreign Relations of the U. S. The Paris Peace Conference”, p. 796.
⁸¹ *Бюллетень НКВД*, 1921, N 104, с. 28.

տառապանքների, հայ ժողովրդի՝ քաղաքակրթությանը մատուցած հազարամյա անգնահատելի ծառայությունների, Դաշնակիցների հաղթանակին բերած նշանակալի մարտական նպաստի...

3. Գ. (P. S.) - Վիլսոնը կռահում էր պատմական հեռանկարը:

Կենսագիրը գրում է. թողնելով Սպիտակ տունը, նա հաճախ, նստած բուխարու դիմաց՝ Սուրբ Գիրքը ձեռքին, հիշում էր Փարիզը, այն, թե ինչպես կլեմանտոն ու Լլոյդ Ջորջը շողջորթելով թախանձում էին իրեն: Մահվանից ոչ շատ առաջ, նախկին նախագահն, ի խորոց սրտի, ասում էր, որ ինքը ցանկանում է ապրել մինչև այն պահը, երբ Գերմանիան վերջնականապես կջախջախի Ֆրանսիային:⁸²

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Վիլսոն Վուդրո - ԱՄՆ-ի 28-րդ նախագահ (1913-1921), Ազգերի լիգայի ռեզկոնցիդոն ու հոգևոր հայրը, Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր (1919թ.): XIX դարի վերջի – XX դարի սկզբների ամերիկյան ամենաազդեցիկ քաղաքագետը, փիլիսոփայության դոկտոր, Պրինստոնի համալսարանի իրավագիտության և քաղաքատնտեսության պրոֆեսոր: Մի շարք պետաիրավագիտական մենագրությունների հեղինակ:

Հայկական հարցում հանդես էր գալիս որպես Ուիլյամ Գլադստոնի ուղեգծի հետևողական հետևորդ:

Նոր աշխարհակարգի հաստատման գործում փորձում էր կիրառել ժողովրդավարության, հավաքական անվտանգության և ինքնորոշման համամարդկային սկզբունքներն ու արժեքները: Գործնական քաղաքականության ոլորտում զուգորդում էր բավականին արդյունավետ գաղափարապաշտությունն (իդեալիզմ) ու օգտապաշտությունը (պրագմատիզմ):

1. Այդուհանդերձ, «սրիկայական» այդ դաշնագրի տրամաբանության շրջանակում էլ տեղի ունեցավ Հայաստանի հոշոտումը, 1920 թվականի աշնանը, Քեմալ-Լենին տանդեմի կողմից:

2. Նախագահ Վիլսոնի ընդունած սահմանները՝ Վաշինգտոնում ՀՀ դեսպան Գարո Փաստրմաճյանի կողմից ներկայացված և պաշտպանված գիծը, նոտավորապես նույնն էին,

ինչ նախատեսել էր Փարիզի ազգային համագումարի (1919թ. փետրվարի 24-ապրիլի 22) սահմանորոշ հանձնախոււմը:⁸³

** «Եթե խորհրդային ուժերը,- գրում է իր նամակի 2-րդ կետում Քեմալն իր երկվորյակին՝ Լենինին,- ծրագրում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության միջոցով, Վրաստանին հարկադրել Միության մեջ մտնելու եւ ձեռնամուխ լինելու Կովկասի տարածքից անգլիացիների վտարմանը, ապա թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում կայսերապաշտ (իմպերիալիստական) Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և հանձն է առնում հարկադրել Ադրբեջանի հանրապետությանը մտնելու խորհրդային պետության կազմում»:

*** ԱՄՆ-ում նշում էին. «այնքանով, որքանով դա վերաբերում է ԱՄՆ-ին և Դաշնակիցներին, հրաժարումը Սևրի դաշնագրից կամ նրա չեղյալ հայտարարումը չի կարող ազդել Վիլսոնի իրավարարական վճռի վրա, քանզի Նախագահի որոշումը հենվում է ոչ թե Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի դաշնագրի վրա, այլ Դաշնակիցների Գերագույն խորհրդի 1920թ. ապրիլի 26-ի հրավիրագրի: Խորհրդի հրավիրագիրը և Սևրի պայմանագիրը միմյանց հետ կապված չեն և միմյանցից անկախ են: Հրավիրագրում Նախագահին ոչ մի պայման առաջադրված չէ»:⁸⁴

⁸² Lawrence D. The True Story of Woodrow Wilson. N.Y., 1924, p. 354:

⁸³ Փափազյան Վ. Իմ հուշերը, Կահիրե, 1957, հ. III, էջ 47:

⁸⁴ Lausanne Treaty. Turkey and Armenia. N.Y., 1926, p. 166.

ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ

1918. ԲՈՑԿԼՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԸ
ՎԵՐՋՆԱՓՈՒԼՈՒՄ (ՀԱՅ ԶԻՆԱԿԱՆ ՈՒԺԸ ԻՐ ԿԵՐՊԻ ՄԵՋ)

«Չես անցնի.
այստեղ մեր հոգին
պարիսպ է գրանիտի»
Ավ. Ահարոնյան

1918. ԳԵՐՄԱՆԻԱՆ VA' BANQUE-Ի ՃԱՆԱՊԱՐԳԻՆ

1916 թվականի օգոստոսի 29-ից գերմանական բանակի փաստացի հրամանատար գեներալ Էրիխ ֆոն Լյուդենդորֆը գնահատելով Կենտրոնական տերությունների և Անտանտի երկրների ուժերի ընդհանուր հարաբերակցությունը, այն նպաստավոր էր համարում Կենտրոնական տերությունների համար: «1917-1918 թվականների սահմանագծին իրադրությունը ցամաքում, Ռուսաստանի պատերազմից դուրս գալու հետևանքով», - իր հուշերում

* Նպատակասլաց է ու աննահանջ գերմանական ռազմագիտական միտքը: 1914 թվականի սեպտեմբերի 5-ից 9-ը Մառնի (Ֆրանսիա) ճակատամարտում պարտվելուց հետո փոխվեց ոչ միայն գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ Յելմուտ ֆոն Մոլտկեն (Helmuth von Moltke) (1914թ. սեպտեմբերի 14) գեներալ Էրիխ ֆոն Ֆալկենհայնով (Erich von Falkenhayn), այլ առաջացավ անհրաժեշտություն՝ փոխարինելու Blitzkrieg («սրընթաց պատերազմի տեսություն») -ը նոր ռազմավարական հայեցակարգով:

Գլխավոր շտաբի նոր պետ ֆոն Ֆալկենհայնը 1914 թվականի վերջերին ռայխսկանցլեր Թեոբալտ ֆոն Բեթման-Յոլվեգին (Theobalt von Bethman Holweg) ուղղակի հայտարարեց, որ Գերմանիան չի կարող շահել Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեմ համատեղ պատերազմը գեներալ ուժով: Դրա համար նա պնդեց առաջին հերթին Ռուսաստանի հետ անջատ (սեպարատ) խաղաղության համաձայնության վրա և առաջադրեց «ուժասպառման/հյուծման (изматывания) ռազմավարությունը» (Տես Прусско-германский генеральный штаб, 1640-1965. К его политической роли в истории (Dietz

գրում է Լյուդենդորֆը,- մեզ համար դասավորվում էր ավելի շահավետ, քան դրանից մեկ տարի առաջ: Մենք նորից, ինչպես 1914 և 1916 թվականներին, կարող էինք մեր առջև դնել՝ լուծել պատերազմի խնդիրը ցամաքում հարծակվելու միջոցով: Ուժերի հարաբերակցությունը մեզ համար դասավորվում էր այնպես

Verlag, Berlin 1965). Пер. с нем. М., 1966, էջ 159): «Մինչ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան միասնական են, մենք չենք կարող մեր հակառակորդներին հաղթել՝ արժանապատիվ խաղաղության հասնելու համար: Ընդհակառակը,- պարզաբանում էր ֆոն Ֆալկենհայնը,- ընդառաջ կգնայինք մեր ուժերը մաս-մաս սպառելու վտանգին: Կամ Ռուսաստանին, կամ էլ Ֆրանսիային պետք է անջատել: Եթե (ինչին պետք է ձգտել առաջին հերթին) մեզ հաջողվի հարկադրել Ռուսաստանին գնալ խաղաղության, Ֆրանսիայի ու Անգլիայի հետ մենք կարող էինք հաշվեհարդար տեսնել այնպես, որ նրանց կթելադրեինք խաղաղություն... Դարկ է վստահորեն սպասել, որ եթե Ռուսաստանը կնքի խաղաղություն, ապա կթուլանա (сначесть) և Ֆրանսիան: Այդժամ, չցանկանալով, Անգլիան կենթարկվեր մեր կամքին ամբողջությամբ, մենք դատաստան կտեսնեինք նրա հետ. հենվելով Բելգիայի վրա, շրջափակման միջոցով մենք նրան սովամահ կանեինք, եթե դրա համար պահանջվեին ամիսներ» [Տես Բեթման-Յոլվեգի նամակը <...> գեներալ Ֆալկենհայնի ռազմաքաղաքական դրույթների գնահատման շուրջ, Գերագույն հրամանատարության գլխավոր ռազմակայան: 1914 թիվ, 19 նոյեմբերի] (Նույն տեղում, էջ 464):

Ըստ տվյալի, ամբողջությամբ համաձայն լինելով Գլխավոր շտաբի պետի հետ, Բեթման-Յոլվեգը գրում է. «Եթե Ռուսաստանին չհաջողվի պոկել, ապա ռազմական միջոցներով մեր ոչ մի հակառակորդի հանդեպ մենք գերազանցության չենք հասնի: Մենք ընդառաջ ենք գնում վտանգին» (Նույն տեղում, էջ 466): Ավելին, «ես չեմ կարող շեղվել գեներալ ֆոն Ֆալկենհայնի՝ Ռուսաստանի հետ անջատ համաձայնագիր կնքելու շարունակական պնդումից», հստակ դիրքորոշում է հայտնում ռայխսկանցլերը: «Դրա հնարավորությունները պետք է, նվազագույնը, մտածվեն մինչև վերջ (ընդգծումը իմն է. - L.C.)» (Նույն տեղում, էջ 468):

Եվ... մտածեցին ու գտան... Ռուսաստանի բոլշևիկներին՝ Վոլոդյա Ուլյանով-Լենինի գլխավորությամբ: [Այս մթին պատմության հետաքրքիր ելևէջների մասին տես Նավասարդյան Վ., Նեղուցները (Վոսփոր և Դարդանեյ). Թրքական ջրուղիները և Դայ Դատը, Գահիրե, 1947, էջ 135-194]: Իսկ Ռուսաստանի քայքայումը, իր հերթին, թույլ տվեց Լյուդենդորֆին 1918 թվականի սկզբներին «նորից իր ձեռքը վերցնել Արևմուտքում գործողությունների նախաձեռնությունը»:

բարեհաջող, ինչպես երբեք»⁸⁵: Թվում է, Գերմանիայի ռազմատնտեսական հզորությունն ու պրուսական միլիտարիզմի նպատակասլացությունը նման հարցադրման հիմք տալիս էին: Լոնդոնում ԱՄՆ դեսպանը 1917 թվականի հուլիսին գրում էր. «Գերմանիան հաղթում է: Նրանք վերջին շրջանում այնքան տանկերներ են ջրասույզ արել, որ այդ երկիրը [Մեծ Բրիտանիան] շատ շուտով կարող է հայտնվել վտանգավոր իրավիճակում՝ հնարավոր է վառելանյութը չհերիքի թագավորական նավատորմին... Դա շատ լուրջ վտանգ է»⁸⁶:

Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը 1918 թվականին ձգտում է, ուստի և, իրականացնել վիթխարի ռազմավարական ծրագիր. Ռուսաստանին անջատ (սեպարատ) հաշտության դաշնագրի պարտադրանքը (Բրեստ-Լիտովսկ, 1918թ., մարտի 3) որպես նման ծրագրի իրականացում, թվում է, թույլ էր տալիս Արևմուտքում, մինչև ամերիկյան թարմ ուժերի ժամանում**, մինչ կսպառվեին Գերմանիայի մարդկային և նյութական միջոցները, ջախջախել ֆրանս-անգլիական զորքերը և դրանով իսկ հաղթականորեն ավարտել աշխարհամարտը:

Լյուդենդորֆը փետրվարի 13-ին գլխավոր շտաբի մտահղացման մասին հայտնում է կայզեր Վիլհելմ 2-րդ ին և կայզերական կանցլերին. «Վճռական հարվածը արևմուտքում ամենահսկայական ռազմական խնդիրն է, որը երբևէ մեկի կողմից առաջադրվել է որևէ բանակի և որը Ֆրանսիան ու Անգլիան ապարդյուն կերպով փորձեցին լուծել անցած երկու տարիների ընթացքում... այստեղ սարսափելի պայքար է լինելու, որը կսկսվի մի տեղամասում, կշարունակվի մյուսներում, պահանջում է շատ ժամանակ և լինելու է շատ ծանր, սակայն կավարտվի հաղթականորեն... այդ գործողությունը այն վերջնական նպատակն է, որին մենք ձգտում էինք»: «Շետագա հարձակումը մեզ համար

⁸⁵ Людендорф Э., Мои воспоминания о войне 1914-1918 гг. Пер. с нем., т. 2, М., 1924, с. 114.

⁸⁶ «»⁸ А. Ергун Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть. Пер. с англ., М., 1999, с. 194-195:

** «1918 թվականի մարտից,- գրում է Ա. Ա. Ստրոկովը,- սկսվում է ամերիկյան զորքերի գանգվածային ժամանումը Ֆրանսիա՝ ամիսը շուրջ 250-300 հազար մարդ: Մինչև 1918 թվականի հուլիս տեղափոխվել էր շուրջ 1 մլն. մարդ: Մինչև 1918 թվականի մարտի գերմանական հարձակումը Ֆրանսիայում ԱՄՆ զորքերի թիվը հասավ 300 հազար մարդու» (Տե՛ս Строчков А. А., Вооруженные силы и военное искусство в первой мировой войне, М., 1974, с.з 514):

կապահովեր նախաձեռնությունը»: Արիատես ռազմամուլը ազդարարում է ի տես աշխարհի. «բանակը կենտրոնացած է և լինելով լավ պատրաստված, ձեռնամուխ է լինում «պատմության մեջ խոշորագույն խնդրի» լուծմանը»⁸⁷:

Գերմանական գլխավոր շտաբի տեսակետը հիմնավորվում է ռազմագիտության անգլիացի հայտնի պատմաբան և տեսաբան Բեզիլ Յենրի Լիդլը Չարտի վերլուծություններով: «Չամաշխարհային պատերազմի միջին տարիները,- գրում է նա,- ռազմական իմաստով նիհար Յերակեսի պայքարն էր հզոր Կերբերի հետ: Թվային հարաբերակցությամբ գերմանական միությունը ավելի թույլ էր, սակայն գլխավորվում էր մի գլխով, այն դեպքում, երբ Անտանտը թվապես ավելի ուժեղ էր, սակայն նրա կառավարմանը մասնակցում էին չափից ավելի շատ գլուխներ: Չաշվի առնելով իր բացառիկ բարձր կորուստները, ջանքերի փոշիացումը և Ռուսաստանի անդամալուծությունը՝ 1917 թվականի վերջերին Անտանտը բավել էր դառը փաստի հետ, որ ուժերի թվային հարաբերակցությունը փոխվել է ոչ իր օգտին և պետք է անցնեն շատ տարիներ, մինչ ամերիկյան նոր զորամասերի սպասվող հոսքը չի փոխի նորից ուժերի հարաբերակցությունը դեպի լավը»⁸⁸: Ընդսմին Լիդլը Չարտը 1918 թվականի գերմանական վճռական գործողությունների պարտադրանքի աղբյուրը տեսնում էր տնտեսական գործոնի մեջ. «Յենց տնտեսական ճնշումն էլ [Անտանտի կողմից – Լ.Շ.] ոչ միայն դրդեց, այլև հարկադրեց Գերմանիային 1918 թվականին նախաձեռնել մի հարձակում, որը անհաջողության դեպքում նրա համար կդառնար ինքնասպանություն»⁸⁹: Չէ որ 1918 թվականին Գերմանիայի տնտեսությունը խիստ «հյուծվել» էր, «իսկ շրջափակման պինդ սեղմվող օղակը շարունակում էր թուլացնել նրան, չնայած բռնազավթված Ռումինիայից և Ուկրաինայից տնտեսական ռեսուրսների ուշացած փոխադրմանը»⁹⁰:

Ահա այս ընդհանուր ռազմաքաղաքական իրականության մեջ և նրա շրջանակներում կիրառվեց մի մոտեցում, որը ռազմագիտական գրականության մեջ զնահատվել է որպես «va' banque»-ի («ծայրահեղ ռիսկի») ռազմավարություն, «ինքնասպան հարձակում» (Լիդլը Չարտ), «նուլեխաղի (ազարտ)

⁸⁷ Людендорф Э., Мои воспоминания о войне 1914-1918 гг., Сп. 2, с. 158.

⁸⁸ Лиддел Гард Б., Правда о войне 1914-1918 гг. Пер. с англ., М., 1935, с. 303.

⁸⁹ Лиддел Гард Б., Стратегия непрямых действий. Пер. с англ. М., 1957, с. 270.

⁹⁰ Նույն տեղում, էջ 271:

ռազմավարություն»։ «Դուք խաղում եք վա-բանկ*** (ընդգծումը իմն է.- L.C.)։ Դուք հույս եք դնում ստորջրյա պատերազմի վրա»,- 1917 թվականի օգոստոսին զայրանում-զգուշացնում է գերմանական կառավարությանը Ավստրո-Յունգարիայի կառավարության նախագահ Օտտոկար Չերնին⁹¹։ Սակայն, Գերմանիան որոշում է անպայմանորեն հաղթել հակառակորդին յուրահատուկ գործելաձևով. գեներալ ֆոն Կուխլը, ամփոփելով 1918 թվականի ռազմավարական անցուդարձը, գրում է. «Նկատի առնելով այն, որ վերջնական լուծման հնարավոր չէր հասնել, 1918 թվականին չէր մնում անել ոչինչ, քան թշնամուն հարկադրել խաղաղության՝ մասնակի հարվածներով։ Դրա համար պետք էր սահմանափակել քաղաքական նպատակները»⁹²։

Իրադրությունը սրվում էր և հատուկ դաժանություն ձեռք բերում նրանով, որ Գերմանիայի դաշնակիցների մարտունակությունը պահպանվում էր «բացառապես Գերմանիայի համառությամբ» և «Արևմտյան ճակատում հաղթանակի հույսով»⁹³։ Հետևապես, երիցս անկեղծ էր Լյուդենդորֆը, երբ գրում էր. «Պատերազմը ձեռք բերեց անզսպորեն հանդուգն մոլեխաղի բնույթ»⁹⁴։ Եվ այդ ճանապարհով Գերմանիան փորձում էր 1918 թվականին ձեռք բերել «պատերազմի իրական նպատակը»՝ «ընկճումը հակառակորդի դիմադրելու կամքի» (Լիդլը Հարտ)։ Այս էր, ըստ էության, 1918 թվականի գերմանական մտահղացման գաղտնիքն ու իմաստը։

Այս նպատակով իրականացվեց երեք հաջորդական հարձակողական գործողություն։

1918 թվականի մարտի 21-ին սկսվեց խոշորագույն հարձակումը՝ առաջինը Արևմտյան ճակատում՝ Պիկարդիում։ Խնդիր էր դրված Ամենի ուղղությամբ հուժկու հարվածով տարանջատել ֆրանս-անգլիական զորամիավորումները, ջախջախել անգլիական զորքերին ու դուրս գալ ծովափ (Լա-Մանշ նեղուց)։ Հակառակորդի պաշտպանական համակարգ մխրճվելով շուրջ 60 կմ, այդուհանդերձ, ռազմավարական խնդիրը չկատարվեց։ Ծեղքվածքը փակվեց դաշնակիցների զորքերով։ Ապրիլի 9-ին գերմանացիները նորից անցան հարձակման, այս անգամ Ֆլանդրիայում՝ Լիս գետի վրա, և

*** **Վա-բանկ** – նշանակալի վտանգի դիմել, հախուռն, գործել վտանգելով բոլորին։

⁹¹ О»^А Прусско-германский генеральный штаб, 1640-1965. К его политической роли в истории. Пер. с нем., М., 1966, с. 187.

⁹² Кюль Д., Дельбрюк Г., Крушение германских наступательных операций 1918 г. Пер. с нем., М., 1935, с. 236.

⁹³ **Նույն տեղում**, էջ 96։

⁹⁴ Людендорф Э., Мои воспоминания о войне 1914-1918 гг., Сп. 2, с. 241.

առաջացան 18 կմ։ Այս հարձակումը, իր հերթին, կանգնեցվեց ապրիլի 14-ին։

Երկրորդ գործողությունը սկսվեց մայիսի 27-ին, Ռեյմսից հյուսիս։ Հարվածն ուղղված էր ֆրանսիական զորքերի դեմ, դեպի Փարիզ։ Գերմանացիներին հաջողվեց ջրանցել են գետը։ Ամիրաժեշտ էր, ասում էր գլխավոր շտաբի պետ, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Յինդենբուրգը, «մասնակի մարտերով թուլացնել թշնամական կառույցը, թուլացնել այն աստիճան, մինչև այն կփլվեր»⁹⁵։ Այս գործողությունն անվանվեց «մարտ խաղաղության համար», որի նպատակն էր «ջախջախել հակառակորդին վճռականորեն և վերջնականապես»։ Դաշնակիցների պաշտպանական գիծը ճեղքվեց 60 կմ լայնքով և գերմանացիները մայիսի 30-ին դուրս եկան Մառն գետի բնագիծ, հայտնվելով Փարիզից 70 կմ-ից պակաս տարածության վրա։ Այդուհանդերձ, մայիսի 4-ին գերմանացիները հարկադրված անցան պաշտպանության։ Նույնքան անարդյունավետ էր հունիսի 9-ից 13-ի հարձակումը։

Յուլիսի 15-ին գերմանական իրամնատարությունը ձեռնարկեց վերջին գրոհը՝ սկսելով մեծ հարձակումը Մառնի վրա (այսպես կոչված երկրորդ Մառնը)։ Ջրանցելով գետը՝ նրանք կարողացան առաջ շարժվել սոսկ 6 կմ։ Ռազմավարական իմաստով, սակայն, գերմանացիները չկարողացան գրանցել որևէ հաջողություն և սպառեցին իրենց պահուստներն ամբողջությամբ։ Ծիշտ է գնահատված. գերմանացիները նավթը Բաքվից չստացան իրենց գրոհի ամենաճակատագրական շրջանում՝ հունիս-հուլիս ամիսներից։

Յուլիսի 18-ին Դաշնակից զորքերն անցնելով հակահարձակման, չափազանց ագրեսիվ հակառակորդին հետ շարտեցին են և Կել գետեր և վերջնականորեն իրենց ձեռքը վերցրեցին ռազմավարական նախաձեռնությունը։ 1918 թվականի օգոստոսի 8-13-ին Ամենի գործողության ժամանակ լուրջ պարտության մատնեցին գերմանական ուժերին և նրանց վերադարձրեցին մարտյան բնագծեր։ Յիրավի, օգոստոսի 8-ը եղավ «գերմանական բանակի սև օրը»։ Սեպտեմբերի 12-ից 15-ը ամերիկյան առաջին բանակը, իր հերթին, գեներալ Ջոն Պերշինգի ղեկավարությամբ, շահեց Սեն-Միելյան ճակատամարտը։

Սեպտեմբերի 26-ին Դաշնակիցներն անցան վերջին ընդհանուր հարձակման՝ 420 կմ-անոց ճակատում, Վերդենից մինչև ծովափ։ Գերմանական ճակատը պատռվեց և մինչև նոյեմբերի 11-ը վերջնականորեն խորտակվեց։

⁹⁵ Воспоминания Гинденбурга. Сокр. пер. с нем. Пг., 1922, с. 75с.

Այսպիսով, ռազմական գործողություններն Արևմտյան (ֆրանսիական) ճակատում, որոնք աչքի էին ընկնում անգլիզոլոթյամբ, ծայրահեղ լարվածությամբ՝ «գրեթե առանց ընդհատումների պետք է շարունակվեին 235 օր (մարտի 21-ից մինչև նոյեմբերի 11-ը) և 400 կմ տարածքի վրա բախվելու էին վեց միլիոն մարդիկ»⁹⁶: Ընդ որում, 235 օրվանից 118 օրը (մարտի 21-ից մինչև հուլիսի 18-ը) հարձակվեցին գերմանացիները, 116 օր (հուլիսի 18-ից մինչև նոյեմբերի 11-ը)՝ Դաշնակիցները⁹⁷:

Գերմանացիները Փարիզի վրա 1918 թվականին կրակ էին տեղում 100 կմ-ից ավելի հեռավորությունից, որի արդյունավետությունը փարիզցիները «ճաշակում» էին մեծ հարձակումների օրերին: Իսկ գերմանական ավիացիան ռմբակոծում էր Փարիզն ու Լոնդոնը: Մասնավորապես, նա խախտեց Անգլիայի հռչակավոր մեկուսացվածությունը: 1918 թվականին 37 գերմանական ինքնաթիռներ ռմբակոծեցին Փարիզը: Գերմանիային էր պատկանում առաջնությունը ռազմավարական ռմբակոծումների ոլորտում:

Սակայն, այդուհանդերձ, օգոստոսի 8-ն էր, որ եղավ «գերմանական բանակի սև օրը»: Օգոստոսի 8-ի աղետն էր, որ Տիլո ֆոն Բոսեի արտահայտությամբ՝ «բացեց մռայլ ճանապարհը Կոմպենյան անտառով Վերսալի հայելային դահլիճ»⁹⁸:

Բայց, ոչ միայն «օգոստոսի 8-ի աղետը»:

ԵՐԶՆԿԱՅԻՏ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ. ԲԱՔՎԻ ԷՊՊԵՆՍ

Գնահատելով հայ ժողովրդի առաջին աշխարհամարտի տարիներին խաղացած դերը «հասարակաց թշնամու» (թուրք-գերմանական բլոկ) դեմ տարած հաղթանակում՝ Ջեյմս Ջերարդը (ԱՄՆ դեսպանը Գերմանիայում) ԱՄՆ կառավարությանը ներկայացրած 1919 թվականի հունվարի 7-ի տեղեկագրում ասում էր. «Ամերիկացիք պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ կլինե՞ր պատերազմի ելքը և տևողությունը արևմուտքում, եթե թուրքերն ութ ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի կանուխ կհասնեին, եթե հայերը չդիմադրեին»: Ավելի հեղինակավոր է և

տպավորիչ գեներալ Էրիխ ֆոն Լյուդենդորֆի, գերմանական բանակի փաստացի ղեկավարի, խոստովանությունը. «Գլխավոր ազդակը, որ առաջ բերեց գերմանական արևմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, որովհետև թուրքերը չկարողացան ժամանակին գրավել Բաքուն, և հայերն էին, որ թուրքերին արգելք եղան Բաքուն գրավելու ժամանակ»: Իսկ այն ռազմաճակատը, որ «Սև ծովից մինչև Մոսուլ երկարող գիծն էր», վճռում էր ոչ միայն Հայաստանի ապագան, գնահատում է հանրաճանաչ Վիկտոր Բեռարը, այլև «բոլոր ժողովրդապետությանց ճակատագիրը»:

Հիրավի, պլանավորելով 1918 թվականի ռազմական գործողությունները, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը նախատեսում էր, որ Գերմանիայի դաշնակիցները պետք է սոսկ «դիմանային» մինչ իրենք կհաղթեին ֆրանսիական (արևմտյան) ճակատում: Թուրքական ուժերն այս պարագայում ազատված լինելով ռուսական հեղափոխության հետևանքով Փոքր Ասիայում (Հայաստան), կարող էին, ունենալով բավարար ուժ, «օժանդակել իրենց բանակներին Միջագետքում և Ասիայում (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)»⁹⁹: Մանավանդ, որ, համաձայն գերմանական գլխավոր շտաբի, Թուրքիայի գլխավոր խնդիրը Կենտրոնական տերությունների համազորում ընկած էր «ավելի շատ Սիրիայի և Միջագետքի ուղղության մեջ, քան Կովկասում և Կասպից ծովի ուղղության մեջ (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)»¹⁰⁰: Ընդհանուր առմամբ, մինչև ռուսական հեղափոխություն, այս տեսակետը թուրքական ղեկավարության միջավայրում արտաքուստ առարկությունների չէր հանդիպում: Այսպես, 1916 թվականի սկզբներին Պլեսսում էնվերը Հինդենբուրգին սիրո խոստովանություն էր անում: «Թուրքիայի դրությունն Ասիայում, - ասում էր նա, - որոշ չափով շատ դժվարին է: Մենք պետք է զգուշանանք, որ մեզ Հայաստանում ավելի հեռուն կչարտեն: Չի բացառված նաև Իրաքում ռազմական գործողությունների վերսկսումը: Ես մտածում եմ նաև, որ շուտով անգլիացին ի վիճակի կլինի հարձակվել մեզ վրա Սիրիայում գերազանցող ուժերով: Սակայն, ինչ էլ պատահի Ասիայում, պատերազմի ելքը կախված է

⁹⁶ Корда А., 1918 год. Мировая война. Пер. с фр. М., 1924, с. 16.

⁹⁷ Строчков А. А., Вооруженные силы и военное искусство в первой мировой войне, М., 1974, с. 577:

⁹⁸ Бозе Т., Катастрофа 8 августа 1918 г. Пер. с нем. М., 1936, с. 267.

⁹⁹ Воспоминания Гинденбурга, с. 65.

¹⁰⁰ Լույն տեղում, էջ 104:

լինելու եվրոպական ճակատներում դրությունից, դրա համար էլ ես առաջարկում եմ օգտվել իմ բոլոր ազատ դիվիզիաներից»¹⁰¹:

Ասացինք «արտաքուստ», քանզի այլ էր թուրք աշխարհակալների բարոյա-քաղաքական ըմբռնումների հենքը: Ուստի և չքննդանում է նույն Հինդենբուրգը, քծնելով իր գորշ հաճախորդին: «Ի՞նչ նշանակություն կարող են ունենալ Կ. Պոլսի խոստումներն ու բարի կամքը, երբ զորավարները ճակատամարտերի հեռավոր դաշտերում գնում են իրենց ճանապարհով (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)»¹⁰² «համախառնական և համաթրքական» (Բեհաեդդին Շաքիր) ցնորքների ճանապարհով, թուրքիայի համար «դժվարագույն խնդիրներից մեկի» (Հինդենբուրգ) հայկական հարցի «լուծման» ճանապարհով: «Ռուսաստանում հեղափոխությունից հետո,- արձանագրում է Հինդենբուրգը,- համախառնությունը ձգտում էր տարածվել Կովկասի ուղղությամբ: Նա ձգտում էր տարածվել նույնիսկ դեպի Անդրկովկաս և ի վերջո խճճվեց Կենտրոնական Ասիայի ընդարձակ տարածքներում»¹⁰³:

Եվ օսմանյան ճիվաղը, պատեհի հանգամանքների երջանիկ դասավորությամբ ու եվրոպայի ճիպտի հզոր հարվածների տակ, շրջադարձ էր կատարում դեպի Արևելք, դեպի նվիրական թուրքան՝ անսալով, այս անգամ էլ, դաշնակցային իր պարտավորություններին: Շուտ էր գալիս դեպի Արևելք, որտեղ Արևելյան Հայաստանն էր և արևելահայությունը, արևմտահայ գաղթականության ահռելի զանգվածը, որդեգրում էր ռազմաքաղաքական մի ուղղություն [«Պուր կտեսնեք, որ ճակատագիրը կքաշե թուրքիան արևմուտքեն արևելք. մենք հեռացանք Պալքաններեն, կը հեռանանք նաև Ափրիկենն, բայց մենք պետք է տարածվինք դեպի արևելք. հոն է մեր արյունը, մեր կրոնքը ու լեզուն: Եվ ասիկա՝ տարերային ձգողություն ունի (ընդգծումը իմն է.- Լ. Շ.). մեր եղբայրները Բաքու, Դաղստան, թուրքիստան և Ադրբեջան: Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա... Դուք պետք է մեկ կողմ քաշվիք և մեզի ճամբա տաք: Ահա թե ո՛ր է մեր հիմնական վեճը...»՝ Վեհիբ փաշան Բաթումում 1918 թ. մայիսի 30-ին

¹⁰¹ Լույն տեղում, էջ 13:

¹⁰² Լույն տեղում, էջ 104:

¹⁰³ Լույն տեղում, էջ 31:

Հայաստանի պատվիրակության անդամներին]¹⁰⁴, որը, խորքին մեջ, ձևավորվել էր Բալկանյան պատերազմների արդյունքով ու ամրագրվել թուրք-գերմանական զինակցությամբ:

Այսպես թուրքիայում Գերմանիայի դեսպան, տխրահոշակ բարոն Հանս ֆոն Վանգենհայմը (Hans von Wangenheim) Օսմանյան Մեծ վեզիր Մեհմեդ Սայիդ Հալիմ փաշային ուղղված նամակում (1914 թ., օգոստոսի 6, կետ 5) ասում էր. «Գերմանիան պարտավորվում է թուրքիային ապահովել նրա արևելյան սահմանների այնպիսի ուղղում (ընդգծումը իմն է.- Լ. Շ.), որը նրան հնարավորություն կտա հաստատել անմիջական շփում Ռուսաստանի մուսուլմանական տարրերի հետ»¹⁰⁵: Օսմանյան շովինիզմի ու ռասիզմի այս idea-fix-ը, ըստ էության, ամբողջական իր հիմնավորումն էր գտնում, անսպասելի չէ, պրուսական միլիտարիզմի աշխարհակալական-ցնորատեսական ձգտումներում¹⁰⁶:

Ռայխը, հաղորդում է կայգերական Գերմանիայի հայտնի գեներալներից Լիման ֆոն Չանդերսը, ենթադրում էր, որ թուրքիան «ոչ միայն իր ձեռքում կպահի նեղուցներն ու կպաշտպանի սահմանները... այլև կհպատակեցնի Եգիպտոսը, կազատագրի Պարսկաստանը, հող կնախապատրաստի Անդրկովկասի անկախ պետությունների ստեղծման համար, Աֆղանստանի կողմից վտանգ կստեղծի Հնդկաստանին... և... գործուն ջախկցություն ցույց կտա եվրոպայում ռազմական գործողություններին»¹⁰⁷:

...Ռազմավարական ազդակների այսպիսի խաչաձևման, աշխարհակալական հավակնությունների նման զուգորդման պայմաններում էլ, թուրքական նենգամտությամբ խախտելով Երզնկայի (1917 թ., դեկտեմբերի 18) զինադադարը, ռուս-թուրքական կազմալուծված ռազմաճակատի ողջ երկայնքով 1918 թվականի փետրվարի 12-ին թուրքական բանակախումբը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ անցավ հարձակման: Պատմական

¹⁰⁴ Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ տպ., Պեյրուք, 1968, էջ 86:

¹⁰⁵ Տե՛ս Լյուդշվեյտ Է. Փ., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966, с. 33.

¹⁰⁶ Այդ մասին հանգամանորեն տե՛ս Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները: Թարգմ.՝ Ենուկը Արմեն, Եր., 1990, էջ 304-309:

¹⁰⁷ Տե՛ս Գոմլս Բ. Վ., Таинная дипломатия во время первой мировой войны. Пер. с англ. М., 1960, с. 50.

հարկադրանքի ողջ օրհասականությամբ և անխուսափելի ճակատագրականությամբ սկսվեց Հայաստանի անկախության պատերազմը, առաջին աշխարհամարտի գոտեմարտերից, թերևս, ամենահերոսականն ու ամենամահուսալին, սակայն ամենևին էլ ոչ աննշմարելին ու ցայսօր դեռևս ըստ արժանվույն չգնահատվածը, կռիվը հանուն Հայաստանի գոյության և, ինչպես կասեր նույն Վիկտոր Բեռարը, հանուն «բոլոր ժողովրդապետությանց» ապագայի: Պատմության տարիմաստություններից է. ճակատագիրը քրիստոնեական (կարդա՝ արևմտյան) քաղաքակրթության փրկության գործն Արևելքում բարդեց քրիստոնյա Հայաստանի արնածոր և արնաքամ ուսերին: (1918թ. արդեն ոչնչացված էր հայոց գենոֆոնդի 50 տոկոսից ավելին: Թուրքական ավազակապետությունը հայությունից՝ իր քաղաքացիներից, կողոպտել էր շուրջ հինգ միլիարդ ոսկի դոլարից ավելի արժողությամբ ունեցվածք ու կալվածքներ, ազգային սեփականություն, չհաշված օտար ապահովագրական ընկերություններին պահ տրված ոսկեդրամով մասնավճարները):

Հայաստանը զրկված էր այլընտրանքից. մնում էր պատերազմը որպես ուղիղ ճանապարհ:

(1918թ. սկզբներին նախկին Ռուսական ռազմաճակատը Արևմտյան Հայաստանում բաժանված էր երկու հատվածի. Բաբերդից (Բայբուրդ) մինչև Սև ծով ձգվում էր վրացական ազգային կորպուսը (12 հազար սվին և 80 հրետանային միավոր, հրամանատարը՝ գեներալ Վ. Դ. Գաբան (Գաբաշվիլի), իսկ հայկական զինված ուժը՝ առանձին բանակային կորպուսը, պետք է պաշտպաներ Բաբերդից մինչև պարսկական սահմանն ընկած հատվածը, ներառյալ Էրզրում-Կարս ամրացված շրջանը (17 հազար սվին և 16 մարտկոց, հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան): Ընդհանուր ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր վրացի գեներալ-լեյտենանտ Ն. Ջ. Օդիշելիձեն)****:

**** Ն. Ջ. Օդիշելիձեն, գրում է խորհրդային հայտնի պատմաբան Ե. Ֆ. Լուդշովեյտը, իր քաղաքական հայացքներով մոտիկ էր կանգնած վրացական «նացիոնալ-դեմոկրատներին» «որոնք, ըստ էության, գերմանական հետախուզական ծառայություն էին» (Տե՛ս *Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, с.161*): Այս մուք անձնավորության քույրը Վեհիբ փաշայի կինն էր:

Կռվողն, անշուշտ, հայկական բանակային կորպուսն էր և նրան օժանդակող այլ ուժեր: Այս աննախադեպ ոյուցազնամարտի բոլոր ելևէջները, թե՛ ռազմական և թե՛ դիվանագիտական հողի վրա, մինչև Սարդարապատ ու Մայիս 28, մինչև Բաթումի դաշնագիր հայտնի են և գնահատված. այն ավարտվեց Հայաստանի անկախության հռչակումով ու նրա միջազգային ճանաչումով:

Եվ մինչ կչորանար թանաքը Բաթումի դաշնագրի (1918թ., հունիսի 4) տեքստի տակ, թալանից, ավարառությունից, թուրքական եղեռնագործությունից արբեցած, սակայն Արարատյան դաշտից դուրս չպարտված թուրանական հորդան խելակորույս մղումով նետվում է Բաբու: Նրա առաջին ընդհարումը Բաբվի գորքերի հետ տեղի ունեցավ 1918 թվականի հունիսի 5-ին Քյուրդամիր կայարանի մոտ: Սկսվում է ոյուցազնամարտի 2-րդ և վերջին արարը (Բաբվի էպոպեան), եթե կուզեք՝ վերջնամարտը: Այս պահից է, որ դրսևորվում է ապրելու հայոց անկոտրում կամքը, ռազմական հանճարի կենսատու ուժը, ռազմագիտական արվեստի (ռուսական հին բանակի գլխավոր շտաբի նախկին գնդապետ Ջ. Ավետիսյան, բրիգադի հրամ. Դ. Սրվանձտյան, գեներալ Դ. Բագրատունի, գնդապետ Ս. Ղազարյան և Լուրիշներ), հիրավի, շքեղ բեմականացումը:

Դատեք ինքներդ.

Բաբուն բազմաթիվ առումներով ուներ բացառիկ դեր առաջին աշխարհամարտի «շախմատային զինախաղի» Արևելյան հատվածում Հայաստանի ճակատագրի [«այդ ժամանակները,- գրում է Բաբվի Հայոց ազգային խորհրդի նախագահ Աբրահամ Գյուլխանդանյանը,- գտնվեցին համարձակ և հանդուգն (թուրք) հրապարակախոսներ, որոնք հայտարարեցին, թե Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախված է Բաբվից. երբ կգրավենք Բաբուն, կլուծենք և Հայաստանի հարցը»¹⁰⁸], «աշխարհամարտի ելքի իմաստով» (Ջ. Ջերարդ), շնորհիվ Բաբվի կազմակերպված ուժի, աշխարհագրական դիրքի և բացառիկ բնական հարստության՝ նրա քարյուղի¹⁰⁹:

¹⁰⁸ Գյուլխանդանյան Ա., Բագուն Հայաստանի անկախության և նորա պահպանման տեսակետից.- «Մայիս 28». 1918-1938 քսանամյակ, Փարիզ, 1938, էջ 27:

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

Ենթադրելով, որ վառելանյութի բացի քարածուխը, պաշարներից գրեթե զուրկ Գերմանիայի համար հրատապ խնդիրը (Բաքվի) նավթն էր՝ ազգային աղետը կանխելու միջոցը¹¹⁰, սակայն կար նաև գլխավորը՝ համագերմանականության (պանգերմանիզմ) իդեալը: Ընդ որում, համաշխարհային տիրապետության համար Գերմանիայի պայքարում 1917 թվականի մարտից հետո, երբ անգլիացիները գրավեցին Բաղդադը, շեշտադրումները փոխվել էին: Այլևս անհրաժեշտ դարձավ Բեռլին-Բաղդադ երկաթուղով Ասիայի խորքերը թափանցելու ռազմավարությունը: «Drank Nach Osten»-ը այսուհետև իր ճանապարհը՝ «Ասիայի խորքերը թափանցելու» իր ուղին, կարող էր որոնել Բեռլին-Բաքու-Բուխարա համաշխարհային մայրուղում: Ուստի «գերման գինվորական հրամանատարությունը հղացեր էր հսկա ծրագիր,- գրում է հայ հեղափոխության ճշմարիտ տարեգիրը՝ Միքայել Վարանդյանը,- դարձնել Բազուն խարխիս մը պատերազմական գործողություններու համար, ընդդեմ բրիտանական ուժերու՝ Ասիո մեջ, ոտքի հանել իսլամ, թաթար զանգվածները Անդրկովկասի, Թուրքեստանի, Յուսիսային Կասպյան երկիրներու մեջ՝ Ադրբեյջան, Ղաղստան, թաթարներ, սարթեր, չերքեզներ, խրխվներ և այլն, հնազանդեցնել Պարսկաստանը և քաղել անոր վրայեն դեպի Աֆղանիստան ու Յնդկաստան,... ամենուրեք ապստամբեցնելով մահմեդական ցեղերը ընդդեմ Անգլիայի»¹¹¹: Խոսք տանք նաև Զարևանդին (Զավեն Նալբանդյան) թուրք ինքնության և թուրքականության անգերազանց գիտակին: Թուրքերը, գրում է Զարևանդը, 1918 թվականին «կմտնեին հյուսիսային Պարսկաստան, կապստամբեցնեին Գիլանը և պարսկական Ատրպատականը անկախ հանրապետություն հռչակելու պատրաստություններ կտեսնեին»: Սակայն, ընդգծում է Զարևանդը, «թուրքերուն ու անոնց զինակից գերմաններուն աչքը Աշխաբադ-Միրվ [Մերվ]-Բուխարա-Սմրղանդ [Սամարղանդ]-Թաշքենտ [Տաշքենդ] ճամբուն վրա էր, և չէին կրնար երկար ժամանակ վատնել նվաճելու հյուսիսային Պարսկաստանը»¹¹²:

¹¹⁰ St' u Ergun D., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть., с. 200.

¹¹¹ Վարանդյան Մ., Մուրատ: Սերաստացի ռազմիկին կյանքն ու գործը, Պոսթըն, 1931, էջ 326-327:

¹¹² Զարևանդ, Սելիմեն Քենալ. թրքական ծրագիրները Իրանի նկատմամբ.- «Չայրենիք», 1931, մայիս, էջ 159:

Եվ ուշագրավ էր, որ ռազմավարական հունքի և հատկապես նավթի պակասը, ռազմաքաղաքական ցայտնուտը էլ ավելի էին բորբոքում գերմանական ռազմանոլների անհագ նկրտումները: Գերագույն հրամանատարության գլխավոր ռազմակայանի (Սպա, 1918 թ., հուլիսի 2) խորհրդակցությունում Լյուդենդորֆը բացում է գլխավոր հրամանատարության խաղաքարտերը. գրավել նոր տարածքներ Թուրքմենիայում և Թուրքեստանում, հիմք դնել նավթի արդյունահանմանը Բաքվում¹¹³: Գործը հասնում է ընդհուպ գավեշտի. այլևս անգոր (ցանկության դեպքում) զսպելու թուրքերի հայաջինջ քաղաքականությունը և ազդելու նրանց գործելաձևի վրա, առավել ևս գրավելու Բաքուն, թուրքական «Արևելք» զորախմբի շտաբի պետ, թուրքական ծառայության գերմանացի փոխգնդապետ Էռնստ Պարակենը (Paraguin) Բաքվի Չայոց ազգային խորհուրդ է փոխանցում գերմանական «պահանջագիր-աղերսագիրը» 1918 թվականի սեպտեմբերի սկզբներին՝ համեմակած ամիմաստ երաշխավորագրով. «Մենք ձեզանից,- ասվում է այնտեղ,- միայն այս ենք պահանջում. 1. Բաքուն առանց քանդելու և ավերելու մեզ հանձնել և մեզ թույլ տալ, որ նրա նավթից օգտվենք, 2. Չաշտություն և բարեկամություն»¹¹⁴:

Այն, որ Գերմանիան համառորեն փրկության խարխիս էր որոնում հուսահատորեն, վկայում են այլ աղբյուրներ ևս: Ֆրանսիացի հեղինակ, գեներալ Ռենե Տուռնեսը գրում է, որ մինչ այդ գեներալ Լյուդենդորֆը դիմում է Էնվեր փաշային կովկասյան բանակների վերախմբավորման և Թիֆլիս-Երևան երկաթուղով Թավրիզի շրջան տեղափոխման պահանջով՝ հանուն Միջագետքի 6-րդ բանակի ուժեղացման: Դրանով, ըստ մտահղացման, կամրացվեր Մոսուլը և Բաքվի նավթային շրջանը, որը գերմանացիները ցանկանում էին օգտագործել իրենց համար՝ դեպի Բաթուն և Փոթի նավահանգիստներ ձգվող երկաթուղու միջոցով¹¹⁵:

Այսպիսով, համաշխարհային Սողոմ-Գոմորում հայտնված յուրաքանչյուր աշխարհակալ ուժ առաջին հերթին հետապնդում էր

¹¹³ Прусско-германский генеральный штаб, 1640-1965. К его политической роли в истории, с. 191.

¹¹⁴ Մելիք-Յուլյան Ա., Բազվի հերոսամարտը.- «Չայրենիք» (Բոստոն), 1925, օգոստոս, էջ 106:

¹¹⁵ Турнэс Р., Фом и победа союзников 1918 года. Пер. с фр., М., 1938, с. 179.

իր հատուկ քաղաքական-ռազմավարական նպատակները, քաղաքագիտության այսօրվա հասկացողությամբ՝ իր գերակա ազգային շահերը: Այսպես, Գերմանիային շարժում էր աշխարհակալությունը, բրիտանական թագի տեղը զբաղեցնելու տենչը աշխարհում, ռուսական (Կովկաս-Անդրկովկաս, Միջին Ասիա) որովայնին և անգլիական Արևելքին (Աֆղանստան, Յնդկաստան) տիրանալու անկասելի ձգտումը և, իհարկե, նրան շարժող կենսատու արյունը՝ նավթը: Եիշտ է, 1918 թվականին Կենտրոնական տերությունների տրամադրության տակ էր ռումինական հումքը, սակայն «Գերմանիայի կողմից ռումինական նավթային արդյունաբերության և հացահատիկի ժամանակավոր գրավումը նրան ապահովեց,- գնահատում է Բեգիլ Լիզըլ Չարտը,- միայն դեֆիցիտի (պակասություն) և կոլապսի (կործանում) միջև տարբերությունը»¹¹⁶:

Ասվել է. Ռումինիան էր, որ «իր բռնազավթումից հետո դարձավ նավթի, ինչպես նաև հացահատիկի մեծ քանակի հիմնական մատակարարը: 1916 թվականի նոյեմբերից մինչև 1918 թվականի նոյեմբեր տվեց 1,141 մլն. տոննա նավթ, որոնցից 890 հազարը ստացավ Գերմանիան, Ավստրո-Յունգարիան 231200 հազար տոննան, իսկ մնացած քանակությունը՝ Թուրքիան և Բուլղարիան»¹¹⁷: Ակնհայտ է նաև, որ նույն Լյուդենդորֆը պատերազմի ընթացքը փոխելու միջոցը տեսնում էր Բաքվի նավթահանքերին տիրանալու մեջ և այդ խելահեղ նպատակին հասնելու ճանապարհին Գերմանիան երկնեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիր-կոմպրոմիսը (փոխզիջում) գերմանական իմպերիալիզմի և ռուսական «սոցիալ-իմպերիալիզմի» միջև: Սակայն, մինչ այդ դաշնագրով դադարեցվում էին ռազմական զործողությունները երկու «ոխերին բարեկամների» Գերմանիայի և Ռուսաստանի միջև, թուրքերն արդեն սլանում էին դեպի Բաքու, դեպի Արևելք՝ Յինդենբուրգի հոգեզավակ ենվերի նախաձեռնությամբ: «Նախագաղաղվ,- գրում է «նավթի մասնագետ» Դ. Երգինը,- որ դաշնակցի հաջողությունը կհանգեցնի նավթահանքերի անխնա ոչնչացման, Գերմանիան բուլղարներին խոստացավ զսպել

թուրքերին՝ փոխան նավթի: «Իհարկե, մենք համաձայն ենք», ասաց Լենինը: Իոսիֆ Ստալինը ... համապատասխան հրամանով հեռագիր ուղարկեց քաղաքը վերահսկող Բաքվի Կոմունային: Սակայն տեղական կոմունիստները չցանկացան համաձայնել: «Ո՛չ հաղթանակի, ո՛չ պարտության դեպքում մենք գերմանական թալանչիներին չենք տա մի կաթիլ նավթ՝ արդյունահանված մեր աշխատանքով պատասխանեցին նրանք»¹¹⁸:

Ի մասնավորի, Բաքվի (տեղական) բուլղարների այս առողջ ու հայրենամարտի դիրքորոշումը բարձր է գնահատում Բաքվի Չայոց ազգային խորհրդի նախագահ Աբրահամ Գյուլխանդանյանը: Նրանք, գրում է վերջինս, «որոնք որոշ ուժ էին ներկայացնում Բաքվի առանձնահատուկ պայմանների մեջ», ոչ միայն դատապարտում էին իրենց ընկերներին Բրեստ-Լիտովսկի «ամոթալի գործի համար», այլև «բացարձակորեն հայտարարում էին, որ իրենք չեն ընդունում այդ դաշնագիրը և որոշում ունենին ամեն կերպ դիմադրելու տաճիկների ներխուժումին...»¹¹⁹:

Լյուդենդորֆը վճռական էր. 1918 թվականի մայիսի 15-ին Կ. Պոլսում գտնվող գեներալ Չանս ֆոն Ջելտին (թուրքական բանակի գլխավոր շտաբի պետի գերմանացի տեղակալ) նա հրամայում է ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք ենվեր փաշային կպարտավորեցնեին ձեռնպահ մնալ Բրեստի պայմանագրով նախատեսված տարածքային ձեռքբերումների ընդարձակումից¹²⁰: Չետագայում, ենվերին ուղարկված հեռագրով Լյուդենդորֆը սպառնում էր, որ եթե Թուրքիան չհարգի Բրեստում հաստատված սահմանները, «Գերմանիան իրեն թողնում է ազատ ընդունելու հետագա որոշումները»¹²¹:

Այստեղ, ուրեմն, արձանագրենք, որ Գերմանիան թերևս չկարողացավ ա) Թուրքիային պահել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի շրջանակներում, բ) նրան ամբողջությամբ ուղղորդել հարավ անգլիացիների դեմ:

¹¹⁶ St'u Ergun D., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, с. 199.

¹¹⁷ St'u Прусско-германский генеральный штаб, 1640-1965. К его политической роли в истории, с. 173:

¹¹⁸ Ergun D., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, с. 200.

¹¹⁹ Գյուլխանդանյան Ա., Բազում Չայաստանի անկախության և նորա պահպանման տեսակետից, էջ 24:

¹²⁰ Mühlmann C., Das Deutsch-Türkische Waffenbündnis im Weltkrieg, Leipzig, 1940, p. 198.

¹²¹ Նույն տեղում, էջ 199:

Նավթահոտ խարդավանքների և իշխանատենչության համաշխարհային մրցապայքարի սարդոստայնում էլ ակնհայտորեն պակասզերծվում է խորհրդահայ պատմագրության մառախլապատ «գլուխկոտրուկը» Բաքվի կոմունայի, նրա պրոլետարիատի, այնտեղ ապրող հայ, ռուս և այլոց ճակատագրի հանդեպ Վոլոդյա Ուլյանով-Լենինի, Իոսիֆ Ջուղաշվիլի-Ստալինի և նրանց «երկաթյա» կամակատար խամաճիկների, «կապուտաշյա» Ստ. Շահումյանի «հեղափոխական» դիրքորոշումը¹²², որն ի վերջո հանգեցրեց Բաքվի աղետին, առաջին հերթին հայ «աշխատավորության» թուրանական սպանդին: [Սերգեյ Մելիք-Յուլյան, Բաքվի Հայոց ազգային խորհրդի անդամ, ՀՅԴ «Ոսկանապատ» ԿԿ անդամ, 1918թ. հուլիս 30. «Ժողովը փակվում է, և Շահումյանի կառավարությունը, առանց հանձնելու իշխանությունը որևէ կազմակերպության, նստում է պատրաստված նավերը և հեռանում Բաքվից: Ժողովից հետո, սակայն, դահլիճի միջանցքում ես (Սերգեյ Մելիք-Յուլյանը.- Լ. Շ.) բռնում եմ Շահումյանին, դատապարտում նրա քայլը և ասում.

- Արդյոք դուք չէի՞ք մտածում, որ ձեր բռնած դիրքով Բաքվի աշխատավորությունը, միևնույն թվում և հայ զանգվածը և ամբողջ հայությունը գցում եք դարավոր թշնամու գիրկը, որ պիտի բնաջնջի նրան վերջնականապես:

Շահումյանը պատասխանում է ինձ.

- Ես ձեզ պատասխանում եմ ընկեր Լենինի խոսքերով. «Երբ անտառն են կտրում, տաշեղները ցրվում են»: Մենք կատարում ենք համաշխարհային հեղափոխություն, որի ժամանակ ժողովուրդներ և ազգեր կարող են ոչնչանալ: Ի՞նչ ցավ, եթե սոցիալիզմը իրագործելու համար հայ ազգը զոհվի»¹²³: Շահումյանն ավելի վճռական, կոնկրետ, և որ կարևոր է, ավելի գործնական է արտահայտվում նշանավոր հայ զորապետներ, Բաքվի ինքնապաշտպանության կազմակերպիչներից Սեպուհի և Մուրադի (Սեբաստացի) հետ հանդիպման ժամանակ: «Հանուն հայ ժողովրդի խնդրեցինք», գրում է Սեպուհն իր հուշերում, որ Շահումյանը դեմ չլինեք անգլիացիների գալուն Բաքու և հիշեցրինք, որ «թուրքերը եթե գրավեն Բազուն, քաղաքին ամբողջ

¹²² Հանգամանորեն տե՛ս **Խոսիկուրի Գ.**, Հավասարում 26 հայտնիներով.- «Նորք», 1996, N 1-3, **Хомузурю Г. П.**, Социальные потрясения в судьбах народов. На примере Армении. М., 1997, с. 83-115:

¹²³ «Հայրենիք» (Բոստոն), 1925, հուլիս, էջ 70:

հայությունը սրե կանցնեն, իսկ այնուհետև իրենց ուժերը կուղղեն Հայաստանի Հանրապետության դեմ: Այդ պարագային մեղքն ու հանցանքը պիտի ծանրանար իր վրա:

Ստ. Շահումյան պատասխանեց.

- Գիտեմ այդ ամենը, այսուհանդերձ, բոլոր ուժովս պիտի աշխատիմ, որ անգլիացիք ոտք չդնեն այս երկիրը, նույնիսկ եթե գիտնամ, որ այդ պիտի արժե հայերու արյունը <...>: Իմ որոշումս վերջնական է. ինձի համար թուրքի մուտքը Բազու ավելի նախընտրելի է, քան անգլիացիներունը <...>, ավելի մեծ դժբախտությունը կլինի այն, որ մուֆի մեջ կծգեն ամբողջ Ռուսաստանը (ընդգծումը իմն է.- Լ. Շ.):

- Բայց չէ՞ որ թուրքերը կուգան կկոտորեն հայերը, իսկ անգլիացիք գոնե հանգիստ կծգեն մեզ:

Վերջապես Շահումյան հաստատ մնաց իր որոշումին վրա...»¹²⁴:

«Այդ ամենը» շատ լավ գիտեր նաև երիտասարդ բոլշևիկ Անաստաս Միկոյանը, անշուշտ, պատկերացնում էր նաև թուրք-գերմանական ներխուժման հետևանքների ողջ սպեկտրը: Սակայն, ուրիշ էին այս գաղափարակիր կարիերիստներին շարժող դրդապատճառները:

Վերջինիս հպարտ խոստովանությունը առավել քան քան պերճախոս է. «Եսեռների, դաշնակների և մենշևիկների կողմից խաբված և խճճված, սովալլուկ, թուրքերի արշավանքից ահաբեկված Բաքվի բանվորները, ակներևաբար դեռևս բավարար չափով չըմբռնելով անգլիացիների ներխուժման վտանգը, այն ժամանակ անգլիական չարիքը գերադասեցին գերմանա-թուրքականից,- բարբառում է գերագույն բարոյականության պրոլետար գործիչը,- և միտինգներում հանդես էին գալիս անգլիական զորքերին հրավիրելու օգտին <...>: Ես ապշել էի, թե ինչպես կարելի է միտինգներում այդքան վտանգավոր բանավեճեր սարքել այդպիսի հույժ կարևոր հարցերում և այն էլ պատերազմի այնպիսի ահեղ ժամանակ...»¹²⁵:

Ուստիև լավ «գիտենալով այդ ամենը», իրենց հնարավորությունների շրջանակներում, իրենց ծնած ու սնած

¹²⁴ **Սեպուհ**, Եջեր իմ հուշերեն, հտ. Բ, Պոսթըն, 1929, էջ 169-170:

¹²⁵ **Միկոյան Ա. Ի.**, Պայքարի ուղիով: Գիրք առաջին, Եր., 1972, էջ 207:

ժողովրդի մի հատվածը մղեցին հայոց արյունով արբեցած թուրք-թաթարական երախը]:

Թերևս, գերմանացիներն, իրոք, Բաթումում և նրանից հետո ցանկանում էին զսպել թուրքերին, սակայն նրանք այդ ուժը, ինչպես ասվել է, այլևս չունեին: Ուստիև զավեշտից ու քաղաքական դեմագոգիայից այն կողմ չի անցնում Լենինի հեռագիրը Ցարիցին՝ Ստալինին (1918թ., հուլիսի 7), համեմատած բացահայտ ցինիզմով. «Բաքվի վերաբերմամբ ամենակարևորն է, որ դուք անդադար կապի մեջ լինեք Շահումյանի հետ, որպեսզի Շահումյանը իմանար գերմանացիների առաջարկը, որ ասված է դեսպան Իոֆֆեին Բեռլինում, այն մասին, որ գերմանացիները կհամաձայնեին կանգնեցնել թուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք երաշխավորենք գերմանացիներին տալ նավթի մի մասը: Մենք, իհարկե, կհամաձայնվենք (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)»¹²⁶: Ավելին: «Խորհուրդների V համագումարի և կենտրոնական խորհրդային իշխանության որոշման դեմ դաշնակների (կարդա՛ հայ ազգային ուժերի.- Լ. Շ.) ամեն մի գործողություն դիտվելու է որպես ապստամբություն և որպես դավաճանություն: Ջորջեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող»¹²⁷:

Ինքնին հասկանալի է, որ հայկական կողմը որևէ մեկնաբանությամբ չէր կարող համաձայնել Բաքվի գերմանա-թուրքական բռնազավթման հետ: Գերմանա-թուրքական բլոկի երկրներանք բացառող դիրքորոշումը հայոց համար այլ տարբերակ չէր թողնում: Դինդենբուրգը թուրքական հորդաներին դիմադրող ազգային զորամիավորումներն անվանում էր «հայկական հրոսակախմբեր»: Նա գրում է. «1918 թվականի սկզբին Թուրքիայում նկատվում է ուժեղ զինվորական վերելք: Հայաստանում դեռևս մինչև ձմեռվա վերջը հարձակում է սկսվում այնտեղ գտնվող ռուսական բանակի դեմ: Ռուսական ուժն այստեղ խաբուսիկ էր: Ջորջերի մի մասը ամբողջովին հավել էր: Թուրքերի արշավանքը դրա համար էլ դիմադրության հանդիպեց միայն հայկական հրոսակախմբերի մոտ»¹²⁸: Բնական է, որ, ինչպես վկայում է Ա. Գյուլխանդանյանը,

«Բաքվի զորամասերը կռիվը շարունակում էին այն խորը գիտակցությամբ, որ իրենց ամեն մի օրվա դիմադրությունը մի օրով երկարացնում է Հայաստանի գոյությունը»¹²⁹: Ընդսմին, Բաքվի բոլշևիկների «սպեցիֆիկ» դիրքորոշումը, երբեմն հակառակ կենտրոնի և ընկ. Ստ. Շահումյանի կամքին, թույլ էր տալիս «միմյանց հետ գործակցելու Բաքվի մեջ եղած բոլոր տեսակի զինվորական և մարտական ուժերը, որոնք պատրաստություններ էին տեսնում օր առաջ շարժվելու Բաքվից (դեպի ճակատ.- Լ. Շ.)»¹³⁰:

Դժբախտությունն այն էր, որ դաշնակիցներից միայն մեկ երկիր՝ Անգլիան էր, որ քիչ թե շատ հետաքրքրություն ուներ Բաքվի և նրա նավթի հանդեպ, գերմանական արտահանման խափանման ու Բրիտանական կայսրության արևելյան տիրույթների անվտանգության խնդրով: Ուստի և «Բեռլին-Բաքու-Բուխարա» ռազմավարական առանցքը, բնականաբար, Անդրկովկասն ու Բաքուն դարձնում էին աշխարհամարտի ռազմավարական հանգույցներից մեկը, իր բախտորոշությամբ թերևս երկրորդը Մառնից և Փարիզի ուղղությունից հետո: Այս եզրահանգումը փաստվում է գեներալ Ջ. Դենստերվիլի պնդումով. «այդ իսկ պատճառով իմ վրա դրված պարտականության նպատակն էր, որ այդ շրջանում արգելք հանդիսանայի թուրքերի և գերմանացիների շարժումներին»¹³¹:

Առկա է խնդրի մի այլ կողմը ևս, ճիշտ է՝ ոչ այն կարևորությամբ, ինչ Բաքուն էր, սակայն ռազմավարական իմաստով ոչ անտեսանելի հիմնահարցը. (ռուսական) պարսկական ռազմաճակատի քայքայման հետևանքով մերկացել էր Բաղդադի անգլիական ռազմաճակատի աջ թևը՝ վտանգելով նրա կայունությունը: Ուստի և Բաղդադ-Բաքու ռազմագծի վերականգնումը՝ ապահովելու համար անգլիական զորքերի աջ թևը և Ատրպատականի հայության ու այնտեղ կուտակված հայության կյանքի ապահովման հրամայականը, տարածաշրջանում մերձեցնում էին հայ-անգլիական շահերը, սակայն դրանք չէին նույնացնում: Ահա այստեղ է անգլիական զորքերի «առեղծվածային» վարքագծի գաղտնիքը Բաքու «ներխուժելիս» և նույնքան էլ «առեղծվածային»

¹²⁶ Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 50, Եր., 1983, էջ 132:

¹²⁷ Լենինը՝ Շահումյանին (1918 թ., հուլիսի 29).- Նույն տեղում, էջ 148-149:

¹²⁸ Воспоминания Гинденбурга, էջ 103:

¹²⁹ Գյուլխանդանյան Ա., Բազուն Հայաստանի անկախության և նորա պահպանման տեսակետից, էջ 27:

¹³⁰ Նույն տեղում, էջ 24:

¹³¹ Նույն տեղում, էջ 26:

չքանալը այնտեղից: Եվ հավատարիմ իրենց անխախտ ավանդույթին փորձում էին ուրիշի ձեռքով շագանակները հանել կրակից, այս դեպքում համագործակցելով Պարսկաստանում տարբեր ցեղախմբերի հետ, իսկ Բաքվում և նրա շրջակայքում հայկական ազգային զորամիավորումների հետ:

Եվ այսպես.

Հետամուտ «համիսլամական և համաթրքական սրբազան իդեալներին», «ազգային սրբազան իդեալներին» [«մենք գալիս ենք Թուրքիայից միացնելու մեզ հետ Ադրբեջանի թաթարին, սարթերին, աղվաններին և ստեղծելու մի նոր և մեծ պետություն, որից պիտի սարսի ամբողջ աշխարհը, սա երազ չէ, այլ իրականությունն»] և անսալով Մեծ եղբոր հորդոր-քարոզներին, թուրքերը հուլիսի վերջերին պաշարեցին Բաքուն, օգոստոսի սկզբներին՝ գրավեցին նավթահորերի մի մասը: «Ի վերջո,- գրում է Դ. Երզնի,- 1918 թվականի կեսերին (օգոստոսի 4-ին.- Լ. Շ.) Մեծ Բրիտանիան Պարսկաստանով այնտեղ ուղարկեց ոչ մեծ ուժեր: Նրանց խնդիրն էր փրկել Բաքուն և պաշտպանել նավթը: Անհրաժեշտության դեպքում նրանք պարտավոր էին (նազմական նախարարության տվյալներով) կրկնել ռուսիական սցենարը «և ոչնչացնել Բաքվի արդյունահանող գործարանը, խողովակաշարն ու նավթային ամբարները»:

Մի ամսվա ընթացքում անգլիացիները մնացին Բաքվում և դա բավարար եղավ, որ նավթը չհասնի Գերմանիային (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): «Դա լուրջ հարված էր մեզ համար»՝ հարկադրված էր ասելու Լյուդենդորֆը: Սակայն, անգլիացիները հեռացան***** և թուրքական

***** Դիվանագիտական խարդավանքներին քաջահմուտ անգլիացիները համաշխարհային հանրությանը մոլորության մեջ զցելու համար, իրենց ռազմավարական խնդիրը լուծելուց հետո և իրենց «անփառունակ» «վարմունքը արդարացնելու համար,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- վարկաբեկիչ լուրեր տարածեցին Բաքվի զորամասերի, գլխավորապես հայ զորքերի մասին» (Տես «Հայրենիք», 1941, հուլիս, էջ 91):

«Տարօրինակ» էր ոչ միայն անգլիացիների վարմունքը: «Անգլիացիների հետ միասին,- գրում է Բաքվի էպոպեայի կազմակերպիչներից Սերգեյ Մելիք-Յուլյանը,- փախավ նաև գնդապետ [Պիեռ-Օգյուստ] Շարդինյեն, ազատատեր Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչը, որն ամիսներ շարունակ, հաճախելով Հայոց Ազգային խորհուրդ և Դ. Յ. Դաշնակցության Բյուրո, խնդրում և աղաչում էր ամեն գնով

զորքերը վերցրին քաղաքը: <...> Բայց այն ժամանակ, երբ թուրքական զորքերը վերցրին Բաքուն, Բաքվի նավթը այլևս չէր կարող փրկել Գերմանիային***** (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)»¹³²: «Անհաջողությունը Բաքվում լրջագույն հարված էր Գերմանիային: 1918թ. հոկտեմբերին գերմանական բանակը սպառեց իր պաշարները»¹³³: Հիրավի, իրավացի էր լորդ Քերզոնը, երբ Լոնդոնում, Լանկաստերի տանը, պատերազմից 10 օր անց նավթին նվիրված Դաշնակիցների կոնֆերանսում հայտարարեց. «Դաշնակիցների գործը դեպի հաղթանակ լողաց նավթային ալիքի կատարով»¹³⁴:

Մինչդեռ, հարավկովկասյան ժողովուրդների քաղաքական ծգտումները ջրի երես դուրս եկան դեռևս Բաթումի «գործընթացում». «վրացիները միաժամանակ գաղտնի բանակցություններ վարելով գերմանացիների հետ Բաթումում՝ զենքերալ ֆոն Լոսովի միջոցով և Բեռլինում գերմանական կառավարության հետ՝ ապահովել էին իրենց համար Գերմանիայի հովանավորությունը և Վրաստանի սահմանների

պաշտպանել Բազուն և միշտ ավելացնում, թե Ֆրանսիայի մեծ ժողովուրդը չի մոռանա հայ զինվորի երախտիքը» («Հայրենիք», 1925, օգոստոս, էջ 112):

***** Գերմանական բարձրագույն իրամանատարությունը «վառելանյութի տևական ճգնաժամին սպասում էր ծնոան գալստյան հետ: Հոկտեմբերին Բեռլինում հաշվում էին. պատերազմը ծովում կհաջողվի շարունակել միայն վեց-ութ ամիսների ընթացքում: Ռազմական արդյունաբերությունն իր բոլոր պաշարները կսպառի երկու ամսվա ընթացքում: Քսուբային նյութերի ընդհանուր կուտակումները կվերջանան վեց ամիս անց: Ցամաքում սահմանափակ զործողություններ հնարավոր են միայն մատակարարման խստագույն մասնաբաժանմով (рационированием), սակայն օդային և մեքենայացված ուժերը կլռեն (замрут) երկու ամիս անց:

Այս գնահատականների հավաստիությունը հնարավոր չէրավ ստուգել. քանի որ հյուծված Գերմանիան մեկ ամիս անց արդեն անձնատուր եղավ» (Ергун Д., Добыча, Всемирная история борьбы за нефть, деньги и власть, с. 200):

¹³² Ергун Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, с. 200.

¹³³ Լույն տեղում:

¹³⁴ Լույն տեղում, էջ 201:

անծեռնմխելիությունը թուրքական ներխուժման դեպքում»¹³⁵: Բաթումում (1918թ. մայիսի 25) վրացական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Նոյ ժողդանիան Ալ. Խատիսյանի այն հարցին, թե «Ազնվությունն է նպաստել Կովկասի կազմալուծման, երբ հայերը մենակ կռիվ են մղում ընդհանուր թշնամու դեմ», վրացի այս «թավաղը» վրացական «վեհանձնությամբ» և բյուզանդական նենգությամբ, կարճ է կապում. «Ազնիվ է այն, որ օգտակար է իմ ժողովրդին»¹³⁶: Ուշադիր լինենք. «Անդրկովկասում ապրող ժողովուրդներից,- ընդհանրացնում է Ա. Գյուլխանդանյանը,- վրացիները, որ առաջ կռվում էին տաճիկների դեմ, մեծ ճարպկությամբ աստիճանաբար սկսեցին փոխել իրենց դիրքը և կռվող կողմից դարձան չեզոք կողմ միաժամանակ ցույց տալով մեծ համակրանք և բարեկամություն դեպի Անդրկովկասի թաթարները»¹³⁷: Եվ անկախության տարիների հերոսական ու նույնքան ողբերգական տարիներին վրաց «թավաղների» այս դասը թրքամետությունից ու Ադրբեջանի թրքության հանդեպ ծառայամտությունից այն կողմ չանցավ և որևէ այլ վարքագիծ չդրսևորեց՝ չհիշելով ոչ թմբկահարվող եվրոպականության և ոչ էլ, մասնավորաբար, «ուղղափառ» քրիստոնեության մասին¹³⁸: Իսկ Ադրբեջանի էթնիկ թուրքերը պաշտոնական ու անպաշտոն բանակցություններով թուրքերին հրավիրում էին Անդրկովկաս և առաջարկում գրավել Ադրբեջանը: Ուստի և «Հայերը մնում էին քառիս բուն նշանակությամբ մենակ՝ երես-երեսի թուրքերի հետ»¹³⁹: Կամ «Կովկասյան մահմեդականներն ակնհայտնի կերպով թուրքերի կողմն էին և համակրանքով էին նայում նրանց հաջողություններին և հառաջխաղացումին: Վրացիները դժկամությամբ էին ընդունում պատերազմը և պատերազմական գործողություններից մի շաբաթ հետո արդեն տենչում էին հաշտություն: Հայերը մնացել էին մենակ՝ շրջապատված

թշնամիներով և հուսահատական ու անվեհեր կռիվ էին մղում թուրքերի դեմ»¹⁴⁰:

Թուրքական դիրքորոշումը, իր հերթին, ցցուն կերպով դրսևորվեց մայիսի 22-ին, Բաթումում, այնտեղ ժամանած հայոց դահիճներից Ջենալ փաշայի վարքագծում: «Թաթարների հետ,- փոխանցում է օրվա մթնոլորտը Ալ. Խատիսյանը,- նա խոսեց շատ սրտազին կերպով: Վրացիների հետ՝ բավականին ջերմությամբ: Հայերի հետ՝ շատ չոր ու պաղ»¹⁴¹: Այս իրականության մեջ, բնականաբար, հայ զինվորին մնում էր ռազմի դաշտում ցույց տալ իր «ուժն ու տոկունությունը»: Եվ նա, հիրավի, ցույց տվեց իր «ուժն ու տոկունությունը» ոչ միայն Երզնկայից մինչև Բաքու (12.II.1918 - 15.IX.1918թ.), ուղիղ 214 օր [«Եվ միայն սեպտեմբերի 16-ին, կեսօրից հետո, այն էլ մեծ ընդհարումներից հետո ճակատներում ուշացած ու մնացած մեր փոքր զորամասերի հետ, թուրքերը մտնում են քաղաք»¹⁴²], այլև Բաքվի անկումից հետո՝ մինչև նոյեմբերի 7, Մուղրոսի զինադադարից 7 օր անց Պետրովսկի (Մախաչկալա.- Լ. Շ.) տակ, երբ հայ-թուրքական սրերը նորից խաչաձևվեցին, երբ թուրքական զորքերն այս անգամ արդեն Բաքվի «անվտանգությունն» ապահովելու և Հյուսիսային Կովկասը նվաճելու համար փորձեցին միանալ Կովկասի լեռնականներին...

...Որպես ուղիղ հետևանք Բրեստ-Լիտովսկի դավաճանության, Բաթումի խորհրդաժողովում, համաձայն գեներալ ֆոն Լոսովի Բեռլին ուղարկած գեկուցագրի, «թուրքական հայացքներն ուղղվեցին դեպի Բաքու և Վլադիկավկազ, ամբողջ Կովկասի նվաճում»¹⁴³:

Հայ զինվորի «ուժն ու տոկունությունն» էլ հենց թաղեց թուրանական բնազդային այս մղումը, եթե կուզեք՝ գերմանական աշխարհակալության վիթխարի ծրագիրն Արևելքում, զգալապես բովանդակագրկեց պրուսական միլիտարիզմի ռազմավարական խոյանքն ու տենչը: Ի հեճուկս «համիլանական ու համաթրքական» «ազգային սրբազան իդեալների» (Բեհաեդդին Շաքիր) մաղձահոտ ժայթքումի, վերահաստատեց Հայաստանի ապրելու իրավունքը,

¹³⁵ Խատիսյան Ալ., Բաթումի դաշնագիրը, 1918 թ. 4 հունիսի.- «Մայիսի 28», էջ 37:

¹³⁶ Նույն տեղում, էջ 39:

¹³⁷ Գյուլխանդանյան Ա., Բազվի հերոսամարտը.- «Հայրենիք» (Բոստոն), 1941, թիվ 11-12, էջ 84:

¹³⁸ Стендаль Чалхушьян Гр., Красная книга. Ростов на Дону, 1919, с. 145-146, 162-171:

¹³⁹ Խատիսյան Ալ., Բաթումի դաշնագիրը, էջ 38:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 36:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 381:

¹⁴² Մելիք-Յուլյան Ա., Բազվի հերոսամարտը.- «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, էջ 69:

¹⁴³ Muhlmann C., Das deutsch Turkische Waffenbündnis im Weltkrieg, էջ 199:

հարատևումը քրիստոնեական քաղաքակրթության մի հարուստ հատվածի:

Դաժան ու անգիջուն կռվի ընդհանուր մթնոլորտը այսպես է ներկայացնում ականատես-մասնակիցը. թշնամին «նորանոր ու թարմ ուժեր էր ստանում թե՛ շրջակա հարյուր հազարավոր թաթար ազգաբնակչությունից և թե՛ Գալիպոլիից, որի զորամասերը անդադար թափվում էին Բաքվի պատերի տակ՝ վերջնականապես ջախջախելու համար հայերի դիմադրությունը և խլելու այն նավթի քաղաքը, որը մեծ և ճակատագրական դեր էր կատարում ընդհանուր պատերազմի բախտի վրա»¹⁴⁴: Կամ՝ «Կես գիշեր էր (հուլիսի 30-ը.- Լ. Շ.): Բոլորը, սվիճները ձեռներին, իրենց դիրքում են և, կարծես, զգում են, որ մոտենում է մենամարտի վճռական ժամը: Դիմացը կանգնած է թշնամու քսան հազարանոց բանակը, սուլթանական գվարդիան, Գալիպոլիում երկու հարյուր հազար անգլիացիների դեմ հաղթություն տարած դիվիզիաները, գլխավորությամբ Նուրի փաշայի, հեծելազորի պետ Մուրսալ փաշայի և գերմանական ու տաճկական ականավոր զորավարների ու սպանների»¹⁴⁵:

Եվս մի դրվագ Բաքվի «հայկական էպոպեայից». օգոստոսի 4-ի Սալյանի զորանոցների մոտ տեղի ունեցած մարտից և պատմության մեջ հազվագյուտ հանդիպող զինվորի ոյուզացնական նկարագրից, մարմնացումից անցյալի առասպելական (հայ) կերպարների. «Ռումբերը պայթում են մերոնց գլխին, փչացնում են թնդանոթները, սպանում և վիրավորում մեր ուսանողներից (թնդանոթաձիգ.- Լ. Շ.) շատերին, որոնց թվում և Ռուբեն Շաթիրյանին (Մարտին Շաթիրյանի որդուն.- Լ. Շ.) - քառասուն և երկու տեղից...»: [Առասպելական այս ոյուզագունը] «մի տարի բժշկվելուց հետո և կորցնելով մի ոտը, մի աչքը, ծնուտի մի մասը, անցավ Հայաստան և շարունակեց զինվորական ծառայությունը Հայաստանի զորամասերում»¹⁴⁶:

Բաքվի «հայկական էպոպեան» արժևորեց լայնամասշտաբ մաների (հայկական) արվեստը: Մինչ Հանրապետությունը Բաթումի դաշնագրի հարկադրանքով ստիպված էր հրաժարվելու զինված

պայքարը շարունակելու գայթակղությունից, հայկական Բաքուն, ադրբեջանահայությունը և Արցախը իրենց վրա վերցրին ազգային պայքարի ծանրությունն ու պատերազմը շարունակելու, թերև, Արևելքում քրիստոնեական քաղաքակրթության պաշտպանության առաքելությունը՝ դրանով իսկ կաշկանդելով դեպի Բաքու արշավող թուրք-գերմանական բանակների առաջխաղացումը: Քաղաքացի գիտնականը՝ Յու. Բարսեղովը, գրում է. «հիմնական ուժերը նետելով հայերի դեմ, Թուրքիան կրեց ընդհանուր պարտություն Առաջին աշխարհամարտում, երբ թվում է, գրավելով Բաքուն՝ արդեն հասել էր նպատակին»¹⁴⁷: Գերմանացու ճշգրտությամբ և բարեխղճությամբ է արտահայտվում Պաուլ ֆոն Հինդենբուրգը. «Հայաստանի դեմ ավերիչ պատերազմի հետևանքներից մեկը պատերազմի ժամանակ թուրքական զորքերի զանգվածային ոչնչացումն էր Կովկասի լեռներում հյուժումից»¹⁴⁸: Հետագայում, հերթական թուրք մի գեներալ, Ալի Իսսան փաշան, պետք է խոստովաներ. «Եթե չլինեին հայերը, մենք կգրավեինք Կովկասը»¹⁴⁹:

Եթե...

Հ.Գ. (P.S.) – Հիրավի: Գնահատելով Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության իրական դերակատարներին առաջին աշխարհամարտում, գերմանական ռազմածովային խորքային մղումներին քաջածանոթ էմիլ Լյուդվիգը նկատում է՝ Ֆալկենհայնի նշանակումից հետո Կայզերի «ակտիվությունը արագորեն սկսեց նվազել: Պատերազմի վերջում արդեն նա չէր կանգնած Հինդենբուրգի և Լյուդենդորֆի գլխին, այլ ընդհակառակը. մեկը նրան պատկառաքան էր ներշնչում իր հանրաճանաչությամբ, մյուսը՝ իր երկաթյա կամքով»¹⁵⁰: Ահա այս գործիչներն էին գերմանացու ճշգրտությամբ գնահատում հայոց զինական ուժի

¹⁴⁷ Барсегов Ю. Г., Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. В 2-х т. Т. 2, ч. 2, М., 2005, с. 216.

¹⁴⁸ Воспоминания Гинденбурга, с. 32.

¹⁴⁹ Տե՛ս Atamian S., The Armenian Community. The historical development of a social and ideological conflict. N. Y., 1955, էջ 199:

¹⁵⁰ Людвиг Э., Последний Гогенцолерн: Вильгельм II. Пер. с нем. М., 1991, с. 197.

¹⁴⁴ Գյուլխանդանյան Ա., Օգոստոսի հիմնը. մի էջ Բազվի հերոսամարտից.- «Վեմ» (Փարիզ), 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 116:

¹⁴⁵ Մելիք-Յուլյան Ա., Բազվի հերոսամարտը.- «Հայրենիք», 1925, հուլիս, էջ 71:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 74:

երևակայությունից դուրս սխրանքը՝ վճռական ազդեցությունը առաջին աշխարհամարտի ռազմավարական ելքի վրա, մասնավորապես, Արևմտյան ճակատում:

ԱՐԱՐԱ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ» ԿԱՆՏՈՐՈՂՈՂ ԵՏՂՔՈՒՄԸ

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, ինչպես հայտնի է, սրվեցին հակասությունները խոշոր տերությունների միջև նաև Մերծավոր Արևելքում: Գերմանիան, որ համաշխարհային տիրապետության հայտ էր ներկայացրել, կառուցելով Բաղդադի երկաթուղին, սպառնում էր Անգլիայի մերծավորարևելյան գերիշխանությանը: Իր կողմը քաշելով Թուրքիային, նա ձգտում էր գրավել Սուեզի ջրանցքը, ձեռքն անցկացնել Մոսուլի նավթը, զրկել անգլո-ֆրանսիական կողմին Պաղեստինում և Սիրիայում ռազմածովային բազաներից: Անգլիան, փորձելով ոչնչացնել իր գլխավոր ախոյանին, Գերմանիային, նրանից խլելով իր գաղութները, ցանկանում էր Թուրքիայից գրավել (ստանալ) Միջագետքը, Պաղեստինը և ամուր տեղավորվել Եգիպտոսում: Ֆրանսիան ցանկանում էր պարտության մատնել Գերմանիային, ստանալ Սիրիան, իսկ Ռուսաստանը նախատեսում էր բաժանել Օսմանյան կայսրությունը՝ նրանից ստանալով Արևմտյան Հայաստանը, գրավել նեղուցներն ու Կ.Պոլիսը:

Թուրքիան, զինակցելով պրուսական միլիտարիզմին, նպատակ էր դրել պահպանել իր տիրույթները 1914 թվականի սահմաններում՝ ընդարձակելով միաժամանակ կայսրությունը Բալկանյան թերակղզու հարևանների ու Ռուսաստանի կովկասյան տիրույթների հաշվին¹⁵¹՝ իրենթացս լուծելով նաև Հայաստանի ոչնչացման և հայության բնաջնջման ազգային գերխնդիրը:

Ինքնին հասկանալի է, որ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելով (1914թ. նոյեմբերի 12-ին Թուրքիան «սրբազան պատերազմ» հայտարարեց Անտանտի տերություններին) գոտեմարտը տեղափոխվում էր միջինարևելյան թատերաբեմ:

Աշխարհակալ տերությունների շահերի ներհակության և ներդաշնակության այս շքահանդեսում էլ ժամանակին ծնվեց Օսմանյան կայսրության անդամահատման Սայքս-Պիկո գաղտնի պայմանագիրը: Բնական է, որ պաղեստինա-սիրիական ճակատը ընդգրկվեց անգլո-ֆրանսիական և թուրք-գերմանական հակամարտության ընդարձակ գոտի՝ դառնալով միջինարևելյան անգլո-թուրք-գերմանական ռազմաբեմի կարևորագույն օղակը:

Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում ռազմական գործողությունների աշխարհագրությունը սիրիա-պաղեստինյան ճակատում իր մեջ ընդգրկեց Սինայի թերակղզին: Այն Եգիպտոսի հետ միասին, որի հանդեպ Անգլիան իր խնամակալությունը հայտարարել էր 1914 թվականի դեկտեմբերի 17-ին, գտնվում էր Անգլիայի ազդեցության տակ: Այս թատերաբեմի արևմտյան և հյուսիսային ափերը (Հայկական Կիլիկիա) ողողում էր Միջերկրական ծովը: Այդ ծովափերը ենթակա էին Անտանտի երկրների ռազմական նավատորմերի ազդեցությանը, ունեին լավ նավահանգիստներ (Ալեքսանդրեթ, Բեյրութ, Հայֆա): Հարավ-արևմտյան մասում ռազմաբեմն իր մեջ ընդգրկում էր Եգիպտոսի արևելյան մասը, իսկ արևելքում՝ միախառնվում Արաբական անապատին, հյուսիսում՝ սահմանակցում կենտրոնական (թուրքական) Անատոլիային:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո ճակատի Սուեզի հատվածում թուրք-գերմանական բլոկը երկու անգամ փորձեց գրավել Սուեզի ջրանցքը: Առաջին անգամ, թուրքական մի զորաջոկատ, 500-600 մարդ նույնիսկ կարողացավ պոստոններով անցնել աֆրիկյան ափ և ռազմաճակատի տվյալ հատվածում հարկադրել անգլիացիներին կուտակել զգալի քանակությամբ զորական ուժեր: Սակայն ռազմավարական խնդիրը՝ Սուեզի ջրանցքի գրավումը, ինչպես և սպասելի էր, հնարավոր չեղավ:

Թուրքական (գերմանական) ուժերի գործողությունների տապալումից հետո նախաձեռնությունը ռազմաճակատում վերջնականապես անցավ Դաշնակիցներին, և գոտեմարտը վերջնախաղ մտավ, ըստ էության, 1918 թվականի սեպտեմբերի կեսերին: Ճիշտ է, ճակատի գլխավոր հրամանատար, անգլիացի գեներալ Էդմոնդ Ալենբի, որն իր նոր պաշտոնին էր նշանակվել 1918թ. ապրիլի վերջերին, նախատեսում էր թուրքերի ջախջախման գործողություն սկսել, սակայն արևմտյան (ֆրանսիական) ռազմաճակատում գերմանացիների մարտյան հարձակումը պարտադրում է պաղեստինյան (Դաշնակիցների) ուժերը շտապ կարգով տեղափոխել այնտեղ: Ուստի՝ «Մինչև սեպտեմբերի կեսերը, ինչպես գրում է Ա. Գոտովցևը, իրենց դրությունը բարելավելու նպատակով և աջ թևը ապահովելու համար անգլիացիները նախաձեռնում են տեղական նշանակության ռազմական

¹⁵¹ Стів Готовцев А., Операции в Палестине и Сирии, 1915-1918 гг. — «Военно-исторический журнал» (Москва), 1940, N 9, с 3.

գործողություններ: Իսկ բանակը զգալապես ուժեղանում է շնորհիվ Միջագետքից, Հնդկաստանից բերված ուժերի և ֆրանսիացիների ուժեղ ջոկատի»¹⁵²:

Այդ ուժերը վճռական գործողությունների նախօրյակին տեղական նշանակության (դիրքային) իրենց մարտերը մղում էին Հարավային ու Հյուսիսային Պաղեստինի սահմանագծում: Գեներալ Ալեքիի մտահոգացունով թուրքական զորքերի հիմնական զանգվածը վերցվելու էր օդակի մեջ, որի համար գլխավոր հարվածը պետք է տրվեր երկու ուղղություններով. ծախից՝ ճեղքել թուրքական բանակի (հրամանատար՝ Ջևադ փաշա) ճակատը և, շուռ գալով Ռաֆատ գյուղի շուրջը, ճակատը տեղափոխել հյուսիս-արևելք. աջից՝ հարձակումը սկսելով մեկ օր ուշ, շեղել թուրքական զորքերի ծախ թևը դեպի հյուսիս: Երկու հատվածներով հարձակվող զորամիավորումները պետք է միանային Նարլուսի շրջանում: Հաջողությունը պետք է զարգացվեր Սարանիի հովտում, Տուլ Կերամի ուղղությամբ՝ հեծյալ կորպուսի հիմնական զանգվածի անմիջական ներգրավումով, «հաղորդակցության հանգույցի» (Բեյզան, էլ Աֆուլե) գրավման և հակառակորդի՝ դեպի հյուսիս նահանջը խափանելու նպատակով: Աջից գլխավոր հարվածը պետք է հասցներ 20-րդ կորպուսը և 2 դիվիզիաների կազմով հրետանին, իսկ ծախից՝ 21-րդ կորպուսը հինգ դիվիզիաների կազմով և ֆրանսիական ջոկատով: [Հորդանանից] դեպի հյուսիս հարվածելու էր ապստամբ արաբների ջոկատը:

8-րդ բանակից բացի, թուրքական ճակատը աջից պաշտպանում էին 7-րդ բանակը (հրամանատար՝ Մուստաֆա Քեմալ փաշա) և 4-րդ բանակը (հրամանատար՝ Մերսիմլի Ջեմալ փաշա): Ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր հայտնի գեներալ Օտտո Լիման ֆոն Ջանդերսը: Մասնավորապես, 8-րդ բանակի կազմում էր գերմանացիների Ասիական կորպուսը («Asian Korps») (Երեք գումարտակ, երեք հրետանային մարտկոց, սակրավորների դասակը և հեծյալ դասակը: Հրամանատար, գերմանական գնդապետ ֆոն Ֆրանկենբերգ ունդ Պրոշլիտց)¹⁵³: Գերմանացի Գ. ֆոն Կուլը գրում է, որ Պաղեստինում դրոթյան սպառնականության ուժեղացման հետևանքով 1918թ. գարնանը «ասիական կորպուսն ուժեղացավ մի հետևակային գնդով, մի պահեստային հրաձգային գումարտակով և Մակեդոնիայից բերված մի սակրավոր վաշտով:

Շուտով, դրանից հետո, հրաձգային գումարտակը նորից տարվեց»¹⁵⁴: Մի այլ հեղինակի՝ Ա. Կիրպիչնիկովի տվյալներով, Ասիական կորպուսն իր կազմում ուներ 16-րդ և 19-րդ հետևակային դիվիզիաները, 701, 702 և 703 գերմանական հետևակային գումարտակները¹⁵⁵:

Հենց այս կորպուսի դիմաց էլ, ի մասնավորի, տեղակայված էր անգլիական 21-րդ հետևակային կորպուսը՝ իր կազմի մեջ ունենալով ֆրանսիական զորաջոկատը: Ընդսմին, թուրքական ուժերին՝ 8-րդ բանակի պաշտպանության տեղամասում, «գլխավոր հարվածը նավատորմի հետ համագործակցությամբ պետք է հասցներ 21-րդ կորպուսը»¹⁵⁶: Այսպիսով, Հայկական լեզեոնը, որը հանգամանքների բերումով հանդես էր գալիս Արևելյան լեզեոնի («Forces Alliés du Levant») անվան տակ, տեղակայված լինելով անգլիական 21-րդ կորպուսի աջ թևում [«...այս ճակատին ծախ թևը կտանվեր հնդիկ զորամաս մը, իսկ աջը՝ ալժիրյան ուժեր: Մեր լեզեոնը ստանձնեց Ռաֆաթ գյուղեն Արարայի բարձունքը երկարող կարևոր գծին պաշտպանությունը»՝ Խորեն քին. Աճեմյան], կարևոր դիրք գրավեց ֆրանսիական զորամասի («De'tachment Fraçais de Palestine-Syrie») կազմում Ռաֆաթ (գյուղի) շրջանում, «իր դեմ ունենալով թրքական զորավոր դիրք մը՝ Արարա, ուր կգտնվեին 701 և 702-րդ գերման գումարտակները»¹⁵⁷: «Հայ կտրիճներուն վիճակված էր գրավումը,- գրում է Ս. Պարթևյանը,- Արարա բլուրին, որուն բնական անառիկ դիրքերն ահեղորեն անրացնելով՝ թրք-գերմաններն իրենց դիմադրության առանցքն ըրած էին զայն»¹⁵⁸: Գնդապետ Ռոմիեոն, Արևելյան լեզեոնի հրամանատարը, ևս վկայում է, որ Արարան «գերմանացիք թրքական դիմադրության զորավոր առանցքը ըրած էին այն բաժնին մեջ, ուր այդ դիմադրությունը խորտակվեցավ»¹⁵⁹: Ընդ որում, երբ հայ «զինվորները հասած են ռազմաճակատ, թրքերը անմիջապես զորացուցած են իրենց ուժերը, այս անգամ բերելով նաև գերմանացի զինվորներ»¹⁶⁰:

¹⁵⁴ Куль Г., Дельбрюк Г., Крушение германских наступательных операций в 1918 году, с. 51.

¹⁵⁵ Стеу Курпичников А., Конные массы в развитии прорыва.- «Военно-исторический журнал» (Москва), 1940, N 8, с. 42:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 44:

¹⁵⁷ Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը. վավերագրեր, Գահիրե, 1946, էջ 192:

¹⁵⁸ Պարթևյան Ս., Արարա: Հայկական լեզեոնը, Բ տպ., Իզմիր, 1919, էջ 87:

¹⁵⁹ Պոյաճյան Տ. Հ., Հայկական լեզեոնը. պատմական հուշագրություն, Ուոթթաուն, 1965, էջ 129:

¹⁶⁰ Աճեմյան Խ., Հայկական լեզեոնը.- Տարեգիրք «Համազգային»-ի - 1953, Պեյրուք, 1952, էջ 73:

¹⁵² Նույն տեղում, էջ 13:

¹⁵³ Стеу Людшубеум Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., с. 278:

Բախտորոշ հարձակումն սկսվեց հանկարծակի, 1918թ. սեպտեմբերի 19-ին, առավոտյան ժամը 7-ն անց 30 րոպեին, հրացանային փոթորկալից կարճ նախապատրաստությունով, հարձակման համար նախատեսված 21-րդ կորպուսի տեղամասում: Դաշնակիցների զորագունդը, արագորեն ճեղքելով թուրքական ռազմաճակատը, ծավալվեց հյուսիս-արևելյան ուղղությամբ, դուրս գալով, առաջիկայում, օպերատիվ տարածություն: Ընդհանուր առմամբ, հետևակը փայլուն կերպով լուծելով իր վրա դրված պարտականությունը, պայմաններ ստեղծեց անապատի հեծյալ կորպուսի՝ Սարանի հովտով ճեղքման համար: Կեսօրին թուրքական 8-րդ բանակը ջախջախված էր և խառնիճաղանջ փախչում էր, իսկ Մուստաֆա Բենալի 7-րդ բանակը 20-րդ կորպուսի սեպտեմբերի 20-ի հարվածների տակ անկանոն նահանջում է: Թուրքերի վիճակը դառնում է ճգնաժամային: «Նրանց 7-րդ և 8-րդ բանակները շրջանցվում են թիկունքից»¹⁶¹: Լիդլ Ջարտը գտնում է, որ 1918 թվականի սեպտեմբերի 19-ին սկսված գործողությունը «ամենաարագ վճռական կամպանիաներից էր և համաշխարհային պատերազմի ողջ պատմության ամենակատարյալ վճռական ճակատամարտն էր: Մի քանի օրերի ընթացքում թուրքական բանակը Պաղեստինում դադարեց գոյություն ունենալուց»¹⁶²:

«Ճեղքումը,- գրում է ֆրանսիացի գեներալ Ռենե Տուռնեսը իր հերթին,- շանթասլաց էր և ամբողջական»¹⁶³: «Կարճ եղավ մենամարտը և սաստիկ,- հաղորդում է լեգեոնական Մ. Զարիկյանը,- անտեղիտալի էր թրքական դիմադրությունը և ուժգին, բայց կորովի էր ու զարհուրելի հայ զինվորի օրհասական քաջարի գրոհը»: Եվ «արագ ու անագորույն հարվածներուն տակ ճարձատեցավ բռնության որջը ու փլավ ճիվաղներու միջնաբերդը: Անարի թշնամին իր դեմ ցցված վրիժառու սվիններեն պաշտպանվելու անկարող՝ լքեց իր պաշտպանության բոլոր լավագույն դիրքերն ու բռնեց լեղապատառ փախուստի ճամբան»¹⁶⁴: Այսպիսով, «սեպտեմբերի 19-ի առավոտյան Բ գունարտակը, քանի մը ժամվան մեջ ռազմագիծը ճեղքելով, կը վտարե թշնամին և ձեռք կանցնե Արարայի բարձունքը, որ մինչ այդ նկատված էր աննվաճելի դիրք մը» (Խորեն քին. Աճեմյան):

¹⁶¹ Строчков А. А., Вооруженные силы и военное искусство в первой мировой войне, с. 570.

¹⁶² Лиддел Гарт Б., Правда о войне 1914-1918 гг., с. 364.

¹⁶³ Турнэс Р., Фох и победа союзников 1918 года, 1938, с. 181.

¹⁶⁴ Զարիկյան Մ., Արարայի փառահեղ հաղթանակը. Սեպտեմբերի 18-ն իր վաղորդայնով.- «Կամավորը». Արարայի հաղթանակի 10-րդ տարեդարձի առիթով, Գահիրե, 1928, էջ 43:

«Պարտությունը վճռական եղած էր ու նահանջը խուճապային»: Լուծված էր ռազմավարական հիմնախնդիրը: Ի վերջո, բացված էր ճամփան Սիրիայի ազատագրության, ճամփան Կիլիկյան Չայաստանի, դեպի թուրքական Անատոլիա: Կատաղի և հուսահատ հակահարձակումները չվերականգնեցին ո՛չ կորսված դիրքերը և ո՛չ էլ, մանավանդ, «գերմանացիի հավակնոտ գերմարդու պատիվը» (Տիգրան Յ. Պոյաճյան): «Այստեղ գտնվող հնդիկ զինվորներեն և ապա այլ բերաններե կհաստատվեր, որ դաշնակից կարևոր ուժեր մինչ այդ երեք անգամ հարձակած էին Արարայի բարձունքը գրավելու համար, բայց չէին հաջողած»¹⁶⁵:

Արևելյան լեգեոնը՝ «հայ զինվորը իր հերոսական կեցվածքով զամվեցավ ու թաղվեցավ իր գրաված դիրքերու մեջ, առանց քայլ մը իսկ ետ ընկրկելու, և մոտ քսան ժամ անընդհատ տևող այս կռվի մեջ <...> վերցուց իր վրա բոլոր ծանրությունը թրքագերման միացյալ ահավոր ուժերու... մինչև թրքական ճակատի ու թուրք զորամասերու ընդհանուր քայքայումը»¹⁶⁶:

Արժանվույն գնահատելով հայ զորականին՝ գեներալ Ալենքին պետք է հայտարարեր. «Արևելյան լեգեոնը կամ Չայկական լեգեոնը կարևոր բաժին մը ունեցավ 19 սեպտեմբերի 1918 թվականի Պաղեստինի ճակատին վրա տեղի ունեցած մեծ ճակատամարտի ընթացքին: Ես ասով հպարտ եմ»¹⁶⁷: [Չայկական լեգեոնի մասին լրացուցիչ տե՛ս Benoit d'Azy հոդվածաշարը.- «Revue d'Histoire diplomatique», 1939, janvier-mars; Kavallerie als schlichtentscheidende Waffe.-«Militarwochenblatt», Berlin, 1932, N 6, էջ 181-183]:

Արարայի ճակատամարտի աննախընթաց նշանակությունը Օսմանյան կայսրության ջախջախման և Անտանտի հաղթանակի գործում հասկանալու, հայ զորականի սխրանքի իմաստը ըմբռնելու համար, կարևոր է ռազմաճակատի տեղադրվածության ֆիզիկա-ռազմագիտական նշանակության գնահատականը: Գեներալ Ալենքիի զորավարական տաղանդի թելադրանքով ռազմաճակատի ընդգրկման հիմնական օղակին համընկավ այդ տեղանքի ռազմավարական հնարավորությունների առավելագույն շրջանակը (մասը):

«Ընդհանուր թրքական ճակատի ռազմական կարևոր կետերն էին,- գրում է Մ. Զարիկյանը,- Բաֆաթ Արարա լեռնաշղթան, ուր բնության վայրենությունը իր լրիվ կատարելագործումը ստացած էր

¹⁶⁵ Աճեմյան Խ., Չայկական լեգեոնը, էջ 73:

¹⁶⁶ Զարիկյան Մ., էջ 43:

¹⁶⁷ Տե՛ս Զորավար Արամ Գարամանուկյանի կյանքն ու գործը, Ֆորթ Լի, Նյու Ճրոզի, 1998, էջ 212:

իր ներկայացուցած դժվարին դիրքերովը: 15 մղոն երկարության մը վրա տարածված հարձակողական գծին էն կարևոր կեդրոնը այն լեռներն էին, որոնք կիշխեին բարձրեն տիրականորեն, աջ ու ձախ տարածված դաշտամասերուն վրա, դաշնակից բանակներուն կատարած ունեռազմական շարժումներուն: Րաֆաթն ու Արարան՝ ու Կատի Պալուտի (Յայկական լեզեոնի պահեստի գիծը.- հեղ.) անդնդախոր կիրճը, որպես անառիկ դիրքեր մեկ ամբողջություն մը կկազմեին, մինչև մոտակա Նաբլուս քաղաքը:

Բնականեն ամուր, սեպ ժայռերու ու անմատչելի ապառաժներու այս գիրար գերազանցող գեհենը, հաջորդական միջանցքներով իրար զոդված դժվարանցանելի կիրճերու և բլուրներու այն շղթան էր, ուր թուրքը Երուսաղեմի ճակատամարտեն վերջ իր այնքան խուճապահար փախուստի մեջ դյուրությամբ կրցած էր ժամանակին կասեցնել անգլիական բանակներու հաղթական առաջխաղացքը, և հոն՝ ամիսներե ի վեր աշխատած էր կազմակերպել ահեղ դիմադրություն մը, ապավինած անառիկ ու բնական ամրոցներու, և գերմանացի մեծ զորավար Լիման ֆոն Ջանդերս փաշայի ռազմագիտական հանճարին:

Գերման միլիթարիզմը՝ իր գինվորական բոլոր հնարամտությունը չէր խնայած այս ճակատի ամրացման շուրջ. ան որքան երևույթով վայրի՝ այնքան ալ պաշտպանության տեսակետեն դժոխային էր դարձեր: Քանի-քանի՝ անգամներ հարձակող բանակներ ետ ետ ընկրկած էին մեծ կորուստներով, և քանի-քանի հարձակման փորձեր անհաջող վիժումի դատապարտված էին այս գեհենաշնորհ դիրքերու դեմ:

Ընդհանուր ռազմաճակատի վրա ունեռազմական կողմեն ապահով առաջխաղացում մը ունենալու համար հարկ էր խորտակել այս բնական ամրոցը, որ իր աննվաճ դիրքերովը այդ ճակատին փորձաքարը եղած էր, և առով ալ կփրկեր ամբողջ թրքական ռազմաճակատին բախտը:

Յոն էր թուրքին բոլոր ուժը, հոն էր բռնության մեծագույն որջը, և հետևաբար՝ հոնկե պետք էր հարվածել թուրքին սիրտը ու խորտակել միջնաբերդը»¹⁶⁸:

¹⁶⁸ Ջարիկյան Մ., էջ 42:

Յիրավի, չէր սխալվում հանրաճանաչ լորդը, թե դաշնակիցների հաղթանակը ձեռք բերվեց նավթային ալիքի հզոր հարվածով: Ուրեմն, որոշակի իմաստով, առաջին աշխարհամարտը պայքար էր աշխարհի նավթաբեր շրջաններին տիրանալու համար: Ու թերևս իրավացի է «նավթագետ» Դ. Երգինը՝ գրելով. «Գլխավոր վտանգը գալիս էր Օսմանյան կայսրությունից: Թուրքիայի՝ Գերմանիայի կողմում պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո՝ աշնանը, նրա զորքերը սկսեցին սպառնալ պարսկական նավթավերամշակման շինություններին, որոնք գտնվում էին Արադանում»¹⁶⁹: Վտանգված էր Բասրան՝ հանգույցը Անգլիայի հետ նավթային կապի: Եվ «Նավթահանքերի անվտանգության ապահովումը, ինչպես նաև Պարսկաստանում գերմանական քայքայիչ գործունեության դեմ պայքարը գլխավոր նպատակներ էին»¹⁷⁰: «Դրա համար էլ Անգլիան ձեռնարկում է միջոցներ և ստեղծում համապատասխան պայմաններ»:

...Դեռևս 1916 թվականի մարտին անգլիական կառավարությունը Իրանի հարավ է գործուղում հատուկ առաքելություն՝ գեներալ Պերսի Սայքսի (Sikes Sir Percy Nobesworth) գլխավորությամբ: 1917 թվականի մարտի 25-ին Իրանի կառավարությունը թույլատրում է անգլիացիներին կազմակերպել հարավիրանյան հրաձիգների կորպուսը¹⁷¹: Կորպուսի՝ «South Persia Rifles» («Հարավային Պարսկաստանի հրաձիգներ») «կորիզը» կազմեցին հայերը, «որուն նպատակն էր, - գրում է Յայաստանի պատմության լավագույն գիտականներից Հրանտ Փաստերմաճյանը, - պաշտպանել կենսական նշանակություն ունեցող այդ շրջանը գերմանա-թուրքական թափանցումի դեմ»¹⁷²:

¹⁶⁹ Ергин Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть. Пер. с англ. М., 1999, с. 191:

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Ст'ю Иванов М. Н., Национально-освободительное движение в Иране в 1918-1922 гг. М., 1961, с. 15-16:

¹⁷² Pasdermajian H., Histoire de l'Arménie. Depuis les origines jusqu'au traité de Lausanne. Quatrième édition. Paris, 1986, էջ 415:

Հայկական զինուժը, ինչպես հասկանում եք, այս խնդիրը ևս լուծեց քաջությամբ և արժանապատվությամբ¹⁷³:

Իրավացի է, հետևապես, աշխարհամարտի անգլիացի ճարտարապետներից Ու. Չերչիլը, գրելով, որ հենց այն պահին, երբ պատմության մեջ չտեսնված ոճիրներով թուրքերը հասան իրենց նպատակին, «փլվեց նրանց ողջ պետությունը և Թուրքիայի ողջ ընկերային կազմակերպությունը»¹⁷⁴: Ու ստորաքարշությամբ հանձնվեց Դաշնակիցների ողորմածությանը՝ հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում: Մուդրոսի զինադադարի (1918թ., հոկտեմբերի 30) 25 հոդվածներից 4-ում (հոդված 4, 11, 14, 24) ամփոփվեց, այս կամ այն նկատառումով, առաջին աշխարհամարտի ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ*****:

Իսկ պրուսական միլիտարիզմի ու գերմանական դասական փիլիսոփայության հայրենիք Գերմանիան պատժվեց «ուժեղ և տոկուն» հայկական զինուժի բազուկի հարվածով [նաև], քաղաքակրթության ու առաջադիմության թշնամի օսմանյան ճիվաղի՝ XX դարի Մեծ Ոճիրը հովանավորելու համար:

¹⁷³ Մանրամասները տեսնել նաև Архив внешней политики России, фонд «Канцелярия МИД», 1917, у. 470, . 52, Г. 127:

¹⁷⁴ Черчилль У., Мировой кризис. Пер. с англ. М.-Л., 1932, с. 278.

***** «30 հոկտեմբեր 1918-ին,- գրում է Շ. Թորիկյանը,- դաշնակիցներուն կողմն պարտված Թուրքիան ստորագրեց Մուդրոսի զինադադարը: Հայկական զորքեր վերագրավեցին Կարսը, Արդահանը և Օլթին, և իբրև արդյունք՝ Հայկական Հանրապետությունը ունեցավ 54 հազար քառ. կիլոմետր տարածություն մը» (Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 21):

ՀԱԿԵԼՎԱԾ*

Գեներալ Լյուդենդորֆի հուշերը (Ludendorff E., Meine Kriegserinnerungen, Berlin, 1919, էջ 499, 500 և 509) ցույց են տալիս այն հետևանքները, որ ունեցավ Բաքվի երկարածոված այս պաշտպանությունը գերմանական բանակի համար՝ նրան զրկելով վառելանյութից 1918 թ. հունիս-հուլիս ամիսներին, ֆրանսիական կամպանիայի ամենաճգնաժամային ժամանակահատվածում:

Pasdermadjian H. Histoire de l'Arménie, էջ 420:

Պատուարժան Ուորեն Ջ. Հարտինկ.

Նախագահ Սենատի Արտաքին Յարաբերութիւններու

Յանձնախումբի մասնախումբին.

Նախ հինգ զլխաւոր պատճառներ պիտի ներկայացնեմ, որոնք, իմ դատողութիւնովս, հանդիսաւոր պարտականութիւն կը դնեն Ամերիկայի վրայ, այս միջոցին Հայաստանին օգնելու համար:

1. Պերլիմի մէջ դեսպանութեանս ատեն գիտէի, որ Կայսերական Գերմանիան այնչափ զէշ զգացումներ ունէր հայերու հանդէպ որչափ թիւրքերը ունէին, որովհետև Ռուսիոյ և Թիւրքիոյ հայերը ետ մղեցին Թիւրքո-Գերման այն առաջարկը, որով ինքնավարութիւն կը խոստանային հայերուն, պայմանով որ վերջինները միացեալ օժանդակութիւն ցոյց տային Գերմանիոյ և Թիւրքիոյ ընդդէմ Դաշնակիցներու, նաև անոր համար որ առանց հայերու կողմէ Ռուսիոյ ցոյց տրուած օժանդակութեան, թիւրքերը պիտի նուաճէին Ռուսական Կովկասը և միանային Կովկասի և Անդրկասպեան 24.000.000 կամ աւելի Դուրանացիներուն: Թիւրքերու այս յաջողութիւնը պիտի պարտաւորցնէր Ռուսիան որ Աւստրո-Գերման ճակատէն զօրաբաժիններ փոխադրէր Կովկաս, այսպիսով պատեհութիւն պիտի տրուէր գերմանացիներուն որ իրենց ուժերը Ֆրանսայի դէմ կեդրոնացնեն:

Հայերու հաւատարմութիւնը Դաշնակիցներու դատին, մէկ միլիոն կէանք արժեք իրենց:

* Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 351:

II. Վճռահանության օրը իր գրքին մեջ կ'ըստ է, գլխավոր ազդակը որ Գերմանական Արևմուտքի բանակի խորտակումը պատճառեց, վառելանիւթի պակասն էր, որովհետև թիւրքերը չ'կրցան ատենին գրաւել Պաքու: Պետք է յիշել, որ Ռուսիոյ Կովկասեան բանակը, 1917 Ղեկտեմբերին լքեց ճակատը և հեռացաւ, որ թիւրքերը և թաթարները կը կռուէին հայերուն դէմ, որոնք միայն մնացին հաւատարիմ Դաշնակից և Ընկերակից պետութիւններուն. և, որ, թիւրքերը չ'կրցան Պաքու հասնիլ մինչև 1918 Սեպտեմբեր, այսինքն Ռուսիոյ կազմալուծումէն ութ ամիս յետոյ: Ամերիկացիները պետք է կանգ առնեն վայրկեան մը և խորհին թէ ինչ կ'ըլլար պատերազմի ելքը կամ տևողութիւնը Արևմուտքի մէջ, եթէ թիւրքերը ութ ամիս աւելի առաջ հասնէին Պաքու, և անոնք աւելի կանուխ պիտի հասնէին հոն, եթէ հայերը չ'դիմադրէին անոնց:

III. Զօրավար Ալէնպիւն ըսած է, որ, 1918 Սեպտեմբերին, Պաղեստինի ճակատին վրայ, թիւրքերու վրայ իր տարած յաղթանակին մէջ, հայ կամաւոր զունդերն էին, որ առաջնորդող դեր կատարեցին: Զօրավար Վոն Սանտրս, Սիւրիոյ թրքական բանակի գերման հրամանատարը ըսած է թէ Պաղեստինի թրքական ճակատի խորտակումը վերագրելի է այն իրողութեան, որ թիւրքերը, հակառակ իր հրամանին և խրատին, երկու զօրաբաժին դրկած էին Կովկաս, ուր անոնք կռուեցան հայերուն դէմ:

IV. Ամերիկայի, ինչպէս նաև Մեծն Բրիտանիոյ և Ֆրանսայի, ակներև պարտականութիւնն է օգնել ուժասպառ հայ ժողովուրդին որ ինքզինքը պաշտպանէ, որովհետև հայերը օգնեցին մեզի որ պատերազմը շահինք:

V. Ամերիկան, իբրև մէկ անդամը, մասնաւոր ընկերակցութեան մը՝ կազմուած դաշնակից և ընկերակից պետութիւններով, անխուսափելի պարտականութիւնը ունի իր բաժինը բերելու, լրացնելու համար այն նպատակը որուն համար վերը յիշուած ընկերակցութիւնը կազմուեցաւ: Հայաստանի ազատագրութիւնը գլխաւոր նպատակներէն մէկն է այդ ընկերակցութեան:

Մեծն Բրիտանիոյ և Ֆրանսայի բարեկամներուն համար դառն յուսախաբութեան աղբիւր մըն է այն իրողութիւնը, թէ անոնք որ Գերման միլիտարիստներէն յարձակում կրեցին, թերացան գործադրելու իրենց բացորոշ և կրկնակի յայտարարութիւններն ու խոստումները, թէ Հայաստանի ազատագրութիւնը իրենց առաջին գործերէն մէկը պիտի ըլլայ, մինչդեռ այժմ, ջանքեր կ'ըլլան

Հայաստանը բաժնելու իբրև պատերազմական աւար: Մենք չ'մտանք այս պատերազմին մէջ հնարաւորութիւն տալու համար մեր դաշնակից կամ ընկերակցող պետութիւններէն որևէ մէկուն որ ինքզինքը շահախնդիրօրէն մեծցնէ ի գին հպատակ ազգի մը որ մեր դատին ճշմարիտ և հաւատարիմ մնաց մինչև վերջը:

Ամերիկայի բացորոշ պարտականութիւնն է ըսել Մեծն Բրիտանիոյ և Ֆրանսայի, մեր ապագայ բարեկամական յարաբերութիւններու սիրոյն, թէ Ամերիկան երբեք մասնակից պիտի չ'ըլլայ անոնց կողմէ Հայաստանի հողամասերուն յափշտակման որևէ ակտի: Կը խորհիմ թէ Ամերիկայի պարտականութիւնը, Հայաստանի հանդէպ, ոչ թէ անոր հանդէպ ունեցած իր պատասխանատութեան բաժինէն խուսափիլ կամ ուրիշ ուսերու վրայ նետել է, այլ հսկել, որ Հայաստանին տրուին և ապահովուին անոր արդար իրաւունքները: Մենք չենք կրնար նկատի ունենալ Համաձայնական Պետութիւններու կարծեցեալ իրաւունքները Հայաստանի մէջ, իրաւունքներ՝ որ ձեռք ձգուած են հին սխտեմի համաձայն, որովհետև մեր պատերազմին մէջ մտնելովը, միջազգային նոր յարաբերութիւն մը ստեղծուած է, և եթէ մենք որևէ չափով կամ որևէ ձևի տակ պիտի երաշխաւորենք աշխարհի խաղաղութիւնը, այն ատեն պետք է պնդենք թէ Հայաստանի իրաւունքներուն նախապատութիւն պետք է տալ քան զաղտնի դաշնագրութիւններու պայմաններուն, որոնցմով մեծ պետութիւններէն ոմանք կ'ուզեն Հայաստանը կողոպտել: Հետևողական չ'պիտի ըլլայ յաղթական պետութիւններուն համար ընել այն ինչ որ Գերմանիան փորձեց ընել և այդ պատճառով դատապարտուեցաւ:

Հայաստանի պետքերուն պահանջած օժանդակութեան բնոյթը մանրամասնելէ առաջ, թոյլտութիւն կը խնդրեմ ըսելու թէ Հայաստանի կեանքը չ'կրնար ապահով ըլլալ, եթէ չ'հսկենք որ Հայաստանի Արևմտեան կողմի թիւրքերը անզօր և անվնաս վիճակի մը մէջ դրուին: Թրքական Անատոլիայի մէջ գտնուող գրեթէ երեք միլիօն թիւրքերը, կասկած չկայ, որ պետք է ազատ պատեհութիւնը ունենան զարգանալու, լուսաւորուած Քրիստոնեայ իշխանութեան մը տակ, բայց ոչ մէկ պարագայի տակ թոյլ պետք է տրուի անոնց որ շարունակեն իրենց հին էնթրիքները, մէկ կողմէն եւրոպական պետութիւններու մրցակցութիւնը հրահրելով, իսկ միւս կողմէն Բան-Իսլամիսդ և Բան-Դուրանական ձեռնարկներ ընելով:

Լաւ է որ Ամերիկացիները գիտնան թէ աշխարհի մէջ խաղաղութիւն չի կրնար ըլլալ, եթէ թիրքերը չբաժնուին կովկասեան և անդրկասպեան Դուրանեաններէն և փակուին Անատոլիոյ հիւսիս-արևմտեան սահմաններուն մէջ: Հայերը պիտի կազմեն թուրք մը - Սև ծովէն մինչև Միջերկրական, և այսպիսով պիտի բաժնեն Արևմտեան Անատոլիոյ թիրքերը Կովկասի և անդրկասպեան Դուրանեաններէն: Այդպէս ըլլալով, և Բրիտանացիներու ներկայութիւնովը Պարսկաստանի մէջ, և Պաքուի ժամանակաւոր գրաւումովը Համաձայնական Պետութիւններու մէկուն կողմէ - մինչև որ Ռուսիան վերակազմուի - Հայաստան իր խաղաղութիւնը խանգարող դրացիներ չ'պիտի ունենայ և բաղդատաբար դիւրին պիտի ըլլայ իր ներքին վերակազմութիւնը ի գլուխ հանել:

Առաջարկուած Հայկական Պետութիւնը պէտք է որ բաղկանայ Ռուսահայաստանէ, և Թրքահայաստանի եօթը նահանգներու մասերէն և Կիլիկիայէն: Հայաստանի նօրմալ բնակչութեան թիւը, 1914-ին, կը կը հաշուէր 5.800.000, որոնց երեք միլիօնը հայեր էին, իսկ մնացածները՝ թիւրք, քիւրտ և ուրիշ մահմետական և ոչ հայ քրիստոնեաներ: Պատերազմի ընթացքին, գրեթէ մէկ միլիօն հայեր փճացան, և, համաձայն թիւրք և գերման տեղեկագրութիւններու, հաւասար թիւով մահմետականներ կամ փճացած են, կամ տեղափոխուած ուրիշ վայրեր: Թէպէտ և, այժմ, հազիւ քառորդ միլիօն հայեր կան Թրքահայաստանի մէջ, սակայն երկու միլիօնի մօտ հայեր կան Ռուսահայաստանին մէջ, որ հիմա կը ճանչցուի իբրև Հայաստանի Հանրապետութիւն, և մէկ միլիօնէ աւելի հայեր կան Հայաստանի կից և այլ վայրերու մէջ, որոնց մեծագոյն մասը կ'սպասուի որ վերադառնայ Հայաստան: Պէտք է նկատի ունենալ որ մէկ միլիօն հայերը որ փճացան Պատերազմի ընթացքին, բոլորն ալ բուն Հայաստանի մէջ չէին բնակիր: Անոնցմէ խոշոր թիւ մը նախկին Թիւրք կայսրութեան ուրիշ մասերուն մէջ կը բնակէին:

Վերը յիշուածներէն կը հետևի, որ, բնակչութեան տեսակէտէն, հայ տարրը մեծամասնութիւն պիտի կազմէ ապագայ Հայկական Պետութեան մէջ:

Հայերը սոսկալիօրէն ցնցուեցան պատերազմի ամբողջ տևողութեան և մեծ պետութեան մը օգնող ձեռքին պէտք պիտի ունենան քանի մը տարի: Միլիօն մը կամ աւելի հայեր իրենց հայրենիքը պիտի վերադարձուին, որբանոցներ պիտի հիմնուին, ամբողջ երկրին համար նորածն կառավարութեան սիստէմ պիտի

կազմուի, հայկական բանակ մը պիտի ստեղծուի, որուն համար պէտք եղածին չափ մարդկային ուժ կայ, փոխադրութեան միջոցներ պիտի շինուին, և այլն, և այլն: Համառօտ կերպով, ասոնք պիտի ըլլան Հայաստանին օգնող պետութեան կատարելիք գործերը:

Կ'ըսուի թէ Հայաստան շատ բնական հարստութիւն ունի և կարող է վճարել վերաշինութեան համար իր փոխառած բոլոր դրամը: Անկասկած, ես չեմ մոռնար այն կարելոր բանը թէ Հայաստանի պէտք է հատուցուին անոր կրած վնասները, և կասկած չունիմ թէ խաղաղութեան Վեհաժողովը պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնէ Հայաստանին համար համապատասխան տուգանք առնելու թիրքերէն, և այս պարագային այն փոխառութիւնները որ Հայաստան պարտաւորուած է անմիջապէս ընել կրնան կարճ ժամանակի մը մէջ վճարուիլ:

Յարգանք կը խնդրեմ ձեր մասնախումբէն որ Միացեալ Նահանգներու Սենատին յանձնարարէ առնելու հետևեալ քայլերը:

1. Որ, Միացեալ Նահանգներու Սենատը որոշում մը անցնէ, հրահանգելով Նախագահը որ ճանչնայ Հայաստանի Հանրապետութիւնը իբրև de facto կառավարութիւնը Հայաստանի:

2. Որ, Ամերիկան անմիջապէս ուտեստ ղրկէ Հայաստանի խաղաղ (civil) բնակչութեան համար, ինչպէս նաև ուտեստ, ռազմանիւթ և այլ պիտոյքներ Հայաստանի մէջ հայերէ բաղկացած 30.000-նոց բնակի մը համար:

3. Որ, Միացեալ Նահանգներու կառավարութիւնը արտօնութիւն տայ այս երկրին մէջ բնակող հայերուն որ կամաւորներ հաւաքեն (որոնց թիւը կրնայ 10.000 ըլլալ), նաև հնարաւորութիւն տայ Հայաստանի կառավարութեան, Պօլսոյ և Պուլկարիոյ շրջաններէն կամաւոր ստանալու (ուր, կ'ըսուի թէ 10.000-ի չափ պատրաստի մարդ կայ), և, որ, Ամերիկան օգնէ, որպէսզի այս կամաւորական ուժերը կազմակերպուին և փոխադրուին Հայաստան:

4. Որ, Միացեալ Նահանգներու Սենատը որոշում մը անցնէ ի նպաստ Հայաստանի անկախութեան, բաղկացած Ռուսահայաստանէ, և Թրքահայաստանի եօթը նահանգներէ և Կիլիկիայէ, և ի նպաստ հայերուն համար թիրքերէն համապատասխան տուգանք առնելու:

Ջեյմս Ու. Գերարտ

"The Armenians demand the redemption of their national heritage from alien rule, and its constitution into a free, self-governing and independent State of Armenia."

THE AMERICAN COMMITTEE
FOR THE
INDEPENDENCE OF ARMENIA
ONE MADISON AVENUE
NEW YORK

—
TELEPHONE 2545 GRAMERCY
HON. WARREN G. HARDING, CHAIRMAN,
SUB-COMMITTEE,
SENATE FOREIGN RELATIONS COMMITTEE:

I shall first offer five leading reasons which, in my judgment, impose upon America the solemn duty to help Armenia at this juncture.

1. During my Ambassadorship at Berlin, I knew that Imperial Germany felt as bitterly as the Turks did against the Armenians, because the Armenians of Russia and of Turkey turned down the Turco-German offer of autonomy made to them conditioned upon their lending united support to Germany and Turkey as against the Allies, and also because without the Armenian support to Russia, the Turks would have conquered the Russian-Caucasus and joined hands with 24,000,000 or more Turanians of the Caucasus and the Trans-Caspian, which success on the part of the Turks would have forced Russia to bring divisions from the Austro-German fronts to the Caucasus, thus offering Germany and opportunity to concentrate against France. The fidelity of the Armenians to the Allied cause cost them one million lives.

11. Von Ludendorff, in his book, states that the principal factor that forced the breakdown of the German Army in the west was due to the lack of fuel supply, because the Turks did not get to Baku in time. It should be recalled that the Russian-Caucasus Army went home in December 1917; that the Turks and Tartars fought the Armenians, who remained the only faithful allies of the Allied and Associated Powers, and that the Turks did not reach Baku until September 1918, that is eight months after the defection of Russia. It is well for Americans to pause and think as to what would have been the outcome or the duration of the war in the west, had the

Turks reached Baku eight months earlier than they did, which they would have done had the Armenians not resisted them.

III. General Allenby has said that the Armenian volunteer battalions on the Palestinian front took a leading part in the victory he carried over the Turks in September 1918. And General Von Sanders, the German Commander of the Turkish Army in Syria, has said that the breakdown of the Turkish front in Palestine was due to the fact that the Turks, against his orders and advice, had sent two divisions to the Caucasus, where they fought the Armenians.

IV. It is the plain duty of America, as it is the plain duty of Great Britain and of France, to aid the exhausted Armenian people to protect itself, because the Armenians helped us win the war.

V. America, as a member of a special copartnership, as represented by the Allied and Associated Powers, has the bounden duty to contribute toward the fulfillment of the purposes for which said copartnership has been formed. The liberation of Armenia is one of the principal purposes of that copartnership.

It is a source of keen disappointment to the friends of Britain and of France that they, who were attacked by a militarist Germany, have failed to make good their plain and repeated professions and pledges that the liberation of Armenia would be one of their first concerns, and that efforts are now being made to divide up Armenia as the spoils of the war. We did not enter this war to enable anyone of our allies or associated powers to aggrandize itself at the expense of a subject nationality which, to the last, remained true and faithful to our cause. It is the plain duty of America to tell Great Britain and France, in the interest of our friendly relations with them in the future, that America shall not and will not make itself a party to any act of spoliation by them of Armenian territories. I feel that the duty of America toward Armenia is not to shift or shirk her share of responsibility toward Armenia, but it is to see to it that Armenia is given her legitimate rights and be insured in those rights. We cannot consider the alleged rights of the Powers of the Entente in Armenia, - rights of claims which have been acquired under the old system of things, - because with our entry into the war a new international relationship has come into being; and if we are to guarantee, to any extent or under any form, the peace of the world, then we must insist that the rights of Armenia must be given preference over the provisions of the secret treaties under which some of the great powers seek

to despoil Armenia. It would be inconsistent on the part of the victorious powers to do what they condemned Germany for having attempted to do.

Before I specify the nature of aid that Armenia required, I desire to be permitted to state that the life of Armenia cannot be made safe and secure, unless we see to it that the Turks to the west of Armenia have been rendered impotent and harmless. About three million Turks, who may be found in Turkish Anatolia must, no doubt, enjoy free opportunity for development under an enlightened Christian rule, but under no circumstances should they be left free to engage in their old game of intriguing, by exciting the rivalries of European powers on one side, and by pursuing their Pan-Islamist or Pan-Turanian adventures on the other.

It is well for Americans to know that there can be no peace in the world unless the Turks have been separated from the Turanians of the Caucasus and the Trans-Caspian and confined within the boundaries of north-western Anatolia. The Armenians shall constitute a block from the Black Sea to the Mediterranean, and thus cut off the Turks of western Anatolia from the Turanians of the Caucasus and the Trans-Caspian. That done, and with the presence of the British in Persia and in Mesopotamia, and with the provisional occupation of the Baku region by one of the Powers of the Entente, until the reorganization of Russia, Armenia will have no neighbors to disturb her peace, and it will be comparatively easy for her to work out her internal reorganization.

The proposed Armenian State shall consist of Russian Armenia and of parts of the Seven Provinces and Cilicia in Turkish Armenia. The normal population of Armenia in 1914 was estimated at 5,800,000 of which three millions were Armenians, and the rest, Turks, Kurds and other Moslems and Non-Armenian Christians. About one million of Armenians have perished during the war, and according to Turkish and German reports an equal number of Moslems have either perished or moved elsewhere. While in Turkish Armenia the Armenians now number hardly a quarter of a million, there are about two million Armenians in Russian Armenia, which is now known as the Armenian Republic, and over one million other Armenians in the contiguous regions of Armenia and elsewhere, the great majority of whom are expected to return to Armenia. It is to be noted that the one million Armenians, who have perished during the war, did not all live in Armenia proper. A considerable number of them lived in other parts of the former Turkish Empire.

From the foregoing it is to be inferred that in point of population, the Armenian element will constitute the majority in the future Armenian State.

The Armenians have been terribly shaken thruout the war, and will need the helping hand of a great power for a number of years. A million or more Armenians are to be repatriated; orphanages are to be founded; a modern governmental system is to be organized for the entire country; an Armenian army is to be created, for which there exists ample human material; means of transportation is to be constructed, etc. These, in brief, shall be the functions of the aiding Power of Armenia.

Armenia is said to be rich in natural resources and is capable of paying back all monies that she must borrow for her reconstruction. I am, of course, not forgetting the essential fact that Armenia must be indemnified for her losses; and I have no doubt that the Peace Conference will devise necessary means to exact adequate indemnity from the Turks for Armenia, in which event the loans that Armenia must immediately contract may be paid back in a short time.

I respectfully ask your Sub-Committee to recommend that the United States Senate take the following steps:

(1) That the United States Senate adopt a resolution calling on the President to recognize the Armenian Republic as the de facto government of Armenia;

(2) That America send at once food for civil population of Armenia, and food, munitions and supplies for an army of 30,000 Armenians in Armenia;

(3) That the United States Government authorize the Armenians in this country to call out volunteers (of whom there may be 10,000) and also enable the Armenian Government to get volunteers in the regions of Constantinople and Bulgaria, (where there is said to be 10,000 available men) and that America help these volunteer forces to be equipped and transported to Armenia;

(4) That the United States Senate adopt a resolution in favor of the independence of Armenia, including Russian Armenia, the Seven Provinces and Cilicia in Turkish Armenia; and in favor of the exaction of adequate indemnity from Turkey for Armenia.

(Signed) JAMES W. GERARD.

1. Գարամանուկյան Ա., Հայկական լեզունը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վավերագրեր (Պեյրուք, 1974).- Ջորավար Արամ Գարամանուկյանի կյանքն ու գործը, Ֆորթ Լի, Նյու Երրզի, 1998, էջ 199-335:

2. Գյուլխանդանյան Ա., Բազմի հերոսամարտը.- «Հայրենիք», 1941, հուլիս, էջ 89-102, օգոստոս, էջ 101-115, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 81-92:

3. Լեյլանի (Մովսես Տեր Գալուստյան) Ա. Հայկական լեզունը. Անձնական հուշեր և հույզեր.- «Հայրենիք», 1930, փետրվար, էջ 59-66:

4. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոիվները, Եր., 1984:

5. Մելիք-Յուլյան Ս., Բազմի հերոսամարտը.- «Հայրենիք», 1925, մայիս, էջ 105-128, հունիս, էջ 104-118, հուլիս, էջ 68-74, օգոստոս, էջ 97-113, սեպտեմբեր, էջ 68-78, հոկտեմբեր, էջ 123-129:

6. Պարթևյան Ս., Արարա: Հայկական լեզունը, Բ տպ., Իզմիր, 1919:

7. Վազգեն, Ատրպատականի գոյամարտը.- «Հայրենիք», 1930, սեպտեմբեր, էջ 150-155, հոկտեմբեր, էջ 161-163, դեկտեմբեր, էջ 156-162, 1931, հունվար, էջ 116-120, ապրիլ, էջ 159-160, հուլիս, էջ 157-169, նոյեմբեր, էջ 150-154, դեկտեմբեր, էջ 160-164, 1932, հունվար, էջ 159-164, փետրվար, էջ 146-150:

8. Барсегов Ю. Г., Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. В 2-х т. Т. 2, ч. 2, М., 2005, с. 180-251.

9. Воспоминания Гинденбурга. Сокр. пер. с нем. Пг., 1922.

10. Готовцев А., Операции в Палестине и Сирии (1915-1918 гг.).- «Военно-исторический журнал», 1940, N-9, с. 3-18.

11. Гофман М., Записки и дневники, 1914-1918 гг. Пер. с нем. Л., 1929.

12. Денстервиль А., Британский империализм в Баку и Персии, 1917-1918 гг. Воспоминания. Пер. с англ. Тифлис, 1925.

13. Емельянов А. Г., Персидский фронт (1915-1918 гг.), Берлин, 1923.

14. Кирпичников А., Палестинская операция.- «Военно-исторический журнал», 1940, N-8, с. 40-50.

15. Куль Г. фон, Дельбрюк Г., Крушение германских наступательных операций в 1918 году. Пер. с нем. М., 1935.

16. Лиддел Гард Б. Г., Правда о войне 1914-1918 гг. Пер. с англ. М., 1935.

17. Луазо Л., Германская стратегия в 1918 году. Пер. с фр. М., 1936.

18. Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966.

19. Мозер О. фон, Краткий стратегический обзор мировой войны 1914-1918 гг. Пер. с нем. М., 1923.

20. Прусско-германский генеральный штаб 1640-1965 гг. К его политической роли в истории. Пер. с нем. М., 1966.

21. Риттер Х., Критика мировой войны. Наследство графа Мольтке и Шлиффена в мировой войне. Пер. с нем. Пг., 1923.

22. Саджент Г. Х., Стратегия на Западном фронте 1914-1918 гг. Пер. с англ. М., 1923.

23. Тејлор А. Дж. П., Борьба за господство в Европе. 1848-1918 гг. Пер. с англ. М., 1958.

24. Турнэс Р., Фош и победа союзников 1918 года. Пер. с фр. М., 1938.

25. Фалькенгайн Э. фон, Верховное командование 1914-1916 гг. в его важнейших решениях. Пер. с нем. М., 1923.

26. Фош Ф., Воспоминания. Война 1914-1918 гг. Пер. с фр. М., 1939.

27. Царев Н. Т., От Шлиффена до Гинденбурга. О провале военной доктрины кайзеровской Германии в 1914-1918 гг. М., 1956.

28. Чалхушьян Г. Х., Красная книга. Ростов-на-Дону, 1919.

29. Черчилль У., Мировой кризис. Пер. с англ. М.-Л., 1932.

30. Шаццло В. К.Б Первая мировая война 1914-1918 гг. Факты. Документы. М., 2003.

31. Korganoff G., La participation des Armeniens a la guerre mondiale sur le front du Caucase, 1914-1918. Paris, 1927.

32. [Allenby] A Brief Record of the Advance of the Egyptian Expeditionary Force under the Command of general sir Edmund H. Allenby. July 1917-October 1918. Cairo, [w.y. 1919]. L. 1919.

33. Pasdermajian G. (Armen Garo), Why Armenia should be Free. Armenians role in the Present War. Boston, 1918.

ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ
ԱՐՄԵՆՈՑԻԴ. ԹՈՒՐԳԱԿԱՆ ԷԹՆՈՑՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

[Մեծ Եղեռնի տարիներին] «...զինադադարեն ետքն ալ, թուրքերուն մեջեն արդարության որևէ ծայն չբարձրացավ. չգտնվեցավ թուրք մը, որ դատապարտեր ոճրագործությունները, թալանը. հազվագյուտ թուրքեր երբեմն փորձեցին դատապարտել եռապետության վայրագությունները, բայց երբեք բավական չէին, և արդարության սերը չէ, որ կմղեր զիրենք խոսելու: Ընդհակառակը, ամբողջ թուրք ժողովուրդը մոտեն մասնակցած ըլլալով հայկական հարստահարությանը և թալանին, բոլորն ալ հայտնորեն ու լայնորեն օգտված, պիտի չուզեին քննադատել կառավարական այն հրահանգները, որոնք իրենց նյութական շահ և արյունի ծարավը հազեցուցած էր:

Ավելին ըլլալով, իրենց մոլեռանդ ատելությունը հայոց դեմ առհավական (ժառանգական-Լ.Շ.) հիմ ունի, իրենց աղիքներուն, ոսկորներուն, արյունին մեջ տարածված, ամոնց հետ շաղախված հիմեն ի վեր: Կարելի չէ գտնել թուրք արարած մը, որ չսնուցանե մինչև այսօր հայը հալածելու կիրքը, ցեղային, ազգային իդեալի մը հավասար իմաստով: Ո՛չ թե միայն օտարը, բայց անգամ այն հայը, որ Թուրքիա չէ ապրած, չի կրնար հասկնալ, ըմբռնել այս ճշմարտությունը:

Մանավանդ, բոլոր թուրքերն ալ, անխտիր, մեծեն պզտիկը, տգետն իսկ, գիտեն լավ խոսիլ, լեզվանի են, ի հարկին անույշ լեզու գործածել կրնան, քծնիլ իսկ, վարպետ են ստելու, շողջորթելու, համոզելու մեջ. այս մարզերուն իրենց ունեցած կարողությունները, տաղանդը, ինձի ծանոթ որևէ ժողովուրդին մոտը չեն տեսած: Անկասկած, մեծ մասով ասոր կպարտին օտարներու մոտ իրենց շահած համակրական հաջողություններն շատ շատերը»:

Ստեփան Շահպազ

Հստակ է, որ թրքությունը սերունդե սերունդ կենսածնով փոխանցված վիճակ մըն է, որ այդ ժողովուրդին անդամները ի վերջո կհասցնեն ուրիշը չարչրելու և արյան հեղունը վայելելու հիվանդագին հաճույքին: Ասոր գիտակրթական անբողջական չգոյությունը կշեշտեն ասակորությունը կացության»:

Մարուշ Երեմյան

«Հայերի սպանող իրականացվել է թուրքական կառավարության կողմից ամբողջովին ծրագրված, նախապատրաստված և կազմակերպված ձևով: Կարծում եմ, որ առանց եվրոպական երկրների աջակցության և գաղտնի համաձայնության թուրքական կառավարությունը չէր կարող այդքան մեծ մասշտաբներով այդ ասակոր ոճիրը իրականացնել»:

Անահիտ Հովհաննեսի Աբգարյան
(Դիանա Ա. Աբգար)

Սուտք

Վերջին տարիներին, հատկապես Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին, աճում է հետաքրքրությունը 20-րդ դարի Մեծ Ռճիրի հանդեպ, որ պայմանավորված է տարբեր գործոններով.

առաջին, պատմա-ճանաչողական գործընթացը շարունակելու անհրաժեշտությամբ, հայոց կողմից ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման ռազմավարության մեջ նոր երանգներ ներդնելու անհրաժեշտությամբ,

երկրորդ, Թուրքիայի ժխտողականությանը հակազդելու, իվերջո, արմենոցիդի (հայասպանության) մեջ թուրք պետությունը պատասխանատու ճանաչելուն ուղղված ջանքերի ներդաշնակեցման հրամայականով, արդարահատույցի համար ուղիների որոնումով,

երրորդ, այն գիտակցումով, որ անպատիժ մնացած հանցագործությունը թուրք ինքնության ինքնագիտակցության պատմական ենթաշերտերում ունենալով (եթնոֆորիայի) պարարտ

հող, իսկ ռազմաքաղաքական պատմության և քաղաքական մշակույթի առանցքում՝ էթնիկական մաքրագործումների, մեղմ ասած, հարուստ և կայուն ավանդույթ, ծնունդ է նոր ցեղասպանությունների (էթնոցիդ, գենոցիդ) գայթակղություն,

չորրորդ, հետերկրևեռ աշխարհում էթնիկական հակամարտությունների յուրահատկությամբ. «բանի որ էթնոսները հանդես են գալիս տարածապես կազմակերպված կառուցվածքներ, էթնիկական հակամարտությունները ձեռք են բերում առանձնահատուկ սրություն, եթե նրանց օբյեկտներն ունեն տարածական բնույթ կամ տարածական ծագում (տարածքների, հողերի, նրանց ընդերքի հարստությունների տիրում, պետության տարածքային կառուցվածք և ուրիշներ)»¹⁷⁵:

Տրամաբանական է, որ հիմնախնդիրը պահանջում է գիտատեսական և գիտամեթոդական աշխատանքների խորացում, սովորող երիտասարդության, մասնաորապես արհեստավարժ ուսանողության, ինչու չէ՝ նաև մանկավարժ ստվար զանգվածի, պատասխանատու քաղաքացիների շրջանում պատմաքաղաքագիտական մտածողության և պատմական հիշողության դաստիարակություն:

Դասախոսության համապատասխան տեքստն էլ մի փորձ է առաջադրանքի կատարման ուղղությամբ, գիտատեսական և ուսումնամեթոդական հետազոտությունները նոր պայմաններում առաջ մղելու, հիմնախնդիրը ՀՀ ազգային անվտանգության քաղաքական դիտելու տեսանկյունից:

¹⁷⁵ Авксентьев В.А. Этнические конфликты: история и типология. – Социс, 1996 № 12, с. 44.

1915 թվականի ապրիլի 24-ին օսմանահպատակ հայության էլիտայի ձերբակալություններով Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում արևմտահայությունը թուրքական կառավարության որոշումով և թուրք ժողովրդի կամքով բռնեց անէացման ճանապարհը, որը Գլխավոր դաշնակից տերությունները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան) նույն թվականի մայիսի 24-ին դիտեցին որպես ոճիր «մարդկության և քաղաքակրթության դեմ»: Նրանք ի լուր աշխարհի հայտարարեցին. «Գրեթե մեկ ամսից ի վեր Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թույլտվությամբ և հաճախ աջակցությամբ... Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված թուրքիայի (ընդգծումներն իմն են.-Լ.Շ.) այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում» («ՀԱՎԱ» գործակալություն, Փարիզ, 24-ը մայիսի 1915թ.)¹: Մարդկությանը դեռևս անհայտ այս ոճիրը տարիներ անց իրավաքաղաքական գրականության մեջ և միջազգային իրավունքի շրջանակներում որակվելու էր որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ գենոցիդ², այսինքն ռասայական, ազգային կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի կամ ժողովուրդների ոչնչացում, «ամբողջ մի ժողովրդի սպանություն»:

¹ Գենոցիդ (ցեղասպանություն) հասկացության հեղինակն է լեհաստանցի հրեա Ռաֆայել Լեմկինը (1944 թվական): ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանը 1948 թվականի դեկտեմբերի 9-ին միաձայն ընդունեց Ցեղասպանության կանխման և պատժի կոնվենցիան: Ուժի մեջ է մտել 1951թվականի հունվարի 12-ին:

Հստակ էր թուրքական նպատակը՝ զիտակցված ու պլանավորված էին նրա գործողությունները. ոչնչացնել հայ ժողովրդին զանգվածորեն ու գլխովին: Գերխնդիր էր նրա բնաջնջման միջոցով ոչնչացնել Հայաստանը, վերջնականորեն սեփականել հայոց Հայաստան հայրենիքը դարձնելով այն «Արևելյան Անատոլիա», «յուրացնել» հայկական մշակույթը², ջնջել հայկական քաղաքակրթությունը, կողոպուտի և ավարառության թուրքական ավանդույթ-օրենքով տեր դառնալ հայոց նյութական ահռելի հարստությանը³:

Եղեռնագործությունը, ճիշտ է, թափ առավ 1915-ի ապրիլի 24-ին ու թուրքական եռանդով շարունակվեց հետագա մի քանի տարիներին, սակայն թուրքական հանճարը Մեծ ոճիրը հղացել էր տասնամյակներ առաջ... Սկսել էր երկրի անվան, նրա տեղանունների ու աշխարհագրության բռնաբարումից, դեմոգրաֆիական (ժողովրդագրական) իրողությունների խեղաթյուրումներից: Այս իմաստով Թուրքիան աշխարհն այլասերող առաջին երկիրն է: 1862թ. տեղի է ունենում կայսրության նահանգների վերակազմություն: [«Թուրքիայի կողմից զավթված Արևմտյան Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասից սկզբնական շրջանում կազմվեց մի կուսակալություն, որը կոչվում էր Էրմենիստան: Նրա կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որի անունով էլ շուտով Էրմենիստան էյալեթը կոչվեց Էրզրումի էյալեթ»⁴]: «Էրմենիստան էյալեթ» մեծ նահանգը տրոհվում է Էրզրում, Բիթլիս և Վան նահանգների և նրանց են կցվում, Արևմտյան Հայաստանի հայկական դիմագիծը ջնջելու համար, «ծուռ ու մուռ սահմաններով իսլամական շրջաններ», ինչպես կասեր Հայկազն Գ. Ղազարյանը: Այնուհետև, 1878 թվականին, Բեռլինի կոնգրեսից երկու տարի անց Արևմտյան Հայաստանում հայկական բնիկ տարրի տեսակարար կշիռը էլ ավելի նվազեցնելու նպատակով այնտեղ կատարվում է վարչական նոր բաժանում: Իսկ 1880թվականի օգոստոսի 30-ին սուլթանական հրամանագրով արգելվում է «Հայաստան» («Արմենիա») անվան գործածումն ու աստիճանաբար այն դուրս է բերվում շրջանառությունից առհասարակ: Այդ պահից այլևս «նման հողամաս անձանոթ վայր մը կըլլա կայսրության ղեկավարներուն համար» (Գ.Եազըճյան, էջ 325) : [Այսօր արդեն Արևմտյան Հայաստանը Արևելյան Թուրքիա է, Արևելյան Անատոլիա: Եվ դա կատարվում է որպես հետևանք մասամբ մտքի ծուլության,

մասամբ էլ տգիտությամբ: Առայժմ խոսքը դեռևս ցեղասպանությանը և նրա գործադրմանը չի վերաբերում, սակայն տվյալ գործողությունները նպատակ ունեն հայությանը իր հայրենիքում տարրալուծել իրեն խորթ ու անհարազատ «մուսուլման» կոչվող խառնամբոխի մեջ:

Թուրքական տեսակետի «ճշգրտման» առիթ է դառնում, անշուշտ, 19-րդ դարի կեսերից արձանագրված հայոց քաղաքակրթական-տնտեսական վերածննդի աննախադեպ թռիչքը, Հայաստանի և՛ արևմտյան, և՛ արևելյան հատվածներում: Այս հանգամանքը նկատում և առավել քան պարզությամբ ներկայացնում է անգլիկան եկեղեցու հոգևորական, ուսուցչապետ Բերտրան Բարեյլը: Նա նշում է, որ Ազգային Սահմանադրությունը (1860թ.) թեև «միայն հայ ազգին մասնավոր շահերը կկարգավորեր, բայց միանգամայն նշանավոր հեղափոխություն մը կգործեր Արևելքի սովորությանց մեջ: Սահմանադրությունը ազգին գլուխը կպահեր պատրիարքը, իբր պաշտոնական միջնորդ հասարակության և կառավարության մեջտեղ»: Բարեյլն ասում է. միաժամանակ, «սկսան ինքնին հանդես գալ և ծաղկել շատ մը ընկերային և կենցաղային զարգացման կետեր», թափ առավ ժողովրդական երկսեռ կրթության գործն ու «բարեպաշտական և բարեգործական» գործունեությունը: Եվ այս բոլորը բացառապես «ազգին կամովին զոհողություններով»:

«Այդ կենցաղային բարելավությունները, — շարունակում է Բ. Բարեյլը, — զորս Աբդուլ-Ազիզի ներողամիտ կառավարությունը դյուրացուցած էր, չէին կրնար չհուզել յուր հաջորդին կասկածոտ և անվստահ տեսությունները: Աբդուլ-Համիդ գեշ աչքով նկատեց այդ տարօրինակ երևույթը, որով ազատամիտ վարչություն մը կծաղկեր յուր բռնապետական կառավարության հովանույն ներքև և լավ աչքով չտեսավ, որ հայը, թեպետ ստրկացած և ընկճված իբրև Օսմանյան հպատակ, ազատաբար ապրի իբրև յուր եկեղեցվույն անդամ: Ասոր համար այն դրությունը երկար պիտի չտևեր: Շուտով հայերը կասկածելի դարձան թե Թուրքիո և թե Ռուսիո մեջ հավասարապես, և այլևս հանգստության վայրկյան մը չկրցան ունենալ»⁵:

Քաղաքակրթության ոլորտում հայերի ունեցած ընդունակությունների մասին արտահայտվել են նաև որոշ թուրքեր: Բնորոշ է գեներալ Շերիֆ փաշան իր խոստովանությունով. «Չկա մի լուսավորյալ թուրք, որը չստորագրի հետևյալ հայտարարության

տակ, որ արված է <...> անգլիական պառլամենտի դեպուտատ Լինչի կողմից. «Չայերը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որպեսզի նոր քաղաքակրթության կրողներ լինեն: Նրանք հարազատ են դարձել մեր ամենաբարձր իդեալները: Նրանք եվրոպական մշակույթի նոր նվաճումները յուրացնում են մեծ ազահությամբ և դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարող հասնել ոչ մի ազգ»⁶:

Հիրավի, թուրքական հռչակավոր նախանձն ու մաղձը ունեցան իրենց բացառիկ դերը Մեծ Եղեռնի էթնոհոգեբանական հենքի նախապատրաստման համար, ինչը հրաբխի նման ժայթքեց հետագա տարիներին: Սակայն, այդուհանդերձ, «գլխավոր փաստարկը» շատ անգամ, նույնիսկ մինչև օրս, անըմբռնելի աշխարհաքաղաքացու համար, դեռևս մակերես դուրս չի եկել: Իսկ «գլխավոր փաստարկը» հայի Չայաստան հայրենիքն էր, ամեն գնով այն «սեփականելու» թուրքական անկասելի մղումը, այդ Չայաստանն իր օրինական ու բնական տիրոջից անվերադարձ խլելու թուրքական անասնական բնազդը: Ոճրածին այս նպատակը հանճարեղ պարզությամբ ցույց է տվել Չայոց բանաստեղծը: «Վերցրեք թուրքիայի քարտեզն ու մտիկ արեք,— ասում էր (և կարծես կրկնում է այսօր) Յովհաննես Թումանյանը: —Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ եղ երկիրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Չայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է հայկական հարցը: Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը (Թուրքիան.-Լ.Շ.) հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը: Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը՝ հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել: Այո՛, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ: Եվ էս ճանապարհով էլ նա արդեն հասել է մեծ հետևանքի: <...> Եվ էս ջարդին ու գաղթին վերջ չկա»⁷: Եվ կամ՝ «...տաճկահայ ժողովուրդն իր հարցով <...> եղել է

եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մինը, և անպայման ամենադժբախտը:

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր Թյուրքիայի սրտում, ամենադժվար ու ամենավտանգավոր տեղում, և Թյուրքիան նրան բաց պիտի թողներ միայն իր վերջին շնչի հետ:

Եվ նա՝ Թյուրքիան, դիմել է, դիմում է ու կդիմի ամենահրեշավոր միջոցների՝ վերջ դնելու էդ ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը մի անգամ ընդմիշտ փակելու համար»⁸:

Թուրքական «գլխավոր փաստարկի» մասին առաջին անգամ խոսվում է այսպես կոչված Քյամիլ փաշայի քաղաքական կտակում: Սույն փաշան Սան Ստեֆանոյի և Բեռլին—նի դաշնագրերի անմիջական հետքերով, այսինքն Չայկական հարցի միջազգայնացումից հետո միայն, երբ հայը դեռևս կայսրության «հավատարիմ ազգն» («միլլեթ ի սադրկ») էր և մտավոր պատկերացում անգամ չկար հայ հեղափոխության ու հայկական ազգային կուսակցությունների մասին, ասում էր. ողջամտությունը պահանջում է ոչնչացնել և մեր երկրի երեսից ջնջել այն բոլոր տարրերը, որոնք կարող են հետագայում մեզ սպառնալ վտանգներով և կարող են ծառայել միջամտության առարկա և գործիք եվրոպական երկրների ձեռքին: Եվ այնուհետև. «հիմա, այսօր զոհն» Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայում («մենք և Անգլիա Չայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է որ ջախջախենք») մեր տարածքները ազատ լինեն ուրիշների միջամտությունից և միջամտության աղբյուրներից, այդ սրբազան նպատակին հասնելու համար «ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անճետ (անզավակ.— Լ. Շ.) ընելու ենք»: Այդ ծրագրի իրականացման համար «ամեն գործիք պատրաստ ունինք». քուրդ, չերեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, «վերջապես ամենայն ինչ», որոնք կարող են սրբազան պատերազմ հայտարարել այդ ազգի դեմ, «որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ էլ պաշտպան», իսկ մենք, ընդհակառակը, ունենք զենք ու բանակ և աշխարհի ամենախոշոր հարուստ տերությունը (Անգլիան.— Լ. Շ.) որպես մեզ դաշնակից և Փոքր Ասիայում մեր «աշխարհքին երաշխավոր»⁹: «Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի» և քրիստոնյա եվրոպան Տաճկական Ասիո մեջ չկարողանա գտնել ոչ մի կրոնակցի,

այդ ժամանակ նա մեզ հանգիստ կթողնի և «այն ատեն կզբաղվինք ներքին գործերով և բարեկարգությամբ»¹⁰:

Նույն մտքերն է որոճում հերթական մի փաշա, Համիդի կառավարության հերթական մի նախագահ՝ Սայիդ Քյուչուկը (1884 թ.): Հայաստանի ոչնչացման նույն բաղձանքն է հնչում «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար, հերթական թուրք մի դահիճ՝ Մեհմեդ Նազիմի ճառում, Սալոմիկի ժողովում (1910 թ. հոկտեմբերի 31). «...մեր հայրենիքը,-ասում է նա,- ասկե վերջ միայն ու միայն կրնա ըլլալ Անատոլուն: Ասիական հողամասին վրա դեպի Արևելք անսահման կարելիություններ կգտնվին մեր զարգացման ու ընդարձակումին համար: Մի մառանաք, որ մեր նախահայրերը թուրանեն եկած են...մեզի կմնա սրբազան պարտքը իրականացնելու թուրք ցեղի միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը: ...այդ քաղաքական ծրագրին իրականացման նախապայմանը՝ Հայկական Հարցի արմատական լուծումն է: ...Այսօրվան մեր քաղաքականության ամենն կենսական, անհետաձգելի և հրամայողական հարցը կնկատեն Հայկական հանդիքը, որուն պետք է լուծում մը գտնել... արմատական և ամբողջական լուծում մը... կմնա միակ ու վերջին կարելիություն մը, որուն հետ կամա թե ակամա, պարտավոր ենք հաշտվիլ, ընդունելով թրքական շահերուն համապատասխանող միակ ելքը: *Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ: «...»* Բոլորս ալ կհասկնանք, որ շատ բարդ ու դժվար է ձեռնարկը: Հարցը մեկ շրջանի, Արևելյան Անատոլուի (կարդա Արևմտյան Հայաստանի.- Լ. Շ.) մեջ բնակող հայության բնաջնջման ձևով չի ներկայանար միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար և ճկուն *էրմենի* կոչված ցեղի մը, որուն եռանդին և աշխատանքին գոհացում չի կրնար տալ նեղ ու փոքր սեփական հայրենիք մը իսկ...»¹¹:

Թուրք պետության ոճրային ընթացքի մեջ փոխվում էին սուլթանները, կառավարիչների գույնը, դեմքը, սեռը, ազգությունը, չէր փոխվում գերխնդիրը՝ ոչնչացնել Հայաստանը, պարզվում է, հայ ժողովրդի գլխովին բնաջնջման ճանապարհով: Եվ ահա, հերթական մի ճիվաղ, ռուս-թուրքական «սրտակից եղբայրության» տարիներին, երբ ամբողջ հասակով կանգնեց Հայաստանի վերջնական ոչնչացման ու հայ ժողովրդի իսպառ բնաջնջման այնքան մոտ ու բաղձալի հեռանկարը վերջին հանգրվանում, արդեն Արևելյան Հայաստանում, քենալական արտգործնախարարի տեղակալ Ահմեդ Սուխտարը

Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին հրահանգում էր (1920 թ. նոյեմբերի 8). «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունը ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար: «...Հայերին խեղդամահ անելով, միաժամանակ մենք պետք է ջանանք չսրել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշնակիցն է Հայաստանը և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակին»¹²:

Բոլորով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ Համիդն էր, որ ձևակերպեց և ոգեշնչեց *Հայաստանի* ոչնչացման ծրագիրը, նրա զինակիցներն ու հաջորդները սուկ գործադրեցին այդ ծրագիրը: Եվրոպայից արտամղման ուժերի (խոշոր տերությունների հարվածներ, ազգային ազատագրական պատերազմներ և այլն) հզոր ճնշման տակ քայքայվող կայսրության «հավաքման» ու կայունացման գործընթացները Համիդն ուղղորդեց արևելք: Նրա ուշադրությունը սևեռվում է *Արևմտյան Արաբիա, մահմեդական սրբազան վայրեր և Հայաստան* (ընդգծումը իմն է.-Լ.Շ.)¹³: Բալկանյան պատերազմները միայն ընդգծեցին միտումը: «Մեր Օսմանյան պետությունը,- ասում էր Համիդը,- տկարացած է իր գերածունով... Ես չեմ զղջար, որ մեր ուժերը ծծող Բալկանյան երկրները կորսնցուցինք: Որքան արագորեն դեպի հետ կեդրոնանանք, այնքան ավելի շուտով պիտի կարենանք հաղթահարել մեր տկարության և «հիվանդության»: Եվ նման կորուստներն առիասարակ «շատ բնական բան մըն էին»¹⁴ Կարմիր Սուլթանի համար: Ավելին: «*Մենք կուզենք ապրիլ Անատոլուի մեջ,-* հռչակեց Մեծ Ոճրի բանաձևը Կարմիր Սուլթանը,- *և պետք է մնանք առանձին: Փառք Աստծո, որ ամեն կողմե հալածված մեր ազգակիցներուն և հավատակիցներուն մնացած է միայն այս վերջին ապաստարանը* (ընդգծումներն իմն են.-Լ.Շ.)»¹⁵:

Որ Թուրքիան կենտրոնանում էր Հայաստանում, պատրվակ բռնելով «հեղափոխության գաղափարը», երևում է արևելագետ Վամբերիի հետ Համիդի տեսակցության «նյութից»: «...Հայերուն խելքը շուտով գլուխնին պիտի բերեն: Իրենց գլխուն հարված մը տալով մոռցնել պիտի տամ հեղափոխության գաղափարը... *այս հայկական հուզումով* (.-Լ.Շ.) *կուզեն* (եվրոպացիք.- Լ. Շ.) *մեր*

ամենեն կենսական մասերը, մեր աղիքը խլել մեզմե: Այս պիտի ըլլար մեր ամբողջական կործանումը և մենք բոլոր մեր գործությամբը դեմ պիտի դնենք ատոր (ընդգծումներն իմն են.-Լ.Շ.) »¹⁶:

Յավալին՝ հայության համար, և տարօրինակը, արտաքին հայացքից այն էր, որ համիդյան մտահղացում-ուղղորդումը ամբողջական ըմբռնում էր գտնում «Եվրոպական համանվագի» (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրո-Յունգարիա, Ռուսաստան) գլխավոր երկրների կողմից: Գերմանական հստակությամբ ու ճշգրտությամբ խնդիրը ձևակերպեց Կայսերական Գերմանիայի դեսպան Յանս բարոն Ֆոն Վանգենհայնը Իթքիհատի «Ընդհանուր կենտրոնում» («Մերքեզը Ումումի») (1914 թ., պատերազմի նախօրյակ)՝ դիմելով գերմանական ֆաշիզմի նախահայրերին. «Բուլգարիո հետ զինակցությունը Ձեզի համար է: Բեռլին-Պոլիս գիծը ապահովել, նեղուցները զինելով Ռուսիան արտաքին օժանդակություններն զրկել և Ձեզի հետ միացյալ ուժերով գայն ճգնել: Կովկասը Ձեզի տալով, Ձեր առջև Թուրանի ճամբան բանալ կուզենք, Թուրքիո ամբողջականության արգելք հանդիսացող տարրերը (հայերին- Լ. Շ.) պիտի փճացնենք և Պարսկաստանն ալ պիտի գրավենք (ընդգծումն իմն է.-Լ.Շ.)...»: Եվ հորդոր-սպառնալիքը. «Եթե շաբաթ մըն ալ հետաձգվի <...> սույն զինակցության ընծայելիք բարիքները պիտի անհետանան...»¹⁷:

Եվ այսպես, 1914 թվականին Գերմանիայի դեսպանը ասում էր այն («...Կովկասը պիտի գրավենք և Թուրանի ճամբան պիտի բանաք»), ինչը 1912 թվականին կանխատեսում էր Յայոց բանաստեղծը («...հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենամեծ ցավերից միմն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի ես կողմերը»): Իսկ եվրոպացի մեծերը, համախորհուրդ, Եվրոպայից արտամղում էին քաղաքակրթորեն անհարազատ տարրին՝ միջնադարյան ենիչերիին: Նրան ուղղորդում էին դեպի Արևելք: Ճանապարհին Յայաստանն էր: Ուստի և քրիստոնյա Եվրոպայի օժանդակությունը «քաղաքակրթության օրրանի»՝ Աստվածաշնչյան Յայաստանի հանդեպ չափավորված էր: Իսկ մեծ գործերը, ինչպես հասկանում եք, մեծ զոհեր են պահանջում: Եվ, հաճախ, պատմության շրջագծում, մեծ զոհերը կարող են շատ մեծ լինել: Եվրոպական այս «ընդհանուր կանոնը» երբեմն (ո՛չ ավելին) խախտում էր եվրոպական

մեծերից որեւէ մեկը, հաճախ Ցարական Ռուսիան, բայց ոչ երբեք Եվրասիական Ռուսաստանը (բոլշևիզմը), որի արժեքային համակարգն ու երկրառազմավարական դոկտրինան (թերևս, էթնոմշակութային ու հոգեբանական հիմքը և) նույնական էր (և է՛) թուրանական գաղափարի հետ:

Ասվածի համատեքստում Մեծ ոճիրը երկնելու և գործադրելու համար, ինչպես մեզ է թվում, հանճար ունենալու կարիքն էլ չկար, վստահաբար, սակայն պարտադիր էր մոնգոլական բնագղն ու եղեռնաբաղձության կիրքը, ինչով լիուլի օժտված է օսմանյան հորդան¹⁸: «Թուրքիան չի կարող ընդհանրապես հավակնել առաջին տեղին կազմակերպվածության եւ տաղանդների ոլորտում, սակայն, այդ անգամ,- գրում է ամերիկացի դիվանագետ Վ. Փիտոլը,- երբ գործը հասավ ջարդին, թալանին եւ այլն, նա ցույց տվեց, որ կարող է գործել կազմակերպված եւ շատ արագ: Միայն թուրքն է ի վիճակի այլ աշխարհի ուղարկել կարճ ժամանակվա ընթացքում հարյուր հազարավոր մարդկանց»¹⁹:

Եվ եղեռնաբաղձության թուրքական հանճարը ծնեց ոչ միայն Յայաստանի ոչնչացման և հայության բնաջնջման թուրանական գերնպատակը, այլև որդեգրեց գործադրման համապատասխան կերպ.

1. 1876-ից մինչև 1915 թվականներ. Յայաստանից հայերի արտաքսման, ծուլման-մահմեդականացման և ջարդերի անընդհատ ընդլայնվող, սակայն, այդուհանդերձ, սահմանափակ (լոկալ) քաղաքականություն:

2. 1915-ից մինչև 1918 թվականներ. համընդգրկուն և հայկական հարցի վերջնական լուծման գործընթացը:

Այս ճանապարհին նա հաջողության չի հասավ մասամբ, մի մասով, շնորհիվ հայ ժողովրդի մնացորդացի դիմադրության (այստեղ բացառիկ դեր խաղացին կամավորական գնդերի ռազմապես թրծված մարտիկներն ու սպաները, առաջին աշխարհամարտի հայ զինական ուժն առհասարակ)²⁰, մի այլ մասով՝ միջազգային հանգամանքների:

Ի վերջո, հայկական դիմադրական զինված պայքարն իր վճռորոշ և ճակատագրական դերն ու նշանակությունն ունեցավ եռյակ զինակցության (Գերմանիա, Ավստրո-Յունգարիա, Իտալիա) ջախջախման գործում: Գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ էրիխ Ֆոն Լյուդենդորֆը գրում է, թե գլխավոր ազդակը, որ

առաջացրեց Գերմանիայի արևմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, երբ թուրքերը չկարողացան իր ժամանակին գրավել Բաքուն: Պետք է հիշել, թե Ռուսիայի Կովկասյան բանակը 1917 թ. դեկտեմբերին լքեց ճակատը և հեռացավ, թե թուրքերն ու թաթարները կռվում էին հայերի դեմ, որոնք հավատարիմ մնացին դաշնակից և աջակից պետություններին, և թուրքերը չկարողացան Բաքու հասնել մինչև 1918 թ. սեպտեմբեր, այսինքն Ռուսիայի կազմալուծումից ութ ամիս հետո²¹: Թուրքիան ընդհանուր կրախ ապրեց այն օրերին, երբ կայսրության ողջ հզորությունը նետել էր Արևելք, գլխավորապես հայ գինական ուժի դեմ, և գրավելով Բաքուն, թվում է, հասել էր համաթուրանականության գերնպատակին: Հիրավի երևակայել է պետք, թե ինչ կլիներ պատերազմի ելքը կամ տևողությունը, եթե հայերը չկռվեին:

Պակաս նշանակալից չէ նաև հայոց քաջարի դերը Արարայի ճակատամարտում (Պաղեստին, 1918 թ. սեպտեմբերի 19) թուրքական «Յըլդըրըմ» («Կայծակ») բանակի ջախջախման և դրանով իսկ թուրքական Սիրիա-պաղեստինյան ռազմաճակատի քայքայման ու դաշնակիցների ընդհանուր հաջողության մեջ՝ որպես հետևանք ռազմագիտական կարևոր նշանակություն ունեցող Արարա բարձունքի գրավման: Ինչպես նաև հայ զորականներով հիմնականում համալրված ամգլիական զորամասի կողմից Հարավային պարսկաստանի Բանդար-Աբաս նավթաբեր շրջանի պաշտպանությունը թուրք-գերմանական գիշատիչներից:

3. 1919-ից մինչև 1923 թվականներ. հուլյաների ոչնչացման, «անավարտ» մնացած արմենոցիդի շարունակման և նրա արդյունքների «իրացման» քեմալական քաղաքականություն՝ մի կողմից, և մյուս կողմից՝ թուրքական պետության «ապահովագրում» պատասխանատվությունից:

...Հայության գերակշիռ զանգվածի հակվածությունը հնազանդության և «խոհեմության», նրա կրավորական կեցվածքը, իրադրության խճճվածությունն ու խիստ բարդությունը, ազգային հոգևոր ու քաղաքական էլիտայի ռազմավարական կրախը ունեցան աղետաբեր արդյունք: Եվ հայությունն ազգովին քայլեց կորստաբեր անհունի ճանապարհով...²² Սակայն, վերապրեց այնտեղ, որտեղ դիմեց և կարողացավ կազմակերպել ինքնապաշտպանություն: Ի դեպ, միևնույն ժամանակ, հերոսական Վասպուրականում

անզուգական Արամի գլխավորությամբ հիմքերը դրեց հայոց նոր պետականության...

Բնականաբար, թուրքական եղեռնագործությունը ծնեց թուրք ժողովրդի և նրա պետության պատասխանատվության խնդիրը, հայոց գործողությունների տրամաբանությունը.

ա) աշխարհասասան Մեծ Ոճիրը կազմակերպած և իրականացրած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվություն, ինչն իրականացվեց, ճիշտ է, ոչ լրիվ ծավալով, Հայ հեղափոխական դաշնակցության կողմից («Նեմեսիս» գործողությունը գործադրվեց առանց պետական աջակցության և բոլշևիկյան Հայաստանի կառավարության խափանարար գործողությունների ուղեկցությամբ),

բ) Թուրքիայի քաղաքական պատասխանատվություն և «Վիլսոնյան» Հայաստանի ստեղծում. քաղաքական լուծում հայկական հարցին,

գ) նյութական պատասխանատվություն՝ ռեստիտուցիայի (հայոց իրավունքների վերականգնում, ապօրինի գրաված գույքի վերադարձում և այլն) տեսքով²³:

Ակնհայտ է, որ հայոց պայքարի հետագա տրամադրությունները տասնամյակներով և ավելի տևական շրջանում պայմանավորելու են 2) և 3) կետերը: Եվ դա է, որ հանգեցնելու է աշխարհում առաջին ցեղասպանության՝ արմենոցիդի²⁴ հետևանքների վերացմանը: [Ի դեպ, այս բոլորը նախատեսում է Սևրի դաշնագիրն իր համապատասխան գլուխներով ու պարագրաֆներով]: Ամբողջական իմաստով այն հանգում է հետևյալին, հայության պահանջը միայն արյան ու նյութական հատուցման [առնվազն հինգ միլիարդ ոսկի դոլար՝ 1920 թ. հաշվով, որն իր մեջ պարունակում է զարդեղեն, գոհարեղեն, կանխիկ դրամ, հող, տուն, կահկարասի, այգի, արտ, գործիքներ, առևտրական ապրանքներ և այլն] պահանջ չէ, այլ նաև և գլխավորապես իր անդրենածին ՀԱՅՐԵՆԻԹԻ վերադարձի ու ինքնատիպ քաղաքակրթության պաշտպանության և վերականգնումի պահանջ: Ընդամին, թուրքական պետության ու հայոց ունեցվածքը սեփականած թուրք վերնախավի ու ժողովրդի ուրացումի քաղաքական նեյմիներն ուղղված են բացառապես Հայաստանի օկուպացիան (բռնազավթումը), առանց հայերի, հավերժացնելուն: Ուրիշ ոչի՛նչ:

Յեղասպանության թուրքական ռազմավարության «այբ»-ն ու «բեն»-ը լավագույնս ներկայացրել է Յու. Գ. Բարսեղովը: «Եթե հայերի ցեղասպանության նպատակը, - գրում է նա, - 1876-1914 թթ. ստրկացված ժողովրդի տարածքները ձեռքից բաց չթողնելն էր, ապա 1915-1923 թթ. նրա նպատակն էր տարածքային էքսպանսիան (ընդարձակումը), էթնիկական [աշխարհագրական] և քաղաքական [այն] սեպի խորտակումը [կործանումը], որը խանգարում էր համաթուրանականության քաղաքական ծրագրի իրականացմանը, Ռուսաստանից Անդրկովկասի, Գյուսիսային Կովկասի, Մերձվոլգյան, Միջին Ասիայի թուրքալեզու տարածքների պոկումը և նրանց միացումը Թուրքիայի հետ»²⁵:

Եվ հետամուտ համազգային իր տեսլականին, թուրքական խեղված ու ոճրային քաղաքական հանճարը ոչ միայն երկնեց ու «զաղտնիության և խավարի պայմաններում» (Նաիմ ալ Յաֆի) գործադրեց արմենոցիդը, այլև ուղեմշեց հետագա գործողությունների հաջորդական շղթան: Մասնավորապես, բուլշևիկների աջակցությամբ ու նրանց հետ ներդաշնակ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետությանը 1920թվականի դեկտեմբերի 3-ին պարտադրելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ձգտեց գտնել նոր սահմանների անխախտության լրացուցիչ «իրավական» հիմնավորումներ, հաշվելով, որ Թուրքիայի ու Հայաստանի միջև «խաղաղության ու բարեկամության պայմանագրի» առկայության պարագայում աշխարհին չի մնա անելու ոչինչ, քան ճանաչել կատարված փաստը (Յու.Բարսեղով):

«Խնդիրը, - գրում է տաղանդավոր իրավագետն ու միջազգայնագետը, - հայերին փաստական իրադրության հետ հաշտեցնելուն հասնելու մեջ էր: Պետք էր հարկադրել հայերին իրենց զաճաճ պետության ճանաչման դիմաց հրաժարվել իրենց տարածքներից հոգուտ Թուրքիայի: Գրեթե կատարյալ *դեբեյացիան* (հնազանդեցում) և *անեքսիան* կարող էին, այդպիսով, ներկայացվել *ցեսիա*՝ տարածքի կամավոր զիջում, իսկ այդ տարածքների բնակչության *զենցիդը* (ընդգծումներն իմն են. -Լ.Շ.) որպես անցյալի ցավակցության արժանի իրադարձություններ»²⁶:

Ասվածը, ինչպես տեսնում եք, տարողունակ է և սպառնիչ:

...Տարօրինակ է, սակայն իրողություն, որ այսօր հայ ժողովուրդը նորից ազգային-պատմական իր հիմնախնդիրներով հայտնվել է արդար, մարդասիրական ու իրավական նոր

աշխարհակարգի համար պայքարողների առաջին շարքերում, թերևս իրեն զորավիգ ունենալով XX դարի մարդասերի, Նոբելյան խաղաղության մրցանակակրի, խոշորագույն քաղաքական և պետական գործչի, ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի համոզում-հորդորը. «Թուրքիան իր դաժանություններով գերազանցեց իր ուսուցիչներին և դրանով ապացուցեց Եվրոպայում լինելու իր կասկածելի իրավունքը... Հայերի համատարած կոտորածը մեզ հարկադրում է բացառել այդ տգետ, անառողջ բանդան Եվրոպայի սահմաններից: Հայաստանը պետք է ստանա այն, ինչի պատմական իրավունքը նա ունի... *Վաղ թե ուշ Թուրքիան կանգնելու է Տրիբունալի առաջ և հաշիվ է տալու, ու այնժամ նրանից պահանջվելու է կողոպտվածը վերադարձնել իր իսկական տիրոջը* (ընդգծումն իմն է. -Լ.Շ.) »²⁷:

Ճիշտ է, որ Գորշ գայլը նենգ էր (և է), դարանակալ ու ոխակալ, նաև անբարո, սակայն հայ ժողովրդին պետք է ուղեկցի վստահությունն իր բարոյական ու ֆիզիկական ուժերին, նվիրվածությունը Հայաստանի լուսավոր ապագային: Այդպիսով միայն նա կկարողանա կատարել պատմա-քաղաքակրթական իր առաքելությունը «Եղենական այգում» որպես աշխարհի առաջին քրիստոնյա պետություն:

Հ. Գ. - Արմենոցիդի հարցում առկա է ճակատագրի դաժան խաղը նրա հովանավորների կյանքում: Հայաստյաց Ալեքսանդր Բորիսովիչ *Լորանով-Ռոստովսկին*, Նիկոլայ II-ի արտգործնախարարը, կաթվածահար եղավ՝ լսելով Վանում հայերի կոտորածի մասին, 1896 թվականի օգոստոսին: «Ես համոզված եմ, - ասում է Պոլ Կամբոնը, - որ նրան տապալող հարվածը տեղի ունեցավ հենց այդ պատճառով»: Առեղծվածային է Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայդեր *ֆոն Վանզենհայնի* մահվան (1915 թվականի հոկտեմբերի 25) պատմությունը: Քաջածանոթ Հենրի Մորգենթաուն գրում է, որ հայերի զանգվածային սպանությունների հարցով Վանզենհայնի հետ ծանր խոսակցությունից երկու օր հետո «ճաշասեղանի շուրջ նրան հասավ հարված (его хватил удар): Նրան բարձրացրին երկրորդ հարկ եւ պառկեցրին տեղաշոր, սակայն նա այդպես էլ զիտակցության չեկավ»: Նա այն մարդն էր և նրա կառավարությունն այն կառավարությունը, որոնք «կարող էին

կատեցնել այդ հանցագործությունը... ամբողջ մի ժողովրդի այդ կոտորածը»:

Այդ երկու դիվանագետները, քսան տարվա տարբերությամբ, ինչպես գրում է Վահագն Տատրյանը, կանխամտածորեն թույլ տվեցին հայերի զանգվածային կոտորածներ երկու դեպքերում էլ, դրանով իսկ բաժանելով գործակցի բեռը: «Նրանց բաժին ընկավ նույն հիվանդությունը, որ հանգեցրեց նրանց մահվան, քանզի այդ հիվանդությունը՝ կաթվածահարությունը եղավ ճակատագրական»²⁸:

ՄԱՍ - 2 Արևմտյան Հայաստան. Բնիկ ժողովրդի իրավատիրությունը

Դիպուկ է ասված. «Հայ ժողովուրդը երկրորդ հազարամյակ է տանում իր «Պատմական բեռը»՝ ՀԱՅԿԱԿԱՆ հարցը որպես ռազմավարական ծրագիր: «...» Հայաստանի ավանդական աշխարհագրությունը չի փոխվել: Չի փոխվել նաև վերջին՝ շուրջ հազար տարվա ազգային թշնամին, որը կազմակերպել է Հայոց ցեղասպանությունը և գրավել Հայոց հայրենիքի տարածքի շուրջ 90%-ը: Օրակարգում է գտնվում թուրքախոս ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որի իրականացումը նշանակում է Հայաստանի և հայ ժողովրդի ոչնչացում»¹:

Հիրավի.

Դուզն իսկ չի փոխվել թուրքի ազգային մտայնությունը: XX դարի Մեծ ոճիրի կազմակերպիչներից Հալիլ բեյը, ժամանակի Օսմանյան խորհրդարանի նախագահը, 1946-ին, իր հուշերում գրում է. «Եթե մեր արևելյան վիլայեթները (այսինքն՝ Արևմտյան Հայաստանը.-Լ.Շ.) մենք չմաքրագործեինք հայ հեղափոխականներից, որոնք համագործակցում էին ռուսների հետ, մեզ համար անհնար կլիներ հիմնադրել մեր ազգային պետությունը»²: 2008թ. նոյեմբերին, «քաղաքակիրթ» Եվրոպայի սրտում՝ Բրյուսելում, քաղաքակրթված Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը «խորհմաստորեն» փիլիսոփայում է. «Միթե՞ գոյություն կունենար այսօրվա ազգային թուրքական պետությունը, եթե հույները մնային Էգեյան ծովին հարակից տարածքներում, իսկ հայերը շարունակեին ապրել Թուրքիայի տարածքների մի մասում (այսինքն՝

իրենց Հայրենիքում, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում.-Լ.Շ.): Չգիտեմ, ինչ բառեր կարելի է գործածել բնակչության այս փոփոխության կարևորությունը բացատրելու համար (չի ուզում ասել՝ «ցեղասպանություն», «բռնագաղթ».- Գ.Գ.), բայց եթե վերցնենք այն ժամանակվա ազգաբնակչության հարաբերակցությունը, ապա դա ակնհայտ կլինի»³:

Այստեղ, թուրք ազգային մտայնությունն ունի երկու խոց, թմբկահարվող թուրքական ռազմավարական իմաստությունը երկու հիմնական ճաք. քանզի՝ ա) անխոս, ներակա (ինպլիցիտ) կարգով ժամանակակից թուրք ազգային պետությունը ներկայացվում է քաղաքակրթական բարիք (երևի հույների աշխարհին Պլատոն և Արիստոտել նվիրած և Դավիթ Անհաղթ ու Անանիա Շիրակացի նվիրած հայերի համար) և դա ժողովրդավար բազմազգ և բազմամշակույթ Եվրամիության ֆոնի վրա, մերօրյա Թուրքիայում էթնիկ թուրքերի 40-50%-ի և շուրջ 20%-ի ոչ թուրք ժողովուրդների առկայության պայմաններում⁴, բ) քրդական կնճռի անտեսումը, այն իրողության շրջանցումը, որ Մեծ ոճիրից խոշոր հաշվով, ի վերջո, շահեց միայն և բացառապես թուրքերի կողմից արհամարհված *նոմադ* քրդությունը, որի ինքնագիտակցության ներքին շերտերում գերակշռում է ռասայական ու ազգագրական ենթաշերտը՝ կրոնական ինքնության հանդեպ: Եվ որպես արդյունք, թուրք «հեռատես» սուլթաններն ու քեմալական ազգայիններն իրենց ճակատին դաժելով դահիճի և «ցեղասպան» առաջամարտիկի մակդիրը, Հայաստանն «ազատագրեցին» անդրենածին մշակութաստեղծ, Թուրքիան եվրոպականացնող ժողովրդից «ուրիշի ձեռքին կույր գործիք դարձած» նույն նոմադ քրդության համար, ոճիրների մեջ թաղված ժողովրդին կանգնեցնելով նոր եղեռնագործության՝ *քրդոցիդի* (քրդասպանություն) հարկադրանքի կամ թուրքական պետության նոր անդամահատման և Արևմտյան Հայաստանում քրդական ազգային պետության հիմնադրման անխուսափելի ու «պատմական» հեռանկարի առաջ:

Իրոք, թե անիմանալի են պատմության տարիմաստությունները:

...Սակայն, այդուհանդերձ, չի փոխվում թուրք ազգային մտայնությունը: Նշանակում է, անփոփոխ է մնում և հայոց ազգային գերխնդիրը, *XX դարի Մեծ Ոճիրի հետևանքների հաղթահարման*

համազգային ճիգը, այն է՝ հասնել արևմտահայության ժառանգների հայրենադարձության իրավունքի ճանաչմանը իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի հանդեպ, առաջին հերթին, բնականաբար թուրքիայի կողմից, նրանց քաղաքացիության շնորհման, հայրենի երկրում բնակվելու թույլտվության և անվտանգության երաշխիքների տրամադրման, նյութական փոխհատուցման տեսքով, հայոց մշակութային-քաղաքակրթական ժառանգության մնացորդացի պահպանության հանձնառության տեսքով (և այլն): Հունանիզմի (մարդասիրության) և մարդու բնական իրավունքներից բխող այս քայլերն են, որ կցուցադրեն «ժողովրդավար» և «քաղաքակիրթ» թուրքիայի արժեքային համակարգի ներքին ծալքերը, աշխարհասփյուռ հայությանը կտրամադրեն թուրքիայի հետ հաշտեցման, հայրենադարձված անդրենածին ժողովրդին՝ օրինապահ քաղաքացու կարգավիճակին և այլն:

Մնացածը թուրքական նեյնիմների և արևելյան մուղամների շարքից է...

Մինչդեռ, Արևմտյան Հայաստանի հայության իրավատիրությունն հաստատվում է երկկողմ և բազմակողմ պայմանագրերի ամբողջական փաթեթով՝

1.«Հայկական բարեփոխումների» թուրք-ռուսական 1914 թվականի հունվարի 26/ փետրվարի 8 համաձայնություն կամ Հունվարի 26-ի ակտ,

2.«Թուրքաց» Հայաստանի մասին խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի 1917թվականի դեկտեմբեր 29-ի դեկրետ,

3. Սևրի 1920 թվականի օգոստոսի 10-ի դաշնագիր և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո թոմաս Վիլսոնի 1920թվականի նոյեմբերի 22-ի *իրավարար վճիռ* («arbitral award»),

4. «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» եվրախորհրդարանի 1987 թվականի հունիսի 18-ի բանաձև,

5.Անտանտի տերությունների՝ Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա 1915թվականի մայիսի 24-ի համատեղ Հռչակագիր:

Այսպես, Հունվար 26-ի ակտով Հայաստանի արևմտյան (թուրքական) մասը (Երզրումի, Տրապիզոնի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիի նահանգներ)՝ այսպես կոչված Արևելյան Անատոլիան, բաժանվում էր երկու հատվածների եվրոպացիների և Բարձր Դռան կողմից ընտրված երկու օտար գլխավոր տեսուչներով: Օսմանյան կայսրության Մեծ վեզիր և արտգործնախարար Սայիդ

Հալիմ փաշայի և Կ.Պոլսում Ռուսաստանի կայսերական հավատարմատար Կ. Գուլկևիչի կողմից ստորագրված բարեփոխումների ծրագրի, իրականացման համար գլխավոր տեսուչները պետք է, ինչպես գրում է հիմնախնդրին քաջատեղյակ գերմանացի պատմաբան Կուրտ Ցիմկեն, «վերահսկելի վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունը, ժանդարներիան, ինչպես նաև առանձին վալիների (գեներալ-նահանգապետների.-Լ.Շ.) գործավարությունը: Նրանք են նշանակում ստորին պաշտոնյաներին և առաջարկում Բարձր Դռանը, նշանակել բարձր պաշտոնյաներին: Նրանք կարող են նմանապես պաշտոնազրկել բոլոր պաշտոնյաներին, իսկ վալիներին պաշտոնազրկելու առաջարկությունը նրանք պետք է ներկայացնեն Բարձր Դռանը: Ապահովվում է ազգաբնակչության առանձին շերտերի համամասնական ներկայացուցչությունը վիլայեթների գլխավոր խորհուրդներում, այնպես որ Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթների գլխավոր խորհուրդները կիսով բաղկացած լինեն քրիստոնյա ներկայացուցիչներից»: Զուգահեռաբար, Բարձր Դռան կողմից, զորեղ դաշնակցի՝ Գերմանիայի խոժոռ հայացքի ուղեկցությամբ ընդունվում էր Հայկական հարցի հրատապությունը, իսկ տարածքի ազգային (էթնիկական) պատկանելիության իրողությունը օժտվում էր այնպիսի զորեղ հատկանիշով և գործառույթով, ինչպիսին բնիկ ժողովրդի լեզվի գործածության ոլորտի ընդլայնման անհրաժեշտության ընդունումն էր: «Օրենքներն ու հրամանագրերը,- «վերծանում է» բարեփոխումների իմաստը Կ.Ցիմկեն.- *պետք է գրվեն երկու լեզվով՝ թուրքերեն և հայերեն, դատավճիռները՝ թուրքերեն, հայերեն քարգմանությամբ, երկու լեզվի օգտագործումը դպրոցում և իշխանության մարմիններում երաշխավորվում է (ընդգծումն իմն է.- Լ.Շ.)*»⁵: Այսպիսով, օսմանյան թուրքերի կողմից Հայաստանի նվաճումից հարյուրավոր տարիներ անց կայսրությունը «եվրոպական կոնցերտի (համանվագ)» ճնշման ներքո (արևմտյան) Հայաստանում հայոց լեզուն, կամա-ակամա, օժտում էր պետականակիր քաղաքիչով, ինչը թեկուզև եզովպոսյան շարադրանքով, ճանաչում էր (արևմտա) Հայաստանի պատկանելությունը (արևմտա) հայությանը: Ավելի լայն կոնտեքստով, ըստ էության, տվյալ բարեփոխումների անհրաժեշտության ընդունումով և օսմանիպատակ հայության՝ Օսմանյան խորհրդարանում

քաղաքական ներկայացվածության (Գր.Զոհրապ, Վարդգես և ուրիշ երեսփոխաններ), պետական վարչամեթոդային, տնտեսամշակութային կյանքում և այլուր անխտիր առկայության պայմաններում (թրքա) հայությունն առհասարակ վերածվում էր կայսրության պետականակիր երկրորդ ազգի:

Ուրեմն, Մաքիավելի դառնալու համար հարկ չկա, գլխի ընկնելու համար, որ օսմանյան վերնախավը մի կողմից թուրք «ազնվազարմ» ձեռագրով (Սայիդ Գալիմը ազնվական է՝ պրինց) ճանաչելով՝ աշխարհագրությամբ և կայսրության առեւելի երկրամասի դատական և վարչական համակարգում թուրքերենին առընթեր հայոց լեզվի ներդրումով հայոց հայրենատիրությունը սեփական հայրենիքի հանդեպ, մյուս կողմից, ենիչերիի բնագրով կայսրությունը մղում է պատերազմի հնոց, այնտեղ արևմտյան Հայաստանը բոցավառելու և կայսրության քրիստոնյա, ոչ թյուրք ժողովուրդներից մեկը հիմնովին բնաջնջելու համար:

Ուրեմն, 1915 թվականը թուրք վերնախավի պետական հանցագործության տարեթիվն է, շարունակությունը հայության և Հայաստանի հանդեպ ավանդական թուրքական քաղաքականության, ուղղակի և իրական պատասխանը «Հայկական բարեփոխումների» թուրք-ռուսական համաձայնագրին, բայց և ճանաչումը (լեմմայի օրենքով) Արևմտահայաստանի հանդեպ (արևմտա) հայության ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ:

Իր տեսակի մեջ, անշուշտ եզակի իրավաքաղաքական նշանակության փաստաթուղթ է, ցայսօր անտեսված Անտանտի տերությունների՝ Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, 1915 թվականի մայիսի 24-ի համատեղ Հռչակագիրը, որտեղ նրանց կողմից թուրքական Մեծ Ոճիրը, ապրիլի 24-ից ուղիղ մեկ ամիս հետո, որակվում է որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված «...» նոր հանցագործություններ (ստորագծումն իմն է.-Լ.Շ.)», ասել է թե ցեղասպանություն, որն իրականացվում է «օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ» Հայկական լեռնաշխարհի թափանցած «քուրդ և թուրք» բնակչության կողմից ավտոխտոն ժողովրդի հանդեպ իր բնօրրանում՝ Հայաստանում և «համայն Կիլիկիայում»: Հռչակագիրն ասում է. «Գրեթե մեկ ամսից ի վեր Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների

թողտվությամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ն.տ. ապրիլի կեսերին (Ա.Գ-ի տեղանունների թվարկում.-Լ.Շ) և համայն Կիլիկիայում: ...Միաժամանակ Կ.Պոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հանդեպ (ստորագծումներն իմն են.-Լ.Շ.)»⁶:

Եզական (ունիկալ) է Խորհրդային պետության առաջին ծրագրային հրովորտակներից «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետը, որով տալով Արևմտյան («Թուրքաց») Հայաստանի հարցի քաղաքական և իրավական գնահատականը, դեկրետը հռչակեց Արևմտյան Հայաստանի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ սեփական անկախ պետության ստեղծումը, դրանով իսկ հաստատելով (արևմտա) հայության հայրենատիրության բացարձակ իրավատիրությունը իր բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի հանդեպ:

Հարցադրման շրջանակներում, անկասկած, սույն դեկրետը օրգանական շարունակությունն է ու զարգացումը Հունվարի 26-ի ակտի և Անտանտի տերությունների համատեղ Հռչակագրի, քանզի Թուրքիան ցեղասպանության ոճիրով իրեն դուրս դրեց բարոյականության և իրավունքի քաղաքակիրթ ընկալումների բանական շրջանակներից (նորմերից):

Ցեղասպանության ակտով Թուրքիան ժխտեց գերիշխանության (սուվերենիտետ) բարոյական, քաղաքական և իրավական բոլոր հիմքերը արևտահայության հայրենիքի հանդեպ, հաստատեց արևմտահայության հայրենատիրությունը, ինչից էլ հանդես է գալիս Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը:

Բուլշևիկները դեկրետի մշակմանը «կպել» էին հիմնավորապես: Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի ստեղծած պետական հանձնաժողովը կազմել էր մի մանրակրկիտ զեկուցագիր, որը ոչ միայն դեկրետի էթնոպատմական պատվանդանն էր աներեր դարձնում, այլև անքննելի փաստարկներով էր օժտում հայոց հայրենատիրության իրավունքը և շարունակում պահպանել իր հրատապությունը անժամկետ: Ձեկուցագիրն ասում է. «Հայերը, որոնք իրենց հայրենի երկրում՝ Հայաստանում, դեռևս XVII հարյուրամյակում կազմում էին բնակչության 98%-ը մահմեդական բնակչության 2%-ի առկայությամբ, 1914 թվականին արդեն կազմում էին Հայաստանի բնակչության 42%-ը: Մնացած 58%-ը հույներ էին, քրդեր, եզիդներ, ղզլբաշներ և թուրքեր, ընդսմին բոլոր

մահմեդականները միասին կազմում էին Հայաստանի բնակչության ընդամենը 38%-ը: Սակայն, այնուամենայնիվ, պատերազմը սկսվելուց առաջ հայերը կազմում էին ամենաբազմաքանակ ազգային խումբը Հայաստանում»⁷:

Ընդ որում, Ռուսաստանի հորհրդային կառավարությունը ճանաչում էր հայ ժողովրդի պատմական իրավունքը իր հայրենիքի հանդեպ, հռչակում էր արտամղված հայության Հայրենիք վերադառնալու անբեկանելի իրավունքը, «Թուրքաց» Հայաստանի անկախության իրավունքը պատմական առանձնահատուկ պայմաններում. ա) Թուրքիան ցեղասպանության հետևանքով չուներ այլևս Հայաստանի հանդեպ, ինչպես ասվել է, գերիշխանության որևէ հիմք, բ) Արևմտյան Հայաստանը դուրս էր դեկրետի հռչակման պահին Թուրքիայի իրավասությունից, թուրքական որևէ վերահսկողությունից:

«Պատմական Հայաստանի տարածքը,- գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը,- որը գրավված էր ռուսական զորքերի [և հայ կամավորական զնդերի.-Լ.Շ.] կողմից պատերազմի ընթացքում, վերադարձվում էր հայ ժողովրդին: Հենց դրա մեջ է «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետի պատմական նշանակությունը (ստորագծումը իմն է.-Լ.Շ.)⁸: Ժողկոմխորհը դեկրետը հրապարակեց նրա ընդունումից երկու օր անց, 1917 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ հորհրդային Ռուսաստանի պետական իշխանության ներկայացուցչական մարմինը՝ հորհուրդների III Համառուսաստանյան համագումարը 1918 թվականի հունվարի 15 (28)-ին հաստատեց ՌԽՍՀ ժողկոմխորհի դեկրետը Արևմտյան Հայաստանի մասին, բարձրագույն օրենքի ուժով անշրջելի դարձնելով Ռուսաստանի տեսակետը Արևմտյան Հայաստանի *ավտոխտոն* (բնիկ, անդրենածին) ժողովրդի իրավատիրության վերաբերյալ: Դեկրետն օժտվեց լեգիտիմության բացարձակ աստիճանով:

Իրավաքաղաքական իմաստով Ռուսաստանը ուղղակի անցում էր կատարում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների անհրաժեշտության գիտակցումից (1914թ.) դեպի լիակատար անկախություն ճանաչում (1917թ.): Միջազգային իրավունքի շրջանակներում կատարված ակտը անխոցելի է և անժամկետ:

Եվ անկախ այն բանից, թե ով է ստորագրել «Թուրքաց» Հայաստանի մասին դեկրետը, 1912թ. սեպտեմբերից իտալա-

թրքական պատերազմի ընթացքում, ըստ էության, թրքասեր տեսակետ⁹ որդեգրած համաշխարհային հեղափոխության մոլագար առաջնորդ, բյուզանդական քաղաքակրթության և ռուսաստանյան պետականության գերեզմանափոր Վոլոդյա Ուլյանով-Լենինը, թե վրացի նացիոնալ-բոլշևիկ թիֆլիսի հանրահայտ հայատյաց կինտո Սոսո Ջուղաշվիլի-Ստալինը, դեկրետն ունի ՕՐԵՆՔԻ անսպառ լիցք ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի համար:

Որպես իրավաքաղաքական վավերագիր այն կատարյալ է: Թերևս սխալված չենք լինի, եթե նկատենք, որ Անտանտի տերությունների 1915 թվականի մայիս 24-ի Հռչակագիրը պատմական իր ժառանգորդունը, իրավաքաղաքական իր զարգացումն ունեցավ խառնակ ժամանակների հարափոփոխ գործոնների պարտադրանքով, առաջին հերթին Սևրի դաշնագրի Հայաստանին, քաղաքացիությանը, փոքրամասնությունների պաշտպանությանը, լքված սեփականությանը (Emval-i-Metpune) վերաբերող և հայ ժողովրդի այլ շահերը շոշափող հողվածներով (հողվ. 88-93, 125, 142, 144), Վ.Վիլսոնի իրավարար վճռում¹⁰:

Քանզի, հիշյալ վավերագրերը, որոնք աներկբայորեն հաստատում են արևմտահայության իրավատիրությանը Արևմտյան Հայաստանի հանդեպ, հանդես են գալիս երկու իրավաքաղաքական պոստուլատներից.

- ա) թուրքական ցեղասպան պետության քաղաքական պատասխանատվությունից,
- բ) թուրքերի՝ հպատակ ժողովուրդներին կառավարելու անկարողությունից:

Ամերիկյան (իրավարար) կողմը Նախագահի վճռի պարագայում հանդես էր գալիս այն անաչառ դիրքորոշումից, թե «քանի որ դա (իրավարար վճիռը.-Լ.Շ.) վերաբերում է Ամերիկային և դաշնակիցներին, հրաժարունը կամ Սևրի դաշնագիրը անվավեր դարձնելը չի կարող ներգործել Վիլսոնի իրավարարական վճռի վրա, քանզի Նախագահի վճիռը հենվում է ոչ թե 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրի վրա, այլ Դաշնակիցների Գերագույն խորհրդի 1920 թվականի ապրիլի 26-ի [Սան-Ռեմոյի խորհրդաժողովի.-Լ.Շ.] հրավերի: հորհրդի հրավերը և Սևրի դաշնագիրը կապված չեն մեկը մյուսի հետ և անկախ են մեկը մյուսից: Նախագահին [ուղղված] հրավերում ոչ մի պայման չի առաջադրված¹¹»:

Արևմտահայության հայրենատիրության փաստարկներին որոշակի իրավական և քաղաքական կշիռ է հաղորդում եվրախորհրդարանի «Չայկական հարցի քաղաքական լուծման մասին» 1987թվականի հունիսի 18-ի բանաձևը («European Parliament. Doc. A2-33/87»), գրված եվրոպական իրավունքի բանական էության, բայց և եվրոպական դիվանագիտության անհետևողականության, եթե կուզեք խարդավանքների ավանդույթով, ստեղծում է հիմնախնդրի երկատվածություն, մի դեպքում (Չոդված 1) հստակ և աներկբայորեն իրարից բաժանելով Չայկական Չարցն ու փոքրամասնությունների հարցը թուրքիայում, մյուս դեպքում (Չոդված 6), ըստ էության խեղաթյուրելով իրեն քաջածանոթ Չայկական Չարցի իրական բովանդակությունը, անտեսելով Անտանտի տերությունների համատեղ Չռչակագրի ոգին, հայկական քաղաքակրթական ինքնությունը (Չոդված 8) Արըմտյան Չայաստանում տարալուծելով «ներկա թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացած» ինչ-որ ամորֆ «ավելի ընդհանրական քաղաքակրթության մեջ», այն՝ Չայկական Չարցը, հանգեցնում է ցեղասպանության ճանաչման ակտի շքահանդեսի, զոհի և դահճի գրկախառնության, «հայ փոքրամասնության» (Չոդված 6) և «ոչ-իսլամ փոքրամասնությունների պաշտպանության» 1923 թվականի Լոզանի դաշնագրի համապատասխան հողվածների տրամադրություններին և այլն:

Փարիզի խաղաղության վեհաժողովի օրերին, երբ քաղաքականացված և բարոյական մարդկությունը սպասում էր առաջին աշխարհամարտի Արդարահատույցին՝ Օսմանյան ճիվաղի դարերի ընթացքում վաստակած պատժին, Անգլիայի հանրաճանաչ լորդը՝ Ռոբերտ Սեսիլն ասում էր (1919թ.). թուրքերին չպետք է թույլ տալ իրենց չարագործություններով կրճատել հայերի տարածքները, «անել դա, կնշանակեր [նրան] մրցանակ տալ կոտորածների համար»: Նույն միտքն էր հայտնում ոչ անհայտ (Sir Eyre Crowe) է. Կոռուն. «Չայկական Չարցը դիտարկելը և լուծելը սոսկ հայերի այժմյան թվաքանակով,- զգուշացնում էր նա.- կլիներ, իհարկե, հավասարազոր հաստատմանն ու խրախուսմանը անցյալում թուրքերի՝ իրենց հպատակ ժողովուրդների խնդրի լուծման հանդեպ գործադրած մեթոդի (ստորագծումներն իմն են.-Լ.Շ.)» (1919թ., 1-ը դեկտեմբերի):

Ի վերջո, և Արևմուտքը, և Արևելքը գնացին հենց թուրքերին «կոտորածների համար մրցանակ» շնորհելու ճանապարհով, դրանով իսկ լայն դուռ բաց թողնելով աշխարհում անվերջ էթնիկական գտումների և ցեղասպանությունների հետագա շղթայի համար, վերջերս էլ, իբրև թե Արցախի հիմնախնդիրը լավ չպատկերացնելու պատճառով, ուրացողների, պատմության թյուրքական մեկնիչների, չպատժվող զանգվածային մարդասպանությունների անգերազանց վարպետների ցանկ տեղավորել Ադրբեջանի թուրքերին:

Իսկ, հայ ժողովուրդը, ի մասնավորի Արևմտյան Չայաստանի հայությունը, Չայրենատիրության և Չայրենականչի իր խաչը կտանի առաջ, զորավիզ ունենալով 20-րդ դարի իդեալիստի՝ Վուդրո թոմաս Վիլսոնի լավատեսությունը. «Վաղ թե ուշ թուրքիան կկանգնի տրիրունալի (արտակարգ դատարան.-Լ.Շ.) առաջ և հաշիվ կտա, և այն ժամանակ նրանից կպահանջեն վերադարձնել թալանածը իր իսկական տիրոջը»:

Ինքնին հասկանալի է, որ այնպիսի կնճիռ, ինչպիսին Չայրենատիրության գոտեմարտն է, այն էլ «Չայկական Չարց» ենթատեսքստով, հուշում է. այստեղ, պատրանքներն անհիմն են նույնչափ, որքանով էլ վտանգավոր: Քանզի հարցադրուը ենթադրում է. ա) համազգային քաղաքական անկոտրում կամք և բ) կազմակերպական կարողությունների գերազույն մոբիլիզացիա և լարում:

Պատմականորեն աննախադեպ առաջադրանքն, անշուշտ, պետք է ունենա համազգային idea-fix-ի վերածվող Սուրբճնդյան նշանախոս, որն է՝

«ՉԱՋՈՐԴ ՏԱՐԻ՝ ԿԱՐԻՆՈՒՄ»

Այն պետք է ունենա կազմակերպական իր կառույցը և՛ օժտված լեզվիտիմության բարձրագույն աստիճանով, որն է Արևմտյան Չայաստանի բնիկ ժողովրդի Չամաժողովը (Ասամբլեան, Կոնգրեսը, ինչպես կուզեք), ընտրված գաղթօջախներից՝ ներկայացուցչական որևէ կանոնով:

Նա է, որ կնշանակի Արևմտյան Հայաստանը և նրա բնիկ ժողովրդին ներկայացնող *Վարիչ մարմին*, դրանով իսկ կյանքի կոչելով այն ենթական (սուբյեկտը), որը գործնական քաղաքականության ոլորտ կտեղափոխի Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրները թե՛ ներքաղաքական, թե՛ կարևորը, արտաքին քաղաքականության ճակատի վրա: Եվ պայքարը նրանց իրականացման համար: Վարիչ Մարմնի կենտրոնակայանով կամ Նյու-Յորքում (ՄԱԿ-ին մերձ) կամ Փարիզում:

Հ.Գ. Կազմակերպական բնորդի նախադեպի իմաստով օգտակար է *Համաշխարհային Հայկական Կոնգրեսի* (1947թ.) պատմական փորձի հետ ծանոթությունը:

Անփոփում

Սան Ստեֆանոյի *Նախապայմանագրով* (1878թ., մարտի 3) և Բեռլինի կոնգրեսով (1878թ., հունիսի 13- հուլիսի 13) հայկական հարցը միջազգայնացավ և «տեղադրվեց» Եվրոպական համանվազի մեխանիզմներ: Հայոց ազատագրության ոգորումը՝ ազգային-ազատագրության համար պայքարը անհաջողության մատնվեց և ավարտվեց 20-րդ դարի առաջին ու ամենադաժան, սակայն ցայսօր չպատժված ցեղասպանությամբ (արմենոցիդ, գենոցիդ, հոլոքոստ), մասնավորապես Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայազրկումով:

Այդուհանդերձ, հայկական գործոնը մնաց տարածաշրջանային և միջազգային քաղաքականության բաղադրիչ, վերածնվեց *հայոց պետականությունը*, հայկական գինուժը եական դեր խաղաց Անտանտի վերջնական հաղթանակի գործում, մնաց պահանջատեր և իրավատեր հայ ժողովուրդը, մնաց նաև գերխնդիրը՝ համառ, ծանր և տևական պայքարը ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ՝ ամրագրված երկկողմանի և միջազգային իրավաքաղաքական ակտերում և վավերագրերում:

Պայքար, որ վերացական (տրանսցենդենտալ) է և դուրս որևէ ուժի զսպիչ կամքից (տնօրինումից):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ-1

1. Տես՝ *Մեծ տերությունները*, Օսմանյան կայսրությունը և հայերը Ֆրանսիական արխիվներում (1914-1918), աշխատասիրությամբ Ա.Պեյլերյանի, հտ.1, Եր.2005, էջ 99:
2. Գերմանացի արվեստաբան էռնստ *Դիցը* գտնում է, որ սելջուկյան արվեստը հայկականի շարունակությունն է: Տես՝ *Dietz E.*, Սելջուկյան արվեստը, Կ. Պոլիս, 1948:
3. Հայոց ունեցվածքի կողոպուտը թուրքերի կողմից Մեծ Եղեռնի տարիներին կազմել է ամենահամեստ հաշվարկներով 5 մլրդ. ամերիկյան դոլար, որի մի մասը գրպանեցին թուրք ջարդարարներն ու նրանց վերնախավը, իսկ առյուծի բաժինը հատկացվեց քեմալական շարժման ռազմական նպատակներին, արևմտյան քաղաքակրթության բնօրրան Հունաստանի դեմ պատերազմում: Ընդ որում կողոպուտը կատարվեց ազգովի, մեծով և փոքրով, ինչպես ասում են առանց սեռի և դասի խտրության: Ականատեսը վկայում է. «Ես ամբողջ Անատոլիում պտտեցա 1915-ին, չտեսա թուրք տուն մը, որ հայերու կարասիներ, գորգեր կամ ուրիշ իրեղեններ չգտնվեին: Վաղը, եթե առիթը գտնեն, թուրքերը նույնը պիտի ընեն անպատճառ (ընդգծումն իմն է.-Լ.Շ.)»: (Տես *Լոզանի* իրադրության խորհրդածրոյվը, Պեյրուք, 1983, էջ 129-130):
4. *Հակորյան Թ.Խ.*, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 393:
5. Տես՝ *Օրմանյան Ս.*, Հայոց եկեղեցին, Անթիլիաս, 1952, էջ ԻԵ-ԻԶ:
6. *Հայերի* ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 436:
7. *Թումանյան Հ.*, Ահա թե ինչու, ԵԼԺ, հ. 6, էջ 375:
8. *Թումանյան Հ.*, Հայկական հարցն ու իր լուծումը, ԵԼԺ, հ. 7, էջ 20-21:
9. 1878 թ. հունիսի 4-ի Կիպրոսի դաշնագրով. - Լ. Շ.:
10. «Փորձ». Ազգային և գրականական միամյա հանդես, 1879, հ. VII-VIII, էջ 204-205: Տես նաև «ՀՍՄՀ ԳԱ տեղեկագիր» Չասարակական գիտություններ, 1949, N 4, էջ 81-82:
11. Տես՝ «*The Turkish Tyranny*», [հայերեն և անգլերեն], Թրքահայաստանի 1915-ի տարագրություն և ջարդ, Նյու Յորք, 1963, էջ 1-5:
12. Տես՝ *Սարգսյան Ե.Ղ.* Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր. 1994, էջ 170-171:

13. Տե՛ս *Раздел Азиатской Турции* по секретным документам бывшего Министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова, М., 1924, էջ 29:
14. Տե՛ս *Եազրծյան Գ.*, Արդուլ Յամիդ Բ. կարմիր սուլթանը, Պէյրուս, 1980, էջ 827:
15. *Նույն տեղը*, էջ 812:
16. Տե՛ս *Գարրիելյան Ա. Ա.*, Հայկական ճգնաժամն ու վերածնունդը, Բոստոն, 1905, էջ 64:
17. *Րիֆաթ* Սևակն Ջադե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և հոբբիատի հայաջինջ ծրագիրները, Եր., 1990, էջ 18, 19:
18. Տե՛ս *Ասատրյան Դ.*, Հայաստան. արիական նախադիրը Առաջավոր Ասիայում, հ. Ա., Առֆիա, 1942, էջ 123-133: «Մոնգոլական եղեռնաբաղձություն»՝ Թուրքերի ոգուն անկորնչելի է միայն ոչնչացումի, եղեռնումի, պղծումի զգացումը: <...> բնազդների շղթայագերծման ժամանակ հարազատորեն վերակրկնում է [Տուրքիլի, Արփ-Արսլանի, Թիմուրի, Չինգիզի] գործերը: Այս պարագան ինքնին մի ապացույց է բնազդների, ոգու զորավոր ինքնապահպանության, ինչպես նաև այն բանի, թե քաղաքակրթական ձևերի յուրացումով ստորաբնազդ մի ցեղ չի կարող ընդունակ դառնալ նաև մշակութաստեղծումի և թե արտաքին բոլոր կարգի ազդեցությունները - անգամ կրոնը, դաստիարակությունը - նպաստում են միայն ներքին ընդունակությունների զարգացման, բայց ոչ երբեք փոխում նաև ոգու բնությունը (ընդգծումն իմն է.-Լ.Շ.) : Այստեղ՝ բուն պատճառը հայկական եղեռնի (էջ 133):
19. *Дадрян В.*, Геноцид армян: содержание преступления. Ер., 2005, էջ 27:
20. Տե՛ս մասնավորապես՝ *Շիրինյան Լ.Ղ.* Հայ զինական ուժը առաջին աշխարհամարտի վերջնափուլում, Եր. 2010, *Սահակյան Ռ.Օ.* Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀԴ Դաշնակցությունը. Եր. 2010:
21. Տե՛ս *Հիշատակագիր Հայկական հարցի մասին* տրված ԱՄՆ նախագահ պրն. Հարտինգին, Իզմիր, 1921, էջ 6:
22. Այդ մասին հանգամանորեն տե՛ս *Սասունի Կ.* Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով, Պէյրուս, 1965:
23. Հանգամանորեն տե՛ս *Барсегов Ю. Г.*, Геноцид армян — преступление по международному праву. М., 2000, էջ 16:

24. Ուշագրավ է, որ Մեծ Եղեռնի «թարմ» հետքերով քաղաքակիրթ աշխարհը սկսեց խոսել հայոց ցեղասպանության մասին և այն որակեց իր իսկական անունով, որպես « ողջակեզ» (holocaust), «ահարկու ողջակեզ» («ghastly holocaust»)- Տե՛ս *Hocking Joseph*, The path of glory («Փառքի ճանապարհեն»), London, New York, Toronto, 1918, p. 216, 240: «Արմենոցիդ» հասկացությունը կազմել և շրջանառության մեջ է դրել արաբ (Սիրիա) պատմաբան Մուսա Պրինսը (Moussa Prince):
25. *Барсегов Ю. Г.*, Геноцид армян, էջ 320:
26. *Барсегов Ю. Г.*, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. В 2-х т. Т.2, ч.2, М., 2005, էջ 215:
27. Տես *Чальхушян Г.*, Красная книга, Ростов на Дону, 1919, էջ 183-184:
28. Հանգամանորեն տե՛ս *Дадрян В. Н.*, История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Пер. с англ., Ер., 2007, էջ 92-93, 347-348:

ՄԱՍ-2

1. *Խուրշուդյան Լ.Ա.* Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր. 1999, էջ 281:
2. Տե՛ս *Մեծ տերությունները*, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, թարգմ. ֆր., Եր. 2005, էջ 63-64:
3. Տե՛ս *Գևորգյան Դ.Ա.* Հայաստան և Եվրոպա. Հայաստանի պատմությունը և հայկական մշակույթը ժամանակակից պատմագիտական և քաղաքագիտական տեսությունների լույսի տակ.-«Վեմ», 2009 №1, էջ 45:
4. Տե՛ս *Дергачев В.А.* Геополитика, Киев 2000, էջ 259:
5. *Ziemke K.* Die neue Türkei, Berlin 1930, S.270.- Տե՛ս *Օհանջանյան Ա.* 1915 թվական: Անհերքելի վկայություններ. Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին, թարգմ. գերմ., Եր. 1997, էջ 62:
6. Տե՛ս *Մեծ տերությունները*, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), էջ 99:

7. Терян В. Докладная записка о Турецкой Армении.-Տերյան Վ. Երկերի ժողովածու, հ.4, Եր.1925, էջ 318:
8. Симолян Р.Г. Армянский вопрос и ленинский декрет «О Турецкой» Армении».-Национальный вопрос и новое мышление. Редкол: Абрамян Л.А. и др. Ер.,1989, էջ 278:
9. Տե՛ս Էլունյան Ա.Ա. Комминтерн и геополитика: Балканский рубеж, 1919-1938, М.1997, էջ 27:
10. Հանգամանորեն տե՛ս *Геноцид армян*. ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий.(Ком.: проф.Ю.Г.Барсегова). В 2-х т., т. 2,ч.2. М., 2005, էջ 230-251, *Շիրինյան Լ. Ղ.* Արևմուտքի անկումը. Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման աներկյան փորձի ծախսողումը, Եր.2010, *Պապյան Ա.* Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Եր. 2007, էջ 5-8, 13-16, 32-39, 96-117:
11. Gerard, James W., Armenia, Russia and the Lausanne Treaty.- The Lausanne: Turkey and Armenia, N.Y.,1926, էջ 166:

1. Մահակյան Տ. Ղ. Հայոց ցեղասպանության մեղսակիրները: Եր., 2015, 528 էջ:
2. Геворкян Р. Геноцид армян. Полная история. 2015, 912 с.

Լեւոն ՇԻՐԻՆՅԱՆ

ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՈՌՈՒԲԵՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՍԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից կարևորը կյանքի մեջ այն է, որ կարողանաս գտնել մեկ այնպիսի կետ, որտեղից բոլոր երևույթները քեզ տեսնելի և ըմբռնելի են, և՛ այդ կետի վրա կարողանաս մնալ մինչև վերջ: Որովհետև միայն մեկ և ընդհանուր կետից կարելի է ընդգրկել երևույթների բովանդակ ամբողջականությունը իբրև մեկ անբաժան միություն, և միայն տեսակետի նույնությունն է, որ մեզ կարող է ապահովել հակասություններից:

Կարլ
ԿԼԱՌԻՉԵՎԻՑ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Ճշմարիտ է, որ հայ հեղափոխականների սերունդը, անցնելով արյան ու մահվան հովիտներով, կերտեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրա սահմանները հասցրեց Բագրատունյաց հարստության սահմաններին և նրա գոյության երկու և կես տարիների ընթացքում հասավ միջազգային ճանաչման, կնքեց Սևրի դաշնագիրը (10 օգոստոսի 1920 թ.)՝ հայ ժողովրդի իր հայրենիքի հանդեպ անօտարելի իրավունքի վավերագիրը:

Այդ տիտանական աշխատանքի ընթացքում հավասարների մեջ յուրաքանչյուրն իրեն նվիրաբերեց հայրենիքի ազատության գործին անմնացորդ, իր կարողությունների առավելագույնով:

Ճիշտ է նաև, որ 1920 թվականի վերջերին Հայաստանի համար առաջացած ծայրահեղ անբարենպաստ երկրաքաղաքական (գեոպոլիտիկական) պայմանների հարկադրանքով կործանվեց նորամանուկը, իսկ նրա իսկական զավակները, ովքեր չէին զոհվել, բռնեցին տարագրության ճանապարհը՝ հոգու խորքում վառ պահելով ու փայփայելով Հայրենիքի վերածննդի և ամբողջական Հայաստանի իդեալը:

Այդ փաղանգի մեջ իր ուրույն տեղն ունի Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան, ծնված՝ 07.05.1882 թ., Ախալքալաք, մահ.՝ 27.11.1951 թ., Փարիզ):

Նա շուրջ երկու տասնամյակ, - ֆիդայուց մինչև ՀՀ Նորհրդարանի անդամ, Բյուրո-կառավարության ներքին գործերի ու ռազմական նախարար և Հ. Յ. Դաշնակցության Բյուրոյի անդամ, - կովեց Հայաստանի համար: Ունեցավ բացառիկ ծառայություն իր ժողովրդի և նրա պետականության առաջ*:

«Արամից հետո, - գրում է Առաջին Հանրապետության արդարադատության նախարար, «Հայրենիք»-ի հիմնադիր-խմբագիր Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան), - ոչ ոք այնքան բախտորոշ դեր չկատարեց Հայաստանի Հանրապետության կենդանի իրականություն դառնալու մեջ, որքան Ռուբենը»:

Այն, որ ունեցանք Հայաստանի անկախ հանրապետություն, «մեծագույն չափով պարտական ենք Ռուբենի քաղաքական հեռատեսությանը, անդդվելի կամքին ու ամեն արգելք խորտակող վճռականությանը»: Մասնավորապես, հանրապետության զգալի տարածքը մաքրվեց թուրք-թաթարական տարրերից և բնակեցվեց արևմտահայ գաղթականներով Ռուբենի ձեռնարկների շնորհիվ:

* Տարագրությունից հետո Ռուբենը մինչև 1933 թ. ապրել է Ֆրանսիայում, 1942 թ. Կահիրեում, 2 տարի Պաղեստինում, մինչև 1947 թ. Բեյրութում, այնուհետև մինչև մահը՝ Ֆրանսիայում:

«Մաքրագործումը հղացել և ծրագրել էր Ռուբենը, - վկայում է Ա. Աստվածատրյանը, - խորհրդակցելով միայն Արամի հետ, ծածուկ պահելով այն կառավարության ղեկավար շրջանակներից»¹⁷⁶: Այնուհետև՝ «Ռուբենի անունը անքակտելի կերպով կապում են Հայաստանը հայացնելու գաղափարի հետ: Նա եղավ այդ գաղափարի հղացողն ու իրագործողը: Նա արեց ավելին, քան թույլ էին տալիս պայմանները»¹⁷⁷:

Նշանավոր խմբապետ Մուշեղը (Ավետիսյան) այդ առնչությամբ պատմում է. 1917 թվականի մարտ թե ապրիլ ամսվա մի օր Ռուբենը մեզ հավաքեց իր շուրջը: «Այդ գիշեր էր, որ Ռուբենը մեզի բացատրեց հայությունը իր պապենական հողերուն վրա տեղավորելու մեծ և ճակատագրական ծրագիրը: Այդ գիշեր, Խնուսի բերդի իր անշուք սենյակին մեջ, Ռուբենը հիմը կղներ իսկական Հայաստանին, ավելի ճիշտը՝ ապագայի համար շունչ կուտար անոր և կանուխեն կուգեր հիմնավորել անոր ապրելու պայմանները... Ռուբենի Թիֆլիս մեկնելեն ետք, անոր հրահանգով պետք է անցնեինք Երևան ու միջոցներ ստեղծեինք Տարոնի և Մասունի ժողովուրդը տեղավորելու Ալազյազի շրջանին մեջ»¹⁷⁸:

«Եթե Արամը իրավամբ պիտի համարել Հայաստանի հանրապետության հիմնադիրներեն առաջագույնը, - արժևորում է պատմական գործընթացը Մալխասը, - անկասկածորեն Ռուբենին կպատկանի հայաստանաշինության մեծ վարպետի վաստակը: Ան էր, որ իր մշեցի և սասունցի կոդյուններով վերակազմեց ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ մը...»¹⁷⁹:

Ժամանակակից գործիչների հիշողության մեջ թարմ է ռուսական զինվորական շտաբի մեծադիր քարտեզի Հայաստանի

¹⁷⁶ Աստվածատրյան Ա., Ռուբենը. - «Հայրենիք», 1966, թիվ 4, էջ 48:

¹⁷⁷ Նույն տեղում, թիվ 6, էջ 54:

¹⁷⁸ Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Երևան, 1990, հ. 7, էջ 102: (Այսուհետև՝ «Հիշատակներ»):

¹⁷⁹ Մալխաս, Հուշեր. - Տե՛ս Ռուբեն, «Հիշատակներ», Լոս Անճելես, 1952, հ. Է, էջ 416:

մասը և Ռուբենի երկգույն՝ կարմիր և կապույտ, հռչակավոր մատիտը, որոնցով ծնվում էր նույն հայաստանաշինությունը:

Եվ բնական է, որ երախտապարտ հայությունը նույն պատվանդանի վրա է տեսնում մերձավորագույն ազգային երկու գործիչ-ընկերներին, Արամին և Ռուբենին, որոնցից մեկը, պատկերավոր արտահայտությամբ, «ի վերջո հիմնեց Հայաստանի հանրապետությունը, իսկ մյուսը հիմնավորեց գայն» (Մալխաս):

Ավելին, Ռուբենին հատուկ էր նաև որոշակի «արկածախնդրություն», առանց որի, ինչպես եզրակացնում է Ռ. Դարբինյանը, դժվար թե նա «ընդունակ ըլլար Ռուբեն փաշա դառնալ Մշո դաշտին մեջ»: «Այդ և շարք մը կողմերով ալ կթվի թե, շարունակում է վերջինս, նման էր նշանավոր անգլիացի Լոուրենսին, որ այնքան նպաստեց արաբներու ազատագրման թրքական լուծեն»¹⁸⁰:

Ռուբենի ղեկավարությամբ ճնշվեց նաև բոլշևիկների մայիսյան (1920 թ.) ազգային դավադրությունը:

Ռուբենն ուներ ինքնատիպ քաղաքական մտածողություն: Նա պաշտպանում էր իր տեսակետը՝ հաճախ գնալով հոսանքին հակառակ: Քիչ է հայտնի, որ Բալկանյան պատերազմների շրջանում, Թուրքիայի համար անբարենպաստ պահին, Ռուբենը առաջարկեց կազմակերպել Արևմտյան Հայաստանում ապստամբություն՝ գտնելով, որ Հայկական հարցը անկարելի է հետապնդել ու լուծել գուտ դիվանագիտական ճանապարհով:

«Պետք է...- գտնում էր նա,- օգտվել թուրքերու պարտությունեն և Բալկաններու մեջ ու Պոլսո շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը»: Եվ պատրաստել էր ապստամբության մի ընդարձակ ծրագիր: Սակայն առաջարկը ուշադրության չարժանացավ¹⁸¹:

Եվ իզուր:

¹⁸⁰ Տե՛ս Ռուբեն, «Հիշատակներ», հ. 1, էջ 27:

¹⁸¹ Տե՛ս Դարբինյան Ռ., Կյանքիս գրքեն, Բեյրութ, 1972, հ. Ա, էջ 421:

Ռուբենն առանձնակի կարծիք ուներ նաև ՀՅԴ ութերորդ ընդհանուր (Կարնո) ժողովի (1914 թ. հուլիս) գլխավոր հարցում, Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտին մասնակցության դեպքում արևմտահայության ֆիզիկական գոյության պահպանման վերաբերյալ:

Ռուբենը բացառիկ երևույթ է նաև հեղափոխական պատումի ժանրում: Նա առաջ մղեց ու կատարելության հասցրեց ազգային հեղափոխության հուշագրությունը: Բառիս բուն իմաստով, նա ստեղծեց հայ ազգային հեղափոխության և Հայաստանի ազատագրության ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ՝ «Հիշատակների» իր անգուգական շարքը: Նա հայ ժողովրդին վերադարձրեց հեղափոխական գործիչների անհամար կերպարներ, ազատագրական կռվի անթիվ դրվագներ և դարձավ հեղափոխական երիտասարդության անփոխարինելի դաստիարակը: Հայ ազգային հեղափոխության ռուբենյան կերպարները ոգևորել են լիբանանահայ մարտիկներին, առաջնորդել Արցախի ազատագրության համար ոտքի ելած ռազմիկներին: Եվ նրանք դեռևս բազում հայորդիների կուղեկցեն հայրենիքի համար մղվելիք գալիք ճակատամարտերում... Ռուբենն իր «Հիշատակներում» ամբարել է ազգագրական մասունքներ, թարգմանել ժողովրդական առասպելների խորհուրդն ու պատգամը, կերտել իր պաշտելի Հայաստանի պատմական ու արդիական կերպարը:

Տարողունակ է Մալխասի գնահատականը. «Նիկոլ Դումանի համեստ զինվորը, Լեոնապարի (Վանա լճի հարավային տարածքը,- Լ. Շ.) շրջանին մեջ դարձավ հայտնի Ռուբենը, Մուշ-Սասունի փոթորկային հեղափոխության ատեն Ռուբեն փաշա, մինչև որ, թե որպես մարտիկ և թե որպես ղեկավար առասպելական ֆետայիներու, արյուն ոսկորներով շաղախուն հոգեկան

պատվանդանի վրա բարձրացավ, կազմելով սրբազան երրորդություն մը – ՍԵՐՈՒՔ, ԳԵՎՈՐԳ, ՌՈՒԲԵՆ»¹⁸²:

Իսկ այսօր Ռուբեն գիտնականը գերում է ցեղակիցներին իր անկրկնելի քաղաքական մտածողությամբ, հայաստանակենտրոն իր աշխարհընկալումով: «Խորաթափանց դիտող էր և ի ծնե փիլիսոփա, ոչինչ կընդունէր առանց սեփական մանրակրկիտ ու բազմակողմանի քննության: Իր միտքը գիտնականի միտք էր: Անկասկած, մեծ գիտնական ու փիլիսոփա պիտի լինէր, եթէ հայ հեղափոխական չլինէր» (Ռ. Դարբինյան):

Նմանատիպ բնութագիր է տալիս Ա. Աստվածատրյանը. «Եթէ նա չլինէր Հ. Յ. Դաշնակցության ուխտյալ և հավատարմագույն զավակներից մեկը, հայ մշակութային կյանքում նա, անկասկած, ինքնատիպ գիտնականի անուն պիտի վաստակեր: Իր նկարագրով Ռուբենը միջակության ժխտումն էր, ինչ ասպարեզում էլ որ լինէր»¹⁸³:

Ռուբենի կերպարին նոր շտրիխ է ավելացնում ազգային հեղափոխության գործիչներից հայտնի Ավոն. «Ռուբեն, – գրում է նա, – միջազգային առումով մասնագետ մըն էր (...) Միջին Արևելյան քաղաքական հարցերու մեջ: Շատ հաճախ օտար հեղինակները կղիմեին իրեն, հասկնալու համար Մերձավոր Արևելքի ժողովուրդներու հետ կապված հարցերու մասին»¹⁸⁴:

Եվ բնական է, որ Ռուբենն ստեղծեց «Հայաստան. միջցամաքային ուղիներու վրա» (1946 թ.) երկրաքաղաքական կոթողային իր աշխատությունը, որը Լևոն Շանթի «Անկախությունը պահանջ ազգային գոյության» (1922-1923 թթ.), Վահան Նավասարդյանի «Նեղուցները (Բոսֆոր և Դարդանեյ). թրքական ջրուղիները և Հայ դատը» (1947 թ.) և այլոց գործերի հետ միասին, ըստ

¹⁸² Մայխաս, Հուշեր. – տե՛ս Ռուբեն, «Հիշատակներ», Լոս Անճելես, 1952, հ. է, էջ 415:

¹⁸³ Աստվածատրյան Ա., – «Հայրենիք», 1966, թիվ 3, էջ 35:

¹⁸⁴ Ավո, Ռուբեն. – «Հեղափոխական ալբոմ». Ազատագրական պայքարի հուշամատյան, Բեյրութ, 1962, Դ շարք, թիվ 1 (37), էջ 26:

Լույսյան, ազգային երկրառազմավարության (գեոստրատեգիա) գիտական հայեցակարգի հիմքն է:

Աննշան վերապահումներով այն արդիական է նույնքան, որքան և գրված օրերին: Զափագանցրած չենք լինի, եթե ասենք, որ այդ ուսումնասիրությունը համաշխարհային երկրաքաղաքական գրականության լավագույն նմուշներից է: Շահագրգիռ հետզոտողն այնտեղ կգտնի ժամանակի հայտնի հեղինակների աշխատություններին համարժեք զուգահեռներ: Մասնավորապես, նկատի ունենք անգլոսաքսոնյան ռազմավարներ Հալֆորդ Մակքիդերին, Նիկոլաս Մփայքմենին, գերմանացի գեներալ Կարլ Հաուսհոֆերին:

Ռուբենի կերպարը թերևս չի լինի ամբողջական, եթե չընդգծենք, որ նա իր «ամբողջ Լույսյամբ ՀԱՅ էր» (Մայխաս) և լինելով Գևորգյան ճեմարանի սան, իր փոթորկահույզ կյանքի ողջ ընթացքում պահպանեց ակնածանքն ու կապը Էջմիածնի ու հայ ազգային եկեղեցու հետ: Խոսք տանք նրա մանկության ընկերոջն ու Հանրապետության արդարադատության նախարարին. «Կթվեր, թե Ռուբեն կսիրեր Էջմիածինը ոչ միայն ազգային քաղաքական նկատումներով, այլև խորհրդապաշտական, կրոնական շարժառիթներով»: Սակայն, Էջմիածնեն ավելի պաշտամունքի առարկա է Հայաստանը, հայ աշխատավոր դասը: Ջուր չէ, որ Հայկական լեռնաշխարհը Ռուբենի գործերում ներկայանում է որպես բնական մի վանք, եկեղեցի, արժանի հավերժական խնկարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(Աշխարհագրական ազդակների գերակայությունը)

Եվ այսպես, Ռուբենը հայ քաղաքական մտքի ոլորտ մտավ ոչ միայն ազգային հեղափոխության բարձրարժեք հուշագրությունների շարքով¹⁸⁵, այլև Հայաստանի երկրաքաղաքական ուրույն հայեցակարգով:

Նրա դատողությունների մեկնակետը բնապատմական գործընթացն է, համաշխարհային տեղաշարժերի պայմանավորվածությունը աշխարհագրական գործոններով (երկրի դիրք, բնական ու մարդկային պաշարներ, կլիմա և այլն): Ըստ Ռուբենի, հին աշխարհի պատմությունը «հաշտ կընթանա ֆիզիկական օրենքներուն, մթնոլորտային կամ ծովային հոսանքներուն»¹⁸⁶: Նա ավելի է որոշակիացնում ասելիքը, երբ համաշխարհային երեք-չորս ճանապարհների վրա ծավալված իրադարձություններով քննում է աշխարհի պատմությունը, ազգերի տնտեսական կյանքը, նրանց պատերազմներն ու մրցակցությունը, որոնց թվում նաև Հայաստանի ճակատագիրը: Եվրոպայից դեպի Արևելք, Ասիայից դեպի Արևմուտք՝ ահա՛ տեղաշարժերի գլխավոր ընթացքները:

Այդ հիմնական ճանապարհներն են.

1. Մոսկվա-Վոլգա-Չեռովոր Արևելք, որի մի ճյուղը հասնում է մինչև Սախալին, Ճապոնիա, իսկ մյուսը՝ Պեկին, Հոնկոնգ:

2. Լոնդոն-Մուեզ-Հնդկաստան-Մինգապուր, որը մի ծայրով հասնում է Նոր Զելանդիա, իսկ մյուսով՝ Պեկին և Հոնկոնգ:

3. Պոլիս (Կոստանդնուպոլիս, Մոսմբուլ - Լ. Շ.) - Էրզրում (Կարին, Թեոդուսոպոլիս - Լ. Շ.) - Թեհրան Չեռովոր Արևելք ու Հնդկաստան: (Մեզ հետաքրքրողը երրորդն է, քանի որ այնտեղ են ծավալվել Արևելյան խնդրի և Հայ դատի շուրջ իրադարձությունները):

Հայտնի է, որ աշխարհի որպես յուրահատուկ երկրաքաղաքական ոսպնյակի Պոլսի և նրա շուրջ տեղի են ունեցել ինչպես հին, այնպես էլ նորագույն պատմության ճակատագրական իրադարձություններ, որին տիրանալու կամ նրա նկատմամբ

¹⁸⁵ Տե՛ս Ռուբեն, «Հիշատակներ», հ. 1-7, Երևան, 1990:

¹⁸⁶ Ռուբեն, «Հայաստան. միջցամաքային ուղիներու վրա», Բեյրութ, 1948, էջ 4:

բացառիկ իրավունքներ ունենալու երեք գերհզոր ուժերի՝ Ռուսաստանի, Գերմանիայի ու Անգլիայի աշխարհակալ ձգտումներով լուծվել են (կամ չեն լուծվել) Փոքր Ասիայի և Միջին Արևելքի հիմնախնդիրները:

Երկրաքաղաքական մանրակրկիտ հաշվարկներով Ռուբենը եզրակացնում է, որ Պոլսի ճանապարհների շուրջ կայսերապետական մրցակցության մեջ «Անգլիա և Ռուսիա (այսօր թերևս՝ Ամերիկա և Ռուսաստան - Լ. Շ.) մահացու թշնամիներ են: Այս իրողությամբ պետք է բացատրել Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի անկախությունները և նրանց ճանապարհների անգործածելի մնալը, Հայկական, Մակեդոնական, Քրդական հարցերի միշտ հրատապ լինելը, բայց և միշտ անլուծ մնալու պատճառը»¹⁸⁷, ինչպես նաև այն անժխտելի փաստը, որ Թուրքիան, նստած լինելով «կամրջագլուխ Պոլսի և նեղուցների մեջ», այնքան ուժ չունի, որ միջազգային այդ ճանապարհների վրայից կարողանար երեք ուժն էլ չեզոքացնել: Ուրեմն ստիպված է լինել «երեքից մեկի կողմը», միշտ պատրաստ ունենալ կառավարական «երեք դահլիճ»: Թեկուզև այսօր Թուրքիայի «վարչական ուղղությունը» արևմտյանն է՝ անզու-սաքսոնականը, սակայն նորագույն շրջանում նրա ճակատագրի մեջ բացառիկ նշանակություն ունեցավ ռուսականը՝ Էնվերի, Մուստաֆա Բենալի գլխավորությամբ: Թուրքիան իր գոյությամբ ու ժամանակակից սահմաններով պարտական է քեմալ-բոլշևիկյան դաշինքին: Լույն «վարչական ուղղությանն» էր պարտական կոմունիստական Ռուսաստանը՝ Անդրկովկասը վերանվաճելու համար: Այժմեական է, թերևս, Ռուբենի այն պնդումը, որ Պոլսի և շրջակայքի, ուրեմն նաև Թուրքիայի, իրական տերը Լոզանի և Մոնթրեոյի «դաշնագիրը ստորագրող պետություններն են»: Այստեղ Թուրքիայի կողմից «անզուշությունը», մասնավորապես՝ միակողմանի թեքումը դեպի Ռուսաստան, կարող է «նոր պատերազմի դուռ բանալ», իսկ Թուրքիայի գոյության հարցը «դարձնել խնդրական»¹⁸⁸:

Ընդհանրապես Ռուբենին հատուկ է հարազատությունը աշխարհագրական դետերմինիզմին ու հետազոտության

¹⁸⁷ Ռուբեն, նույն աշխատությունը, էջ 33:

* Երրորդը կենտրոնական Եվրոպան էր՝ Գերմանիայի

գլխավորությամբ:

¹⁸⁸ Տե՛ս Ռուբեն, նույն աշխատությունը, էջ 35:

պատմահամեմատական մեթոդին: Այդ իմաստով, թերևս, նա մոտ է կանգնած երկրաքաղաքագետ, գեներալ Կարլ Հաուսհոֆերին: Բացառիկ է Ռուբենի կողմից Երկրորդ աշխարհամարտի էլքի կանխատեսման դրվագը: 1940-ի ծանր օրերին, վկայում է նա, երբ Դյունկերկն արդեն պատմության գիրկն էր անցել, անգլիական սպայակույտի «իմ բարեկամ գնդապետը» կասկածով էր դիտում իմ հանգստությունը «ընդհանուր մտահոգության մեջ»: Սակայն ես, — գրում է Ռուբենը, — աղետն անցած էի համարում և ասացի անգլիացուն. «Ձեզ դաշնակից Հիթլերը ներշնչող «նախախնամությունը», որ սխալ ճամփա ցույց կուտա ֆյուրերին (ընդգծումը մերն է — Լ. Շ.) ի վերջո պիտի կործանի և դուք պիտի հաղթեք, եթե եղած «ըլիցներեն» չահաբեկվեք»: Անգլիացին ապշում է: Ռուբենին հրավիրում են Գլխավոր շտաբ խնդրի մեկնաբանության: Վերջինիս իմաստը հետևյալն էր. Հիտլերը նախընտրեց Գերմանիայի Գլխավոր շտաբի «ավանդական» ուղղությունը՝ հին աշխարհի սիբիրյան ճանապարհը և անտեսեց, այսպես կոչված մոնոլոպոլսակակը¹⁸⁹: Մինչդեռ, ըստ Ռուբենի, Գերմանիայի հաղթանակն ապահովված կլիներ, եթե Հիտլերը, Եվրոպայում տանելի գրավման դրություն ստեղծելով և Անգլիան չեզոքացնելով, Բալկաններից շարժվեր դեպի Երզրում՝ Անդրկովկաս, Հնդկաստան ու Միջին Ասիա (Մերվ), մի կողմից, և մյուս կողմից՝ Ամանոսից Մուեզ: Որից հետո կարող էր մտնել Ռուսաստան՝ Եվրոպայից դեպի Մոսկվա և Մերվից դեպի Վոլգա: Այս երթուղին, փաստորեն, Առաջին աշխարհամարտի տարիներին օգտագործեց թուրք-գերմանական հրամանատարությունը, սակայն «թույլ կերպով»: Պարտությունից ոչ շատ առաջ իր այսպես կոչված քաղաքական կտակում ռազմավարական այս վրիպումը ընդունեց նաև Հիտլերը:

Գեներալ-ֆելդմարշալ Ա. Կեսելրինգը, վերլուծելով Երկրորդ աշխարհամարտի արդյունքները, գրում է, որ ոչ դաշնակիցները և ոչ էլ «Առանցքի երկրները» չըմբռնեցին տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը: Սակայն հիտլերյան հրամանատարության մի խումբ Կ. Աման, Է. Ռոմել, Ա. Կեսելրինգ, Է. Ռյոդեր, կարևորում էին Միջերկրական ծովի և Մերձավոր Արևելքի ռազմավարական ուղղությունները: Մշակված է եղել Գլխավոր շտաբում նաև Բալկաններից Թուրքիա ներխուժելու «Գերտուղ»

¹⁸⁹ Տե՛ս Ռուբեն, նույն աշխատությունը, էջ 24-25:

ծրագիրը, որը բարեբախտաբար, անտեսվեց: Ինչևէ: Հիտլերի ներշնչանքը փրկեց Աշխարհը¹⁹⁰:

Ինչպես տեսանք, տվյալ «երթուղին» նորություն չէր և հաշվի էր առնված, թեկուզ և չի գործադրվել: Բայց, ընդգծում է Ռուբենը, նրա «կարևորությունը կմնա նույնը»¹⁹¹:

Թերևս Ռուբենը քաջաձանթ էր հայ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցի Հայաստանի «տերիտորիալ իրադրության» ուսումնասիրության ու գնահատման որպես պատմական հետազոտությանը նախորդող շրջանի պարտադիր պահանջին որ նշանակում է արժևորել ինչպես երկրի բնական պայմանների ամբողջությունը, որտեղ թաքնված են արտադրողական այն պայմանները, որոնց առկայությամբ է ձևավորվում ժողովրդի անհատական դիմագիծը և որոշվում նրա անցած պատմական ուղու առանձնահատկությունը, այնպես էլ երկրի այն դիրքը, որ նա գրավում է շրջապատող երկրների ու ժողովուրդների... միջև¹⁹², սակայն, համենայն դեպս, անառարկելի իրողություն է, որ նա այդ խնդիրը լուծում է մինչև օրս անգերազանց պատմաաշխարհագրական ու երկրաքաղաքական փաստարկներով:

Եվ այսպես.

Հայաստանն ունի Մերձավոր Արևելքի մեջ «ընդարձակ բերդի մը կերպարանք»: Հայկական լեռնաշխարհը չունի Տիբեթի, Հիմալայների, Կովկասյան լեռնաշղթայի «անմերձելիությունը, և երկրները իրարից կղզիացնելու հատկությունը»: Սակայն, ինչպես Ալայաններն ու Աֆղանստանը, «կամրացնե երկիրը, առանց արգելելու հաղորդակցությունը»: Ե՛վ ամուր է, և՛ անցանելի «թույլ աշխարհակալության համար, բայց բավականին զորեղ ինքն իրեն պահելու համար»: Հայաստանի դիրքը ունի բարձր պարսպապատ ամրոցի կերպարանք՝ 150.000-ից ավելի քառ. կմ տարածությամբ:

¹⁹⁰ Տե՛ս հանգամանորեն Ֆրենկել Մ. Յու., «Աֆրիկան և Մերձավոր Արևելքը Գերմանիայի ռազմավարության մեջ 1940-1942 թթ.» — «Վոստոկ», 1995, No 1, էջ 147-158 (ռուս.):

¹⁹¹ Ռուբեն, նույն աշխատությունը, էջ 25:

¹⁹² Տե՛ս Ադոնց Ն., «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախաբարական կարգերի», Եր., 1987, էջ 11-12:

Այդ ամբողջի հարավային պատն է Հայկական Տավրոս լեռնաշղթան իր Բիթլիս («բերդ», ամբողջ հին Բաղեշն է – Լ. Շ.) և Էլ-Ազիզ (Մեզիրե, Էյլազիզ, Մամուրեթ-ու-Ազիզ՝ քաղաք Արևմտյան Հայաստանում, Խարբերդի դաշտում, Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք: Հնում Խարբերդի բերդից ստորգետնյա ճանապարհը հասնում էր մինչև Մեզիրե – Լ. Շ.): Ոտքերի տակ են Քրդստանը և Արաբական աշխարհը: Նրանց վրա Հայաստանն իշխում է 2500-4000 մետր բարձրությունից:

Արևմտյան պարիսպն է Անտիտավրոսը 2500-3500 մետր բարձրությամբ, իր Մալաթիա և Կեմախ (Կամախ, Պողազ, Քեմախ-Պողազ՝ ձոր, Կամախի կիրճ, Էրզրումի նահանգի Երզնկա գավառի Երզնկա գավառակում: Երզնկա քաղաքից մոտ 50 կմ հարավ-արևմուտք: Այստեղով անցնում էր Ակն-Արաբկիր-Խարբերդ ճանապարհը – Լ. Շ.): Իշխում է Փոքր Ասիայի և Միջերկրականի մուտքերի վրա:

Հյուսիսային սահմանն են Պոնտոս և Փոքր Կովկաս լեռնաշղթաները՝ 3000-4000 մետր բարձրությամբ, Տրապիզոն, Ճորոխ, Բորչալու (Գուգարքի նահանգի Լոռու գավառն է: Հայտնի է նաև որպես Տաշիր: Շրջապատված է արևմուտքից Ախալքալաքի գավառով, հարավից Շիրակով և Փամբակով, արևելքից Չորափորով – Չորփոր, Դիլիջանի գավառ և հյուսիսից Թիֆլիսի գավառով: Հյուսիսային սահմանագիծն է Խրամը¹⁹³: Թուրք-վրացական դաշինքով (1920 թ. ամառ) Վրաստանը պարտավորվում էր թուրք-հայկական պատերազմի դեպքում պահպանել չեզոքություն՝ դրա փոխարեն ստանալով Բորչալուն, Ախալքալաքն ու Արդահանը¹⁹⁴: Մինչդեռ, Կերենակու կառավարության շրջանու վրացի մենջևիկները Ախալքալաքը և Լոռին դիտում էին որպես հայկական ազգային տարածքի մաս, իսկ Ախալքալաքը որպես գավառ մտցվելու էր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգի կազմի մեջ: Մակայն 1917 թվականի թուրքական արշավանքից հետո վրացի ազգայնամուլները 180 աստիճանով իրենց տեսակետը փոխեցին: Բոլշևիկները հարազատ մնացին հակահայաստանյան այս ռազմավարությանը

¹⁹³ Տե՛ս Ռուբեն, «Տաշիրի գավառին բռնագրավումը», – «Դրոշակ», 1926, թիվ 3, էջ 67-71:

¹⁹⁴ Տե՛ս Ջարնանդ, «Միացյալ, անկախ Թուրանիա կամ ի՞նչ կծրագրեն թուրքերը», Աթենք, 1987, էջ 130:

ևս)¹⁹⁵ և Ղարաբ[աղ] դռներով: Իշխում է Սև ծովի, Վրաստանի և Ադրբեջանի վրա, մինչև Մեծ Կովկաս:

Արևելյան պարիսպն են Արարատը և Ջագրոսի լեռները՝ 3500-5000 մետր բարձրությամբ: Նրա դռներն են Մակուն, Ճուջղան (հավանաբար Ռուբենը նկատի ունի Ջուղան – Լ. Շ.), Շահթախտը: Իշխում են Իրանի վրա¹⁹⁶:

Այսպիսով՝ Հայաստանը աշխարհագրական մեկ միավոր է, ընկած Արարատի շուրջը, Փոքր Կովկասի շղթայից մինչև Տավրոսի լեռնաշղթան, Ջագրոսից մինչև Փոքր Ասիայի սահմանները: Աշխարհագրական այս միավորի սահմանները ճշգրտված են Սևրի դաշնագրով՝ Այդ միավորը, միջնաբերդ ունենալով Էրզրումը, մեկ բնական բերդ է, ընկած Մերձավոր Արևելքի մեջ:

¹⁹⁵ Տե՛ս Մելքոնյան Ա., «Ջավախք. պատմական ուրվագծեր», Եր., 1999, էջ 25-94:

¹⁹⁶ Ռուբեն, էջ 42-43: Շահթախթի ռազմավարական կարևորության մասին տե՛ս լրացուցիչ Ռուբեն, «Հիշատակներ», հ. 5, էջ 300-307:

* Այս դաշնագիրը, որ ստորագրվեց Ֆրանսիայի Սևր քաղաքում, հիմք ուներ ազգերի ինքնորոշումն ու անկախությունը նրանց պատմական, ազգագրական (էթնիկական) և աշխարհագրական սահմաններում և կոչված էր ներդաշնակություն ստեղծելու անկախ ազգերի միջև Մերձավոր Արևելքում: Նպատակ ուներ ստեղծելու Հայաստանի ու Քրդստանի ազգային պետությունները: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի նախատեսումով Հայաստանի սահմաններն սկսվում էին Սև ծովից (Կիրասունից արևելք), իջնում դեպի հարավ մինչև Եփրատի ծունկը (Բինկյանի մոտ), հակվելով դեպի արևելք՝ Մեծուրի (Դերսիմ) լեռնաշղթայի վրայով մոտենում Բյուրակնին, այնտեղից կրկին ուղղվելով դեպի հարավ կտրում են Արածանին (Գենջի մոտ), ապա Հայկական Տավրոսի հետ ուղղվում են դեպի արևելք ու հանգում պարսկական սահմանագծին (Պանամերիկ գյուղի մոտ): Հայաստանին տրվում էր շուրջ 100.000 քառ. կմ տարածք (Տարոնի, Բարձր Հայքի, Վասպուրականի պատմական շրջանները և Սև ծովի Տրապիզոն նավահանգիստը): 1920-ին Հայաստանի Հանրապետության ձևավորում էր արդեն շուրջ 56 հազար քառ. կմ տարածք (Երևանի նահանգը, Կարսը, գավառներ Թիֆլիսի և Գանձակի նահանգներից): Իսկ բոլոր տեսանկյուններով Հայաստանին պատկանող մի քանի գավառներ (Արցախ, Լեռնային Գանձակ, Ախալքալաք, Նախիջևանի մի մասը) վիճելի էին մնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Այդ հարցը, սակայն, հավանականությամբ լուծվելու էր դաշնակից գլխավոր պետությունների կողմից, եթե երեք պետությունները համաձայնության չգային միմյանց հետ):

Հայաստանի ռազմավարական բնութագրի հիման վրա Ռուբենը այնուհետև անդրադառնում է Արևելյան (կամ ռուսական Հայաստանի) արժևորմանը և այնտեղ (Խորհրդային) Հայաստանի տեղի ռազմավարական գնահատականին: Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան պարիսպը Գուգարքի շղթան է՝ Ախալքալաքի գավառով (2400 քառ. կմ տարածք): Տրված է Վրաստանին: Հյուսիսային պարիսպը լեռնային Գանձակն է՝ իր 5000 քառ. կմ տարածքով, տրված է Ադրբեջանին: Հյուսիս-արևմտյան պարիսպն է Լեռնային Ղարաբաղը՝ 4600 քառ. կմ տարածքով: Այս գավառը հին Արցախն է: Հայաստանի հարավ-արևելյան սահմանն է Նախիջևանի գավառը, որն ունի 5400 քառ. կմ տարածք: Ռուս-թուրքական դաշնագրով (1921 թ.) այն պետք է մնար անջատ Հայաստանից: Հանձնված է Ադրբեջանի խնամակալությանը: Հայաստանն իբրև առանձին հանրապետություն ունի 30.000 քառ. կմ տարածք, որը Հայաստանի Հանրապետության նախկին՝ Այրարատի և Շիրակի նահանգների մի մասն է: Արաքսի ափերին վերջանում է այսպես կոչված ռուսական Հայաստանը, սկսվում է թուրքական Հայաստանը: (Խորհրդային) Հայաստանի արևմտյան և հարավային կողմերում են գտնվում Մուրմալուն ու Կարսի նահանգը: Երկուսն էլ Հայաստանի աշխարհագրական մասերն են: Առաջինը՝ Արարատյան աշխարհի մի գավառը, երկրորդը՝ Վանանդը՝ իր Կարս ամրոցով՝ երբեմն մայրաքաղաք, երբեմն բերդաքաղաք, իր տարածքում գտնվող Անիի հետ միասին¹⁹⁷:

Այսպիսով՝ խաթարված է ոչ միայն Հայաստանի ամբողջականությունն առհասարակ, այլ նաև կոտորակված է Արևելյան Հայաստանը: Սերի դաշնագրով նախատեսված Հայաստանի 90 հազ. քառ. կմ տարածքը բռնազավթված (օկուպացված) է Թուրքիայի կողմից: Սակայն Հայաստանի ամբողջականության ընկալումը, միևնույն է, նստած է հայ ժողովրդի ենթագիտակցության ու բնույթի մեջ: «Կանգնեցրեք Երևանի փողոցներում պատահականորեն մեկին, - ասում է Ռուբենը, - և

Սերի դաշնագրով Հայաստանի ստույգ տեղագրությունը տե՛ս Լազյան Գ., «Հայաստան և Հայ դատը հայ և ռուս հարաբերությունների լույսի տակ», Կահիրե, 1957, էջ 215-224: Սերի դաշնագրի VI հատվածի 6 հոդվածներ (88-93) ամբողջովին վերաբերում են Հայաստանին:

¹⁹⁷ Ռուբեն, էջ 103-104:

հարցրեք, ո՞ր է Հայաստանը, անվարան կերպով ձեռքը պիտի ուղղի դեպի Արարատ, Վան, Մուշ, Էրզրում, թեև ինքը Հայաստանի մայրաքաղաքի մեջ է, բայց իրեն Հայաստանից դուրս է համարում: Նույն հարցումը արեք մեկ ուրիշ մշեցիի, էրզրումցիի, որ կգտնվի իր բնակավայրի մեջ կամ դուրս, անվարան դեպի Էջմիածին կուղղի իր ձեռքը՝ Հայաստանի ուղղությունը որոշելով: Հայը բնագրով միակամ է Հայաստանի ամբողջականության հարցի մեջ, և նրա մեջ է, որ կգտնվի իր պահպանումը և զարգացումը»¹⁹⁸:

Ռուբենը քննարկում և անդրադառնում է Հայաստանի՝ որպես ամբողջականության, ռազմավարական նշանակությանը: «Հայաստանը, - գրում է նա, - իր բարձրությամբ Մերձավոր Արևելքի առաստաղն է, որի գմբեթն է Բարձր Հայքը, մայրաքաղաք Էրզրումով, ուր կենտրոնանում է ինչպես Արևմուտքի, նույնպես և Արևելքի բոլոր ուղիների հանգույցը»¹⁹⁹: Ավելին, Էրզրումը գտնվելով մի կողմից՝ Պոլսի և Թեհրանի ճանապարհների կենտրոնը, մյուս կողմից՝ ընկած լինելով Տրապիզոնի և Ալեքսանդրեթի միջև, ոչ միայն Փոքր Ասիայի ճանապարհների խտացման վայրն է, այլև Միջերկրականի և Սև ծովի նավահանգիստների խտացման վայրը: Հայաստանի միջնաբերդը Էրզրումն է (ընդգծումը մերն է - Լ. Շ.):

Նրա էական գանձը կլիման է, հաղորդակցության տված դյուրությունները և գետերը: Մերձավոր Արևելքի ջրային ու հաղորդակցական ուղիների վրա նստած Էրզրումը, որպես հրամանատար, «ի գորու է բանալ այս ուղին, և փակել մյուսը, ըստ իր հայեցողության, և սրա մեջ է նրա կարողությունը»²⁰⁰: Եթե Էրզրումից 50 կմ շրջագծով մի տարածք առանձնացնենք, կտեսնենք, որ Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր գետային ակունքները՝ Եփրատ, Արածանի (Մուրադ) Եփրատի արևելյան ճյուղավորումը, Ճորոխ, Քուր (Կուր. - Լ. Շ.), Արաքս, սկիզբ են առնում այդ ավազանից: Արածանին էլ միանում է Եփրատին՝ Տիգրիսի ակունքներում: Եփրատի ճանապարհների համար «Էրզրումը նույն դերն ունի, - ընդգծում է Ռուբենը, - ինչ որ Սուեզի ջրանցքը, Դարդանելը և Ջիբրալթարը՝ ծովային ճամփաների համար»²⁰¹:

¹⁹⁸ Ռուբեն, էջ 109:

¹⁹⁹ Ռուբեն, էջ 40:

²⁰⁰ Ռուբեն, էջ 47:

²⁰¹ Ռուբեն, նույն տեղում:

Եթե կուզեք, ասում է Ռուբենը, հասկանալ Թուրքիայի հայաջինջ քաղաքականության* բուն պատճառը, որոնք Էրզրումի մեջ: Եթե կուզեք հասկանալ Ռուսաստանի շահախնդրության** բուն պատճառը Հայկական հարցում, պատճառները որոնք Էրզրումի մեջ:

* Ուշագրավ է, որ Թուրքիայի Ազգային շարժման կարևորագույն երկրորդ համաժողովը գումարվեց հենց Էրզրումում (1919, 10 հուլիս – 7 օգոստոս), որտեղ, ըստ էության, ձևակերպվեցին նրա ծրագրային դրույթները, որոնք և հետագայում ամփոփվեցին «Թուրքիայի Ազգային ուխտի» շրջանակներում (տե՛ս Աբեղյան Ա., «Թուրքիայի Ազգային ուխտը», – «Հայրենիք», 1923, թիվ 11, էջ 108-110): Կարգախոսն էր «Պաշտպանություն արևելյան Անատոլիայի ազգային իրավունքների», իմաստը՝ վիժեցնել Արևմտյան Հայաստանի կցումը Հայաստանի Հանրապետությանը (տե՛ս Ջաբևանդ, «Միացյալ, անկախ Թուրանիա», էջ 125-126): Այդուհանդերձ, Էրզրումի ռազմավարական նշանակության գնահատման «պատիվը» պատկանում է Սուլթան Համիդին: Բեռլինի (1878 թ.) կոնգրեսից հետո օսմանյան դեկավարության ուշադրությունը ուղղվեց դեպի Արևելք: Համիդը մտասնեռվեց դեպի արևմտյան Արաբիա, մահմեդական սրբազան վայրեր և Հայաստան (տե՛ս Աղստուլ Ե. Ա., «Ասիական Թուրքիայի բաժանումը...», 1924, էջ 29 (ռուս.)): Բալկանյան պատերազմները ուժեղացրին միտումը: «Մեր Օսմանյան պետությունը, – գրում էր Համիդը, – տկարացած է իր գերածումով... Ես չեմ զոջա, որ մեր ուժերը ձեռք Պայքանյան երկրները կորցրեցինք: Որքան արագորեն հետ կենտրոնանանք, այնքան ավելի շուտով պիտի կարենանք հաղթահարել մեր տկարությունը և «հիվանդությունը»: Նման կորուստները «շատ բնական մի բան էին» (տե՛ս Ցազճյան Գ., «Ապտուլ Համիդ Բ կարմիր սուլթանը», Բեյրութ, 1980, էջ 827): «Մենք ուզում ենք ապրել Անատոլիայի մեջ, – հռչակեց նա, – և պետք է մնանք առանձին» (նույն տեղում, էջ 812):

** Ռուսական զորքերը Էրզրումը գրավել են երեք անգամ (1829 թ., 1878 թ., 1916 թ.), երկուսը առանց մարտի, վերջինը՝ գրոհով: 1916 թ. Էրզրումի գրավումից հետո միայն դաշնակիցները շտապեցին ստորագրել Թուրքիայի մասնատման Մայքս-Պիկո (1916 թ. ապրիլ-մայիս) պայմանագիրը և Թուրքիան անդամահատվեց: Նիկոլայ Երկրորդը 1916 թ. մարտի 13-ին Ֆրանսիայի դեսպանին ասում էր. «Ես անձամբ Հայաստանում որևէ նվաճման մասին չեմ երագում, բացառությամբ Էրզրումի և Տրապիզոնի, որոնք ռազմավարորեն անհրաժեշտ են Կովկասին» (Պալեոլոգ Մորիս, «Ցարական Ռուսաստանը հեղափոխության նախօրյակին», Մ.-Պ., 1923, էջ 74):

Եթե կուզեք հասկանալ Արևմուտքի ընդդիմությունը*** Էրզրումը այլ աշխարհակալ տերությունների ձեռքն անցնելուն, կամ Թուրքիայի ամբողջականության պաշտպանությունը, և կամ Անկախ Հայաստան ստեղծելու նրանց շահագրգռությունը (Սևրի դաշնագիր), պատճառները նորից որոնք Էրզրումի մեջ: Եթե կուզեք հասկանալ հայկական դյուցազներգությունը, մարտիրոսությունը, ձախողությունը և հաջողությունը, մի որոնք այլ տեղ, բացի Էրզրումից****: Ռուբենը ավելի է խտացնում արժևորման գույները²⁰². Էրզրումի ռազմավարական դիրքը «այն վերածում է մի մեծ ադամանդի (միջազգային շուկայի համար), որ ցանկալի է բոլորին, մեկին բերելով մահ, մյուսին ժամանակավոր երջանկություն»²⁰³: Հայաստանի կենտրոնը, նրա սիրտ Էրզրումը, «դժոխքի և արքայության միջև է կառուցված»:

Ռուբենը հետևողականորեն հստակեցնում է Հայաստանի աշխարհագրական սահմանները: Նրա արևմուտքում Անատոլիան է: Փոքր Ասիայի այս մասը շրջապատված է երեք կողմից ծովերով, և մեկ կողմից խցանված՝ Հայաստանի ու Կիլիկիայի լեռներով: Ֆրանսիայի չափ տարածք, 1000 կմ երկարություն ունի այդ երկրամասը և 450 կմ լայնք: Արևելքում Թեհրանն է ընկած Կասպից ծովի, Մազանդարանի լեռների և Դեշտե-Քեբիր և Դաշտե-Լուր անապատների միջև: Թեհրանն Ասիայի համար նույն դերն ունի, ինչ Պոլիսը՝ Եվրոպայի: Բուն Ասիան սկսվում է Թեհրանից, – պարզաբանում է Ռուբենը:

*** Էրզրումի ռազմավարական դիրքը, թեկուզև դիվանագիտական մանվածապատ լեզվաթաղանթով, գնահատել է ոչ անհայտ Մայքսը, երբ գրում է Պետրոգրադում անգլիական դեսպան Բյուլենենին. «Եթե հայկական ազգային զգացմունքների կիզակետը լիներ Էրզրումը, անարխտ-սոցիալիստներն (դաշնակցականները – Լ. Շ.) իրենց ձեռքը կհավաքեն հայկական ողջ քաղաքական մեխանիզմը...» (12 մարտի 1916 թ.՝ տե՛ս «Ասիական Թուրքիայի բաժանումը...», էջ 158-159): Անկախ այն բանից, թե ո՛ւմ նկատի ունի Մայքսը անարխտ-սոցիալիստներ ասելով, միանշանակ է Էրզրումի երկրաքաղաքական կարևորությունը Հայաստանի համար հիմնավորված է:

**** Ի վերջո, Էրզրումի ռազմավարական նշանակության գնահատականով էլ այն ընդգրկվեց «Վիլսոնյան Հայաստանի» սահմանների մեջ:

²⁰² Ռուբեն, էջ 44:

²⁰³ Ռուբեն, էջ 43:

Այնտեղից կարելի է ցամաքային կարճ ճանապարհներով հասնել Ասիայի բոլոր մասերը: Ավելին, «Ասիայի դուռը Թեհրանն է»: Եթե նստած եք Թեհրան,– ընդգծում է նրա ռազմավարական դիրքը Ռուբենը,– այն ժամանակ միայն կարող եք Ասիայի լայնքն ու երկայնքը չափել: Ուրեմն՝ «Թեհրան հասնել, Ասիայի դռներին հասնել կնշանակե»²⁰⁴:

Այսպիսով՝ Հայաստանը աշխարհագրական մեկ միավոր է: Նրա ժողովուրդը հայությունն է: «Հայաստանի մարդկային արտադրությունը,– ընդգծում է Ռուբենը,– հայն է»: Հայաստանը անդունդների, կիրճերի, ձերպերի, ձորերի և հովիտների մեկ խառնարան է, երբեմն միայն լեռնադաշտերի տարածություններով: Այն փոթորկված ծովի ալիքներին է նման՝ շարունակ իր ելևէջներով: Այդ ելևէջները տանջանք ու տաղտուկ են անսովոր դաշտային ժողովուրդների համար: Հայաստանի հողի կազմվածքը միատարր ու միապաղաղ չէ: Նրա ամեն մի կտորը իր բնույթը, բաղադրությունը և կերպարանքն ունի: Մեկ չափանիշով այն ո՛չ կարելի է կշռել և ո՛չ էլ չափել, հողի յուրաքանչյուր անհատականություն կպահանջի բնակչության համապատասխան անհատականություն և նախաձեռնություն:

Հայաստանը,– շեշտում է Ռուբենը,– «անմարդաբնակ, խռովությանց ասպարեզ պիտի մնա... քանի որ այդ երկիրը բնակելի չէ ո՛չ մեկ ժողովուրդի համար, բացի իր ստեղծած ժողովրդից, որ հայն է»: Եվ Հայաստանն է հայության հայրենիքը, նրա օրրանը: Նա է ազգությունը ստեղծողը: «Հայրենիքն է կերտողը ազգության միտքը,– գրում է Ռուբենը,– սիրտը և անոր բովանդակ էությունը: Հայրենիքն է որոշողը ազգության ուժն ու բովանդակ կարողությունները»: Ավելի՛ն: Ազգության ապագան որոշված է իր հայրենիքի օրենքներով, որ «իբր կողմնացույց կառաջնորդե ազգը անկախ ազգության կամքից ու ցանկություններից»²⁰⁵:

²⁰⁴ Ռուբեն, էջ 37-39, 48-49:

²⁰⁵ Ռուբեն, էջ 98-102, 177-179:

Հայաստանի առաջին ու ամենաարժեքավոր «գանձն իր աշխարհագրական նպաստավոր դիրքն է, և նրան շրջապատող աշխարհների վրա հրամայողական կեցվածքը», երկրորդը՝ իր լեռնային ամրություններն են, որոնք Մերձավոր Արևելքի մեջ նրան տալիս են «ընդարձակ բերդի կերպարանք»:

Էրզրումի բացառիկ աշխարհագրական դիրքը, ռազմավարական ճանապարհների՝ վրա ունեցած գերիշխանությունը, Մերձավոր Արևելքի ջրային պաշարների կենտրոնատեղի լինելը առաջացնում են միջազգային անթաքույց շահագրգռություններ, անորոշ են դարձնում նրա կացությունը, հետևապես և Հայկական հարցի խիստ բարդությունը:

Հայկական հարցը, գրում է Ռուբենը, «համազոր է Էրզրումի հարցի դժվարին լուծմանը»: Իսկ Էրզրումին տեղ դարձած Թուրքիան իր «պանթուրանիզմով, պանիսլամիզմով և իր հիվանդ վիճակով, եթե շարունակի մնալ, պիտի դառնա աղբյուր իմպերիալիստների ինտրիգներին, երկրի մահացման, և շրջապատի խռովության աղբյուր»²⁰⁶, հետևապես և միջազգային հավասարակշռությունն ու խաղաղությունը խաթարող ուժ: Այնուհետև. Էրզրումի հարցի լուծումից է կախված Հայկական հարցի լուծումը, «Հայաստանի գոյությունը և հայ ժողովրդի կյանքն ու մահը»²⁰⁷: Ասվածին ներդաշնակ է Ն. Ադոնցի տեսակետը և բացառիկ կանխատեսումը. «Հայաստանում և Հայաստանի համար,– գրում է մեծանուն պատմաբանը,– մղված կռիվների մեծագույն մասը տեղի է ունեցել Էրզրումի... շուրջը: Նույնն էլ լինելու է ապագայում (ընդգծումները իմն են – Լ. Շ.)»²⁰⁸:

Հենվելով պատմաքաղաքական, աշխարհագրական համապատասխան նյութի վրա՝ Ռուբենը «Հայաստանի և նրա միջնաբերդ Էրզրումի շուրջ եղած հակամարտ կողմերը» բաժանում է չորս գլխավոր խմբերի

* Տե՛ս Կորսուն Ն. Գ., «Թուրքիա. Ռազմական աշխարհագրության դասախոսությունների դասընթաց», Մ., 1923 (ռուս.):

²⁰⁶ Ռուբեն, էջ 51:

²⁰⁷ Ռուբեն, էջ 44:

²⁰⁸ Ադոնց Ն., «Հայկական հարցը», Երևան, 1996, էջ 144-145:

1. Հայեր. ձգտում են հայկական հողերի միավորման և հայահավաքի՝ իրենց անկախ հայրենիքում, Հայաստանով ու նրա միջազգային դիրքով շահագրգիռ անկախ պետությունների հետ դաշնակցության:

2. Թուրքիա. յուրացրել է Հայաստանի մեծ մասը և թշնամի է հայությանը, կողմ Արևմտյան Հայաստանի քանդված ու ավերակ վիճակի հավերժացման: նա անզիջում է հայության և Հայաստանի հանդեպ, քանի որ հետապնդում է համաթուրանական նպատակներ: Եվ Ռուբենը ուրվագծում է համաթուրանականների (քեմալականների) Արևելյան քաղաքականության գլխավոր գիծը, որը, ինչպես մեզ է թվում, ցարդ միայն քողարկվում է, սակայն խորքային իմաստով որևէ փոփոխության չի ենթարկվել: Թուրքիան, եթե «իր տարբեր երկրամասերը վաճառքի է հանում, դյուրությամբ զիջում է ուրիշներին», նկատում է Ռուբենը, ապա «մի շտ և ամեն հարմար առիթով հառաջանում է դեպի Անդրկովկաս՝ հայերից խլելով Կարսը, իրեն կցելով Սուրմալուի շրջանը և ձգտելով դեպի Նախիջևան-Շարուր»: Քանզի, ըստ թուրանականության.

* «Կարսը մի բռունցք է Թիֆլիսի գլխին և ամուր հենարան՝ ռուսական արշավի դեմ: Կարս-Սուրմալու, Շարուր-Նախիջևան գծով կապվում ենք Բաքվի, Ադրբեջանի և Դաղստանի հետ, ուր ամուր կերպով կարելի է փակել ռուս արշավի դռները, որից հետո կմիանանք մեր կրոնակից և ցեղակից եղբայրներին:

* Էրզրում-Բայազետ-Մակու գծով մենք Թավրիզ պիտի գնանք, տիրելով ամբողջ պարսկական Ատրպատականը, որով պիտի կապվենք Թուրքեստանին (Կենտրոնական Ասիա.- Լ. Շ.): Իսկ Բիթլիս-Վան-Սալմաստ գծով կարող ենք իջնել Ռևանդուզ, և կամ Թավրիզի վրայով ուղղվել մինչև Աֆղանստան»²⁰⁹: Ահա այսպես, պարզ և հասկանալի:

3. Ռուսաստան. ամենայն շահագրգռություններ ունի Հայաստանի հանդեպ և, հետապնդելով սոսկ աշխարհակալական նպատակներ, «Հայաստանի ստեղծման Թուրքիայի հակառակությանը ինքն էլ համամիտ է»: Մասնավորապես, նա դեմ է Հայաստանով անցնող միջազգային ճանապարհների, որպես իր ճանապարհների իրական մրցակցի, անարգել գործարկմանը և «այս հարցի մեջ էլ լուր համամտություն կա Թուրքիայի և Ռուսիայի միջև»:

²⁰⁹ Ռուբեն, «Հայ-թրքական կնճիոր», Կահիրե, 1924, էջ 137-138:

«Հայաստանը,- ընդգծում է Ռուբենը,- աներածեշտ է իրեն (Ռուսաստանին - Լ. Շ.) իբր իր մասը և ոչ թե իրենից անկախ միավոր: Այս կետի մեջ է բուն թշնամությունը Թուրքիայի և Ռուսիայի միջև»:

4. Եվրոպա (Կենտրոնական Եվրոպա՝ Գերմանիայի գլխավորությամբ, Արևմտյան Եվրոպա՝ Անգլիայի գլխավորությամբ): Նրանց տեսակետների մեջ կա նույնություն: Եվրոպան ամբողջության մեջ դեմ է Հայաստանի ու նրա ուղիների՝ Ռուսաստանի ձեռքն անցնելուն: Սկզբունքն է՝ եթե Հայաստանը չպետք է «պատկանի իրեն», «թող չլինի նաև Ռուսաստանին»:

Եվրոպան որոշակի պայմաններում դեմ չէ Հայաստանի անկախությանն ու բարեկարգմանը (Ադրպիսի երկրաքաղաքական վիճակ առաջացավ 1918 թվականի վերջերին: Անգլիացիները թուրքերին դուրս մղեցին Բաթումից և այն հանձնեցին Վրաստանին, դատարկեցին Կարսն ու Արդահանը, Արարատյան դաշտի գրավված մասերը, «փշրեցին Բրեստ-Լիտովսկի շղթաները», վերադարձրին Հայաստանին և այսպիսով վերականգնվեց Հայաստանը Բագրատունյաց հարստության սահմաններում: Նպատակն էր ստեղծել Արևելքի հավասարակշռությունը պահող, խաղաղությունը հաստատող և հաղորդակցությունները կանոնավորող Հայաստան: Ստորագրվեց Սևրի դաշնագիրը, որը բոլշևիկ ղեկավարությունը դիտեց որպես խոչընդոտ թուրք-ռուս բարեկամության, իսկ «Միացյալ Ազատ, Անկախ Հայաստանից»՝ «անգլիական դավ»^{*}), եթե այն չի ծառայի Ռուսաստանի առաջացմանը:

* «Սևրի դաշնագրի շնականության առջև,- գրում էր հրեա բոլշևիկ Մ. Պավլովիչը,- կոծգունանան թե՛ չարաբաստիկ Բրեստի դաշնագիրը և թե՛ անգամ Վերսալի դաշնագիրը» (տե՛ս Նավասարդյան Վ., «Բոլշևիզմը և Դաշնակցությունը. Թոռուցիկ ակնարկ», Կահիրե, 1949, էջ 73): Ջերմեռանդորեն նրան է երկրորդում հավատարիմ լենինյան Ալ. Մյասնիկյանը. «Քեմալի շարժումը ուղղված է կապիտալիստական Եվրոպայի արևելյան քաղաքականության դեմ: Թուրքիան ուզում է դուրս գալ Անտանտի լծի տակից, դրա համար էլ նա անհավասար կռիվ է սկսել Եվրոպայի հզորների դեմ: Թուրքիայի վզին կապեցին Սևրի դաշնագիրը, այդ երկրորդ ասիական Վերսալը, որի տակ կար դաշնակցական Հայաստանի ներկայացուցչի (Ավ. Ահարոնյան.- Լ. Շ.) ստորագրությունը... Այդ Հայաստանը (ընդգծումը մերն է - Լ. Շ.) Թուրքիայի նկատմամբ ուզում էր անել այն, ինչ որ Վերսալում հաջողվեց կատարել Բելգիային Գերմանիայի հանդեպ: Արթնացող Տաճկաստանը ըմբոստացավ Սևրի դեմ...» («Նորք»:

Այլապես, Եվրոպայի համար գերադասելի է Թուրքիայի տիրապետությունը: Արևմուտքը կտրականապես դեմ է Ռուսաստանի ներկայությանը Մերձավոր Արևելքում:

Ուշագրավ է Ռուբենի Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման գնահատականը, այն, որ վերջինիս համար Թուրքիան, անկախ իր վարչակարգից, խիստ հետաքրքիր է իբրև ամբողջական միավոր, առանց մասնատումների, միայն թե նա դրսևորի ռուսական ըմբռնումով սոսկ «դեմոկրատիկ» վարքագիծ, այսինքն՝ մեկ կուսակցության, մեկ դասակարգի կամ մեկ անհատի դիկտատուրա «սովետների կողքին», «ընդդեմ իմպերիալիստ, կապիտալիստ բոլոր մնացած ուժերին: Այնպիսի ռեժիմ, ինչպիսին ուներ Մուստաֆա Քեմալը»²¹⁰: Թուրքիան անհրաժեշտ է Ռուսաստանին «իբր առողջապահական գոտի Մերձավոր Արևելքի մեջ միջազգային հակակշիռները չեզոքացնելու համար»:

Նրա համար կարևոր է այն, որ Թուրքիան ընթանար «Մուստաֆա Քեմալի շավիղով, և այդ պարագային, - ընդգծում է Ռուբենը, - օդին մեջ կցնդեն ինչպես վրացի, քուրդ ցնորքները, նույնպես և հայկական երազները իրենց հողերի վերագրավման մասին»: Ավելին, Թուրքիան «կդառնա ամբողջական և գուցե մեծացած ի հաշիվ Իրանի և այլոց մասերին ու իբր մեկ ազդակ Մերձավոր Արևելքի մեջ ընդդեմ Անգլիայի և Ամերիկայի

Երևան, գիրք 1, էջ 212): Նաև հայ բուլշևիկները: Ահա և ձեզ, ինչպես առում են, ազգային դավաճանությունն առանց սահմանների:

²¹⁰ Ռուբեն, էջ 93:

* Ռուսաստանը 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում որդեգրեց Օսմանյան կայսրության պահպանման քաղաքականություն և, ըստ էության, այդ քաղաքականությանը հետևեց նույնիսկ Արևելյան հարցի ամենաճգնաժամային պահերին: Նա գտնում էր, որ թուլացած կայսրության հետ իր հարևանությունն ավելի ձեռնտու է, քան նրա քայքայումն ու մասնատումը: (Այս քաղաքական կուրսի գոհն է Ռուսաստանի հանդեպ հիմնականում զգացական մղումներով առաջնորդվող հայ ժողովուրդը: Ռազմավարական հարցադրման տեսակետից այդ քաղաքականության գոհն է նաև ինքը Ռուսաստանը): Սկզբունքը խախտվեց 1915-1917 թվականներին, որն էլ, ինչպես հայտնի է, սբբագրեցին բուլշևիկները:

ներկայության»²¹¹: Ռուբենը պահանջում է իրականությունը տեսնել այնպես, ինչպես կա և «ոչ թե տեսնել ցանկություններով»:

Եվ այս գերհզոր ուժերի ճիրաններում է, որ գալարվում է Հայաստանը շուրջ երկու դար: Հայությունն էլ, սակայն, իր ցեղային բնազդին հարազատ, համառում է: Մանավանդ, եզրակացնում է Ռուբենը, «Էրզրումի, Հայաստանի հարցը այսօր նույնքան այժմեական է, որքան սրանից մեկ դար ու կես առաջ»²¹²: Հատկապես եթե նկատի ունենանք, որ «Մերձավոր Արևելքի ճակատագիրը կախված է միջազգային համադրություններից և հակադրություններից, քան այս կամ այն պետության կամքից»: Հետևապես, Մերձավոր Արևելքի, ինչպես և նրա «առանցքներից կարևորագույնին՝ Հայաստանի հարցի լուծումը կախված չէ ոչ հայերի բաղձանքներից, ոչ Թուրքիայի կամքից, ոչ Ռուսիայի բանակներից, ոչ էլ Բրիտանիայի նավատորմից, ինչպես նաև Ամերիկայի ոսկու դեզերը միակողմանի կերպով անկարող են լուծել»²¹³: Թեևադրողը միջազգային ուժերի հավասարակշռության համապարփակ օրենքն է, ազգային շահերի գերակա սկզբունքը: (Ի դեպ, Ռուբենն ինքը Հանրապետության շրջանում գործում էր նրանց հաշվառումով և հավատում էր նրանց հիմնարար էությանը): Ահա այսպե՛ս:

Ռուբենի նախատեսումով՝ գոյություն ունեն երեք հիմնական «դրություններ», որոնք ազդում են և կարող են ազդել Հայաստանի ու Մերձավոր Արևելքի գերբարդ կնճռի լուծման վրա:

1. Ռուսաստան, որը թերևս ամենաշահագրգիռ աշխարհակալական նկատառումներն ունի տարածաշրջանում. «Իրեն այնքան հզոր է զգում», որ հակառակ բոլոր շահագրգիռ և ընդդիմադիր ուժերի կամքի, «իր գեների ուժով կպարտադրե իր կամքը և իր տիրապետությունը, կամ ազդեցությունը կհաստատե Հայաստանի և Մերձավոր Արևելքի վրա»:

2. Անգլո-սաքսոններ, որոնց համար տարածաշրջանը կենսական շահերի ոլորտ է: Նրանք «չեն հանդուրժի Ռուսաստանի ներկայությունը այդ երկրամասերի վրա», երբ Մերձավոր Արևելքը և Հայաստանը կհամարեն այնքան թույլ, որ նրանք չեն կարող

²¹¹ Ռուբեն, էջ 94:

²¹² Նույն տեղում, էջ 54:

²¹³ Ռուբեն, էջ 121:

«պատվար ծառայել Ռուսիայի և իրենց միջև», իսկ այնքան հզոր, որ զենքի ուժով կկարողանան հետ վանել Ռուսաստանին ու կհաստատեն «իրենց անմիջական կամ անուղղակի ազդեցությունը ամբողջ Մերձավոր Արևելքի վրա»:

3. Մերձավոր Արևելք, երբ երկու հիմնական մրցակից ուժեր՝ Ռուսաստանն ու անգլո-սաքսոնները, Մերձավոր Արևելքի հարցերը հոգուտ որևէ կողմի լուծելու համար հասունացած չլիտելով, կարող են դրությունը թողնել նույնը՝ հեռանալ ձևացնելով, կամ գալ փոխհամաձայնության բաժանելով այն (1916 թվականի Մաքս-Պիկոյի պայմանագրի կրկնությամբ): Սակայն նման կացությունը բոլոր դեպքերում ժամանակավոր է և փոփոխական²¹⁴: Այդ դեպքում ինչ անել, երբ, ինչպես 1946-ին, էրզրումում և Հայաստանի մեծ մասում նստած թուրքական բանակը, «կհրամայի ամբողջ Մերձավոր Ասիայի և նրա բոլոր ճամփաներին», և նրա դիրքը վճռական ազդեցություն ունի քննվող դրությունների վրա:

Ըստ Ռուբենի, փոքր ժողովուրդների (հայ, քուրդ, լազ) համար կործանարար է քաղաքական որևէ կողմնորոշում (դիմաշրջում, օրինակացիա):

Անդրադատնալով Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականությանը «դարերի ընթացքին», հայության «առաջադիմական» հոսանքը (կոմունիստներ և նրանց նախորդներ. - Լ. Շ.) անվանում է «քաղաքական վարակիչ ռուսիզություն»*, առանց «տեսողության ու լսողության, լեցուն հավատով ու եկեղծությամբ, բայց զուրկ դատողություններից և իրականությունը հաշվի առնելու գիտակցությունից»²¹⁵:

Մերձելի է նաև անգլիական դիմաշրջումը: Այս ժողովուրդները «կխարխալեն և, դեռևս գտնվելով մանկական հասակում, դիմաշրջումների միջոցով կորոնեն մարդասիրություն, ողորմություն, արդարություն և այլն»: Անգլիայի համար «հետաքրքիր չէ սերը», այլ այն, թե «պատենչի թեկնածուն» որքանով է դիմացկուն «պատենչ դատնալու համար», «որքան կսիրե իր սեփական անկախությունը և իր երկրի անձեռնմխելիությունը, մանավանդ

Ռուսիայի կողմից, թեկուզ այդ նախանձախնդրությունը իր դեմ էլ ուղղված լինի և ինքն էլ մուտք չունենա այդ պատենչի մեջ»²¹⁶:

Այլ է Միացյալ Նահանգների պարագան**։ Նրա մերձավորարևելյան քաղաքականության մեջ նկատվում են վերակազմության միտումներ. ձգտումը մեկն է՝ «բոլոր տնտեսական կարելիությունների օգտագործում»: Սակայն, գրում է Ռուբենը, «ըստ իս այդ էլ անհրաժեշտ չէ»: Քանզի հանգամանքների անհրաժեշտ թելադրանքով «ինքը՝ Ամերիկյան կունենա հայկական և քրդական Մերձավոր Արևելքի դիմաշրջում»²¹⁷:

Պարզապես անհրաժեշտ է որդեգրել «Մերձավոր Արևելքի վերակազմության սկզբունքը, լիակատար, հավասար, ազատությունները ինչպես անհատի, նույնպես ժողովուրդների, և անտնց դաշնակցությունը իրար հետ, բոլոր տեսակի իմպերիալիզմների դեմ»²¹⁸: Գնալ «նվազ վտանգավոր, պարզ և արդար» ուղիով, որ նշանակում է «չորոնել... միջամտություններ», իրեն զգալ Մերձավոր Արևելքի անհրաժեշտ մեկ կովանը, հավատալ միմիայն իր կարողության և իր ձգտումների իրագործմանը: Չնահանջել միջազգային ձեռքբերումներից և «պահանջատեր դառնալ Սեբի դաշնագրի հիմունքներով անկախ Հայաստանի և Քուրդիստանի ստեղծման ու ազգերի ինքնորոշման սկզբունքի կիրառման ինչպես բոլորի, նույնպես հայերի և քուրդերի վերաբերմամբ»: «Մրանից գոհ կմնա Մերձավոր Արևելքը, - եզրակացնում է Ռուբենը, - հիմք չունի դժգոհելու Անգլիան, բարոյական հիմք չունի դժգոհելու և Ռուսիան...»²¹⁹:

²¹⁶ Ռուբեն, էջ 155:

** Պետք է նկատի ունենալ, որ Ռուբենն իր «Հայաստան, միջցամաքային ուղիներու վրա» գործը հրատարակել է 1946 թվականին «Ազգակ-Շաբաթօրյակ»-ում (Բեյրութ), որը հետո զանազան փոփոխություններով տպագրվեց առանձին գրքով (Բեյրութ, 1948):

²¹⁷ Ռուբեն, էջ 167:

²¹⁸ Ռուբեն, էջ 150:

²¹⁹ Ռուբեն, էջ 160:

²¹⁴ Ռուբեն, էջ 121-122:

* «Ոգի» բառից է:

²¹⁵ Ռուբեն, էջ 145-146:

Ակնհայտ է, որ Ռուբենին հատուկ է դատողությունների հետևողականությունն ու երկրաքաղաքական գործընթացների խորքային ընկալումը, Հայաստանի պատմության քաղաքական դասերի գերազանց իմացությունը: Այսպես օրինակ, անդրադառնալով Առաջին Հանրապետության կործանման տխուր իրողությանը, նա ընդգծում է պատահական գործոնների, հատկապես քաղաքական գործչի ինտուիցիայի նշանակությունը. «մեզ համար աղետավոր... հուսախաբությունից պետք է սորվինք մի բան՝ որ չի կարելի անվերապահությամբ վստահել տրամաբանության ու քաղաքական հաշիվներին, քանի որ միշտ քաղաքական վիճակները հարավտոփոխ են. երբեմն պիտի չարհամարիել և զիջել խենթ, բայց բնական վախի բնագոյներին»²²⁰:

Ուսանելի է նաև Ռուբենի դիտողությունը քաղաքական վարքագծի դրսևորման իրական բովանդակությանը: Նա գրում է, որ քաղաքական «դժբախտության պատճառներուն մեկ խոշոր մասը թաղված է այն համոզման մեջ, թե հավատարմությունը, քննանքը կվարձատրվին, մինչդեռ քաղաքական խնդիրներու մեջ պահանջն ու ուժն են, որ արժեք ունին: Մարդիկ կշոյեն ու կփաղաքշեն հավատարիմ շուրջ, բայց պատառը կուտան խաճան գամփոին»²²¹:

Բնականաբար, այս բոլորը Ռուբենի աշխարհայացքը դարձնում են ճկուն, իմաստավորված պատմության քաղաքական փորձով, իսկ Հայաստանի ամբողջականացման նրա հայեցակարգին հաղորդում դինամիզմ, բաղադրիչներին՝ ներդաշնակություն:

Սա ընդհանրապես:

Եվ այն համոզումը, որ ամբողջական Հայաստանի ձեռք բերման անխուսափելի հեռանկարը ամփոփված է համաաշխարհային գործընթացների տրամաբանության մեջ ու, առաջին հերթին, թելադրված է աշխարհագրական ազդակներով, Ռուբենի վերլուծություններում գլխավորն է: Առարկելով անտես ընդդիմախոսներին՝ նա գրում է. «Ոմանք համոզված են, թե միայն ուժն է, որ քաղաքականության և նոր կարգերի ազդակ կձառայի: Այդ

իրավ է կարճ ժամանակի և պատերազմի շրջանի համար»²²²: Սակայն, քաղաքական կացությունն ու նոր կարգը հարատև են այնքան, որքան համապատասխանում են աշխարհագրական տվյալներին: Այլապես նույն ազդակները «կընդդիմանան ձեռք բերված հաջողությանը, կքայքայեն սվիններու բազմությունը, կվիժեցնեն «բնական կացության» առաջացումը: Ուստի և «խտովությունը, ապստամբությունը հարատև է այնքան, մինչև որ ուժով ստեղծված նոր կարգը փոխարինվի աշխարհագրությամբ հրամայված հին կարգով»²²³ (ընդգծումը մերն է. - Լ. Շ.):

Մեկնակետ ունենալով աշխարհագրական ազդակների առարկայական ներգործության տեսակետը, որոնք «կբխեն բնությունից և ո՛չ թե ժողովուրդների ցանկությունից», Ռուբենը հաստատում է Հայաստանի «նշանակությունը և դիրքը անհնար է փոփոխության ենթարկել պետական ժամանակավոր սահմաններով և նրա կոտորակումներով»: Ուրեմն անհրաժեշտ է վառ պահել Հայաստանի ամբողջականացման իդեալը: Եվ այն հասանելի է, քանզի «Հայաստանի մարդկային արտադրությունը հայն է»²²⁴: Իսկ հայը նա է, որ «ո՛ր էլ լինի, սևեռուն ձգտում ունի հասնելու Հայաստան բերդի ամբողջացման, տիրանալու հայության անկախության որպես կովան Մերձավոր Արևելքի ու որպես խարխիս խաղաղության»²²⁵:

Իսկ քանի որ Մերձավոր Արևելքի ճակատագիրը, ըստ Ռուբենի, գլխավորապես կախված է ուժերի միջազգային համադրությունից ու հակադրությունից, անհրաժեշտ է, որ Մերձավոր Արևելքի «բոլոր վտանգվածները», որոնք ենթակա են իմպերիալիստական որևէ գլանակի տակ ձգվելուն, կազմեն միություն, գիտակցեն, որ Մերձավոր Արևելքի բախտն իրենց ձեռքն է, ստեղծեն մի լծակ, որը նրանց կդարձնի առանց խնդրանքի «խնդիր ընդունողներ»²²⁶: Սա Ռուբենի, այսպես կոչված, «կշեռքի լծակի երկարացման» կամ «գլանակի խորտակման» սկզբունքն է, որը ոչ այլ ինչ է, քան առկա ուժերի հաշվեկշիռը հոգուտ իրեն ծառայեցնելու

222 Ռուբեն, Հայաստան. միջցամաքային ուղիներու վրա, էջ 119:
 223 Ռուբեն, էջ 120:
 224 Ռուբեն, էջ 177:
 225 Ռուբեն, էջ 178:
 226 Ռուբեն, էջ 149:

²²⁰ Ռուբեն, «Հիշատակներ», հ. 7, էջ 255:
²²¹ Ռուբեն, Նախկրայը և անոր նշանակությունը Հայաստանի համար. - «Դրոշակ», 1925, թիվ 4, էջ 115:

արվեստ: Ուրեմն՝ փոքր կամ թույլ լինելը հարաբերական հասկացություն է և հակառակը: Այս սկզբունքը կամ մեթոդը Ռուբենը պայմանականորեն անվանում է «լենինյան»:

Անշուշտ, Ռուբենի վերլուծությունները զուտ «ակադեմիական» հետաքրքրություններից չէ, որ բխում են: Նրանք ծառայում են «Հայաստան բերդի» պաշտպան անկախ պետության ուղին կանխորոշելուն, որից և հետևում է հայության հիմնական խնդիրը հավաքվել Արարատի և Էրզրումի շուրջ, իր վերածնունդով լինել ազդակ Մերձավոր Արևելքի խաղաղության: Եվ եթե այս ճանապարհին լինի դրսի որևէ ուժ, և այս նպատակի իրագործման մեջ տեսնի իր շահը ևս, աջակցի այն իրականացնելուն, այդ աջակցությունը գնահատելի է, երբ «այն հենված է «Առ և Տուրի» և ոչ թե «Տուր և Առի» վրա: Դա պետք է լինի «գործակցություն» և ոչ «հիմնական նպատակ»²²⁷:

Այս ուղիով է, որ հայությունը շղթաներից կազատի «իր թանկագին Էրզրումը», իսկ Հայաստանը կկատարի իր «միջազգային դերը»: Եթե միլիոնների հասնող բազմությունները պահեն Հայաստանի ազատագրման ու ամբողջացման տեսակետը, որը «կրնա եղևի վրածվիլ միայն հայու ձեռքով»²²⁸: Եթե հայը կարողանա իր ուժեղ կողմը անհատապաշտությունը «տեղավորել» կազմակերպական համապատասխան անոթի մեջ: Քանզի ամբողջացնում է իր հայեցակարգը Ռուբենը, «մենք փոշիացած ենք առավելապես մեր... ներքին թերության հավաքականության կազմակերպման պակասի հետևանքով»²²⁹:

Ոչ, ընդգծում է Ռուբենը, «Հայաստանը մեղք չունի իր աշխարհագրական դիրքով. ան պատճառ չէ մեր թուլացման. ընդհակառակն, իր դիրքով ան պիտի նպաստեր հայության հզորության, եթե հայության ոգին չպակսեր մեկ բան՝ կազմակերպական արվեստը»²³⁰:

²²⁷ Ռուբեն, էջ 179:

²²⁸ Ռուբեն, էջ 102:

²²⁹ Ռուբեն, ՀՅԴ կազմակերպությունը, Եր., 1991, էջ 8:

²³⁰ Նույն տեղը, էջ 7:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԹԻՆԳԹՈՒՆԻ ՀԻՊՈԹԵԶԻ ՈՍՊՆՅԱԿՈՒՄ (հայեցակարգի քննական ուրվագիծ)

Հայաստանը անտիկ աշխարհի ծանրության կենտրոնն է, քանզի

նա գտնվում է հին աշխարհի

մշակութային երկրներից հավասար

հեռավորության վրա:

Ալ. Հումբոլդտ

Նոր աշխարհակարգի ձևավորումը և նրա համատեքստում աշխարհի տարբեր մասերում ընթացող գործընթացները հետխորհրդային տարիներին դարձան ռազմավարության (երկրաքաղաքականության) ոլորտի տարբեր հեղինակությունների վերլուծությունների առարկան և զուգահեռաբար առաջադրվեցին գալիքի տարբեր նախագծեր:

Դրանցից մեկն էլ «քաղաքակրթությունների բախման» հանթինգթոնյան հիպոթեզն է, որը, նկատենք, ժամանակին դարձավ 20-րդ դարավերջի և մեր օրերի ռազմավարական մտքի կատալիզատորը՝ հարցադրումների նորարարությամբ և հաճախ լուծումների, ուղղակի ասենք, անսովորությամբ:

Ասվածի տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայեցակարգի հեղինակ Սեմյունել Հանթինգթոնի Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող դիտարկումները, այդ շրջանակներում նաև Արցախի խնդրի շուրջ ընթացող քննարկումների տրամաբանությունը: Ինչպես մեզ է թվում, «հայկական թրթածրարի» հանթինգթոնյան իմացությունը, որը դրսևորվում է ինչպես նրա առանձին հոդվածներում²³¹, այնպես էլ 1996-ին լույս տեսած մենագրության մեջ²³²,

²³¹ Huntington P. Samuel (Хантингтон Самюэль).

որոշակի լրացումների ու ճշգրտումների կարիք ունեն, քանզի Հան-թինգթոնը սոսկ հետազոտող և շարքային քաղաքացի չէ, այլ ԱՄՆ քաղաքական իսթեբլիշմենտի (establishment) հեղինակավոր անդամ և policy-maker-ներից մեկը: Չէ որ Հանթինգթոնի կարծիքի հետ հաշվի է նստում ամերիկյան քաղաքական ընտրանին, նրա տեսակետը քննարկվում է աշխարհով մեկ և ազդում է տարբեր ժողովուրդների քաղաքական ճակատագրի վրա: Իսկ եթե հաշվի առնենք այն, որ Հանթինգթոնը, բավական ճշգրիտ է արտացոլում երկու նորագույն երկրաքաղաքական (գեոպոլիտիկական) նախագծերից մեկի՝ նեոատլանտիզմի (պահպանողական ուղղություն) էությունը²³³, ապա հարցադրման նշանակությունն առավել քան պարզ կդառնա: Ընդամենը, աշխարհի զարգացման նորագույն միտումների վերաբերյալ այն նրբերանգները, որոնք «որսում է» ԱՄՆ-ի

- Столкновение цивилизаций? – "Полус", 1994, N1, с.33-46. (The Clash of Civilizations? – "Foreign Affairs", Summer 1993).

- Грядущее столкновение цивилизаций? (Краткий вариант статьи "Столкновение цивилизаций?" из газеты "Нью Йорк Тајмс"). – "США: экономика, политика, идеология", 1994, N3, с. 39-41.

- Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. – "США: экономика, политика, идеология", 1994 N 4, с. 71-75. (If not civilizations, what? Paradigms of the Post-Cold War World.- "Foreign Affairs", November/ December, 1993).

- Столкновение цивилизаций и что она может означать для России. – "Общественные науки и современность", 1995, N3, с. 133-136.

- Будущее демократического процесса: от экспансии к консолидации. (The Future of Democratic Development: From Expansion to Consolidation).- "Мировая экономика и международные отношения", 1995, N6, с. 87-94.

- Запад уникален, но не универсален. – ("Foreign Affairs", December, 1996), "Мировая экономика и международные отношения", 1997, N8, с. 84-93.

²³² Столкновение цивилизаций. Пер с англ. М.: ООО "Издательство АСТ", 2003, 603 с. (The Clash of Civilizations and the Remaking of World Order, New York, Simon and Schuster, 1996, 368 p.)

²³³ Տե՛ս Դугин Александр. Основы Геополитики. Геополитическое будущее России. Мыслить Пространством. Изд. 3-е, доп., М., 1999, с. 115.

քաղաքական ու մտավոր իսթեբլիշմենթի նորահայտ կուռքը՝ Ֆարիդ Չաքարիան, չեն փոխում, ըստ էության, իրերի հիմնարար բնույթը²³⁴:

Ուստիև վերոշարադրյալի լույսի ներքո առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում քաղաքակրթությունների հավանական բախման հիպոթեզում Հայաստանի տեղի ճշգրտումը՝ քաղաքակրթությունների հանթինգթոնյան դասակարգման մեջ նրա կիրառած գլխավոր չափանիշի կրոնի (և կրոնական պատկանելության) հատկանիշով: Այսպես. «Կրոնը,- գրում է նա,- քաղաքակրթության կենտրոնական, որոշիչ բնութագիրն է», և հաստատում է Քրիստոֆեր Դաուսոնի (Ch. Dawson) այն պնդումը, թե «մեծ կրոնները այն հիմքերն են, որոնց վրա հիմնվում են մեծ քաղաքակրթությունները»²³⁵: «Կրոնը,- կրկնում է մի այլ տեղ Հանթինգթոնը,- քաղաքակրթության հիմնական որոշիչ հատկանիշն է...»²³⁶: Եվ մեխանիկական նույնականություն տեսնելով Ուղղափառության և Արևելյան եկեղեցիների միջև, Հանթինգթոնը հայերին «տեղադրում է» «ուղղափառ քաղաքակրթության» սանդղակում, ինչի հետևանքով Հայաստանը հայտնվում է ուղղափառ-սլավոնական աշխարհի կազմում: Իսկ Ռուսաստանին վերագրելով «ուղղափառ քաղաքակրթություն», - նկատում է Նիկոլայ Յուտանովը,- նրա համար (հետևաբար նաև Հայաստանի - Լ.Շ.) նախատեսում է «համագործակցության կրավորական ձև»²³⁷:

²³⁴ Տե՛ս Զաքարիա Փ., Будущее свободы: нелиберальная демократия в США и за их пределами. Пер. с англ., М., 2004; Закарія Փ., Постамериканский миф. Пер. С англ., М., 2009.

²³⁵ Хантингтон С. Столкновение цивилизаций. Пер. с англ., М., 2003, с. 59-60.

²³⁶ Նույն տեղը, էջ 410:

²³⁷ Նույն տեղը, էջ 6:

Ա. ԿՐՈՆԸ ՈՐՊԵՏ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇ.
ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Համաձայն Հանթինգթոնի, հետերկրևեռ աշխարհում լոկալ քաղաքականությունը դառնում է էթնիկական քաղաքականությունը: «Գլոբալ քաղաքականությունը՝ դա քաղաքակրթությունների²³⁸ քաղաքականությունն է: Գերտերությունների մրցակցությունը վերաճում է քաղաքակրթությունների բախման: Առաջին անգամ պատմության մեջ,- ազդարարում է Հանթինգթոնը,- գլոբալ քաղաքականությունը դառնում է բազմաբևեռ և բազմաքաղաքակրթական»²³⁹: Ընդսին, իրադրության բազմաբևեռայնությունը անկանխատեսելի է²⁴⁰: Այս տեսակետը Հանթինգթոնը դարձնում է ելակետային իր հայտնի մենագրության մեջ: Հետերկրևեռ աշխարհում,- գրում է Հանթինգթոնը,- «լոկալ քաղաքականությունը էթնիկական քաղաքականությունն է. գլոբալ քաղաքականությունը՝ դա քաղաքակրթությունների քաղաքականությունն է: Գերտերությունների մրցակցությունը փոխարինվել է քաղաքակրթությունների բախումով»²⁴¹: Իսկ այդ նոր աշխարհում, Հանթինգթոնի կարծիքով, գլոբալ քաղաքականության կենտրոնական ու ամենավտանգավոր տեսանկյունը դառնում է տարբեր քաղաքակրթությունների միջև կոնֆլիկտը²⁴²:

²³⁸ «Քաղաքակրթությունը,- գրում է Հանթինգթոնը,- դա մարդկանց մշակութային ամենաբարձր ընդհանրությունն է և մշակութային նույնականացման ամենալայն մակարդակը, դրանից զատ՝ ինչը մարդուն տարբերում է մյուս կենսաբանական տեսակներից: Այն որոշվում է ինչպես առարկայական տարրերով, ինչպիսիք են լեզուն, պատմությունը, կրոնը, սովորույթները, սոցիալական հաստատությունները, այնպես էլ մարդկանց ենթակայական նույնականացումով» (Хантингтон С. Столкновение цивилизаций, չ. 3 51): «Քաղաքակրթությունը,- շեշտում է Հանթինգթոնը,- որին պատկանում է մարդը, ամենաբարձր աստիճանն է, որը թույլ է տալիս նրան հստակորեն նույնացնել իրեն» (Նույն տեղը, էջ 51): «Սովորաբար քաղաքակրթության տակ հասկացվում է բարոյականության, կրոնի, կրթության, արվեստի, փիլիսոփայության, տեխնոլոգիաների, նյութական բարեկեցության, և հավանաբար, բազմաթիվ այլ բաների ավելի բարձր մակարդակի բարդ խառնուրդ» (Նույն տեղը, էջ 529):

²³⁹ Хантингтон С. Столкновение цивилизаций и что она может означать для России. – “Общественные науки и современность”, 1995, N 3, с. 134.

²⁴⁰ Տե՛ս Хантингтон С., Столкновение цивилизаций, с. 346:

²⁴¹ Хантингтон С., Столкновение цивилизаций, с. 24:

²⁴² Նույն տեղում, էջ 7:

Հանթինգթոնն արձանագրում է, որ աշխարհն այլևս չի բաժանվում ազատ աշխարհի, երրորդ աշխարհի և կոմունիստական բլոկի, իսկ աշխարհի պարզ բաժանումը աղքատ և հարուստ ճամբարների, կամ ժողովրդավարականի և ոչ ժողովրդավարականի արդեն քավարար չէ: Արդյունավետ է և ճիշտ աշխարհի երկրների բաժանումը այս կամ այն քաղաքակրթություններին պատկանելու հատկանիշով: «Մակրոմակարդակում խոսքը գնում է,- բացատրում է Հանթինգթոնը,- քաղաքակրթությունների բախման մասին, իսկ միկրոմակարդակում տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունների ու ժողովուրդների միջև հատկապես ցավագին, տևական և դաժան կոնֆլիկտների մասին»²⁴³: Երբ պետություններն ավելի ու ավելի շատ են մտածում «քաղաքակրթությունների կատեգորիաներով» և այդ տեսանկյունով էլ,- եզրակացնում է Հանթինգթոնը,- որոշում *իրենց տեղն աշխարհում և իրենց շահերը* (ընդգծումը իմն է. - Լ. Շ.)²⁴⁴: Սառը պատերազմին հաջորդող շրջանում,- ավելի է կոնկրետանում Հանթինգթոնը,- պետություններն «իրենց շահերը ավելի շատ են որոշում քաղաքակրթության հաշվառումով»²⁴⁵: Հանթինգթոնը ցույց է տալիս նաև համաաշխարհային զարգացման միտումը՝ հանգելով երկրառազմավարության ոլորտում սկզբունքային նշանակության եզրահանգման. պետականության հզորության աճը, որը գերիշխում էր կրևնուտքում, տեղափոխվում է դեպի ոչ-արևմտյան քաղաքակրթություններ: Գլոբալ քաղաքականությունը դարձել է բազմաբևեռ և բազմաքաղաքակրթական²⁴⁶:

Եվ ընդհանրապես, իր հիպոթեզն ապացուցելու համար Հանթինգթոնը անդրադառնում է հիմնախնդրի տարբեր կողմերին և առաջ է քաշում նոր հիմնավորումներ: Այսպես, օրինակ, նա գտնում է, որ համաաշխարհային քաղաքականությունը թևակոխում է նոր փուլ, երբ երկրների ու ժողովուրդների միջև կոնֆլիկտի հիմնարար աղբյուրը կգտնվի ոչ թե գաղափարախոսության ու տնտեսության բնագավառում, այլ «մշակույթի ոլորտում»: Գլոբալ քաղաքականության գլխավոր կոնֆլիկտները տեղի կունենան «տարբեր քաղաքակրթությունների երկրների ու ժողովուրդների միջև»: Քաղաքակրթությունների այդ բախումը կգերիշխի գլոբալ քաղաքականության մեջ²⁴⁷: Հե-

²⁴³ Хантингтон С. Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. – “США: экономика, политика, идеология”, 1994, ГЗн 6, с. 72.

²⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 73:

²⁴⁵ Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 36.

²⁴⁶ ЫбхЫЭ н»ХБ, չ. 3 27:

²⁴⁷ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций? – США: экономика, политика, идеология, 1994, ГЗн 3, с. 39с

տերկբևեռ աշխարհում, բացատրում է Հանթինգթոնը, նախկին հարցը «Ո՞ւմ կողմն եք դուք» փոխարինվել է ավելի սկզբունքային հարցով. «Ո՞վ եք դուք»: Հետևապես, գտնում է Հանթինգթոնը, յուրաքանչյուր երկիր պետք է ունենա պատասխան: Այդ պատասխանը՝ երկրի մշակութային ինքնությունն է և որոշում է նրա տեղը համաշխարհային քաղաքականության մեջ, նրա բարեկամներին ու թշնամիներին²⁴⁸:

Եվ այսպես, իր առաջադրած քաղաքակրթական հայեցակարգի շրջանակներում լուծելով նաև մեթոդաբանական կարևորագույն խնդիրներ, Հանթինգթոնը հանգում է շատ ավելի առարկայական ու կոնկրետ հետևությունների: «Մոտակա տարիներին,- գրում է Հանթինգթոնը,- տեղական կոնֆլիկտները ամենահավանականն է, որ կվերաճեն խոշոր պատերազմների ինչպես Բոսնիայում, այնպես էլ Կովկասում, այն դեպքերում, երբ նրանք տեղի կունենան քաղաքակրթությունների բաժանման գծերում: Հաջորդ համաշխարհային պատերազմը, եթե այդպիսին տեղի կունենա, կլինի պատերազմ քաղաքակրթությունների միջև»²⁴⁹:

Իսկ ընդհանրապես սահմանելով, որ քաղաքակրթությունը դա մարդկանց մշակութային ընդհանրության ամենաբարձր ծևն է և հատկանիշների ամենալայն տարրապատկերը (րոպաՍՅՐ), որոնք որոշում են ժողովրդի մշակութային ինքնությունը, կանխատեսում է, որ աշխարհի պատկերը ավելի ու ավելի մեծ չափերով կորոշվի յոթ կամ ութ գլխավոր քաղաքակրթություններով՝ արևմտյան, կոնֆուցիական, ճապոնական, իսլամական, հինդու, սլավոնա-ուղղափառ, լատինաամերիկյան և, հնարավոր է, աֆրիկյան²⁵⁰: Ընդ որում, գտնում է Հանթինգթոնը, ամենաարյունոտ կոնֆլիկտները տեղի կունենան այդ մշակույթները բաժանող սահմանների երկայնությամբ²⁵¹: Այս եզրակացությունը, վերջին հաշվով, բխում է Հանթինգթոնի մշակութային կողմնորոշումից: Նա պնդում է, որ նոր աշխարհում ամենա-

²⁴⁸ Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 186.

²⁴⁹ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, с. 39.

²⁵⁰ Մենագրության մեջ քաղաքակրթությունները ներկայացված են հետևյալ ճշգրտումներով ու հերթականությամբ. չինական (sinic), ճապոնական, հինդու, իսլամական, ուղղափառ, արևմտյան, լատինաամերիկյան, աֆրիկական (հնարավոր է) քաղաքակրթություններ (Տե՛ս՝ Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 54-60): Մենք հետայսու կառաջնորդվենք այս շարադրանքով:

²⁵¹ Նույն տեղը:

մասշտաբային, կարևոր ու վտանգավոր կոնֆլիկտները տեղի կունենան... տարբեր մշակութային նույնականացման ժողովուրդների միջև²⁵²: Հանթինգթոնի մտահղացումով այստեղ կարևորագույն, կարելի է ասել առաջնահերթ դերը պատկանում է կրոնին: Եվ քանի որ կրոնը հանդիսանում է քաղաքակրթության հիմնական որոշիչ հատկանիշը, «բեկման գծերի»²⁵³ երկայնքով պատերազմները գրեթե միշտ տեղի են ունենում տարբեր քաղաքակրթությունների պատկանող մարդկանց միջև²⁵⁴:

Հանթինգթոնը պնդում է, որ այն դեպքում, երբ համաշխարհային քաղաքականության գլոբալ կամ մակրոմակարդակում հիմնական բախումը տեղի է ունենում Արևմուտքի և մնացած աշխարհի միջև, լուրջ կամ միկրոմակարդակում այն տեղի է ունենում իսլամի և մյուս կրոնների միջև²⁵⁵: Ընդ որում, համաձայն Հանթինգթոնի, իսլամի սահմանները արյունոտ են: Այդպիսին էլ հավանաբար դրանք դեռևս կմնան²⁵⁶:

Հանթինգթոնն իր ռազմավարական նախագծերին միս ու արյուն տալու նպատակով, ինչպես մեզ է թվում, կիրառում է նաև ենթաքաղաքակրթությունների հասկացությունը: «Քաղաքակրթությունները, ակնհայտ է, միախառնվում են և մասնակիորեն համընկնում: Նրանք,- պարզաբանում է Հանթինգթոնը,- կարող են ընդգրկել ենթաքաղաքակրթություններ: Արևմտյան քաղաքակրթությունն ունի երկու հիմնական տարբերակներ՝ եվրոպական և հյուսիս-ամերիկյան, իսկ իսլամը²⁵⁷ ստորաբաժանվում է արաբականի, թյուրքականի և

²⁵² Хантингтон С., Столкновение цивилизаций, с. 24.

²⁵³ **Բեկման գիծ.**՝ տարբեր քաղաքակրթությունների պատկանող հարևան պետությունների, միևնույն պետության մեջ տարբեր քաղաքակրթություններից խմբերի միջև գիծը:

²⁵⁴ Նույն տեղը, էջ 410:

²⁵⁵ Նույն տեղը, էջ 413:

²⁵⁶ Хантингтон С. Столкновение цивилизаций и что она может означать для России. – «Общественные науки и современность», 1995, № 3, с. 135.

²⁵⁷ Մենագրության մեջ իսլամի քաղաքակրթության մեջ Հանթինգթոնն ավելացնում է պարսկական ենթաքաղաքակրթությունը: Նա գրում է. «Իսլամի ներսում գոյություն ունեն բազմաթիվ առանձին մշակույթներ և ենթաքաղաքակրթություններ, ներառյալ արաբականը, թյուրքականը, պարսկականը և մալայականը» (Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 56):

մալայականի: Եվ թեկուզ նրանց միջև սահմանները հազվագյուտ դեպքերում են լինում հստակ, այդ քաղաքակրթությունները իրական են: Նրանք ունեն վերելքներ ու անկումներ. նրանք բաժանվում են և միախառնվում: Ու ինչպես հայտնի է պատմությունը յուրաքանչյուր իմացողին, քաղաքակրթությունները չքանում են»²⁵⁸:

Հանթինգթոնը դիմելով առանցքային պետություն²⁵⁹ հասկացությանը, ուրվագծում է հիմնական քաղաքակրթությունների, այդ թվում նաև ուղղափառ քաղաքակրթության շրջանակները: Վերջինիս մեջ էլ, մասնավորապես, տեղավորում է Հայաստանը, «Ռուսաստանը,- գրում է Հանթինգթոնը,- [...] մնում է համաշխարհային հիմնական քաղաքակրթություններից մեկի առանցքային երկիրը, որը պատմականորեն նույնականանում է ուղղափառ քաղաքակրթության հետ: Առ այսօր այդ քաղաքակրթության մեջ մտնում են նաև այնպիսի ուղղափառ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Բելառուսը, Բուլղարիան, Մակեդոնիան և Սերբիան. այնպիսի ուղղափառ ոչ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Վրաստանը, Հայաստանը և Ռումինիան, և խառը բնակչությամբ երկրներ՝ ինչպես ուղղափառ, այնպես էլ ոչ ուղղափառ, այնպիսիները, ինչպիսիք են Ուկրաինան և Ղազախստանը: Որպես առանցքային պետություն Ռուսաստանը կրում է հիմնական պատասխանատվություն ուղղափառ պետությունների ու երկրների շրջանում կարգի ու կայունության պահպանման համար»²⁶⁰:

Ավելորդ չենք համարում մեջբերում անել նաև մենագրության համապատասխան հատվածից: «Որոշ գիտնականներ,- հաղորդում է Հանթինգթոնը,- գատում են առանձին ուղղափառ քաղաքակրթության գոյությունը Ռուսաստան կենտրոնով, որը տարբերվում է արևմտյան

²⁵⁸ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, с. 39.

²⁵⁹ **Առանցքային պետություն.**Քաղաքակրթություններում սովորաբար կան մի կամ ավելի տեղեր, որոնք նրա անդամների կողմից դիտվում են այդ քաղաքակրթության մշակույթի հիմնական աղբյուրը կամ աղբյուրները: Սովորաբար այդպիսի աղբյուրները տեղավորված են մի առանցքային երկրում կամ քաղաքակրթությունների երկրներում, այսինքն՝ մշակութային առումով ամենահզոր և կենտրոնական երկրում կամ երկրներում (Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 203):

²⁶⁰ Хантингтон С., Столкновение цивилизаций и что она может означать для России., с. 135.

քաղաքակրթությունից իր բյուզանդական արմատներով, թաթարական տիրապետության երկու հարյուր տարով, բյուրոկրատական բռնակալությամբ և նրա վրա Վերածնության, Ռեֆորմացիայի, Լուսավորչության և Արևմուտքում տեղի ունեցած նշանակալից այլ իրադարձությունների սահմանափակ ազդեցությամբ»²⁶¹:

Այս եզրակացություններին Հանթինգթոնը հանգում է, ընդհանուր առմամբ, այն չափորոշիչների կիրառմամբ, որոնք բնութագրում են մշակույթները, քաղաքակրթությունները: «Մարդիկ,- գրում է Հանթինգթոնը,- իրենց նույնականացնում են կրոնի, լեզվի, պատմության, արժեքների ծագումով, սովորույթներով և հաստատություններով: Նրանք իրենց նույնականացնում են մշակութային խմբերով. ցեղերով, էթնիկական խմբերով, կրոնական համայնքներով, ազգերով և ամենալայն մակարդակով՝ քաղաքակրթություններով»²⁶²: Ընդ որում, համաձայն Հանթինգթոնի, գալիքում երկրները կխմբավորվեն մշակույթի և քաղաքակրթության հատկանիշներով, հասկանալով հատկապես, որ «քաղաքակրթությունների միջև տարբերությունները չափազանց խորն են, նրանք կապված են պատմությանը, լեզվով, մշակույթով, ավանդույթներով և, ամենազխալորը, կրոնով: Քաղաքակրթություններն ունեն տարբեր տեսակետներ Աստծու և մարդու, քաղաքացու և պետության, ծնողների և զավակների, ազատության և իշխանության, հավասարության և ստորակարգության հարաբերությունների մասին: Այդ տարբերությունները՝ հարյուրամյակների արդյունքներ են: Նրանք կչքանան ոչ շուտ»²⁶³:

Եզրակացնելով, որ ժամանակակից պայմաններում ոչ արևմտյան հասարակությունները (պետությունները) արդիականանում են, չարևմտականանալով և մեծացնում իրենց կարողականությունը, Հանթինգթոնը գրում է. «Համաշխարհային քաղաքականության կենտրոնական առանցքը, ամենից հավանականն է, կլինի կոնֆլիկտը Արևմուտքի ու մնացածների միջև» (The West and The Rest) և ոչ արևմտյան քաղաքակրթությունների հակազդումը ուժեղ Արևմուտքին ու նրա արժեքներին»²⁶⁴: «Աշխարհի քաղաքականության կենտրոնական առանցքը,-

²⁶¹ Хантингтон С., Столкновение цивилизаций, с. 57.

²⁶² Նույն տեղը, էջ 17:

²⁶³ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, с. 39.

²⁶⁴ Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, с. 39с

նկատում է մի այլ տեղ նույն Հանքինգթոնը,- «սառը պատերազմից» հետո արևմտյան հզորության և քաղաքականության փոխհարաբերությունն է ոչ արևմտյան քաղաքակրթությունների հզորության ու քաղաքականության հետ»²⁶⁵: Ուստի և Արևմուտքը հարկադրված կլինի ավելի շատ հարմարվել այդ ոչ արևմտյան ժամանակակից քաղաքակրթություններին, որոնց ուժը կմոտենա Արևմուտքի ուժին: «Դրա համար,- գտնում է Հանքինգթոնը,- պահանջվում է ավելի խորը հասու լինել մյուս քաղաքակրթությունների, կրոնների ու փիլիսոփայությունների, ինչպես նաև ժողովուրդների սովորույթների հիմքերին, ձգտել առանձնացնել արևմտյան ու մյուս քաղաքակրթությունների ընդհանրության տարրերը»²⁶⁶: Միաժամանակ, Հանքինգթոնն իր համերաշխությունն ու համակրանքն է հայտնում եվրոպական քաղաքական գործիչ ժակ Դելորի տեսակետի հետ, թե ավելի ակներև է դառնում, որ «գալիք կոնֆլիկտները կհրահրվեն ոչ թե տնտեսական կամ գաղափարախոսական, այլ մշակութային գործոններով: Արևմուտքը պետք է սովորի խորապես հասկանալ մյուս քաղաքակրթությունների կրոնական և փիլիսոփայական հիմքերը»²⁶⁷:

Սակայն պարզ է, որ ոչ միայն Արևմուտքը, այլ ցանկացած ժողովուրդ, կարիք ունի հասկանալու այլ քաղաքակրթությունների կրոնական ու փիլիսոփայական հիմքերը, պատկերացնի իր տեղը, տվյալ դեպքում, քաղաքակրթությունների հանքինգթոնյան սանդղակում: Քանզի այն առավելապես երկրաքաղաքական հայեցակարգ է: Օրինակ, Սերգեյ Պերեսլեգինը գտնում է, որ Հանքինգթոնի աշխատանքը թեկուզև ունի գիտական աշխատանքի որոշ գծեր և հրապարակախոսության բոլոր «ազգակցական հատկանիշները», այդուհանդերձ այն պետք է վերագրվի «ռազմավարության» բնագավառին: «Ըստ էության,- գրում է նա,- խոսքը իր սահմաններից դուրս ռազմա-քաղաքական պլանավորման մասին է, երբ պետությունը/էթնոսը խաղում է նվազագույն մարտավարական միավորի դեր»²⁶⁸: Թերևս ճանաչողության տվյալ խնդիրը հրատապ է առաջին հերթին այն ժողովուրդների համար, ո-

րոնք ապրում են քաղաքակրթությունների, Հանքինգթոնի բնորոշմամբ, «բեկման գծում»:

Ակներև է, որ դրանցից է և հայ ժողովուրդը, որի հայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը, գտնվում է քաղաքակրթությունների հանդիպման խաչմերուկում: Ահա թե ինչու հրատապ է Հանքինգթոնի հիպոթեզի շրջանակներում «հայկական թղթածրարի» դիտարկումը որպես ռազմավարական խնդրի:

Բ. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ «ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՈՒՆԸ»

Հարցադրման շրջանակներում կարևորություն է ձեռք բերում քաղաքակրթության կենսատարածքի՝ «տարածական տան» (Հանքինգթոն) զատորոշումը, որտեղ տվյալ քաղաքակրթության ենթական (սուբյեկտը) դարերով, իսկ երբեմն էլ հազարամյակներով ստեղծել է իր «քաղաքական տունը», օժտվել ամեն մի քաղաքակրթության առարկայական (օբյեկտիվ) ատրիբուտներով, կրոնով, լեզվով, սովորույթներով, գրականությամբ, հաստատություններով (Հանքինգթոն): Այնտեղ է սնել պատմական իր առաքելությունը:

Տպավորիչ է, այդ իմաստով, Հայաստանի պատմությունն ու մշակութային զարգացումը, հայ քաղաքակրթության սերտաճումը Հայկական բարձրավանդակին: Ճանաչված քարտեզագիր Ռուբեն Գալչյանը (Անգլիա, Ruben Galichian) ընդհանրացնելով միջնադարյան քարտեզների տեղեկատվությունը, ընդգծում է. «Հայկական բարձրավանդակի կամ Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական տարածաշրջանը», որի սահմաններն են «Պոնտական լեռները, այսպես կոչվող Փոքր Կովկասը, Ուրմիա լճի արևմուտքը հասնող Զագրոսյան լեռները և Վանա լճի հարավի Արևելյան լեռները կամ Հայկական Տավրոսը, շուրջ 400.000 քառ. կմ ունեցող մի տարածք»²⁶⁹: Այնուհետև. «Քարտեզներում Հայաստանի տարածքը միշտ նշվում է Վիրքից եւ Աղվանքից հարավ և Արաքսից անցնելով՝ հասնում է մինչև Վանից արևմուտք, մինչև Արևմտյան եփրատ, այսպիսով ներառում է Հայկական լեռնաշխարհի երկրա-

²⁶⁵ Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 26.

²⁶⁶ Хантингтон С., Грядущее столкновение цивилизаций?, с. 41.

²⁶⁷ Хантингтон С. Если не цивилизации, то что?, с. 75.

²⁶⁸ Переслегин С. Послесловие. О спектроскопии цивилизаций, или Россия на геополитической карте мира. - Хантингтон С. Столкновение цивилизаций, с. 579.

²⁶⁹ Գալչյան Ռ., Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան: Թարգմ. անել., Երևան-Լոնդոն, 2007, էջ 18:

մասը: Մինչև 1915 թվականը՝ շուրջ երեք հազարամյակ, այս շրջանում էին կենտրոնացած լեռնաշխարհի բնակիչները՝ հայերը: Հայաստանն իր անկախությունը կորցրեց 11-րդ դարում, սակայն դրան հաջորդեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, որ գոյատևեց ավելի քան երեք դար»²⁷⁰:

Այսպիսով, միջնադարյան քարտեզագրությունը զատորոշելով Հայկական բարձրավանդակի աշխարհագրական սահմանները և այն նույնացնելով աստվածաշնչյան «եղեմի պարտեզի» տեղադրության հետ²⁷¹, ըստ էության, ուրվագծում և սահմանագծում է «հայ քաղաքակրթության» կենսատարածքը՝ հստակորեն ցույց տալով նաև այլ՝ ուղղափառ-քրիստոնեական, թերևս նրա ենթատեքստում՝ վրացական, իրանական և իսլամական քաղաքակրթությունների հետ «շփման գոտիները» («կոնտակտային գոնաները»): Մխալված չենք լինի պնդելով, որ Ոսկեդարից սկսած մինչև Բագրատունյաց Հայաստան, Կիլիկյան Հայաստան «հայ քաղաքակրթությունը» հասավ իր դասական ձևերին ու դրսևորումներին:

Ակնհայտ է, որ հայ քաղաքակրթությունը զարգանում էր «հայկական քրիստոնեության» հիմքի վրա և նրա շրջանակներում, երբ վերջինս «չորրորդ դարի սկզբից [...] պետականանում է, ապա կազմակերպչորեն անկախանում արտաքին աշխարհից, ավատականանում ներքին կյանքում. յուրացնում հայ հեթանոսական կրոնի կազմակերպության ձևերն ու ծեսերը, այս ձևով ազգայնանում»²⁷²: Ընդամին, յուրացնելով «հայոց հեթանոսական կրոնի կազմակերպությունը և նրա վարչական դրությունն ու նվիրապետությունը»²⁷³:

Այն, որ Հայաստանը դարերով, մինչև Մեծ եղեռն չկարողացավ վերականգնել իր լիարժեք ինքնիշխանությունը, էապես դանդաղեցրեց հայ քաղաքակրթության զարգացումը, սակայն, այդուհանդերձ, չկարողացավ կասեցնել նրա առաջընթացը²⁷⁴: Ստացվեց այնպես, որ դարերի ընթացքում հայ մշակույթն ու

²⁷⁰ Նույն տեղը, էջ 89:

²⁷¹ Տե՛ս Աստվածաշունչ: Սատյան Հիմ ու Նոր կտակարանների, Ս. Էջմիածին, 1994, Գիրք Ծննդոց 2, 8-15:

²⁷² Գյուզալյան, Գ., Պատմական խնդիրներ, Պէյրուք, 1985, էջ 65:

²⁷³ Նույն տեղը, էջ 84:

²⁷⁴ Այդ մասին տե՛ս Շանթ Լ., Անկախությունը պահանջ ազգային գոյության.- Լևոն Շանթի երկերը, Պէյրուք, 1948, հտ. 5, էջ 161-225, Գյուզալյան Գ., Մեծ հորեկանը. Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առիթով.- Պատմական խնդիրներ, Պէյրուք, 1985, էջ 49-105:

քաղաքակրթությունը, գրեթե անկախ քաղաքական վերիվայրումներից, զարգացան իրենց ներքին տրամաբանությամբ: Այն, ինչ նկատվել էր սելջուկյան տիրապետության շրջանում՝ շրջանցելով երկրի քաղաքական վարչակարգը (XII-XIII դարեր)²⁷⁵, դարձավ կայուն միտում հետագա հարյուրամյակների ընթացքում: Հայ եկեղեցական-քաղաքական և մտավոր ընտրանին տիրապետեց այս գործելաձևին և ընտելացավ նրան:

Ինչ վերաբերում է հայության «քաղաքական տանը», ապա այն սկզբում զարգացավ անկախ թագավորությունների պահպանման, նախարարական համակարգի և հայոց պետականության վերականգնման ու Հայաստանի տարբեր տարածաշրջաններում ինքնիշխանության տարբեր աստիճանների ապահովման համար անընդմեջ ու համառ պայքարում՝ ընդհուպ հայ հեղափոխության ու ազատամարտի նոր շրջան: Այդ իմաստով Հայաստանի քաղաքական պատմությունը տևականորեն վերածվեց ազգային ինքնիշխանության պահպանման ու ամրապնդման պատմության, հայ քաղաքակրթության կայուն ու անընդմեջ էվոլյուցիայի պատմության:

Գ. ՄԻԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՄԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԿԵՏ

Հայտնի է, որ Ուղղափառությունը լինելով քրիստոնեության երեք ուղղություններից՝ կաթոլիկության և բողոքականության հետ միասին, մեկը, բնութագրում է տեղական ինքնավար, ազգային եկեղեցիներին կամ արևելաքրիստոնեության երկու խոշոր ընտանիքներին՝ Արևելյան ուղղափառ եկեղեցիներ (Oriental Orthodox Churches) (Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցի, Ասորական Ուղղափառ եկեղեցի, Եթովպական Ուղղափառ եկեղեցի, Ղպտի Ուղղափառ եկեղեցի, Հնդկի Մալաբար Ասորական Ուղղափառ եկեղեցի) և Ուղղափառ (օրթոդոքս) կամ երկաբնակ (քաղկեդոնիկ) եկեղեցիներ: Վերջիններս կոչվում են նաև հունադավան, քանի որ ծագում են Հույն կամ Բյուզանդական եկեղեցուց, ունեն նույն եկեղեցական ավանդությունը, արարողակարգը և համանման կանոնական կառույց: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներն այսօր չնայած իրենց մեջ պարփակում

²⁷⁵ Տե՛ս Юзбашян К. Н., Армянское государство эпохи Багратидов у Византия IX-XX вв., М., 1988, с. 233-235:

են ազգային ավանդություններ, լեզուներ և յուրահատկություններ, սակայն նրանք բոլորն էլ ունեն միևնույն պատմական սկիզբը, այն է՝ Բյուզանդական Ուղղափառ քրիստոնեությունը:

Նրանք կազմավորվել են IX-XI դարերում որպես ավտոկեֆալ (ինքնազուլս) երկաբնակ եկեղեցիներ, միավորվում են Ուղղափառ (Արևելյան երկաբնակ) եկեղեցիներ անվան տակ: (Վրաց եկեղեցին կազմավորվել էր ավելի վաղ, սակայն 608 թվականին անջատվեց Հայաստանյայց եկեղեցուց և դավանանքի ճանապարհով սկսեց մերձենալ Բյուզանդիային): Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ընդունում է յոթ ժողովների տիեզերական հեղինակությունը և նրանց վարդապետական սահմանումները, իսկ Կաթողիկ եկեղեցին քսան: Այս երկու ուղղություններն էլ ընդունում են Քրիստոսի մեջ երկու բնությունները Աստվածայինն ու մարդկայինը, որոնք գոյություն ունեն «անբաժան ու անխառն»: Երկաբնակությունը Քրիստոսի մեջ հստակ սահմանազատելով աստվածայինն ու մարդկայինը, դրանով իսկ բացառում է մարդկայինի աստվածացման հնարավորությունը, ուստի աստված մնում է լոկ որպես պաշտամունքի առարկա, սակայն և մյուս կողմից մարդուն ցույց է տրվում իր տեղը, սահմանվում նրա իրավասության շրջանակները²⁷⁶: Իսկ ընդհանրապես, սոսկ պատմական իրողությունն է արծանագրում Գարեգին Բ Հայոց կաթողիկոսը, երբ գրում է, որ եթե «Բյուզանդական եկեղեցին Արևելքի արևմտյան մասում հանդիսացավ *Մայր եկեղեցի* իր բնից շառավիղած *օրբորոքս* եկեղեցիների մեջ, Արևելքի արևելյան մասում (Փոքր Ասիո Հարավ-Արևելյան շրջանում) Հայոց եկեղեցին ունեցավ նույն դիրքը և կատարեց նույն կենտրոնական հաստատության հատուկ դերը Արևելյան եկեղեցիների կյանքում»²⁷⁷:

Եվ Հայաստանյայց առաքելական եկեղեցին պաշտպանելով իր հոգևոր անկախությունը, որն, ի դեպ, հիմնադրվել է բյուզանդակա-նից ավելի վաղ ու Քաղկեդոնից (451 թ.) հետո, նրա հակառակորդն է

²⁷⁶ Հանգամանորեն տե՛ս Միրզոյան Հր., Կրոնադավանաբանական պայքարը և հայ փիլիսոփայական միտքը.- Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում. Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը: Պատ. խմբ.՝ Ս. Ս. Արևշատյան: Եր., 1992, էջ 69-81:

²⁷⁷ Գարեգին Բ Կաթողիկոս, Հայաստանյայց եկեղեցին իր «ժառայական կերպ»ին մեջ, Անթիլիաս, 1994, էջ 157:

եղել, այդ ժողովից սկսած չի ճանաչել Տիեզերական հետագա ժողովների որոշումները, ընդունել է *միաբնակությունը*՝ որը պաշտպանում է Քրիստոսի որպես Աստծու միասնական բնությունը: Հայ եկեղեցու քրիստոսաբանական վարդապետությունը պաշտպանելով միաբնակություն, Քրիստոսի մեջ աստվածային կողմն առհասարակ ավելի է շեշտում, սակայն «մի բնություն» ասելով միայն աստվածայինը չի հասկանում և մարդկայինը անտեսում:

Քրիստոսը, լավագույնս բանաձևում է Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցու ճշմարիտ դավանանքը Հովհաննես Գ Օծնեցի կաթողիկոսը, «սոսկ մարդ չէր, բայց լոկ Աստված էլ չէր, այլ մանավանդ՝ և՛ Աստված, և՛ մարդ էր միաժամանակ»²⁷⁸: Եվ ընդունելով աստվածայինի և մարդկայինի միասնությունը, միաբնակ եկեղեցին մարդու մեջ արթնացնում է իր ուժերի ու կարողությունների հանդեպ վստահություն, աստվածայինի հասնելու հույս և դրան ձգտելու ցանկություն, կամք ու զորունեություն: Եվ աստվածացնում է մարդուն²⁷⁹:

Հայ եկեղեցու կողմից «միաբնակության» ընտրությունը, գտնում է ռուս գրող, թարգմանիչ և գիտնական Վ. Միկուշևիչը, իր ազդեցությունն ունեցավ հայկական մշակույթի անկրկնելի հատկանիշների վրա: «Հայաստանը,- ընդհանրացնում է Միկուշևիչը,- ոչ միայն չի պարփակվել իր եկեղեցական մեկուսացվածության մեջ, այլև, ընդհակառակը, դրսևորել է *ստեղծագործական ձգտումների հիրավի տիեզերական լայնություն* (ընդգծումը իմն է.- Լ. Շ.) յուրովի արծագանքելով այն բոլոր հոգևոր միտումներին, որոնք այն ժամանակ տարածվում էին Հնդկաստանից մինչև Պիրենեյան թերակղզի»²⁸⁰:

Անդրադառնանք այդ հաստատումներին:

²⁷⁸ Սուրբ Հովհաննես Օծնեցի, Ընդդեմ երևութականների.- «Գանձասար», Աստվածաբանական հանդես, Եր., 2002, հտ. է, էջ 268:

²⁷⁹ Հայոց եկեղեցու մասին համապարփակ պատկերացում և տեղեկատվություն տե՛ս Տեր-Միքելեան Ա., Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը: Չեռնարկ դավանաբանության, Ս. էջմիածին, 2007, 592 էջ, Օրմանյան Արթ. Մաղաթիա, Հայոց եկեղեցին, Եր., 1993, 287 էջ:

²⁸⁰ Мухомев В., Целительный свет. Поэма Гр. Напекаци "Книга скорбных песнопений", - Բանբեր Երևանի համալսարանի, 1981, թիվ 3, с. 62.

Քննվող հիմնախնդիրների շրջանակում որոշակի ապացուցողական նշանակություն են ձեռք բերում Ֆրիտյոֆ Նանսենի դիտարկումները Կիլիկյան Հայաստանի, հայ եկեղեցու (նրա դավանանքի) և առանձնապես համաշխարհային ճարտարապետության հետ հայկականի աղերսների վերաբերյալ: Կիլիկիան,- գրում է Ֆ. Նանսենը,- «երեք հարյուրամյակ, շրջապատված թշնամիներով, կարողանում է պահպանել իր անկախությունը թուրքերի աճող ուժերի և Բյուզանդիայի ոտնձգությունից: Հունա-բյուզանդական և հռոմեական եկեղեցիների սիրաշահումներն ու սպառնալիքներն անհետևանք են մնում նաև Կիլիկյանի հայերի համար: Նրանք ևս (ինչպես Մեծ Հայաստանում.- Լ. Շ.) հավատարիմ մնացին իրենց միաբնակ դավանանքին ու պահպանեցին իրենց եկեղեցին»²⁸¹: Սպառիչ է փիլիսոփա և մշակութաբան, ակամավոր հայագետ, ակադեմիկոս Հ. Ա. Գևորգյանը, գրելով. «Ժամանակին «ազգային ինքնության պահպանման և ամրապնդման համատեքստով պայմանավորված [...] մշակութային զարգացումն ունեցավ մի խիստ կարևոր հետևանք. Հայաստանը դարձավ այն սակավաթիվ երկրներից մեկը, որը պահպանեց անտիկ մշակույթը և իրականացրեց նրա յուրօրինակ համադրումը քրիստոնեության հետ» և «ուներնալով նույն հիմքը՝ անտիկ մշակույթի հետ քրիստոնեության համադրումը, հայ մշակույթը իրեն ծավալեց եվրոպական քաղաքակրթությանը համահունչ մշակութային ձևերի ամբողջ բազմազանության մեջ [...], ինչպես նաև հանրային կյանքի կազմակերպման իրավական ու պետականության ձևերի մեջ (հիշենք թեկուզ, թե ինչ ներդաշնակ կերպով Կիլիկյան Հայաստանը մտավ եվրոպական ազգերի համաշխարհի մեջ)»²⁸²: Ասվածի լույսի տակ ավելի հավաստի ու տարողունակ է այն պնդումը, թե հայ ժողովրդի «ինքնատիպ զարգացման ընթացքն իր էական ազդեցությունն է թողել ոչ միայն բյուզանդական²⁸³, այլև արևմտաեվրոպական մշակույթի

²⁸¹ Նանսեն Ֆ., հարված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Կրաստան և Հայաստան: Թարգմ. գերմ.: Եր., 2002, էջ 223:

²⁸² Տե՛ս Գևորգյան Հ. Ա. Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից.- Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, էջ 94-95: Հիմնախնդրի դրվածքի լայն ենթատեքստը տե՛ս Գևորգյան Հ. Ա., Հայաստան և Եվրոպա. Հայաստանի պատմությունը և հայկական մշակույթը ժամանակակից պատմագիտական և քաղաքագիտական տեսությունների լույսի տակ.- «Վեմ», 2009, ապրիլ-հունիս, էջ 26-46:

²⁸³ Մասնավորապես, Բյուզանդիայի պատմության և քաղաքակրթության, Բյուզանդիա-Հայաստան բազմակողմ առնչակցությունների մասին տե՛ս Դիլ Շառլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, թարգմ. ֆր., Եր., 2005, 400 էջ և Հրաչ Մ. Բարթիկյանի «Շառլ Դիլ» առաջաբանը (էջ V-XXV):

վրա»²⁸⁴, որ, մասնավորապես, «գոթական ոճը, որ միջնադարի համաշխարհային մշակույթի նշանակալից նվաճումներից է, իր սկզբնավորման շրջանում որոշակի ազդեցություն է կրել» հայկական մշակույթից²⁸⁵:

Դ. ԿԻԼԻԿԻԱՆ ՈՐՊԵՍ ԵՎՐԱՍԻԱՎԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ

Հայ ժողովրդի քաղաքակրթական «պատկանելության» հարցի լուսաբանման տեսակետից հույժ կարևոր է Կիլիկյան Հայաստանի (1080-1375) պատմական դերի գնահատականը և նրա տեղի պարզաբանումը, որն, ինչ խոսք, էական հետք է թողել հայոց հոգևոր մշակութային զարգացման վրա²⁸⁶: Հայտնի է, որ միջնադարում Միջերկրական ծովի արևելյան ափերին Արևելքի հետ Արևմուտքի տարանցիկ առևտուրն ու տնտեսական շփումը (ինչու չէ նաև հոգևոր հաղորդակցությունը) տեղի էին ունենում այսպես կոչված Փոքր Հայաստանի Կիլիկիայի տերիտորիայում²⁸⁷:

Նկատենք, որ Կիլիկյանի հայկական պետությունը 11-րդ դարից սկսած սերտ հարաբերություններ է ունեցել խաչակիրների և այդ ճանապարհով նաև Արևմտյան Եվրոպայի հետ: Հռոմի Գրիգոր Գ պապն իր էքլեսիա Բոմանա կոնդակի մեջ (1384 թ.) ասում է. «Երբ ժամանակավ քրիստոնյա իշխաններն ու բանակները կերթան Սուրբ Երկիրը վերագրավելու, ո՛չ մեկ ազգ, ո՛չ մեկ ժողովուրդ այնչափ շուտափույթ եռանդով օգնության կհասնի մարդով, սնունդով, ձիերով, խորհուրդներով, որչափ հայերը. անոնք, իրենց բոլոր ուժերով, ամենամեծ քաջագործությամբ և հավատարմությամբ օգնած են քրիստոնյաներուն՝ այդ սուրբ պատերազմին մեջ»²⁸⁸:

²⁸⁴ Նանսեն Ֆ., հարված ժողովուրդ, էջ 229:

²⁸⁵ Նույն տեղը, էջ 234:

²⁸⁶ Հանգամանորեն տե՛ս Միքայելյան Գ. Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն: Թարգմ. ռուս., Եր., 2007, 552 էջ և Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում: Թարգմ. ֆր., Եր., 2001, 632 էջ:

²⁸⁷ Այդ մասին տե՛ս ԾՈՐՍՏ կՏՍՏ. կցՑպթարՑՁՈպ. կպր. ըՑ ըՑՈՐՏԻՐ., խ., 1940, c. 17:

²⁸⁸ Տե՛ս Մորգան Ժագ դը, Հայ ժողովրդի պատմությունը. Իր պատմությանը ամենաստույգ ժամանակներեն մինչև մեր օրերը: Թարգմ. ֆր., Պոսթըն, 1947, էջ 304:

Բնականաբար, Կիլիկիայի հայկական պետությունը զերծ չէր եվրոպական ազդեցությունից: Սկսած հատկապես Լևոն Բ-ի շրջանից Կիլիկիայի տնտեսական կապերը եվրոպական երկրների հետ ուժեղացան: «Պետության քաղաքական կազմակերպությունը,- գրում է Վ. Մ. Քյուրքճյանը,- վարչական և այլ պաշտոնարանները, ինչպես նաև արքունի դարպասը, եվրոպականին համեմատ ձևակերպվեցան: Հայ և եվրոպացի իշխանական ընտանիքներու միջև ամուսնական խնամիրությունները բազմացան, և տեղացի կղերի ու լատին կրոնավորներու ձեռքով շատ մը ուսումնավայրեր հաստատվեցան»²⁸⁹: Անիրագել մարդուն կարող է և զարմանալի թվալ, սակայն իրողությունն այն է, որ եվրոպայի հետ Հայաստանի, տվյալ դեպքում Կիլիկիայի, հարաբերությունները իրականացել են ակտիվ փոխազդեցության պայմաններում: Հայտնի պատմաբան Ռենե Գրուսետ (Rene' Grousset) հաղորդում է, որ խաչակիրների և Կիլիկիայի «միջև միաբանությունը անմիջական եղավ և տևական. հարաբերությունները խարսխվեցին հավասարության վրա: Իշխանական կապակցությունները եղան անընդմեջ: 10-րդ դարի Լատին Արևելքը իրականության մեջ եղավ Ֆրանսա-Հայկական (Franco-Arme'nien) մի Արևելք»²⁹⁰: Մի այլ հեղինակ, Փոլ դը Վյուն (Paul de Ve'ou) անդրադառնալով դեպի Քրիստոսի գերեզման խաչակիրների արշավներին հայերի օժանդակությանը, ուղղակիորեն գրում է. «Հայաստանը Ֆրանսիայի կնքամայրն է (marraine) Ասիայում»²⁹¹: Ահա այս գործընթացներն են հայ գիտնականին հանգեցրել ուշագրավ այն եզրակացության, թե Կիլիկիայի ընդհանուր զարգացումը տեղի էր ունենում խաչածավող ազդեցությունների պայմաններում²⁹²:

Այնհայտ է, որ այդպիսի «խաչածավող ազդեցությունների» օգտին է գործել հայ վաճառականական դասը, հատկապես XV-XVIII դարերում: Նա, ըստ էության, ստանձնել է Արևելքի ու Արևմուտքի կապող օղակի գործառույթը: Այդ դասը, նկատում է Ֆերնան Բրոդելը, իր ձեռքն էր վերցրել եվրոպայից դեպի Օսմանյան կայսրություն ահռելի

²⁸⁹ Քյուրքճյան Վ. Մ., Հայկական Կիլիկիա, Նյու Յորք, 1919, էջ 13:

²⁹⁰ Տե՛ս Գարեգին Բ Կաթողիկոս, Հայաստանյայց եկեղեցին իր «ժառայական կերպ»ին մեջ, էջ 151:

²⁹¹ Նույն տեղը, էջ 152:

²⁹² Տե՛ս Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Եր., 1958, հ. II, էջ 110:

ապրանքահոսքի վրա գերիշխանությունը: Այդ սայլերի քարավանների պետերը, քարավան բաշխները, միշտ հայեր էին լինում: «Այս բեռնափոխադրումների հոսքը չէ միավորել արդյո՞ք մեկ ամբողջության մեջ ներկա հսկա ասպարեզները՝ ոչ ավել, ոչ պակաս, Արևելքը և Արևմուտքը...»²⁹³ ասում է Ֆերնան Բրոդելը:

Ե. ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՄՏԱԿՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԿԱՍՈՒՐԶ

Հաստատենք նաև, որ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կապը եվրոպայի հետ 18-րդ դարից սկսած ավելի է սերտանում հայտնի Մխիթարյանների՝ սվազցի Մանուկ Մխիթար վանականի հիմնած միաբանության ջանքերով, որը և շարունակվում է ցայսօր: Սկզբում Մխիթարն իր համախոհներով գործում էր Կ.Պոլսում, ապա Մոռայում: 1715 թվականին նրանք զնուն են Վենետիկ, հաստատվում Սուրբ Ղազար կղզում և այնտեղ կառուցում մի փառահեղ վանք: 1712 թվականից Մխիթարյանները ընդունում են լատին եկեղեցու հովանավորությունը, որը սակայն չի խանգարում նրանց պահպանել իրենց կապը հայ ժողովրդի հետ: Մխիթարյանների բեղուն գործունեությունը խթանեց հայ մշակույթի, ազգային մտածելակերպի և ինքնաճանաչման վերածնունդը: Միաժամանակ, նրանց կատարած բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ հայոց համար հասու դարձավ արևմտաեվրոպական քնարերգությունը, գիտությունն ու մշակույթը: Եվ փոխադարձաբար: Սա մշակութային համարժեք առնչակցությունների, քաղաքակրթությունների, տվյալ դեպքում թեկուզև քույր քաղաքակրթությունների երկխոսության դասական օրինակ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քաղաքական պատմության խոշորագույն գիտակ և հայ մշակույթի ու քաղաքակրթության երախտավոր Լևոն Շանթը քննական հայացք նետելով հայոց ազատագրական 301-ին,

²⁹³ Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм XV-XVIII вв., Пер. с фр., М., 1988, т. 2, с. 146.

ինաստավորված խոսք է ասում. «Քրիստոսի 300 թվականը մեր պաշարման թվականն է, երբ հայությունը կդառնա Արևմուտքի առաջավոր դիրք մը պաշարված Արևելքով. քրիստոնեական հրվանդան մը խրված սկիզբը զրադաշտական, վերջն ալ մանավանդ մահմեդական ծովուն մեջ: Մինչև ժվրդ դարու կեսերեն թուրանական ցեղերու ողողումը կկտրե այդ հրվանդանին արմատը արևմտյան ցամաքեն և հայությունը (Հայաստանը.- Լ. Շ.) կդառնա կատարյալ կղզի մը այդ թուրան-մահմեդական ծովուն մեջ:

Եհիշտ հող է արդեն մեր կյանքի ու բաղդի ամենեն դրամատիկ կողմը...»²⁹⁴:

Հիրավի, առարկայական այս հիմքի վրա էլ տեղի ունեցավ Հայաստանի բովանդակ կյանքի էվոլյուցիան, ինչպես նրա մշակույթ-քաղաքակրթության անընդմեջ թռիչքը, այնպես էլ քաղաքական ցնցող վայրկվերումները՝ ընդհուպ եղերական 1915-ը: Հանթինգթոնի հիպոթեզի առաջադրումից ուղիղ 73 տարի առաջ, 1920 թվականի հունիսի 1-ին, Հայաստանի հոգատարության հարցի քննարկման ժամանակ Արևանգասից սենատոր Ջոզեֆ Ռոբինսոնը ազդարարեց. եթե Կոնգրեսը մերժի նախագահ Վիլսոնի առաջարկը, ապա «քրիստոնեությունը (կարդա՝ արևմտյան քաղաքակրթությունը.- Լ. Շ.) իր արևելյան ճակատում կստանա ջախջախիչ հարված»:

Սակայն առարկայական նույն հիմքի վրա էլ, դարերի ընթացքում, Հայաստանը կերտեց իր առաքելությունը: «Հայաստանը Եվրոպայի առաջապահն է Ասիայում». այդ, վաղուց առաջարկված բանածևը ճիշտ է որոշում հայ ժողովրդի դրությունը մեր աշխարհում,- գրում էր Վալերի Բրյուսովը բախտորոշ 1916 թվականին:- Հայ ժողովրդի պատմական առաքելությունը, որը հուշում է նրա զարգացման ամբողջ ընթացքը, եղել է՝ փնտրել և ձեռք բերել Արևելքի ու Արևմուտքի համադրությունը»²⁹⁵: Այսինքն, «փնտրել և ցույց տալ աշխարհին երկու մշտնջենական սկիզբների՝ Արևմուտքի և Արևելքի սկիզբների համադրումը, որոնցով ապրում է ողջ մարդկությունը և որոնց վառ կերպով արտահայտված են իրենց փոխգործությամբ Հայաստանի պատմության մեջ: Նրանց հաշտեցնել բարձրագույն

միասնության մեջ... ամբողջ հայ ժողովրդի պատմական առաքելության կատարումն է»²⁹⁶: Հայաստանը, պարզաբանում է Վալերի Բրյուսովը 1916 թվականին, «ճակատագրի բերումով կոչված է ծառայելու երկու տարբեր մշակույթների հաշտարար. նրա, որի հիմքի վրա աճեց ողջ քրիստոնեական Արևմուտքը, և նրա, որը մեր օրերում ներկայացված է մահմեդական Արևելքով»²⁹⁷:

Եվ ինչպես որ ճշմարիտ է ասված անցյալի համար, այնպես էլ XXI դարում «Հայ ժողովրդի պատմական առաքելությունը պետք է ճանաչել այդ երկու հիմնավորց հակամարտող սկիզբների համադրման որոնումը»²⁹⁸... Արևելքի և Արևմուտքի, Հայաստանում՝ Ասիայի և Եվրոպայի փոխգործությունը (Վ. Բրյուսով):

Հիրավի՝

Այսպիսով, պատմական իրողությունները և նույնիսկ նրանց հակիրճ վերլուծությունը ապացուցում են, որ ստույգ չէ, առնվազն հակապատմական է հայ ժողովրդին, հայ մշակույթը, դասական Հայաստանի քաղաքակրթությունը, հետևապես, և Հայաստանը տեղավորելը «ուղղափառ-սլավոնական քաղաքակրթության» սանդղակում: Դա հակասում է ինչպես պատմական փաստերին, այնպես էլ հայոց մշակութային-քաղաքակրթական ինքնությանը: Եվ նա, ամենայն վստահությամբ, արևելաքրիստոնեական քաղաքակրթության ուրույն ճյուղերից մեկն է, ինչը, դժբախտաբար, առկա չէ Հանթինգթոնի սանդղակում:

Հ. Գ.(1) - Արևմտյան քաղաքակրթական սահմանումների մեջ ինքը՝ Հանթինգթոնը ցուցաբերում է պատմական մոտեցում, և այդ տեսակետից պատմականորեն է գնահատում Կաթոլիկ եկեղեցու տարածքը արևմտյան քաղաքակրթության առաջացման և զարգացման ընթացքի մեջ: Սակայն, բուն արևմտյան քաղաքակրթության բնորոշման համար այդ հատկանիշները չէ որ նրա հայեցակարգում դառնում են էական:

²⁹⁶ Նույն տեղը, էջ 94:

²⁹⁷ Նույն տեղը, էջ 27:

²⁹⁸ Նույն տեղը, էջ 40:

²⁹⁴ Շանթ Լ., Անկախությունը պահանջ ազգային գոյության, էջ 190:

²⁹⁵ Поэзия Армении, под ред. Валерия Брюсова. Ер., 1966, с. 27.

Ստորև ներկայացնում եմ, առաջին անգամ ամբողջական ձևաչափով հայ քաղաքական մտքի ինքնատիպ մտածողներից Ռուբեն Դարբինյանի (Արտաշես Չիլինգարյան՝ 23 հունվար 1883, Ախալքալակ - 14 մայիս 1968, Բոստոն) «Հայ քաղաքական մտքի դեգերումները» ամբողջական հոդվածաշարը, որը մեր անհանգիստ ժամանակներ՝ 21-րդ դար է տեղափոխում հայության ճգնաժամային «զարգացման» ժամանակաշրջանի հայ քաղաքական մտքի ու քաղաքական պատմության առջև ծառայած հիմնախնդիրներն ու մարտահրավերները, թարմությունը չկորցրած առաջարկված լուծումները արդիականության հեռանկարային ընդգրկումներով:

Ռուբեն Դարբինյանը Հ.Յ. Դաշնակցության ակնառու գործիչներից է, Հայաստանի առաջին հանրապետության արդարադատության նախարարը, «Հայրենիք» (Բոստոն) հասարակական-քաղաքական հանրագիտական նշանակության ամսագրի հիմնադիր ու անփոփոխ խմբագիրը:

**ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ**

I

ՀԻՆ ՎԵՃ ՄԸ, ՈՐ ԱՅԺՄԵԱԿԱՆ Է

Ասկե տասներկու տարի առաջ, 1910 թ., Պոլսո «Ազատամարտ» թերթին մեջ «Հ. Յ. Դաշնակցությունը և իր քաղաքականությունը Թուրքիո մեջ» երկար հոդվածաշարքով մը ես փորձ մը քրած էի հրապարակային վերագնահատության ենթարկելու կարգ մը սկզբունքներ ու գաղափարներ, որոնք մեր քաղաքական դեկավար շրջանակներու աշխարհահայեցողության հիմքը դարձած էին և որոնք մինչև այսօր ալ կշարունակեն տակավին մնալ անոնց պաշտոնական տեսաբանության և հավատո հանգանակը:

Իմ հայտնած միտքերը այն ատեն բավականին հուզում առաջ բերին: Եվ անոնք, որ այն ժամանակը կհետևեին մամուլին, կհիշեն անշուշտ մեր հանգուցյալ ընկեր Շահրիկյանի կրքոտ

առարկություններն ու բանավեճը ինձ հետ իմ արծարծած խնդիրներու շուրջը:

Իմ պաշտպանած տեսակետը այն էր, թե Հ. Յ. Դաշնակցությունը ընկերվարական գործունեության համար հող չունի Թուրքիո, հետևաբար նաև Հայաստանի մեջ. որովհետև հոն չի կա կապիտալիստական խոշոր տնտեսություն, չի կան անոր ստեղծագործ բովեն դուրս եկած արդյունաբերող դասակարգեր՝ ճարտարարվեստական բանվորություն և պուրծուագի, չի կա և չի կարող ըլլալ դասակարգային պայքար, սոցիալիստական իմաստով. մեկ խոսքով չի կան առարկայական այն պայմանները, որոնց մեջ սոցիալիստական կազմակերպություն մը ի վիճակի ըլլա իրագործելու Եվրոպայեն առնված ընկերվարական ծրագիրները:

Ես ըսած էի այն ատեն, թե ընկերվարությունը մեր երկրի իրականության մեջ քաղաքական կենդանի և այժմեական գործ մը չէ, այլ ճեմարանական ուսմունք մը, սոսկ գաղափարական հոսանք մը, որ ունի առայժմ կրթիչ, դաստիարակիչ նշանակություն, այն ալ զլիավորապես մտավորական շրջանակներու համար:

Ես ըսած էի նաև, որ Հ. Յ. Դաշնակցությունը մեր երկրի ընկերային-տնտեսական ներկա պայմաններու մեջ կոչված է գերազանցապես ազգային ազատական (լիպերայ) գործ կատարել, պահպանելով հանդերձ իր ընկերվարական գաղափարաբանությունը (իդեոլոգիան):

Վերջապես, ես պաշտպանած էի այն միտքը, թե Հ. Յ. Դաշնակցությունը իր պատմական ծագումով, իր կատարած քաղաքական դերով, իրեն հարած ժողովրդական զանգվածներու իշխող մտայնությամբ ու ձգտումներով, ինչպես նաև մեր երկրի քաղաքական ու տնտեսական պայմաններեն թելադրված քայլերով եղեր է և է իրապես ազգային ազատական կուսակցություն մը, որ իր գաղափարաբանությամբ միայն ընկերվարական է: Եվ ազգային ազատական տարրը կուսակցության մեջ փաստորեն միշտ եղեր է գերակշռող և պիտի լինի, որքան ատեն որ մեր երկրի տնտեսական-ընկերային և քաղաքական պայմանները հիմնովին փոխված չեն ի նպաստ բանվորական-ընկերվարական շարժման մը:

Ահա այս նկատումները հիմք ունենալով, ես ըսած էի այն ատեն, թե բոլոր փորձերը ընկերային և ընկերվարական տեսակետով բյուրեղացման ենթարկելու Հ. Յ. Դաշնակցությունը անիմաստ, ապարդյուն և նույնիսկ վնասակար են. որովհետև այդպիսի

բյուրեղացում մը բնագրոսիկ գործ է, քանի դեռ մեր երկրի ընկերային-տնտեսական իրականությունը ինքը բյուրեղացած չէ: Առողջ և շինարար քաղաքականությունը կպահանջե, որ կուսակցական բյուրեղացումը բխի իրականութենէն և ոչ թե պարտադրվի վաղաժամորեն և բռնի միջոցներով,- բան մը, որ անխուսափելիորեն պիտի քանդե, կազմալուծե կենդանի և գործոն ուժերը ի վնաս մերձավոր նպատակներու և հանուն հեռավոր ու թերևս ցնորական գաղափարներու:

Այս հարցերը արծարծելէն հետո անցեր են ամբողջ տասներկու տարիներ, որոնց ընթացքին, մեր ժողովուրդը, ինչպէս և համայն աշխարհը, ապրեցավ հսկայական փոթորիկներ ու վերիվայրումներ: Եվ սակայն նույն խնդիրները մինչև այսօր ալ չեն կորսնցուցած մեզի համար իրենց բովանդակ այժմեականությունը և շահեկանությունը: Ընդհակառակը, նույնիսկ ավելի հրատապ, ավելի հրամայական են դարձած:

Ոչ միայն պատմական զգայացուցց դեպքերը, այլև ավելի սերտ, ավելի դրական շփումը մեր երկրի ու ժողովուրդի հետ հայ մտավորականության բավականաչափ նոր նյութ մատակարարեցին, որպէսզի նորանոր անգամներ լուրջ և ավելի արդյունավոր վերագնահատության ենթարկվին մեր քաղաքական ըմբռնումներն ու սկզբունքները: Այդպիսի վերագնահատության մը ստիպողական անհրաժեշտությունը կզգացվեր միշտ, իսկ այժմ ավելի, քան երբևէ, և՛ այն պատճառով, որ մեր քաղաքական կյանքի մեջ իշխող գաղափարներու մեծագույն մասը օտար միջավայրերու, բայց ոչ երբեք մեր հայրենիքի հետամնաց իրականության արդյունք և թելադրություն է:

Մեր մտավորականությունը, որ գերազանցապէս սնվեր ու մեծցեր է գաղութներու քաղաքական մթնոլորտին մեջ, ներշնչվեր է այդ օտար միջավայրերու առաջավոր գաղափարներէն, հաճախ անվերապահորեն յուրացուցեր է զանոնք և տիրական թափով մը մղվեր է հետապնդելու զանոնք նաև հեռավոր հայրենիքի տխուր պայմաններուն մեջ, առանց նկատի առնելու, թե ո՞րքան խորն է տարբերությունը օտար և հայրենի միջավայրերուն և ո՞րքան ուրեմն խորթ ու ցնորական են մեր երկրի համար գաղութային մտայնությունները, գաղափարները, նշանաբանները, որպէսզի անոնք կարողանան իբրև հիմ ծառայել մեր քաղաքական ծրագիրներու համար:

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հայ հեղափոխական դաշնակցությունը իր ծագման առաջին շրջանին մեջ եղած է իրոք հայ հեղափոխականներու դաշնակցություն:

Միացնել մեկ կազմակերպության մեջ բոլոր հայ հեղափոխականները անկախ անոնց աշխարհահայեցողություններէն, և համախմբել բոլոր հայ հեղափոխական խմբակները մեկ ընդհանուր գործնական նպատակի շուրջը, որ էր թրքահայ ժողովրդի ազատագրությունը,- ահա գլխավոր հիմքը Հ. Յ. Դաշնակցության:

Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրները դոկտրինյորներ, նեղ դավանապաշտներ չէին: Ընդհակառակը, անոնք ունեին քաղաքական առողջ և գործնական ոգի մը, որ միշտ զիտեր ստորադասել հեռավոր, տակավին անորոշ նպատակները մերձավոր, արդեն որոշ նպատակներուն, վերացական սկզբունքները կյանքի իրական պահանջներուն: Լինելով ռուս ընկերվարական շարժմն բովէն դուրս եկած հեղափոխականներ ու սոցիալիստներ, անոնք սակայն չկամեցան ընկերվարական նորագույն հասկացողությանց ու գործելակերպերու վրա խարսխել հայ քաղաքական հեղափոխությունը: Այդ պատճառով ալ անոնք խուսափեցան հիմնավորել ու ծանրաբեռնել Հ. Յ. Դաշնակցության սկզբնական ծրագիրը սոցիալիստական նպատակներով, թեև չմերժեցին ընդունիլ ընկերվարությունը իբրև առաջավոր մարդկության հեռավոր մեկ իդեալը, դեպի որը տանող ճամփան սակայն անոնք կնկատեին մեր ազգի քաղաքական ազատությունը:

Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրներու համար սոցիալիզմը եղավ գերազանցապէս բարոյական մեկ պահանջ, տեսական մեկ սկզբունք, բայց ոչ քաղաքական հրատապ գործ:

1905 թ. ռուս հեղափոխական մեծ շարժումը սակայն, որ տեղի կունենար ընկերվարական գաղափարներու և նշանաբաններու տիրական ազդեցության տակ, անհաղթելի թափով մը համակեց նաև հայ երիտասարդությունը սոցիալիստական մտայնությամբ ու մղումներով: Մասնավորապէս հայկական խոշոր գաղութային կեդրոններու մեջ, ինչպէս, օրինակ, Բաքու, Թիֆլիս, Ռոստով,

Մոսկվա, Պետրոգրադ, ուր առանձնապես ուժգին էր ռուս հեղափոխության հորձանքը և ուր հայ մտավորականը, բանվորն ու նույնիսկ քաղքենին կատարելապես անկարող էին պահպանել քաղաքական ուրույն, անկախ դիրքեր և չենթարկվիլ ռուսական սոցիալիզմի գաղափարական հմայքին, հայ երիտասարդությունը աննկատելի կերպով ռուսական մտքի գերին դարձավ և գրեթե առանց քննադատության յուրացուց անոր վարակիչ թելադրությունները:

Սոցիալիզմը մոդա էր:

Ամոթ էր սոցիալիստ չլինել:

Ամեն մեկ պատվավոր մարդ, որ պուրժուա կամ հետադեմ մակդիրը չէր ուզեր իր վրա վերցնել, պետք է ինքզինքը սոցիալիստ հռչակեր:

Եվ ո՞ր մտավորականը և մանավանդ երիտասարդը կրնար հանդգնություն ունենալ չհագնել սոցիալիստի զգեստը:

Ամեն մարդ կշտապեր իր վրայեն նետել ամեն գաղափար, որ կրնար վարկաբեկել կամ կասկածելի դարձնել զինքը իբրև ոչ բավականաչափ ուղղափառ հետևորդ սոցիալիզմի:

Այլևս իրոք վեճ ալ չի կար սոցիալիստ ըլլալու կամ չըլլալու մասին. որովհետև ամենքն ալ սոցիալիստ կձևանային: Խնդիրը աստիճաններուն և տեսակներուն մասին էր: Խնդիրը «ուղղափառ», «իսկական», «մաքուր» սոցիալիստ լինելու մասին էր: Իսկ ուղղափառ սոցիալիստ լինելու համար կպահանջվեր ունենալ չափված-ձևված աշխարհահայեցողություն մը, որ պաշտոնապես նվիրագործված էր տիրող ռուս սոցիալիստական կուսակցությանց ու անոնց տեսաբաններուն կողմէ: Որևէ շեղում հավատո այն հանգանակներէն, զորս առաջադրած էին ռուս սոցիալիստական առաջնորդները, բավական էր կասկածի ենթարկելու համար անհատի մը կամ խմբակցության մը սոցիալիստական մաքրությունը, կուսությունը:

Կարճ. սոցիալիզմը Ռուսիո մեջ դարձեր էր կրոն, իսկ սոցիալիստական կազմակերպությունները մեկ-մեկ եկեղեցիներ: Ամեն մարդ կուզեր հավատացյալ լինել, և ամեն մարդ պարտավոր էր որևէ եկեղեցիի պատկանիլ: Իսկ անոնք, որ չէին ուզեր այդ ընել, հերետիկոսներ էին և անխնա հալածանքի արժանի:

Հայ մտավորականությունը Ռուսիո մեջ, մասնավորապես երիտասարդ մտավորականությունը հարկավ չէր ուզեր ինքզինքը մեկուսացման ենթարկել և հարկադրված կզգար հարիլ գոյություն ունեցող ռուս սոցիալիստական եկեղեցիներէն մեկուն կամ մյուսին:

Դաշնակցական մտավորականներու ընտրությունը ինկավ ռուս սոցիալիստ-հեղափոխական կուսակցության վրա: Եվ ասիկա անշուշտ պատահական բան մը չէր և ուներ իր որոշ հիմքերը:

Նախ որ Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրները ռուս այսպես կոչված «նարոդնիկներու» (ժողովրդասերներու) դպրոցէն դուրս եկած մարդիկ էին. ոմանք, ինչպես, օրինակ, Քրիստափոր Միքայելյանը, Ջավարյանը և այլն, հարած էին նարոդնիկներու կազմակերպության: Դաշնակցական ամենէն ակտիվ ու ղեկավար գործիչներէն շատերը տոգորված էին նարոդնիկական գաղափարներով և իրենց ամբողջ համակրությունը այդ գաղափարները որդեգրած ռուս կուսակցության կողմն էր:

Ատկէ գատ, ռուս նարոդնիկները կամ սոցիալիստ-հեղափոխականները գյուղացիությանը հեղափոխական դեր մը կուտային, — բան մը, որ կտրականապես կժխտէին ռուս մարքսիստները, նկատելով գյուղացիությունը իբրև հետադեմ դասակարգ:

Եվ հայ մտավորականներու մեծ մասը, որ դուրս էր եկած գյուղէն, բնականաբար հակում ուներ դեպի գերազանցապես գյուղացիական ռուս կուսակցությունը:

Ատկէ գատ ռուս սոցիալիստ-հեղափոխականները անհատին և գործոն փոքրամասնության մեծ դեր կվերապահէին պատմության մեջ և այդ պատճառով ալ կընդունէին անհատական տեռորներու խոշոր կարևորությունը քաղաքական գործունեության մեջ: Հայը, որ իր ազգային նկարագրով անհատապաշտ է, բնական հակում մը ուներ դեպի ռուս սոցիալիստ-հեղափոխականը:

Վերջապես որոշ ազդեցություն ուներ նաև այն պարագան, որ Հ. Յ. Դաշնակցության մեջ կամ անոր շուրջը կգտնվէր հայկական գաղութային խոշոր կեդրոններու հայ պուրժուազիայի ազատական տարրը, իսկ այդ տարրը հարկավ չէր կարող առանձին սեր մը տածել դեպի զուտ բանվորական շահեր ու գաղափարներ պաշտպանող մարքսիստական կուսակցությունները, սոցիալ-դեմոկրատները:

Ճիշտ է, Հ. Յ. Դաշնակցության մեջ կային նաև մարքսիստական մտայնություն և հակումներ ունեցող անհատներ ևս, ինչպես, օրինակ, Ռոստոմը, սակայն գերիշխող էր մղումը դեպի սոցիալիստ-հեղափոխական հոսանքը:

Եվ այսպես աննկատելի կերպով մեր կուսակցության ծոցին մեջ ռուս սոցիալիստ-հեղափոխականներու գաղափարները արմատ

ձգեցին, բավականին ընդարձակ գետին նվաճեցին: Եվ ընկերվարական հովերով տարված ռուսահայ երիտասարդության ուժգին ճնշման տակ Հ. Յ. Դաշնակցությունը 1907 թվին Վիեննայի ընդհանուր ժողովին մեջ վերջնականապես ձևակերպեց ու նվիրագործեց սոցիալիստ-հեղափոխական այն ծրագիրը, որ գոյություն ունի մինչև այսօր այ:

III

ՊԱՅՔԱՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Սակայն մինչև Վիեննայի ընդհանուր ժողովին գումարումը՝ Հ.Յ.Դաշնակցության մեջ և անոր շուրջը ծայր էր տված թե՛ ձայնն և թե՛ աջեն բավականին գորավոր պայքար մը կուսակցության տիրող հոսանքին դեմ:

Ձայնն կգործեին այսպես կոչված «անջատականները», որոնք կըսեին, թե Հ. Յ. Դաշնակցությունը ընկերվարական կուսակցություն չէ և չի կրնա լինել, թե սոցիալիստական բյուրեղացման փորձերը դրական արդյունք չպիտի տան և միայն պիտի «մթացնեն հայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը», թե Հ. Յ. Դաշնակցությունը գերազանցապես տաճկահայկական կազմակերպություն է և, իբրև այդպիսին, չի կարող լինել ընկերվարական, քանի որ Տաճկահայաստանի մեջ չի կան սոցիալիստական գործունեության պայմաններ: Այս բոլորը նկատի ունենալով, անջատականները կըսեին, թե պետք է Կովկասի մեջ անջատվիլ Հ. Յ. Դաշնակցութենեն և ստեղծել մեկ նոր հայկական կուսակցություն, կապվելով ռուս սոցիալիստ հեղափոխական կազմակերպության հետ:

Անջատականները, առանց նույնիսկ սպասելու Վիեննայի ընդհանուր ժողովի որոշումներուն, բժ. Աթաբեկյանի գլխավորությամբ, դուրս եկան Հ. Յ. Դաշնակցության շարքերեն և աստեն մը, իբրև ուրույն կազմակերպություն իրենց գոյությունը պահպանելը վերջը, միացան ռուս սոցիալիստ-հեղափոխականներուն: Այս միացումը իրապես եղավ ինքնաշեղծագրացման համագոր քայլ մը, հայ սոցիալիստ-

հեղափոխականներու կողմեն: Բնական է, որ այլևս անոնք չէին կարող նշանակելի դեր մը կատարել հայ քաղաքական կյանքին մեջ:

Սոցիալիզմի շուրջը Հ. Յ. Դաշնակցության մեջ եղած պայքարը 1906 թ. աջեն ևս առաջ բերավ հակահոսանք մը, որ հայտնի դարձավ միհրանական շարժում անունով:

Միհրանը տաճկահայ դաշնակցական խմբապետ մըն էր, որ կնկատեր, թե Հ. Յ. Դաշնակցությունը թրքահայոց ազատագրության միայն նվիրված մարտական կազմակերպություն մըն է: Միհրան կատաղի հակառակորդ էր սոցիալիզմի և Հ. Յ. Դաշնակցության հեղափոխական գործունեության Ռուսիո մեջ, ցարիզմի դեմ: Ճիշտ է, Միհրան ինքը մասնակցած էր հայ-թաթարական կոիվներուն Կովկասի մեջ, և հայ ժողովրդի ինքնապաշտպանության նպաստած էր իր ընկերներուն հետ միասին, որոնք բոլորն ալ մարտնչած էին Հ. Յ. Դաշնակցության դրոշին տակ: Սակայն Միհրան իր կոիվը կնկատեր ուղղված միայն թաթարներուն դեմ, թեև հայտնի էր, որ զանոնք գրգռողն ու զինողը ցարական կառավարությունն էր: Միհրան գործ չէր ուզեր ունենալ ռուսական բռնակալության հետ և կուզեր, որ կուսակցության բոլոր ուժերը ուղղվին դեպի Տաճկահայաստան ընդդեմ սուլթանական ռեժիմի:

Միհրանի ետևի շուտով կանգնեցավ հայկական գաղութային կեդրոններու (Թիֆլիսի, Բաքվի) հակադաշնակցական պուրծուազիան, որ թե՛ դրամով, թե՛ գրչով, թե՛ խոսքով, թե՛ ամեն հնարավոր միջոցներով ուժ տվավ միհրանական շարժման, հույս ունենալով այդ կերպ կասեցնել Հ. Յ. Դաշնակցության սոցիալիստական և հեղափոխական ձգտումները Ռուսիո մեջ:

Հակադաշնակցական մութ տարրերու դրոյումով միհրանականները ուզեցին իրենց նպատակին հասնիլ, Հ. Յ. Դաշնակցության ղեկավար անձնավորությունները անհրեկման ենթարկելով: Կովկասի մեջ իրենց ծրագիրը վիժեցավ: Սակայն Թուրքիո մեջ անոնց դավադրական հարձակման զոհ գնաց Եղիշե Թոփչյանը, որ թերևս ամենեն խոշոր և վճռական դերն էր կատարած Հ. Յ. Դաշնակցությունը սոցիալիստական գործունեության մղելու և Վիեննայի ժողովին ընդունած միջին գիծը ընտրելու մեջ: Եղիշե Թոփչյան գրչով ու խոսքով ամենեն կատաղի ու ամենեն եռանդուն պայքարը մղած էր թե՛ միհրանական և թե՛ անջատողական հոսանքին դեմ փրկելու համար կուսակցությունը պառակտումն ու քայքայումն:

ԶԳՐՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Անջատողական և միհրանական հոսանքները վիժեցան և գրեթե անհետ կորան. մինչդեռ Հ. Յ. Դաշնակցությունը մնաց կանգուն և ավելի խոր արմատներ ձգեց աշարհի չորս կողմը ցրված հայության սրտին մեջ:

Արդյո՞ք Հ. Յ. Դաշնակցության կենսունակության և հարածուն հաջողության գաղտնիքը ընկերային այն վարդապետությունն էր, գոր մեր կուսակցությունը նվիրագործեց իր Վիեննայի ընդհանուր ժողովին մեջ: Արդյո՞ք անջատական և միհրանական հոսանքներուն բալտր գաղափարները իրապես և ամբողջությամբ անպետք լինելուն պատճառով էր որ անոնք որևէ հաջողություն չունեցան:

Եթե այժմ հետադարձ հայացք մը նետենք մեկ կողմեն՝ անջատական և միհրանական շարժումներու առաջադրած գաղափարներուն, և մյուս կողմեն՝ Հ. Յ. Դաշնակցության Վիեննայի ընդհանուր ժողովին մեջ պաշտոնապես որդեգրված սկզբունքներուն վրա, չպիտի կարողանանք չնկատել, որ անտարակույս որոշ առողջ տարրեր կային առաջիններու մեջ և որ կային ու կան նաև շատ վիճելի կետեր վերջիններու մեջ:

Եվ սակայն անջատական և միհրանական հոսանքներուն որոշ առողջ միտքերը չփրկեցին զանոնք, ինչպես նաև Հ. Յ. Դաշնակցության ծրագրին մեջ մտած շարք մը վիճելի կետերու և սկզբունքներու չխանգարեց, որ Հ. Յ. Դաշնակցությունը շարունակեր իր հաղթական ընթացքը և պահպաներ իր տիրական դիրքը հայ քաղաքական կյանքի մեջ:

Պատճառը, իմ կարծիքով, այն է, որ՝ կուսակցությանց հաջողության համար՝ գրված ծրագիրները, պաշտոնական աշխարհահայեցողությունները, տեսական, տեսաբանական տվյալները անհամեմատ ավելի փոքրիկ, երկրորդական դեր կկատարեն, քան սովորաբար կկարծվի: Հ. Յ. Դաշնակցությունը կանգուն է, առողջ է, մեծ է և հաղթական է ոչ թե իր գրված ծրագիրներով ու սկզբունքներով, այլ այն անշոշափելի, բայց մեծ ու կենդանի ոգիով ու ավանդություններով, որ կապրին մեր ժողովուրդի սրտի խորքին մեջ, և այն բարոյական մեծ դրամագլխով, որ ձեռք է

բերված անհուն զոհերով, - զրկանքներով ու սերունդներու անձևվեր, գաղափարական ճիգերով:

Հ. Յ. Դաշնակցությունը հզոր է իր, եթե կարելի է այսպես ըսել, չգրված ծրագրով, որ կրխի աշխարհի չորս կողմը ցրված, հալածված ու անիրավված անտուն ու անտեր հայ ժողովրդի հոգիի խորքերեն: Այդ չգրված ծրագիրն է ազգային միության, ինքնապաշտպանության և քաղաքական ազատության ու անկախության անհաղթելի տենչը, որ ամեն բանե առաջ և ամեն բանե ավելի կարող է իրականանալ մարտական միջոցներով ու կազմակերպությամբ:

Թղթի վրա, խոսքի մեջ, սկզբունքներու և աշխարհահայեցողությանց տեսական վեճերուն մեջ Հ. Յ. Դաշնակցությունը ունեցած է հաճախ վրիպումներ, գործած է սխալեր, շեղած է գիտության և իրականության ողջմիտ թելադրություններեն, բայց երբեք Հ. Յ. Դաշնակցությունը գործով դավաճանած չէ հայ ժողովրդին, երբեք կորսնցուցած չէ իր կենդանի, անքակտելի կապը անոր հետ, երբեք մոռցած չէ իր պատմական առաքելությունը, իր իսկական դերը, երբեք շեղած չէ իր սրբազան նպատակներեն, որոնք եղած են միշտ, են ու պիտի լինին - հայ ժողովրդի միացումը, ինքնապաշտպանությունը և ազատությունը:

Հ. Յ. Դաշնակցությունը եղած է և է այսօր ալ գերազանցապես ժողովրդական ու ազգային հայ կազմակերպություն՝ հայության անձևվեր գավակներու արյունով շաղախված, հայության լավագույն առաջնորդներու մտքով բեղմնավորված - միշտ հարազատ, միշտ կենդանի, միշտ առաջապահ բովանդակ հայության սիրտը փոթորկող քաղաքական պայքարներու մեջ:

Հոս է Հ. Յ. Դաշնակցության ուժը, հոս է անոր՝ մեր պատմության մեջ անօրինակ հաջողության ու ծավալման գաղտնիքը:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՔԸ

Ի՞նչն է որ կգրավե դեպի Հ. Յ. Դաշնակցությունը, կհավաքե մեր դրոշակի շուրջը, գրկանքի ու զոհաբերության ընդունակ կդարձնե, կխանդավառե ու պայքարի կմղե հայության ամենեն կենսունակ տարրերը աշխարհի ամեն կողմ – Հայաստանեն սկսած մինչև Ամերիկա:

Ի՞նչն է, որ, հակառակ մեր բոլոր խարխափումներուն, ձախարհություններուն, սխալներուն, Հ. Յ. Դաշնակցությունը դարձուցած է և կդարձնե գործոն քաղաքական ուժ մը թե երկրի և թե գաղութներու մեջ:

Արդյո՞ք ընկերվարական գաղափարները, նշանաբանները, ծրագիրները: Արդյո՞ք միջազգային կամ համաշխարհային հեղափոխության երազները: Արդյո՞ք բանվորական շահերու պաշտպանությունը կամ դասակարգային անհաշտ պայքարը ընդդեմ պուրժուազիայի...

Հարկավ ասոնցմե և՛ ոչ մեկը: Որովհետև այդ բոլորի համար բնավ պետք ալ չէ հարիլ հայկական անձուկ շրջանակի մը մեջ ամփոփված քաղաքական կազմակերպության մը, որ ընկերվարական նպատակներ հետապնդելու և աշխատավորական շահեր պաշտպանելու համար ամենեն աննպաստ պայմաններու մեջ կգտնվի: Որովհետև հայ բանվորը կամ հայ մտավորականը, որ կուզե սոցիալիստական շարժման նվիրվիլ, կամ կուզե իր դասակարգային շահերը պաշտպանել օտար երկիրներու մեջ, միշտ ունի իր առջև գործունեության անհամեմատ ավելի ընդարձակ ասպարեզ մը հանձին օտար ընկերվարական մեծ կազմակերպությանց: Փոխանակ առանձնանալու, կղզիանալու և ապավինելու միայն իրենց սահմանափակ ու շատ համեստ ուժերուն, գաղութներու մեջ ցրված հայ աշխատավորները, եթե առաջնորդված լինեին միմիայն իրենց դասակարգային շահերով և միջազգային ընկերվարական գաղափարներով, անտարակույս պիտի միանային իրենց կողքին ապրող օտարազգի բանվորներուն և անոնց հետ մեկտեղ պայքարեին թե՛ իրենց անձնական, թե՛ իրենց դասակարգային և թե՛ համամարդկային բարօրության համար:

Եվ սակայն հայ աշխատավորությունը ամենուրեք կգերադասե մտնել Հ. Յ. Դաշնակցության շարքերուն մեջ և անոր միջոցով փնտրել իր քաղաքական ձգտումներուն իրականացումը:

Ասիկա պատմական փաստ մըն է, որ ինքնին պերճախոս է և գոր անկարելի է վերագրել պատահականության կամ հայ զանգվածներու քաղաքական տգիտության:

Պատահականություններ կրնան լինիլ անհատական դեպքերու ատեն, բայց ոչ երբեք զանգվածային, մասսայական երևույթներու մեջ: Իսկ քաղաքական տգիտությունը նույնպես կվերաբերվի ավելի անհատներուն, քան զանգվածներուն. որովհետև անհատը կրնա թյուրիմացությամբ, իր քաղաքական տգիտության պատճառով, հարիլ այս կամ այն քաղաքական կուսակցության, բայց երբեք զանգվածները, որոնք բնագործեն միշտ կմղվին հոն, ուր իրենց շահն ու ողջմտությունը կպահանջեն. և չեն սխալիր: Եթե զանգվածներուն հաճախ կպակսի քաղաքական գիտակցությունը, երբեք չի պակսիր սակայն քաղաքական ողջմտությունը, որ համենայն դեպս անհամեմատ ավելի նվազ սայթաքումներ կընե, քան «քաղաքական գիտակցություն» ըսվածը:

Առհասարակ պետք է ըսել, թե մեր մեջ սովորաբար կչափազանցվի գիտակցության նշանակությունը հանրային կյանքի ու պայքարներու մեջ և ծայր աստիճան կստորագնահատվի այն տիրական դերը, գոր կկատարեն մասսաներու առողջ բնագոն ու չգիտակցված շահերը: Ասոնք է որ առաջ կբերեն այն հաճախ անըմբռնելի ու անսպասելի հասարակական երևույթները, որոնք տարերային բնույթ կկրեն:

Դեպի Հ. Յ. Դաշնակցությունը կմղվի հայ ժողովուրդը ամեն տեղ, կարելի է ըսել, տարերայնորեն: Որովհետև ամեն մեկ հայ, որ այլասերված չէ, Հ. Յ. Դաշնակցության մեջ կգտնե գիտակցորեն թե անգիտակցորեն մարմնացումը պատմական այն մեծ առաքելության, որ կբխի հայության անցյալեն ու ներկայեն և որ հարազատ է ու համապատասխան անոր հոգիին ամենեն կենսական, ամենեն հրամայական պահանջին: Իսկ այդ պահանջը ոչ այլ ինչ է, բայց եթե հայ ազգի հավաքումը, միությունը, պաշտպանությունը և ազատությունը:

Ուրեմն, ոչ թե ընկերվարական և դասակարգային իդեալներն են, որ Հ. Յ. Դաշնակցության կենսունակության և

հաջողության աղբյուրը կազմեր են ու կկազմեն, այլ գերազանցապես ազգային միության, պաշտպանության և վերածնության մղումները:

Իր ոգիով, իր ավանդություններով, իր գանգվածներու տիրող զգացումներով ու ձգտումներով և վերջապես իր կատարած պատմական ու քաղաքական գործով Հ. Յ. Դաշնակցությունը եղեր է և է գերազանցապես ազգային կուսակցություն:

VI

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱԳՆԱԴՐ

Քաղաքական, ընկերային, տնտեսական, ազգային խնդիրներով զբաղվող հայ մտավորականության շարքերուն մեջ ծայր է տված ժամանակ է մը ի վեր վերագնահատման ուժեղ շարժում մը, որ, թեև կազմակերպված բնույթ չունի, սակայն անտարակույս աննախընթաց է իր խորությամբ, ծավալով և, եթե կուգեք, իր տարերայնությամբ:

Կվերագնահատվին քաղաքական օրինետացիաներ, կվերագնահատվին ընկերային գաղափարներ, նշանաբաններ, սկզբունքներ, աշխարհահայեցողություններ: Ամենուրեք կտիրե տարակուսանք, նահանջի, ժխտումի տարտամ մտայնություն, քննադատության բուռն պահանջ: Քաղաքական կյանքի ամենեն աջ տարրերեն սկսած մինչև ամենեն ձախերը և ծայրահեղները հրապարակ կհանեն աներկբայելի ձգտում մը ավելի վերապահ ու քննական վերաբերում մը ցույց տալու հանդեպ հասարակական այն գաղափարներուն, որոնք տասնյակ տարիներ գերած են առաջավոր և պայքարող հայության միտքն ու զգացումները:

Քաղաքական ներքին թե արտաքին այլևայլ նկատումներ դժբախտաբար պատճառ կդառնան, որ կուսակցական վարագույրներու ետև ծածկվին նոր ուղիներ որոնող հայ քաղաքական մտքի տատանումները, դեգերումները և վերագնահատումները:

Ժամանակ առ ժամանակ սակայն մեր մամուլի էջերուն մեջ երևան կուգան պերճախոս նշաններ, որոնք ցույց կուտան, թե որ աստիճան խորն է և տենդային այն տագնապը, որ համակեր է հայ քաղաքական ղեկավար շրջանները:

Այդ տեսակետով առանձին ուշադրության արժանի է Հայաստանի Հանրապետության անդրանիկ վարչապետ Հովհաննես Քաջազունիի «Ի՞նչ պետք է ըլլա մեր ուղին» վերնագիրը կրող հոդվածաշարքը, որ տպվեցավ այս տարի «Ճակատամարտ»-ի մեջ և այնքան աղմուկ հանեց իր շուրջը:

Տարակույս չի կա, որ մենք կապրինք գաղափարական մեծ տագնապ մը: Աննախընթաց շփոթություն մը տակնուվրա կընե քաղաքական այն արժեքները, որոնք դեռ երեկ շատ շատերուն անվիճելի կթվեին: Կասկածի կամ նույնիսկ բացարձակ ժխտման կենթարկվին նշանաբաններ, սկզբունքներ, որոնք խանդավառեր են ամբողջ սերունդներ: Պետություն, անկախություն, ընկերվարություն, հեղափոխություն, - այս բոլոր գաղափարները վար կատնվին իրենց նախկին բարձր պատվանդաններեն և հաճախ ոտնակոխ կըլլան: Կարծես գետինը կշարժվի շատերու ոտքին տակ. ոչինչ՝ հաստատուն, աներկբայելի. ոչինչ՝ որոշ, տևական, ամեն ինչ՝ տարտամ, անցողական: Մեկ խոսքով՝ ամեն ինչ դարձած է տարակուսանքի ու վեճի առարկա:

Եվ հայ միտքը, իբրև հարազատ ու պերճախոս արտահայտիչը հայ ազգային խառնվածքի և նկարագրի, այս անգամ ալ, ինչպես միշտ, անհաղթելի մղում մը ցույց կուտա իյնալու ծայրահեղությանց մեջ: Աղանդամուլ, մոլեռանդ, գրեթե կրոնական շունչ մը կզգացվի նույնիսկ այն անհատներուն մոտ, որոնք զգաստության, իրապաշտության, չափավորության քարոզը կընեն:

Միայն պիտի լիներ սակայն կարծել, թե միայն մենք է որ կապրինք գաղափարական այս խորը տագնապը: Իրականին մեջ ան դուրս կելլե հայկական անձուկ շրջանակներեն:

Համայն մարդկությունը այսօր ծանր, աննախընթաց երկունքի մը մեջ է:

Վերջին անեղ պատերազմը ցնցեր է հին աշխարհը իր բոլոր հիմքերուն և արժեքներուն մեջ: Քանդված են ամբողջ երկիրներ. հրի ու սրի են մատնված բազմամիլիոն ժողովուրդներ. մարդկային անթիվ զոհեր, անչափելի նյութական կորուստներ՝ ամեն տեղ. մարդկային անհատակ և հարածուն թշվառություն, սով, հիվանդություն, անստույգ վիճակ՝ Արևմուտքի և Արևելքի մեջ. քաղաքական վերիվայրումներ, քաղաքացիական ներքին արյունահեղ կռիվներ. պետություն պետության դեմ, ազգ ազգի դեմ, դասակարգ դասակարգի դեմ, անհատ անհատի դեմ. տնտեսական մեքենան

խախտված ամենուրեք սպառնական չափերով, արտադրությունը ինկած, առևտուրը կանգնած կամ կրճատված, անգործություն, անապահովություն՝ գրեթե ամեն երկրի մեջ, սպառազեն, կեսպատերազմական վիճակ ամեն կողմ, ամբողջ աշխարհը՝ նստած հրաբուխի մը վրա, որ կրնա պայթիլ ամեն ժամ, ամեն վայրկյան և՛ կործանել մարդկային ամբողջ քաղաքակրթությունը ու ավերակներու կույտի վեարձել և՛ այն բոլորը, որ տակավին ազատ է մնացեր վերջին մեծ պատերազմի քանդող ու մահաբեր ձեռքերն:

Այս է ահա միջազգային կացության ընդհանուր պատկերը:

VII

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ շԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

Կանգնած այս ծանր, արհավիրալի կացության հանդեպ՝ համաշխարհային հեղափոխության շեփորը կհնչեցնեն հինգ տարիէ ի վեր ռուս և այլազգի բոլշևիկները:

Միմիայն համաշխարհային ընկերվարական հեղափոխությունը կրնա փրկել ժողովուրդները ներկա տաժանելի վիճակէն, - կքարոզեն անոնք, անդադար ու մոլեգին՝ խոսքով, գրչով, հուրով և սուրով:

Բոլշևիկներու կարծիքով, համաշխարհային ներկա տագնապը կբխի այն ահեղ դասակարգային պայքարէն, որ կնդեն իրարու դէմ մեկ կողմէն բոլոր երկիրներու գործավորները և մյուս կողմէն՝ բոլոր երկիրներու բուրժուական դասերը: Ամբողջ աշխարհը, կըսեն անոնք, բաժնված է երկու անհաշտ, հակամարտ բանակներու կապիտալի և աշխատանքի կամ իմպերիալիզմի և կոմունիզմի: Միմիայն կոմունիզմի, կամ, բոլշևիկներու ըսելով, պրոլետարիատի հաղթանակով և տիրապետությամբ կարելի է վերջ տալ համաշխարհային տնտեսական, ընկերային և քաղաքական տագնապին:

Ուետք է ոտքի հանել բոլոր երկիրներու պրոլետարիատը, ամեն տեղ զինու գործությամբ տապալել գոյություն ունեցող կառավարությունները, հաստատել բանվոր դասի դիկտատուրը, և բռնի ուժով իրագործել համայնատիրական կարգերը:

Բոլշևիկյան այս պարզունակ ծրագրի իրականացման համար Մոսկվայի մեջ ստեղծվեցավ «միջազգային» մարմին մը, որ «Երրորդ Միջազգայնականի» անունը կկրէ անիրավ կերպով և որ փաստորեն ռուս բոլշևիկներու Կ. Կոմիտէի հլու կամակատարն է:

«Երրորդ Միջազգայնականը» իր տիրոջմէն առատ միջոցներ կստանա՝ աշխարհի չորս կողմը խռովություններ հարուցանելու, ժողովուրդները իրենց իշխանությանց դէմ գրգռելու, ամեն տեղ տնտեսական կյանքը ավելի ևս քայքայելու, բանվորությունը պառակտելու, անբարոյականացնելու, անգործության մատնելու նպատակով: Եվ այս բոլորը անոր համար, որ դժգոհներու թիվը ավելնա և ժողովրդական զանգվածները տարեբայնորեն մղվին դեպի ապստամբություն հանուն «կոմունիզմի»:

«Երրորդ Միջազգայնականը» այսպիսով կներկայացնէ իրոք ռուսական մարմին մը, որ կոչված է ամբողջ աշխարհի մեջ հրահրելու «համաշխարհային հեղափոխություն» այնպէս, ինչպէս եղավ Ռուսիո մեջ: Որովհետև ռուս բոլշևիկները համոզված են, որ իրենց դիրքը Ռուսիո մեջ չպիտի կարողանան երկարորեն պահպանել, եթէ ուրիշ երկիրներու մեջ ևս չհաստատվի իրենց գաղափարական հնոցէն դուրս եկած և իրենց կատարյալ վստահությունը վայելող մարդոց «խորհրդային» իշխանությունը: Այս պատճառով ալ այդ նպատակի համար անոնք չեն խնայեր ոչինչ և հսկայական գումարներ կվատնեն արտասահմանյան իրենց «պրոպագանդին» համար:

Սակայն բոլշևիկներու հինգ տարվան «հեղափոխական» փորձը ոչ միայն Ռուսիո, այլև ուրիշ եվրոպական կամ ամերիկյան երկիրներու մեջ ցույց տվավ, թէ մարդկությունը, փոխանակ հետզհետէ մոտենալու, միշտ ավելի ու ավելի կհեռանա «համաշխարհային հեղափոխություն» ըսվածէն, եթէ այդ խոսքի տակ հասկնանք շարժում մը, որ բռնի ուժով պիտի հաստատէ ընկերվարական համայնակարգը:

Բոլշևիզմի մայր երկրի Ռուսիո մեջ իսկ «համաշխարհային հեղափոխության» ռահվիրաները փաստորեն արդէն հրաժարած են իրենց հիմնական շատ մը սկզբունքներէն ու գաղափարներէն և, իրերու երկաթէ հարկադրանքին տակ, կնահանջեն քայլ առ քայլ, տեղի տալով դրամատիրական տնտեսության անհաղթելի պահանջներուն առջև: Ռուսիո «կոմունիզմը» կամ «ընկերվարությունը» արդէն վերածված է, գործածելով Լենինի սիրած

խոսքը, «պետական կապիտալիզմի», որը իր կարգին օր մը անտարակույս պիտի վերածվի իր բնական տարերքին, - այսինքն մասնավոր կապիտալիզմին: Ատոր ապացույց այն պերճախոս զիջումները, զորս ըրին վերջերս բոլշևիկները անգլիական խոշոր դրամատիրական մասնավոր ընկերության մը շահագործելու համար ռուսական հարստությունները: Այն, ինչ որ անոնք չուզեցին զիջիլ Ճենովայի և Լահեյի քոնֆերանսներուն մեջ, կզիջին այժմ մասնավոր օտար դրամատերերուն:

Ճիշտ է, ներքին և արտաքին նկատմամբ բոլշևիկները չեղյալ նկատեցին անգլիական ընկերության իրենց տված զիջումները, սակայն այս ըրին ոչ թե տնտեսական, այլ քաղաքական հաշիվներով:

Եվ տարակույս չի կա, որ վաղը անոնք նորեն պիտի ընեն նույն և մինչև իսկ ավելի մեծ զիջումներ օտար բուրժուազիային. որովհետև նահանջը տնտեսական անհրաժեշտություն է, որմե չեն կարող խուսափիլ:

Նվազ կարևոր չեն բոլշևիկներու կողմե ռուս բուրժուազիային տրված զիջումները: Բոլշևիկները ստիպված եղան հաշտվիլ և՛ ռուս բուրժուազիայի գոյության և գործունեության հետ: Անգամ Գարլ Ռատերի պես ծայրահեղ կոմունիստ մը այսօր կխոստովանի, թե անհրաժեշտ է վերականգնել բուրժուազիան տնտեսապես, թեև կթելադրե, որ ոչ մեկ պարագայի տակ թույլ տրվի անոր կազմակերպվիլ քաղաքականապես:

Արդեն բոլշևիկ ղեկավարներու համար իսկ պարզ է, որ կոմունիստական փորձը Ռուսիո մեջ վիժած է: Երկրի տնտեսությունը քայքայված է, աշխատանքի արդյունավետությունը ինկած է, գործավոր դասակարգը, զորանալու փոխարեն, տկարացած է, գյուղացիությունը աղքատացած է, չարաշահությունը երբեք և ոչ մեկ տեղ տեսնված չափեր ու ձևեր ստացած է և պետությունն ու ժողովուրդը հասած են այնպիսի հուսահատական վիճակի մը, որ, առանց օտար պետությանց և մանավանդ օտար դրամագլուխի գործոն ու ընդարձակ օգնության, անկարելի է երկար ատեն գլուխ պահել:

Տնտեսական քայքայումին հետ զուգընթաց Ռուսիո մեջ կաճի և կծավալվի քաղաքական ռեաքսիոնը:

Նոր անուններու քողին տակ կվերականգնվի հին, սև բռնակալությունը, բայց ավելի ահավոր, ավելի սպանիչ միջոցներով և մեթոդներով: Ղասակարգային պայքարի կարմիր դրոշակին տակ

բոլշևիկները կկովին միմիայն իրենց առանձնաշնորհյալ խմբակցության շահերուն և տիրապետության համար, հուսահատության գիրկը մղելով բանվորա-գյուղացիական զանգվածները: Վարկաբեկելով անոնց աչքին կոմունիզմի և սոցիալիզմի գաղափարները, բոլշևիկները ցեխի հետ կհավասարեցնեն իրենց կարմիր դրոշակը նաև օտար երկիրներու աշխատավորությանց աչքին, երբ ձեռք կմեկնեն ջարդարար ու հետադեմ թուրք փաշաներուն, ձգտելով զանոնք գործիք դարձնել «համաշխարհային հեղափոխության» հրահրման համար, բայց իրոք իրենք ծառայելով համիսլամական շարժման, գոր կղեկավարեն իրենց բարեկամ Անկորայի փաշաները:

Եթե մեր հայացքը ուղղենք այժմ դեպի արևմտյան երկիրները, ուր տարիներ է ի վեր ռուս բոլշևիկները «հեղափոխական» աշխատանք կթափեն, հոն ևս պիտի գտնենք ընկերվարական շարժումը վարկաբեկող գործեր և քայքայող երևույթներ, հոն ևս պիտի տեսնենք քաղաքական հարաձուռ ռեաքսիոն մը:

Ամենուրեք բոլշևիկները կատաղի պայքար կմղեն ոչ այնքան բուրժուական դասին դեմ, որքան գործավորական կազմակերպությանց դեմ, միմիայն այն պատճառով, որ անոնք թեև ընկերվարական են, բայց չեն բաժներ Մոսկվայի քանդիչ տեսակետները և մեթոդները: Փոխանակ միացնելու բանվորական զանգվածներն ու կազմակերպությունները, բոլշևիկները ամեն ճիգ կթափեն ջլատելու, պատակտելու, տկարացնելու ընկերվարական շարքերը: Իրենց բռնություններով և ծայրահեղություններով ամենուրեք անոնք կգորացնեն միայն պահպանողական տրամադրությունները, առաջ կբերեն ամեն տեղ բուրժուական բոլշևիզմ, որ Իտալիայի մեջ ֆաշիզմ անվան տակ, իսկ ուրիշ երկիրներու մեջ ալ տարբեր անուններով ու ձևերով միշտ ավելի ու ավելի սպառնական համեմատություններ կառնե: Նույնիսկ այն պետությանց մեջ, ուր ատեն մը բոլշևիկները բավականին հաջողություններ ունեցան և վտանգավոր ուժ դարձան, այժմ արդեն հետզհետե անոնք կկորսնցնեն հողը իրենց ոտքերու տակեն: Աստիճանաբար և շատ զգալի կերպով անոնք կնվազին ու կտկարանան Իտալիո, Ֆրանսայի, Գերմանիո և Բուլգարիո մեջ, - այսինքն՝ ճիշտ հոն, ուր դեռ երեկ անոնք մտահոգություն կպատճառեին իրենց կառավարությանց:

Պատերազմի հետևանքով քայքայված և մոլորված բանվորական զանգվածները Արևմուտքի մեջ հանձին իրենց գիտակից ու առողջ մասերու և ընկերվարական կազմակերպությանց միշտ ավելի ու ավելի հստակ և խիստ կերպով կծառանան բոլշևիկյան շարժման դեմ և կձգտին արմատի մեջ խեղդել Մոսկվայի կոմունիզմի ծավալումը: Գերմանիո մեջ կմիանան չափավոր սոցիալ-դեմոկրատները անկախ սոցիալիստներու հետ, որոնք դեռ երեկ կսիրաբանեին բոլշևիկներու հետ, և կկազմեն ընդհանուր հուժկու ճակատ մը թե միապետականներու և թե կոմունիստներու դեմ: Այս միացումը անտարակույս նախաբանն է Երկրորդ և Վիեննայի (2 1/2) Միջազգայնականներու ձուլման, - երևույթ մը, որ անխուսափելիորեն չափազանց պիտի տկարացնէ կոմունիստներու դիրքը միջազգային բանվորության հանդեպ, զորավոր թափով մը շրջելով աշխատավորական տրամադրությունները ընդդեմ Մոսկվայի կարմրագգեստ բռնավորներուն:

Բոլշևիկներու ասիական բռնի մեթոդները և անոնց առաջ բերած հոռի հետևանքները ամենուրեք կատիպեն ընկերվարական կազմակերպությունները սպառել իրենց ուժերու շատ կարևոր մասը ամուլ, անիմաստ պայքարներու մեջ միանգամայն ապարդյուն կերպով, հրաժարվիլ հարձակողական քաղաքականութենէ հանդեպ բուրժուական պետությանց և գրավել պաշտպանողական դիրքեր:

Միջազգային բանվորությունը հետզհետէ լուրջ նշաններ ցույց կուտա, թե սկսած է արդեն շատ հստակ կերպով գիտակցիլ բոլշևիկյան շարժման իսկական էությունը, որ ռեաքսիոն, հետադեմ է իրոք: Որքան ատեն որ ռուսական սահմանները փակ էին և եվրոպական սոցիալիստները ի վիճակի չէին անձամբ տեսնելու բոլշևիկներու ստեղծած «կոմունիստական դրախտները», հարկավ շատ ուժեղ էին հեռավոր երկիրներու բանվոր դասակարգի մեջ պատրանքները «խորհրդային» իշխանության կատարած փորձերու մասին: Բայց ճամփաները բացվեցան և շատ շատերը ի վիճակի եղան երթալու Ռուսիա և մտնեն ծանոթանալու բոլշևիկներու ստեղծած «բանվորա-գյուղացիական» կարգերուն: Եվ այժմ քողերը վար են առնված խորհրդային Ռուսիո դեմքերու և դեպքերու վրայեն:

Վերջին հարվածը հասցուց բոլշևիկներու «կարմիր հմայքին» սոցիալիստ-հեղափոխականներու դատավարությունը, որ տեղի ունեցավ Մոսկվայի մեջ քանի մը ամիս առաջ: Եվրոպական ընկերվարական կուսակցությանց ղեկավարներեն շատերը գացին

Ռուսիա, ներկա եղան բոլշևիկներու սարքած զզվելի խեղկատակության, որու նպատակն էր մահվան դատապարտել ռուս մեծահամբավ և բազմավաստակ սոցիալիստական կուսակցության անձևվեր գործիչները: Եվրոպական սոցիալիստները անգամ մը ևս համոզվեցան, որ Մոսկվայի ներկա «կարմիր» տերերը նույնքան անողոր թշնամիներ են բանվոր դասակարգի դատին, որքան և ամեն մեկ բուրժուական իշխանություն: Անոնք տեսան, որ ռուս «կոմունիստներու» կառավարությունը սոցիալիստներու հանդեպ կվարվի նույնպես, ինչպես ցարի կառավարությունը: Եվ վրդովմունքի ու բողոքի հսկա ալիք մը բարձրացավ միջազգային բանվորության շարքերուն մեջ:

Միջազգային սոցիալիստական շարժման ամենեն հեղինակավոր գաղափարաբանը ծերունի Կ. Կաուցկին, որ ատենոք եղած է նաև Լենինի ու ընկերներու ուսուցիչը, սոցիալիստ-հեղափոխականներու դատավարության առիթով գրված իր մեկ հոդվածին մեջ բոլշևիկներու հասցեին կուղղե ծանրակշիռ խոսքեր, որոնք իբրև արդյունք բոլշևիզմի մասին ըրած իր մանրակրկիտ գիտական ուսումնասիրությանց կներկայացնեն մահվան անողոր դատավճիռ մը: Կ. Կաուցկին կըսէ.-

«Բոլշևիկյան ռեժիմը հասունցած է կործանման համար: Տակավին կարելի չէ ըսել, թե ե՞րբ և ի՞նչ կերպ ան պիտի իյնա. բայց մեկ բան կարելի է այժմ իսկ պնդել կատարյալ վստահությամբ.

- Բոլշևիզմը պիտի իյնա ամոթով և խայտառակությամբ: Անոր անկումը պիտի ողբան թերևս դրամատիրական աշխարհի չարաշահները: Բայց իր ազատության համար պայքարող գործավոր դասակարգը անեծքի խոսքեր պիտի գտնէ միայն անոր հասցեին: Որ բոլշևիկյան բռնատիրությունը այդպիսի վախճան պիտի ունենա, ատոր ապացույց կրնա ծառայել սոցիալիստ-հեղափոխականներու դատավարությունը»:

Այս դատավճիռը նաև մահվան դատավճիռ մըն է այն մեթոդներուն և առանձնահատուկ գաղափարներուն, որոնցմով այնքա՛ն տխուր հոջակ ձեռք բերին բոլշևիկները ամեն տեղ:

«Համաշխարհային հեղափոխության» գաղափարը ևս, որ անոնց գլխավոր նպատակն է, դատապարտված է բաժնելու բոլշևիկներու տխուր բախտը: Համենայն դեպս ներկա դարաշրջանի մեջ անիկա ցնորք մըն է - բոլշևիկյան ցնորք մը:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ

Պատմական ներկա ժամանակաշրջանին մեջ «համաշխարհային հեղափոխությունը» արդարև պարզ ցնորք մըն է:

Աշխարհը այսօր բնավ բաժնված չէ երկու հակամարտ բանակներու, որոնցմէ մեկը իբր թէ կներկայացնեն բոլոր երկիրներու բանվորները, իսկ մյուսը բոլոր երկիրներու բուրժուաները: Վերացական գաղափարներէ քողագերծված իրականությունը երևան կբերէ բոլորովին տարբեր պատկեր մը:

Երկրագնդի երեսին սփռված պետություններն ու ազգերը կգտնվին աղաղակորեն տարբեր տնտեսական, ընկերային, մշակութային և քաղաքական մակարդակներու վրա, ունին տարբեր շահեր և չեն կրնար միջազգային միություն կազմել նույնիսկ դասակարգային տեսակետով: Այլևայլ երկիրներ ու ազգեր որոշ ժամանակի մը համար կրնան ունենալ շահերու ներդաշնակություն և վիճակներու նմանություն: Տարբեր երկիրներու բանվորական կամ բուրժուական դասերը կրնան երբեմն ունենալ ընդհանուր թշնամիներ և ընդհանուր նպատակներ: Բայց բացարձակ սխալ է երևակայել, թէ Անգլիոյ բանվորը ունի նույն շահերը, ինչ որ Հնդկաստանի կամ Եգիպտոսի: Միամտություն է կարծել, թէ Ֆրանսայի բանվորը Ալժերի կամ Մարոկկոյի և կամ Չինաստանի բանվորներու հետ կապված է ավելի սերտ ու կենսական կապերով, քան իր ազգակից ֆրանսական բուրժուազիայի հետ: Կատարյալ երեխայամտություն է ենթադրել, թէ անգլիական բանվորը իր բուրժուազիայէն նվազ շահագրգռված է անգլիական գաղութներու պահպանումով և գաղութային հետամնաց ու տկար ժողովուրդներու շահագործությամբ:

Ճիշտ է, ամեն երկրի և ազգի ծոցին մեջ տեղի ունի դասակարգային պայքար, որ երբեմն նույնիսկ արյունահեղ բնույթ կստանա: Սակայն այդ իրողութենէն հետևցնել, թէ բոլոր երկիրներու մեջ կատարվող դասակարգային պայքարները կարելի է մեկ հայտարարի բերել և ամբողջ աշխարհը կարելի է միայն երկու բանակներու վերածել, կեշտանակե ոչ միայն տրամաբանական գոեհիկ սխալ գործել, այլև չարաչար կերպով մեղանչել իրականության դեմ:

Դասակարգային պայքարի այս վերացական և ցնորական հասկացողությունը հատուկ է ոչ միայն կոմունիստներուն, այլև

տակավին ընկերվարականներու մեծագույն մասին: Առանձնապես տիրական էր ան պատերազմէն առաջ: Բայց երբ պատերազմը բռնկվեցավ, ֆրանսացի սոցիալիստը, փոխանակ եղբայրական ձեռք մեկնելու գերմանական սոցիալիստին, խանդավառորեն գենք վերցուց, կեցավ ֆրանսացի բուրժուայի կողքին և կատաղիորեն կովեցավ ոչ միայն գերման բուրժուայի, այլև գերման բանվորի դեմ: Նույնը ըրավ և՛ գերման սոցիալիստը, ինչպես նաև բելժիքացի, անգլիացի, իտալացի և այլև սոցիալիստները:

Այս պերճախոս փաստը հին ցնորքներու քարոզիչները կուզեն բացատրել անով, որ դասակարգային գիտակցությունը իբր թէ տկար է եղեր ֆրանսացի, գերմանացի, անգլիացի կամ բելժիքացի բանվորներու և սոցիալիստներու մեջ և այդ պատճառով է միայն որ անոնք ենթարկվել են իրենց երկիրներու բուրժուազիայի պրովոկասիոններուն: Բավական է – կըսեն անոնք, – որ բանվորական զանգվածներու դասակարգային գիտակցությունը պայծառանա և դասակարգային կազմակերպությունը զորանա, որպէսզի այլևս անկարելի դառնա այն, ինչ որ կատարվեցավ 1914 թ., երբ տարբեր ազգերու պատկանող բանվորները թյուրիմացությամբ իրարու դեմ դուրս եկան:

Դժվար չէ նկատել, որ այս դատողությունները մակերեսային են և դարձյալ վերացական, որովհետև չեն թափանցեր տնտեսական, ազգային և ընկերային երևույթներու խորքը, չեն շոշափեր կատարված պերճախոս դեպքերու բուն պատճառները:

Անգլիական, գերմանական, ֆրանսական, իտալական և այլև բանվորները չմիացան իրարու, այլ իրարու դեմ դուրս եկան միացած իրենց բուրժուաներու հետ՝ ոչ թէ այն պատճառով, որ իրենց կպակսեր դասակարգային շահերու գիտակցությունը, այլ ճիշտ այն պատճառով, որ իրենց մեջ շատ զորավոր էր այդ շահերու բնագործ և քաղաքական ողջմտությունը: Անոնք կզգային և կգիտակցեին, որ, եթէ իրենց երկիրը պարտվի, պիտի քանդվի նաև իրենց արդյունաբերությունը, պիտի քայքայվի իրենց տնտեսական կյանքը, և այդ քանդումէն ու քայքայումէն պիտի տուժեն բուրժուաներէն ավելի իրենք՝ բանվորները: Անոնք ըմբռնեցին, որ հաղթանակը շատ ավելի ձեռնտու է իրենց համար, քան պարտությունը: Անոնք վերջապես հասկցան, որ իրենց բուրժուաներու շահերը անկարելի է փաստորեն բաժնել իրենց բանվորներու կենսական շահերէն այնպիսի

դեմարկասիոն գիծով մը, ինչպես որ ըրած էին միջազգային սոցիալիզմի վերացական գաղափարաբանները:

Արդոյք նույնը չէ՞ն ըներ այսօր ռուս կոմունիստները, եղբայրական ձեռք մեկնելով թուրք ավատական, հետադեմ փաշաներուն և, ընդհակառակը, սվիններով խոսելով հայ և վրացի աշխատավորությանց հետ:

Պատճառը նույնն է: Ռուս բանվորը ոչ նվազ չափով, քան ռուս բուրժուան կամ ազնվականը, շահ ունի ռուսական տիրապետության տակ պահելու բազմաթիվ տկար ժողովուրդներ, որոնց կարելի է շահագործել հօգուտ տիրող ազգի կամ տիրող խմբակցության:

Պատերազմի և ռուսական հեղափոխության թարմ ու հարուստ փորձը ցույց տվավ, թե դասակարգային պայքարը որոշ հիմքեր կրնա ունենալ միմիայն ազգի մը կամ երկրի մը ներքին սահմանափակ շրջանակին մեջ, որմէ դուրս, այսինքն միջազգային փոխհարաբերությանց մեջ, տիրական, վճռական դեր կատարողը ոչ թե դասակարգային նեղ հաշիվները կամ վերացական գաղափարներն են, այլ ապադասակարգային համազգային կամ պետական ռեալ շահերն ու մղումները: Որովհետև երկրի մը բոլոր դասակարգերը, հակառակ իրենց հաճախ ներհակ շահերուն, օրգանապես կապված են իրարու հետ իբրև մեկ ազգային տնտեսական ամբողջություն, որու պահպանումով և զարգացումով շահագրգռված են կենսականորեն բոլոր դասերն ալ: Արտաքին վտանգը կապառնա սովորաբար ոչ թե մեկ դասակարգի միայն, այլ ամբողջ ազգին, երկրի ամբողջ տնտեսության:

Ատկե գառ, դասակարգային պայքարը – գեթ ներկա ժամանակաշրջանի մեջ – չի կարող միացնել բոլոր երկիրներու բանվորական դասակարգերը մշտական և հաստատուն գործակցության մը գետնի վրա, նաև այն պատճառով, որ, նախ, դրամատիրական երկիրները, իբրև մրցակիցներ, հակամարտ շահեր ունին իրարու հանդեպ և, երկրորդ, դրամատիրական երկիրները գրեթե բոլորն ալ շահագործողի և իշխողի դերին մեջն են հանդեպ հետամնաց և տկար գաղութային երկիրներու: Ուրիշ խոսքով, անգլիական բանվորը հիմնապես տարբեր շահեր ունի, քան հնդիկ բանվորը, որմէ ամեն տեսակետով ավելի հեռու է, քան անգլիական բուրժուայեն: Նույնպես գերման բանվորը, որ շահագրգռված է գերման արդյունաբերության, կուլտուրայի, տիրապետության

պահպանումով ու զարգացումով, ի վերջո ավելի սերտորեն, ավելի օրգանական կերպով կապված է գերման բուրժուազիայի հետ, քան անգլիական կամ ֆրանսիական բանվորներուն հետ, որոնց հետ կրնա բախումներ ունենալ դասակարգային շահերեն ավելի հիմնական, ավելի կենսական շահերու համար:

Որքան ատեն որ բանվորական ու սոցիալիստական կազմակերպությունները սակավանդամ և քաղաքականապես աննշան, արհամարհելի ուժեր էին, որքան ատեն որ կրնային անպատասխանատու դերի մեջ մնալ առանց վտանգելու իրենց հայրենի երկրի բախտը, – միջազգային սոցիալիզմի գաղափարական կառուցվածքը կարող էր պահպանել իր «գիտական» և «ոռեալ» երևույթը: Մակայն, երբ ընկերվարական կուսակցությունները աճեցին, ծավալվեցան և իրենց շարքերուն մեջ առան միլիոնավոր անդամներ և այդպիսով քաղաքական շատ խոշոր ազդակներ դարձան, երբ այլևս անոնք անկարող էին խուսափիլ պատասխանատու դերի իրենց հայրենիքի պատմության վճռական վայրկյաններուն, անմիջապես երևան եկավ, թե որ աստիճան վերացական և ցնորական էր բոլոր երկիրներու բանվորությանց շահերու ներդաշնակության գաղափարը: Մեկ ակնթարթի մեջ փուլ եկավ բանվորության միջազգային եղբայրակցության օդային շենքը, որ կառուցված էր տասնյակ տարիներու ընթացքին միջազգային իդեալիստներու համառ ջանքերով:

Եվ քանդվեցավ այսպես կոչված երկրորդ Միջազգայնականը և տեսականորեն միայն իրարու հետ միացած միջազգային բանվորությունը պառակտվեցավ իր բաղկացուցիչ ազգային տարրերու միջև:

IX

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԵՋ

Համաեվրոպական պատերազմը և ռուսական հեղափոխությունը ոչ միայն քանդեցին բանվորության միջազգային միությունը, այլև պառակտեցին գործավոր կամ «աշխատավոր» դասակարգի ազգային կազմակերպություններն իսկ: Բանվորության դասակարգային միությունը չլիմացավ պատերազմի և հեղափոխությանց դաժան փորձության:

Ազգերու, դասակարգերու, խմբակցություններու, ինչպես և անհատներու, հակամարտ շահերը անհամեմատ ավելի ցցուն կերպով հրապարակ կուզան պատերազմներու և հեղափոխությանց ատեն, քան խաղաղ օրերուն: Այն, ինչ որ խաղաղ ժամանակ քողարկված և կարողական (potential) վիճակի մը մեջ կգտնվի, հաճախ անշարժ ու անորոշ, պատերազմական և հեղափոխական շրջաններու մեջ կստանա շատ սուր ու որոշ գծեր և երևան կուգա իր ամբողջ բնական մերկությունը:

Հասարակագիտական թեորիներու և տեսաբանական կառուցվածքներու իրական արժեքը կարելի է չափել ոչ այնքան խաղաղ օրերու ընթացքով, որքան պատերազմի և հեղափոխության հնոցին մեջ: Մինչդեռ եվրոպական ընկերաբանները և մասնավորապես ընկերվարական գաղափարախոսները գրեթե միշտ տրամադիր են նկատել խաղաղ ժամանակի երևույթները նորմալ, բնականոն, իսկ պատերազմի և հեղափոխության արտահայտությունները՝ աննորմալ, ոչ-բնականոն: Եվ, երբ խաղաղ իրականության հարմարեցված իրենց վերացական տեսությունները օղը կցնդին պատերազմներու և հեղափոխությանց հարվածներուն տակ, ընկերվարական գաղափարաբանները, հավատացյալ մարդոց կույր մոլեռանդությամբ, կաշխատին մակերեսային, երբեմն սոփեստական բացատրություններով իրենց տեսությունները արդարացնել, առանց վայրկյան մ'իսկ կասկածելու, թե այդ տեսությունները իրենք կրնան հիմնովին սխալ և վերագնահատության կարոտ լինել:

Ընկերվարական տեսաբանները գտած են շատ դյուրին միջոց մը բացատրելու համար իրականության ջախջախիչ փաստերը, որոնք աղաղակող կերպով հաճախ կհակասեն «գիտական» սոցիալիստներու վերացական կառուցվածքներուն: Երբ տարբեր ազգությանց բանվորական դասերը, «դավաճանելով» իրենց դասակարգային շահերուն, իրարու դեմ պատերազմի կելլեն, ուղղափառ ընկերվարականները կշտապեն հայտարարելու, թե պատճառը բանվորներու դասակարգային գիտակցության պակասն է: Երբ միևնույն ազգության պատկանող բանվորական զանգվածները կպառակտվին և իրարու դեմ կատաղի, մինչև իսկ արյունահեղ պայքար կմղեն, նույն ուղղափառ անուղղելիները դարձյալ կըսեն, թե պատճառը դասակարգային գիտակցության պակասն է: Եվ այսպես անվերջ: Դուրս կուգա, որ ամեն տեղ գիտակցությունը կամ

գիտակցության պակասն է որ բախտորոշ դեր կկատարեն, թեև այդպես ըստողները մեծ մասամբ պատմական նյութապաշտության (մատերիալիզմի) մոլեռանդ հետևողներ են:

Քաղաքականության մեջ դասակարգային տեսակետի հիմնական թերությունը, իմ կարծիքով, այն է, որ կենթադրվի, թե դասակարգը ուրույն ամբողջությունն է մը և, որ իր առանձնահատուկ շահերով և ձգտումներով միանգամայն անհաշտելի թշնամի է մյուս դասակարգերուն: Բավական է ունենալ, կենթադրվի, բանվորության շահերու պայծառ գիտակցությունը, որպեսզի բոլոր բանվորները անխտիր կանգնին մեկ դրոշակի տակ և ձգտին պայքարի միջոցով իրագործելու իրենց դասակարգային իդեալները:

Մակայն դասակարգը և դասակարգային շահը ինքնին վերացական հասկացողություններ են, տեսաբանական, մեթոդաբանական գաղափարներ, որոնք կրնան անգնահատելի ծառայություններ մատուցանել ընկերային, տնտեսական և քաղաքական ուսումնասիրությանց համար, բայց գործնական կյանքի մեջ, քաղաքականության մեջ անոնց արժեքը և դերը հաճախ շատ խարուսիկ և կասկածելի են, մեծ մասամբ այն չեն, ինչ որ կկարծվի իրենց մասին: Դասակարգը ինքնամոլոսի, օրգանական միավոր մը չէ, ինչպես ազգությունը. դասակարգերը ազգությանց նման բաժնված չեն իրարմե մեքենապես, որպեսզի կարենան դառնալ ուրույն, անկախ և ինքնապարփակ շարժիչ ուժեր իրենց սեփական նպատակներով ու ձգտումներով: Չկա և չի կարող լինել դասակարգային բնագոյ, զգացում կամ գիտակցություն այն մտքով, ինչպես որ գոյություն ունի ազգային բնագոյ, զգացում և գիտակցությունը: Նյութական շահը չի կարող երբեք լինել անհատներու միջև այնպիսի տևական, ստեղծագործ և կենդանի օղակ մը, ինչպես են, օրինակ, այն բազմապիսի ու խորունկ կապերը, որոնք կմիացնեն անհատները մեկ ազգի մեջ: Նյութական շահը գերազանցապես անձնական աղբյուր և մղում ունի:

Տնտեսական կյանքին մեջ մարդկային գործունեության ղեկավարող ազդակը նեղ և անմիջական անձնական շահն է և ոչ դասակարգայինը, որ իրականին մեջ հաճախ կհակասե կամ չի ներդաշնակվիր անձնական շահին հետ: Ոչ միայն տարբեր ճյուղերու մեջ, այլ հաճախ միևնույն ճյուղին մեջ աշխատողները կհակադրվին իրարու իբրև մրցակիցներ:

Մրցակցությունը տնտեսական կյանքի մեջ ընդհանուր երևույթ է: Ան տեղի կունենա ոչ միայն դասակարգերու, այլև անհատներու միջև: Ոչ թե դասակարգային գիտակցության պակասն է, որ հաճախ կմղե անհատները պայքարելու ընկերային տեսակետով բախտակից անհատներու կամ խմբակցություններու դեմ, այլ անձնական շահը, որ իր ստիպողական անմիջականությամբ մեծ մասամբ կլռեցնե ամեն սկզբունք և վերացական գաղափար:

Ինչպես բուրժուա դասակարգը, այնպես ալ բանվորությունը, պրոլետարիատը, միաձույլ և միապաղաղ զանգված մը չէ, որ միշտ և ամեն տեղ միևնույն շահերը ներկայացնե: Բանվորությունը ևս բաժնված է ըստ արհեստի, աշխատավարձի, սպառողության կազմակերպության, վայրի, հմտության, կրոնի, ցեղի, ազգության, սեռի, տարիքի և այլն, - հատկանիշներ, որոնք բոլորն ալ ավելի կամ նվազ չափով տարբերություններ կստեղծեն բանվորներու վիճակի մեջ և առաջ կբերեն տարբեր հոգեբանություն, տարբեր մղումներ, տարբեր իդեալներ:

Մենք տեսանք, թե որքան հակամարտ, հաճախ անհաշտելի են տարբեր ազգությանց կամ պետությանց պատկանող բանվորներու շահերը և ձգտումները: Վերջին պատերազմը ամբողջ խորությամբ հրապարակ բերավ բանվորությանց ազգամիջյան հակամարտությունները:

Նույն պատերազմը սակայն և մանավանդ վերջին եվրոպական հեղափոխությունները երևան բերին խորը հակամարտություններ նաև միևնույն ազգին պատկանող բանվորական զանգվածներուն մեջ: Բանվորական այլ և այլ խավեր ծառայան իրարու դեմ, իբրև թշնամի բանակներ, կանգ չառնելով նույնիսկ արյունահեղությանց առջև: Եվ ասիկա դարձյալ պատահական երևույթ մը չէ, այլ ունի խորը հիմքեր շահերու, վիճակներու և ձգտումներու տարբերության մեջ:

Բանվոր դասակարգի շահերու ներդաշնակության ամենեն հեղինակավոր և ամենեն ձեռնհաս գաղափարախոսը Կ. Կաուցկին ևս անկարող է չխոստովանել, որ կա բավականին խոշոր տարբերություն մը բանվորության գեթ երկու խավերու միջև, - մասնագետ, վարժ, լավ վարձատրված և ապահով բանվորներու և անվարժ, գեշ վարձատրվող, սև աշխատանք կատարող ին անստույգ վիճակ ունեցող բանվորներու միջև: Եվ այս տարբերությամբ է որ ան մասամբ կուզե բացատրել բանվորական բանակի երկու գլխավոր

մասերու բաժնվիր՝ կոմունիստներու և սոցիալիստներու, թեև գլխավոր պատճառը կվերագրե դարձյալ բանվորության ստորին խավի տգիտության:

Ահա թե ի՞նչ կըսե Կ. Կաուցկին իր վերջին գրքին մեջ, որ լույս տեսավ ամիս մը առաջ «Պրոլետարական հեղափոխությունը և անոր ծրագիրը» վերնագրով:

«Պրոլետարիատը (բանվորությունը) իր էության մեջ բոլորովին միատարր չէ: Մենք արդեն տեսանք, որ ան կբաժնվի երկու խավերու: Առաջինը առանձնահատուկ պայմաններու և օրենսդրության հետևանքով այնքան նպաստավոր վիճակ մը ունի, որ կազմած է գորեղ միություններ և անոնց միջոցով բավականին հաջող կերպով կպաշտպանե իր շահերը. ան կներկայացնե պրոլետարիատի վերին, բարգավաճող մասը, անոր «ազնվականությունը», որ գիտե հաջողությամբ պայքարիլ կապիտալիզմի ճնշող ձգտումներուն դեմ և երբեմն այնպիսի հաջողությամբ, որ պայքարը կապիտալիզմի դեմ անոր համար կդառնա պայքար ոչ թե աղքատության դեմ, այլ իշխանության համար: Այս լավ կազմակերպված, վարժված, պայքարի ընդունակ բանվորության կողքին կանգնած է մեծ բանակը այն բանվորներու, որոնք այնպիսի աննպաստ պայմաններու մեջ են դրված, որ չեն կարողացել նույնիսկ կազմակերպվիլ և հաղթահարել կապիտալիզմի ճնշող ձգտումները: Անոնք կխաբխափին աղքատության մեջ և միշտ ավելի խորը կերպով կընկղմվին անոր ճահիճին մեջ»...

Չետաքրքիր է սակայն, թե ի՞նչ դիրք կբռնեն բանվորության այս երկու խավերը հեղափոխության ժամանակ: Մինչ առաջին խավը ինքզինքը կզսպե, կչափավորե և կխուսափի հախուռն, վաղաժամ «հեղափոխական» քայլերե ու ծայրահեղություններե, երկրորդը, ընդհակառակը, կարտահայտվի հետևյալ կերպով.

«Պրոլետարական հեղափոխությունը, - կշարունակե Կաուցկին, - կցնցե և՛ այս խավը, դարձնելով այն արի և պայքարի ընդունակ: Ան, որ մինչև այդ անտարբերորեն բարձր կուտար իր գոյությունը, ամենեն հախուռն կերպով առաջ կնետվի: Անոր համար դասակարգային պայքարը ուղղված է աղքատության դեմ: Աղքատութենե ճզմված՝ ան չի կարող սպասել. ան ստիպողական կարիք ունի անմիջական օգնության. ան կհամակերպեր, որքան ատեն որ ինքզինքը ուժասպառ կզգար: Երբ իշխանությունը իր ձեռքը

կանցնի, ան իսկույն կուզե ազատվիլ իր բոլոր տառապանքներեն, մեկ անգամեն կուզե վերջ տալ իր ճնշված վիճակին»... (տե՛ս էջ 87):

Ասոր հետևանքը կըլլա այն, որ «պրոլետարական հեղափոխության ընթացքին բանվորության երկու խավերը կիյնան իրարու հանդեպ հակամարտության մը մեջ, որ երբեմն արյունահեղությանց կհասնի և արտաքնապես կհիշեցնե բուրժուական հեղափոխության ատեն զանազան խմբակցությանց միջև տեղի ունեցող կռիվները» (տե՛ս էջ 92):

Հակամարտությունը, որու մասին կխոսի Գ. Կաուցկի, բանվորության ծոցին մեջ ստացած է այսօր այնպիսի կատաղի բնույթ, որ, առանց չափազանցելու, կարելի է ըսել, թե բանվորական հակամարտ կազմակերպությունները կոմունիստականները, սոցիալիստականները և վերջերս նաև ֆաշիստականները իրարու հանդեպ ավելի անհաշտելի ու թշնամական պայքար կմղեն, քան նույնիսկ բուրժուազիայի դեմ, որու հետ հաճախ կգործակցին միևնույն կառավարության մեջ:

Այսպես, օրինակ, Գերմանիո մեջ ընկերվարականները բուրժուական կուսակցությանց հետ համերաշխաբար կվարեն իրենց երկրի բախտը, մինչդեռ կոմունիստներու դեմ կմղեն պայքար մը, որ իր թափով ու կատաղությամբ գրեթե չի տարբերվի միապետականներու դեմ մղված պայքարեն: Ռուսիո մեջ կոմունիստները, իրենց ձեռքն ունենալով իշխանությունը, կսիրաբանին միապետական տարրերու – ցարական զինվորականներու և պաշտոնյաներու հետ, բայց ոչ մեկ միջոցի առջև կուզեն կանգ առնել բնաջնջելու համար ընկերվարական տարրերը: Երրորդ կոմունիստական Միջազգայնականի վերջին համագումարի մեջ, որ տեղի ունեցավ այս տարվա նոյեմբեր ամսին, գրեթե բոլոր ճառախոսներու հիմնական միտքը այն էր, թե զխավոր թշնամին ընկերվարականներն են և անոնց դեմ է որ պետք է պայքարին իրենց ամբողջ ուժով կոմունիստները:

Գրեթե բոլոր եվրոպական երկիրներու մեջ պայքարը կոմունիստներու, ընկերվարականներու և ֆաշիստներու միջև կկրե բացարձակ թշնամության կերպարանք և ոչ միայն չի մեղմանար, այլ հետզհետե ավելի անհաշտելի բնույթ կստանա:

Այսպիսով բանվորության դասակարգային միությունը ոչ միայն միջազգային, այլև ազգային տեսակետով շատ հեռու է իրականութենէ: Կույր դակտրենյորությունը միայն կարող է ստիպել

այս աղաղակող երևույթի պատճառը փնտրել բանվորական զանգվածներու տգիտության մեջ միայն:

X

ԱԶԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ

Ոչ միայն ժամանակակից կոմունիստական, այլև սոցիալիստական աշխարհահայեցողության հիմնական թերությունն այն է, որ ան կբաժնե մարդկությունը դասակարգային գծով միայն, բացարձակապես ժխտելով միաժամանակ կամ անտես առնելով պատմության գլխավոր ստեղծագործ ազդակը, իսկապես օրգանական միավորը ազգությունը:

Եվրոպական գրեթե բոլոր սոցիալիստական իդեոլոգներու (զաղափարաբաններու) մոտ դուք կտեսնեք տարօրինակ, ուղղակի արտառոց անհասկացողություն մը ազգային տարերքի և առհասարակ այն բոլոր երևույթներու մասին, որոնք ազգության էությունը և ազգային կենսունակության աղբյուրը կկազմեն: Անգամ Կարլ Կաուցկին, որ այնքան սուր հոտառություն, հմտություն, նրբամտություն և խորություն երևան կբերե ընկերային-տնտեսագիտական ամեն տեսակի հարցերու մեջ, բացարձակապես կբթանա կարծես, երբ կմտնես ազգային խնդիրներուն:

Ճիշտ է, ազգության էության և առանձնահատկություններու մասին մինչև օրս զիտնականները կվիճին, չկրնալով ամենուն կողմէ ընդունելի ու պարզ սահմանավորում մը տալ: Բայց ոչ ոք կժխտե և կրնա ժխտել աներկբայելի ու ակներև իրողությունը, ազգության գոյությունը:

Ի՞նչն է սակայն, որ կկազմե, կբնորոշե ազգությունը. լեզուն, կրոնը, ցեղային հատկությունները, զիտակցությունը, հայրենի՝ երկիրը, պետությունը, ընդհանուր պատմությունը և ավանդությունները, բարքերը, խառնվածքը, ընդհանուր մտածելակերպը, զգալակերպն ու գործելակերպը և այլն, և այլն...

Եթե վիճելի է, որ այս հատկություններեն մեկը կամ մյուսը, առանձին վերցված, բավական չեն կազմելու և բնորոշելու համար ազգությունը, անվիճելի է սակայն, որ այս բոլոր հատկանիշները

միասին կգոյացնեն այն անհրաժեշտ բանը, որ ակներև կդարձնե ազգության գոյությունը, իբրև ընկերային ուրույն և բարդ միավորի մը, իբրև հասարակական օրգանիզմի մը:

Հասարակական այս բարդ, հաճախ անշոշափելի և շատ նուրբ հատկանիշներով բնորոշվող երևույթը դժվար է վերլուծել ու սահմանավորել: Սակայն ամեն մարդ բնագրով կզգա, թե կա հիմնական և կենսական բան մը, որ կբաժնե անգլիացին ֆրանսացիեն, ֆրանսացին գերմանացիեն, գերմանացին ռուսեն, հայը թուրքեն, և այլն:

Հակառակ բոլոր դասակարգին և աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտական) թեորինքուն (վարդապետություններուն), ազգությունը ամենագորավոր և հաղթական ազդակն է մարդկության ժամանակակից պատմության մեջ: Կրայքայվին հսկա կայսրություններ, կտկարանան մեծ կրոնական համայնքներ, տեղի կունենան պատակտիչ դասակարգային պայքարներ հանուն համաշխարհային նպատակներու, և սակայն ազգությունը ոչ միայն չի տկարանար ու քայքայվիր, այլ, ընդհակառակը, հետզհետե կաճի, կզարգանա, կինքնամփոփվի և կդառնա ամենեն կենսունակ ու ստեղծագործ շարժիչ ուժը քաղաքական կյանքի մեջ:

Անհատի ազատության հետ զուգընթաց՝ մարդկությունը կենթարկվի պարզորոշ բյուրեղացման մը, տարրալուծվելով ըստ ազգությանց:

Ամբողջ աշխարհը կապրի այսօր պատմական հզոր պրոցես մը, որու միջոցով բոլոր ազգությունները անդիմադրելի թափով մը կմղվին դեպի քաղաքական անկախ գոյություն:

Քաղաք-պետությունները, ինչպես նաև կրոնական, աշխարհակալական հիմեր ունեցող պետությունները կքայքայվին և տեղի կուտան միատարր ազգային պետությանց:

Մեկ կողմեն՝ պետությունները կդառնան ազգություններ, և մյուս կողմեն, ազգությունները կդառնան պետություններ:

Զարգացման երկու ճամփաներն ալ կբերեն դեպի ազգության պետական ինքնամփոփումը, կազմակերպումը և մարմնավորումը:

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՐՈՒ ԶԱՐԹՈՆՔԸ

Համամարդկային պատմության մեջ ազգությանց, եթե կարելի է այսպես ըսել, պետականացումը կամ պետությանց ազգայնացումը իսկապես նոր երևույթ է, մանավանդ նոր է, իբրև համատարած երևույթ:

Ազգերու ազատագրական պայքարը ծայր է տված 19-րդ դարու մեջ միայն, ֆրանսական մեծ հեղափոխությունեն հետո:

Որքան ատեն որ ժողովրդական հսկա գանգվածները կապրեին ստրկական կամ ճորտային վիճակի մեջ, որ կպահեր գանոնք անբան ու իրավագուրկ անասուններու մակարդակին վրա, ազգությանց զարգացման ճանապարհները փակված էին: Իտալական վերածնունդը (ռենեսանս), գերման վերանորոգչական շարժումը (ռեֆորմասիոնը), անգլիական և ապա ֆրանսական հեղափոխությունը, ինչպես նաև ամերիկյան ազատագրությունը, աստիճանաբար ժողովուրդներու մեջ պատրաստեցին այն հողը, որու վրա միայն կրնար ծայր տալ և հաջողությամբ ծավալվիլ ազգային ազատագրական շարժումը:

Մեկ կողմեն այդ հողը պատրաստեցին այն հեղափոխական ազատարար գաղափարները, որոնք այնքան խտացած, պերճախոս, ցնցող ու վարակիչ կերպով ձևակերպվեցան ֆրանսական մեծ հեղափոխության միջոցով և տարածվեցան ամբողջ աշխարհի մեջ: Մյուս կողմեն՝ քաղաքական, տնտեսական և ընկերային այն մեծ վերիվայրումները, զորս առջգ բերավ ամեն տեղ կապիտալիստական խոշոր տնտեսությունը ուղղակի կամ անուղղակի կերպով:

Խղճի ազատություն, մասնավոր սեփականության անձեռնմխելիություն, հավասարություն օրենքի առջև, ժողովուրդի վեհապետության գաղափար, անհատի ազատություն և ավատական կապանքներու վերացում, քաղաքացիական իրավունքներ և այլն և այլն, այս բոլոր գաղափարները, կապիտալիստական տնտեսության հարուցած պահանջներու հետ միասին, տարբերայնորեն կմղեին ժողովուրդները դեպի ռամկավարություն, դեպի դեմոկրատիա, դեպի ռամկավարության, դեմոկրատիայի հաղթանակ: Իսկ դեմոկրատական գաղափարներու ազդեցության տակ և ռամկավարական շարժման ծավալման հետ մեկտեղ

անխուսափելիորեն կարթննար ժողովրդական զանգվածներու մեջ ազգային միտքը, կդարբնվիր անոնց մեջ ազգային ազատագրության կամքը և աննկատելի կերպով դեմոկրատիան կնույնանար ազգության հետ:

Չափազանցություն չէ, եթե ըսենք, թե առանց դեմկրատիայի և դեմոկրատական շարժման անկարելի պիտի լիներ նաև ազգությանց ազատագրական զարթոնքը, պայքարը և հաղթանակը: Դեմոկրատիան ազգության գլխավոր հիմքերեն մեկն է, անոոր զարգացման կարևորագույն պայմաններեն մեկը:

Բսկական դեմոկրատիան եղած չէ ոչ հին, ոչ ալ միջին դարերու մեջ: Եվ այդ պատճառով է, որ ազգությանց քաղաքական զարգացումն ալ միայն նոր ժամանակի արդյունք է:

Ոչ մեկ ժամանակ սակայն ազգային շարժումները ունեցած չեն այնքան համատարած, կարելի է ըսել, համաշխարհային ծավալ, աննախընթաց թափ և տիրական ուժ, որքան մեր օրերուն:

Համաեվրոպական վերջին պատերազմը և ռուսական մեծ հեղափոխությունը ցնցեցին ամբողջ աշխարհը, Արևմուտքի և մանավանդ Արևելքի բոլոր ժողովուրդները բոլոր ազգերու ազատ ինքնորոշման նպատակը դնելով իրենց դրոշակին վրա: Թե՛ իմպերիալիստական պետությանց ղեկավարները և թե՛ «համաշխարհային հեղափոխության» առաքյալները, հակառակ որ ներկայացուցիչներ էին երկու ծայրահեղորեն հակամարտ աշխարհահայեցողությանց, նշանակալից ներդաշնակություն մը երևան բերին ազգերու ազատ ինքնորոշման սկզբունքի վերաբերմամբ:

Երկու ծայրերն ալ կմրցեին իրարու հետ իբրև միակ անկեղծ ու անշահախնդիր պաշտպանները տկար ու հետամնաց ազգերու ազատության և անկախության:

Ճիշտ է, իրականությունը տակավին շատ հեռու նվիրագործված գաղափարներեն: Սակայն մեկ բան անհերքելի է և ակներև է վերջին պատերազմի և հեղափոխության հարուցած ներկա տակնուվրայության մեջ – պատմության մեջ աննախընթաց ազգյին զարթոնքը բոլոր ժողովուրդներու:

Ամբողջ աշխարհը շարժման մեջ է, անգամ ամենահետամնաց ազգերը ազատություն կուզեն և ազատության համար կպայքարին: Ոչ միայն Արևելքի հետամնաց ժողովուրդները,

այլև Ափրիկեի սևամորթները հանգիստ չեն այսօր և կձգտին դառնալ ինքնիշխան ու անկախ:

Եվ ոչ թե հանուն ընկերային կամ ընկերվարական համաշխարհային իդեալներու, այլ հանուն ազգային ազատագրության կմղվի այս պահուս ժողովուրդներու պայքարը ամեն տեղ – Արևելք թե Արևմուտք, Հյուսիս թե Հարավ:

Եթե 19-րդ դարու շեմքին, ֆրանսական մեծ հեղափոխության զգայացունց ազդեցության տակ, անհատն էր որ կձգտեր ազատվիլ ամեն տեսակ կապանքներե, այսօր, 20-րդ դարու մեջ, ռուսական մեծ հեղափոխության շրջանին մեջ, ազգությունն է որ ամեն տեղ կպայքարի իր ազատության և անկախության համար, – ազգությունը, իբրև քաղաքական միավոր, իբրև վեհապետության աղբյուր, իբրև ստեղծագործ օրգանական հավաքականություն:

XII

ԱԶԳԵՐՈՒ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Մարդկությունը իրապես կապրի այսօր համաշխարհային հեղափոխության պրոցես մը: Բայց ոչ դասակարգային իմաստով և ոչ համայնատիրական կարգերու ուղղությամբ, ինչպես կհավատացնեն բուլշեիկները:

Կռիվը կապիտալիստներու և պրոլետարիատի միջև չէ, որ կկազմե ներկա շրջանի քաղաքական կյանքի տիրական գիծը, այլ հետամնաց և տկար ժողովուրդներու կռիվն է հանուն ազգային անկախության, որ կներկայացնե գլխավոր առանցքը ներկա հեղափոխական շարժումներուն:

Համաշխարհային հեղափոխության մղիչ ուժը այսօր ազգն է և ոչ դասակարգը, ազգային գաղափարն ու շահը և ոչ ընկերային ու ընկերվարական նպատակները:

Չափազանց հատկանշական երևույթ մը. կոմունիստները, որոնք պրոլետարիատը, իբրև դասակարգ, դարձուցած են պաշտամունքի առարկա և ինքնանպատակ, իսկ դասակարգային պայքարը՝ քաղաքացիական պատերազմ, այսօր ակամա ամենեն ավելի հզոր թափով կշարժեն Արևելքի ժողովրդական զանգվածները դեպի ազգային ազատագրություն:

Ընկերային և ընկերվարական տեսակետով կոմունիստներու գործունեությունը, անկասկած, հետադիմական է, ռեաքսիոն, որովհետև կրանդե տնտեսությունը և ամենուրեք կձգե աշխատանքի արտադրողականության աստիճանը: Մինչդեռ ազգային ազատագրության տեսակետով կոմունիստները Արևելքի մեջ, ընդհանուր առմամբ, հեղափոխական դեր կկատարեն:

Մեկ կողմ դրեք ազգային անկախության համար հասունցած և ազգային անկախության տիրացած ազգությունները, ինչպես, օրինակ, հայերն ու վրացիները, վերցուցե՛ք Արևելքի մյուս ժողովուրդները, ինչպես, օրինակ, ռուսական լուծի տակ ապրող բազմաթիվ մոնղոլական ցեղերն ու ազգությունները, և դուք կտեսնեք, թե որքան մեծ զարկ են տված բոլշևիկները անոնց ազգային ինքնազիտակցության, ինքնամփոփման և քաղաքական կազմակերպման:

Եթե մեզի՝ հայերուս կամ վրացիներու համար ծանր է, անտանելի բոլշևիկյան ռեժիմը, որովհետև բոլշևիկները մեզ գրկեցին կատարյալ ազատութենն ու անկախութենե, սակայն Ռուսիո խորքերուն մեջ ապրող բազմաթիվ այլ ժողովուրդներուն, որոնք ազգային տեսակետով խորը քնի մեջ էին, բոլշևիկները տվին կես-ազատություն մը, որ հնարավորություն կուտա անոնց ազգայնորեն զարգանալ ու հասուննալ իսկական և կատարյալ ազատության համար: Եթե խորհրդային ինքնավարությունը մեզ չի բավարարեր արդեն, կան շատ մը ազգություններ սակայն, որոնց համար այդ տեսակի կիսատ ինքնավարությունն անգամ մեծ առաջադիմություն է:

Անկախ իրենց կամքեն ու հակառակ իրենց նպատակներուն, բոլշևիկները կկազմակերպեն ու առաջ կմղեն Արևելքի այլազան հետամնաց ժողովուրդներու ազգային ազատագրական շարժումը:

Խորհրդային այն բազմաթիվ հանրապետություններն ու ինքնավարությունները, զորս անոնք ստեղծած են Ռուսիո մեջ, կորիզներն են ապագա անկախ պետությանց գոյացման համար:

Նույն ազգային հեղափոխականացնող դերը բոլշևիկները կկատարեն նաև Ռուսիո սահմաններեն դուրս Արևելքի այլևայլ երկիրներու մեջ: Կճառեն համաշխարհային ընկերվարական հեղափոխության անունով, քայց իրոք հետամնաց և տկար ազգերը ոտքի կկանգնեցնեն դրամատիրական մեծ պետությանց դեմ: Կխոսին

պրոլետարիատի անունով, սակայն իրոք ազգերը պայքարի կմղեն հանուն իրենց քաղաքական ազատության:

Ոչ պատերազմը, ոչ ալ հեղափոխությունը (Ռուսիո, Գերմանիո մեջ և այլուր) բաղձալի խաղաղությունը չտվին մարդկության:

Չորս տարվա ջանքերը վերահաստատելու խաղաղությունը ոչ միայն ապարդյուն մնացին, այլ, ընդհակառակը, կարծես ավելի ևս սաստկացուցին ահռելի այն քառսը, որ կտիրե աշխարհի մեջ պատերազմեն ի վեր:

Մարդկության ապրած տագնապը շատ ավելի խորն է և լուրջ, քան այն միջոցները, որ կգործադրվին տագնապը վերացնելու համար: Եվ կարելի է վստահաբար ըսել, թե տևական խաղաղությունը անկարելի պիտի լինի վերականգնել մինչև այն ատեն, երբ վերջին պատերազմի և հեղափոխությանց հետևանքով արթնցած և շարժման մեջ դրված ազգերը, բոլորն ալ, ձեռք չբերեն ազատություն և անկախություն:

Ոչ մեկ ազգություն, ամենահետամնացն ու ամենատկարն անգամ, չի ուզեր այլևս ապրիլ օտարի բռնակալ իշխանության տակ: Ամեն մեկ ազգ կուզե լինել ազատ և ինքնիշխան. ամեն ազգ կուզե իր ազատ կամքով տնօրինել իր բախտը, ուղղել իր կյանքը:

Ինչպես անհատը, այնպես ալ ազգությունը կձգտի իր հարաբերությունները ուրիշ անհատներու և ազգերու հետ հիմնել ազատ համաձայնության և փոխադարձ իրավախոհության բանական հիմունքներու վրա և ոչ թե բռնության և բիրտ ուժի վրա: Տիրապետությունը զենքի, բռնության միջոցով դարձեր է արդեն անհանդուրժելի, ապարդյուն և ապաժամ՝ ոչ միայն անհատներու, այլև ազգությանց համար: Ազատությունը թե անհատներու և թե ազգությանց համար դարձեր է տնտեսական անհրաժեշտություն: Որովհետև արդյունավոր է միմիայն ազատ աշխատանքը:

Եվ, ինչպես որ կապիտալիստական տնտեսությունը իր զարգացման սկզբնական շրջանին մեջ քանդեց ավատական, միջնադարյան բոլոր կապանքները և մաքրեց ճանապարհը անհատի ազատ աշխատանքի համար, այնպես ալ նույն կապիտալիստական տնտեսությունը իր զարգացման ներկա շրջանին մեջ հրամայական անհրաժեշտություն է դարձուցեր բոլոր ազգությանց քաղաքական ազատությունը. որովհետև այլևս անկարելի է զինու զորությամբ

պահել զանոնք հնազանդության մեջ, ինչպես և անկարելի է բռնի ուժով արդյունավոր կերպով շահագործել զանոնք տնտեսապես:

XIII

ԱԶԳԵՐՈՒ ԻՆՔՆԱՍՓՈՓՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Մեր այքին առջև քանդվեցան ու կքանդվին աշխարհակալական հսկա բռնապետություններ, կամ մեկ անգամեն կամ աստիճանաբար վերածվելով իրենց բաղկացուցիչ ազգային տարրերուն:

Այսպես տարրալուծվեցան և տակավին կտարրալուծվին օսմանյան, ռուսական և ավստրիական հզոր կայսրությունները:

Տարբեր ճանապարհով նույն պրոցեսին կենթարկվին ու պիտի ենթարկվին նաև դրամատիքական ամենամեծ պետությունները, որոնք վիթխարի գաղութներ ունին, ինչպես, օրինակ, Անգլիան, Ֆրանսան և այլն:

Անգլիան արդեն հարկադրված է ինքնավարություն և ազատություն տալ իր շարք մը կարևոր գաղութներուն – անգամ Իրլանդային:

Նույն օրինակին, վաղ թե ուշ, պիտի հետևին նաև Ֆրանսան, Ամերիկան, Իտալիան, Հոլանդան և այլն...

Կասկած չկա, որ իմպերիալիստական բոլոր պետություններն ալ, ազգային շարժման անհաղթելի ճնշման տակ տեղի պիտի տան քայլ առ քայլ և պիտի հարկադրվին իրենց հարաբերությունները «գաղութներու» հետ դնել նոր հիմքերու վրա, հաշտվելով անոնց քաղաքական ազատության հետ:

Բոլոր ազգերու ազատագրության պրոցեսը, որ հրաբխային թափով մը պայթած է աշխարհի ամեն կողմ և որու դեմ անգոր են ամենամեծ իմպերիալիստական պետություններն անգամ, երկարատև և ծանր երկունք մըն է մարդկության համար:

Թերևս ամբողջ 20-րդ դարը հազիվ ի վիճակի լինի լուծելու ազգային պրոբլեմը լիովին և ամենուրեք:

Սակայն անվիճելի է, որ գեթ մեր սերունդը պիտի ապրի ազգային ահեղ շարժումներու հարուցած փոթորիկներու մեջ:

Մկսած ամենազարգացած և հզոր ազգություններեն մինչև ամենահետամնաց և տկար ազգերը՝ ամենուրեք զգալի է այսօր ազգային զգացումներու և նպատակներու հարաձուև արտահայտություն մը:

Բոլոր ժողովուրդներու մեջ ազգային տարերքը կենթարկվի աստիճանական բյուրեղացման, գտման, ինքնամփոփման և հաղթական ընթացքով մը կմաքրե իր առջև ճամփաները վաղվա բացարձակ ու անբաժան տիրապետության համար:

Ահա թե ինչու Արևմուտքի մեջ օրեցօր կաճի ու կծավալվի ազգային պահպանողական հզոր հորձանք մը, որ կվերցնե իր ճամփու վրայեն միջազգայնական, աշխարհաքաղաքացիական քայքայիչ ու կեղրոնախույս տարրերն ու ձգտումները և կամրապնդե, կապահովե ազգային գոյության հիմունքները: Անգլիա, Ֆրանսա, Իտալիա կապրին շատոնց չտեսնված ազգայնական վերածնունդ մը, որու դեմ ծիծաղելիորեն անգոր են կոմունիստներու տարտամ ճիգերն ու ցնորքները:

Մինչդեռ բովանդակ Արևելքը կապրի հեղափոխական երկունք մը, որու միջոցով կրոնական անշարժ համայնքներն ու ապազգային զանգվածները կմղվին դեպի ազգային ինքնորոշում և ազատ ու անկախ գոյություն:

Այնտեղ կձգտին պահպանել եղածը, որուն կսպառնա կոմունիզմի քայքայիչ ոգին, այստեղ կձգտին ձեռք բերել ու ապահովել այն, ինչ որ չկար, բայց պետք է լինի անխուսափելիորեն: Որովհետև թե՛ այնտեղ և թե՛ այստեղ ժողովուրդներու կենսունակության և ստեղծագործության աղբյուրը ազգությունն է, անոր ազատությունը և անարգել զարգացումը...

XIV

ՄԵԾ ԶԱՆԻՔԸ

Որքան ավելի զարգացած է ազգ մը կուլտուրապես, տնտեսապես և քաղաքականապես, այնքան ավելի սերտ, անբաժանելի կապերով կապված են անոր ընկերային (սոցիալական) մասերը իրարու հետ, այնքան ավելի հզոր ու ներգործուն (ինտենսիվ) է այդ մասերու ներդաշնակությունը և համագործակցությունը,

այնքան ավելի հստակ, որոշ ու շեշտված գծերով երևան կուգա ազգային զանգվածին ամբողջական պատկերն ու հավաքական անհատականությունը:

Եվ իրավ. Անգլիո, Պելճիքայի, Ֆրանսայի, Գերմանիո և Ամերիկայի մեջ ազգային ներքին համերաշխությունն ու բոլոր դասակարգերու համագործակցությունը անհամեմատ ավելի ներգոր, հաստատուն և ընդարձակ է, քան ավելի հետամնաց երկիրներու, Ռուսիո, Ավստրիո և նույնիսկ Իտալիո մեջ:

Եվ կապիտալիզմի տեսակետով զարգացման ամենեն բարձր աստիճանի հասած ազգերու մեջ դասակարգային պայքարը անհամեմատ ավելի մեղմ ու շինարար բնույթ ունի, քան տնտեսապես ավելի հետընկած ժողովուրդներու մեջ:

Այս բնորոշ երևույթը աչքի կգարներ ոչ միայն պատերազմական շրջանին, այլև այժմ, ավելի խաղաղ օրերուն:

Իրականությունը սակայն ասոր տրամագծորեն հակառակ պատկեր մը պիտի ներկայացներ, եթե ճիշտ ըլլար մարքսյան դասակարգային թեորին, որուն համաձայն կապիտալիստական տնտեսությունը, իր զարգացման հետևանքով, անխուսափելիորեն միշտ ավելի ու ավելի պիտի սրե դասակարգային հակամարտությունները և բաժնե ու երկու անհաշտ, թշնամի բանակներու վերածե ի վերջո ազգային ամբողջական մարմինը:

Մարքսի և Էնգելսի հոշակավոր կոմունիստական մանիֆեստը, որ տեսակ մը ավետարան եղավ բոլոր ընկերվարական կուսակցությանց համար, և հիմքը կազմեց սոցիալիստական ծրագիրներու, բռնազբոսիկ կերպով կդարձներ դասակարգը իբրև ընկերային ինքնամոխի և անջատ միավոր մը, որ իբր թե ի վիճակի է հետապնդել իր ուրույն, առանձին սոցիալական նպատակները՝ բացարձակապես հակառակ ազգային զանգվածի մյուս մասերու կամքին ու շահերուն: Նույն մարքսյան վարդապետությունը, որ իրեն «գիտական սոցիալիզմ» հավակնոտ անունը տվավ, մարդկային բովանդակ պատմության մեջ ուրիշ բան չէր ուզեր տեսնել, բայց եթե միայն դասակարգերու պայքար:

Ցեղերու, ազգերու, կրոններու, քաղաքակրթություններու և անհատներու ձգտումներն ու մաքառումները մարքսիստներու աչքին ուրիշ բան չէին, եթե ոչ դասակարգային պայքարի այլազան արտահայտություններ:

Այս տեսակ գոեհիկ և երևակայական բացատրություններով էր, որ, օրինակ, հայ ժողովրդի ազատագրական պայքարն ալ մարքսյան ուղղափառ հետևորդներուն ներկայացավ իբրև սոսկ դասակարգային կռիվ, — հայ բուրժուազիայի կռիվ... նոր շուկաներ գտնելու համար:

Ուրիշ խոսքով, Մարքսի դասակարգային պայքարի վարդապետությունը, հակառակ ողջամտության տարրական պահանջներուն և անցյալի ու ներկայի աղաղակող փաստերուն, կճգներ ժխտել այն, ինչ որ բնական է և իրական հանուն արհեստական ու վերացական կառուցվածքներու:

Համաշխարհային պատերազմը և անկե բխած հեղափոխությունները հրապարակ բերին դասակարգային տեսակետի այնպիսի տկար կողմերը, որոնք շատ կասկածելի կդարձնեն անոր «գիտական» հիմքը: Շատ ծանր, եթե չըսենք, մահացու հարված մը ստացած այդ տեսակետը իր նախկին գոեհիկ ըմբռնումով կշարունակե սակայն պահպանել իր հմայքը կույր մոլեռանդներու և անուղղելի հավատացյալներու վրա, որոնք ամեն տեսակ սոփեստական մեկնություններով, «մեղմացումներով» և «սահմանափակումներով» կաշխատին փրկել կոմունիստական ավետարանի այդ հիմնաքարը:

Մարքսիզմի ժամանակակից մեծագույն ընկերաբանը՝ Կ. Կաուցկին անգամ, ընկերվարական նոր ծրագիր մը մշակելու պատրվակով, փորձեր կընե այսօր սրբագրելու ընկերվարական ծրագիրները, և այդ փորձերուն մեջ կհարկադրվի հաճախ պաշտպանել իր նախկին ուղղափառ ըմբռնումներուն տրամագծորեն հակառակ գաղափարներ: Սակայն, ինչ որ ամենեն հատկանշական է բոլոր մարքսիստներուն համար, Կ. Կաուցկին վերաքննական իր այդ աշխատանքը դարձյալ կջանա ընել կառչելով իր ուսուցիչ Մարքսի այս կամ այն առիթով, այս կամ այն ժամանակ ըսած խոսքին, և կընե ճիշտ նույն սքոլաստիկ ձևով, ինչպես առաջ, երբ հակառակ միտքեր կպաշտպաներ:

Քրիստոսի ավետարանի պատմությունը կարծես նույնությամբ կկրկնվի Մարքսի ավետարանին հետ: Ով որ ինչ կուզե դուրս կհանե անկե: Ամեն մարդ իր սեփական միտքերը կաշխատի դնել Մարքսի կամ Էնգելսի բերանը: Եվ «գիտական» արկյումաններու պակասը, ինչպես առաջ, այնպես ալ այսօր կշարունակեն լրացնել Մարքսեն և Էնգելսեն առնված մեջբերումները:

Մարքսյան վարդապետությունը ու անոր մոլեռանդ և ուղղափառ քարոզիչները չտեսան ու այսօր ալ գրեթե չեն ուզեր տեսնել հասարակական այն կենդանի մարմինները, որոնք ցեղերու կամ ազգությանց անվան տակ իբրև ընկերային ուրույն անհատականություններ կգարգանան երկրագնդի երեսին և իրենց գոյության, ինքնապաշտպանության ու ինքնորոշման պայքարներով կդարբենեն մարդկության պատմությունը:

Ընդունելով այդ կենդանի մարմիններու միայն մեկ մասը՝ բանվոր դասակարգը իբրև հիմք և միջոց իրենց գաղափարներու իրագործման համար, մարքսիստները արհեստական կերպով ձգտեցին ու կձգտին անջատել, կտրել այդ մասը ազգային ամբողջութենեն ու հակադրել անոր, իբրև թշնամի ուժ մը, և այդպիսով պատակտիչ, քանդիչ ոգի մը մտցուցին ու կմտցնեն ազգերու օրգանական կյանքին ու զարգացման մեջ:

Ազգությունը հռչակվեցավ «բուրժուական» նախապաշարմունք: Ազգությունը նկատվեցավ «չարիք», որ կխանգարե, կդժվարացնե համայն մարդկության միությունը մեկ միաձույլ համաշխարհային ընտանիքի մեջ: Ազգությունը վերածվեցավ լեզուներու կամ կրոններու տարբերությանց միայն, որոնց բազմազանությունը կամ գոյությունը ավելորդ, նույնիսկ վնասակար հայտարարվեցավ:

Ժողովուրդներու կյանքի և զարգացման բարդ և օրգանական երևույթները, որոնք դարերու ստեղծագործության արդյունք էին, ներկայացան մարքսիստ ընկերվարականներու աչքին իբրև մեքենական արտադրություններ տնտեսական «օրենքներու»:

Մարդկության պատմական զարգացման ամբողջ պրոցեսը դարձավ անոնց համար քանի մը պարզունակ ֆորմյուլներու գոեհիկ արտահայտություն: Մեքենայականությունը, որ սկսած էր իշխել տնտեսության մեջ, մարքսիզմի միջոցով ներս թափանցեց նաև ազգերու հոգևոր աշխարհը և սկսեց կիրարկվիլ այնպիսի ճյուղերու մեջ, ուր ան բացարձակապես անտեղի և անհեթեթ էր:

Եվ ոչ միայն քաղաքականությունը, այլև գիտությունը, գեղարվեստը, գրականությունը, կրոնը և այլն ենթարկվեցան տնտեսական «օրենքներու» սանձարձակ տիրապետության: Հոս ալ նույն պարզունակ գոեհիկությամբ մարքսիստ ընկերվարականները աշխատեցան դասակարգային բաժանումներ մտցնել, հայտարարելով գոյություն ունեցող գիտությունը, գեղարվեստը և այլն, իբրև

բուրժուական ստեղծագործություն, և խոստանալով առաջ բերել զուտ պրոլետարական արվեստ ու գիտություն:

Բռնազբոսիկ փաստարկություններով, սքոլաստիկ, միջնադարյան վեճերը հիշեցնող դպրոցական սնամեջ տեսություններով, սոփեստություններով և տառամոլ քաղվածներով առնված Մարքսյան ավետարանեն՝ ուղղափառ մարքսիստները ու անոնց օրինակին հետևող ուրիշ սոցիալիստներ կձգնեին մտցնել իրենց աղբատիկ ֆորմյուլներու անձուկ կաղապարին մեջ ամեն երկիր, ամեն ժողովուրդ, ամեն երևույթ: Անոնք, որ իրենց ուղեղը լեցուցած էին սոցիալիստական «սուրբ» գիրքերու և ծրագիրներու սկզբունքներով ու գաղափարներով, անընդունակ կդառնային տեսնելու իրական կյանքը այնպես, ինչպես որ կա, իր բովանդակ բազմազանության, խորության, բարդության ու մերկության մեջ, այլ կնայեին իրերու և երևույթներու վրա իրենց գիրքերու կամ վերացական սկզբունքներու գունավորյալ ակնոցով: Եվ իրենց երևակայության ու գրքերեն ներշնչված դավանանքներու զորությամբ անոնք կստեղծեին նոր տեսական ու երազական «իրականություն» մը, որ բոլորովին տարբեր էր և հեռու իսկական իրականությունեն:

Այս պատճառով է, որ վերացական սկզբունքները, տեսությունները և աշխարհահայեցողությունները, փոխանակ պարզելու, կմշուշապատեին դաժան ու բիրտ իրականությունը, փոխանակ լուսավորելու կյանքի և գործի ուղիները, մոլորությանց միայն աղբյուր կդառնային: Իրականության առողջ և կենդանի ուժերը կանտեսվեին, կյանքի հրամայական պահանջները կարհամարհվեին. արհեստական արգելքներ կստեղծվեին, արհեստական կոիվներ կհարուցվեին: Եվ հոն, ուր պետք էր համագործակցություն և միություն, կոիվ ու պատակտում կքարոզվեր. իսկ հոն, ուր հրամայականորեն պետք էր կոիվ և զոհողություն, համակերպման և անտարբերության հրավեր կուզար միայն:

Մեր ժողովուրդը կապրեր և մինչև այսօր ալ կապվի նահապետական պայմաններու մեջ, օտար բռնապետական լուծի տակ, որ կսպառնար և կսպառնա անոր գոյության – Թուրքիո մեջ ֆիզիքապես, Ռուսիո մեջ կուլտուրապես: Կենաց և մահու ճակատագրական խնդիրներ էին դրված և այսօր ալ դրված են անոր առջև, որոնց լուծելու համար ամեն առողջ դատողություն և ինքնապաշտպանության առողջ բնագդ պիտի թելադրեին հավաքել, միացնել մեր ժողովրդի բոլոր ուժերը գոյության պայքարի շուրջը, որ

էր միաժամանակ ազգային ինքնապաշտպանության ու ազատության պայքար:

Քաղաքական մեծ իմաստություն պետք չէր ըմբռնելու համար, թե հայությունը, իբրև ազգություն, ամեն բանն առաջ, պետք է դառնա ազատ ու ինքնիշխան, ձգտելով ունենալ իր սեփական տունը իր պատմական հայրենիքին մեջ: Քաղաքական մեծ իմաստություն պետք չէր նաև հասկնալու համար, թե մինչ այդ՝ հայության պայքարը գուտ ազգային-քաղաքական գործ է և ոչ երբեք ընկերային կամ ընկերվարական:

Այս պարզ, տարրական ճշմարտությունները սակայն դարձան կատաղի վեճերու առարկա և տեղի տվին այնպիսի գաղափարներու առջև, որոնք ոչ միայն չէին բխեր մեր իրականությունեն, այլև բացարձակապես հակառակ էին անոր կենդանի ու ստիպողական պահանջներուն:

Դժվար է երևակայել մեր քաղաքական մտքի և ազատագրական պայքարի համար ավելի մեծ չարիք մը, քան այն էր, որ բերավ իր հետ չմարսված ընկերվարությունը իր դասակարգային անտեղի կռվի քարոզով:

Ան պղտորեց ազգային առողջ զգացումը. ան մթնացրեց, մոլորեցրեց ազգային պայծառ գիտակցությունը. ան տկարացրեց ազգային միության բնական կապը. ան ջլատեց, քայքայեց ազգային ուժերը հիմարական պայքարներով ու պառակտումներով. ան շեղեց ազգային ընդհանրության ուշադրությունը դեպի անհարազատ, անիրական ու ցնորական նպատակներ և անկարելի դարձուց մեր ազգի բոլոր տարրերու համագործակցությունը հայության ամենեն կենսական, ամենեն ստիպողական ու անհետաձգելի պահանջներուն համար:

Եթե մեզմե շատ ավելի մեծ, միաձույլ, զորավոր, զարգացած և պաշտպանված ազգերու մեջ ընկերվարական դրոշին տակ մղվող դասակարգային անհաշտ պայքարը ընդունակ եղավ անչափելի ավերներ գործելու, պէ տք է երևակայել, թե ո՞ր աստիճան կործանարար ու քայքայիչ պիտի լիներ անոր ազդեցությունը մեր խեղճ ու փոքրաթիվ, տկար ու անպաշտպան, քաղաքականապես բաժնված ու ցրված հայության վրա, որ հարկադրված էր ու հարկադրված է այսօր ալ գերմարդկային ճիգեր թափել հավաքելու, կազմակերպելու, միացնելու և մարզելու համար իր ուժերը հանուն ինքնապաշտպանության և ազատության:

Դասակարգային պայքարի և ընկերվարության քարոզը մեր դժբախտ իրականության մեջ այնպիսի այլանդակ կերպարանք ստացավ, որ այն, ինչ որ ազգային էր, ծաղրանքի ու արհամարհանքի առարկա դարձավ մեր երիտասարդ մտավորականության համար, մանավանդ Կովկասի մեջ:

Ամեն մարդ, որ առաջադեմ, «ձախ», «ծայրահեղ» ընկերվարական ըլլալու հավակնությունն ուներ, կխորշեր «ազգ» բառն անգամ գործածելէ, այլապես կրնար նկատվիլ իբրև հետադեմ կամ թոյու և այլամերժ ազգայնական մը (նացիոնալիստ):

Անգամ ժողովուրդ խոսքը դարձավ անընդունելի, խորշելի բառ մը:

Փորձ եղավ նույնիսկ բնավ արտաքսել հայ բառարանէն ազգ, ազգություն, ազգային բառերը, իսկ ժողովուրդն ալ գործածել միմիայն աշխատավոր բառի հետ միասին, որպէսզի դասակարգային տեսակետը պահպանված ըլլա սրբությամբ:

Հարկ կար միշտ և ամեն տեղ ցուցադրել, շեշտել դասակարգային այդ տեսակետը, որ գիտեր միայն բանվորություն (կամ աշխատավորություն) ու բուրժուազիա, աշխատանք ու կապիտալ, շահագործվող ու շահագործող և որ ոչ միայն չէր ուզեր տեսնել, այլև կհալածեր ազգություն կամ ժողովուրդ գաղափարները, իբրև միության, համագործակցության և դասակարգային ներդաշնակության արտահայտություններ:

Այս փոքրիկ, ըստ երևույթին, աննշան գծերը իրապէս շատ բնորոշ են մեր մտավորականության մեծ մասի հոգեբանությունը ըմբռնելու համար:

Անոնք թերևս ավելի, քան որևէ ուրիշ բան, երևան կբերեն այն այլանդակ մտայնությունը, որ կոտնահարեր ամեն առողջ դատողություն և իրականության անխառն զգացում:

Ռուսական տիրող ազգի թե՛ իշխանությունը և թե՛ ընդդիմադիր մտավորականությունը տարբեր միջոցներով ու ճանապարհներով կձգտեին ազգայնորեն տարրալուծել հայությունը, տկարացնել, այլասերել մեր ազգային զգացումն ու գիտակցությունը, կասեցնել մեր ազգային ուրույն գոյության ինքնապաշտպանողական միջոցները և ձուլել իրենց ժողովուրդին հետ:

Ռուս կառավարությունը կընէր այդ ոստիկանական և ուրիշ բոնի ճանապարհներով: Իսկ ռուս ընդդիմադիր մտավորականությունը, որ կիշխէր ռուսահայ երիտասարդության

հոգուն մեջ, կրներ իր ապագային և հակագային քարոզներով, որոնց մեջ տիրող էին դասակարգային տեսակետները և աշխարհաքաղաքացիական կամ համառուսական դրոշմ կրող ազգամերժ ընկերվարությունը:

Այդ քարոզները կուգային այնպիսի հմայիչ և վարակիչ եղանակով, որ մեր նորահաս ու երեքուն երիտասարդությունը՝ զուրկ սեփական կուռ ազգային կուլտուրայե՝ գրեթե առանց դիմադրության կյուրացներ զանոնք ու կդառնար ռուսական մտքի գործարանեն դուրս եկած կամ անոր բովեն անցած օտար գաղափարներու մոլեռանդ, կույր հետևորդն ու առաքյալը:

Եվ ռուսականեն շատ ավելի հետամնաց մեր խղճուկ իրականության մեջ այդ գաղափարները կուգային բացարձակապես անհարազատ ու քայքայիչ ուղղություն մը տալու մեր ժողովուրդի քաղաքական պայքարին, շեղելով զայն ազգային ազատագրական շարժման բնական հունեն և մղելով դեպի տարբեր, մեզի համար վտանգավոր ճամփաներ ու երազական նպատակներ:

Ուղղափառ, իսկական ընկերվարական ըլլալու համար տիրող գաղափարախոսությունը անպատճառ պիտի պահանջեր մղել դասակարգային կոիվ: Եվ որովհետև մեր երկրի տնտեսական պայմանները կամ բնավ հասունցած չէին կամ շատ քիչ էին հասունցած մարքսիստական իմաստով դասակարգային կոիվ մղելու համար, ուստի մեր մոլեռանդ սոցիալիստները, ծապլվարյան հոչակավոր հերոսին օրինակով, կիյնային ամեն տեղ արհեստական կոիվներ ստեղծելու ետևեն: Եվ, եթե հաճախ իրենց այդ անիմաստ և բռնազբոսիկ կոիվներու հետևանքով կտկարանային, կքայքայվէին և՛ այն արժեքները, որ ուներ մեր ազգը, կուրացած հավատացյալները կկարծէին, թե այնուամենայնիվ հաղթանակողը իրենց «գաղափարն» է:

Դասակարգային կոչված կոիվը կմղվեր ոչ միայն խղճուկ արհեստանոցներու մեջ, որոնք հազիվ քարշ կուտային իրենց գոությունը մեր դժբախտ երկրի մեջ, այլև դպրոցին և ընտանիքին, կրթական ու բարեգործական, եկեղեցական ու ծխական հաստատություններու մեջ:

Եվ որքան ավելի կատաղի, անհաշտ ու անհեթեթ ըլլար մղված կոիվը, այնքան ավելի պատիվ ունէին զայն հրահրող «հեղափոխական» կամ «ընկերվարական» Փանջունիները:

Ծապլվարը ծաղրանկար մըն է: Բայց դժվար թե որևէ այլ գործ կարենար այնքան հաջողությամբ ներկայացնել մեր մտավորական դասի մեծագույն մասին «ընկերվարական» և «դասակարգային» գործունեության բնորոշ գծերը, որքան անոր հերոսը:

Ավելի կամ նվազ չափով ծապլվարականություն կար, կա և չի կարող չըլլալ «դասակարգային» և «ընկերվարական» պայքար մղող ամեն մեկ հայ գործիչի մեջ, որ գործած է և կգործե մեր երկրի նահապետական պայմաններու մեջ:

Ասիկա անխուսափելի է:

XV

ՍՏՐԿԱԿԱՆ ՕՏԱՐԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ մեկ ժողովուրդ՝ համեմատական չափով վերցված՝ այնքան մեծ, իր գոյությունը վտանգող կորուստներ ունեցավ համաշխարհային պատերազմեն ի վեր, որքան հայ ժողովուրդը: Ոչ մեկ ժողովուրդ այնքան դաժան քաղաքական փորձություններու ենթարկվեցավ, որքան հայությունը: Ոչ մեկ ազգ այնքան ահավոր, ցնցող հուսախաբություններու մատնվեցավ, որքան հայ ազգը: Վերջապես, ոչ մեկ ազգ այսօր կապրի այնպիսի ծանր, խորունկ ու թերևս ճակատագրական ճգնաժամ, ինչպես հայ ազգը:

Հայության գրեթե մեկ երրորդ մասը փճացած է ֆիզիքապես, իսկ մնացած երկու երրորդն ալ, ի բաց առյալ մեկ-երկու փոքրաթիվ գաղութներ, մինչև վերջին աստիճան քայքայված է տնտեսապես:

Այն երկու և կես միլիոն հայութենեն (նվազագույն հաշվով), որ տակավին քարշ կուտա իր գոյությունը աշխարհիս երեսին, առնվազն կես միլիոնե ավելի բազմություն մը տեղահան եղած կթափառի այսօր երկրե երկիր, քաղաքե քաղաք, գյուղե գյուղ, բացարձակապես զուրկ ապրուստի միջոցներե և աշխատանքի հնարավորություններե: Իսկ մնացած երկու միլիոնեն ալ հազիվ միայն տասը տոկոսը տնտեսապես ապահով վիճակ մը ունի:

Հետևաբար, ողջ մնացած հայության ճնշող մեծամասնությունը կապրի այսօր ծայրահեղ չքավորության մեջ և գերմարդկային ճիգեր կթափե գեթ սովեն չկոտորվելու համար:

Ավելի քան երբեք հայ ժողովուրդը իր դժբախտ մնացորդներով պարտավոր է մտածել, ամեն բանե առաջ և ամեն բանե ավելի, իր ֆիզիքական գոյությունը պահպանելու միջոցներու մասին: Ավելի քան երբեք հայության քաղաքական գործը կդառնա պայքար հանուն ինքնապաշտպանության: Ավելի քան երբեք հայ ազգը կենսական կարիք ունի այսօր հավաքվելու, խնամելու, խնայելու, միացնելու իր ուժերը, խուսափելով արկածախնդրական սպառող ու վտանգավոր քայլերի:

Իսկ արկածախնդրական են այն բոլոր քայլերը, որոնք չեն բխիր մեր երկրի և մեր ազգի իրական վիճակեն ու կենսական պահանջներեն, այլ թելադրված են օտար երկիրներու և ժողովուրդներու մեծապես տարբեր պայմաններեն, շահերեն ու գաղափարներեն:

Ուրիշ խոսքով, մեզի համար արկածախնդրական են և մեծապես վնասակար գաղութային տրամադրությունները և մտայնությունները, որոնք, օտար միջավայրերու ծնունդ ըլլալով, կուգան մեր հայրենիքի և ազգի վզին փաթթելու անտեղի և անժամանակ, անհարազատ ու անիրական նպատակներ և ձգտումներ:

Օտար երկիրներու մեջ աշխատանքի և կապիտալի դասակարգային կռիվ կա, պետք է ուրեմն մեր խեղճ երկրի մեջ ևս այդպիսի կռիվ սարքել, — կմտածեն մեր ծապլվարյան սոցիալիստները:

Օտար ժողովուրդներու մեջ հեղափոխական տարրերը «համաշխարհային ընկերվարական հեղափոխության» ցնորքներու ետևե ինկած են, պետք է ուրեմն, որ մեր դժբախտ ժողովուրդն ալ թողու իր կենաց և մահու պայքարը և իր ուժերը սպառե նույն ցնորքներու համար, — կըսեն մեր խելակորույս «մարքսիստները»:

Օտար պետությանց մեջ եկեղեցիի, կրոնի դեմ կռիվ կմղեն, եկեղեցին կբաժնեն պետութենեն, քաղաքացիական ամուսնություն կմտցնեն, ութժամյա աշխատանքի օր կիրականացնեն, գործադուլներ կկազմակերպեն, բանվորներու տիրապետության կձգտին և այլն և այլն, պետք է ուրեմն, որ մենք ալ մեր պետության մեջ նույնը ընենք, — կմտածեն ու կընեն մեր ցնորամիտ «հեղափոխականները»:

Ահա քանի մը թուրքիկ գծերով այն ախտավոր օտարամու մտայնությունը, որ իշխեր է մանավանդ վերջին երկու տասնամյակի ընթացքին մեր մտավոր դասի մեծ մասին մեջ և մղում ու գույն է տվեր անոր քաղաքական գործունեության:

Օտարամուլությունը մեզ մոտ կապկության է հասեր հաճախ:

Բացարձակ ժխտումի և արհամարհանքի են արժանացեր մեր ազգային դարևոր արժեքները, և ընդհակառակը՝ կույր մոլեռանդությամբ յուրացվեր են օտար արժեքներ, գորս ընդունակ չէ եղեր մարսել մեր իրականությունը:

Մեր հասարակական կյանքը և քաղաքական միտքը ծանրաբեռնվեր են դրսեն փոխ առնված գաղափարներով, որոնք հաճախ միայն քայքայիչ դեր են կատարեր, որովհետև կիրարկվեր են առանց նկատի ունենալու մեր երկրի ուրույն պայմաններն ու պահանջները:

Եվրոպայեն առնված առաջավոր գաղափարներուն մեր մտավորականությունը մեծ մասամբ բացարձակ, անվերապահ նշանակություն է տվեր, ունենալով այն միամիտ հավատը, թե այն, ինչ որ լավ է և անհրաժեշտ է օտար ժողովուրդներու համար, անպայման լավ և անհրաժեշտ պիտի ըլլա նաև մեր երկրի և ժողովուրդին համար:

Գրեթե միշտ մեր հեղափոխական մտավորականությունը մոռացության է տվեր, թե եվրոպական կամ ամերիկյան երկիրները, իրենց ներկա բարձր վիճակին հասնելու համար, անցեր են երկար ճամփա մը, որու ամեն մեկ քայլը նվաճեր են անդուլ աշխատանքով, մեծ զոհողություններով և աստիճանաբար:

Մեր առաջադեմ մտավորականությունը գրեթե միշտ չէ կարողացեր կամ չէ կամեցեր ըմբռնել, թե այն, ինչ որ պահպանողական է կամ նույնիսկ հետադիմական է ուրիշ, մեզմե շատ ավելի քաղաքակիրթ ազգերու համար, կրնա առաջադիմական ըլլալ մեր հետամնաց ազգին և երկրին համար:

Մեզի միշտ պակսեր է քննադատական միտքը Եվրոպայի գաղափարական արժեքներուն նկատմամբ, որոնց հանդեպ մենք եղած ենք կույր հիացողներ և ստրկորեն կապկողներ, մինչդեռ միաժամանակ տարօրինակորեն կատաղի քննադատներ ենք եղած մեր ազգային արժեքներու:

Մենք պարզապես ընկճվեր ենք Արևմտյան Եվրոպային կամ Ռուսիային եկած գաղափարներու ճնշող ուժեն: Անոնց հմայքն ու փայլը գերեր են մեզ: Եվ երեխաներու պես վազեր ենք անոնց ետևեն, հաճախ մոռնալով մեր սեփական ցավը:

Մեզի ազգովին պակսեր է միշտ մտքի ինքնուրույնությունը, անկախությունը և քաջությունը:

Ստրուկներու պես վախեցեր ենք շարունակ օտարներու կարծիքեն, ճաշակեն, գնահատութենեն, և անոնց համակրանքը ուզեր ենք շահիլ մեր օտարամոլությամբ և ուրիշներուն նմանվելով:

Ահա թե ինչու գաղափարական սնորհգմը մեր մեջ զարգացեր է այնպես, ինչպես ոչ մեկ ազգի մեջ:

Մեծ մասամբ գաղութներու մեջ հոգեպես սնված մեր մտավորական դասը, որ հեռու է ու կտրված հայրենի միջավայրեն և հաճախ երևակայությամբ կամ աղոտ ու գունավորված հիշողություններով է միայն ծանոթ անոր, տված է և կուտա անօրինակ առատությամբ իմաստակներ, սփեստներ, երագողներ, ռոմանթիկներ, և մտքի ու գործի արկածախնդիրներ, մեկ խոսքով՝ ծապլվարյան հերոսներ, բայց այնքան ողբալիորեն քիչ իրատես ու իրապաշտ, առողջ և ուրույն մտքի տեր մարդիկ:

XVI

ՀԱՅ ՄՏՔԻ ԱՊԻԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկած է ժամանակը, երբ մեր քաղաքական կյանքի և մանավանդ մտածողության մեջ պետք է կատարվի հիմնական վերագնահատում մը մինչև այժմ տիրող գաղափարներու, սկզբունքներու, նշանաբաններու, տեսություններու և ծրագիրներու:

Մեր քաղաքական գործի և մտքի միջև կա վիի մը, որ պետք է վերցնել:

Երեսուն-քառասուն տարվա մեր կազմակերպված ազատագրական պայքարի պատմությունը ցույց կուտա աներկբայելի կերպով, որ մեր քաղաքական բնագոյը հաճախ ավելի առողջ և իրատես է եղած, քան մեր քաղաքական միտքը: Գրեթե միշտ մենք խարխափեր ենք կիսախավարի մեջ, և մեզ առաջնորդողը եղած են ավելի մեր քայլերը, քան մեր տեսությունը: Ինքը գործն է, որ ճամփա է

բացեր մեր մտքին և ուղղություն տվեր մեզի: Մենք ավելի շուտ դեպքերը արձանագրող ենք եղած, քան կանխատեսող և ուղղություն տվող:

Մեր քաղաքական մտքի ապիկարության ամենեն կարկառուն ապացույցը կրնա նկատվիլ Հայաստանի անկախության գաղափարի յուրացման տարապայման և տարօրինակ ուշացումը:

Այն ատեն, - երբ մեր կովկասյան բախտակից հարևան ազգերը, համաշխարհային պատերազմի բռնկումեն ի վեր, գիտակցաբար կ'պատրաստվեին իրենց երկիրներու քաղաքական անկախության համար ու երբ այդ բաղձալի նպատակի իրագործման համար ստեղծվեցան նպաստավոր պայմաններ, հաստատուն և վճռական քայլերով դիմեցին դեպի իրենց կանխատեսած նպատակը, - մենք, հայերս, առանց կուսակցական խտրության, հանկարծակիի եկանք և միայն ճարահատյալ համակերպեցանք մեր կամքեն անկախ կատարված փաստին - Հայաստանի անկախության: Եվ հայկական անկախ պետության մեջ իսկ դեռ երկար ժամանակ չկրցանք մարսել մեր անկախությունը և դարձնել զայն մեր գերագույն քաղաքական նպատակը: Ու միայն 1919 թ. աշնան գումարված Հ. Յ. Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը եկավ վերջապես նվիրագործելու Հայաստանի անկախության գաղափարը:

Իսկ մեր ժողովուրդի լայն խավերը յուրացուցին և գնահատեցին այդ գաղափարը միայն այն ատեն, երբ մենք կորուցինք մեր անկախությունը:

1921 թ. փետրվարյան հոյակապ ապստամբությամբ միայն մեր ժողովուրդը ցույց տվավ, որ դաժան փորձություններե հետո և շատ ծանր գնով վերջապես մինչև իր հոգիի խորքը ներշնչվեր է Հայաստանի ազատության գաղափարով և լիովին գնահատեր է անոր կենսական անհրաժեշտությունը իր գոյության համար:

Դեպքերու ընթացքն էր, որ եղավ թե՛ մեր մտավորականության և թե՛ մեր բովանդակ ժողովուրդին քաղաքական ուսուցիչն ու առաջնորդը, բայց ոչ մեր քաղաքական ղեկավարող տարրի նախօրոք գիտակցված ու թավված սխտեմատիկ աշխատանքը:

Նույնը չէ՛ր արդյոք 1903 թ. Կովկասի մեջ հայ եկեղեցական կալվածներու գրավման ատեն. մինչև որ ժողովուրդը չչարժվեց տարերային պոռթկումներով, հայ ղեկավարներն ալ չորդեգրեցին հակակառավարական շարժումը:

Նույնը չէ՞ր և՛ 1905 թ., հայ-թաթարական ընդհարումներու սկզբին, երբ հայ կազմակերպությունները հանկարծակիի էին եկած և, թաթարական հարձակումները սկսվելէ հետո միայն, ձեռնարկեցին հայկական դիմադրության կազմակերպման գործին:

Այդպէս չէ՞ր արդո՞ր և՛ 1914 թ., համաշխարհային պատերազմի բռնկման պահուն, երբ մեր քաղաքական բոլոր կուսակցությունները իրենց կատարյալ ապիկարությունը ցույց տվին և հարկադրվեցան ամբոխային տրամադրությանց ետևէն վազել:

Չգտնվեցա՞վ և՛ ոչ մէկ հայ կուսակցություն, որ կանխատեսեր գալիք անավոր դեպքերու ընթացքը կամ հավանականությունը և իր քաղաքական ճամփան գծեր այնպիսի ուղղությամբ մը, որով կարելի ըլլար եթէ ոչ արգիլել, գեթ մեղմել, զսպել, սահմանափակել անոնց ավերիչ հետևանքները:

Մեր քաղաքական առաջնորդության – շատ աննշան բացառություններով – մտածողությունը այն ճակատագրական օրերուն ոչինչով չտարբերվեցավ հայկական խուժանի մտածողութենէն:

Հ. Յ. Դաշնակցության 8-րդ (Էրզրումի) ընդհանուր ժողովի պատասխանը մեր ժողովրդի առջև դրված կենաց և մահու խնդիրներուն բավականին անորոշ, տարտամ ու սոսկ ձևական բանաձև մըն էր, որ կոչված էր լոյալության քողին տակ ծածկելու ամբոխային տրամադրությունները և օրինատացիան: Ատիկա միամիտ փորձ մըն էր ծածկելու մեր գլուխը թշնամիէն, երբ մեր ամբողջ մարմինը այնքան զրգոյիչ կերպով ցուցադրված էր անոր առջև:

Կարելի է և՛ շատ մը ուրիշ պերճախոս օրինակներ բերել մեր անցյալէն, բայց այսքանն ալ, կկարծենք, բավական է, պարզելու համար մեր միտքը:

Մեկ խոսքով, հայ քաղաքական կուսակցությունները, առանց բացառության, պատմական բախտորոշ շրջաններու մեջ գրեթէ միշտ անկարող են եղած կատարելու առաջնորդողի, ղեկավարողի իրենց բարձր կոչումը, չեն կախատեսեր գալիք դեպքերը, չեն պատրաստվեր և պատրաստեր ժողովուրդը նվազագույն զոհողություններով զանոնք դիմագրավելու համար և՛ հանկարծակիի եկած փաստորեն որդեգրեր են այն, ինչ որ պարտադրեր է հայ ամբոխը, փողոցը, ու վազեր են միայն դեպքերու ետևէն և ոչ առաջէն:

ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Ինչպէս կենդանական աշխարհի, այնպէս ալ մարդկային հասարակության մեջ, անհատները կամ տեսակները անողոք կոիվ կմղեն իրարու դէմ, ունենալով երկու գլխավոր ձգտում.– Ա) Ինքնապաշտպանություն՝ բառիս նեղ իմաստով, և Բ) Ինքնապաշտպանություն՝ բառիս լայն իմաստով, այսինքն՝ սերունդի պահպանում, աճում:

Ընկերային այն բարդ մարմինները, որոնք ազգ կկոչվին, ենթակա են գոյության պայքարի նույն անհեղյի օրենքներուն, ինչ որ և սոսկական անհատները կամ կենդանիները: Ազգ մը գոյության կատարի պայքարով նույնպէս կձգտի Ա) պահպանել ինքզինքը ներկայի մեջ և Բ) պահպանել ինքզինքը ապագայի համար, ջանալով ապահովել իրեն աճելու, զարգանալու, ծավալվելու պայմաններ:

Ազգերու գոյության պայքարը տեղի կունենա անդադար, բացահայտ կամ քողարկված ձևերով, խաղաղ կամ արյունահեղ միջոցներով: Պատերազմները գոյության այդ պայքարի եղանակներէն մեկն են, թէն անոր ամենէն նախնական, ամենէն բարբարոս եղանակը:

Սոցիալիստ ընկերաբանները, մասնավորապէս մարքսիստները կուզեն բացատրել բոլոր պատերազմները դարձյալ միայն դասակարգերու հակամարտությամբ ու բախումով: Մինչդեռ պատմական իրականությունը հոս ալ համապատասխան չէ այդ «դասակարգային» ըմբռնումին, որովհետև պատերազմներու ատեն հակամարտ դասակարգերը հաճախ, եթէ չըսենք՝ միշտ, կկոչվին կողք կողքի, միացած ճակատով մը ընդդէմ բանակի մը, որու մեջ նույնպէս կանգնած են կողք կողքի հակամարտ դասակարգային շահեր ներկայացնող տարրեր:

Որքան ալ մարքսիստները իրենց կեղծ գիտական թեորիններով ու բռնագրոսիկ պատճառաբանություններով ճգնին ապացուցանել ասոր ճիշտ հակառակը, այնուամենայնիվ չպիտի կարենան փոխել պատմական դեպքերու իրական պատկերը, որ աղաղակող փաստերով կըսէ մեզի, թէ պատերազմողները (բացի ներքին հեղափոխություններէ ու հեղափոխական շրջաններէ) գրեթէ միշտ ազգերն ու ժողովուրդներն են և ոչ թէ դասակարգերը:

Իբրև լավագույն թարմ օրինակ կրնա ծառայել վերջին մեծ պատերազմը, որ, հակառակ մարքսիստական բոլոր սոփեստություններուն, ազգերու և ոչ թե դասակարգերու բախում մըն էր:

Գերման ազգությունը (և ոչ գերման աշխարհակալ բուրժուազին միայն) իր աճման ու զարգացման հետևանքով հասած էր այնպիսի վիճակի մը, որու շնորհիվ գերման պետության սահմանները երկաթե օղակի մը պես նեղ կուգային իրեն. ավելի ազատ շունչ քաշելու, ավելի ևս աճելու ու զարգանալու հնարավորություն ստեղծելու համար՝ ան կենսական պետք ուներ ջարդելու զինքը շրջապատող ու խեղդել պատնեացող երկաթե օղակը:

Եթե վերցնենք այժմ պատերազմի անմիջական պատճառ եղող Ավստրիան, պիտի տեսնենք հետևյալը.— Ավստրիական կայսրության մեջ ապրող այլևայլ ազգությանց հակամարտությունները, անոնց զարգացման հետևանքով, այնպիսի սուր ու սպառնական կերպարանք էին ստացած, որ պետական իշխանությունը, պատերազմեն բացի, ուրիշ ելք մը չէր գտներ դրսեն զանոնք զրգող ուժերը սանձելու կամ «պատժելու» համար: Մերպիտ և, եթե պետք ըլլար, նաև Ռուսիո դեմ հաղթական կոչիվ մը մղելով, Ավստրիա հույս ուներ, թե պիտի կարենար ապահովել իր պետական ամբողջությունը ներքին պայթումէ և տարրալուծումէ:

Համենայն դեպս, եթե խորը քննելու ըլլանք, կտեսնենք, որ բոլոր պատերազմող ազգերու պաշտպանած հիմնական շահերը համազգային բնույթ ունենին և ոչ նեղ դասակարգային: Ատով պետք է բացատրել պատերազմի ժողովրդականությունը և զանգվածներու խանդավառ անձնվիրությունը:

Պատակարգային բնույթ չունենին ոչ միայն պատերազմի պատճառներն ու պատերազմողներու շահերը, այլև պատերազմի ընթացքը: Պատերազմողներու մեջ համակրանքն ու հակակրանքը, բարեկամությունն ու թշնամությունը կորոշվեին ու կշեռվեին գերազանցապես ոչ թե ըստ դասակարգերու, այլ ըստ ազգերու: Որովհետև պատերազմական բեմի վրա գլխավոր դերակատարները ազգերն էին միայն. տիրող ազգերը կձգտեին պահպանել իրենց տիրապետող դիրքն ու առանձնաշնորհումները. ճնշված ազգերը կձգտեին ազատ և ինքնիշխան դառնալ. իրենց գոյության մեջ վտանգված ազգերը կենաց և մահու պայքար կմղեին ապահովելու համար գեթ իրենց գոյությունը: Մեկ խոսքով, թե՛ տիրող, թե՛ ճնշված,

թե մեծ և թե փոքր, թե զարգացած, թե հետադեմ ազգերը կկովեին, ամեն բանէ առաջ և ամեն բանէ ավելի, ազգային նպատակներու համար և ազգային կենսական պահանջներէ մղված:

Այդ նպատակներն ու պահանջները կարելի է ամփոփել մեկ խոսքի մեջ, որ է ինքնապաշտպանություն՝ բառիս թե նեղ և թե ամենալայն իմաստով:

Ինչպես անհատներու, այնպես ալ ազգերու կյանքի մեջ, անոնց զարգացման ներքին պատճառներով թե արտաքին պայմաններու հարկին տակ, կուգան շրջաններ, երբ և՛ անհատներու, և՛ ազգերու ինքնապաշտպանության լավագույն, իսկ երբեմն նաև միակ միջոցը կդառնա ազատությունը,— քաղաքական ու տնտեսական:

Եվ կարելի է իբրև ընդհանուր օրենք նկատել այն երևույթը, որ ինչքան ավելի բարձր է ամեն տեսակետով հասարակական միջավայրը, ուր տեղի կունենա անհատի կամ ազգի գոյության պայքարը, այնքան ավելի հրամայական ու կենսական անհրաժեշտություն կդառնա ազատությունը: Եվ ընդհակառակը՝ ավելի հետամնաց միջավայրի մեջ ինչպես անհատը, այնպես ալ ազգը ավելի դյուրությամբ կրնան իրենց գոյությունը քարշ տալ՝ առանց ազատության: Օրինակ, հետամնաց Արևելքի մեջ ճնշված ազգությունները, հակառակ տիրող բարբարոս ռեժիմին, դարեր շարունակ կրցած են պահել իրենց ուրույն, ինքնամփոփ գոյությունը, մինչդեռ ավելի զարգացած Արևմուտքի մեջ ձուլումը տիրող ազգի հետ հաճախ կատարվեր է և կկատարվի քանի մը սերունդներու ընթացքին, հակառակ որ հոս կբացակային Արևելքի բարբարոս հալածանքները:

Արևելքի ճնշված ազգերու պահպանման գործին մեջ, բացի տիրող ազգի հետամնաց կուլտուրայեն, որ հաճախ ավելի բարձր չէ եղած (երբեմն նույնիսկ ավելի ցածր) ճնշված ազգերու մշակույթեն, բախտորոշ դեր է կատարեր այն հանգամանքը, որ պետական իշխանությունը չէ ունեցեր զուտ ազգային հիմունքներ և նպատակներ, այլ կրոնական:

Արևելքի բոլոր աշխարհակազ բազմացեղ պետությունները եղած են գերազանցապես թեոկրատիկ, այսինքն՝ կրոնական գաղափարով ներշնչված պետություններ: Պետական իշխանությունը իր խայտարդետ հպատակ ժողովուրդները կճանչնար ու կզանազաներ կրոնով միայն, բայց ոչ երբեք ազգությամբ. իր

հալածանքն ալ կուղղեր կրոնի և ոչ ազգության դեմ: Արևելքի աշխարհակալ և թեոկրատիկ պետությունները, ինչպես էին, օրինակ, ցարական Ռուսիան և օսմանյան կայսրությունը, անպատեհություն կամ վտանգ կտեսնեին ոչ թե բազմազան հպատակ ազգերու գոյության մեջ, այլ իրենց ենթակա ժողովուրդի կրոնական տարբերությանց մեջ:

Միաժամանակ, ըլլալով բոնապետություններ, արևելյան այդ պետությունները ամեն բանե ավելի կգնահատեին ու կփնտրեին իրենց հպատակներու մեջ հլու հնազանդություն: Այդ «առաքինությունը» ինքնին ինքնապաշտպանության մեծ զենք մըն էր, երկար ժամանակ թերևս միակ հարմարագույն զենքը ճնշված ու տկար ազգերու ձեռքին:

Սակայն իրենց ներքին զարգացման հետևանքով ու պատերազմներու և հեղափոխությանց միջոցով արևելյան բազմացեղ պետություններն ևս, արևմտյան պետությանց նման, կմղվեին ու կմղվին դառնալու գերազանցապես ազգային պետություններ և հրաժարվելու իրենց մինչայժմյան ապագային և կրոնական հիմքերեն ու նպատակներեն:

Բոլոր պետությանց ազգայնացման այդ պրոցեսը, որու մասին խոսեցինք նախորդ գլուխներեն մեկուն մեջ, երկաթե անհրաժեշտությամբ ուժ կուտա մեկ ուրիշ պրոցեսի, որ է բոլոր ազգերու, եթե կարելի է այսպես ըսել, պետականացումը: Ուրիշ խոսքով, այն հանգամանքը, որ բոլոր պետությունները միշտ ավելի ու ավելի ներգործ թափով կազգայնանան, կստիպե, որ ճնշված ազգերն ալ, ամեն գնով ձգտին սեփական պետություն կազմել:

Ռամկավարական շարժման զարգացումի ու հաղթանակի հետևանքով ամենուրեք ազգն է, որ կդառնա պետության տերը և պետական իշխանության աղբյուրը: Իսկ սեփական պետությունը ազգի մը ազատության, անկախության և ինքնիշխանության գերագույն մարմնացումն է: Առանց սեփական պետության ոչ մեկ ազգ կրնա ապահովված նկատել իր գոյությունը և բնականոն զարգացումը: Որովհետև միմիայն սեփական պետության մեջ ազգ մը կրնա ապրիլ ու զարգանալ ազատ ու ինքնիշխան կերպով: Որովհետև միմիայն սեփական պետությունը կրնա տալ ազգին քաղաքական, կուլտուրական և տնտեսական ապահովություն:

Եվ զարմանալի չէ, որ տիրող ազգերը, որքան ավելի կզարգանան, այնքան ավելի հետևողական և անզուսպ կերպով

կձգտին ամբողջովին յուրացնել պետական մեքենան և ծառայեցնել զայն միմիայն իրենց ազգային նպատակներուն, միանգամայն վտանգելով հպատակ ազգերու գոյությունը:

Ջարմանալի չէ նույնպես և շատ բնական է, որ ճնշված, ուրիշներուն հպատակ ազգերն ալ, իրենց հերթին, կձգտին ազատվիլ օտար ազգերու լուծեն և ստեղծել սեփական պետություններ՝ ապահովելու համար իրենց ուրույն գոյությունը, որ հետզհետե միշտ ավելի ու ավելի կվտանգվի օտար պետությանց մեջ:

Այս հողի վրա ծագած՝ ճնշված ազգերու ազատագրական պայքարը տիրող ազգերու դեմ ավելի ևս կարե ճնշվածներու և տիրողներու հակամարտությունը, որով առաջիններու վիճակը ավելի ևս կծանրանա և ազատագրությունը օտարներու լուծեն անխուսափելիորեն կդառնա կենաց և մահու խնդիր:

XVIII

ՌՈՒՍԻՈՒ ԵՎ ԹՈՒՐԿԻՈՒ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակներու և մանավանդ վերջին տարիներու ընթացքին տեղի ունեցած պատերազմներու և հեղափոխությանց հետևանքով, որոնք իրենց հերթին արդյունք էին թե՛ տիրող և թե՛ հպատակ ազգերու ներքին զարգացման ու գոյության պայքարին, այսօր հիմնապես փոխված կերպարանքով մը մեզի կներկայանան Արևելքի այն երկու աշխարհակալ պետությունները, որոնցմե կախված է գերազանցապես հայ ազգի բախտը:

Թեև տրամագծորեն հակառակ ճանապարհներով, թե՛ Ռուսիա և թե՛ Թուրքիա դադրած են թեոկրատիկ (կրոնական) պետություններ ըլլալէ և ակներևորեն կդառնան շեշտված ազգային պետություններ:

Թուրքիա տիրաբար կամփոփվի իր ազգային տարերքին մեջ և, ազատվելով օտար ցեղերեն, բացարձակապես կձգտի դառնալ համայն թրքությունը հավաքող ակտիվ ուժ մը:

Մինչ օսմանյան կայսրությունը պետություն մըն էր, որու միայն շատ չնչին մասը կկազմեին բուն թուրքերը (հազիվ 5-6 միլիոն), իսկ բնակչության ահագին մեծամասնությունը բաղկացած էր օտար

ցեղերե, այսօրվան Թուրքիան արդեն ազգային պետություն է ոչ միայն իր քաղաքական գաղափարներով ու նպատակներով, այլև իր ժողովրդական կազմվածքով: Սակայն, այսօր ալ թուրք ազգի միայն մեկ փոքրիկ մասը ամփոփված է Թուրքիո պետական սահմաններուն մեջ. մեծագույն մասը կապրի տակավին օտար (ռուսական) լուծի տակ կամ անկախ: Տարակույս չկա, որ ազգայնական Թուրքիան տոգորված համաթուրանական (կամ համաթրքական) գաղափարով պիտի ձգտի ասկե ետքը միացնել իրեն թուրքական բոլոր երկիրները մեկ ընդհանուր ազգային պետության մեջ: Թուրքիո շարժիչ ուժը և ինքնանպատակը կդառնա թուրքի ազգի միությունը թե՛ ֆիզիքապես, թե՛ գաղափարապես: Այդպիսի պետության մը համար իսլամական կրոնը կամ համիսլամական գաղափարը բնականաբար այսուհետև կրնա ըլլալ միայն միջոց՝ ազգային նպատակի իրագործման ճամփուն վրա:

Ազգայնական պետություն մը դառնալու վրա է նաև Ռուսիան, որ ցարիզմի տապալումէն ետքը ոչ միայն արդեն կորսնցուցեր է շարք մը հպատակ ազգություններ, այլև հեղափոխության ու պատերազմի հետևանքով ամհասարակ ենթարկվել է իր բոլոր բաղկացուցիչ ազգային տարրերուն միջև բաժնվելու վտանգին:

Ճիշտ է, ռուս ժողովրդի ազգայնական զգացումներու աննախընթաց արթնացումը և ընդդիմությունը ժամանակի մը համար կասեցուցեր է այդ վտանգը: Սակայն կարելի չէ կասկածիլ, որ Ռուսիո լուծի տակ մնացած հպատակ ազգերու ազատագրական պայքարը օր մը նորեն պիտի դուրս գա իր ներկա կարողական (potential) վիճակէն՝ զանոնք ևս անկախ ու ինքնիշխան դարձնելու համար: Տիրող ռուս ազգի դեմ ուղղված և ուղղվելիք այդ պայքարը այնքան ավելի սուր և ներգոր բնույթ պիտի ստանա անխուսափելիորեն, որքան ավելի շեշտված կերպով գործեն ռուս ազգային տարամերժ ոգին ու ձգտումները:

Բոլշևիզմի տիրապետության այս օրերուն թերևս շատերուն տարօրինակ թվի, եթե ըսենք, որ ոչ մեկ ատեն Ռուսիո մեջ այնքան արթուն և զորավոր է եղած ռուս ազգայնական բնագոր ու կամքը, որքան այժմ: Անգամ ռուս մտավորական դասը, որ առաջ այնքան աչքի կիյնար իր ապազգային ու աշխարհաքաղաքացիական գաղափարաբանությամբ, այսօր ներշնչված է ռուս ազգայնական նեղ,

այլամերժ ոգիով ու մղումներով: Նույնիսկ ռուսական ծագում ունեցող բոլշևիկները ազատ չեն ռուս ազգայնական հզոր ձգտումներէ:

Ասկե քանի մը շաբաթ առաջ ռուս հայտնի պրոֆեսորներէն մեկը, Պ. Սորոկին, որ նոր է միայն թողուցած Ռուսիո սահմանները, արտասահման հրատարակվող ռուսական կարևոր թերթի մը («Դնի») մեջ տպած էր շատ ուշագրավ հոդված մը, որով փորձ կընէր նկարագրելու և բնորոշելու ռուս ժողովրդի հոգեբանության մեջ կատարված հիմնական փոփոխությունները: Պ. Սորոկին կըսէր, թե ռուս ժողովրդի բոլոր խավերուն մեջ ոչ միայն աննախընթաց կերպով ուժեղացած է ռուս ազգայնական ոգին, այլև արթնցած է ընդհանուր տարերային ատելություն մը դեպի բոլոր օտար ազգերը:

Ռուսիո ներքին կյանքին լավ ծանոթ անձնավորությանց բազմաթիվ վկայությունները գրեթե միաբերան կհաստատեն պրոֆ. Սորոկինի հայտնած կարծիքները:

շետաքրքրական է, որ նույնիսկ այն ռուս վկաները, որոնք կըողոքեն այսօր պրոֆ. Սորոկինի «վարկաբեկիչ» բնորոշման դեմ, ուրիշ բան չեն ընէր, բայց եթե անգիտակցորեն իրենց իսկ օրինակով կապացուցեն պրոֆ. Սորոկինի մտքերը:

Այսպես, օրինակ, ռուս հայտնի հրապարակագիր Մ. Օսորգինը, որ պրոֆ. Սորոկինի խոսքերը ռուս ժողովրդի և մտավորականության մասին կհամարէ վրդովեցուցիչ գրպարտություն մը, ապշեցուցիչ միամտությունն ունի պնդելու, թե ռուս ժողովուրդը ոչ միայն չի ատեր օտար ազգությունները, ոչ միայն զուրկ է ազգայնական ոգիէ անոնց հանդէպ, այլև կձգտի ձուլել զանոնք իր մեջ: Ուրեմն, ռուսները այնքան կսիրեն եղեր իրենց հպատակ ազգերը, որ կուզեն նույնիսկ ձուլել զանոնք ռուս ժողովուրդին հետ:

Եվ Պ. Մ. Օսորգինի կարծիքով, ասիկա նեղ և օտարակեր ազգայնականություն չէ, այլ ամենաբարձր տեսակի իդեալիզմ:

Բայց տարակույս չկա, որ նույն ռուս ազատասեր մտավորականը սրբազան բարկությանբ պիտի լեցվեր ու «ժայրահեղ ազգայնականություն» խոսքով պիտի նշավակեր օտար ազգությունները, եթե տեսներ, որ անոնք կձգտին ձուլել իրենց հետ ռուս ազգի այս կամ այն հատվածները:

Այսպես են ամենէն գաղափարական և «ոչ ազգայնական» ռուս մտավորականները: Պէ տք է երևակայել ուրեմն, թե ի նչ են մյուս ռուսները:

Արժե պարզել ռուս ազգի ու պետության իրական դեմքը, որովհետև ավելի քան երբեք ան աղավաղված ու քողարկված է այսօր աշխարհաքաղաքացիական կեղծ գաղափարաբանությամբ: Կոմունիզմի դիմակին տակ Ռուսիո մեջ կզարգանա ծայրահեղորեն ազգայնական իշխանություն մը, որ արդեն կպատրաստվի իր դիմակը մեկ կողմ նետել և ներկայանալ աշխարհին իր ազգայնական բովանդակ մերկությամբ: Բոլոր անոնք, որ մոտեն կճանչնան այսօրվան Ռուսիան, չեն կրնար չխոստովանիլ, թե ազգայնական զգացումի, գիտակցության և ձգտումներու այնպիսի հզոր հորձանք մը կողողեն ներկայիս ռուսական աշխարհը, որ ռուս ժողովուրդը կնդե դեպի օտարատյացություն և օտարակերություն,– բան մը, որ միայն կվտանգե բոլոր հպատակ ու տկար ազգերու գոյությունը և զարգացումը Ռուսիո մեջ:

Հակառակ տիրող կոմունիստական և ապազգային գաղափարականության, ռուսական ներկա բոլշևիկ իշխանությունը, ուրիշ բան մը չի ըներ, բայց եթե գերազանցապես ռուս ազգայնական գործ մը: Հեղափոխության ու պատերազմի հետևանքով բաժնված և անդամահատված Ռուսիան ան կձգտի նորեն հավաքել և միացնել, իրեն նպատակ դնելով ցարական Ռուսիո սահմաններու վերականգնումը: Ուր կարելի է գործել բռնությամբ, ան չի վարանիր զենքով միացնել ռուս պետության հետ՝ անկե անջատված օտար հողամասերը. ուր կարելի է գործել խարերայությամբ, կաշառքներով ու կեղծիքով, ան կհասնի իր նպատակին «գաղափարական» միջոցներով. ուր վերջապես այդ միջոցներեն և՛ ոչ մեկը կարելի է տակավին այսօր կիրառել, ան կպատրաստվի և կսպասե համբերությամբ հարմար վայրկյանին, երբ հնարավոր կդառնա նորեն համարձակորեն հարձակվել և հափշտակել՝ վերականգնելու համար ցարական օրերու կացությունը:

Մեր աչքին առջև, հազիվ ամիս մը առաջ, կեղծուպատիր պատրվակներով բոլշևիկները մեջտեղեն վերցուցին «անկախ» խորհրդային հանրապետությունները և ձուլեցին «զանոնք» մեկ և անբաժան Ռուսիո մեջ: Անոնք կհանդուրժեն արդեն միմիայն տեղական խաբուսիկ ինքնավարություններ, բայց տարակույս չկա, որ վաղը, հարմար ատենին, այդ ալ ավելորդ պիտի գտնեն ի փառս «մեկ և անբաժան Ռուսիո»:

Ռուս բռնակալ ոգին կձգտի նորեն տիրապետել ցարական Ռուսիո բոլոր հողամասերու վրա և՛ խրատված անցյալի դառն դասեն՝

անկասկած պիտի փորձե խեղդել հպատակ տկար ազգերու ազատագրական ձգտումները այնպիսի «կատարելագործված» միջոցներով, որոնց մասին երազել անգամ չէր կարող ցարական կառավարությունը: Ինչպես Թուրքիո մեջ, երիտասարդ «առաջդիմասեր» թուրքերը գերազանցեցին կարմիր սուլթան Համիտի ռեժիմը, այնպես էլ Ռուսիո մեջ ցարական բռնապետությունը մոռցնել տված են արդեն և դեռ ալ ավելի պիտի մոռցնել տան «հեղափոխական» նոր ռուսները, որոնք թուրքերուն պես այլամերժ մոնղոլական մտայնություն մը ունին հանդեպ տկար և հպատակ ժողովուրդներուն:

Եվ, մինչ տիրող ազգերը Ռուսիո և Թուրքիո մեջ, քանդելով իրենց կրոնապետությունները, ազգային հիմերու վրա կդնեն իրենց իշխանությունը, անոնց հպատակ ազգերը կձգտին, ավելի քան երբեք, ազատվիլ օտար պետական մեքենայի խեղդող ճնշումեն և ստեղծել իրենց սեփական պետությունը կամ գեթ ներքնապես ինքնավար կյանք մը:

Վերջին պատերազմի և հեղափոխությանց ատեն այդ հպատակ ազգերը բախտավոր առիթներ ունեցան ձեռք բերելու քաղաքական ազատություն և անկախություն. անոնք վայելեցին ազգային ինքնորոշման և ինքնակառավարման բարիքները. անոնք շնչեցին սեփական հայրենիքի ազատ օդը և անոր մղած պայքարներու ընթացքին զարգացան քաղաքականապես ու հասունցան ինքնիշխան գոյության համար:

Այդ ազգերը այլևս այն չեն, ինչ որ էին ցարերու և սուլթաններու օրով: Անոնց փոխված ընկերային մարմինները այլևս չեն կրնար դյուրությամբ մտնել օտարի նախկին անձուկ կաղապարներուն մեջ. ազատության քաղցրությունը ճաշակած անոնց ոգին այլևս չի կրնար հարատևորեն հանդուրժել օտարի խեղդող լուծը: Ուզեն թե չուզեն, անոնք պիտի պայքարին իրենց ազատության համար, որ շնորհիվ տիրող ազգերու անխուսափելիորեն աճող ծանր ճնշումին ու հալածանքին, կդառնա արդեն իսկապես գոյության պայքար:

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Երկու և կես տարի սեփական անկախ պետություն մը ունենալէ ետքը, հայ ժողովուրդը այսօր նորէն հարկադրված է ապրիլ օտար – ռուսական և թուրքական – լուծի տակ:

Պարզ է, որ այդ լուծը այսուհետև ամեն տեսակետով շատ ավելի ծանր պիտի զա հայության, քան էր պատերազմէն առաջ: Մեկ կողմէն, ինչպէս ըսինք, ռուս և թուրք ազգերը բռնված են օտարակերության այնպիսի մոլուցքով մը, որ աննախընթաց է իր թափով ու ծավալով. մյուս կողմէն, անոնց հպատակ փոքրիկ ազգությունները, ավելի հասունցած ու կազմակերպված ըլլալով քաղաքական ազատ կյանքի համար, այլևս չեն կարող առաջվա պէս հանդարտ ու հնազանդ վերաբերում մը հրապարակ բերել հանդէպ տիրող օտար իշխանությանց և անխուսափելի կերպով կմղվին դեպի ավելի ուժեղ դիմադրություն ու պայքար օտար լուծի դէմ:

Իրերու երկաթէ տրամաբանությամբ պայքարը տիրող և հպատակ ազգերու միջև օր ըստ օրէ ավելի խորունկ, ավելի սուր, ավելի կատաղի ու անհաշտ բնույթ պիտի ստանա, քան եղած է մինչև այսօր: Երկուսէն մեկը. կամ հպատակ ազգերը պիտի փճանան, ձուլվին, տարրալուծվին տիրող ազգի մեջ. կամ պիտի ազատվին ի վերջո տիրող ազգի լուծէն, անջատվին օտար պետութենէն և դառնան անկախ ու ինքնիշխան:

Անդառնալիորէն անցած են արդէն այն երանելի ժամանակները, երբ մեր պապերը, նույնիսկ հայրերը, հավաքվելով իրենց եկեղեցիներու շուրջը և ամփոփվելով կրոնական համայնքներու մեջ, ապաքաղաքական տրամադրությամբ մը կարող էին պահպանել իրենց ազգային առանձնահատկությունները և ուրույն գոյությունը:

Եկեղեցին կամ կրոնը, իբրև միջոց հպատակ ազգերու ազգային ուրույն գոյությունը պահպանելու, արդէն անհանդուրժելի է դարձած տիրող ազգերու իշխանությանց համար թե՛ Թուրքիո և թե՛ Ռուսիո մեջ: Եկեղեցիի իրավունքները կսահմանափակվին այդ երկու պետությանց մեջ ալ: Եկեղեցիէն կխլվին քաղաքական, ազգային և վարչական իրավունքները, որոնք նվիրագործված են դարերու ավանդությամբ: Իշխող ձգտումն է եկեղեցիին թողուլ միայն զուտ

կրոնական պետքերու հոգացողությունը, որով ան մեկ կողմէն, կզրկվի հպատակ ազգին ծառայելու իր պատմական միջոցներէն և, մյուս կողմէն, անվնաս կդառնա տիրող ազգի համար և նույնիսկ որոշ պայմաններու մեջ կրնա մեծապէս դյուրացնել տիրող ազգի քաղաքական նպատակներու իրագործումը:

Տիրող ազգի կողմէ հպատակ ազգերու եկեղեցիներու հանդէպ ունեցած նոր վերաբերումին ամենէն պերճախոս և բնորոշ արտահայտությունը կրնա նկատվիլ թեմալականներու այն «գյուտը», թե Թուրքիո մեջ չկան այլևս հայ լուսավորչականներ, կամ հայ կաթողիկոսներ և կամ հայ բողոքականներ, այլ կան միայն թուրք լուսավորչականներ, թուրք կաթողիկոսներ և թուրք բողոքականներ: Էնկյուրիի փաշաներու չնաշխարհիկ հնարամտության շնորհիվ, մեկ ակնթարթի մեջ, Թուրքիա ապրող հայերը, բոլորն ալ, կդառնան ազգությամբ թուրք և կրոնով միայն լուսավորչական կամ կաթողիկ ու բողոքական:

Անգամ մը, որ այս «գաղափարը» հաստատված է թուրքի մտքին մեջ, դժվար չպիտի ըլլա թուրք բռնավորներուն համար անկէ հանել և պատշաճ եզրակացություններ: Օրինակ, «քանի որ թուրքահպատակ լուսավորչականները, կաթողիկոսները և բողոքականները ազգությամբ թուրք են, պետք է որ անոնք իրենց եկեղեցիներուն մեջն ալ գործածեն իրենց «մայրենի» լեզուն, այսինքն՝ թուրքերենը. պետք է որ իրենց դպրոցներու մեջն ալ դասավանդությունը ըլլա իրենց «մայրենի» լեզվով, այսինքն՝ դարձյալ թուրքերեն»: Եվ այլն, և այլն:

Այս մտայնությունը ցույց կուտա, որ հպատակ ազգերը խեղդելու անփառունակ գործին մեջ թուրք փաշաները ոչ միայն ընդունակ են գործադրելու նախնական, բարբարոս միջոցներ, ինչպէս են տեղահանությունը և կոտորածը, այլև, երբ պետք ըլլա, այնպիսի «նուրք», «քաղաքակիրթ» եղանակներ, որոնք կկիրառվին արևմտյան երկիրներու մեջ: Տարակույս չկա, որ խաղաղության հաստատումն հետո թուրքերը ամենայն եռանդով ու հետևողականությամբ պիտի դիմեն այդ «նուրք» միջոցներուն հպատակ ազգերու մնացորդները թուրքացնելու համար:

Ռուսիո մեջ ևս, ինչպէս տեսանք, տիրող ազգը սոգորված է նույն ձգտումով՝ ձուլել իրեն հետ հպատակ փոքրիկ ազգերը, թերևս քիչ մը տարբեր ճանապարհներով:

Այսպիսի պայմաններու մեջ, ուզենք թե չուզենք, մեր պայքարը տիրող ազգերու դեմ պիտի դառնա ներգոր, օրհասական պայքար մը, որոս միջոցին հայությունը, իր ուրույն գոյությունը պահպանելու համար, պիտի ստիպվի լարել իր բոլոր ուժերը, խտացնել իր շարքերը, ներդաշնակել իր դիմադրական ջանքերը, կուտ կազմակերպությամբ մը պիտի ամփոփվի ինքն իր մեջ և անսպառ ու անկրկնելի եռանդով պիտի աշխատի պաշտպանվիլ մեր ազգային թշնամիներու դավերուն և բռնությանց դեմ:

Եվ, եթե երևութներուն քիչ մը ավելի խորը նայինք, պիտի տեսնենք, որ մեր ազգի մղած կամ մղելիք ինքնապաշտպանության այդ ճակատագրական պայքարին մեջ ընկերվարական և դասակարգային նպատակները տեսակ մը թակարդներ են՝ գիտակցաբար թե անգիտակցաբար դրված տիրող ազգերու կողմեն՝ անոնց մեջ ձգելու և խեղդելու համար մեզ պես ճնշված ու տկար ժողովուրդները:

Եթե լուսավոր, ուժեղ և կապիտալիստորեն զարգացած ազգի մը համար դասակարգային պայքարը ընկերային ու քաղաքական անհրաժեշտություն մըն է, որ առանց լրջորեն վտանգելու ազգային ամբողջության պահպանումը, կնպաստե անոր առաջադիմության. եթե տիրող մեծ, թեկուզ հետամնաց ազգի մը համար անմարսելի ընկերվարությունը, իր դասակարգային պայքարի քարոզով ու ապագային ձգտումներով, կրնա միայն տնտեսական ժամանակավոր քայքայումի պատճառ դառնալ, մեզ նման տկար, հետամնաց, անազատ և գոյության նախնական պայքար մղող ազգերու համար ընկերվարական նպատակներուն վաղաժամ յուրացումը և հետապնդումը կշեղեն հանրային միտքն ու եռանդը ազգային կենսական պահանջներեն և կծառայեն փաստորեն ազգային հիմերու քանդումին:

Տիրող ազգի համար իրապես շատ ձեռնտու է, որ հպատակ ազգերը տարվին ընկերվարական ու դասակարգային գաղափարներով. որովհետև անոնք հաճախ կհարթեն տիրող ազգի հետապնդած ճամփաները, մեծապես տկարացնելով հպատակ ազգերու առողջ դիմադրական կորովը և կամքը. որովհետև դասակարգային պայքարի իր քարոզով ընկերվարությունը կուզա բաժանում, պատակտում մտցնելու հպատակ ազգերու մեջ և ուղղելու անոնց ուշքը դեպի հեռավոր, հաճախ ցնորական նպատակներ:

Իսկ որքան ավելի հետամնաց է ժողովուրդ մը, որքան ավելի տկար է ան իր ազգային գոյության պայքարին մեջ, այնքան ավելի աղետաբեր հետևանքներ առաջ կբերե ընկերվարության մուտքը իր ծոցին մեջ: Եվ, մյուս կողմե, որքան ավելի քիչ են ընկերվարության մեջ հպատակ ազգերու ազատագրական ձգտումները, այնքան ավելի հաճելի է ան տիրող ազգին համար: Թե՛ Ռուսիո և թե՛ Թուրքիո մեջ, մինչ հպատակ ժողովուրդներու ազգային քաղաքական ձգտումներուն հանդեպ անզուսպ ասելություն մը ու արհամարհանք մը կա, ընդհակառակը անոնց ծայրահեղ ընկերվարական հակումներուն նկատմամբ եղած է և է տարօրինակորեն բարյացակամ, հաշտ վերաբերում մը, որ երբեմն կհասնի բացարձակ քաջալերության տիրող ազգերու կողմեն:

Եվ կարելի է համարձակորեն ըսել, թե գաղափարական այն միջոցներու մեջ, զորս ժամանակակից տիրող ազգերը կգործադրեն հպատակ ժողովուրդներու ազգային ազատագրական շարժումները կասեցնելու և քայքայելու համար, ապագային ընկերվարությունը անկասկած շատ կարևոր տեղ մը կրննե:

...Չկա ազգություն իբրև ընկերային ուրույն և ներդաշնակ ամբողջականություն, այլ կան միայն դասակարգեր: Ազգությունը միջոց մըն է իշխող դասակարգերու ձեռքին՝ մոլորեցնելու աշխատավորական զանգվածները և շահագործելու զանոնք բուրժուական նպատակներու համար: Ազգությունը բուրժուական և հետադիմական գաղափար է, իսկ հպատակ ազգի ազատությունը և անկախությունը՝ միայն անոր իշխող դասին համար բաղձալի նպատակ մը, որով բնավ շահագրգռված չէ աշխատավորությունը: Բոլոր ազգերու աշխատավորները մեկ ձգտում պետք է ունենան միայն՝ միանալ իրարու հետ դասակարգային գետնին վրա և իրենց բոլոր ուժերը նվիրել մեկ դասակարգային նպատակի, որ համամարդկային արժեք ունի և որ ընկերվարություն կկոչվի:

Այս և նման անհեթեթ միտքեր, ընկերվարության հմայիչ ու վարակիչ անունով, կուզան պղտորելու և կաշկանդելու Արևելքի տկար ու ճնշված ազգերու միտքը, մղելով անոնց կորովը դեպի կորստաբեր և օտար ճամփաներ կամ շատ վաղաժամ ու շատ հեռավոր նպատակներ:

Ի՞նչ կա, օրինակ, ավելի ողբերգական ու այլանդակ, քան այն հրեշավոր հակասությունը, որ գոյություն ունի մեր ժողովրդի իրական վիճակի և մեր մտավորականության որոշ մասի ցնորական

մտայնության միջև: Մինչ մեր խեղճ գյուղացին կապրի ու կաշխատի տակավին նախնական պայմաններու մեջ և այն նահապետական եղանակներով, զորս նկարագրած է Քսենոֆոն ասկէ երկու հազար տարի առաջ, մեր մտավորականը կույր համառությամբ մը կուզէ արդէն փաթթել մեր ժողովրդի վզին իդեալներ ու նպատակներ, որոնց իրագործման համար դեռևս շատ երկար պիտի պայքարին աշխարհիս ամենէն առաջավոր ազգերն անգամ:

Արդոյք մեր դաժան իրականության մեջ ամեն գնով սոցիալիզմ մտցնել ձգտող մտավորականը նման չէ Դոն Քիշոտի մը, որ կսպառէ իր միտքն ու եռանդը, կովելով երևակայալ արգելքներու դեմ ու երևակայալ նպատակներու համար, և չի տեսներ իրական արգելքներն ու նպատակները...

XX

ՈՒԹՈՓԻՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից ընկերվարական գաղափարախոսությունը ունի երկու հիմնական կողմեր: Մեկը, որ հին է, շատ հին, կպարփակէ իր մեջ ընկերվարության բարոյական սկզբունքներն ու վերջնական նպատակները: Իսկ մյուսը, որ համեմատաբար նոր է, կներկայացնէ ընկերվարության իրականացման նյութական հիմերն ու միջոցները:

Բարոյական տեսակետով ընկերվարությունը ընկերային արդարության վեհ իդեալ մըն է, որ կուզէ հաստատել բոլոր մարդոց իսկական եղբայրություն ու հավասարություն աշխատանքի ու վայելքի մեջ: Պետք է վերացվին դասակարգային բոլոր բաժանումները և առանձնաշնորհումները. պետք է դադրին ամեն տեսակի ընկերային կեղեքում, շահագործում և կողոպուտ. չպիտի ըլլա հարուստ և աղքատ, այլ բոլորն ալ հավասար իրավունք և միջոցներ պիտի ունենան աշխատելու և վայելելու. վերջ պետք է դրվի տնտեսական անապահովության, անիշխանական վիճակին ու անսահման պատահականությանց, և տնտեսական կյանքը պիտի համայնորեն կազմակերպվի այնպիսի նախամտածված ծրագրով մը, որ ոչ ոք զրկվի, ամենքը աշխատին ու ամենքն ալ հավասար չափով վայելեն. պետք է որ հողն ու արտադրության բոլոր միջոցները պատկանին հանրության և ոչ թէ փոքրաթիվ բախտավոր անհատներու վայելքի աղբյուր ծառայեն միայն:

Մեկ խոսքով, բարոյական պահանջներն բխած այս բոլոր գեղեցիկ գաղափարները կկազմեն ընկերվարության նպատակը, – այն, ինչ որ կկոչվի ընկերվարական հասարակակարգ:

Ընկերվարության գուտ նյութական կողմը, որ կպարունակէ անոր իրականացման միջոցներն ու ճամփաները, մշակվեցավ, ձևակերպվեցավ և ամբողջական սիստեմի վերածվեցավ Մարքսի և Էնգելսի ստեղծագործական ջանքերով, որոնց արդյունքը ստացավ մարքսիզմ կամ «գիտական սոցիալիզմ» անունը:

Ցնորական կամ ութոփիական անվանելով նախորդ ընկերվարականներու ցույց տված ճամփաներն ու միջոցները, «գիտական սոցիալիզմի» ծնողները անվերապահ կերպով հայտարարեցին, թէ ընկերվարությունը դրամատիրական տնտեսության զարգացումն անխուսափելիորեն բխող երկաթե անհրաժեշտություն մըն է, որ սակայն պիտի իրագործվի և կարող է իրագործվիլ միայն բանվոր դասակարգի անհաշտ ու անտեղիտալի պայքարի միջոցով ընդդեմ տիրող բուրժուա դասակարգին: Բանվորներու դասակարգային կազմակերպությունն ու դասակարգային պայքարը հռչակվեցան իբրև միակ իրական միջոցները ընկերվարական կարգերուն հասնելու համար:

Դասակարգային այս թելադրությունն էր այն մեծ ու բախտորոշ նորությունը, զոր 1848 թ. մտցուցին ընկերվարական շարժման մեջ Մարքսն ու Էնգելսը: Այնուհետև հետզհետե գրեթե բոլոր ընկերվարական կուսակցություններն ալ, ավելի կամ նվազ չափով, յուրացուցին մարքսիզմի կամ «գիտական սոցիալիզմի» դասակարգային ըմբռնումներն ու պահանջները:

Նախորդ գլուխներու մեջ մենք տեսանք արդէն, թէ որքան խախտու և կասկածելի հիմերու վրա է կառուցված Մարքսի դասակարգային թեորին, որ բնավ չդիմացավ վերջին պատերազմի ու ռուս, ինչպես նաև գերման հեղափոխությանց փորձության:

Մենք տեսանք նույնպես, թէ ինչպէս մարքսիզմի ամենէն մոլեռանդ և ուղղափառ վարպետներն իսկ այսօր հրամայական պետք կզգան սրբագրելու «գիտական սոցիալիզմի» հիմքերը, և, այդ ապերախտ աշխատանքը կատարել հարկադրված անոնք հաճախ անճանաչելի դարձնելու աստիճան կփոխեն իրենց նախկին ուղղափառ դավանանքները:

Գերման սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որ մինչև համաշխարհային պատերազմը մարքսիզմի ամենեն հավատարիմ և մոլի պահապանն էր և բոլոր երկիրներու ընկերվարական կազմակերպությանց ուղղություն տվողը՝ խրատված պատերազմի և հեղափոխության հարուստ փորձեն՝ փորձ ըրավ նույնիսկ ազատվելու դասակարգային նեղ ըմբռումներու կաշկանդումներեն և ընդլայնելու ընկերվարական շարժման ընկերային հենարանը:

Վերցուցեք այդ կուսակցության մեծամասնական հատվածի ծրագիրը, որ ընդունված է Գյորլիցի մեջ. վերցուցեք Կ. Կաուցկու վերջերս կազմած նախագիծը, որ ամենայն հավանականությամբ հիմք պիտի ծառայե գերման միացյալ ընկերվարականներու նոր ծրագրին, և դուք կտեսնեք, որ շոշափելիորեն խախտված է նախկին մարքսիստական տեսակետը և ճամփա հարթված ավելի լայն ռամկավարական (դեմոկրատական) շարժման համար:

Այդ փոփոխության հետ մեկտեղ կամ հենց այդ փոփոխության հետևանքով ընկերվարական կազմակերպությունները եթե ոչ դեռ իրենց հստակ գաղափարաբանությամբ, գեթ իրենց քաղաքական ընթացքով իրենց դասակարգային շահերը կենթարկեն իրենց ազգի ընդհանուր շահերուն և ոչ թե միջազգային բանվորական միության ապագային թելադրություններուն, որոնք մեծ պատերազմի առաջին օրերեն ի վեր կկատարվին միայն այն ատեն, երբ չեն հակասեր տվյալ ազգի կենսական շահերուն:

Եթե դրամատիրական առաջավոր երկիրներու մեջ դասակարգային թեորին իր ապագային ձգտումներով հետզհետե տեղի կուտա ապադասակարգային ու ազգային գաղափարներու և մղումներու հաղթական զարգացման առջև, առավել ևս ան կկորսնցնեն իր արժեքը մեր հետամնաց հայրենիքին համար, ուր առհասարակ ոչ մեկ հող կա դասակարգային կազմակերպման ու պայքարի համար հանուն սոցիալիստական հեռավոր նպատակներու:

Եվ, եթե մեր մտավորականությունը, որ սնված է ու կայրի Եվրոպայի ընկերվարական աշխարհի գաղափարներուն տիրական ազդեցության տակ, անգոր է ազատվելու անոնց բարոյական հմայքեն. եթե ընկերվարությունը, իբրև հասարակական արդարության գերագույն իդեալ, տարածության ու ժամանակի սահմաններ չի ճանչնար և կարող է չափով մը լուսավոր փարոս մը ըլլալ նաև

հետամնաց ազգերու, հետևաբար և հայ ազգի ընկերային առաջադիմության գեթ հեռուն ուղղություն մը տալու համար, ապա այդ չի նշանակեր բնավ, թե մեզի համար կրնան օգտակար ըլլալ նաև այն միջոցները, զորս ընտրած են ընկերվարականները դրամատիրական առաջավոր երկիրներու մեջ և որոնց մասին հոն իսկ այսօր մեծ տարակուսանք կտիրե:

Ինչ որ մեզի համար ամենեն արժեքավորն է, հմայիչը ու անժխտելին, այդ է ընկերվարության բարոյական կողմը, ընկերային արդարության ձայնը ներկայացնող գաղափարականությունը: Ուրիշ խոսքով, ընկերվարության մեջ ամենեն գնահատելին մեզի համար ութնփին է, ընկերային արդարության ձգտումը և երազը, որ իրապես բարոյական բարձր պահանջ մըն է և առանց որուն անկարելի է մարդկության ազնվացումը:

Մարքսիզմը սակայն եկավ դուրս նետելու ութնփին ընկերվարության մեջէն և ընկերվարությունը գիտություն դարձնելու, բայց իրականին մեջ հենց ինքը ստեղծեց ամենագեշ ու վնասակար տեսակի ութնփի մը, զոր ներկայացուց իր հետևորդներուն իբրև մաքուր գիտություն: Սահմանափակ շրջանի մը (Անգլիո) և սահմանափակ ժամանակի մը (XIX դարու առաջին կեսի) երևույթներեն ան հավակնություն ունեցավ հանելու ընդհանուր և անհեղյի օրենքներ:

Այդ կասկածելի «օրենքները» սակայն, որոնք ինչպես հետզհետե պարզվեցավ, աղաղակորեն կհակասեին ուրիշ երկիրներու և ուրիշ ժամանակներու պայմաններուն, շատ շատերու համար դարձան քարացած դավանանքներ՝ կույր հավատի մը վրա հիմնված:

Եվ կեղծ կամ շատ կասկածելի գիտությամբ զինված մարքսիզմը, որ իր տիրական կնիքը դրավ միջազգային ամբողջ ընկերվարական շարժման վրա, ամենեն ավելի վնասեց հետամնաց ազգերուն, որոնք Մարքսի գծած ութնփին միամտորեն ընդունեցին իսկական գիտության տեղ և կուրորեն սկսան բռնադատել մարքսիզմի տեսութենեն հեռու իրականությունը, հավատալով, թե իրենց ըրածը բացարձակ գիտության մը անժխտելի թելադրություն է:

Ութնփի մը (ընկերային երազ մը, ցնորք մը) կրնա շատ օգտակար ըլլալ, երբ անով ներշնչվողը գիտե, որ ան ութնփի է: Բայց, երբ ութնփին կներկայացվի կամ կյուրացվի իբրև անպայման գիտություն և անոր թելադրությունները իբրև անհերքելի ու

անփոփոխելի օրենքներ, այն ատեն կդառնա հասարակական ահավոր չարիքներու և աղետներու պատճառ:

Ռուսիան ատոր պերճախոս ու հրահանգիչ օրինակը: Մարքսիզմի ոգիով սնված՝ ռուս բոլշևիկները ընկերվարական ութովին ամենայն լրջությամբ գիտության տեղ ընդունեցին և կործանման անդունդը գլորեցին իրենց երկիրը:

Կարելի է վիճել այն մասին, թե որքան ուղղափառ մարքսիստներ են ռուս բոլշևիկները: Սակայն կարելի չէ ժխտել, որ անոնք եղան մարքսիզմի կեղծ գիտականության սքոլաստիկ ոգիի մոլեգին ու հարազատ հետևողները և իրականացնողները:

Վերջին ատեններս թե ուրիշ ազգերու մեջ և թե մեզ մոտ առանձին ձգտում մը կնկատվի, ընկերվարության և մարքսիզմի դիրքերը պաշտպանելու համար, կատարելապես զատելու ընկերվարությունը ռուսական կոմունիզմեն (կամ բոլշևիզմեն): Եթե Ռուսիո մեջ բոլշևիկներու միջոցով ընկերվարական կարգեր իրագործելու փորձը բացարձակապես վիժեցավ, կըսեն շատերը, ատոր մեջ ոչ մեկ մեղք ունին ընկերվարականները, որովհետև բոլշևիկները կեղծ ընկերվարականներ են և այն, ինչ որ ըրին, հակառակ էր «գիտական սոցիալիզմի» կամ մարքսիզմի թելադրություններուն:

Մարքսի հետևորդները, ինչպես ըսինք անգամ մը, շատ կհիշեցնեն Քրիստոսի աշակերտները, որոնք, հենվելով իրենց ուսուցչի այս կամ այն ատեն այս կամ այն առիթով ըսած խոսքերուն վրա, հաճախ տրամագծորեն հակառակ միտքեր և ձգտումներ կվերագրեն անոր: Տարօրինակ չէ՞, որ այսօր թե բոլշևիկները և թե անոնց կատաղիորեն հակառակ ընկերվարականները, իրենց տեսակետները պաշտպանելու համար, կդիմեն նույն Մարքսի ավետարանին: Եվ հետաքրքրական չէ՞, որ երկու կողմերն ալ կգտնեն հոն իրենց ընթացքը արդարացնող միտքեր ու արտահայտություններ:

Կարդացեք մեկ կողմեն՝ Լենինի, Բուխարինի, Ջինովինի, Տրոցկիի գրքերը, հոդվածներն ու ճառերը և մյուս կողմեն՝ Կ. Կաուցկիի, Է. Բերնշտայնի, Մարտովի կամ ուրիշ մարքսիստներու գրվածքները, և դուք կտեսնեք, թե որքան վարպետորեն անոնք կհերքեն ու կծաղրեն զիրար մինևույն Մարքսեն քաղված խոսքերով, որոնք երկու կողմի համար ալ կոչված են գիտական արկյումաններու (ասպացույցներու) դեր կատարել: Ճիշտ և ճիշտ միջնադարյան սքոլաստիկները ու անոնց մեթոդները...

Այսպիսի ոգիով ներշնչված մարդիկ, որքան ալ գիտական մեծ պաշար կամ պատկառելի դիրք ունենան, չեն կրնար տեսնել ու գնահատել իրականությունը այնպես, ինչպես որ ան կա, այլ կնային իրերու ու երևույթներու վրա կրոնական աղանդավորի գունավոր ակնոցով և ամեն ինչ կտեսնեն իրենց «դավանանքներու» կամ ցանկություններու համաձայն:

XXI

ՆՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո՞վ է վերջ ի վերջ ուղղափառ մարքսիստը. ո՞վ է իսկական ընկերվարականը. ո՞վ ավելի հարազատորեն կարտահայտե ու կիրագործե մարքսիզմի ոգին և սկզբունքները,– բոլշևիկնե՞րը թե մյուս ընկերվարականները. արդյոք ռուս բոլշևիկներու գործած սխալները հասուկ են միայն անոնց և ոչ թե բոլոր մարքսիստներուն կամ նույնիսկ ընկերվարականներուն,– ահա հարցեր, որոնք, որքան ալ հետաքրքրական ըլլան տեսականորեն, մեզ համար պարապ, սքոլաստիկ, վերացական հարցեր են:

Մեկ բան սակայն կարևոր է այստեղ մատնանշել,– այն, թե Եվրոպայի ընկերվարականները, Կաուցկիներու զաղափարական առաջնորդությամբ, այսօր շատ և շատ խնդիրներու մասին բոլորովին տարբեր կարծիքներ ունին, քան երեկ, պատերազմեն և ռուսներման հեղափոխություններեն առաջ, թեև հաճախ ամեն ճիգ կթափեն ծածկելու իրենց տեսակետներու ակներև փոփոխությունը Մարքսի ավետարանեն քաղված նոր մեջբերումներու, ցիտատներու օգնությամբ:

Եվ բոլորովին անհիմն չէ, երբ Լենին ու իր ընկերները մարքսիզմի քրմապետ և դեռ երեկ իրենց պաշտելի Կաուցկիի և անոր հետևորդներու հասցեին կուղղեն «սոցիալ-դավաճան» խոսքերը, թեև իրենք ալ այսօր ավելի մեծ դավաճաններ են մարքսիզմի և ընկերվարության նկատմամբ:

Կարդացեք Կաուցկիի վերջին գրքերը, մանավանդ անոր վերջին գիրքը, որ կներկայացնե սոցիալիստական ծրագրի հիմնական վերագնահատության ուշագրավ փորձ մը, և դուք ոչինչ չեք գտնի հոն նույն Կաուցկիի նախկին հեղափոխական սոցիալիզմեն, որ այնքա՛ն կհափշտակեր առաջ ռուս հեղափոխականները: Սպանիչ

փաստարկություններով Կաուցկին կդատապարտե ընկերվարությունը իրագործելու կոչված հեղափոխական այն բոլոր մեթոդները, որոնք առաջ դավանանքի ուժ ունեին բոլոր մարքսիստներու համար, բացի է. Բերնշտայնն ու անոր հետևորդներն: Եվ Կաուցկին, որ առաջ այնքան մեղան սպառեց է. Բերնշտայնի «վերանորոգչական» կամ «բնաշրջական» տեսակետները հերքելու համար, այսօր փաստորեն նույնը կըսե և նույնիսկ անկե ալ անդին կանցնի երբեմն:

Եվ ով կհիշե Բերնշտայնի և Կաուցկիի հռչակավոր վեճերը սոցիալիստական շարժման հիմերը շոշափող խնդիրներու մասին, պիտի գարմանա, կարդալով այժմ Կաուցկիի մոտ հետևյալ չափազանց խոհեմ մտքերը.— «Սոցիալիստական իրավակարգը կարող է հաստատվիլ միմիայն աստիճանաբար... Սոցիալիստական հեղափոխությունը կարող է տեղի ունենալ խաղաղ կերպով, կատարյալ օրինապահությամբ, առանց որևէ բռնության... Որքան ալ խստորեն հակառակ ըլլան դրամատերերու և գործավորներու շահերը, այնուամենայնիվ անոնք մեկ ընդհանուր բան ունին,— այն է, որ երկուսն ալ լավագույն կերպով կբարգավաճին, երբ արագ կկատարվի կապիտալի (դրամագլխի) շրջանառությունն ու աճումը: Տնտեսական բարգավաճման ժամանակներու մեջ կաճին թե՛ գործավորներու աշխատավարձը և թե՛ գործատերերու շահը: Բսկ տագնապներու ատեն անոնք կիյնան»...²⁹⁹:

Մինչդեռ առաջ տնտեսական տագնապն էր, որ կհռչակվեր իբրև աղբյուր սոցիալիստական հեղաշրջման:

Նոր մտայնության համար ավելի ևս հատկանշական են մարքսիստական քրմապետի հետևյալ խոսքերը, որոնք միայն ուղղափառ մարքսիստներու համար նորություն են, բայց միշտ հայտնվեր են ու շեշտվեր մարքսիզմի հակառակորդներու կողմեն ամեն անգամ, երբ վեճ է եղած մարքսիզմի «դավանանքներու» և «օրենքներու» մասին: Մենք անհրաժեշտ կսեպենք շարունակ անդրադառնալու Կ. Կաուցկիի մտքերուն, որովհետև ժամանակակից մարքսիստական «գիտության» ամենեն հեղինակավոր գաղափարախոսն է ան և մանավանդ ան ուղղակի կամ անուղղակի

²⁹⁹ Karl Kautsky: Die Proletarische Revolution und ihr Programm, տե՛ս էջ 178-183.

կերպով մեծապես ազդած է նաև կովկասահայ երիտասարդության վրա:

Ահա թե ինչպես կխոսի այժմ Կ. Կաուցկին.— «Կյանքը միշտ ավելի հարուստ և բազմակողմանի է, քան թեորին, տեսությունը, որ կարող է նկատի առնել ընդհանուրը միայն, իսկ ստիպված է անուշադիր թողուլ մասնավորը: Յուրաքանչյուր ութոփի (կամ թեորի) այդ պատճառով չափազանց պարզունակ, հասարակ կդարձնե իրականության խնդիրները և, եթե հավատարմորեն կհետապնդվի, կներկայացնե անհանդուրժելի հետադիմություն մը, որ կտանի բազմակողմանիութենեն դեպի միակողմանիություն: Հասարակությունը մեքենա մը չէ, որ թույլ տա ինքզինքը կարգուսարքել նախօրոք կամայկանորեն գծված ծրագրի մը համաձայն, այլ կենդանի մարմին մը, որ կաճի ու կզարգանա որոշ օրենքներով: Անիկա մարմին մըն է, որու բջիջները մտածող արարածներ են, որոնք գիտակցաբար կաշխատին անոր զարգացման համար և որոնք սակայն չեն կարող կամայկանորեն ձևավորել զայն: Անոնց ազատությունը կկայանա միայն ինքնահոծար և ազատ կատարման մեջ այն բաներու, որոնց անհրաժեշտությունը անոնք կգիտակցին... Բայց ժամանակակից մարդը պետք ունի և ուրիշ տեսակի ազատության. ան , իբրև անհատ, կուզե ազատ ըլլալ ուրիշ անհատներու հանդեպ, ըստ կարելիության անկախ ըլլալ անոնցմե իր ապրելակերպի ընտրության մեջ... Մատչելի ընել գիտությունը բոլորի համար, ըստ կարելիության կարճատև դարձնել այն աշխատանքը, որ ապրուստի միջոցներու հայթայթման կծառայե, կատարյալ ազատություն տալ անհատին՝ գործունեության բոլոր ասպարեզներու մեջ իր արհեստեն դուրս, որչափ որ ատով չեն վտանգվիր ուրիշ անհատներ կամ հասարակությունը,— ասոնք են այն նպատակները, որոնցմով պիտի ղեկավարվի արդի սոցիալիզմը, հակառակ իր կոմունիստական նախորդներուն, որոնք այս բոլորեն ոչինչ կճանչնային և որոնք հարկավ ամենուն կուտային առատ հաց և ապրուստի մեծագույն ապահովություն, բայց ոչ մեկ գիտություն և ոչ մեկ ազատություն»...³⁰⁰:

Բսկ նույն գրքի հառաջաբանին մեջ հռչակավոր ընկերվարական հեղինակը կխոստովանի. «Սոցիալիզմի խնդիրները միշտ ավելի կդժվարանան ու կկնճոտովին, որքան ավելի կմոտենանք

³⁰⁰ Տե՛ս նույն գիրքը, էջ 337-338:

անոնց: Այնքան ալ պարզ չեն անոնք, ինչպես շատերը մեզմե կկարծեին դեռ չորս տարի առաջ»...

Սակայն ընկերվարական գաղափարախոսներու մեջ տակավին շատ ուժեղ է «կոմունիստական նախորդներու», Մարքսի և Էնգելսի դավանապաշտական, ադանդամով ոգին, որ կշարունակե մշուշապատել դեռ զգալի չափով մը նույնիսկ Կաուցկիի նման սրատես ու ձեռնհաս ընկերվարականներու հոգևոր հայացքը, կկաշկանդե անոնց միտքը և հուսահատորեն կառչել կուտա դեռ շատ մը հին նախապաշարումներու և «դավանանքներու»: Եվ վերագնահատության այն մեծ աշխատանքը, որ կկատարվի ամենուրեք սոցիալիստական մտավորականության մեջ, տակավին կվարագուրվի հին ֆրագներով, որոնք հաճախ կոչված են թուզի տերևներու նման ամոթխածորեն ծածկելու սոցիալիստական նախկին գաղափարախոսության ներկա մերկությունը:

Եվ ոչ միայն կոմունիստական նախորդները, ինչպես կուզե հավատացնել մեզ Կաուցկին, այլ ամբողջ ընկերվարական շարժումը իր նախապատերազմական տիրող գաղափարախոսությամբ և հենց ինքը Կաուցկին ծանրացած էր հացի և ապրուստի ապահովության խնդիրներու վրա, առանց արժանի կարևորություն ընծայելու գիտության, կուլտուրայի և անհատի ազատության հարցերուն:

Եվ ի՞նչ պետք էր գիտությունը, երբ Մարքսը արդեն տված էր միակ իսկական «գիտությունը», որմե դուրս ամեն ինչ բուրժուական էր, հետևաբար կասկածելի ու կեղծ: Չէ՞ որ գերագույն իմաստությունը թաղված էր Մարքսի գրքերուն մեջ. պետք էր միայն բարեխղճորեն ուսումնասիրել զանոնք և քաղել անոնցմե իսկական ճշմարտությունը: Իսկ երբ կյանքը ադաղակորեն կհակասեր Մարքսի իմաստության, կարելի էր փակել աչքերը և գոցել ականջները կամ սքուլաստիկ մեկնություններով պաշտպանել անոր «գիտական» թելադրությունները ընդդեմ «չհասկացված» իրականության:

Ի՞նչ պետք էր կուլտուրա և մշակույթ, երբ գոյություն ունեցող քաղաքակրթությունը բուրժուական է և ուրեմն «հակահեղափոխական», երբ բանվոր դասը կոչված էր քանդելու հին աշխարհը անոր ավերակներու վրա ստեղծելու համար նորը, պրոլետարականը, մաքուր սոցիալիստականը: Եվ ինչպես չկար ընդհանուր գիտություն, այլ կար միայն դասակարգային, այնպես ալ չկար ընդհանուր կուլտուրա, այլ միայն դասակարգային: Իսկ,

որովհետև եղածը թշնամի բուրժուազիայի աղբյուրեն կուզար, ուստի ան թունավոր էր ու անպետք:

Վերջապես, ի՞նչ պետք կար անհատի անկախ ու ազատ գոյության, երբ ապագա պրոլետարական բարեխնամ իշխանությունը կոչված էր ամեն բան տնօրինելու լավագույն կերպով հանուն համայն մարդկության շահերուն:

Այս պարզամիտ ու գոեհիկ ըմբռնումներն ու տրամադրություններն էին որ հիմք կկազմեին ընկերվարական տիրող մտայնության պատերազմեն և մասնավորապես ռուսական հեղափոխութենեն առաջ:

XXII

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԶԷ

Ինչպես տեսանք, Կաուցկին իբրև ընկերվարական շարժման նպատակ կհայտարարե այժմ ոչ միայն առատ հացը և ապահով ապրուստը, այլ նույնքան և ավելի ուժգնությամբ նաև գիտությունը, կուլտուրան և անհատի ազատությունը: Ասոնք նոր շեշտեր են մարքսիզմի մեջ, բոլորովին նոր տրամադրություններ:

Իբրև այդ նոր մտայնության մեկ շատ բնորոշ արտահայտությունը կարելի է նկատել այն շատ ուշագրավ երևույթը, որ մարքսիստներու համար մտավորական դասը այժմ այլևս արդեն խորթ զավակը չէ սոցիալիստական կազմակերպության, ինչպես էր առաջ, այլ անոր նույնքան հարազատ դրոշակակիրը ու հենարանը, որքան և գործավոր դասը: Այժմ արդեն մտավորականը բուրժուազիայի ծառան չէ միայն, այլ, մտավոր աշխատանքի պատվավոր ներկայացուցիչը, ինչպես որ գործավորը՝ ֆիզիքական աշխատանքի ներկայացուցիչն է: Այժմ արդեն բուրժուան ալ նույնիսկ միայն շահագործող չէ, այլև տնտեսության կազմակերպող ու ղեկավարող:

Արդարև սոցիալիզմի խնդիրները շատ ավելի բարդ են ու դժվար, քան կթվեր առաջ: Արդարև իրականությունը շատ ավելի բազմակողմանի է ու հարուստ, քան այն մեղալ ֆորմուլները, գորս բերավ մարքսիզմը իր այնքան և կասկածելի «գիտությամբ»:

Անակնկալ անակնկալի ետևե կբերե կյանքը, որ ի դերն կհանե ամենեն հանդուգն ենթադրություններն անգամ: Այն, ինչ որ երեկ դեռ «գիտություն» կնկատվեր, այսօր արդեն տգիտություն է ու կեղծիք:

Մարդկային միտքը, որքան ալ հանճարեղ ըլլա, անգոր է իր ունեցած պաշարով ճշտորեն կանխատեսելու հասարակության հետագա զարգացման հարափոփոխ ընթացքը: Ինքը ընկերային կամ հասարակական գիտությունը շատ պայմանական ու կասկածելի գիտություն մըն է, որ համենայն դեպս չունի և չի կրնար ունենալ հաստատուն ու անվիճելի օրենքներ: Կյանքի զարգացման հետ զուգընթաց կփոխվի նաև անոր բովանդակությունը, բնույթը և «օրենքները»:

Եվ, եթե Մարքսի ու Էնգելսի «գիտական սոցիալիզմի» շենքը գեշ-լավ կըրցավ ինքզինքը պահպանել, շարունակական փոքրիկ նորոգումներու միջոցով, մինչև 1914 թ., վերջին մեծ պատերազմի և ռուսական հեղափոխության աշխարհասասան փոթորիկը եկավ ավերակներու կույտի վերածելու զայն: Ու անգոր, ապարդյուն են բոլոր ճիգերը վերականգնելու նախկին շենքը, գեթ ամբողջությամբ: Մարքսիզմի մեծագույն ժամանակակից ներկայացուցչի վերջին ուշագրավ փորձերը այդ ուղղությամբ ամեն մեկ աննախապաշար մարդու մեջ պիտի հաստատեն միայն այդ հոռի համոզումը:

Մենք շատ պիտի շեղվեինք մեր նյութեն, եթե մանրամասնություններու մեջ մտնեինք: Մեր նպատակի համար բավական է արդեն այն փաստը, որ «գիտական սոցիալիզմի» ամենեն մոլեռանդ և ամենեն ուղղափառ գաղափարախոսներն անգամ պետք կզգան հիմնական վերագնահատության ենթարկելու մարքսիստական «օրենքներն» ու թեորիները և երբեմն բացահայտորեն կխոստովանին անոնց թերությունները, իսկ ավելի հաճախ անգիտակցաբար կպաշտպանեն այժմ այնպիսի մտքեր ու դրություններ, որոնք ակներևորեն կտարբերվին իրենց նախկին դավանանքներեն կամ նույնիսկ տրամագծորեն կհակասեն անոնց:

Սոցիալիզմը գիտություն չէ և երբեք ալ չի կարող գիտություն դառնալ:

Որքան ալ հասկնալի ու բնական ըլլա մարդկային մտքի պահանջը ընկերվարական ութոփին գիտական հիմքերու վրա դնելու, այսուհանդերձ անհաջողության են դատապարտված «գիտական սոցիալիզմ» ստեղծելու բոլոր փորձերը: Որովհետև, ինչպես

կխոստովանի ինքը Կաուցկին, «կյանքը միշտ ավելի հարուստ է ու բազմակողմանի, քան մարդկային տեսությունը»: որովհետև «հասարակությունը մեքանիզմ մը չէ, այլ կենդանի օրգանիզմ մը, որուն բջիջները մտածող արարածներ են, որոնք գիտակցաբար կաշխատին անոր զարգացման համար...»:

Գիտությունը կարող է ուսումնասիրել ներկայի կամ անցյալի արդեն ձևված ու պարզված նյութերը և անոնց տվյալներեն եզրակացություններ ու ընդհանրացումներ հանել. իսկ այն, ինչ որ դեռ չկա և պիտի ըլլա միայն ապագային, կամ թերևս չըլլա իսկ, չի կարող հաստատուն հող մը ներկայացնել ճշգրիտ գիտության համար: Ամեն մտակառուցում ապագայի մասին ավելի կամ պակաս հավանական ենթադրություն, հիպոթեզ, ութոփի միայն կրնա ըլլալ: Իսկ սոցիալիզմը կձգտի ուրվագծել ապագայի շենքը, հետևաբար չի կարող ճշգրիտ գիտության հաստատուն և անվիճելի տվյալներու վրա կառուցված ըլլալ:

Բայց, եթե ապագայի հասարակական շենքը կրնա միայն ութոփի ըլլալ, զայն կառուցելու միջոցներն ալ չեն կրնար ուրվագծվիլ գիտական եղանակով:

Որովհետև այդ միջոցները արդյունք են ժամանակի և տեղի հարափոփոխ, բազմապիսի ու անհունապես բարդ պայմաններուն, որոնց սաղմերը միայն կան կամ երբեմն դեռ նույնիսկ չկան ներկա իրականության մեջ և գորս ամբողջությամբ կանխատեսել ու ընդգրկել անընդունակ է ոչ միայն մարդկային ամենահանճարեղ միտքը, այլև ամենազորավոր երևակայությունը:

Մինչդեռ Մարքսի և Էնգելսի ստեղծած «գիտական սոցիալիզմը» հավակնություն ունի չափազանց սահմանափակ (տեղի և ժամանակի իմաստով) գիտության մը միջոցով հաստատուն և անժխտելի միջոցներ ու ճամփաներ գտած ըլլալ ապագա հասարակակարգի մը իրականացման համար:

Պատմությունը արդեն ցնցող հարվածներով, մեկը մյուսի ետևեն, ի դերն հանեց մարքսիզմի տված միջոցներեն ու պատրանքներեն շատերը, իսկ մնացածներն ալ նորանոր վերագնահատությանց հարկին տակ դրավ: Եվ ո՞վ կրնա ըսել, թե վերջ ի վերջո ի՞նչ պիտի մնա այդ վերագնահատումներեն:

ՓԱՆՈՒՍ ԻՐԱԿԱՆՈՒԹԵՆԵՆ

Սոցիալիզմին կարելի է հավատալ: Սոցիալիզմը կարելի է բաղձալ, կամենալ և ձգտիլ իրականացնել:

Բայց կարելի չէ գիտնալ, թե ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով, ի՞նչ պայմաններու մեջ, ե՞րբ և ո՞վ պիտի իրագործե սոցիալիզմը: Կարելի չէ նույնպես գիտնալ, թե երբևէ առհասարակ պիտի իրագործվի սոցիալիզմը այն ձևով, ինչպես կ'պատկերացնեն զայն ժամանակակից ընկերվարականները:

Կարճ. սոցիալիզմը հավատի հարց է, բայց ոչ գիտության: Եվ այն գիտությունը, որ կատեղծվի անոր շուրջը, դատապարտված է ըլլալու թերի ու սխալական, միշտ նորանոր սրբագրությանց ու փոփոխությանց ենթակա:

Սոցիալիզմի մեջ էականն ու արժեքավորը ոչ թե այն «գործնական» ծրագիրներն են, որոնք՝ հազիվ գրված՝ փոփոխության կկարոտին, ոչ ալ այն կասկածելի «գիտությունը», որու «անհերքելի» տվյալներու վրա «երկաթե անհրաժեշտությամբ» կկառուցվին այդ ծրագիրները, այլ այն ընդհանուր ձգտումները, գորս այնքան ամփոփ ու խտացված ձևով ներկայացուցած է Կաուցկին վերևը բերված տողերուն մեջ, — առտո հաց, ապրուստի մեծագույն ապահովություն, գիտություն, կուլտուրա և ազատություն բոլորի համար:

Բնորոշ է, որ Կաուցկին կխուսափի հոս հավասարություն խոսքը հիշատակելէ: Եվ ասիկա պատահական չէ: Կարդացեք ուշադրությամբ անոր կազմած սոցիալիստական նոր ծրագիրը, և դուք ակամա կնկատեք, թե ո՞ր աստիճան բուշխիկներու տված խրատական դասը սովրեցուցած է ժամանակակից ընկերվարականները աննախընթաց կերպով գնահատել անհատի ազատության լիակատար արժեքը և, ընդհակառակը, նախկին բացարձակ կարևորությունը չընծայել այլևս հավասարության իդեալին, որու անվերապահ իրականացումը շատերուն արդեն կներկայանա իբրև յուրատեսակ բանտային ռեժիմ մը:

Մենք կտեսնենք, որ ոչ միայն ընկերվարության, եթե կարելի է այսպես ըսել, նյութական կողմը, այլև անոր բարոյական իդեալները փոփոխության կենթարկվին: Եվ մինչ կոմունիստներու համար այսօր ալ կարևորագույն նպատակը կմնա հավասարությունը, ոչ կոմունիստ

ընկերվարականները, նույնիսկ ուղղափառ Կաուցկին, արդեն գլխավոր շեշտը կդնեն անհատի ազատության և կուլտուրական զարգացման վրա:

Այս բոլոր նկատումները մենք պարտավոր ենք հաշվի առնել՝ ճշտորեն գնահատելու համար ընկերվարության իսկական արժեքը, գտելու համար անոր դրական տարրերը բացասական կողմերեն, ազատելու համար մեր գործոն երիտասարդության միտքը կաշկանդող և «գիտական» անունը կրող վնասակար նախապաշարումներեն ու դավանանքներեն և, վերջապես, ճամփա հարթելու համար դեպի առողջ, իրատես և իրական ազգային քաղաքականություն մը:

Մեր հայրենիքի և ժողովուրդի դաժան իրականության առջև դրված հրատապ ու հրամայական խնդիրները ոչ մեկ անմիջական կապ ունին միջազգային ընկերվարական շարժման նպատակներուն և խնդիրներուն հետ:

«Գիտական» կամ գաղափարական այն կրակոտ վեճերը, որոնք տեղի կունենան Եվրոպայի մեջ ընկերվարական հարցերու շուրջը, հաճախ իբրև դառն հեզնանք կհնչեն մեր ականջին, երբ մենք մեր հոգևոր աչքին առջև կբերենք մեր երկրի դժոխային պայմաններն ու պայքարները: Այն, ինչ որ Եվրոպական առաջավոր ազգերուն համար այժմեական և կենսապես հուզող խնդիր է, մեզի կներկայանա իբրև պարաս, սնամեջ, վերացական, ճեմարանական հարց մը, որ երբեմն ավելի արժեք չունի, քան միջնադարյան վանականներու սքոլաստիկ մարզանքները:

Ընկերվարական գաղափարներու աշխարհը արդյոք մեզի համար նույնպիսի երկնային արքայության աշխարհ մը չէ՞, որու մեջ կուզեն խորասուզվել մեր երիտասարդները՝ չտեսնելու համար մեր երկրային դժոխքը, չընկճվելու համար մեր ժողովրդին վիճակված տաժանելի բախտեն, չիյնալու համար անոր անտանելի բեռին տակ, ինչպես որ էր քրիստոնեությունը հին դարերու թշվառ ժողովուրդներուն համար:

Արդյո՞ք ընկերվարությունը իր վեճ ու մեզի համար այնքան հեռավոր ու անմատչելի իդեալներով ու խնդիրներով քողարկված փախուստ մը չէ՞ մեր ահավոր իրականության արյունոտ մղձավանջեն, մեր երկրի իրական հոգերեն ու մեր ժողովրդի հրամայական պահանջներեն:

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԻՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ

Ի՞նչ է ընկերվարությունը, ո՞րն է լավագույն ընկերվարական ծրագիրը, ինչպե՞ս, ե՞րբ և ինչ միջոցներով պիտի իրագործվի ան, ընկերվարությունը գիտությունն է թե բարոյական իդեալ մը միայն, – այս բոլորը հարցեր են, որոնք երևի դեռ երկար ժամանակ պիտի զբաղեցնեն առաջավոր մարդկության միտքը, կրթեր հրահրելով և կատաղի վեճեր ու պայքարներ հարուցելով: Մեզի՞ հայերուս համար այս խնդիրները թերևս նույնքան հետաքրքրություն կրնան ներկայացնել, որքան միջնադարյան վարդապետներու սքոլաստիկ վեճերը աստվածաբանական հարցերու շուրջը, երկնային արքայության կամ վերջին դատաստանի մասին: Անհատները մեր մեջ ալ հարկավ կրնան ապրիլ և ապրել են այդ տեսակ վերացական հարցերով, բայց մեր հանրության, մեր ազգին, մեր իրականության համար անմիջապես՝ անոնք ապահովաբար որևէ կենսական, գործնական, այժմեական արժեք չունին:

Մեր ուսումնածարավ երիտասարդությունը, հասարակական բարձր իդեալներ որոնող մտավորականությունը, արդարության, հավասարության և ազատության համար երազող հոգիները, կամ ընկերաբանական տեսություններով ու իմաստասիրական մարզանքներով զբաղվող անհատները անտարակույս միշտ ալ պիտի հոգնեցնեն իրենց միտքը սոցիալիզմի առեղծվածներով, պիտի ներշնչվին, տոգորվին անոր հմայիչ գաղափարներով ու ցնորքներով: Եվ ոչ մեկ ուժ պիտի ի վիճակի ըլլա արգիլելու այս հետաքրքրությունը և խանդավառությունը, մանավանդ մեր ճնշված, հալածված, անիրավված ազգին մեջ, որու համար շահագործվող ու հարստահարվող դասակարգերու կրոնը՝ սոցիալիզմը միշտ պիտի պահպանե իր ձգողական, կախարդական ուժը:

Բայց, եթե ընկերվարությունը մեր երկրի և ժողովուրդի համար գեթ առայժմ վերացական, ճեմարանական հարցերու հանգույց մըն է միայն, ընդհակառակը, ընկերվարականները կներկայացնեն գործոն մեծ ուժ մը, գոր անկարող է անտես առնել ժամանակակից ոչ մեկ ազգ, առավել ևս հայությունը: Եթե ընկերվարության անմիջական դրական դերը մեր հայրենիքի իրական

կյանքին մեջ ներքին տեսակետով շատ աննշան է ու թերևս հավասար գերոյի, մեր արտաքին՝ միջազգային հարաբերությանց տեսակետով ընկերվարական բանակը անկասկած քաղաքական շատ խոշոր ազդակ մըն է: Հայաստանի թե՛ մոտավոր և թե՛ հեռավոր երկիրներուն մեջ ալ ան հարաճուն ուժ մըն է, որ, եթե ոչ այսօր, գեթ վաղը կրնա բախտորոշ նշանակություն ունենալ միջազգային կյանքի մեջ: Անկարելի է հետևաբար ժխտել կամ արհամարհել այդպիսի ուժ մը, ինչ ալ ըլլա մեր տեսական վերաբերմունքը դեպի սոցիալիզմը և սոցիալիստները:

Ու, եթե քիչ մը ավելի խորերը մտնելու ըլլանք մեր պատմական մոտիկ անցյալի ուսումնասիրության մեջ և որոնելու ըլլանք հայկական սոցիալիզմի հոգեբանական հիմերն ու շարժառիթները, պիտի տեսնենք, որ հայ ընկերվարական շարժման գլխավոր դրդապատճառներեն մեկն ալ եղած է գիտակցական թե անգիտակից մղումը հարմարվելու միջազգային ընկերվարության հարաճուն ուժին՝ անկե օգտվելու համար ի նպաստ մեր ազգային դատին: Այսինքն՝ ընկերվարության հետ որևէ անմիջական առնչություն չունեցող զուտ քաղաքական ձգտումներ և հաշիվներ առաջ են բերած մեր մեջ անդիմադրելի հակում մը դեպի միջազգային սոցիալիզմը, ճիշտ այնպես, ինչպես այսօր քեմալական թուրքերը կհամագործակցին կոմունիստական աշխարհին հետ:

2. 3. Դաշնակցության ընկերվարության մեջ մասնավորապես՝ արտաքին շարժառիթները շատ կարևոր դեր են կատարել: Ղեկավարող մտայնությունը եղած է այն, որ սոցիալիզմը հայկական դատի համար օգտակար ու անհրաժեշտ ազդակ մըն է: Թեև պետք է խոստովանիլ, որ քիչ չեն եղած սոցիալիզմի և բարեմիտ, անկեղծ հավատացյալներ մեր մեջ, հատկապես երիտասարդներու մեջ, որոնց համար սոցիալիզմը ոչ թե միջոց, այլ ինքնանպատակ է եղեր և է: Քեմալական թուրքերու մեջն ալ երևի կան երիտասարդներ, որոնք անկեղծորեն հարած են կոմունիզմին: Սակայն այդ չի խանգարեր բնավ, որ կոմունիզմը անոնց համար ըլլա միջոց մը միայն իրենց ազգային նպատակներուն հասնելու համար:

Գաղտնիք մը չէ, որ մեր ժողովրդական լայն խավերուն, ինչպես նաև կուսակցական շարքերուն մեջ համոզված ընկերվարականներ միշտ շատ սակավաթիվ են եղած, անգամ սոցիալիստական արբեցման ամենեն խանդավառ օրերուն: Մեր կուսակցական զանգվածներու համար սոցիալիզմը ընդունելի և

տանելի է դարձած միմիայն այն չափով, որչափով որ կարելի է եղեր զանոնք համոզել այն բանի մեջ, թե ընկերվարությունը անհրաժեշտ միջոց մը, նոր զենք մըն է ազգային գաղափարներու իրագործման համար:

Ինչ պիտի ըսեն, ինչպե՞ս պիտի վերաբերվին դեպի մեզ վրացիք, ռուսները և ուրիշ մերձավոր կամ հեռավոր ազգերու առաջավոր տարրերը, եթե մաքուր և անվերապահ սոցիալիստներ չդառնանք,— ահա այն մտահոգությունը, որ տիրական էր մեր կովկասյան մտավորականության մեջ:

Զըլլա՞ թե կասկածին, որ մենք նեղ ազգայնականներ ենք, որ չունինք լայն համամարդկային իդեալներ. չըլլա՞ թե իրենց գաղափարական ու քաղաքական թշնամիները նկատեն մեզ. չըլլա՞ թե պայքար մղեն մեզի և մեր դատին դեմ:

Պետք էր հարմարվիլ կարմիր շրջապատին. պետք էր անոր գույնով ներկվիլ՝ չափազանց աչքի չիյնալու համար. պետք էր կարմիր գույնով ամոթխածորեն ծածկել արտաքին աշխարհեն և՛ այն բոլոր ազգային նպատակները, որոնք հիմնական էին մեր ազատագրական շարժման համար:

Մասնավորապես Ռուսիո հեղափոխական իրականության մեջ ընկերվարությունը տեսակ մը պաշտպանողական գույն էր մեր քաղաքական կուսակցությանց համար. անիկա ոչ թե մեր երկրի և ժողովրդի ներքին կյանքեն բխած հրամայական պահանջ մըն էր, այլ արտաքին պայմաններեն եկած թելադրություն մը, քաղաքական հաշիվ մը:

Այդ հաշիվը ուներ նաև հետևյալ հիմերը:

Դրամատիրական պետությանց կառավարությունները, ուրիշ ազգերու բուրժուական կուսակցությունները տարված են միմիայն իրենց ազգային էսապաշտ շահերով և մեր դատին ու ժողովրդին հանդեպ զզվելիորեն անտարբեր են կամ նույնիսկ թշնամական: Անոնցմե մեզ օգնության ոչ մեկ հույս կար: Բայց այդպես չէր միջազգային ընկերվարական բանակը, որ աշխարհի ամենեն խրոխտ ընդդիմադիր ուժն է, բոլոր ճնշվածներու, հարստահարվածներու և հալածվածներու անկաշառ պաշտպանը: Ան տոգորված է համամարդկային գաղափարներով ու չի ծառայեր միմիայն իր ազգության, այլ բարեկամ ու զինակից է բոլոր անոնց, որ բռնության և անիրավության դեմ կկռվին, գեթ գաղափարով:

Ինչպե՞ս չդիմել այդպիսի բանակի մը փրկարար օգնության, ինչպե՞ս չջանալ շահելու անոր համակրանքը, ինչպե՞ս չհարմարվիլ անոր գաղափարական պահանջներուն և թելադրություններուն:

Ճիշտ է, այդ բանակը այսօր իշխանություն չունի և ամեն երկրի մեջ ընդդիմադիր դեր կկատարե միայն: Բայց անոր ուժեն արդեն կվախնան իշխանավորները, անոր ձայնեն կքաշվին բռնավորները, և ոչ մեկ կառավարություն կրնա արհամարհել անոր պահանջները:

Մասնավորապես ցարական Ռուսիո մեջ, որու բռնակալ ռեժիմին դեմ ի վերջո հարկադրված էր զենք բարձրացնել իր գոյության և ազատության կռիվը մղող հայությունը, հեղափոխական գրեթե բոլոր ուժերն ալ ընկերվարական էին: Հաջող պայքար մը ցարիզմի դեմ հնարավոր էր ոչ թե անջատ ջանքերով, այլ այդ ընկերվարականներուն հետ միասին: Իսկ ատոր համար անհրաժեշտ էր ոչ միայն գործի, այլև գաղափարի ներդաշնակություն:

Ով մեզի հետ չէ և չի բաժնեք մեր սկզբունքները,— կըսեին ռուս հեղափոխականները,— մեզի թշնամի է: Եվ թշնամի չըլլալու համար պետք էր ըլլալ ոչ միայն հեղափոխական, այլև գեթ ձևանալ մաքրակրոն ընկերվարական:

Այս էր տիրող մտայնությունը, որ հարկավ չէր կարող իր անտոք դրոշմը չդնել նաև հայ հեղափոխական ղեկավար տարրերու ընթացքին վրա:

XXV

ԴԵՄՈՎՐԱՏԻԱՅԻ ՉԵ՞Տ ԹԵ ԴԵՍ

Միջազգային սոցիալիստական շարժման մեջ մեզի համար ամենեն գնահատելին և շահեկանը քաղաքական տեսակետով դեմոկրատիայի կամ ռամկավարության այն հսկա հորձանքն է, որ իրապես անոր հիմքը կկազմե ու պիտի կազմե միշտ ավելի հստակ, ակներև կերպով:

Ընկերվարությունը հետզհետե կդադրի, թե՛ փաստորեն և թե՛ գաղափարականորեն, տարամերժ դասակարգային շարժում մը ըլլալէ և միշտ ավելի շեշտված եղանակով կդառնա դեմոկրատիայի լայն ու հետևողական կազմակերպությունը:

Ամեն մեկ ազգ ինքն իր գլխի տերն է: Ամեն մեկ ազգի մեջ մեծամասնության կամքն է որ պիտի իշխե: Մեծամասնության կամքին դեմ ոչ մեկ բռնություն թույլատրելի է և նպատակահարմար, որքան ալ վեհ ըլլան այն գաղափարները, որոնց համար կկատարվի բռնությունը: Ամեն բարենորոգում, ամեն փոփոխություն հանրային կյանքի մեջ պիտի կատարվի մեծամասնության միջոցով, որովհետև այդ է հարաճուն և հաստատաքայլ առաջադիմության միակ խաղաղ ու արդյունավետ ճանապարհը: Միմիայն մեծամասնության կամքն է որ կրնա ապահովել հասարակության համար մեծագույն ազատությունը: Իսկ մեծամասնության կամքին հակառակ միայն բիրտ ուժն է, որ կրնա տիրել:

Այս տարրական ճշմարտությունները կկազմեն դեմոկրատիայի էությունը և հիմքը: Եվ անոնց շուրջը եղած արմատական տարակարծությունն է, որ այսօր երկուսի բաժնած է դեռ երեկ, համաշխարհային պատերազմեն առաջ, միացյալ ընկերվարական բանակը:

Այդ երկու հոսանքներեն առաջինը կրցած է իր շուրջը համախմբել միջազգային հսկայածավալ արհեստակցական միություններ և չափավոր ընկերվարական կազմակերպություններ, որոնք միլիոնավոր անդամներ ունին բոլոր առաջավոր երկիրներու մեջ: Այդ հոսանքը կներկայացնեն այն բոլոր տարրերը, որոնք հավատարիմ մնացած են 2-րդ Միջազգայնականի դրոշին: Անոր սկսած են հարիլ նաև այն կազմակերպությունները, որոնք հեռացած էին 2-րդ Միջազգայնականեն և կազմած էին Վիեննայի Միջազգայնականը, կամ այսպես կոչված 2 1/2 Միջազգայնականը:

Այն օրեն ի վեր, երբ գերման երկու ընկերվարական կուսակցությունները (մեծամասնականներն ու անկախները) միացան և Հաագի մեջ վերջերս գումարված աշխատավորական մեծ ժողովը 2 և 2 1/2 Միջազգայնականներու համերաշխ գործակցության ճամփան հարթեց, կարելի է ապահովված համարել միությունը բոլոր ընկերվարական տարրերու, որոնք ընկերվարության գործը չեն բաժներ դեմոկրատիայի գործեն և որոնց համար ընկերվարությունը իրագործելի է միայն դեմոկրատիայի միջոցով ու խաղաղ, բարենորոգչական եղանակով:

Երկրորդ ընկերվարական հոսանքը, որ բացարձակ թշնամի է դեմոկրատիային ու դեմոկրատական բոլոր սկզբունքներուն ու քաղաքական ազատություններուն, հակադրած է ինքզինքը առաջին

հոսանքին և փոխած է նույնիսկ իր անունը, հավաքվելով 3-րդ կոչված կոմունիստական Միջազգայնականի դրոշի տակ:

Ոչ մեկ բան այնքան ատելի է կոմունիստներուն, որքան ազատությունը: Անոնց պաշտամունքի առարկան բիրտ ուժն է: Անոնց միակ գործելակերպը բռնությունը: Ոչ թե մեծամասնության կամքը, որ արհամարհելի բան մըն է կոմունիստներու համար, այլ գործոն փոքրամասնության մը, սակավաթիվ խմբակի մը սուրն է, որ պիտի կառավարե աշխարհը և երջանկություն բերե տառապող մարդկության:

Այս պատճառով է, որ այսօր Ռուսիո մեջ այնքան սրտառույզ մտերմություն և գործակցություն կա կոմունիստներու և միապետականներու միջև: Այս պատճառով է, որ բոլշևիկներու ամենեն հարագատ բարեկամներն են աշխարհիս ամենեն արյունառուշտ բռնակալները – թուրք փաշաները: Այս պատճառով է, որ կոմունիստները արտասահմանի մեջ ալ շատ ավելի դյուրությամբ ընդհանուր լեզու կգտնեն հակադեմոկրատական, հետաշրջական տարրերու, քան խաղաղասեր և դեմոկրատական ընկերվարականներու հետ:

Երկու տարբեր ելակետներն մեկնելով և տրամագծորեն տարբեր նպատակներու ձգտելով, Լենին և Մուսոլինի իրականին մեջ միևնույն աստծուն կծառայեն, – բռնության, որ գերեզման է դեմոկրատիայի գոյության և ժողովուրդներու ազատության համար:

Ըստ ինքյան հասկնալի է, որ իր սեփական ժողովուրդի ազատությունը խեղդող քաղաքական ուժ մը, ինչպիսին է բոլշևիզմը, չի կարող վստահելի և հաստատուն հենարան մը ըլլալ ուրիշ ազգերու ազատագրության համար: Մանավանդ մեզ նման տկար և հետամնաց ազգի մը համար, որ իր աշխարհագրական դիրքով ալ անոր հասողության սահմանին մեջ կգտնվի:

Բոլշևիզմը կամ կոմունիզմը մեզի համար անմարսելի աշխարհ մըն է նաև այն պատճառով, որ դաշնակցած է մեր ազգի դարևոր թշնամի և երկրագնդիս ամենեն արյունարբու թուրքական բռնակալության հետ: Ոչ մեր ազգային ձգտումները, ոչ ալ մեր քաղաքական գաղափարները կրնան հաշտվիլ կատարելագործված բռնության այն սիստեմին հետ, զոր կուզե մարդկության վզին փաթաթել 3-րդ կոմունիստական Միջազգայնականը հուրով և սրով, կեղծիքով և ցինիկ խաբեբայությամբ:

Մեծ և գորավոր ազգերու համար թերևս այդպիսի սիստեմ մը կրնա երբեմն ձեռնտու ըլլալ: Բայց մեզ նման փոքր և տկար ազգերու համար անիկա մահաբեր է պարզապէս:

Մեր բնական դաշնակիցը ոչ թէ բոլշևիկյան բանակն է, այլ միջազգային դեմոկրատիան և մանավանդ անոր ամենէն գաղափարական, ամենէն հետևողական և վստահելի մասը՝ ընկերավարական դեմոկրատիան: Ոչ թէ բիրտ ուժի իրավունքը պաշտպանող, այլ իրավունքի և արդարության ուժը հաստատել ձգտող ընկերավարական դեմոկրատիան է, որ կրնա հարթել ճամփաները նաև տկար ազգերու ազատության ու խաղաղ կենսակցության համար:

Ճիշտ է, դեմոկրատական սիստեմը այսօր ծանր տագնապ մը կապրի վերջին մեծ պատերազմի հետևանքով: Լենինը իր բոլշևիզմով մեկ կողմէն, Մուսոլինին իր ֆաշիզմով մյուս կողմէն՝ խելահեղ թափով մը կճգնին քանդել դեմոկրատիայի հիմերը, վարկարկել անոր գաղափարները, խեղդել անոր կազմակերպությունը ոչ միայն Ռուսիո և Իտալիո, այլև բոլոր երկիրներու մեջ:

Բայց տարակույս չկա, որ հաղթանակը ի վերջո դրձյալ դեմոկրատիայինն է: Որովհետև արևի լույսի պէս պարզ է, որ աննշան փոքրամասնություն մը չի կարող տնականորէն իշխել մեծամասնության վրա, անոր կամքին հակառակ. ժողովրդական զանգվածները այլևս այն անբան հոտերը չեն, որ խումբ սը ինքնակոչ մարդիկ սվիններու գործության վրա միայն կոթնած՝ անվերջ խաղան անոնց բախտի հետ՝ իրենց ուզածին պէս: Անսահման հեղինակության և հլու հնազանդության դարերը անցած են արդէն: Անհատները և ազգերը կուգեն վայելել մեծագույն կարելի ազատությունը, որու հմայքը հետզհետե անդիմադրելի կդառնա բոլորի համար ալ: Իսկ միմիայն դեմոկրատիան, այսինքն՝ մեծամասնության իշխանությունն է, որ ի վիճակի է տալ թէ անհատին և թէ հասարակության մեծագույն ազատություն: Միմիայն դեմոկրատիան է, որ կարող է ապահովել խաղաղ կենսակցության կայուն և տնական վիճակ մը:

Հարկավ դեմոկրատական սիստեմն ալ, ինչպէս ամեն բան աշխարհիս երեսին, շատ մը թերություններ ունի. բայց այդ թերությունները չեն խանգարեր, որ ան ըլլա մարդկային համայնակենցաղի ամենէն կատարյալ ձևը: Գեթ ատկէ ավելի

կատարյալը տակավին չէ գտած ժամանակակից մարդկությունը: Իսկ Լենինական կամ Մուսոլինական «նորությունները» ուրիշ բան մը չեն ըներ, բայց եթէ կվերականգնեն իրոք ասիական հին բռնակալությունները և կառավարական բարբարոս մեթոդները, որոնք պատմութենէն շատոնց դատապարտված են կատարելապէս:

Հայ ժողովուրդը, որու ամենէն ռամկավարական, ամենէն գործոն, ամենէն հետևողական, կենսական և հզոր պատմական կազմակերպությունը Հ. Յ. Դաշնակցությունն է, հարկավ չի կրնար բարեկամ նկատել կոմունիզմի նման միջազգային այնպիսի շարժում մը, որ կատաղի պայքար կմղէ դեմոկրատիայի, հետևաբար և՛ ամեն տեսակի ազգային ու անհատական ազատությանց դէմ:

Հայ դեմոկրատիայի գաղափարական և քաղաքական զինակիցը կարող է ըլլալ միայն միջազգային այն հսկա կազմակերպությունը, որ իր ձգտումներով և մտայնությամբ ամենէն ավելի հարազատ է մեր առաջավոր տարրերուն և ամենէն ավելի շիտակ, արդարամիտ ու ազատարար ուղեգիծն է որդեգրած թէ՛ դրամատիրական մեծ երկիրներու ներքին կյանքին մեջ և թէ՛ հանդեպ փոքրիկ, տկար ու հետամնաց ժողովուրդներու: Այդ կազմակերպությունը միջազգային ընկերավարականներու այն բազմամիլիոն միությունն է, որ կդավանի հետևողական դեմոկրատիզմի սկզբունքները և որ ամենէն գաղափարական, մաքուր ու ամենէն անկաշառ քաղաքական ուժն է այսօր բոլոր դրամատիրական հասարակությանց մեջ:

Հարկավ ամեն ազգի դեմոկրատիա, ամեն բանէ ավելի ու ամեն բանէ առաջ, կպաշտպանէ և պիտի պաշտպանէ իր սեփական շահերը: Եվ ասոր մասին պետք չէ երբեք որևէ պատրանքներ ունենալ, միամտորէն հավատալով, թէ որևէ օտար կազմակերպություն կարող է գիտակցորէն գոհել իր երկրի շահերը՝ հանուն այլասիրական գաղափարներու: Սակայն համեմատական չափերը վերցնելով, կրնանք համարձակորէն ըսել, թէ ընկերավարական դեմոկրատիան այսօր քաղաքական բոլոր հոսանքներէն ավելի պարկեշտ, արդարակորով ու մարդասեր ուժ մըն է, որ կջանա ազգերու քաղաքական կյանքին մեջ ըստ կարելվույն մտցնել ազնիվ, շիտակ և խաղաղ հարաբերություններ ու եղանակներ: Եվ կարելի չէ տարակուսիլ, որ միջազգային դեմոկրատիայի և մասնավորապէս ընկերավարական իդէալներով տոգորված

դեմոկրատիայի հարաճուն ծավալման հետ մեկտեղ մեծապես պիտի դյուրանա նաև փոքր ու տկար ազգերու ազատագրության գործը:

Վերջին մեծ պատերազմի ընթացքին արդեն և անկե անմիջապես հետո մանավանդ դրամատիրական առաջավոր երկիրներու մեջ ընկերվարական դեմոկրատիան առիթ ունեցավ մոտենալու իշխանության և նույնիսկ մտնելու կառավարության մեջ: Իսկ պատերազմի հարուցած հեղափոխական շատ կարճատև տրամադրությանց հորձանքը քանի մը երկիրներու մեջ նույնիսկ իշխանության գլուխը բարձրացուց ընկերվարական դեմոկրատիայի հարազատ ներկայացուցիչները, ինչպես, օրինակ, Գերմանիո մեջ 1918 թ. կամ Ռուսիո մեջ 1917թ. մինչև բոլշևիկներու հոկտեմբերյան հետադարձ շարժումը:

Տնտեսական քայքայման հետևանքով առաջ եկած քաղաքական հարաճուն ռեաքսիոնը սակայն, որ այսօր նկատելի է գրեթե բոլոր դրամատիրական առաջավոր պետությանց մեջ, հարկավ նպաստավոր գետին մը չի ներկայացներ ընկերվարական դեմոկրատիայի բնականոն զարգացման համար: Բայց տարակույս չկա, որ վաղ թե ուշ ան հաղթականորեն պիտի բախե իշխանության դռները և ոչ այնքան ընկերվարական ծրագիրներ իրագործելու, որքան իրապես ու իրավապես դեմոկրատական կարգեր հաստատելու և ապահովելու համար:

Եվ շատ հավանական է, որ այդ տեղի պիտի ունենա ամենեն առաջ ու ամենեն արդյունավոր, հաստատուն կերպով Անգլիո մեջ, այսինքն՝ տնտեսական, ընկերային, քաղաքական և քաղաքակրթական տեսակետով ամենեն հասունցած երկրի մեջ: Հայտնի է, որ աշխատավորականներու կուսակցությունը, վերջին ընտրությանց ատեն, հոն փայլուն հաջողություններ ունեցավ արդեն և Խորհրդարանի մեջ գրավեց շատ կարևոր դիրք մը, որ անմիջապես մոտեցուցած է զինքը իշխանության: Ու անսպասելի բան մը չպիտի ըլլա, եթե շատ մոտ ժամանակին աշխատավորականները իշխանության գլուխ անցնին:

Բայց Անգլիո աշխատավորականները խոշոր ուժ մը կ'ներկայացնեն ոչ միայն իրենց երկրի մեջ: Ամբողջ միջազգային ընկերվարական դեմոկրատիայի շարժման վրա անոնց ազդեցությունը անսխալ ընթացորեն կ'աճի ու տիրական կ'դառնա: Եվ այդ երևույթի պատճառներեն մեկն ալ այն է, որ այդ շարժման մեջ կ'հաղթանակեն այն տեսակետներն ու ձգտումները, որոնց

արտահայտիչներն էին, տարիներն ի վեր, անգլիացի ֆաբիականները իրենց վերանորոգչական ու բարենորոգչական չափավոր ծրագիրներով, իրենց խաղաղասիրական անկեղծ ձգտումներով և ապադասակարգային քարոզներով: Անոնք է, որ այսօր ալ ուժգնորեն կ'շեշտեն ընկերվարական իդեալներու բարոյական մեծ ուժը և երբեք չեն ուզեր անձնատուր ըլլալ այն գոեհիկ նյութապաշտական սկզբունքներուն, զորս այնքան խտացած ու բութ կերպով և այլամերժ, աղանդամոլ ոգիով մը կ'պաշտպաներ գերմանական մարքսիզմը մեծ պատերազմեն առաջ, իսկ կոմունիզմը՝ այսօր:

Այն, ինչ որ մենք տեսանք 1917թ. հոկտեմբերեն ի վեր Ռուսիո մեջ բոլշևիկներու միջոցով, իրապես արտահայտությունն էր գերման մարքսիզմի նյութապաշտական և ապաբարոյական, կամ նույնիսկ անբարոյական ամբարտավան ոգիին: Ռուսական բոլշևիզմը դրսևորեց, մարմնավորեց զայն և ցուցադրեց աշխարհին անոր այլանդակ, հրեշավոր կողմերը, որոնցմէ սարսափեցան իրենք իսկ գերման մարքսիստները ռուսական կոմունիզմի հոգևոր հայրերը:

Որքան ալ Կաուցկիները ջանան այսօր իրենցմէ շատ հեռու վանել ռուսական բոլշևիզմը, ծաղրանքի և անողոք քննադատության ենթարկելով անոր ընկերվարական ըմբռումներն ու փորձերը, այսուհանդերձ երբեք չպիտի կարենան անհետացնել հոգեկան այն հարազատ կապը, որ եղած է և մասամբ դեռ կա իրենց և իրենց ռուս աշակերտներուն միջև: Բոլշևիկները ապերախտ գտնվեցան իրենց գերման ուսուցիչներուն հանդեպ անով միայն, որ իրենց միամիտ ու դաժան փորձերով ջարդ ու փշուր ըրին մարքսիզմի հիմերուն վրա կառուցված բանվորական հեղափոխության և դիկտատուրայի խաբուսիկ շենքը:

Եվ, եթե համաշխարհային պատերազմը ջախջախեց գերման միլիտարիզմը (ռազմապաշտական սիստեմը), կարելի է համարձակորեն ըսել նաև, թե ռուսական հեղափոխությունն ալ եկավ մահացու հարված մը հասցնելու գերման կաստայական նեղ ու վերացական ոգիի գերիշխանության ընկերվարական շարժման մեջ:

Ու, ինչպես պատերազմի մեջ հաղթանակեց անգլո-սաքսոն ցեղի անպարտելի ուժը իր դեմոկրատական դարևոր հաստատություններով ու քաղաքական հանճարով, այնպես ալ ընկերային արդարության իդեալներուն նվիրված միջազգային մեծ շարժման մեջ հետզհետե տիրապետող կ'դառնա բարենորոգչական ու բնաշրջական (էվոլյուսիոն) այն առողջ, գործնական ու իրապաշտ

ուղղությունը, որու փայլուն արտահայտիչն են գերման մարքսիզմի անհաշտ, տարամերժ ու ամեն գնով հեղափոխական ու վերացական ոգիին հակապատկերը ներկայացնող անգլիական Աշխատավորականները:

Անհատի և ազգի ազատությունը անվերապահորեն հարգող, մարդկության բարոյական վեհագույն սկզբունքները պաշտող, ժողովրդի մեծամասնության օրինական կամքը անբռնաբարելի նկատող, ժամանակակից քաղաքակրթության բարիքներու արժեքը խորապես գնահատող և ամեն բռնություն օրգանապես ստող անգլիական Աշխատավորականները կհարթեն այն ուղին, որով պետք է երթա առաջավոր մարդկությունը, եթե կուզե օր մը արդարություն և խաղաղություն տեսնել այս աշխարհին մեջ:

Եվ Հ. Յ. Դաշնակցությունը, իբրև հայ դեմոկրատիայի ղեկավարող կազմակերպությունը, իր միջազգային հարաբերությանց մեջ պիտի ջանա ամրացնել ու խորացնել այն կապը, որ ձևականորեն արդեն գոյություն ունի տարիներե ի վեր Անգլիո Աշխատավորականներու և այժմ անոնց հզոր ազդեցության տակ գտնվող միջազգային ընկերվարական դեմոկրատիայի հետ:

Այս կպահանջեն մեր գաղափարները, այս կպահանջեն նաև մեր ժողովրդի տևական շահը: Որովհետև ապագան միջազգային այս ուժին կպատկանի և որովհետև այս ուժին քաղաքական ու ընկերային ձգտումները ամենեն ավելի կհամապատասխանեն մեր ազգի գոյության ու ազատության պահանջներուն:

XXVI

ՄԵՐ ՊԱՅՔԱՐԻ ՆԻՍԸ

Եթե մենք մեր գաղափարներով և քաղաքական հակումներով առաջավոր ազգերու ընկերվարական դեմոկրատներու կողմն ենք, այդ դեռ բնավ չի նշանակեր, որ կապիկներու նման մեր երկրի մեջ պիտի հետևինք անոնց բոլոր քայլերուն:

Որովհետև այն ճանապարհը, զոր մենք տակավին պիտի անցնինք, անոնք արդեն անցած են:

Որովհետև այն կենսական բարիքները, զորս անոնք շատոնց կվայելեն և որոնց գոյությունը ապահոված են արդեն, մեզի դեռ կպակսին ահարկուորեն:

Որովհետև մեր քաղաքական ու ընկերային գաղափարներով անոնց հետ լինելով, իրականին մեջ մենք շատ հեռու ենք անոնցմե, շատ ետ ենք մնացեր անոնցմե:

Որովհետև այն պայքարը, զոր մենք կմղենք ու երևի դեռ երկար ժամանակ դատապարտված ենք մղելու, որևէ առնչություն չունի առաջավոր երկիրներու ընկերվարական դեմոկրատիայի պայքարներուն հետ:

Մեկ խոսքով, հիմնապես տարբեր են իրական պայմանները, հիմնապես տարբեր են անմիջական նպատակները. բնականաբար, հիմնապես տարբեր պիտի ըլլան նաև պայքարի միջոցները և եղանակները:

Ապահովված չէ տակավին մեր ժողովուրդի ֆիզիքական գոյությունը. ապահովված չէ տակավին մեր ազգի ստեղծագործ աշխատանքի կատարելիությունը. ապահովված չէ տակավին մեր հայրենիքը, մեր քաղաքակրթությունը, հայության աճումը, զարգացումը, ազատությունը և քաղաքական անկախությունը:

Ասոնք բոլորն ալ տարրական բարիքներ են, որոնց արդեն տիրացած են բոլոր կենսունակ և առաջավոր ազգերը, ինչպես նաև մեզմե շատ ավելի հետամնաց ժողովուրդներ: Մինչդեռ մենք ճիշտ այս բարիքները ձեռք բերելու համար է, որ կենաց և մահու պայքար ստիպված ենք մղել մեզ խեղդող շրջապատին դեմ:

Ուրիշ խոսքով, այն, ինչ որ մենք դեռ պիտի ստեղծենք մեր պայքարով ամեն բանե առաջ, ոչ միայն ընկերվարություն չէ, այլ նույնիսկ դեմոկրատիա ալ չէ: Որովհետև էականը, կենսականը մեզի համար առայժմ հայ ազգային (և ոչ անպատճառ ու անմիջապես դեմոկրատական) պետության մը ստեղծումն է:

Երբ կունենանք մեր սեփական Ազգային Տունը, այն ստեն է միայն, որ հրամայական պիտի դառնա մեզի համար անոր ներքին կազմակերպման ու կառավարման ձևը:

Ոչ ոք կրնա արգիլել մեզ ունենալ մեր իդեալերը և՛ ձևի մասին, ինչպես և ոչ ոք կրնա արգիլել մեզ ունենալ ընկերային գերագույն արդարության իդեալներ, որոնց ետևե ինկած են մեզմե անհունապես ավելի զարգացած ազգերը: Բայց միշտ պիտի գիտնանք

որոշապես ճշտել ու ամուր բռնել այն անմիջական նպատակը, որ մեր բոլոր ձգտումներու կորիզը և հիմքը կկազմե:

Այդ նպատակն է, ինչպես ըսինք, մեր ազգի պետական կազմակերպության հիմնավորումը և ապահովումը: Իսկ այս նպատակի համար կարող են գործակցել և պետք է գործակցեն մեր ժողովրդի բոլոր տարրերը, — թե անոնք, որ ընկերվարական են, թե անոնք, որ միայն դեմոկրատ են, և թե անոնք, որ ոչ ընկերվարական են և ոչ դեմոկրատ, բայց մեզ պես և մեզի չափ ազգային պետական տուն կուզեն ունենալ մեր ժողովրդի գոյությունն ու զարգացումը ապահովելու համար:

Անգամ մը որ հայության ղեկավար միտքերուն մեջ հաստատուն և տիրական դառնա այս հիմնական գաղափարը, որով վերջած պիտի ըլլան օտար երկիրներէն եկած և օտար պայմաններէն թելադրված քաղաքական, ընկերային ու տնտեսական մեզի համար առայժմ ցնորական պահանջները, այն ատեն պիտի հարթվի նաև ճամփան ազգային առողջ, գործնական և իրատես քաղաքականության մը համար: Այն ատեն ոչ մեր ընկերվարական ու դեմոկրատական իդեալները, ոչ ալ մեր գործոն գաղափարական կապը միջազգային ընկերվարական դեմոկրատիայի հետ պիտի կարենան արգելք ըլլալ, որ հանուն մեր ազգային պետական նպատակին մենք ժամանակավոր դաշնակիցներ փնտրենք ու գտնենք նաև քաղաքական այնպիսի ուժերուն մեջ, որոնք նույնիսկ գաղափարական հակառակորդներ են թե՛ ընկերվարության և թե՛ դեմոկրատիայի:

Մեր հետամնաց ու արյունոտ իրականության դաժան պայմաններու ճնշող հարկին տակ, մենք հարկադրված ենք չխորշելու նույնիսկ ամենասև քաղաքական ուժերու հետ ժամանակավորապես գործակցելէ, եթե որևէ չափով այդ կարող է մոտեցնել մեզ մեր ազգային ամենէն կենսական նպատակի իրագործման:

Եվ ասիկա հրամայական թելադրություն մըն է ոչ միայն մեր ներքին, այլև արտաքին հարաբերությանց համար:

Ոչ մեկ օտար խղճամիտ ընկերվարական կամ դեմոկրատ, որ ծանոթ է մեր ժողովրդի ներկա դժոխային վիճակին, կարող է մեղադրել մեզ մարդկության վեհագույն իդեալներուն «դավաճանելուն» մեջ:

Այլ կերպ վարվի՛լ պիտի նշանակեր դավաճանել մեր ժողովրդի ամենէն կենսական շահերուն, որոնք մեզ համար ամեն բանն վեր ըլլալու են միշտ:

Որովհետև գաղափարներն են ժողովրդի համար և ոչ թե ժողովուրդը գաղափարներու համար:

Տարրական այս ճշմարտությունը երբե՛ք մոռնալու չենք մեր քաղաքական բոլոր քայլերուն մեջ: Միայն գիտնանք իրապես գնահատել քաղաքական այն ուժերուն էությունը, շարժառիթներն ու ձգտումները, որոնց հետ գեթ կարճ ճամփա մը ստիպված ենք անցնիլ: Միայն հստակորեն գիտակցինք միշտ, թե որո՞ւ հետ գործ ունինք, ի՞նչ կրնանք սպասել անկէ և ի՞նչ երբեք չպիտի սպասենք: Միայն երբեք միամտություն չունենանք կարծելու, թե, առանց հետին նպատակներու, առանց սեփական շահերն հետապնդելու, որևէ օտար ուժ կարող է գեթ ժամանակավորապես օգնել մեզի: Միայն հասկնանք վերջապես, որ ոչ մեկ քաղաքական ուժ կղեկավարվի անհատական բարոյականության սկզբունքներով... Այդպես է, որ պիտի խուսափինք ավելորդ պատրանքներէ, վտանգավոր հուսախաբություններէ և աղիտաբեր մոլորություններէ:

Դաշնակցինք նույնիսկ սատանայի հետ, բայց գիտնանք, որ սատանայի հետ է մեր գործը: Այլապես հրեշտակի տեղ ընդունելով զայն, պիտի տուժենք միշտ չարաչար...

XXVII

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ

Քաղաքական կազմակերպության մը ուժին աղբյուրը ոչ թե անոր տեսական, աշխարհայեցողական կառուցվածքը կամ ծրագիրն է, որ, ինչպես ալ ըլլա, միշտ թերի, խոցելի, շարունակ փոփոխությանց ու վերագնահատությանց կարոտ պիտի ըլլա, այլ անոր բարոյական դրամագլուխը, որ կարող է կուտակվիլ միմիայն ղեկավար անհատներու և հետևորդ զանգվածներու տոկուն ու անձնվեր աշխատանքի և անչափելի զրկանքներու ու զոհողությանց միջոցով:

Բարոյական այդ դրամագլուխը անժխտելի, անվիճելի և բացարձակ արժեք մըն է, որ ժամանակի հետ կաճի և միշտ ավելի տիրական ու անդիմադրելի կենսագործ գորություն մը կդառնա

հետագա սերունդներուն համար, եթե միայն կուտակված բարոյական դրամագլուխը չարաչար կերպով սիստեմատիկ վատնումի չենթարկվի ղեկավարող տարրերու կողմէն:

Մեր քաղաքական կյանքի մեջ քիչ չեն եղած և այսօր ալ տակավին շատ կան միամիտ մարդիկ, որոնք կկարծեն, թե բավական է ունենալ քանի մը «գիտական» գաղափարներ ու կամենալ զանոնք շրջանառության մեջ դնել և արդեն կարելի է առանձին կուսակցություն մը կազմել, բազմությանց համակրանքը շահիլ և զանոնք գործի մղել: Մինչդեռ մարդկային պատմությունը բյուրավոր կենդանի օրինակներով ցույց կուտա, որ կարևորը ոչ այնքան իրենք գաղափարներն են, որքան այդ գաղափարներու համար պայքարող անհատներու զոհողության աստիճանը և զորությունը: Ով իր գաղափարին ընդունակ չէ նվիրելու իր ամբողջ կյանքը անվերապահորեն, ով իր գաղափարի համար պատրաստ չէ մեռնելու, երբեք չի կարող շարժել ժողովրդական զանգվածները, հետևաբար անկարող է նաև կենսունակ կուսակցություն մը կազմել և տիրական դեր կատարել քաղաքական կյանքի մեջ: Զրկանքի, զոհաբերության, անձնվիրության անընդունակ մարդիկ, որքան ալ բարձր ըլլան իրենց գաղափարները, որքան ալ մեծ մտավոր պաշար, հմտություն ու ձիրքեր ունենան, երբեք չեն կարող տևական և խորունկ վստահություն ներշնչել իրենց շրջապատին և ուրիշները զոհաբերության ու անձնվեր գործի մղել:

Հայ իրականության մեջ, վերջին երեսուն-քառասուն տարիներու ընթացքին առաջ են եկեր բազմաթիվ քաղաքական կուսակցություններ, բայց քանի՞սն է անոնցմէ արմատ ձգել մեր ժողովուրդին մեջ, քանի՞սն է անոնցմէ բեղմնավոր ու հարատև կյանք ունեցեր, վերջապէս քանի՞սն է անոնցմէ հարաճունորեն զարգացեր ու ամբողջ հասակով հասեր մինչև մեր օրերը:

Ոմանք՝ հազիվ ծլած թառամեր են: Ոմանք աշխույժ մանկության օրերուն ինկեր են, կոտորտեր են իրենց ձեռքն ու ոտքը և շարժվելու համար անընդունակ դարձեր: Ուրիշները անուռով են միայն գոյություն ունեցեր: Իսկ ոմանք ալ ջերմոցներու մեջ բուսած ծաղիկներուն պէս չեն կրցած դիմանալ բնության դաժան պայմաններուն և պետք են ունեցած միշտ արհեստական միջոցներու՝ իրենց խղճուկ ու ամուլ գոյությունը կերպով մը քարշ տալու համար:

Այսօր ալ դեռ կան հրապարակի վրա քանի մը կուսակցություններ, որոնք անվերջ բաժնվեր են, միացեր են, նորեն

բաժնվեր են, նորեն միացեր են, փոխեր են շարունակ իրենց անունները, կարծելով, թե անուններու մեջն է հաջողության գաղտնիքը: Բայց, ավա դ, ոչինչ կրցեր է օգնել նրանց. միշտ մնացեր են խորթ, անհարազատ մեր ժողովրդի լայն զանգվածներուն, միշտ անկարող՝ անոնց սրտին խոսելու, միշտ անընդունակ՝ զանոնք շարժելու և նվիրաբերող աշխատանքի մղելու:

Միմիայն Հ. Յ. Դաշնակցությունն է, որ, երեսուն և երեք տարի առաջ ծնունդ առնելով, կարողացավ զարգանալ անդադար և հարաճուն կերպով, շարունակ ծավալվիլ, միշտ ավելի խոր ու հաստատուն արմատներ ձգել մեր ժողովրդի մեջ ամեն տեղ, թե՛ Հայաստան և թե՛ արտասահման, միշտ իր արիերուն մեջ պահել պայքարող հայության բազկերակը և տիրական թափով մը ստեղծագործել հայ ազգի նորագույն պատմությունը,՝ առանց նվազագույն չափով իսկ կորսնցնելու իր կենսունակությունը, հմայքը և ազդեցությունը մեր քաղաքական կյանքի մեջ:

Այսօր ալ, ինչպէս միշտ վերջին տասնամյակներու ընթացքին, Հ. Յ. Դաշնակցությունը միակ հայ քաղաքական կազմակերպությունն է, որ անբակտելի կապերով կապված կպահե իրեն հայ ժողովրդի ամենէն գործոն, ամենէն ազատատենչ, ամենէն զոհաբերող և ամենէն մարտական տարրերը: Այսօր ալ, ինչպէս միշտ, Հ. Յ. Դաշնակցությունը միակ շարժիչ քաղաքական ուժն է հայ ամբողջ իրականության մեջ Կովկասէն սկսած մինչև Ամերիկա:

Հակառակ մեր կրած բոլոր դժնդակ ձախողանքներուն Հայաստանի մեջ, հակառակ տիրող ծանրագույն պայմաններուն, որոնք աներևակայելի չափով աննպաստ են մեր կուսակցության համար, դարձյալ Հ. Յ. Դաշնակցությունը այն միակ ուժն է այսօր, որուն կուրորեն կհավատա ու կվստահի իր բախտը պայքարող հայությունը թե՛ երկրի և թե՛ գաղութներու մեջ: Մասնավորապէս Հայաստանի սահմաններուն մեջ ապրող մեր ժողովուրդը այսօր ավելի, քան երբևէ, իր բոլոր ազգային բաղձանքներու իրագործումը կսպասէ Հ. Յ. Դաշնակցութենէն՝ միշտ պատրաստ անձնվիրաբար հետևելու անոր առաջին մարտահրավերին:

Վերցուցեք նույնիսկ գաղութները, ուր այլասերման ազդակները այնքան զորավոր են և ուր այսօր մանավանդ այնքա՛ն լճացած է հայ հանրային կյանքը, այնքա՛ն հուսալքված է հայ մարդը: Եվ դարձյալ կտեսնեք, որ նորեն Հ. Յ. Դաշնակցությունը ամենէն ավելի քիչ է ենթարկվել հուսալքման և բարոյալքման, ամենէն ավելի

մեծ չափերով է պահպաներ իր մարտական կորովը, նվիրաբերող ոգին, ազատության կրակը և լավագույն ապագայի հավատքը:

Հետաքրքրվեցե՞ք անգամ մը հայ կուսակցություններու սարքած հանգանակություններով, ըրած նյութական զոհաբերություններով, որոնք նվիրաբերության գրեթե միակ ձևն ու անոնց տիրող ոգիին միակ չափանիշն են գաղութներուն մեջ, և դուք կտեսնեք, որ անոնցմէ և ո՛չ մեկը կրնա բաղդատվիլ Հ. Յ. Դաշնակցության ահագին զոհաբերությանց հետ, և դուք կհամոզվիք, որ Հ. Յ. Դաշնակցությունը ընդունակ է ոչ միայն մեծագույն բարոյական, այլև մեծագույն նյութական զոհաբերություններ ընելու: Անժխտելի իրողություն է, որ առանց Հ. Յ. Դաշնակցության գործոն մասնակցության անկարելի է որևէ հաջող ձեռնարկ ազգային որևէ ասպարեզի մեջ: Ասիկա աղաղակող փաստ մըն է, զոր ի վիճակի չեն չխոստովանիլ նույնիսկ մեր ամենեն կատաղի հակառակորդները:

Հ. Յ. Դաշնակցությունը իր անթիվ ու անհամար հերոսներու, անձնուրաց գործիչներու և զաղափարական մարտիկներու կենդանի օրինակով աննախընթաց խորությամբ ու ընդարձակությամբ մշակեց մեր ժողովրդի մեջ զոհաբերության կենսագործ ոգին, որ ամենեն մեծ աղբյուրն է ազգային ամեն հաղթանակի, հանրային ամեն առաջադիմության: Իսկ զոհաբերության ու անձնվիրության հարաձուն զարգացման միջոցով բարոյական հսկա հեղաշրջում մը առաջ եկավ դարերու ստրկութենէն բթացած, անասնացած ու փոքրացած հայ մարդուն հոգիին մեջ:

Ազատություն, անկախություն, ընկերային արդարություն և շատ մը ուրիշ գեղեցիկ ու հրապուրիչ զաղափարներ քարոզած են և դեռ այսօր ալ կքարոզեն գրեթե բոլոր հայ քաղաքական կուսակցությունները: Թո՛ղ տարօրինակ չթվի, եթե ըսենք, որ Հ. Յ. Դաշնակցության և մյուս հայկական կուսակցություններու միջև եղած գլխավոր տարբերությունը իրապէս ոչ այնքան անոնց հետապնդած քաղաքական նպատակներու և զաղափարներու մեջ կկայանար և կկայանա, որքան բարոյական ուժի, հեղափոխական խառնվածքի, շինարար հավատքի, ստեղծագործ վճռականության, նվիրաբերության և անձնագոհության չափին ու աստիճանին մեջ:

Կարելի է, առանց ծայրահեղության մեջ իյնալու, ըսել, թէ Հ. Յ. Դաշնակցության ծրագրին, նպատակներուն և զաղափարներուն մեջ չկա բան մը, զոր ունեցած չըլլան և քարոզած չըլլան կամ չունենան ու չքարոզեն նաև հայկական մյուս կուսակցությունները:

Խոսքով կամ թղթի վրա բոլորն ալ հայ ժողովրդի գոյության, ազատության և երջանկության համար կաշխատին. բայց գործով, արյունի և գրկանքի, նվիրաբերության և անձնագոհության գնով վերջին երեսուն տարիներու ընթացքին միմիայն Հ. Յ. Դաշնակցությունն է, որ ծառայել է և կծառայե հայության ու անոր իղեալներուն:

Ասոր համար է, որ հայ ժողովուրդը այնքա՛ն անսահման հավատ և վստահություն ունի հանդէպ Հ. Յ. Դաշնակցության, հակառակ վերջինիս գործած պատմական շատ մը սխալներուն, հակառակ մեր բոլոր անհաջողություններուն և հուսախաբություններուն, որովհետև ամեն մեկ հայ փորձով գիտե, որ, եթե հայ ազգի ամենեն դաժան պարտությունները կապված են Հ. Յ. Դաշնակցության հետ, անոր հետ են կապված նաև հայության մեծագույն, հոյակապ հաղթանակները. որովհետև հայ մարդը բնազդով կրմբոնե, թե վաղն ալ դարձայ Հ. Յ. Դաշնակցությունն է, որ պիտի առաջնորդէ հայ ժողովուրդը դէպի նոր հաղթանակներ, դէպի նոր վերելքներ...

XXVIII

ԵՐԿՈՒ ՄՏԱՀՈՄԱՆՔՆԵՐ

Սկզբունքները, աշխարհահայեցողությունները, տեսական ծրագիրներն ու վերացական կառուցումները, սովորաբար, եթե չըսենք միշտ, կգրադեցնեն, կոզկորեն, կհամիշտակեն ու կշարժեն ժողովրդի մը շատ փոքրիկ, շատ բարակ շերտը միայն – անոր մտավորական կոչված տարրը, այն ալ ավելի՛ այդ տարրի երիտասարդ մասը գերազանցապէս: Մինչդեռ հերոսական գործերը, գրկանքի ու նվիրումի, տանջանքի ու զոհողության կենդանի օրինակները կվարակեն, կցնցեն, կխանդավառեն ու կշարժեն ժողովրդական լայն զանգվածները, երբեմն ասամբողջ ժողովուրդը:

Մեր մտավորականությունը, մասնավորապէս Կովկասի մեջ, ռուսական ազդեցության տակ, հզորապէս ենթակա էր և դեռ է, թէն այժմ ավելի թույլ չափով, ռացիոնալիստական պատրանքներու և մեծապէս կզերագնահատէ բանականության ու գիտակցության դերը հասարակական կյանքի մեջ:

Շատերու մեջ միամիտ ու պարզունակ հավատք մը կար և մասամբ կա տակավին, թե հաջողության, հաղթանակի ամենեն մեծ գրավականն է լավ մշակված ծրագիրը, լավ կազմված բանաձևը, լավ սկզբունքը և լավ աշխարհահայեցողությունը:

Այդպիսիներու աչքին ամեն մեկ թերություն կուսակցական ծրագրի մեջ գրեթե բախտորոշ նշանակություն կստանա: Պետք է ամեն բան հստակ և որոշ ըսված ըլլա, որպեսզի որևէ թյուրիմացություն չպատահի, որևէ տարակուսանքի առիթ չտրվի: Պետք է ամենայն մանրամասնությամբ կանխատեսված ու ճշտված ըլլան կուսակցական ծրագրին մեջ ոչ միայն ներկայի ու մերձավոր ապագայի հրատապ խնդիրները, այլև հեռավոր ապագայի ընթացքը գծող բոլոր կետերն ու հանգրվանները: Չըլլա թե բան մը մոռցվի, կամ կետ մը այդ հեռավոր ապագայեն մշուշի մեջ մնա:

Եվ ծրագիրը այսպիսով կդառնար յուրատեսակ ավետարան մը, որ կոչված էր բոլոր հարցերուն պատասխան տալ (նաև հեռավոր ապագայի մասին, ճիշտ այնպես, ինչպես ավետարանը հանդերձյալ կյանքի մասին) և ամեն մեկ պատասխան ալ դավանանքի վերածել:

Մինչդեռ իրականին մեջ կյանքը կընթանա իր սեփական ճանապարհով, անկախ կուսակցական ծրագիրներէ, իսկ հաճախ նաև հակառակ անոնց:

Ոչ միայն հեռավոր ապագայի վերաբերյալ եղած կանխատեսությունները, այլև մերձավոր ապագայի մասին եղած ենթադրությունները հաճախ օղը կցնդին. կյանքը կվազէ հանկարծ տարբեր ուղիով մը, հրապարակ հանելով նոր խնդիրներ, նոր պահանջներ, իսկ այնքան խնամքով ու հավատքով կազմված ծրագիրները անսպասելի կերպով կմեռնին երբեմն ամբողջությամբ, իսկ երբեմն իրենց կարևոր մասերով: Եվ այսպես անհրաժեշտ կդառնան ծրագրային վերանորոգումներ, տեսական նոր կառուցումներ, արժեքներու հիմնական վերագնահատություններ:

Այս բոլոր ճիգերու և փորձերու գլխավոր ձգտումն է ամեն անգամ ավելի մոտենալ իրական կյանքին, ավելի որոշ կերպով ընդգրկել անոր մեջ թաքնված հնարավորությունները, ավելի ճշտորեն ըմբռնել ու բանաձևել անոր պայմանները, պահանջները և ուղիները:

Մեր ապրած ահավոր փոթորիկներու և ցնցումներու հետևանքով անհրաժեշտ դարձած վերագնահատումներու շարքին մեջ շատ կարևոր տեղ մը կբռնէ նաև կուսակցական ծրագիրներու

վերագնահատությունը, որ հասկնալի պատճառներով կկատարվի ավելի կուսակցական փակ ժողովներու մեջ, քան հրապարակի վրա, մամուլի մեջ: Պահանջը սակայն այսօր այնքան գորավոր է, որ վերագնահատությունը երբեմն անգուսպ կերպով դուրս կուգա հրապարակ և համազգային քննության բնույթ կստանա: Մասնավորապես Ն. Յ. Դաշնակցության շարքերուն մեջ վերագնահատության պահանջը այսօր տիրական է դարձած, որովհետև Ն. Յ. Դաշնակցությունը միշտ ալ ամենեն ավելի մոտ է եղած մեր իրականության, հետևաբար ամենեն ավելի սուր ու ստիպողական կերպով կզգա անոր մեջ կատարված փոփոխությունները և այդ փոփոխություններէն բխող անհրաժեշտությունները:

Վերջերս մեր մամուլի մեջ Ն. Յ. Դաշնակցության ծրագրի և աշխարհահայեցողության նվիրված քանի մը ուշագրավ փորձեր եղան: Անոնք բոլորն ալ հատկանշական են այն տեսակետով, որ կարտահայտեն մեր կուսակցության մեջ գոյություն ունեցող և իրարու հետ հաշտ ապրող, բայց հիմնապես տարբեր ելակետերէ բխող երկու գլխավոր մտահոսանքներ, - մեկը, որ գերազանցապես ազգային է, և մյուսը, որ գերազանցապես ընկերվարական է:

Առաջին հոսանքի սքանչելի ձևակերպումը կուտան Հայաստանի Հանրապետության անդրանիկ վարչապետ Հովհ. Քաջազունին (իր «Ճակատամարտի» մեջ անցյալ տարի տպված «Ի՞նչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարքով և «Հայրենիք» ամսագրի այս թիվին մեջ սկսված «Ազգ և հայրենիք» գեղեցիկ ուսումնասիրությամբ) և մեր տաղանդավոր գրող Լևոն Շանթը՝ «Հայրենիք» ամսագրի և օրաթերթի մեջ այս տարի տպված այնքան հափշտակիչ աշխատություններով՝ «Ի՞նչ է ազգությունը» և «Մեր անկախությունը»:

Իսկ երկրորդ հոսանքի արտահայտիչն է մեր շնորհալի երիտասարդ ընկեր Վահան Նավասարդյանը՝ «Հայրենիք» ամսագրի մեջ հրատարակած իր «Ն. Յ. Դաշնակցությունը և ընկերվարական վարդապետությունը» հոդվածով: Ընկ. Նավասարդյան կներկայացնէ Կովկասի դաշնակցական երիտասարդության մեկ խոշոր մասին մտայնությունը:

Ընկ. Լևոն Շանթ անուղղակի կերպով միայն կքննադատէ Ն. Յ. Դաշնակցության գրված ծրագրին այս կամ այն մասը: Անկախ որևէ գրված ծրագրէ, ան կզարգացնէ իր մտքերը, արտահայտելով այն, ինչ

որ զգացեր, խորհեր ու կամեցեր են իրապես և այսօր ալ իրենց սրտի խորքին մեջ կզգան, կխորհին ու կկամենան Հ. Յ. Դաշնակցության ամենալայն զանգվածները: Այն, ինչ որ այնքան գմայլելի պարզությամբ կարտահայտե Շանթ, եղած է և է իրոք Հ. Յ. Դաշնակցության իսկական, թեև թղթի վրա չգրված, բայց գրեթե բոլոր դաշնակցականներու սրտին մեջ դրոշմված ծրագիրը, որ գործնականապես, հաճախ անգիտակցորեն, ղեկավարեր է մեր կուսակցությունը, երբեմն նույնիսկ բացահայտորեն հակառակ գրված ծրագիրներու թելադրությանց:

Ընկ. Հովհ. Քաջազունի սակայն, իր «Ինչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարքով, ուղղակի կերպով կմտենա մեր ծրագրային խնդիրներուն և անմիջականորեն կջանա զանոնք հիմնական վերագնահատության մը ենթարկել: Հ. Քաջազունի, ըստ երևույթին, մեծ կարևորություն կուտա գրված ծրագրին և անհրաժեշտ կսեպե անոր փոփոխությամբ զբաղիլ հանգամանորեն, աշխատելով նոր ձևակերպությամբ մը ավելի մոտեցնել զայն մեր իրականության:

Հովհ. Քաջազունի ընկերվարությունը ավելորդ կնկատե մեր ներկա իրականության համար և նույնիսկ պատրաստ է անկե հրաժարիլ, եթե մեր ազգային-քաղաքական ընթացիկ կյանքի պահանջները ստիպողական դարձնեն այդ:

Իսկ Վ. Նավասարդյան, ընդհակառակը, ոչ միայն չի գոհանար Հ. Յ. Դաշնակցության ծրագրի մեջ եղած սոցիալիստական տեսություններով և պահանջներով, այլև կուզե ճոխացնել զանոնք ամեն տեսակի մանրամասնություններով ու լրացումներով, թեկուզ ատոնք վերաբերվին մեզի համար շատ հեռավոր ապագայի մը: Այդպես է, որ ընկ. Նավասարդյան կջանա առաջն առնել ապագա ամեն թյուրիմացության և, այժմէն իսկ հստակորեն ճշտելով ծրագրի ամեն մեկ կետը, շատ որոշ և հաստատուն ընթացք մը տալ մեր հետագա քաղաքական զարգացման:

Այն մտախմբումներու համար, որոնք տեղի կունենան մեր կուսակցության ծոցին մեջ, առանձնապես բնորոշ են Հովհ. Քաջազունիի և Վ. Նավասարդյանի պատճառաբանությունները: Ուստի ավելորդ չենք նկատեր քիչ մը ավելի հանգամանորեն կանգ առնել անոնց արտահայտած մտքերուն և առաջարկներուն վրա:

Ընկ. Հ. Քաջազունիի քաղաքական աշխարհահայեցողությունը հիմնական զծերով համապատասխան է ընկ. Լ. Շանթի մտքերուն: Սակայն, ինչպես պիտի տեսնեք, ընկ. Հովհ. Քաջազունի, սնված ըլլալով ռուսական միջավայրէն և Շանթէն ավելի հզորապես ենթարկված ըլլալով ռուսական մշակույթի ու ոգիի ազդեցության, տակավին կրցած չէ իր վրայէն թոթափել այդ ազդեցության այն բոլոր հետքերը, որոնք հարազատ չեն հայության և նույնիսկ Ռուսիո համար ալ ցնորական են: Այս պատճառով է, որ իր այնքան առողջ ու խոհուն դատողություններուն մեջ երբեմն կհանդիպինք ցավագին հակասություններու և անհետևողականություններու, որոնք չափով մը կվնասեն իր շատ գործնական և շատ նպատահարմար առաջարկներու ամբողջականության:

«Մեր երկիրը,– կըսէ մեր պատկառելի ընկերը «Ինչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարքի 4-րդ գլխուն մեջ (տե՛ս «Ճակատամարտ», 2 հունիս, 1922թ.),– տնտեսապես վերաշինելու, ուրեմն և պետական կյանքը ապահովելու միակ միջոցն ու ճանապարհը անհատական տնտեսության վերականգնումն ու բարգավաճումն է:

Անհատական տնտեսությունը պահանջում է մասնավոր կապիտալի անձեռնմխելիություն, իսկ մեր ձախորդ պայմաններում՝ ոչ միայն անձեռնմխելիություն, այլ նաև խրախուսանք ու պետական պաշտպանություն:

Ահա այն հրամայական պահանջը՝ որ հակառակ մեր ընկերվարական դավանանքներին՝ պետք է կազմի այսօրվա մեր ներքին, ընկերային քաղաքականության հիմքը:

Եվ մենք պետք է բռնենք այդ ճամփան վճռականորեն, առանց տատանումների»:

Ապա, զարգացնելով իր միտքը, Հ. Քաջազունի կշարունակե քիչ մը վարը. «Մեր պայմանների մեջ կո՞իվ հայտարարել շահագործող կապիտալին՝ կնշանակե պարզապես ինքնասպանություն կատարել: Ոչ միայն չպիտի հայտարարենք կո՞իվ, այլ ինքներս պիտի որոնենք, կանչենք, շահագրգռենք կապիտալը»:

Նույն հոդվածաշարքի 5-րդ գլխուն մեջ մեր ալեգորի ընկերը, զգալով, որ, էթե այդպես վարվինք, ընկերվարությունը մեզի համար բոլորովին ավելորդ և նույնիսկ անարսելի բան մը պիտի ըլլա, կտրամաբանէ.

«Կուսակցությունը և իր ծրագիրը ինքնանպատակներ չեն: Եթե հայ ժողովուրդի և մասնավորապես հայ աշխատավորության կենսական շահերը պահանջում են, որ Դաշնակցությունը, այսօրվա համար, մի կողմ դնի իր դավանանքներն ու ծրագիրը,– նա քաջություն պետք է ունենա այդ ևս անելու»:

Եվ այս գոհողությունը, կամ, ինչպես ինք կըսէ, կոմպրոմիսը Հ. Յ. Դաշնակցությունը պարտավոր է ընել հանուն այն միակ գաղափարին, որուն վրա պիտի կեդրոնացած ըլլան ոչ միայն մեր կուսակցության, այլև հայության ծառայող բոլոր քաղաքական խմբակցությանց ամբողջական ջանքերը, մինչև որ այդ գաղափարը իրականություն դառնա:

Այդ հրատապ գաղափարն է ազատել հայ ժողովուրդը «օտար գերությունից» և ստեղծել «անկախ քաղաքական կյանք»:

Այս առողջ մտքերը, որոնք արտահայտված են այնքան պարզ, որոշ և խտացյալ կերպով, միանգամայն հետևողական են և ընդունելի, իսկ մեր խորին համոզումով, նույնիսկ անվիճելի:

Բայց ընկ. Հ. Քաջազունի կշեղի իր բռնած շիտակ ուղիէն և հակասություններու մեջ կ'իյնա, երբ կուզէ պահպանել ռուս սոցիալիստ-հեղափոխականներէն վերցված մեր ծրագրի ամենէն ձախորդ, ամենէն անգործնական և ամենէն հակակապիտալիստական մեկ կետը՝ հողի համայնացման պահանջը:

«Հայաստանում կա մի կապիտալ միայն,– կըսէ մեր հարգելի ընկերը,– որ կարող է և պետք է սեփականացվի այսօր նեթ, ապագայում համայնացնելու հեռանկով»:

Այդ կապիտալը հողն է, իր վրա և իր մեջ պարունակվող բոլոր բնական հարստություններով...»:

Եվ ավելի հստակորեն բանաձևելով իր միտքը, կ'էզրակացնէ.

«Ուրեմն հողը, իբրև կապիտալ պիտի հայտարարվի ու մնա պետական կամ ժողովրդական սեփականություն և միայն

օգտագործելու անվարձ իրավունքն է, որ պիտի հատկացվի աշխատավոր գյուղացիության»³⁰¹:

Բայց, ըստ երևութին, հեղինակի մտքին մեջ արդեն կասկած մը կա այս պահանջի նպատակահարմարության մասին:

Այդ կասկածը պարզապես կ'հայտնվի Հ. Քաջազունիի հետևյալ հատկանշական վերապահումէն. «Եթե այս ընկերվարական սկզբունքը (հողի համայնացումը կամ պետականացումը) իր կիրառության մեջ չի հարուցանի անմիջական և իրական արգելքներ կամ դժվարություններ անհատական մանր տնտեսությունը վարելու համար,– այսինքն՝ էթե հողային օրէնքը մշակված լինի այնպես, որ չկաշկանդի անհատ արդյունաբերողի նախաձեռնությունը, չկասեցնի արդյունաբերությունը զարգացնելու եռանդն ու տենչը, նա անխռով կընդունվի գյուղացիության կողմից ու լիովին կ'բավարարի նրա հասունցած պահանջը»:

Բայց ոչ նվազ ուշագրավ է և՛ հետևյալ նախադասությունը. «Նույն նպատակի (այսինքն՝ երկրի տնտեսությունը վերաշինելու և ապահովելու) համար անհրաժեշտ է, որ՝ գյուղացիական մանր տնտեսության հետ միասին ու զուգընթացաբար՝ մեր երկրում ծիլ տա խոշոր կապիտալիստական գյուղատնտեսական արդյունաբերություն»:

Իր այն կատարելապես ճիշտ հիմնական մտքին դեմ, թե միմիայն կապիտալի և անհատական տնտեսության միջոցով կարելի է վերաշինել մեր երկիրը, ընկ. Հ. Քաջազունի չարաչար կ'մեղանչէ, երբ կուզէ անմիջապես իրականացված տեսնել հողի համայնացումը կամ պետականացումը,– այսինքն՝ շատ կասկածելի պայման մը, որ եղեր է և է այսօր ալ ամենէն վիճելի հարցը ընկերվարական և տնտեսագիտական գրականության մեջ:

Հողի համայնացման պահանջը, որ ռուսական մտքի ազդեցության ենթակա ընկերվարական շարք մը կուսակցությանց, ինչպես նաև Հ. Յ. Դաշնակցության նվազագույն ծրագրի մեջ ալ մտած է նույնիսկ, բխած է այն մեկնակետէն, թե Ռուսիո նման երկիրներու մեջ, ուր գոյություն ունի հողային համայնք, ընկերվարությունը կարող է դյուրութեամբ իրականանալ հողային տնտեսության մեջ և անոր միջոցով ալ ազդել ճարտարարվեստի վրա:

³⁰¹ Տե՛ս «Ճակատամարտ», 2 հունիս, 1922թ.:

Ռուս ժողովրդասերներուն համար, որոնցմէ առաջ եկան սոցիալիստ հեղափոխականները, հողային համայնքը դարձած էր ֆեոտիչ մը, պաշտամունքի սրբազան առարկա մը, որու պահպանումը և զարգացումը Ռուսիո ընկերային տնտեսական առաջադիմության գլխավոր հիմքը կնկատվէր: Ռուս սոցիալիստները կհավատային, թէ կարելի է, օգտակար է, հետևաբար և անհրաժեշտ է արգիլել կապիտալիզմի մուտքը ռուս գյուղի մեջ: Անոնք կկարծէին, թէ Ռուսիո ընկերային-տնտեսական զարգացման ճամփաները հիմնապէս տարբեր են Արևմտյան Եվրոպայի երկիրներէն և թէ Ռուսիա, շնորհիվ իր հողային նախնական համայնքի գոյության, կարող է, առանց ճաշակելու կապիտալիզմի բոլոր չարիքներն ու բարիքները, ուղղակի անցնիլ ընկերվարական տնտեսության:

Ճակատագրի տարօրինակ հեզանքով ռուս բուշնիկներն էին, որ տարիներ շարունակ կատաղիորեն պայքարելէ ետքը սոցիալիստ-հեղափոխականներու ոչ-մարքսիստական ըմբռնումներուն դէմ հողային հարցի նկատմամբ, երբ իշխանության գլուխ անցան, յուրացուցին իրենց հակառակորդներու ծրագիրը հողի սոցիալիզացիայի կամ համայնացման մասին և բռնի ուժով ջանացին իրագործել զայն:

Այս փորձի տխուր արդյունքները հայտնի են այնքան, որ ավելորդ կնկատենք անոնց վրա կանգ առնել: Հողի համայնացումը վիժեց և ոչ միայն չբարելավեց գյուղացիի վիճակը, այլ ընդհակառակը, վերջնականապէս քանդեց, քայքայեց անոր խղճուկ տնտեսությունը:

Ճիշտ է, ընկ. Հ. Քաջագնուսի առայժմ կուզէ հողի անհատական սեփականության իրավունքը միայն խլել գյուղացիէն և հողը պետական սեփականություն դարձնել միայն, այսինքն՝ հող դուրս հանել կապիտալիստական շրջանառութենէն, արգիլել ամեն առուծախ անոր մասին: Ատկէ մինչև հողի կատարյալ համայնացումը, այսինքն՝ ոչ միայն համայնական ձևով հողին տիրելու, այլև մշակելու դրությունը, դեռ շատ մեծ ու թերևս անանցանելի ճամփա մը կա, բայց այսու հանդերձ ընկ. Քաջագնուսի այժմէն իսկ հնարավոր կհամարէ հարթել այդ ճամփան:

Եվ հոս է գլխավոր վտանգը:

Տնտեսագիտության մեջ արդեն անվիճելիորեն հաստատված իրողություն մը կարելի է նկատել, որ հողային մանր սեփականատիրական տնտեսությունը կապիտալիստական երկիրներու մեջ ոչ միայն քայքայվելու որևէ հակում ցույց չի տար,

ինչպէս ճարտարարվեստի մեջ, այլ ընդհակառակը՝ երևան կրբրէ ապշեցուցիչ կենսունակություն:

Հողագործության մեջ հողի մասնավոր, անհատական սեփականությունը տնտեսության ամենէն կարևոր ազդակներից մեկն է: Զրկել գյուղացին իր կտոր մը հողին անհատական սեփականության իրավունքէն կնշանակէ մեջտեղէն վերցնել այն գլխավոր մղիչ ուժը, որ կատիպէ զայն ոչինչ խնայել իր հողը մշակելու և շենցնելու համար: Ուրիշի, թեկուզ պետության հողին գյուղացին բոլորովին տարբեր աչքով պիտի նայի, քան իր սեփական հողին:

Գյուղացին ամեն պարագայի տակ միշտ պիտի ձգտի հողին սեփականատերը դառնալ: Մասնավոր սեփականությունը անոր բնագոյն է և միաժամանակ իդեալը, և չի կա որևէ ուժ, որ կարենա խեղդել անոր մեջ այդ բնագոյն ու իդեալը:

Բուշնիկյան իշխանությունը ճնշման իր ահավոր միջոցներով անգամ չկրցավ համայնական զգացումները ամրացնել ռուս գյուղացիին մեջ, այլ ընդհակառակը՝ աննախընթաց թափով զորացուց անոր մեջ անհատական սեփականության ձգտումը:

Երբեք պետք չէ մոռնալ, որ գերագանցապէս հողագործական երկիրներու մեջ, ինչպիսին է նաև Հայաստանը, ուր գյուղացիությունը բնակչության ահագին մեծամասնությունը կկազմէ, եթէ տիրող կարգերը դեմոկրատական են, չի կարող ըլլալ քաղաքական ուժ մը, որ ի վիճակի ըլլա պարտադրել գյուղացիության հրաժարվելու հողի անհատական իրավունքէն ու ձգտումէն: Անգամ բռնապետական կարգերու մեջ իշխանությունը անկարող է այդ ընել հարատևորեն:

Կապիտալիզմը կամ դրամատիրական տնտեսությունը չի կարող անարգել կերպով զարգանալ երկրի մը մեջ, որուն ամենէն մեծ կապիտալը հողը պետականացման թէ համայնացումի միջոցով անշարժ վիճակի մեջ է դրված, այսինքն՝ դրամատիրական շրջանառութենէն դուրս է հանված կատարելապէս:

Հողի պետականացումը կամ համայնացումը այն ձևով, ինչպէս կուզէ ընկ. Հ. Քաջագնուսի, անկարելի կդարձնէ նաև խոշոր հողագործական տնտեսության զարգացումը և նույնիսկ գոյությունը:

Ինչո՞ւ: Որովհետև, հողի պետականացման կամ համայնացման պարագային, ինչպէս կըսէ մեր հարգելի ընկերը, «գյուղացին պետք է ունենա իր տրամադրության տակ այնքան հող,

որքան ի վիճակի է մշակելու, առանց հողի զինը հատուցանելու և առանց հողային տուրք վճարելու»:

Ուրիշ խոսքով, եթե մեկը կամենա ավելի շատ հող ունենալ, քան կարող է ինքը մշակել, խոշոր հողագործական տնտեսություն մը առաջ բերելու համար, իսկույն պիտի հանդիպի անհաղթելի արգելքի հանձին ամենագոր պետության, որ պիտի առաջարկե բավականանալ միայն այնքան հողով, զոր մեկը կարող է մշակել իր ընտանիքի հետ միասին, առանց վարձու աշխատանք գործածելու:

Պարզ է, որ այսպիսի պայմաններու մեջ չի կարող զարգանալ խոշոր հողային տնտեսություն: Մինչդեռ ընկ. Հ. Քաջազունին անհրաժեշտ կգտնե, որ «մեր երկրում ծիլ տա նաև խոշոր կապիտալիստական գյուղատնտեսական արդյունաբերություն»:

Եվ հետո ինչպե՞ս պատկերացնել գերազանցապես հողագործական երկրի մը պետական բյուջեն, եթե պետությունը՝ ամբողջ հողին տերն ըլլալով հանդերձ՝ իրավունք չպիտի ունենա ոչ վարձ առնել հողէն և ոչ ալ որևէ հողային տուրք նշանակել: Ինչպե՞ս պիտի կառավարվի ֆինանսապես հողագործական երկիր մը, եթե պետությունը տուրքերէ ազատ կամ գրեթէ ազատ պահե ժողովրդի ճնշող մեծամասնությունը՝ գյուղացիությունը:

Եթե ընկ. Հ. Քաջազունի քիչ մը ավելի հետևողական ըլլար և բոլորովին ազատ ռուս ընկերային ցնորքներէ, կասկած չունինք, որ անհատական սեփականության և կապիտալի մասին ունեցած իր առողջ մտքերը պիտի տարածեր նաև հողի վրա ու թերևս ամենէն առաջ հողի վրա: Այն ատեն իր մյուս այնքան գործնական եզրակացություններու վրա պիտի ավելցնէր և՛ կատարյալ հրաժարումը հողի պետականացման կամ համայնացման ուտոփիական պահանջէն, քանի որ այդ պահանջը անհաշտելի է կապիտալիզմի բնականոն ու անարգել զարգացման հետ, որ ամեն տեսակ կապիտալի կատարյալ ազատություն կպահանջէ:

Եթե ճիշտ է ընկ. Քաջազունիի հիմնական միտքը, որ միմիայն անհատական սեփականության և կապիտալի միջոցով կարելի է վերաշինել մեր երկիրը, ապա ուրեմն պետք է մեկ կողմ դնել նաև հողի պետականացման կամ համայնացման պահանջը:

Այսպես է, որ կարելի է կատարյալ պարզություն մտցնել մտքերու մեջ և միանգամայն հստակ, հետևողական ու շիտակ ուղի մը գծել մեր ապագա քաղաքականության համար:

Հողի համայնացումը ամենամեծ ընկերային ցնորքներէն մեկն է, որմէ պետք է հրաժարիլ օր առաջ՝ մեր երկրի տնտեսական զարգացման առջև եղած արգելքները վերցնելու համար:

Այժմ անցնինք ընկ. Վ. Նավասարդյանին:

XXX

ԵՐԱԶԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկ. Հ. Քաջազունիէն հիմնապես տարբեր ուղղությամբ կգործէ ընկ. Վ. Նավասարդյանի միտքը: Մեզի համար առանձին ուշադրության արժանի են անոր տեսակետները մասնավորապես այն պատճառով, որ անոնք հարազատորեն կարտահայտեն մեր կովկասյան երիտասարդության մեկ կարևոր մասի հասկացողությունները, գաղափարական որոնումներն ու հետաքրքրությունները:

Յուրահատուկ աշխարհ մըն է այս, որ այնքան քիչ առնչություն ունի մեր երկրի դժբախտ իրականության հետ և որ այնքան խորթ է նաև մեր զաղութներու մտայնության: Բայց, հակառակ ատոր, վերջին երկու տասնամյակներու ընթացքին, այդ տեսական աշխարհը տիրական ազդեցություն մը ունեցած է մեր քաղաքական կյանքի վրա և այսօր ալ տակավին, թեև նկատելիորեն նվազած չափով, ան կզբաղեցնէ, կհոգնեցնէ ու կսպառէ գլխավորապես Ռուսիո մեջ մեծցած կամ ապրած գործոն հայ երիտասարդության միտքը, որուն համար ընկերվարությունը ոչ միայն աղբյուր է քաղաքական ամեն իմաստության, այլև անխախտելի դավանանք է:

Մինչ ընկ. Հ. Քաջազունի իր վերագնահատումներով կշանա ազատվիլ այդ վերացական մտաշխարհի շատ մը ցնորքներէն և ավելի իրական, առողջ ու գործնական գետնի վրա դնել մեր քաղաքական հետագա աշխատանքը. մինչ ընկ. Հ. Քաջազունի պատրաստ է նույնիսկ հրաժարվիլ ընկերվարական տարերքէն հանուն մեր երկրի վերաշինության, որ կարող է տեղի ունենալ ոչ թե սոցիալիզմի, այլ կապիտալիզմի ուժերով, ոչ թե ընկերվարության, այլ դրամատիքության զարգացման միջոցով,– ընկ. Վ. Նավասարդյան, ընդհակառակը, կհավատա, թե մեր փրկությունը ընկերվարական

ծրագրի հետևողական ու անշեղ կիրառման մեջ է և ամենայն լրջությամբ կապշտպանե այն տեսակետը, թե Հ. Յ. Դաշնակցության ծրագիրը կտառապի ոչ թե ընկերվարական գաղափարներով և պահանջներով ծանրաբեռնված ըլլալեն, այլ անոնց պակասութենեն կամ թերութենեն: Այդ պատճառով ալ ընկ. Վ. Նավասարդյան կառաջարկե լրացնել, ամբողջացնել, մանրամասնել մեր ծրագիրը ընկերվարական նոր տեսություններով ու բանաձևերով, որպեսզի կատարյալ պատկեր մը ունենանք ոչ միայն ընկերվարական շարժման հաղթանակի պայմաններու մասին, այլև ընկերվարական հասարակակարգի իրագործման եղանակներու վերաբերմամբ:

Շատ բնորոշ է նաև ընկ. Վ. Նավասարդյանի գնահատության կերպը. ան կքննադատե Հ. Յ. Դաշնակցության մինչև օրս ունեցած ծրագիրները ոչ թե այն ձգտումով, որ անոնց այս կամ այն թերի կետերը ավելի հարմարցվին, մոտենան մեր իրականության պայմաններուն, այլ այն մտահոգությամբ, որ անոնք ավելի լավ համապատասխանեն սոցիալիստական թեորիի (տեսության) արդի պահանջներուն:

«Սոցիալիզմը,– կըսե մեր հարգելի ընկերը, ամփոփելով իր մտքերը,– պետք է ներկայացվի ծրագրի մեջ ոչ հայտագրի ձևով իբրև մեր կանխատեսության սահմաններից դուրս մի իդեալ, այլ նա իրոք պետք է լինի իրական և փաստական արտահայտությունն այն հասարակարգի, որին գործնականորեն ձգտում ենք մենք. ասել է՝ հանգամանորեն ու հնարավոր մանրամասնություններով ծրագրի մեջ պարզված պիտի լինի սոցիալիստական հասարակարգն իր բոլոր կողմերով, իբրև ա) իրավական, բ) վարչատնտեսական և գ) էգալիտար (այսինքն՝ մարդկանց հավասարության գաղափարն իրականացնող) հասարակարգ» (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, թիվ 4, էջ 60):

Ապա հեղինակը անհրաժեշտ և հնարավոր կհամարե հետևյալը. «գիտականորեն հիմնավորված և ճշտորոշված պետք է լինին այն նախապայմանները, որոնց գոյության դեպքում միայն հնարավոր է անցնել սոցիալիստական կարգերի իրականացման»...

Քիչ մը վարը ընկ. Վ. Նավասարդյան կուզե մեր ծրագրի մեջ պարզված տեսնել «բնույթն ու էությունը նորագույն սոցիալիստական շարժումների և զգված՝ նրանց հնարավոր ընթացքը»:

Եվ շարունակելով իր միտքը, կըսե. «Օրագրի մեջ հստակ կերպով զատված պետք է լինեն միմյանցից նաև հողային և

ճարտարարվեստական սոցիալիզմը և պարզված, թե ինչպե՞ս նրանցից ամեն մեկն այսօրվա կարգերից իր ուրույն ուղիներով և միջոցներով տանում է դեպի ապագա հասարակարգը»:

Ապա ընկ. Նավասարդյան կուզե, որ «մասնավորաբար պարզված լինի, թե սոցիալիստական հասարակարգի տիրապետության ժամանակ՝ ո՞ր տնտեսությունները, ի՞նչ պայմաններում և ի՞նչ եղանակներով ու չափերով պետք է հավաքականորեն ղեկավարվին ու կազմակերպվին»:

Վերջապես, հեղինակը անհրաժեշտ կգտնե, որ «հատուկ խոսք լինի դեպի սոցիալիստական կարգերի վերջնական հաղթանակը տանող փոխանցման շրջանի, վերջինիս առանձնահատկությունների և այս շրջանի տնտեսության մեջ կիրառվելիք ժամանակավոր միջոցների մասին»:

Անկարելի է չնկատել, թե այն բոլոր հարցերը, որոնց պատասխանը ամենա հստակությամբ, մանրամասնությամբ և «գիտականությամբ» ընկ. Նավասարդյան կուզե տեսնել Հ. Յ. Դաշնակցության ծրագրին մեջ, բնավ չեն բխիր մեր հայրենիքի կենդանի իրականութենեն և հեռավոր չափով իսկ չեն կարող համարվիլ անոր առողջ թելադրությունը: Փոխանակ քննության առնելու մեր երկրի դժնդակ պայմանները և մեր թշվառ ժողովուրդի ստիպողական պահանջներն ու պետքերը, մեր հարգելի ընկերը, առանց ինքն ալ թերևս նկատելու, փաստորեն կապրի եվրոպական առաջավոր ազգերու հեղափոխական մտավորականության հոգերով ու հարցերով, վեճերով ու որոնումներով և զանոնք արհեստական, բռնազբոսիկ կերպով կուզե փաթթել մեր ժողովուրդի վզին, որուն կյանքը ամբողջ դարերով հետ է մնացեր եվրոպական քաղաքակիրթ ազգերու կյանքեն:

Եվրոպայի մեջ, այո՛, սոցիալիստական շարժման տեսաբանները, վերջին տասնամյակի ընթացքին տեղի ունեցած վերիվայրումներու ազդեցության տակ, սկսած են աննախընթաց թափով մը զբաղվել այն հարցերով, զորս կշռշափե ընկ. Վ. Նավասարդյան, և կջանան առաջվրեն ավելի «գիտական» պատասխաններ գտնել անոնց համար: Եվրոպական երկիրներեն ոմանց համար, այո՛, ինչպես են, օրինակ, Գերմանիա կամ Անգլիա, ընկ. Նավասարդյանի սիրած հարցերեն մեկ քանին նույնիսկ գործնական, հրատապ բնույթ են ստացեր և ստիպողաբար պատասխան կպահանջեն հեղափոխական մտավորականութենեն:

Բայց այդպե՞ս է արդյոք մեր երկրի ու ժողովուրդի վիճակը, որ ներելի դարձնե մեր քաղաքական դեկավար տարրերուն այժմէն իսկ զբաղվիլ, հրահրել այնպիսի խնդիրներ, որոնք ոչ միայն մեր սերունդին, այլև հետագա քանի մը սերունդներուն համար հավանաբար միայն վերացական, ճեմարանական արժեք պիտի ունենան:

Ի՞նչ հրամայական պետք կա մեր հասարակական միտքն ու քաղաքական ծրագիրը ծանրաբեռնել մեր երկրին ու ժողովուրդին համար շատ հեռավոր ապագայի մը վիճելի հարցերով ու մանրամասնություններով, որոնք – դժվար չէ գուշակել – մինչև մեզի համար հրատապ այժմեականություն ստանալը ապահովաբար բոլորովին տարբեր ձևակերպում ու պատասխան պիտի ունենան, քան ներկայիս:

XXXI

ՍՈՑԻԱԼԻՉՄ ԹԵ ԿԱՊԻՏԱԼԻՉՄ

Նախորդ գլուխներու մեջ մենք տեսանք, թե ո՞րպիսի խախուտ հիմերու վրա էին կառուցված սոցիալիստական սկզբունքները, տեսություններն ու ծրագիրները: Տեսանք, որ ցնորք է սոցիալիզմը գիտություն դարձնելու ձգտումը: Տեսանք վերջապես, թե ո՞րպիսի ահռելի քառս մը կա սոցիալիստական շարքերու մտքին մեջ իսկ սոցիալիզմի հիմնական հարցերու մասին, թե ի՞նչպես դեռ երեկ ամենեն «գիտական» կարծված սկզբունքներն անգամ այսօր վեճի և կերպարանափոխման կենթարկվին: Եվ ո՞վ կարող է բացարձակ վստահությամբ ու անհողդողդ համոզումով ըսել, թե ի՞նչ պատկեր պիտի ստանա սոցիալիստական թեորին վաղը, երբ ան մեծ պատերազմի ու հեղափոխությանց հարուստ փորձին բովեն անցնի ու վերջնականապես հղկվի, մշակվի, ձևավորվի: Եվ ո՞վ կրնա կատարյալ բարեխղճությամբ պնդել, թե այն, ինչ որ վաղը «գիտական» հմայիչ տիտղոսը պիտի ստանա, քանի մը տարի կամ տասնյակ տարի վերջը քաղաքական նոր փոթորիկ մը նույնպես չպիտի ցնցե ու խորտակե և չպիտի շեշտե կրկին նոր վերագնահատումներու, նոր որոնումներու և նոր բանաձևումներու ստիպողական պետքը, ինչպես այդ կնկատենք այժմ՝ վերջին տարիներու տակնուվրայության հետևանքով:

Ընկ. Վ. Նավասարդյան մասնավորապես շատ կիեռաքրքրվի «փոխանցման» շրջանով, այսինքն՝ այն շրջանով, երբ հասարակությունը ներկա դրամատիրական կարգերեն պիտի անցնի ընկերվարական տնտեսության կազմակերպման: Ի՞նչպես, ի՞նչ պայմաններու մեջ, ի՞նչ միջոցներով, ո՞ր ճյուղերեն սկսելով և ի՞նչ կարգով պիտի կատարվի փոխանցումը:

Ահա խնդիրներ, որոնց լուսաբանության պակասը մեր ծրագրի մեջ ընկ. Նավասարդյանի կթվի մեծ բաց մը և նույնիսկ վտանգ մը: Ընթերցողը ակամա այն տպավորությունը կստանա, թե մեր ընկերը լրջորեն կհավատա, որ մեզի համար ալ «փոխանցման» շրջանը կրնա շատ շուտ գալ և մենք հանկարծ կրնանք անպատրաստ գտնվիլ անոր առաջադրած հրատապ հարցերուն հանդեպ:

Ընկ. Նավասարդյան կկարծե, որ, եթե ծրագիրը իր էջերուն մեջ արձանագրե այդ բոլոր հարցերուն «գիտական» պատասխանները, այն ատեն մենք ազատ պիտի ըլլանք ռուս ընկերվարականներու և մասնավորապես բոլշևիկներու գործած աղիտաբեր սխալներեն:

Սակայն, նախ, ամենակատարյալ ծրագիրն ալ ի վիճակի չէ երբեք փրկել քաղաքականապես տհաս ժողովուրդ մը վտանգավոր, նույնիսկ աղիտաբեր սխալներե. որովհետև ժողովուրդի մը ընթացքը կբխի բազմազան և շատ ավելի խորունկ ու իրական պատճառներե, քան կրնա ներկայացնել թղթի կտոր մը, որ թեկուզ ծրագիր անունը կկրե:

Եվ երկրորդ, «փոխանցման» շրջանը դեռ շատ հեռու, անհասանելիորեն հեռու է մեզմէ: Շտապելու, անհանգստանալու պետք չունինք: Ծրագրի մեջ մտցնելով ենթադրական մանրամասնություններ անոր մասին, ոչ կրնանք փութացնել անոր գալուստը, ոչ ալ խուսափիլ ռուսական սխալներեն, եթե այդ սխալները գործելու համար մեզ մոտ ալ կա իրական հող, ինչպես Ռուսիո մեջ:

Ընկ. Վ. Նավասարդյան, եթե մեր քաղաքական գործունեության ծրագիրը գծելու համար իրեն ելակետ ընդունե ոչ թե ընկերվարական թեորիները կամ «գիտական», կասկածելի արժեք ներկայացնող վերացական կառուցվածքները, այլ մեր երկրի և ժողովրդի իրական պայմաններն ու պահանջները, այն ատեն երբեք չպիտի մտահոգվեր այն «թերություններով» կամ «պակասներով», զորս թերևս ունի Հ. Յ. Դաշնակցության ծրագիրը ընկերվարական

«գիտության» տեսակետով: Ընդհակառակը, ան իր ուշադրությունը պիտի ջանար կեդրոնացնել այն իսկական թերություններու վրա, որոնք չափով մը կրնան արգելք հանդիսանալ մեր երկրի վերաշինության գործին և մեր ժողովուրդի քաղաքական առողջ մտածողության զարգացման: Այն ատեն, մենք վստահ ենք, մեր հարգելի ընկերը պիտի տեսներ, որ մեր հայրենիքի վերաշինության, ինչպես նաև մեր պետական կյանքի ապահովման միակ միջոցն ու ճանապարհը «անհատական տնտեսության վերականգնումն ու բարգավաճումն է», ինչպես կըսե ընկ. Հ. Քաջազունի: Մինչդեռ ընկերվարությունը կձգտի ատոր ճիշտ հակառակ նպատակի մը համայնական տնտեսության:

Ուրիշ խոսքով, այնպիսի շրջանի մը մեջ, երբ մեր երկիրը դեռ ճաշակած չէ դրամատիրական տնտեսության բարիքները (ու անոնց հետ կապված նաև անխուսափելի չարիքները), երբ մեր ժողովուրդը անհատական կապիտալի աճման պետքը կզգա հրամայականներեն, երբ անհրաժեշտ է, որ մեր բոլոր ուժերը լարվին եվրոպական կամ ամերիկյան իմաստով մասնավոր տնտեսություն մշակելու մեր հայրենիքը ներկա աղքատութենեն դուրս բերելու համար, ընկ. Վ. Նավասարդյան կուզա և մեզի կըսե, թե մեր փրկությունը ընկերվարական սկզբունքներու, միջոցներու և ճանփաներու լիակատար զարգացման մեջ է: Այսինքն՝ ընկ. Նավասարդյան մեր երկրի վերքերը բուժելու համար մեզի կհրամայե սոցիալիստական դեղատոմսը այնպիսի ժամանակ, երբ միմիայն կապիտալիստական միջոցներ կպահանջվին:

Մեր հեղափոխական մտավորականությունը, անձնական կամ ենթակայական (սուբյեկտիվ) շարժառիթներով մոլեգնորեն փարած է ընկերվարական իդեալին, մինչ մեր հետամնաց իրականությունը իր անողոք առարկայական (օբյեկտիվ) պայմաններով դրամատիրության (կապիտալիզմի) անարգել և լիակատար զարգացումը կպահանջե:

Մեր գաղափարապաշտ մտավորականությունը, որուն մեկ տիպիկ ներկայացուցիչն է ընկ. Նավասարդյան, անկարող է հրաժարվիլ իր ընկերային իդեալներեն՝ ավելի իրատես աչքերով տեսնելու համար մեր դժբախտ իրականությունը. ան անկարող է նաև այդ իդեալներուն այնպիսի տեղ մը տալ իր հոգիին մեջ, որ չխանգարեն իրերու ողջմիտ և գործնական գնահատության: Եվ ասի այսպես, հետևելով ենթակայական թելադրություններու, որոնք

արդյունք են իր անհատական զարգացման, ընկ. Վ. Նավասարդյան, մեր շատ մը ուրիշ հեղափոխական մտավորականներու պես, անգիտակցաբար կիյնա դժբախտ մոլորության մեջ, թե այդ ենթակայական թելադրությունները կբխին ոչ թե իր հոգիեն միայն, որ կսնանի եվրոպական առաջավոր ազգերու աղբյուրներեն, այլ մեր իսկ իրականության առարկայական պահանջներեն:

Մեր գաղափարապաշտ մտավորականի դժբախտությունը այն բանի մեջ է, որ, գոհացում տալով իր հոգեկան անզուսպ պահանջին՝ ետ չմնալ Եվրոպայի առաջավոր ազգերու հանրային մտքի հրահանգներեն ու հոգերեն, ան ակամա ու աննկատելի կերպով կհեռանա մեր հայրենի իրականութենեն ու կապրի իսկպես մեզի խորթ, կամ մեզ համար վաղաժամ խնդիրներով ու գաղափարներով:

Այս պատճառով է, որ ընկ. Վ. Նավասարդյան չցիտակցիր, թե հայ ժողովուրդին համար սոցիալիզմը ներկայիս ոչ այլ ինչ է, եթե ոչ «մեր կանխատեսության սահմաններից դուրս մի հեռավոր իդեալ», բայց ոչ երբեք «իրական ու փաստական արտահայտությունն» այն հասարակակարգի, որուն մենք այժմ կարող ենք ձգտիլ գործնականապես: Եթե մեր հարգելի ընկերը մեկ կողմ դնեք եվրոպական աղբյուրներե անված հմայիչ թեորհները և մեր իրականության նայեք առանց օտար, գունավոր ակնոցներու, պիտի տեսներ, որ մեզի պակտողը ոչ թե սոցիալիզմն է, այլ կապիտալիզմը, և որ, հակառակ նույնիսկ մեր ընկերվարական իդեալներուն, գործնականապես ու արդյունավոր կերպով մենք կարող ենք և պարտավոր ենք ձգտիլ առայժմ միմիայն դրամատիրական տնտեսության լիակատար զարգացման: Եվ հենց այս է որ պետք է ընենք ամենայն վճռականությամբ ու անվերապահությամբ:

Քանի որ ինք Վ. Նավասարդյան որևէ ապացույց և հիմ չի բերեր, որոնք ակներև դարձնեն ընկերվարության գործնական արժեքը կամ այժմեականությունը մեր երկրին համար, և իրականին մեջ մեզ մոտ չիկան ալ ընկերվարական շարժման նախապայմաններն իսկ, ապա ուրեմն քաղաքական տեսակետով մենք կարող ենք ավելորդ, վաղաժամ նկատել ոչ միայն այն բոլոր վիճելի մանրամասնությունները, որոնցմով մեր հարգելի ընկերը կուզե «լրացնել» Հ. Յ. Դաշնակցության սոցիալիզմի կառուցվածքը մեր ծրագրին մեջ, այլև պիտի թելադրենք «նվազագույն պահանջներու» մասեն դուրս հանել այն բոլոր կետերը, որոնք, ինչպես, օրինակ, հողի համայնացումը կամ 8-ժամյա աշխատանքը անկասկած արգելադրիթ

խոշոր քարեր են՝ ձգված կապիտալիզմի զարգացման ճամփուն վրա վերաշինության կարոտ մեր երկրին մեջ:

XXXII

ՎԻՍԱԲՈՒՇԵՎԻՉՍԸ

Ուրիշ տեղ մը և ուրիշ առիթով մը մենք ըսած ենք, թե մեր հետամնաց, գրեթե նահապետական իրականության մեջ ամեն մեկ փորձ իրագործելու սոցիալիստական ծրագրի հիմնական պահանջները անխուսափելի կերպով պիտի հանգի բոլշևիզմի:

Մեր շատ մը մտավորականները, որոնք ընկ. Վ. Լավասարոյանի պես անվերապահորեն կդատապարտեն բոլշևիզմը, բայց և մինևույն ժամանակ ամեն գնով կուզեն ընկերվարական գործ կատարել մեր երկրի մեջ, փաստորեն իրենք ևս գուրկ չեն բոլշևիկյան հակումները և ցնորքները:

Տեսե՛ք, թե ի՞նչ կըսե մեր հարգելի ընկեր Վ. Լավասարոյանը, բոլշևիկները խստորեն քննադատել է տըրը:

«Մեր ապագա ծրագրին մեջ, — կկարդանք իր հոդվածին մեջ («Հայրենիք» ամսագիր, թիվ 4, էջ 56-57), — շատ ավելի հստակ, քան եղել է մինչև այսօր, պարզված պիտի լինեին հետևյալ հիմնական մտքերը: Լախ, այն որ այսօրվա հողային տնտեսաձևն իր ուրույն, ուղղակի և անմիջական ճանապարհներով պիտի անցնի սոցիալիստական ձևերին՝ առանց անհրաժեշտորեն կապիտալիստական, ինչպես ընդունված է ասել, «մաքրարանից» (երևի ընկերը ուզեցեր է ասել «քավարանից».— Ռ. Դ.) անցնելու: Եվ ապա, երկրորդ, ճշտված պիտի լինին այդ ճանապարհների էությունն ու բնույթը, ասել է՝ հանգամանորեն պետք է ցույց տրվին կոռուպցիայի, աստիճանական համայնացման և աշխատավորական տնտեսությունների ստեղծման բոլոր ձևերը»:

Ուրեմն՝ ընկ. Լավասարոյան լրջորեն դեռ կհավատա, որ եթե ոչ ճարտարարվեստի մեջ, գեթ հողային տնտեսության մեջ կարելի է «ուրույն, ուղղակի և անմիջական» կերպով իրականացնել ընկերվարական ձևերը, այսինքն՝ խուսափիլ կապիտալիստական քավարանեն:

Բայց չէ՞ որ բոլշևիկներն ալ կուզեն, գեթ կուզեին «ուրույն, ուղղակի և անմիջական» կերպով հաստատել ընկերվարական կարգերը և նույնպես խուսափիլ կապիտալիստական քավարանեն:

Տարբերությունը այն է միայն, որ ընկ. Վ. Լավասարոյան և իրեն պես մտածողները «անմիջական» սոցիալիզմի ասպարեզը կսահմանափակեն հողային տնտեսությամբ, իսկ բոլշևիկները «անմիջական» ընկերվարացման ենթակա կհամարեն նաև ճարտարարվեստը: Համենայն դեպս տարբերությունը էական, որակական չէ, այլ քանակական միայն:

Այս արտառոց մտայնության աղբյուրը ռուսական նարոդնիկությունն է, որ ստեղծած է յուրահատուկ սոցիալիզմի պատրանքը, հենվելով ռուս նախնական համայնքի գոյության վրա:

Հակառակ անոր, որ բոլշևիկները ինքզինքնին պաշտոնապես մարքսիստ կսեպեն, անոնք ալ սակայն անգիտակցաբար հզորապես վարակված են ռուս ժողովուրդի նարոդնիկության ցնորքներեն: Մինչդեռ իրականին մեջ ռուս նարոդնիկներու ոգևորության աղբյուրը նախնական կոմունիզմն էր և ոչ նորագույն ընկերվարական իդեալը, որուն ձևակերպումը արդյունք է գերազանցապես կապիտալիստական ներկա տնտեսության:

Առաջավոր երկիրներու հարուստ փորձը, ինչպես նաև վիճակագրական, տնտեսագիտական և գյուղատնտեսական առարկայորեն անաչառ ուսումնասիրությունները գրեթե կասկած չեն թողուր այն մասին, որ հողային տնտեսությունը իր առանձնահատուկ բնավորությամբ ավելի դժվարամարսն է ընկերվարության համար: Եվ այն աստիճան, որ ընկերվարականներեն ոմանք չեն ալ կրնար պատկերացնել, թե ինչպե՞ս ընկերվարությունը իր լիակատար առումով պիտի հաղթանակե գյուղին մեջ:

Մակայն հակառակ գիտական աղաղակող տվյալներու և փաստերու, ընկ. Վ. Լավասարոյան միանգամայն հնարավոր կնկատե ոչ միայն այն, որ հողային տնտեսության մեջ կարելի պիտի ըլլա իրագործել «ուղղակի և անմիջական» կերպով ընկերվարական ձևերը, այլև այն, որ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերեն առաջ հենց հողի վրա կարելի պիտի ըլլա հաջողցնել ընկերվարության հաղթանակը:

Ընկ. Վ. Լավասարոյան նոր գաղափար մը չէ, որ կպաշտպանե, այլ միայն կուզե, որ Զ. Յ. Դաշնակցության ծրագրի նվազագույն պահանջներու բաժնի մեջ, 1907թ., ռուս սոցիալիստ-

հեղափոխականներու ազդեցությամբ մտած հողի համայնացման սկզբունքը խմբագրվի ավելի ընդարձակ ու մանրամասն կերպով: Ըստ երևույթին, մեր հարգելի ընկերոջ համար բոլորովին իգուր են անցեր բոլշևիկներու հողային համայնացման վիժած փորձին խրատական դասերը, ինչպես նաև 1907 թվեն ի վեր հողային հարցի վիճակի և ըմբռնման մեջ տեղի ունեցած փոփոխությունները:

Ընկ. Վ. Նավասարդյան դեռ ռուսական առաջին հեղափոխության (1905-1906թթ.) կուսական հավատքով կտեսնե ընկերային հարցերեն ամենեն կնճռոտին՝ հողային խնդրին լուծումը, որ իրեն կթվի այնքա՛ն դյուրին, այնքա՛ն մոտալուտ: Ռուս ցնորամիտ (ուտոպիստ) ու գաղափարապաշտ ընկերվարականներու պես ան ալ ա՛յնքան կշտապե օր առաջ իրագործված տեսնել ընկերվարությունը գյուղին մեջ, որ կուզե նույնիսկ թռչի կապիտալիստական քավարանի վրայեն՝ անմիջապես մասնակից դարձնելու համար մեզ «հողային սոցիալիզմի» բարիքներուն:

Մենք տեսանք արդեն, թե նույնիսկ ընկ. Հովհ. Քաջագնունի, որ այնքա՛ն ողջմիտ, իրատես ու համարձակ հայացքով մը կրցած էր գնահատել մեր երկրի պայմաններն ու անոնցմե բխող հրատապ պահանջները, չէր կրցած իսպառ ազատվիլ ռուս սոցիալիստական մտքի նախապաշարյալ վերաբերումեն դեպի հողային հարցը, որուն առջև տարօրինակ անգործությամբ ու անսպասելի վարանումով կանգ էր առեր մեր պատկառելի ընկերոջ քննադատական կորովի գրիչը: Հարկավ, ընկ. Հ. Քաջագնունի չէր հավատար, թե ընկերվարությունը, իբրև արտադրության եղանակ, կարելի է գյուղի մեջ իրագործել «ուղղակի և անմիջական» կերպով, բայց այսուհանդերձ օգտակար կնկատեր անմիջապես համայնացնել կամ պետականացնել հողային սեփականությունը:

Մենք արդեն մատնանշեցինք այն մեծ անպատեհություններն ու վնասները, որոնք անխուսափելիորեն պիտի ծագին հողի անմիջական պետականացումեն կամ համայնացումեն՝ ազատ զարգացման կարոտ մեր աղքատ երկրին մեջ, մինչդեռ հողի համայնացումը, թեկուզ սեփականատիրության տեսակետով միայն, պիտի ստեղծե նոր արգելքներ կապիտալիզմի ներմուծման ու ճաման դեմ և պիտի կասեցնե վերաշինության գործը, որ անկարելի է առանց մանր և խոշոր դրամագլուխի ազատ շրջանառության՝ տնտեսության բոլոր ճյուղերուն մեջ:

Այս իսկ պատճառով քաղաքական ողջմտությունը կպահանջե ոչ թե լրացնել, զարգացնել կամ մանրամասնել հողի համայնացման պահանջը, ինչպես որ կթելադրե ընկ. Վ. Նավասարդյան, այլ, ընդհակառակը, իսպառ դուրս հանել զայն մեր ծրագրի նվազագույն, այսինքն՝ ներկա կարգերու մեջ իսկ իրագործելի պահանջներու բաժնեն:

Եվ եթե ընկ. Նավասարդյանի միտքը կաշկանդված չըլլար սոցիալիզմի վերացական թեորիներու աշխարհով, այն ատեն, մենք վստահ ենք, հեզնանքով նա չպիտի խոսեր մեր այն ընկերներու մասին, որոնք կուզեն «սոցիալիզմը մեր ծրագրի մաքսիմալ բաժնից տեղափոխել նրա ամենամաքսիմալ ու հեռավոր անկյունը, իբրև այլև չմտահոգող և անտեսանելի օրերի իդեալ, իսկ սոցիալիզմից բխող նվազագույն ծրագիրը հասցնել իր նվազագույն չափերին և դարձնել զայն՝ օրվա քաղաքականության, պարզ պլատֆորմայի խնդիր»:

Դժբախտաբար, ընկ. Վ. Նավասարդյան իր հողվածին մեջ չէ կրցած բերել որևէ համոզիչ փաստ կամ պատճառաբանություն, որ իրավունք տար մեզ ապ իրեն հետ միասին հեզնելու այդպես մտածողները:

Իր դատողություններն ու գնահատությունները ճեմարանական բնույթ ունին միայն, բայց երբեք չեն շոշափեր մեր երկրի իրական պայմաններն ու մեր թշվառ ժողովուրդի կենսական պահանջները, որոնց տեսակետով, այո, սոցիալիզմը ուրիշ բան չէ, բայց եթե «անտեսանելի օրերի իդեալ» մը, իսկ սոցիալիզմի թեորիային վերաբերող խնդիրները, որոնք այնքան կզբաղեցնեն մեր ընկեր Վ. Նավասարդյանը, իրենց էությանբ, ավաղ, դեռ երկար ժամանակ դատապարտված են մնալու տեսակ մը շռայլություն, լյուքս, մեր հետամնաց իրականության համար:

Անոնք կրնան լրջորեն «մտահոգել» մեր անհատ մտավորականները, բայց երբեք՝ մեր ժողովուրդը, որուն ճամփուն վրա դրված են առայժմ ուրիշ, ավելի հիմնական, ավելի ստիպողական խնդիրներ...

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Ոչ թե ընկերային-տնտեսագիտական կամ պատմա-փիլիսոփայական հարցերն են, ոոր կկազմեն այսօր հայ քաղաքական մտքի գլխավոր առանցքը և հայ հանրային պայքարի հիմնական առարկան, այլ հայ ազգային գոյության և անկախության վերաբերյալ կենսական խնդիրները: Ոչ թե մեր այս կամ այն վերաբերմունքը դեպի սոցիալիզմը, դասակարգային կռիվն ու միջազգային համերաշխության գաղափարն է, որ կբնորոշե հայության ներկա ոգորումները և կբաժնե հայ հասարակությունը հակամարտ հոսանքներու, այլ մեր դիրքը հանդեպ հայկական անկախ պետության նպատակին և անոր իրագործման ու ապահովման միջոցներուն:

Ազատության մշուշապատ իդեալը, որ տասնյակ տարիներ խանդավառեր է պայքարող հայությունը, այսօր միս ու մարմին է ստացեր Անկախության գաղափարին մեջ, որ վերջին տասնամյակի համաշխարհային վերիվայրումներու հետևանքով տիրաբար կդառնա կեղրոնական նպատակը մեր ժողովրդի քաղաքական բովանդակ պայքարին:

Հակառակ անոր, որ մոտ քառասուն տարիներ է վեր գոյություն ունին մեր մեջ կազմակերպված քաղաքական կուսակցություններ, որոնք ձգտեր են հայ ժողովրդի ազատության, միայն 1918 թ. է, որ Հայաստանի անկախությունը առաջին անգամ որոշապես կշեշտվի հայ ազգի գիտակցության մեջ, նախ, իբրև գահավեժ դեպքերու բերումով ստեղծված փաստ և ապա, 1919թ., իբրև հստակորեն ձևակերպված քաղաքական պահանջ հայկական հանրապետությունը ստեղծող կուսակցության՝ Զ. Յ. Դաշնակցության ծրագրին մեջ:

Ահա թե ինչու 1918թ. մայիս 28-ը, երբ հռչակվեցավ Հայաստանի անկախությունը, ոչ միայն իբրև իրողություն, այլև իբրև գաղափար նոր դարաշրջան մը բացավ հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ:

Հայ քաղաքական երևակայությունը տասնյակ տարիներ շարունակ Թրքահայաստանի ինքնավարութենեն (ավտոնոմիա) անդին չէր անցնի, դնելով զայն թրքական կամ ռուսական

վեհապետության տակ: Իսկ երբ փաստորեն ստեղծվեցավ Հայաստանի անկախ պետությունը, շատ շատերը դեռ կերպեին մանդատներու, օտար ինամակալությանց մասին: Դարերով ստրկացած հայուն հոգին չէր կրնար դեռ ընդունիլ, որ մեր ժողովուրդը կրնա ապրիլ կատարելապես ազատ, անկախ ու ինքնիշխան: Եվ հայ քաղաքական ստրուկին միտքը անպատճառ տեր մը կփնտրեր մեր ազգին համար, փնտրելով զայն աշխարհի ամեն կողմ և բախելով ամեն օտար դուռ:

Հայ սոցիալիստ հեղափոխականներեն սկսած, որոնք՝ Հայաստանի Խորհրդարանի մեջ իսկ նստած՝ անձկությամբ կսպասեին, թե ե՞րբ պիտի գա «Հայաստանի իսկական տերը՝ Ռուսաստանը», ինչպես իրենք կըսեին, մինչև հայ պահպանողական տարրերը արտասահմանի մեջ Ռամկավարները չէին ուզեր հաշտվիլ հայկական անկախ հանրապետության և անոր հարազատ կառավարության հետ ու պատրաստ էին ամեն ստորնություն և նույնիսկ դավաճանություն ընել՝ վերստին օտարի մը լուծին ենթարկելու համար ազատագրված հայ ժողովուրդը: Եվ դեռ այսօր մի թե քիչ են ստրկամիտ հայեր, նույնիսկ մտավորական կոչվածներեն, որոնք օտարի իշխանությունը կզերադասեն հայ ազգային կառավարութենեն:

Այդպիսիներու խումբ մը չէ՞ր արդյոք, որ ռուսական սվիններու գորությամբ և թուրք փաշաներու բարեհաճությամբ, ամեն ճիգ թափեց խորտակելու Հայաստանի Հանրապետությունը և օտար բռնավորներու ոտքերուն տակ դնելու նորեն մեր երկիրը:

Այդպիսիներու խումբ մը չէ՞ արդյոք, որ այստեղ, արտասահմանի մեջ, մինչև այսօր ալ, ծափ կզարնեն անոնց, որ օտար գորքերով եկան Հայաստան և ճզմեցին, ջնջեցին մեր ժողովրդի ազատությունն ու անկախությունը:

Եվ անոնք, որ հոն բոլշևիկ կկոչվին, և ասոնք, որ հոս Ռամկավար անունը կկրեն, չէ՞ն կրեր արդյոք իրենց մեջ ստրուկ մեծցած հայուն օտարամոլ ու ծառայական հոգին, որ այժմ ալ իրեն կուրք է դարձուցեր ռուսին ուժը և անոր կզոհե իր ժողովրդին անկախ գոյության սրբազան իրավունքները:

Եվ ի՞նչ սովետություններու ըսես, որ անոնք չեն դիմեր՝ արդարացնելու համար իրենց դավաճան վերաբերմունքը դեպի հայության ազգային իդեալները:

Ուսանք – բուլշևիկները – «համաշխարհային հեղափոխության» և «միջազգային պրոլետարիատի» անունով կուզեն ծածկել ռուսական բռնապետության ծառայելու իրենց ստրկական հակումները. մյուսները – Ռամկավարները – հայ ժողովրդի ֆիզիքական գոյության կամ ապահովության պատրվակով կջանան քողարկել իրենց ստորաքարշ համակերպումը Հայաստանի ներկա ստրկացման:

Անկախությունը, կրսեն չափեն ավելի ճկուն այդ իմաստունները, ինքնանպատակ մը չէ, այլ միջոց մը, որ մեր ժողովրդի տկար ուժերուն չի հարմարիր. ավելի ապահով չէ՞ հզորի մը հովանիին տակ ապրիլ, քան անկախ ըլլալ, երբ անկախությունը այնքան վտանգավոր բան մըն է մեզի համար. ավելի խոհեմություն չէ՞ տեր մը ունենալ, որ միշտ կրնա պաշտպանել մեզ, քան ըլլալ ազատ ու անպաշտպան. շնորհակալ չպիտի ըլլանք արդոք այդ բուլշևիկ ռուսներուն, որ մտեր են մեր երկիրը իրենց կարմիր բանակներով և մեր ժողովրդի համար պահապան հրեշտակներու դերը կկատարեն այսօր...

Այդպես կդատեն ու կարող են դատել միայն ստրուկները, որոնց սիրտը ի վիճակի չէ բաբախելու ազատատենչ և ինքնավստահ հայության սրտին հետ միասին և որոնց շղթայված միտքը անգոր, անընդունակ է ըմբռնելու անկախության դոները տիրաբար բախող հայ ազգի անհաղթելի կամքը: Անոնք չեն ուզեր հասկնալ, թե հայ ժողովուրդը այլևս երեկի մանուկը չէ, որ ուրիշներու խնամքին պետքը ունենա, այլ արդեն հասունցած երիտասարդ մը, որ կզերադասե ապրիլ աղքատ, բայց ազատ ու անկախ:

Հայ իրականության մեջ այսօր կազմակերպված քաղաքական մեկ ուժ կա միայն՝ Հ. Յ. Դաշնակցությունը, որ անվերապահ ու անշեղ, հետևողական ու նպատակագիտակից կերպով կպայքարե հայ ժողովրդի անկախության համար, նկատելով Ազատ և Անկախ հայկական պետության ստեղծումը մեր ազգի ամենեն հրատարա, ստիպողական և կենսական պահանջը:

Տարակույս չկա, որ այդ ուժն է միայն, որ այժմ ալ, ինչպես միշտ վերջին տասնամյակներու ընթացքին, կխտացնե, կմարմնավորե իր մեջ պայքարող և ստեղծագործող հայության մարտական կորովն ու քաղաքական կամքը:

Իսկ այդ կամքը կամփոփվի այսօր մեկ բառի մեջ – անկախություն:

Ի՞նչ կներկայացնե սակայն անկախության համար մեր իրականությունը, որ մնացած է իբրև ժառանգություն մոտիկ անցյալին:

Մինչև 1918 թ. հայ ժողովրդի ազատագրության գործը ունեցեր է երկու ճակատ, որոնցմե միայն մեկուն՝ Թրքահայկականին վրա գրեթե բացառապես կեղրոնացած էր մեր ամբողջ պայքարը տասնյակ տարիներ շարունակ:

Հ. Յ. Դաշնակցությունը, թեև ծնավ Կովկասի մեջ, բայց սնվեցավ, աճեցավ ու ապրեցավ Թրքահայաստանի դատով, որ կես դար անընդհատ մեր բոլոր սերունդներու ոգևորության աղբյուր դարձավ: Հայությունը Կովկասի մեջ իր բովանդակ քաղաքական կորովը սպառեց Թրքահայաստանի ազատագրության համար, անտես առնելով իր տեղական կարիքները և երկար ատեն ինքզինքը անշարժության մատնելով ցարական ռեժիմի հանդեպ, որուն դեմ կպայքարեին Ռուսիո գրեթե բոլոր ժողովուրդները:

Համաշխարհային պատերազմեն և ռուսական մեծ հեղափոխութենեն առաջ՝ Հայաստան ըսելով ամեն մեկ հայ կհասկնար Թրքահայաստանը: Իսկ Կովկասի մեջ գտնվող մեր երկիրը, որ 1918-1920թթ. կազմեց հայկական անկախ հանրապետությունը, ծածկված էր թանձր մշուշով մը հայուն քաղաքական գիտակցության մեջ:

Ոչ ոք գիտեր անոր սահմանները: Ոչ ոք կհամարձակեր մտածել անոր ազատության և մանավանդ անջատման ու անկախության մասին: Այդ հողամասի վրա չկար անկյուն մը, որուն հայկական ըլլալը չժխտեին մեր բախտակից դրացի ժողովուրդները: Եվ ոչ մեկի մտքն իսկ կանցներ, թե օր մը ցարական կայսրությունը այնքան պիտի քայքայվի ու տկարանա, որ կարելի ըլլա լրջորեն ձգտել Ռուսահայաստանի ազատ ու անկախ գոյության:

Այս ալ պատճառներն մեկն էր, որ բոլոր հայկական հատվածներու հայացքը ուղղված էր դեպի Թրքահայաստան, որուն մեջ տիրող տաժանելի, հայաջինջ ռեժիմը շուտափույթ օգնություն կպահանջեր:

1915թ. թուրքերը կախամտածված դիվային ծրագրով մը սրբեցին հայկական զանգվածը Թրքահայաստանի վիլայեթներեն: Մահացու հարված մըն էր այս ուղղված քաղաքական այն դաշտին, որուն վրա ծանրացած էր մինչ այդ բովանդակ հայության հեղափոխական միտքն ու կորովը: Մեկ հարվածով մեջտեղէն կվերցվէր մեր ազատագրական պայքարին բուն առարկան՝ թրքահայ ժողովուրդը և անոր ողջ մնացած փոքրիկ բեկորները կնետվէին մայր երկրէն հեռավոր վայրեր:

Եվ Թրքահայաստանի ազատության երազը, որ ռուսական բանակի հաղթանակով այնքան մոտեցած կթվէր իրականացման, հանկարծ օդը կցնդէր կամ, լավագոյն պարագային, կմատնվէր մութ և մահասարսուտ անորոշության մը:

Կենդանի մնացած հայությունը բնազդով զգաց հարվածին ահավորությունը, բայց հայ քաղաքական միտքը անկարող եղավ շուտով մարսել կատարված իրողությունը, որ հիմնապէս կփոխէր մեր իրականությունը, և դէռ երկար ատեն ի վիճակի չեղավ այդ ողբերգական իրողութենէն հանել անհրաժեշտ եզրակացությունները:

Աններելի ռոմանթիզմով տարված՝ շատ շատեր դէռ տարինէր շարունակ համառեցան պաշտպանել այն աղետավոր ու ցնորական գաղափարը, թէ հայկական զանգվածէն իսպառ դատարկված Թրքահայաստան մը առանձինն կարող է տակավին հիմ ծառայել անջատ Թրքահայաստանի գոյության համար: Եվ Պողոս Նուբար փաշաներն ու անոր կարճամիտ ու աղանդամոլ Ռամկավար հետևորդները բութ համառությամբ չկրցան կամ չկամեցան ըմբռնել, որ թրքահայկական դատը, թրքահայ մեծ աղետին հետևանքով, արդէն անբաժանորէն կապված կովկասյան Հայաստանի բախտին հետ և թէ առանց Կովկասահայաստանի ուժին ու օգնության այլևս անկարելի է Թրքահայաստանի մը գոյությունը:

1919 թ. մայիսի 28-ի պատմական ակտով, որ հռչակեց Միացյալ Հայաստանի գաղափարը, Հ. Յ. Դաշնակցությունը հանդիսավորապէս ժխտեց թրքահայ դատի անջատ լուծումը և շեշտեց այն առողջ, իրատես և գործնական միտքը, թէ Թրքահայաստանի միակ բանալին այժմ Կովկասահայաստանն ու անոր սահմաններուն մեջ ստեղծված հանրապետությունն է, որուն միջոցով կարելի պիտի ըլլա միայն գրավել թրքահայկական նահանգներն և նորէն հայաբնակ դարձնել զանոնք:

Մեզի մնացած այս միակ, գործնական ճամփան սակայն բուռն ցատումով մերժվեցավ հայ գաղութներու մեկ որոշ մասին կողմէ, որ կշարժվէր Պողոս Նուբար փաշաներու իմաստուն ցուցմունքներով: Եվ մայիս 28-ի ակտը անոնց աչքին դարձավ Լույսիկ Ն. Յ. Դաշնակցության ամենէն մեծ հանցանքներէն մեկը:

Մեր հակառակորդները ոչ մեկ պարագայի տակ կուզէին կապել թրքահայկական «ապահով» դատը «Երևանյան հանրապետության» «կասկածելի» բախտին հետ: Չափէն ավելի խոհեմ Ռամկավար քաղաքագետները կկարծէին, թէ թրքահայկական դատը կարող է միմիայն վտանգվիլ, եթէ կապվի ու միացվի կովկասյան Հայաստանի հանրապետության գոյության խնդրի հետ, և թէ ան պետք է լուծվի միանգամայն անջատ Երևանէն:

Երբ Հայաստանի Հանրապետությունը նվաճվեցավ քեմալական և բոլշևիկյան ուժերու կողմէ, Ռամկավար դիվանագետները թրքահայկական պետության ձգտումը վերածեցին Ազգային Տան պահանջին, որ առաջին անգամ ձևակերպվեցավ իրենց բարեկամ միախոնարներու կողմէ 1921թ. մարտին Լոնդոնի քոնֆերանսի մեջ և թաղվեցավ երկու տարի ետքը, Լոզանի առաջին քոնֆերանսի զամբոյուղին մեջ: Իսկ այսօր թրքահայկական առանձին դատի կամ Ազգային Տան ամենէն մոլեռանդ ջատագովներն անգամ հայկական պետության միակ կորիզը կսեպեն արդէն միմիայն կովկասյան Հայաստանը, որ Խորհրդային անունը կկրէ բոլշևիկյան գրավման հետևանքով:

Պետք եղավ ուրեմն եվրոպական և ամերիկյան դիվանագիտության դաժան ու ցնցող դասը, որպէսզի ազգային դիվանագետներ ըլլալու հավակնություն ունեցող մեր քաղաքական մանուկները վերջապէս ըմբռնեն, թէ հայկական բովանդակ հարցի միակ իրական հողը կովկասյան Հայաստանն է, ուր նստած է գրեթէ մեկ և կես միլիոն հայություն, թէ հայկական պետության ստեղծագործման համար միակ հնարավոր ելակետն ու հենարանը կովկասյան Հայաստանն է և թէ վերջապէս թրքահայկական դատի ալ լուծման միակ ճամփան այսօր կանցնի միմիայն ու միմիայն կովկասյան Հայաստանի վրայով:

Կարելի է վիճել Խորհրդային Հայաստանի իրավական էության մասին, իբրև պետության: Կարելի է տարակարծիք ըլլալ խորհրդային ռեժիմի նշանակության մասին մեր ժողովրդի գոյության համար: Բայց ոչ մեկ ողջմիտ հայ չի կարող ժխտել այսուհետև, որ

Խորհրդային կոչված Հայաստան հողամասը այսօր միակ քաղաքական ասպարեզն է մեր պետական շինարարության համար: Որևէ կասկած չի կարող ըլլալ այն ալևա այն մասին, թե հայ հանրապետության ժառանգորդ Խորհրդային Հայաստանն է նաև ասպագա հայկական պետության կորիզը:

Մենք կարող ենք պայքարել և նույնիսկ կատաղիորեն պայքարել խորհրդային հոռի ռեժիմի դեմ, մենք կարող ենք ժխտել Երևանի ներկա իշխանության հայկական ըլլալն իսկ, բայց երբեք այդ չպիտի նշանակե, թե մեր բացասական կամ թշնամական վերաբերմունքը ուղղված է նաև պետական այն կորիզին դեմ, որ Հայաստանի Հանրապետությունն մնացած է Խորհրդային Հայաստանին, և ոչ ալ այն ժողովուրդին դեմ, որ կապրի հոն և որ երեկ կրցավ ստեղծել հայկական պետությունը և վաղն ալ – վստահ ենք – պիտի կարենա վերականգնել գայն:

Քովանդակ հայության համար Խորհրդային Հայաստանը, իբրև հողամաս, իբրև ժողովուրդ և իբրև ազգային-վարչական միավոր, կդառնա այսուհետև մեր բոլոր քաղաքական ձգտումներուն և ճիգերուն միակ անմիջական և խտացյալ նպատակակետը, որովհետև, ինչպես ըսինք, ան է այժմ նաև միակ ճամփան, որ կարող է մեզ օր մը տանիլ դեպի Թրքահայաստան:

Մնացած բոլոր ճամփաները, որոնք եղած են անցյալի մեջ, մեզի համար փակված են արդեն, թերևս վերջնականապես: Եվ որքան ատեն, որ Խորհրդային Հայաստանը, իբրև հայկական միջնաբերդ, հզոր և անխորտակելի ուժ մը չէ դարձած, ցնորք պիտի մնա և Թրքահայաստանի ազատագրությունը:

Հետևաբար ամրացնել այդ միջնաբերդը բոլոր տրամադրելի միջոցներով կնշանակե նաև ծառայել թրքահայկական դատին:

Մեր ազգային ներկա քաղաքականության ամենեն ստիպողական պահանջն է այս:

Իսկ ամրացնել մեր միջնաբերդը կարող ենք ներկա պայմաններու մեջ միայն հոն ապրող հայկական զանգվածի տնտեսական վիճակը բարձրացնելով, որ և իր կարգին պիտի նպաստե ժողովրդի ավելի արագ բնական աճման և միևնույն ատեն պիտի ստեղծե ներգաղթի ավելի ընդարձակ հնարավորություններ:

Այսպիսով թրքահայկական ճակատեն սկսելով՝ հայ ժողովրդի ազգային քաղաքական պայքարն ու հանրային աշխատանքը, վերջին տասնամյակի առաջ բերած

տակնուվրայության հետևանքով, իրերու երկաթե անհրաժեշտությամբ կկեղորնանան բացառապես ռուսահայկական կամ կովկասահայկական ճակատին վրա, որուն հետ կկապվին այժմ նաև թրքահայ զանգվածի դժբախտ մնացորդներու և բոլոր հայ զաղութներու բովանդակ հույսերն ու կարելիությունները...

XXXV

ԱՐԳԵԼՔ

Հայ քաղաքական կյանքի հիմերուն այս շրջումը, ներկա պայմաններու մեջ, ավելի քան երբեք հրամայականորեն անհրաժեշտ կդարձնե հայ զաղութներու ներգոր և գործոն օժանդակությունը մեր միակ ճակատին վրա այժմ կանգնած հայկական զանգվածին՝ ապահով և հաղթական կերպով դուրս գալու համար այն անելեն, որուն մեջ ինկած է իրերու և դեպքերու դժբախտ դասավորման հետևանքով:

Սակայն այդ օժանդակության գործը մեծապես կդժվարացնե, եթե չըսենք գրեթե անկարելի կդարձնե խորհրդային իշխանության գոյությունը, – իշխանության մը, որ իր վարած աղետավոր քաղաքակրթությամբ կքանդե ժողովրդական տնտեսության հիմերը Հայաստանի մեջ ալ այնպես, ինչպես հինգ-վեց տարիներ է ի վեր համայն Ռուսիո մեջ:

Ինչպես ցույց տվավ Ռուսիո ներքին փորձը, հոկտեմբերյան հեղաշրջումեն սկսած մինչև այսօր, անկարելի է ոնէ կանոնավոր համագործակցություն տիրող բոլշևիկյան կուսակցության և քաղաքական այլ կազմակերպությանց միջև ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու մշակութային խնդիրներու շուրջը: Իշխանությունը կորսնցնելու երկյուղը այնքան մեծ է բոլշևիկներու մեջ, որ անասնական կույր վախի չափեր է ընդունած: Այդ պատճառով է, որ ոչ իրենք՝ բոլշևիկները կհավատան ոնէ այլ կազմակերպության, ոչ ալ իրենց սեփական վերաբերումով ի վիճակի են նվազագույն վստահություն իսկ ներշնչելու իրենց դիմացինին ոնէ արդյունավոր հարաբերություններ ստեղծելու իրենց հետ ոնէ ընդհանուր ձեռնարկի շուրջը: Այդ պատճառով է, որ կսարսափին ոնէ ոչ բոլշևիկ կազմակերպության հետ գործակցելե, թեկուզ ան

կատարելապես լոյս ըլլա Խորհրդային կառավարության հանդէպ: Այդ պատճառով է, որ միշտ իրենց հանդէպ անպայման և անվերապահ անձնատվություն և հնազանդություն կպահանջեն ու երբ պետք ունին ուրիշներու օգնության, կխուսափին անկախ հանրային հաստատությանց օժանդակութենէն և կգերադասեն մասնավոր ձեռնարկները, որոնց նկատմամբ կրնան կատարելապես վստահ ըլլալ, թէ անոնք չեն կարող ունէ քաղաքական ազդեցություն կամ հետին նպատակ ունենալ իրենց լուծին տակ գտնվող ժողովուրդներու մէջ:

Այսպէս են ռուս բոլշեիկները. այսպէս է նույնպէս հայ բոլշեիկներու մտայնությունը:

Երբ Երևանի ներկա «վարիչները» օգնության կոչեր կուղղեն մեր գաղութներուն, անոնք կձգտին միշտ իրենց առջև ունենալ ավագանման մարդկային կույտ մը կամ անբան արարածներու հոտ մը, բայց ոչ երբէք կազմակերպված ու գիտակից հասարակություն մը, որ չի ուզեր միայն գործիք ծառայել, այլ կձգտի բնականաբար իրավահավասար աշխատակից մը ըլլալ ընդհանուր գործի մէջ:

Հայ բոլշեիկները մեր գաղութներէն իրապէս կպահանջեն ոչ այնքան օգնություն Հայաստանի ժողովուրդին, որքան անվերապահ նվիրում ու ծառայություն Խորհրդային իշխանության «պրոլետարական» նպատակներուն: Տնտեսական կամ մշակութային ձեռնարկներու անունով անոնք փաստորէն կհետապնդեն ամենուրեք գերազանցապէս նեղմիտ ու տարամերժ կուսակցական նպատակներ, որոնք կատարելապէս խորթ են, օտար են հայ ժողովրդի ազգային կենսական պետքերուն և շահերուն:

Ահա թէ ինչու անմիտ և ապարդյուն են գաղութներու մէջ գործող հայ կազմակերպությանց բոլոր ճիգերը իրավախտության մը գալու Խորհրդային կառավարության հետ հայ ազգի գոյության և ազատության վերաբերվող խնդիրներու շուրջը:

Գաղութներու հայության հետ ալ բոլշեիկները կուզեն վարվիլ այնպէս, ինչպէս Հայաստանի ժողովրդին հետ, որուն ձայնն ու կամքը խեղդած են ռուսական սվիններու զորությամբ: Իրենց բազուկը սակայն շատ կարճ է հայ գաղութներն ալ բռնությամբ իրենց Մոսկվայի կարմիր տերերուն ծառայեցնելու համար: Հարկավ, իրենց փնտրածը հոս այն քանի մը տասնյակ տրակտորները չեն, զորս անոնք կրնան ստանալ գաղութներու հայութենէն, այլ բոլշեիկյան

«բջիջներու» համատարած հզոր ցանց մը, որ ի վիճակի ըլլա կազմակերպված և ծավալուն պրոպագանդով ու դավերով իր ձեռքին խաղալիք դարձնել մեր բոլոր գաղութները և անոնց միջոցով նաև ազդել շրջապատի վրա Մոսկվայի կարմիրներու «հեղափոխական» գործը արտասահմանի մէջ դուրացնելու համար:

Գաղութներու հայությունը բոլշեիկներու համար անկասկած արհամարհելի ուժ մը պիտի ըլլար, եթէ միայն ան իր համատարած կազմակերպություններով ի վիճակի չըլլար ահագին վնաս հասցնել Խորհրդային Ռուսաստանին հակաբոլշեիկյան դիրքով և ազդեցությամբ:

Այն ատեն, երբ բոլշեիկները դրամատիրական բոլոր երկիրներու և մասնավորապէս Ամերիկայի մէջ, գերմարդկային ճիգեր կթափեն և ահագին նյութական զոհողություններ կընեն Խորհրդային կառավարության իրավական ճանաչումը հաջողցնելու և դրամական մեծ օժանդակություն մը կորզելու համար հոգուտ իրենց սնանկացած գանձարանին, անոնց բյուրավոր գաղտնի և հայտնի գործակալները ամենուրեք կհանդիպին հայ կազմակերպությանց, որոնք ոչ միայն չեն ուզեր գործիք ծառայել բոլշեիկներու ձեռքին, այլև իրենց մամուլով ու բերանացի պրոպագանդով չափազանց աննպաստ մթնոլորտ մը կստեղծեն անոնց շուրջը, ի վնաս Խորհրդային դատին:

Ճիշտ է, գաղութներու մէջ ալ կա տարր մը, որ, թէն պահպանողական ու կղերամիտ, շատ բարյացակամ դիրք բռնած է բոլշեիկներու հանդէպ և պատրաստ է շատ մը ծառայություններ ընելու անոնց: Բայց այդ տարրը, որ համախմբված է Ռամկավարներու դրոշին տակ, տկար է և մանավանդ շատ անհարմար ու անշնորհք գործիք մըն է բոլշեիկյան գաղափարներու տարածման և բոլշեիկյան շահերու պաշտպանության համար:

Ստկէ գատ անոր հեղինակությունը Հայաստանի մէջ ապրող ժողովուրդի մէջ հավասար է գերոյի, իսկ գաղութներու մէջն ալ շատ թույլ է կարենալ փոխելու համար երկրի հայության կամ գաղութային հայ զանգվածին վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը կամ գեթ կասեցնելու համար հակաբոլշեիկյան ուժերու և կազմակերպությանց ծավալուն և ակտիվ գործունեությունը:

Վերջապէս, Ռամկավարականները ինքզինքնին արդեն անվնաս են դարձուցած բոլշեիկներու համար իրենց մուրացկան և ստորաքարշ քաղաքականությամբ Խորհրդային Ռուսիո հանդէպ:

Դեռ ոչինչ չստացած բոլշևիկներեն՝ անոնք արդեն հանձնած են կարմիրներուն իրենց դիրքերն ու գեները: Ուստի դարձած են անոնց համար այլևս անպետք և արհամարհելի ուժ մը:

Միակ բանը, որ մնացեր է ընել Ռամկավարներուն այժմ, - ձգել իրենց ռամկավարական համազգեստը, բոլորովին կերպարանափոխվիլ և պարզ բոլշևիկներ դառնալ: Ուրիշ կերպ այլևս չեն կարող հաճելի ըլլալ բոլշևիկներուն:

Բոլշևիկներու աչքին գլխավոր փուշը սակայն Հ. Յ. Դաշնակցությունն է, որուն ուժը, ազդեցության և կարելիություններուն նրանք շատ ավելի լավ ծանոթ են, քան Ռամկավարականները:

Բոլշևիկները իրապես կվախնան միմիայն Հ. Յ. Դաշնակցութենեն և հաշվի կառնեն միմիայն անոր դիրքն ու քայլերը, որովհետև Հ. Յ. Դաշնակցությունը ոչ միայն արտաքին, այլև ներքին վտանգ է իրենց իշխանության համար, որովհետև Հ. Յ. Դաշնակցությունը միակ հայկական ուժն է, զոր, որքան ալ հոխորտան, չեն կրնար արհամարհել, որովհետև Հ. Յ. Դաշնակցությունը իր անխոցելի ու անխորտակելի հեղինակությամբ բովանդակ հայության մեջ, թե երկրի ներսը և թե արտասահման, մշտական սպառնալիք մըն է բոլշևիկյան դիկտատուրին համար, որ կպահպանվի միմիայն օտար սվիններու ուժով, որովհետև Հ. Յ. Դաշնակցությունը իր համատարած կազմակերպական ցանցով և հետապնդած քաղաքական նպատակներով իր բազուկին մեջ տիրաբար կպահե հայ ժողովրդական մարմնի զարկերակը և մեծապես կդժվարացնե խորհրդային իշխանության մուտք գործը...

Ինչպես կասեցնել, անվնաս դարձնել այդ հակաբոլշևիկ ուժը, ինչպես ձգնել, խեղդել զայն:

Ահա խնդիր մը, որ չափազանց կմտատանջե բոլշևիկները:

Պայքարի իրենց մեթոդները երկրի մեջ հայտնի են:

Փետրվարյան ապստամբությունը սակայն լավ դաս մը տվավ կարմիր բռնավորներուն, որոնք միամտությունն ունեցան կարծելու, թե հուրով և սուրով, բանտով և աքսորով կարող են ոչնչացնել Հ. Յ. Դաշնակցությունը: Այդ ապստամբությունը անողոր պայծառությամբ, ցույց տվավ, որ, Հ. Յ. Դաշնակցությունը ոչնչացնելու համար, բավական չէ քանդել անոր կազմակերպական մեքենան, փչացնել անոր ղեկավարող տարրը, այլ պետք է բնաջնջել նաև

բովանդակ հայ ժողովուրդը, որուն սրտին մեջ խորագույն, անբաժանելի արմատներ է ձգած հայ մարտական կուսակցությունը:

Մյասնիկյանները պահ մը կարծես ըմբռնեցին իրենց համար այնքան դառն այս ճշմարտությունը և նույնիսկ փորձեք ըրին շիտկելու իրենց ավելի ապիկար ընկերներու Կաայաններու սխալները:

Բայց իրերը իրենց տրամաբանությունն ունին, և անհատները անգոր են փոխելու անոնց ընթացքը: Ամեն գնով իշխելու փափագն ու անհրաժեշտությունը շուտով Մյասնիկյաններն ալ մղեցին Կաայաններու ճամփով և Հայաստանի մեջն ալ ստեղծեցին նույն անիծյալ վիճակը, որ կտիրապետե այսօր համայն Ռուսիո մեջ և որ երկու թշնամի բանակներու բաժնած է ժողովուրդն և իշխանությունը:

Փետրվարյան ապստամբությունը պարզեց արդեն, թե հայ ժողովուրդը և՛ բավականաչափ գիտակցություն, և՛ կամք, և՛ կարողություն ունի դյուրությամբ ազատելու համար ինքզինքը իր վզին բռնի կերպով փաթթված իշխանութենեն: Բայց նույն ապստամբությունը ցույց տվավ նույնպես, թե՛ իր հաղթանակը հարատևորեն ապահովելու համար ժողովուրդը պետք ունի արտաքին քաղաքական պայմաններու նպաստավոր դասավորման - բան մը, որ կպակսի իրեն այժմ: Եվ բնական է, որ փետրվարյան խրատական փորձեն հետո՝ մեր ժողովուրդը չախտի ուզե զայն կրկնել, ցորչափ արտաքին պայմանները ռուսական և թրքական ճակատներու վրա փոխված չեն:

Ահա թե ինչու հայ իրականության համար բոլշևիզմը երբեք ներքին ուժ մը չէ, այլ բացառապես արտաքին ուժ մը, որ հոգեբանական հիմքեր չունի մեր աշխարհին մեջ, այլ կիշխե արտաքին դաժան պայմաններու զորությամբ միայն: Ուժ մը, որ պիտի վերնա մեր երկրի վրայեն, հենց որ վերնա իր տերը Ռուսիո մեջ:

Հետևաբար, մաքառումը բոլշևիզմի դեմ Հայաստանի մեջ ավելորդ և անիմաստ գործ մըն է: Որովհետև ինչ արժեք ունի ջանալ փրցնելու ծառի մը թռչնած տերևները, երբ կանգուն է ծառը իր արմատով:

Պայքարը բոլշևիզմի դեմ իմաստ ունի և հնարավոր է Ռուսիո մեջ և ռուսական ճակատի վրա միայն, ուր կգտնվին բոլշևիկյան ծառին բունն ու արմատը: Բնական է, որ ան կրնա

տարվիլ համառուսական չափերով ու միջոցներով, բայց ոչ երբեք զուտ հայկական:

Բայց պայքարը բոլշևիզմի դեմ անիմաստ, աննպատակահարմար ու անկարելի չէ նաև արտասահմանի մեջ, ուր Խորհրդային կառավարությունը միջոցներ կփնտրե դրսի օժանդակությամբ իր միշտ վտանգված և խախուտ տիրապետությունը ամրապնդելու համար:

Ահա հոս է, որ մեր հանդիպումը բոլշևիզմի հետ կրնա տեղի ունենալ ոչ թե նեղ հայկական ճակատի վրա, այլ ընդարձակ համառուսական ճակատի վրա: Հոս, արտասահմանի մեջ է, որ մեր բռնած այս կամ այն դիրքը ավելի կշահագրգռե Մոսկվան և ռուս բոլշևիկները, քան մեր դիրքը բուն Հայաստանի մեջ: Եվ հայ գաղութներու մեջ մղվող քաղաքական պայքարի մեր գործածած զենքը ի վիճակի է առանձնապես անախորժություն և անհանգստություն պատճառելու Մոսկվային, որ տարիներ է վեր գերագույն ճիգեր կթափե արտասահմանի մեջ իրեն համար, ըստ կարելիության, շատ վստահելի հենարաններ գտնելու և ստեղծելու: Մինչ Հայաստանի մեջ, ուր կիշխե իր բանակներու և Չեկաներու ուժով և ոչ մեկ հույս ունի տարբեր կերպով իշխելու, Մոսկվայի Խորհրդային կառավարությունը մեզ հետ խոսելու իսկ պետք չի զգար, հոս, արտասահմանի մեջ, իր բանակներն ու Չեկաները անգոր են կատարելապես և սակայն մեր գործակցությունը կամ գեթ լռությունը շատ բաղձալի և արժեքավոր է իրեն համար:

Հասկնալի է ուրեմն, թե ինչո՞ւ Մոսկվայի վարիչներն ու անոնց գործակալները այնքան տարապայման դյուրագրգռություն ցույց կուտան գաղութային հակաբոլշևիկյան կազմակերպությանց և մասնավորապես Ն. Յ. Դաշնակցության հանդեպ, որ տեսակ մը մղձավանջ է դարձեր բոլոր բոլշևիկներու համար, Մակինցյաններեն սկսած մինչև Չիչերինները:

1918 թ. սկսած մինչև Լոզանի քոնֆերանսը, այս տարի, Մոսկվայեն սկսած մինչև Ռեվել և Ճենովա, Ն. Յ. Դաշնակցությունը բազմաթիվ փորձեր ըրավ համաձայնության մը գալու Մոսկվայի հետ: Եվ բոլոր բանակցությանց ատեն երկու հիմնական պայման դրավ իր բարեկամության և գործակցության փոխարեն. — Ա) Ճանչնալ անվերապահորեն Հայաստանի անկախությունը և Բ) Գործոն կերպով նպաստել թրքահայ դատի լուծման: Եվ եղան դեպքեր, երբ Մոսկվայի ներկայացուցիչները, երկար սակարկություններէ հետո, իրենց

ստորագրությունն ալ դրին այս պայմաններուն տակ, ինչպես Լեզրան Երևանի մեջ, 1920 թ. աշնան, կամ ինչպես Բոֆֆեն ու Տեր-Գաբրիելյանը Ռեվելի մեջ, 1921 թ. ամառը:

Բայց այդ ստորագրություններն ու հանդիսավոր խոստումներն ալ խախտվեցան, ինչպես բոլշևիկյան շատ մը պայմանագրեր ու խոստումներ, որոնք եղած են վայրկյանի թելադրություններ հետին նպատակներով:

Բարեկամությունը Քեմալին ու մահմեդական աշխարհին հետ շատ ավելի արժեքավոր է Խորհրդային կառավարության համար, քան Ն. Յ. Դաշնակցության և հայության հետ:

Եվ այդպես ալ պիտի մնա, մինչև որ քաղաքական պայմանները հիմնովին փոխվին Ռուսիո կամ Մերձավոր Արևելքի մեջ և կամ մինչև որ ռուս-թրքական ներկա համերաշխությունը քանդվի ավելի գորավոր պատճառներու, ավելի մեծ շահերու և մղումներու ճնշման տակ:

Ներկա պայմաններու մեջ սակայն չկամենալով կամ չկարենալով ունէ դրական զիջում ընել մեզ ի նպաստ հայ ժողովրդի ազատագրության, բոլշևիկները միևնույն ատեն և՛ երկրի, և՛ արտասահմանի մեջ ամեն ճիգ կթափեն հայության ձեռքեն խլելու բոլոր զենքերը և՛ պարզ գործիք մը դարձնել զայն ի փառս «համաշխարհային հեղափոխության» և Խորհրդային Ռուսիո:

XXXVI

ԱՄԲՈՒԱՅԻՆ ՄՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայության որոշ տարրերը, մասնավորապես գաղութներու մեջ, կույր համառությամբ կշարունակեն տակավին քարոզել անպայման համակերպումն Ռուսիո խորհրդային կառավարության հանդեպ, հայտարարելով, թե անոր դեմ ուղղված ամեն պայքար — նույնիսկ անզեն և լոյալ պայքար — ուրիշ բան չէ, բայց եթէ դավաճանություն հայ ազգի շահերուն:

Մեկ կողմ թողելով կուսակցական կամ խմբակցական կրքէ և հաշիվէ բխող նկատումներն ու շարժառիթները, որոնք անտարակույս խոշոր դեր կկատարեն մեր հակառակորդներու բոլշևիկասիրական այս քարոզին մեջ, մենք չենք կարող

չխոստովանիլ միննույն ատեն, թե քիչ չեն նաև այնպիսիները, որոնք ամենայն անկեղծությամբ կհավատան, թե անվերապահ համակերպությունը Խորհրդային Ռուսիո հանդեպ ամենեն նպատակահարմար, իմաստուն, հեռատես և ողջմիտ քաղաքականությունն է այս պահուս հայ ժողովուրդի համար: Խորհրդային Ռուսիա կնկատվի մեր ազգի միակ անկեղծ և վստահելի պաշտպանը, որու հզոր հովանու տակ միայն հայությունը կրնա ապահով ապրիլ: Բոլշևիկյան իշխանությունը կգնահատվի իբրև տեսակ մը երկնային օրհնություն, որ բերած է մեր երկրին խաղաղություն և բարգավաճման ամենալայն հնարավորություններ: Եվ ռուսական քեռին, թեկուզ կարմիր հագուստով, կհայտնվի իբրև Հայաստանի լավագույն, բնական խնամատարը, որ հայկական անկախ կառավարութենէ մ'ալ ավելի մեծ բարիքներ ու ապահովություններ կրնա տալ և կուտա հայ երկրին և հայ ժողովուրդին:

Այս մտայնությունը, որ բացահայտորեն ամբոխային բնույթ ունի, կբխի երկու հիմնական աղբյուրներէ, - ա) հայուն ավանդական կամ, եթէ կուզեք, ժառանգական կույր ռուսասիրութենէն և բ) տարերային թրքավախութենէն:

Այս երկու զգացումներուն մեջն ալ անտարակույս կխոսի հզորապէս ազգային և անհատական ինքնապաշտպանության բնագոյր:

Սակայն, որպէսզի բնագոյ մը իր նպատակին լավագույն կերպով կարենա ծառայել, անհրաժեշտ է, որ անոր թելադրությունները հիմնավորվին և նվիրագործվին սառն բանականության տվյալներով:

Արդոյ՞ք իրավ է, որ Խորհրդային Ռուսիո իշխանությունը մեր հայրենիքին կուտա, եթէ ոչ ազատություն, գեթ ինքնապաշտպանության այնպիսի երաշխիքներ, որոնց ապավինելով ժողովուրդը կրնա ինքզինքը զգալ ապահով և վստահորեն նայիլ մերձավոր ապագային: Ճիշտ է, որ, ինչպէս կ'մտածեն մեր մեջ շատ շատերը, բոլշևիկյան տիրապետությունը ի վերջո բարիք մըն է հայերուս համար, քանի որ ան կկասեցնէ թրքական դարանակալ վտանգը, թույլ տալով մեր ժողովուրդին հանգիստ սրտով նվիրվիլ խաղաղ վերաշինական աշխատանքի:

Այս հիմնական և կենսական հարցերու ըստ կարելվույն առարկայական պատասխանի վրա է միայն, որ կրնա կառուցվիլ ողջմիտ, շրջահայաց և հեռատես ազգային քաղաքականություն մը:

Նախ և առաջ պետք է ըսենք, որ բացարձակ միամտություն և քաղաքական տգիտություն է մտածել, թե խորհրդային իշխանությունը կայուն, հաստատուն և տեսական ուժ մըն է, ինչպէս էր ժամանակին թեկուզ ցարական կառավարությունը: Ռուսիա կապրի հեղափոխական շրջան մը, որ հղի է դեռ շատ մը վերիվայրումներով և անակնկալ փոփոխություններով: Մոսկ այն փաստը, որ բոլշևիկյան իշխանությունը կրցավ հինգ-վեց տարվա անսպասելի կյանք մը ունենալ և կանգուն մնալ մինչև այսօր, շատերուն կներշնչէ այն հավատը, թէ այսպէս ալ դեռ երկար, շատ երկար պիտի շարունակվի: Մինչդեռ ոչ միջազգային պատմության հարուստ փորձը և ոչ ալ ռուսական իրականությունը կրնան լուրջ հիմեր տալ այդպիսի միամիտ, ամբոխային հավատի մը համար:

Անուղղելի կարճատեսություն մը կարող է միայն թելադրել մեզ գիտակցաբար կապելու մեր ժողովուրդի քաղաքական բախտը խորհրդային իշխանության անվստահելի և անհուսալի բախտին հետ:

Տարբեր բան է ճանչնալ իրերու ներկա վիճակը իբրև փաստ, իբրև անխուսափելի չարիք, որուն հետ ակամա ստիպված ենք հաշտվիլ ժամանակավորապէս, և բոլորովին տարբեր բան է նկատել ներկա իրականությունը իբրև քաղաքական ուղեգիծ, բաղձալի անհրաժեշտություն, բարիք, որուն հետ ոչ միայն պետք է հաշտվիլ, այլ որուն պետք է ամեն միջոցներով ուժ տալ զայն հարատև դարձնելու համար:

Եթէ բանականության սառն հայացքով դիտենք Խորհրդային Հայաստանի վիճակը, պիտի տեսնենք, որ բոլշևիկյան իշխանությունը սիստեմատիկորեն զինաթափ կընէ մեր ժողովուրդը և կդարձնէ զայն անպաշտպան իրական վտանգի մը առջև, երբ այդպիսի վտանգ մը հանկարծ ծառանա հայության գլխուն:

Հայաստանի մեջ այսօր հայկական բանակ չկա, այլ կան ռուսական խառն զորաբաժիններ, որոնք իբրև օտար ուժեր երբեք չեն կարող միանգամայն վստահելի երաշխիք ըլլալ հայ ժողովուրդի պաշտպանության համար: Մոսկվայի հրամանին ենթակա անոնք բնականաբար պիտի ծառայեն ռուսական և ոչ հայկական շահերու և նպատակներու:

Օրինակ, ռուս-թրքական պատերազմի մը պարագային անոնք դյուրությամբ, թեկուզ միմիայն ռազմագիտական նկատումներով, կրնան թողուլ Հայաստանի սահմանները և գրավել Ռուսիո համար ավելի լավ պաշտպանելի և ավելի կարևոր դիրքեր:

Արդ ի՞նչ պիտի ըլլա մեր անօգնական ժողովուրդի վիճակը այդպիսի պարագայի մը, որ շատ հավանական է: Ինքնապաշտպանության ի՞նչ սեփական միջոցներ կրնա ունենալ հայությունը, երբ մինակ մնա իր դարևոր թշնամիին դեմ, ինչպես մնաց 1918 թ. տաճկական արշավանքի ատեն:

Կույր պետք է ըլլալ չտեսնելու համար, որ այդ միջոցները այսօր շատ ավելի աննշան են, քան այն տազնապալից օրերուն: Որովհետև, «Դաշնակցական» կամ «հակահեղափոխական» վտանգը արմատախիլ անելու պատրվակով բոլշևիկները խլած են ու կխլեն մեր ժողովուրդի ձեռքեն և՛ այն զենքերը, որ դեռ մնացեր են մոտիկ անցյալէն: Եվ այդ նպատակի համար անոնք կդիմեն իրենց պետական դաժան մեքենայի բոլոր ահաբեկիչ միջոցներուն: Անողորքաբար կհալածվին ու կփճացվին հայության զրեթե բոլոր ռազմունակ տարրերը իբրև «ավագակներ» և «մաուզերիստներ», ինչպես և մտավորական ղեկավար տարրերը, իբրև «հակահեղափոխականներ» ու «ազգայնականներ»:

Այսպիսի քաղաքականություն մը շատ հեռու է մեր ժողովուրդի ինքնապաշտպանության նպատակէ: Մինչդեռ ողջմիտ և հեռատես քաղաքականություն կրնա համարվիլ միայն այն քաղաքականությունը, որ իր ընելիքը կճշտե, նկատի ունենալով ամեն բանէ առաջ վատթարագույն պարագան:

Մեզի համար այդպիսի պարագա մըն է անտարակույս – ռուս-տաճկական հավանական պատերազմի մը ընթացքին – ռուսական բանակի նոր նահանջը, զոր ոչ որ կրնա անկարելի սեպել, որքան ալ մեծ գաղափար ունենա Խորհրդային Ռուսիո ռազմական ուժի մասին,– եթե ոչ տևական նահանջ մը, զեթ ժամանակավոր նահանջ մը, որ նույնքան աղետաբեր պիտի ըլլա հայության համար իր անմիջական հետևանքներով:

Ով իրապես կմտածե մեր ժողովուրդի ֆիզիքական գոյության մասին, պետք է ջանա ընտրել քաղաքական այնպիսի ճամփա մը, որ չդնէ հայությունը բացարձակապես անպաշտպան վիճակի մեջ, երբ վատթարագույն վտանգը – ռուսներու հանկարծական նահանջը և տաճիկներու նոր արշավանքը –

իրականություն դառնա: Իսկ այդպես պիտի ըլլա անխուսափելիորեն, եթե մենք ազգովին հետևինք բոլշևիկյան կամ ռուսական օրինատացիային:

Անոնք, որ այնքան անխորհուրդ են և մոլեգին կերպով կմղեն բովանդակ հայությունը խորհրդային իշխանության գիրկը, ձգտելով ամրացնել անոր տաժանելի լուծը, իրականին մեջ ոչ թե կապահովեն մեր ժողովուրդի ֆիզիքական գոյությունը, ինչպես իրենք կկարծեն կարճամտորեն, այլ, ընդհակառակը, ծայր աստիճան կվտանգեն զայն: Որովհետև, իրենց քաղաքականությունը կհիմնեն ներկա իրականության վրա միայն, ընդունելով զայն իբրև կայուն ու վստահելի վիճակ մը: Անոնք բնավ չեն ուզեր հաշվի առնել փոփոխությունները, որոնք ոչ միայն անհավանական չեն, այլ թերևս անխուսափելի են: Անոնք չեն ուզեր այժմէն իսկ պատրաստվիլ զալիք փոթորիկներու համար և միջոցներ գտնել եթե ոչ անոնց առաջքն առնելու (որ մեր ուժէն վեր է), զեթ անոնց ավերիչ հետևանքները սահմանափակելու և մեղմելու համար:

Այսպիսի ընթացք մը կրնա ներելի ըլլալ ամբոխին, բայց ոչ երբեք քաղաքական կազմակերպության մը, որ կուզե ղեկավարող դեր կատարել մեր ժողովուրդի գոյության և ազատության պայքարի մեջ և որ ունի պատասխանատվության հստակ գիտակցություն:

XXXVII

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԸ

Հայության ամբողջ քաղաքական ուժը նետել խորհրդային իշխանության նժարին վրա կնշանակե անանցանելի անջրպետ մը ստեղծել մեր ժողովուրդի և մեր կովկասյան բախտակից հարևան ազգերու միջև: Որովհետև, ունէ տարակույսէ վեր է, որ մեր հարևանները վրացիք, աորպեճանցիք և լեռնցիք, ձգտելով ըլլալ ազատ ու ինքնիշխան, անհաշտելիորեն թշնամի են բոլշևիկյան և, եթե կուզեք նաև, ունէ ռուսական իշխանության: Անոնք չունին տաճիկի վախը, ուստի և անզուսպ ու անվերապահ են իրենց թշնամության մեջ հանդեպ հյուսիսէն եկած այդ օտար լուծին, որ իր «կարմիր» բանակներով կճգմէ անոնց ազատությունը և կգրկէ զանոնք անկախութենէ:

Կուզե՞նք ըլլալ մեր բախտակից հարևաններուն հետ ազատագրական այն պայքարին մեջ, զոր անոնք կ'սկսեն խորհրդային իշխանության դեմ, թե՛ ընդհակառակը, միացած այդ թշնամի իշխանության՝ մեր բոլոր ուժով պիտի օգնենք անոր՝ ավելի ևս ամուր քաշելու ստրկության շղթաները մեր հարևաններու և մեր վզին, թեկուզ մեր կաշին փրկելու հույսով:

Այսպես է որ կորվի մեր առջև ճակատագրական հարցը, որուն պետք է տանք ոչ թե խուսափողական, այլ պարզ և որոշ պատասխան, եթե չենք ուզեր տրորվիլ այդ երկու թշնամի ուժերուն բախման պահուն:

Մեր ժողովուրդի ֆիզիքական գոյության, ազատության և անկախության հրամայական պահանջները նկատի առնելով, մենք ոյրությունս պիտի գտնենք և պատասխանը: Բոլշևիկը և ռուսը հյուր են Կովկասի մեջ. վաղ թե ուշ, այս կամ այն ձևով, անոնք կրնան երթալ և պիտի երթան, թողելով Կովկասը կովկասցիներուն, մինչդեռ կովկասյան մեր դարևոր հարևանները պիտի մնան, ավելի կազմակերպվին և ավելի գորանան. ոչ մեկ պարագայի տակ մենք կրնանք բաժնել մեր բախտը անոնց բախտեն. միանալով անոնց՝ մենք կարող ենք կազմել անխորտակելի ուժ մը, իսկ բաժնվելով անոնցմէ՝ մենք անհուսալի մեկուսացման պիտի ենթարկենք մեզ Կովկասի մեջ, քանի որ երբեք վստահ չենք կարող ըլլալ այն հյուսիսային մեծ «պաշտպանի» վրա, որ արդեն դավաճանած է մեզ անցյալի մեջ և ապահովաբար պիտի դավաճանե նաև ապագային:

Ճիշտ է, խորհրդային իշխանությունը կուտա մեզի, ինչպես և ցարական կառավարությունը տված է, որոշ խաբուսիկ ու երևութական առավելություններ Կովկասի մեջ, անոնցմով մեզ դեմ գրգռելու համար մեր հարևանները: Բայց այդ առավելություններն կրնան օգտվիլ և կօգտվին միմիայն փոքրիկ խմբակներ՝ վաճառականներ և պաշտոնյաներ, իսկ հայ ժողովուրդի ճնշող մեծամասնությունը կտուժե և պիտի տուժե, որովհետև հայությունը ոչ միայն շահ չունի թշնամանալու իր բախտակից հարևաններուն հետ, այլ, ընդհակառակը, ամենամեծ վտանգին կենթարկե ինքզինքը, բաժնվելով անոնցմէ:

Մեր թշնամությունը մեր հարևաններու հետ, մեր մեկուսացումը կովկասյան միջավայրին մեջ, այո՛, ձեռնտու է միմիայն Մոսկվայի բռնակալներուն: Բայց մի թե մենք դեռ այնքա՛ն տհաս ենք քաղաքականապես, որ օտարին շահերը ընդունինք մեր ազգային

շահին տեղ և մեր ժողովուրդն ալ ծառայեցնենք օտար, մեզի վնասակար նպատակներու: Մի թե տակավին այնքան կույր ենք, որ չենք կրնար տեսնել, թե բոլշևիկին կամ ռուսին ետևեն համառորեն երթալով՝ մենք կսեղմենք անխուսափելիորեն մեկուսացման այն երկաթե օղակը, որ կսպառնա խեղդել հայությունը Կովկասի մեջ ևս:

Եթե մինչև այժմ անջատ տաճկահայ դատի մը գոյությունը մեզ որոշ չափով կբաժներ մեր կովկասյան հարևաններեն, այժմ, երբ հայկական հարցի լուծման բանալին ամբողջովին դարձած է կովկասյան Հայաստանը, ոչ մեկ բանավոր հիմ ունինք շարունակելու մեր ազատագրական պայքարը նախկին սեղմ ճակատի վրա: Ընդհակառակը, ամեն հիմ կա ընդարձակելու զայն, ձգտելով ստեղծել հակակովկասյան քաղաքական կուռ ճակատ մը. որովհետև մեր դատը այլևս անբաժանելիորեն կապված է մեր կովկասյան հարևան ազգերու դատին հետ:

Համերաշխությունը և համագործակցությունը կովկասյան հարևաններուն հետ հայության համար ոչ միայն քաղաքական, այլև ֆիզիքական անհրաժեշտություն է: Պայքարելով մեկ ճակատի վրա անոնց հետ, միացնելով մեր ուժերն ու ներդաշնակելով մեր քայլերը, մենք պիտի կարենանք գեթ չափով մը ապահովագրել մեր ժողովուրդը այն մեծ վտանգի պահուն, որու մասին խոսեցանք վերև և զոր միշտ պարտավոր ենք ունենալ մեր աչքին առջև ամեն բանե առաջ:

Եթե ճիշտ է, որ այդ ապահովագրությունն ալ անվերապահորեն և բացարձակորեն վստահելի երաշխիք մը չէ մեզի համար, սակայն պետք չէ մոռնանք, որ այնուամենայնիվ մենք ուրիշ ավելի հուսատու ընտրություն կամ ավելի ապահով ելք չունինք:

Բոլշևիկը երեկ եկավ Կովկաս անկախ մեր կամքեն և նույնիսկ հակառակ մեր կամքին. բոլշևիկը այսօր կ'մնա և վաղն ալ պիտի երթա նույնպես անկախ մեր կամքեն ու թերևս հակառակ մեր կամքին: Այդ պատճառով ալ անոր ընձեռած «ապահովությունը» մենք չէ, որ կստեղծենք կամ պիտի ստեղծենք մեր քաղաքականությամբ:

Այն, ինչ որ Խորհրդային Ռուսիո իշխանությունը կարող է տալ մեր ժողովուրդին, կուտա և պիտի տա նույնիսկ այն ատեն, եթե ազգովին թշնամի ըլլանք անոր, ինչպես կուտա վրացիներուն և ատրպեճանցիներուն, որոնք բացահայտորեն թշնամի են Մոսկվային: Հայ բուրժուազիայի ստորաքարշ դիրքը բոլշևիկյան կառավարության հանդեպ կրցա՞ծ է մագաչափ ավելի նպաստավոր պայմաններ

ատեղծել հայ ժողովուրդին համար, քան այն վիճակը, որուն մեջ կապրին մեր կովկասյան հարևանները, հակառակ իրենց անհաշտ և թշնամական վերաբերմունքին:

Ուստի մեր ամենաջերմ, ամենաանկեղծ և անվերապահ բուլշևիկյան օրինատացիայով անգամ՝ հիմնական ոչինչ պիտի կրնանք փոխել իրերու այն կացության մեջ, որ այսօր կիշխե Կովկասի մեջ: Մինչդեռ բոլորովին տարբեր արժեք և հետևանքներ կրնա ունենալ մեր այս կամ այն քաղաքականությունը մեր հարևան ազգերու հանդեպ: Մեր կամքն է, ընդհակառակը, կախված հոս հիմնովին փոխել հարաբերությունները այս կամ այն ուղղությամբ:

Բարեկամ են անոնք թե թշնամի մեզ՝ շատ կարևոր է մեզի համար, որովհետև անոնց համար ալ մեր բարեկամությունը շատ արժեքավոր է և մեր թշնամությունը՝ շատ վտանգավոր:

Իսկ քանի որ մեր հարևաններու թշնամությունը մեզի հանդեպ ճակատագրական վտանգ մըն է, իսկ բարեկամությունը՝ խոշոր ապահովություն մը ամեն տեսակետով, մենք պարտավոր ենք ոչ մեկ միջոցի առջև կանգ առնել՝ վերցնելու թշնամության բոլոր առիթները և ստեղծելու բարեկամության համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Մտոյիկ անցյալի մեջ մեր ազգային ճախորդությանց գլխավոր աղբյուրն այն է եղած, որ մենք չենք կրցած (ստոր մեղքը կիյնա նույնչափ և՛ մեր հարևաններուն վրա) հաշտեցնել մեր քաղաքական ընթացքը մեր հարևաններու քաղաքական ձգտումներուն հետ և գրեթե միշտ – կամա թե ակամա – վարած ենք անոնց հակառակ քաղաքականություն: Մենք չենք կրցած երբեք լիովին ըմբռնել այն բացառիկ, բախտորոշ կարևորությունը, զոր ունի՝ մեր ժողովուրդի ֆիզիքական գոյության պահպանման և ազատության նվաճման տեսակետով՝ քաղաքական համագործակցությունը մեր հարևան փոքր ազգերուն հետ: Մենք դյուրությամբ զոհ ենք զացեր օտար իշխանության դավերուն կամ մեր (կովկասյան) բախտախնդիր տարրերու փրովոքասիոններուն և չենք գիտցած հողային և այլ երկրորդական ներքին վեճերը ստորադասել վճռականապես այն ընդհանուր կենսական շահին, որ անբաժանելիորեն կկապե իրարու հետ բոլոր կովկասյան ազգությանց քաղաքական բախտը: Կարճ. ինչպես ռուսները կըսեն, ծառերու ետևեն մենք չենք կրցած տեսնել անտառը:

Այդ պատճառով մենք միշտ ստորագնահատեր ենք կովկասյան ազգերու համերաշխության արժեքը և, ընդհակառակը, գերագնահատեր ենք մեր ազգային անջատ ուժերն ու կարելիությունները:

Մեկ խոսքով, մեզի – բոլոր կովկասցիներուս – միշտ պակսեր է պարզ և կուռ գիտակցությունը այն մասին, որ կովկասյան ազգերու քաղաքական համերաշխ գործակցությունը ամենեն ստիպողական, ամենեն անպայման և կենսական պահանջն է՝ կովկասյան ամեն մեկ ազգի թե՛ գոյության, թե՛ զարգացման և թե՛ ազատության համար: Կովկասյան ազգերեն ամեն մեկը, ավելի կամ պակաս չափով, անձնատուր է եղեր այն միամիտ և կորստաբեր հավատին, թե՛ մեկուն ազատությունը, անկախությունը և բարգավաճումը հնարավոր են առանց մյուս կամ մյուսներու անկախության, ազատության և բարգավաճման:

Այսօր այդ աղետավոր մտայնությունը բավականին փոխված կերևի, բայց ոչ տակավին բաղձալի չափով և ծավալով: Անցյալեն մնացած ծանր ժառանգությունը դեռ կշարունակե թունավորված պահել մտքերը, մանավանդ որ ներկա տխուր իրականությունն ալ առատ նյութ կմատակարարե թե՛ վրացիին, թե՛ հային և թե՛ թաթարին փոխադարձ դժգոհությանց համար՝ շնորհիվ այն գրգռիչ քաղաքականության, զոր կվարեն բուլշևիկները Կովկասի մեջ, հետևելով իրենց չարաշուք ուսուցիչներուն՝ ցարական փոխարքաներու հանցավոր օրինակին:

Բայց մենք վստահ ենք, որ հեռու չէ այն օրը, երբ կովկասյան բոլոր ժողովուրդներն ու հատկապես անոնց ղեկավար քաղաքական կազմակերպությունները պիտի տոգորվին այն խորունկ համոզումով, թե՛ միմիայն միացյալ ուժերով անոնք կարող են վերստանալ իրենց ազատությունն ու անկախությունը և միմիայն միացյալ ուժերով անոնք կարող են ապահովել իրենց ֆիզիքական գոյությունը Հյուսիսի և Հարավի սպառնացող վտանգեն:

Ահա թե ինչու մեր ազգային քաղաքականության հիմնաքարը պիտի ըլլա ոչ թե մեր բարեկամությունը խորհրդային Ռուսիո, այլ ամենաանբախտ բարեկամությունը մեր կովկասյան բախտակից ազգերուն և առաջին հերթին վրաց ազգին հետ: Միանգամ ընդմիշտ պետք է հասկնալ, որ հայ ժողովուրդի համար բացարձակապես վնասակար են այն բոլոր քայլերը, որոնք կդժվարացնեն կամ նույնիսկ անկարելի կդարձնեն մեր

բարեկամությունը կովկասյան հարևաններու հետ: Եվ, ընդհակառակը, մեզի համար օգտակար են այն բոլոր քայլերը, որոնք կարող են նպաստել մեր և մեր կովկասյան հարևաններու բարեկամության ամրապնդումին:

Եթե այն ահագին ճիգերը, որ հայությունը ըրած է և կրնե այսօր ալ Խորհրդային Ռուսիո բարեկամությունը շահելու համար, թափվեին ու թափվին մեր կովկասյան հարևաններու բարեկամությունը վաստակելու համար, կարելի չէ կասկածիլ, որ հայ ժողովուրդը շատ ավելի հուսատու և ապահով ճամփու մը վրա պիտի ըլլար, քան այժմ:

Մեր խորին համոզումով, հայ քաղաքական պատասխանատու մարմինները և մասնավորապէս Հ. Յ. Դաշնակցությունը ներկայիս չունի ավելի հրամայական պարտականություն մը, քան համերաշխ գործակցությունը մեր կովկասյան հարևաններու ղեկավար կազմակերպությանց հետ հանուն համայն Կովկասի ազատության, անկախության, բարգավաճման և ապահովության:

Ատոր հակառակ քաղաքականություն մը, մեր կարծիքով, ոճիր է մեր ժողովուրդի կենսական շահերուն դէմ:

XXXVIII

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԻԵՆՏԱՅԻՄՅԻ ՎՏԱՆԳԸ

Բոլշևիկյան կամ ռուսական օրիենտացիան ոչ միայն մեզի չի տար ունէ ապահովություն հայության սպառնացող իրական վտանգի պահուն, այլ հիմնովին կավրե մեր հարաբերությունները կովկասյան հարևան ազգերուն հետ, մեծապէս դժվարացնելով և նույնիսկ անկարելի դարձնելով քաղաքական անհրաժեշտ համագործակցությունը և փոխադարձ օգնությունը կովկասյան ընդհանուր ճակատին վրա: Ուրիշ խոսքով՝ բոլշևիկներէն ոչինչ շահելով, մենք կկորսնցնենք մեր միակ բնական բարեկամները և անհուսալի մեկուսացման կդատապարտենք մեզ:

Բայց թերևս, եթե ոչ վտանգի պահուն, գեթ այժմ, «խաղաղության» այս շրջանին, բոլշևիկյան օրիենտացիան կարող է

մեր ժողովուրդին տալ բարիքներ և առավելություններ, որոնցմէ զուրկ պիտի մնար, եթէ հրաժարվեր բոլշևիկներու բարեկամութենէն:

Մենք արդէն մատնանշեցինք վրացիներու և թաթարներու հրահանգիչ օրինակը: Բացահայտորէն անհավատարիմ ըլլալով Մոսկվայի իշխանության, անոնք ավելի վատթար վերաբերումի մը չեն արժանացած, քան հայերը, որոնք այնքա՛ն լոյսալ են բոլշևիկներու հանդէպ:

Խորհրդային Ռուսիո իշխանությունը հայ ժողովուրդի հետ իր կապը տարամերժորէն կպահե միմիայն իր վարձկան գործակալներու՝ հայ բոլշևիկներու միջոցով, հիմնվելով այն քաղաքական բացահայտ կեղծիքին վրա, որ իբր թէ հայ ժողովրդյան («բանվորա-գյուղացիական») զանգվածները կանգնած են հայ կոմունիստական կուսակցության ետև, իսկ հայկական ազգային բոլոր կուսակցությունները և անոնց շարքին նաև Հ. Յ. Դաշնակցությունը կազմված են միմիայն սակավաթիվ «հակահեղափոխական բուրժուաներէ», «սպեկուլյանտներէ», «ավազակներէ», կամ «մաուզերիստներէ» և ազգամոլ մտավորականներէ, որոնք գորավարներ են առանց բանակի:

Մոսկվան հարկավ շատ լավ գիտե, որ հայ ժողովուրդը «Դաշնակ» է և որ հայ բոլշևիկները նույնքան օտար են հայ զանգվածներուն, որքան և ռուս բոլշևիկները: Բայց և այնպէս, Մոսկվան կպահպանե «բանվորա-գյուղացիական» կառավարության պաշտոնական կեղծիքը Հայաստանի մեջ, ինչպէս և Վրաստանի ու Ատրպեճանի մեջ, խեղդելով իրեն հպատակ կովկասյան ժողովուրդներու ճնշող մեծամասնության կամքը:

Սակայն այդ կրնե և կարող է ընել միայն այս «խաղաղ» շրջանին մեջ, վստահ ըլլալով իր սեփական ճնշող ուժերուն վրա: Մոսկվան պարզապէս կարհամարհե իր սվիններու գորությամբ գրավված հողամասերու ժողովուրդներու ուժը, գոր ի վիճակի է ճգնել ամեն վայրկյան: Այդ պատճառով ալ կհաջողի իր սեփական վարձկան գործակալները փաթթել անոնց վզին, իբրև այդ ժողովուրդներու «հարագատ» և «իրավական» ներկայացուցիչները:

Այդպէս է այսօր, այո՛, բայց վաղը կացությունը կրնա փոխվիլ ի վնաս Խորհրդային Ռուսիո, որուն դէմ ուղղված են Լոզանի հաշտության բոլոր դավերը: Դրամատիրական մեծ պետությանց հետ հաշտված և անոնց օժանդակության վրա հենված Թուրքիա մը պիտի մղվի դեպի Կովկաս՝ կովկասյան ազգությանց հետ միասին

բոլշևիկյան կամ ռուսական տիրապետութենեն ազատելու համար կռվկասայան երկիրները:

Այդ պարագային բոլշևիկները այլևս չպիտի կարողանան արհամարհել կռվկասայան ժողովուրդներու և անոնց քաղաքական ղեկավար կազմակերպությանց ուժը: Այդ պարագային իրենք պիտի ձգտին ունէ՛ ձևով շահիլ անոնց եթէ ոչ բարեկամությունը, գեթ չեզոքությունը կենաց և մահու պայքարի մեջ, զոր վաղը պիտի ունենան հարկադրաբար իրենց մինչայժմյան դաշնակից Էնկյուրիի ու անոր ետև կանգնած եվրոպական կամ ամերիկյան ուժերուն դեմ:

Ուրեմն միմիայն իրական ահավոր վտանգի պահուն կամ, ավելի ճիշտը, անոր նախօրյակին է, որ խորհրդային կառավարությունը կրնա փոխել և պիտի փոխէ հավանաբար իր քաղաքականությունը հանդեպ կռվկասայան ազգերու, ձգտելով համաձայնության մը գալ ոչ թէ իր սեփական վարձկաններուն, այլ այդ ազգերու ղեկավար քաղաքական մարմիններուն հետ:

Եվ ճիշտ այդ վայրկյանին է, որ ամենեն ավելի վտանգավոր հետևանքներ կրնա ունենալ մեր հակումը դեպի Խորհրդային Ռուսիա: Այսինքն՝ այն ատեն, երբ Մոսկվա մղում և շահ ունենա խոսելու մեզ հետ և մեզ զիջումներ ընելու, մեր շահագրգռությունը անոր հանդեպ հասած պիտի լինի իր նվազագույն աստիճանին, իսկ այն զիջումներն ու խոստումները, զորս ան կրնա ընել մեզի այդ պարագային, շատ կասկածելի և շատ վտանգավոր շնորհներ պիտի ըլլան մեզի համար:

Իրական գործոն համաձայնություն մը վրացիներու և ատրպեճանցիներու հետ Մոսկվայի համար շատ դժվար, եթէ չըսենք՝ անկարելի գործ մըն է: Ուստի ալ ավելի ստիպողականորեն Մոսկվա պիտի ուզէ հենվիլ հայերուս վրա մեր օգնությամբ ներսեն քանդելու համար կռվկասայան ազգերու համագործակցության այն միացյալ ճակատը, որ ինքնին արդեն մեծ վտանգ մըն է Խորհրդային Ռուսիո իշխանության համար, և այդպիսով ամրացնելու համար իր խախտված դիրքը Կովկասի մեջ և իր վիրավոր թիկունքը տաճիկներու առջև:

Կամա թե ակամա մենք պիտի դրվինք ճակատագրական երկընտրանքի մը առջև՝ կամ լինիլ մեր կռվկասայան հարևաններու հետ միասին խորհրդային իշխանության դեմ և կամ լինիլ խորհրդային իշխանության հետ մեր հարևաններուն դեմ:

Այս երկու ուժերեն, ինչպես տեսանք, մեզ համար նախընտրելին մեր կռվկասայան բախտակից հարևաններն են և ոչ Խորհրդային Ռուսիո իշխանությունը, որուն կողմը բռնելով մենք ոչ միայն պիտի ամրացնենք հայության քաղաքական ստրկությունը, այլև միանգամայն պիտի վտանգենք մեր ժողովուրդի ֆիզիքական գոյությունը:

Մեր ժողովուրդի մեջ դժբախտաբար դեռ շատ կան անուղղելի տարրեր, որոնք ամեն պարագայի տակ կհավատան և ամեն գնով կուզեն կառչիլ Խորհրդային Ռուսիո ուժին, անկե ակնկալելով ամեն օգնություն և փրկություն, հակառակ պատմական ա՛յնքան թարմ և դառն դասերուն: Մակայն հայ ազգի արթուն պահակը՝ Չ. Յ. Դաշնակցությունը, պիտի ջանա թույլ չտալ, որ հայությունը այսուհետև ևս գործիք ծառայէ ունէ՛ մեծ պետության ձեռքին՝ ի վնաս իր ամենեն կենսական շահերուն, վտանգելով իր գոյությունն իսկ:

Կարճ. 1914 թվականը իր ռուսանպաստ կամավորական շարժումով ու ծառայականությամբ ոչ մեկ պարագայի տակ պիտի կրկնվի, որովհետև այդպիսի կրկնության փորձն իսկ անխուսափելիորեն պիտի ունենա, իբր հետևանք, երկրորդ 1915 թվական մը իր զարհուրելի աղետով, այս անգամ սակայն Կովկասի մեջ:

Ճիշտ է, Մազնումներու, Վորոնցով-Դաշկովներու և Նիկոլայ իշխաններու և ցարերու տեղը բռնած են կռվկասայան և մոսկովյան բոլշևիկ կոմիսարներն ու զորավարները, բայց ատով դրությունը բնավ փոխված չէ ի նպաստ մեզի: Ընդհակառակը, 1914 թվեն ասդին ուժերու նոր փոխհարաբերությունը մեր շուրջը ստեղծած է շատ ավելի վտանգավոր կացություն մը, քան էր ցարական ռեժիմի օրերուն:

Տարակույս չկա, որ Ռուսիո ներկա վարիչներն ալ նույն կործանարար խաղը պիտի փորձեն հայության հետ, հենց որ ահավոր վտանգը բախէ Կովկասի դռները: Եվ դարձյալ գայթակղությունը մեծ պիտի ըլլա մեզի համար ուրքով գլխով ինչպիսի Ռուսիո գիրկը. չէ՞ որ մեր ամբոխը ազատված չէ ռուսական ախտեն. չէ՞ որ ծառանգական զգացումներն ու կիրքերը դեռ ա՛յնքան բախտորոշ դեր կկատարեն մեր քաղաքական կյանքին մեջ. չէ՞ որ, վերջապես, դեռ ա՛յնքան քիչ են մեր մեջ գեթ անցյալի դաժան դասերեն խրատվիլ գիտցող քաղաքական ղեկավարները:

Քանի մը փոքրիկ զիջումներ, որոնցմե ավելի պիտի օգտվին խումբ մը անհատներ, քան մեր ժողովուրդը, քանի մը շոայլ ու հրապարտիչ խոստումներ, որոնք դյուրությամբ կրնան հետ վերցվիլ, ինչպես ատոր օրինակները շատ տեսանք վերջին տարիներու ընթացքին, և այդքանը երևի կրկին բավական պիտի ըլլա, որ նորեն ոգևորվին մեր անուղղելի ռուսամուկները և նորանոր գոհողություններ փորձեն հանձն առնել հայ ժողովուրդի անունով:

Փետրվարյան ապստամբության ատեն երկրի հայության ի հայտ բերած տրամադրությունները պարզ ցույց տվին, թե ո՞ր աստիճան զգաստացած է արդեն Հայաստանի մեր ժողովրդական զանգվածը և ո՞ր աստիճան բուժված է արդեն ռուսական ախտեն: Ուստի և մենք երկյուղ չունինք, որ այդ զանգվածը նորեն կրնա դյուրությամբ ենթարկվիլ ռուսական նոր փրովոքասիոններու և խաղերու: Սակայն այդպէս չէ, դժբախտաբար, մեր գաղութներու հայության մտայնությունը, այդպէս չէ մեր ազգային «բարձր» շրջանակներու մեկ պատկառելի մասը, որ դեռ կշարունակէ կուրորեն հավատալ ռուս «ամենակարող» և «փրկարար» ուժին:

Այդ տարրն է, որ կրնա նորեն ամբոխային հոգեբանության զգացական թելադրություններով ու ճնշումներով կաշկանդել մեր ազգային պատասխանատու մարմինները, շեղելով զանոնք այն միակ ողջմիտ և շրջահայաց քաղաքական ուղղութենէն, որուն համար հասունցած կերևի արդեն Հայաստանի մեջ ապրող հայության մեծագույն մասը: Այն է՝ ըլլալ իր անմիջական հարևաններուն հետ և պայքարիլ անոնց հետ միասին Կովկասի ընդհանուր թշնամիներուն դեմ հանուն կովկասյան ազգերու ընդհանուր ազատության և անկախության:

Կացությունը, մեր կարծիքով, շատ պարզ է. եթէ մենք ըլլանք մեր հարևաններուն հետ ընդդէմ Խորհրդային Ռուսիո, Վրաստանէն և Ատրպեյճանէն ավելի գեշ վիճակի մը մեջ չպիտի ձգենք Հայաստանը այս «խաղաղ» օրերուն. իսկ վտանգի պահուն՝ այսինքն՝ ռուսական նոր հեղափոխության մը կամ ռուս-թրքական նոր բախումի մը ատեն մենք մեծապէս պիտի շահինք, որովհետև համերաշխ գործակցությամբ մեր հարևաններուն հետ մենք ավելի դյուրություն պիտի ունենանք եթէ ոչ կասցնելու, գեթ մեղմելու հարավի վտանգը:

Պետք չէ մոռնալ, որ այդ վտանգը այս անգամ պիտի կարենա զալ (եթէ զա) մեր կովկասյան հարևաններու

բարեկամության վրա հենված՝ զանոնք հյուսիսի բռնակալութենէն ազատելու պատրվակով: Ասկէ զատ պետք է նկատի ունենալ, որ Արևմուտքի հետ հաշտություն կնքած Թուրքիան հարձակողական գործողություններ Կովկասի մեջ կարող է ընել այսուհետև և պիտի ընէ միմիայն եվրոպական մեծ պետություններէն մեկուն կամ մյուսին հավանությամբ և գործոն աջակցությամբ:

Այդպիսի պայմաններու մեջ հայությունը ճակատագրական սխալ մը գործած պիտի ըլլար, եթէ իր բոլոր հույսերը կապեր Խորհրդային Ռուսիո ուժին հետ:

XXXIX

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Ոչ մեկ ազգի (ի բաց առջալ հրեաները, որ ամբողջովին գաղութներու են վերածված) գոյության և զարգացման համար գաղութներու դէրը այնքան կարևոր, կենսական և նույնիսկ բախտորոշ չէ, որքան հայության համար: Որովհետև ողջ մնացած երեք միլիոն հայերէն բուն Հայաստանի մեջ հազիվ մեկուկէս միլիոն է մնացած, եթէ հաշվենք Ղարաբաղն ալ: Մեր ժողովրդի, ուրեմն, կեսը ու թերևս ավելին ցրված է գաղութներու մեջ՝ սկսած հարևան Վրաստանէն ու Ատրպեյճանէն մինչև հեռավոր Ամերիկա:

Տեստեսապէս և կուլտուրապէս հայ գաղութները անկասկած շատ ավելի բարձր վիճակի մը մեջ կգտնվին, քան Հայաստանի մեջ ապրող ժողովուրդը, որուն ջախջախիչ մեծամասնությունը կազմված է աղքատ ու հաճախ անգրագետ գյուղացիներէ: Մինչդեռ գաղութներու մեջ է կուտակված հայ դրամագլուխը և հոն են նաև հայ մտավորական օրրանները, հայ բուրժուազիև և հայ մտավորական դասը գերազանցապէս, այսինքն՝ հայության ամենէն գործոն ու ղեկավար տարրերը:

Ասիկա աղաղակող իրողություն մըն է, որ ոչ միայն քանակական, այլև որակական տեսակետով կշեշտէ համագործակցության հրամայական անհրաժեշտությունը հայկական երկու հատվածներու – մայր երկրի և արտասահմանի միջև:

Սակայն հայ ժողովրդի ամենամեծ դժբախտություններէն մեկն ալ հենց այն է – մասնավորապէս այս պահուս, որ փաստորեն

կտրված է կենարար կապը Հայաստանի և գաղութներու հայ գանգվածներուն միջև: Եվ պատճառը գլխավորապես քաղաքական է:

Խորհրդային իշխանությունը չինական պարիսպ մը քաշած է Հայաստանի ժողովուրդին շուրջը, գրեթե անկարելի դարձնելով ամեն ազատ հարաբերություն գաղութներու և անոր միջև: Կասեցված է ոչ միայն մարդոց ազատ երթևեկը, այլև մտքերու հաղորդակցությունը: Գրեթե անհնար է դարձած ոչ միայն անմիջական շփումը, այլև փոխազդեցությունը հեռավորության վրա:

Միակ հարաբերությունը, որ կպահպի այսօր Հայաստանի և գաղութներու միջև, կկատարվի բոլշևիկյան խեղդիչ խողովակով: Բայց այդ նեղ խողովակն ալ չի կարող գործել ամեն տեղ: Բացի Պարսկաստանեն, Թուրքիայեն և Գերմանիայեն, որոնք իրավապես ճանչցած են Խորհրդային կառավարությունը և բացած իրենց դռները բոլշևիկներու առջև, մնացած բոլոր երկիրները չափազանց դժվարացուցած են, հաճախ նաև արգիլած են բոլշևիկներու ելումուտը: Ուրեմն անոնք կարող են միմիայն գաղտնի, քողարկված հարաբերություններ պահել մեր գաղութներու մեծագույն մասին հետ: Իսկ երթևեկը գաղութներեն Հայաստան մատչելի է միմիայն բոլշևիկներուն, անոնց գործակալներուն կամ գեթ անոնցմե վստահության արժանացած և բարեհուսության վկայական ստացած շատ սակավաթիվ արտասահմանյան հայերուն:

Բնականաբար, այն բոլոր ջանքերը, որ կթափվին այժմ գրեթե բոլոր հայ կուսակցությանց, ընկերությանց և մարմիններու կողմե սերտ հարաբերություններ մշակելու համար գաղութներու և Հայաստանի ժողովրդին միջև, չեն կրնար ունեւ շոշափելի արդյունք տալ:

Ատոր համար պետք է որ ամեն բանե առաջ վերնան Հայաստանը գաղութներեն բաժնող քաղաքական արգելքները: Պետք է որ մարդիկ գաղութներեն Հայաստան և Հայաստանեն գաղութները կարենան ազատորեն երթալ գալ: Պետք է նաև, որ անոնք ազատորեն կարողանան խոսիլ իրարու հետ, ազդել իրարու վրա բարոյապես, կուլտուրապես, ազգայնապես: Մեկ խոսքով, պետք է, որ լիակատարորեն վերականգնվի մարդոց և գաղափարներու անբռնադատ, ազատ շփումը, որ կար Անկախ Հայաստանի օրով գաղութներու և մայր երկրի միջև:

Բոլշևիկները, զգալով գաղութներու խոշոր նշանակությունը, կջանան օգտագործել զանոնք իրենց

նպատակներուն համար: Հարկավ մեր ազգային գերագույն շահերը չեն, որ կմղեն զիրենք կապ հաստատելու հայ գաղութներուն հետ, այլ ձգտումը՝ Հայաստանի ժողովուրդին նյութական օգնություն հասցնելու պատրվակով Ա) դրամ կորզել արտասահմանի հայերեն և Բ) առարկա կամ գործիք դարձնել զանոնք իրենց քաղաքական ապազգային փրփականտի համար:

Բոլշևիկները կուզեն, որ հայ գաղութներու նյութական միջոցները առատորեն հոսին դեպի Խորհրդային Հայաստան, բայց միևնույն ատեն ամեն ճիգ կընեն, որ այդ նվերներու վրայեն վերնա արտասահմանի նվիրաբերող հայության կենդանի շունչը: Անոնք կուզեն շահագործել մեր գաղութներու ազգային զգացումները, միաժամանակ ցամքեցնել ջանալով անոնց ոգևորության հայրենասիրական բոլոր աղբյուրները: Ճիշտ է, նյութական օգնություն ստանալեն գատ բոլշևիկները կձգտին նաև որոշ «բարոյական» կապ ստեղծել գաղութներուն հետ, բայց այդ կապը կուզեն ստեղծել ոչ թե Հայաստանի ժողովուրդին և գաղութներուն, այլ միայն իրենց կուսակցության և գաղութներուն միջև:

Հայկական բովանդակ իրականության մեջ չկա այսօր և՛ ոչ մեկ քաղաքական հոսանք կամ կազմակերպություն, որ անկեղծորեն չկամենա մեր գաղութներու նյութական և բարոյական միջոցները ի սպաս դնել Հայաստանի ժողովրդին, որովհետև բոլորն ալ արդեն հստակորեն կգիտակցեն, թե մայր երկրի մեջ մնացած ժողովուրդն է մեր ապագա պետության գլխավոր հենարանն ու կորիզը: Ամեն հայ կզգա, թե զորացնելով Հայաստանի ժողովուրդը տնտեսապես և բարոյապես՝ գաղութները խոշոր քաղաքական գործ մը կատարած պիտի ըլլան միաժամանակ. որովհետև, որքան ավելի տնտեսապես բարգավաճ և բարոյապես առողջ ըլլա հայ ժողովրդական մայր գանգվածը, այնքան ավելի գործոն քաղաքական ուժ մը պիտի դառնա ան, այնքան ավելի հաջողությամբ ան պիտի կարենա պայքարել իր ազատության համար:

Անվիճելի փաստ է, թե գաղութներու ըրած նյութական և բարոյական օժանդակությունը Խորհրդային Հայաստանին ամենահեռավոր չափով իսկ չի կարող համեմատվիլ այն հսկայական և ինքնարոխ օգնության հետ, որ տրվեցավ Ազատ և Անկախ Հայաստանին:

Վերջին երկու-երեք տարիներու ընթացքին գաղութներու մեջ եղան շարք մը ձեռնարկներ նպաստելու համար Հայաստանի ժողովուրդին, բայց այդ ձեռնարկները շատ խղճուկ արդյունք տվին: Չի կա այլևս նախկին տարերայնորեն խանդավառ տրամադրությունը, չի կա նախկին ինքնամոռաց գոհաբերող ոգին: Չափազանց գուսպ, վերապահ և սառն վերաբերմունք մը կտեսնվի ամեն տեղ գաղութային զանգվածներուն մեջ հանդեպ հեռավոր հայրենիքին, որուն վրա իրենց երկաթե թաթը դրեր են մեր ժողովրդին այնքան անհարազատ և օտար բոլշևիկները: Բոլորի սիրտը կկրծոտե կասկածանքի, թերահավատության և հուսալքումի քայքայիչ որդր: Բթացեր են կարծես ջիղերը, խլացեր են կարծես ականջները և մոայլ լռություն մը իջեր է հոգիներու վրա և բութ անտարբերություն մը կարծես կաշկանդեր է մասսաները:

Պարզ է, որ ներկա պայմաններու մեջ, եթե գերմարդկային ճիգեր ալ թափվին հայ քաղաքական կուսակցությանց կողմե շարժելու գաղութները ի նպաստ Հայաստանի օգնության գործին, եղածեն շատ ավելի շոշափելի արդյունք մը չպիտի ստացվի: Անկարելի է արհեստականորեն գոհաբերության մղել զանգվածները, երբ դառն իրականությունը անողոք փաստերով կմարե անոնց մեջ ոգևորության կրակը, երբ հեռավոր հայրենիքի մեջ տիրող ռեժիմը սինիքորեն ոտնակոխ կընե անոնց սրբազան զգացումները և նվիրական գաղափարները, երբ հայանուն ցավագարներու և բախտախնդիրներու ազգադավ խմբակ մը օտար սվիններու գործությամբ կջանա փճացնել ամեն հայու համար ա՛յնքան թանկագին արժեքներ:

Եվ որքան ավելի զանգվածներու գիտակցության մեջ կշեշտվի այն միտքը, թե բոլշևիկները ոչ միայն կովկասյան Հայաստանի անկախության, այլև Տաճկահայաստանի ազատության գերեզմանափորներն են, այնքան ավելի կմեծնա հոգեբանորեն այն ահռելի անջրպետը, որ բացված է մեր մայր երկրի և գաղութներու միջև:

Գաղութներու հայությունը, որ կազմված է գերազանցապես տաճկահայերե, թերևս դեռ կարենար հաշտվիլ կովկասյան Հայաստանի անկախության ժամանակավոր կորուստին հետ, եթե բոլշևիկները գեթ չափով մը յուրացնեին տաճկահայ դատի պաշտպանության գործը, ինչպես ըրած էր Զ. Յ. Դաշնակցությունը:

Բայց անոնք կծխտեն տաճկահայ դատի գոյությունն իսկ՝ չվշտացնելու համար իրենց բարեկամ թուրք փաշաները:

Թրքահայությունը ցարդ կապված էր կովկասյան Հայաստանի հետ թրքահայ դատի միջոցով: Զ. Յ. Դաշնակցությունը տասնյակ տարիներու համառ և տքնաջան աշխատանքով սորվեցուցեր էր կովկասահայ զանգվածները նայելու տաճկահայ դատի վրա իբրև իրենց ամենեն հրատապ և կենսական հարցին վրա. միաժամանակ Զ. Յ. Դաշնակցությունը սորվեցուցեր էր տաճկահայ զանգվածները նկատել կովկասահայությունը ոչ միայն իր արյունակիցը, այլև իր հավատարիմ ու անձնվեր գործակիցը գոյության և ազատության մեծ պայքարին մեջ, զոր հայ մարտական կազմակերպությունը կմղեր տաճկական հայասպան բռնակալության դեմ: Իսկ այն հայանուն ուժը, որ կարմիր բանակի միջոցով իր պողպատե ճիրաններուն մեջն է առեր կովկասյան հայությունը, կըսե այսօր, թե չկա տաճկահայ դատ, այլ կան միայն տաճկահայ գաղթականներ, որոնց համար սակայն նեղ են ու փակ Խորհրդային Հայաստանի սահմանները. թո՛ղ երթան անոնք ուր կուզեն և թո՛ղ տեսնեն իրենց գլխուն ճարը, ինչպես կուզեն:

Ոչ միայն փաստով, այլ նույնիսկ խոսքով բոլշևիկներու իշխանությունը չի խոսիր գաղութներու սրտին. անոնց խոսքերը օտարոտի կենչեն. անոնց մերձեցման փորձերը ավելի ևս անվստահություն ու ցրտություն առաջ կբերեն: Անոնց մասնակցությունն անգամ ունե հասարակական ձեռնարկի մեջ բավական է զայն քայքայելու, վիժեցնելու համար: Հայաստանի ժողովուրդի կենդանի շունչին տեղ Հայաստանեն դեպի գաղութները կուգա միայն անոնց մեռցնող շունչը:

Եվ ի՞նչ կա զարմանալի, եթե գաղութներու հայությունը միշտ ավելի համառ կերպով ինքն իր մեջ կամփոփվի և միշտ ավելի կկտրվի մայր երկրի զանգվածեն:

XL

ԿԵԴԴՈՆԱՄՈՒՅՍ ՈՒԺԵՐԸ

Եվ այսպես, Խորհրդային իշխանության ստեղծած ահռելի արգելքներուն շնորհիվ, հայության երկու հատվածները – երկիրն ու գաղութները – ոչ միայն ֆիզիքապես, այլև բարոյապես բաժնված են

իրարմե, կազմելով երկու տարբեր, կողիացած աշխարհներ, որոնց միջև կբացակայի այսօր ամեն ազատ շփում և կենդանի կապ:

Այս անբնական կացությունը անկասկած անչափելի վնասներ կհասցնե բովանդակ հայության. որովհետև Հայաստանի մեջ բոլշևիկներու կողմէ բանտարկված հայկական զանգվածը կգրկվի գաղութներու հայության ազատ զարգացող մտքի բեղմնավորող ներշնչումներէն, ինչպէս նաև անոր նյութական ու բարոյական ինքնաբոյս և առատ օժանդակութենէն, որ կրնա ըլլալ միմիայն ազատ պայմաններու և հարաբերությանց մեջ: Իսկ գաղութներու հայությունը կգրկվի մայր երկրի ժողովրդի թարմացնող, հարազատ ու առողջ շունչէն, որուն ա յնքան կարոտ է օտարացման վտանգի ենթակա գաղութներու հայ մարդը:

Երևանի հանրապետությունը իրերու պատմական բերումով կոչված է կատարելու ազգային կեդրոնաձիգ ուժի մը դերը ամբողջ հայության համար, մինչդէռ հոն հաստատված Խորհրդային ներկա իշխանությունը ազգային տեսակետով կեդրոնախույս ձգտումներ ունի և կվարե խորթացնող, վանող ու տարրալուծող քաղաքականություն մը հայ իրականության մեջ:

Պատճառն այն է պարզապէս, որ թէև հայանուն, բայց օտար ուժ մըն է ան ու կձառայե հայության համար օտար քահերու և իդեալներու: Հայությունը անոր համար նպատակ մը չէ, այլ սոսկ միջոց մը մեր ժողովրդի վիճակէն, հոգեբանութենէն ու պահանջներէն չբխող շահերու և գաղափարներու իրագործման համար: Հայ ազգի պատմական պրոցեսի մեջ պատահականորէն մտած այդ օտարոտի ուժը, թեկուզ հայկական կերպարանով, կգործե ուղղությամբ մը, որ բացարձակորէն հակառակ է այդ պրոցեսի իմաստին ու ձգտումին: Եվ մինչ հայության համար կենսական անհրաժեշտություն է դարձած օտար լուծէ անկախ պետական կյանքի մը ստեղծումը, մեր ժողովրդի ցրված բեկորներու հավաքումն ու միացումը ազգային մեկ իշխանության տակ, ինչպէս նաև ներքին քաղաքական ու տնտեսական ազատության մը ապահովումը, — բոլշևիկները, ընդհակառակը, հանուն ռուսական կարմիր աշխարհակալության կքանդեն հայկական անկախության, միության և ազատության հիմերը թէ փաստորէն և թէ գաղափարականորէն: Այսինքն գործով և խոսքով անոնք կընդդիմանան հայության հեղափոխական պայքարի հիմնական ձգտումներուն, որոնք հայ ազգի գոյության և զարգացման ամենաանհրաժեշտ նախապայմաններն են:

Ինչպէս բոլշևիկները երկրի մեջ, այնպէս ալ Ռամկավարները գաղութներու մեջ կներկայացնեն տարամերժ և կեդրոնախույս ուժ մը:

Բոլշևիկներու քաղաքական գործունէության առարկան կովկասահայերն են, իսկ Ռամկավարներունը՝ տաճկահայերը: Եվ ինչպէս կովկասահայը չի կարող ըլլալ իսկական Ռամկավար, այնպէս ալ տաճկահայը անկարող է դառնալ բոլշևիկ: Հազվագուտ բացառությունները կհաստատեն ընդհանուր երևույթը: Ոչ Ռամկավարը կրնա ըմբռնել կովկասահայուն հոգեբանությունը, ոչ ալ բոլշևիկը տաճկահայուն: Մակայն, ինչպէս բոլշևիկները կկազմեն կովկասահայության շատ չնչին մասը, որ այլասերած և օտարացած է մայր գանգվածէն իր մտայնությամբ և ձգտումներով, նույնպէս և Ռամկավարները կներկայացնեն տաճկահայության շատ բարակ ու վատառողջ շերտը, որ, մեղկացած ու եսապատ, գրեթէ կտրված է ազգայնորէն կենսունակ, քաղաքականորէն առողջ և հայրենիքի հետ հոգեպէս պինդ կապված ու անձնվեր տաճկահայ մայր գանգվածէն:

Գաղափարներով իրարմե հեռու և նույնիսկ ներհակ, իրենց ամբողջ էությամբ սակայն Ռամկավարներն ու բոլշևիկները խորթ են ու անհարազատ բուն հայ ժողովրդին, որուն հետ կապված չեն սրտով, հոգիով:

Այսօր այդ երկու տարբերը իրարու հետ «բարեկամություն» կմշակեն, «պոլիտիքա» կընեն, կսիրաշահին զիրար — ամեն մեկը իրեն հատուկ ձևով մեկը շարունակ քծնելով, մյուսը հաճախ թքելով: Բայց այդ սիրաբանությունը ոչինչ կփոխէ իրականության մեջ, որովհետև այն միությունն ու համագործակցությունը, զոր անոնք կձգնին առաջ բերել Խորհրդային Հայաստանի և հայ գաղութներու միջև խմբակցական նպատակներով, չի մարմնավորվիր կյանքի մեջ: Անոնցմէ և ոչ մեկը կրնա ազդել զեթ այն գանգվածի կամ հատվածի վրա, որու անունով կխոսի:

Եվ ինչո՞ւ զարմանալ, երբ փոխադարձաբար շոյալված սիրալիր խոսքերը և համագործակցության համառ փորձերը ունէ դրական արդյունք չեն տար, այլ միայն կջղայնացնեն ու կհուսախաբեցնեն երկու կողմերն ալ: Բոլշևիկները կբարկանան ու կթքեն իրենց բարեկամներու վրա, իսկ Ռամկավարները ավելի ևս ստրկորէն կքծնին ու կհաճոյանան, կարծելով, թէ բոլշևիկներու բարկությունը հարուցած են իրենց ոչ բավականաչափ հաճոյակատար ընթացքով:

Ինչ կերպ և որքան ատեն ալ սակայն շարունակվելու ըլլան բոլշևիկներու և Ռամկավարներու այս սիրաբանությունները, անոնք չեն կրնար երբեք բեղմնավոր ըլլալ. որովհետև հայ ժողովրդական զանգվածները թե՛ երկրի և թե՛ գաղութներու մեջ չեն քալեր այդ երկու տարբերեն և ոչ մեկուն հետեւեն: Հայ ժողովրդական մարմնի բազկերակը անոնց ձեռքը չէ, և անոնք ընդունակ չեն ոչ ըմբռնելու և ոչ կատարելու կենսական այն պահանջները, որոնց համար հայությունը կպայքարի տասնյակ տարիներէ ի վեր:

Հայ իրականության մեջ պատմական այդ առաքելությունը վիճակված է անկասկած շ. Յ. Դաշնակցության, որ միակ համազգային, համահայկական կազմակերպությունն է բովանդակ հայության մեջ: Ան է միայն, որ հավասարապես կիշխէ թե՛ երկրի և թե՛ գաղութներու հայ զանգվածներու հոգիներուն վրա և հավասարապես հավատ ու վստահություն կներշնչէ թե՛ տաճկահային, թե՛ ռուսահային: Ան հարազատ է բոլոր հայկական հատվածներուն և ոչ միայն խոսքով, այլև կենդանի գործով կմարմնավորէ հայ ժողովրդի միության գաղափարը: Անոր շարքերը հավասարապես բաղկացած են տաճկահայ, ռուսահայ և պարսկահայ տարբերեն, որոնք հայության ամենեն կենսունակ և մարտական մասը կկազմեն:

Տարիներ առաջ (1905-1906 թթ.) շ. Յ. Դաշնակցությունը մեղադրեցին «պանարմենիզմի» համահայկականության մեջ: Այդ, կրնանք ըսել հպարտորեն, Դաշնակցությունը «պանարմենիստական» է, բայց ոչ այն աշխարհակալական իմաստով, ինչպես է պանգերմանիզմը, պանիսլամիզմը կամ պանսլավիզմը:

Եթե չհաշվենք հայ եկեղեցին, որ քաղաքական կազմակերպություն մը չէ, հայ ազգի վերջին հինգ-վեց դարերու ստրկության ժամանակաշրջանին մեջ շ. Յ. Դաշնակցությունը միակ հայ քաղաքական ուժն է, որ կրցավ կուռ շարքերով իր դրոշին տակ հավաքել, հայկական բոլոր հատվածները, տարածելով կազմակերպական իր ցանցը աշխարհի ամեն կողմը, ուր բու մը հայություն կա: Մյուս բոլոր հայ քաղաքական կուսակցությունները տեղական հատվածային բնույթ են ունեցեր, ինչպես են այսօր փաստորեն Ռամկավարները և բոլշևիկները:

Շ. Յ. Դաշնակցությունը, հետևաբար, այն միակ ուժն է, զոր պետք է լրջորեն հաշվի առնեն թե՛ անոնք, որ Երևանեն կուզեն օգտվիլ գաղութներու միջոցներեն, և թե՛ անոնք, որ գաղութներեն կուզեն կապվիլ Խորհրդային Հայաստանի մեջ ապրող մայր զանգվածին հետ:

Կույր պետք է ըլլալ չհասկնալու համար, թե շ. Յ. Դաշնակցության գլխուն վրայով անկարելի է հաջողցնել ունե համահայկական կամ համազգային ձեռնարկ, ինչպիսին է երկրի և արտասահմանի հայության համագործակցությունը:

Վերջին երկու տարվա փորձը բավականին հրահանգիչ եղավ թե՛ բոլշևիկներու և թե՛ Ռամկավարներու համար: Առաջինները համոզվեցան, որ Ռամկավարներու բարեկամությունը բնավ բավական չէ ապահովելու համար գաղութներու համակրանքն ու օժանդակությունը իրենց իշխանության: Երկրորդները տեսան, որ բոլշևիկներուն միայն ապավինելով անկարող են ոչ կենդանի կապ հաստատել երկրի հայության հետ և ոչ ալ ունե բան փոխել իրերու հաստատել երկրի հայության մեջ: Եվ երկուսն ալ զգացին, որ առանց շ. Յ. Դաշնակցության գործոն մասնակցության ամուլ, անպտուղ և անիմաստ պիտի ըլլա իրենց «բարեկամությունը», եթե նույնիսկ երկու կողմերն ալ անվերապահ ու անկեղծ ըլլան իրենց համագործակցության ձգտումին մեջ:

Սակայն «բարեկամությունը» այսուհանդերձ համառորեն կմշակվի ու կհետապնդվի, որովհետև իրականին մեջ բոլշևիկներու և Ռամկավարներու մերձեցման ու համագործակցության գլխավոր շարժառիթը, ինչպես լավ հայտնի է, ոչ թե հայ ազգային նպատակներու իրագործումն է միացյալ ուժերով, այլ ատելի շ. Յ. Դաշնակցության հարվածումը և քանդումը: Անոնք այն միամիտ հույսն ունին, թե միացյալ ուժերով պիտի կարենան տարրալուծել Դաշնակցությունը, ձգելով անոր «ձախ» թևը բոլշևիկներու զիրկը, իսկ «աջ» թևը Ռամկավարներու գիրկը:

Բայց այդ հույսը ոչ միայն չի արդարանար, այլ հակառակ արդյունքի մը կբախի: Դեպքերը և փաստերը ցույց կուտան, որ շ. Յ. Դաշնակցությունը ավելի քան երբևէ այսօր կներկայացնէ սեղմ, ներդաշնակ և կուռ ամբողջություն մը թե՛ երկրի և թե՛ գաղութներու մեջ: Ինչո՞ւ. որովհետև, մեր հակառակորդ երկու ուժերը – ոչ առանձին և ոչ ալ միասին – չեն կրնար խոսքեն անդին անցնիլ և ունե շոշափելի քայլ ընել հայ ժողովրդի միության, ազատության և անկախության ճամփու վրա:

Անոնք տակավին չեն ըմբռներ տարրական բան մը, – այն, որ շ. Յ. Դաշնակցությունը տկարացնելու, քայքայելու կամ ավելորդ դարձնելու միակ միջոցը անոր հետապնդած քաղաքական նպատակներու յուրացումն ու իրագործումն է, որովհետև այդ

նպատակները արհեստական, բռնագրոսիկ կամ հնարովի գաղափարներ չեն, այլ կրիսին բովանդակ հայության կենսական պահանջներեն: Ով կուզե հայ իրականության մեջ իրապես բռնել Հ. Յ. Դաշնակցության տեղը, պետք է Դաշնակցութենեն ավելի լավ կամ գեթ նույն չափով պայքարե հայ ժողովրդի ազատության, անկախության և միության համար:

Եթե բոլշևիկներն ու Ռամկավարները իրենց հակադաշնակցական պայքարով կարողանային ունենալ շոշափելի նպատակներ փոփոխություն մտցնել մեր ազգային ներկա ողբալի իրականության մեջ, գեթ քայլ մը առաջ տանելով հայ ժողովուրդը դեպի ազատ կարգեր, պետական անկախ գոյություն և մասնավորապես տաճկահայ դատի լուծում, անոնք անկասկած պիտի հաջողեին իրապես խլել Հ. Յ. Դաշնակցության ձեռքեն հայ ազգի քաղաքական ղեկավարությունը: Բայց ոչինչ փոխելով դաժան իրականության մեջ դեպի մեր ազգային իդեալներու իրագործումը, և, ընդհակառակը, եղած նվաճումներն ալ տկարացնելով կամ նույնիսկ քանդելով, մեր հակառակորդները չեն կրնար շահիլ ազատատենչ հայության համակրանքը և մանավանդ չեն կրնար տանիլ զայն իրենց ետևեն:

XLI

ՀՈՒՍԱՄԱԲՎԱԾ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Դյուրին, շատ դյուրին բան է քննադատել հայ մարտական կազմակերպությունը, որ պատմական աննախընթաց պայմաններու մեջ վարեց թշնամիներով շրջապատված մեր փոքրիկ և թույլ ժողովուրդի բախտը, և գրեթե մինակ պայքարեց միշտ գերազանց ուժերու դեմ ազգային ազատության, անկախության և միության համար: Բայց դժվար, շատ դժվար գործ է ավելի հաջողությամբ մղել այդ պայքարը: Իսկ Հ. Յ. Դաշնակցության հակառակորդները ոչ միայն ավելի հաջողությամբ չեն շարունակեր հայ ազատագրական պայքարը, այլ իրենց ամբողջ քաղաքական իմաստությունը կարտահայտեն այդ պայքարեն և անոր իդեալներեն դավաճանորեն հրաժարվելու մեջ:

Ինչ կա ասկե ավելի դյուրին բան:

Եվ հանուն ինչի՞ կկատարվի այդ դավաճանությունը և համակերպությունը:

Հանուն կասկածելի և խաբուսիկ խաղաղության մը, որ անեղ փոթորիկի մը նախօրյակը կհիշեցնե իր բոլոր նշաններով: Հանուն ստրուկի մը ողորմելի ապահովության, որ կախված է տիրոջ քմահաճույթեն:

Ատո՞ր համար մաքառեցավ հայ նորագույն դյուցազնական սերունդը, որ իրեն «Մահ կամ Ազատություն» գեղեցիկ նշանաբանն ընտրեց, ատո՞ր համար տվինք բյուրավոր և այնքան թանկագին զոհեր, ատո՞ր համար այնքան եղեռնորեն տարագրվեցան հարյուր հազարավոր հայեր:

Եվ ինչո՞ւ զարմանալ, երբ ազատատենչ հայության սիրտը դավաճանություն կատարող բոլշևիկներու և համակերպություն քարոզող Ռամկավարներու հետ չէ: Ինչո՞ւ զարմանալ, երբ անոնք միշտ ավելի կլքվին և ատելի կդառնան հայ ժողովրդի ճնշող մեծամասնության համար: Ինչո՞ւ զարմանալ, երբ անոնց բոլոր դավերն ու հալածանքները Հ. Յ. Դաշնակցության դեմ ավելի ուժ և կենսունակություն կուտան հայ մարտական կազմակերպության, միշտ ավելի բարձրացնելով Հ. Յ. Դաշնակցության հմայքը հայ ժողովրդական զանգվածներու աչքին:

Զզվանքով միայն կդիտե հեղափոխական հայությունը այն այլանդակ սիրվորտուքը, որ երկու տարիե ի վեր կկատարվի, «ձախ»-են ու «աջ»-են, օտարամուլ և ստրկամիտ մեր հակառակորդներուն միջև:

Բոլշևիկները կսպանեն ամեն ազատություն, — կխեղդեն ամեն ազատ խոսք, կձգվեն ամեն ազատ մամուլ, դաժանորեն կհալածեն հայ մտավորական դասը, կոչնչացնեն հայ ռազմունակ տարրերը, վերածելով մեր հայրենի երկիրը մահաշունչ բանտի մը, իսկ Ռամկավարները ուրիշ բան մը չեն գտներ ընելու, բայց եթե ծափահարել ու ծափահարել միայն այդ «խոհեմ» և «իմաստուն» բռնավորներուն:

Բոլշևիկները, քայլ առ քայլ, կքանդեն հայկական անկախության հիմերը, միշտ ավելի պինդ քաշելով հայ ժողովրդի վզին օտարի լուծը, գոր իրենք իսկ վերահաստատեցին իրենց դավաճան քաղաքականությամբ և օտար սվիններով: Իսկ Ռամկավարները սուտ կույր և սուտ խուլ կձևանան, կարծես ոչինչ կտեսնեն կամ կլսեն, ու կշարունակեն հանցավոր համառությամբ

մուրեցնել միամիտները, պնդելով, թե անձերն են միայն փոխված Հայաստանի մեջ ու եղածը ուրիշ բան մը չէ, բայց եթե միայն այն, որ անշնորհք ու ապիկար Դաշնակցականներու տեղ իշխանության գլուխն են անցեր շնորհալի և կարող բոլշևիկները...

Բոլշևիկները կծաղրեն ու թաղել կջանան տաճկահայ դատը, իսկ Ռամկավարները կծպտան միայն ու կփառաբանեն այդ «չափավոր» և «խաղաղասեր» քաղաքագետները, որոնք, վերջապես, կրցան հաշտվիլ հարևաններուն հետ և «ապահովել» հայ ժողովուրդի գոյությունը Կովկասի մեջ:

Այս ամբողջ վրդովեցուցիչ տեսարանին իմաստն այն է, որ երկու կողմերն ալ իրականին մեջ մեկ մտահոգություն ունին, — չեզոքացնել, ոչնչացնել ատելի Հ. Յ. Դաշնակցությունը, որ իրենց ճամփուն վրա կանգնած է թե՛ երկրի և թե՛ գաղութներու մեջ հավասարապես:

Այդ պատճառով է, որ ինչ ալ ընեն բոլշևիկները, ընդունելի և ծափահարելի է Ռամկավարներուն համար. բավական է որ անոնք երկրի մեջ կլսեղդեն Հ. Յ. Դաշնակցությունը, թեկուզ ատով վտանգվի հայ ժողովրդի գոյությունը, թեկուզ ատով ոտնակոխ ըլլան հայ ժողովրդի ազատությունն ու անկախությունը: Եվ փոխադարձաբար. ինչ ալ ընեն Ռամկավարները, ով ալ ըլլան անոնք, բոլշևիկներուն հաճելի և սիրելի են, քանի որ կպայքարին Հ. Յ. Դաշնակցության դեմ:

Բոլշևիկները, չկարենալով ազատորեն գործել գաղութներու մեջ, ուր կպակսի իրենց «հաջողության» գլխավոր միջոցը՝ Չեկան, ուրախ էին հանձին Ռամկավարներու արտասահմանի մեջ տեսնելու արդեն կազմակերպված «ուժ» մը, որ կամովին խորհրդային գոծակալի և գործակցի պաշտոնը ստանձնած էր, կատաղի կրիվ մղելով Հ. Յ. Դաշնակցության դեմ: Ռամկավարները, իրենց կարգին, չկարենալով գործել մայր երկրի մեջ, երջանիկ էին, որ վերջապես հանձին բոլշևիկներու գտնված էր ուժ մը, որ թեկուզ օտար սվիններու գորությամբ կրցած էր «ճգնել» Հ. Յ. Դաշնակցությունը:

Ինչ սրտառույզ բաժանում աշխատանքի, որ «ավելորդ» և «անկարելի» պիտի դարձներ այլևս Հ. Յ. Դաշնակցության և անոր հանրապետական մարմիններու գործունեությունը:

Եվ քանի որ բոլշևիկները ռուսահայերու «օրինավոր» ներկայացուցիչներն են, իսկ Ռամկավարները՝ տաճկահայերունը, Դաշնակցականները այլևս ոչ մեկ իրավունք ունին հայության ունե մեկ հատվածի կողմեն խոսելու, — անդադար կպնդեն մեր

հակառակորդները և սաստիկ կարտեղեն, երբ կտեսնեին, որ Հ. Յ. Դաշնակցությունը և ՀՀ Պատվիրակությունը աննկուն կերպով կշարունակեն պայքարիլ հայ ազգի ազատության և անկախության համար տրամադրելի բոլոր միջոցներով:

Սակայն իրականության ջախջախիչ փաստերը շուտով եկան քանդելու մեր հակառակորդներու միամիտ հույսերը: Որովհետև կույր պետք էր լինել չնկատելու համար, որ ոչ երկրի մեջ ժողովրդական զանգվածները կանգնած են բոլշևիկներու ետև, ոչ ալ գաղութներու մեջ՝ Ռամկավարներու ետև: Որովհետև արևի լույսի պես պարզ էր, որ հայության ամենն գործոն, ազատատենչ, ռազմունակ, պայքարող, ստեղծագործող և կենսունակ տարրը կքալե Հ. Յ. Դաշնակցության հետ և որ անոր դրոշին շուրջն է հավաքված հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը թե՛ Հայաստանի և թե՛ գաղութներու մեջ:

Ավելին. վերջին երկու-երեք տարիներու ընթացքին, երբ պայմանները այնքա՛ն դաժանորեն աննպաստ էին դասավորված Հ. Յ. Դաշնակցության համար, դեպքերը, ինչպես, օրինակ, փետրվարյան ապստամբությունը, ցույց տվին, որ Հ. Յ. Դաշնակցությունը երկրի հայության մեջ այնքա՛ն խորունկ արմատներ է ձգած, որ, հայտնի բոլոր Դաշնակցականները բանտարկելով, արքորելով կամ կացինահարելով անգամ կարելի չէ երբեք սպանել հայ մարտական կազմակերպությունը: Որովհետև ժողովրդի ծոցեն միշտ դուրս կուզան և պիտի գան բյուրավոր անհայտ Դաշնակցականներ՝ փոխարինելու մեր կուսակցության շարքերեն ժամանակավորապես կամ առմիշտ դուրս ինկածները և շարունակելու անոնց պայքարը կամ ամբիշտ դուրս ինկածները: Որովհետև միամտություն է կարծել, թե Հ. Յ. Դաշնակցության ուժը այն քանի մը հարյուր կամ նույնիսկ հազար հայ մտավորականներն ու ռազմիկներն են, որ տարագրված, արքորված կամ նույնիսկ սպանված են:

Հ. Յ. Դաշնակցությունը նույնիսկն ազատատենչ հայությունն է, որ կուզե իր վրայեն նետել դարերու ստրկության շղթաները, ապրիլ ինքնորեն ու ինքնիշխան իր պատմական հայրենիքին մեջ: Հ. Յ. Դաշնակցության դյուցազնական սերունդին թողած հեղափոխական ավանդություններն ու ներշնչումները ավելի քան երբեք կհրահրեն հայ երիտասարդության հոգին նոր պայքարներու և նվիրումներու համար: Տասնյակ տարիներու ընթացքին հայ մարտական կազմակերպության ցանած գաղափարական սերմերը հարուստ բերք

մը կուտան հայ նորանոր մարտիկներու և անձնուրաց դրոշակակիրներու: Եվ կասկած չի կա, որ Հայաստանի մեջ կաճի ու կգորանա հեղափոխական նոր սերունդ մը, որը երբեք թույլ չպիտի տա, որ Հ. Յ. Դաշնակցության սկսած մեծ գործը անավարտ մնա, և որը պատեն վայրկյանին իր ծանրակշիռ ու բախտորոշ խոսքը պիտի ըսէ հայ աշխարհի մեջ:

Գալով գաղութներուն, հոս ևս իրերու կացությունը մեր հակառակորդներու համար տխուր, եթէ չըսենք՝ հուսահատեցուցիչ պատկեր մը կներկայացնէ:

Հայաստանէն օտար սվիններու բռնությամբ դուրս բշտակած հարյուրավոր մտավորական և ռազմիկ Դաշնակցականները հետզհետէ կցրվին ու կհաստատվին բոլոր հայ գաղութներու մեջ, ուր իրենց եռանդուն, լարված աշխատանքով նոր թափ մը կուտան Հ. Յ. Դաշնակցության գործունեության և աննախընթաց չափերով կգորացնեն մեր կազմակերպության դիրքերը և ավելի սերտորեն, ավելի ընդարձակորեն կկապեն մեր կուսակցության հետ արտասահմանի հայության ամենատողջ ու հայրենասիրական տարրերը:

Հ. Յ. Դաշնակցության այս նվաճումներուն հետևանքով մեր հակառակորդները աստիճանաբար կկորսնցնեն իրենց նախկին դիրքերը նույնիսկ Եգիպտոսի պէս գաղութի մը մեջ, որ իրենց միջնաբերդն էր եղած միշտ: Հետզհետէ անոնք կքայքայվին և իրենց գոյությունը պահպանելու համար կմիանան իրարու հետ, հաճախ անուններ կփոխեն և միշտ ավելի կատաղի պայքարներ կմղեն Դաշնակցության դեմ: Բայց ոչինչ կօզնէ:

Մեր հակառակորդները, որոնք իրենց հաջողության միակ հույսը դրած են ոչ թէ իրենց դրական աշխատանքին, այլ Հ. Յ. Դաշնակցության քայքայման վրա, միշտ ավելի կտկարանան ու կպզտիկանան, որովհետև, եթէ մինչև այժմ գաղութներու մեջ ունեցած են որոշ ազդեցություն և խաղցած են որոշ դեր, այդ եղեր է ոչ թէ իրենց շնորհքին ու օգտակար գործին հետևանքով, այլ այն պատճառով գերազանցապէս, որ Հ. Յ. Դաշնակցությունը մինչև վերջերս համեմատաբար քիչ ուշադրություն էր նվիրած գաղութներու կազմակերպման, իր գրեթէ ամբողջ եռանդը սպառելով երկրի մեջ: Անտարակույս մեր մտավորական և ռազմիկ տարագիրները իրենց ժամանակավոր ակամա աքսորը լավագույն կերպով պիտի օգտագործեն և արդէն կօգտագործեն, հայ բոլոր գաղութներու մեջ ևս

Դաշնակցության համար նվաճելու այն դիրքերը, զորս շատոնց գրաված են երկրի ժողովրդի սրտին մեջ:

Դաշնակցական մտավորականներու ակամա աքսորը Հայաստանէն անկասկած պատճառ պիտի դառնա, որ բովանդակ հայությունը տոգորվի մեկ զգացումով ու մեկ կամքով և պայքարի մեկ ընդհանուր ճակատ կազմէ մեր ազգի ազատության, անկախության և միության թշնամիներուն դեմ, ըլլան անոնք հայանուն թե օտար:

XLII

ԵՐԿՈՒ ՕՐԻԵՆՏԱՅԻԱՆԵՐ

Ուշադիր հայացքէ չի կարող վրիպիլ, որ հայ քաղաքական միտքը այսօր բյուրեղացման կենթարկվի երկու հիմնական ուղղությամբ – 1) Խորհրդային Ռուսիո և 2) Անկախ Հայաստանի: Այսինքն ամբողջ հայ քաղաքական կյանքը կգարգանա, շարժվելով երկու թևերու վրա, որոնցմէ մեկը կամփոփէ իր մեջ ռուսական հակում (օրիենտացիա) ունեցող բոլոր հոսանքները, իսկ մյուսը՝ ուրույն ու անկախ հայկական դիրքեր պաշտպանող տարրերը:

Վերջին ուղղությունը, իրերու ներկա դասավորման մեջ, հակաբոլշևիկ է և նույնիսկ հակառուսական:

Բոլշևիկյան օրիենտացիային կհետևին հայ ժողովրդի այն խավերը և խմբակցությունները, որոնք գիտակցաբար կհրաժարին Հայաստանի անկախ գոյության պահանջէն, կհաշտվին մեր հայրենիքի ներկա կախյալ, ստրկական վիճակին հետ և Ռուսիո մեջ կտեսնեն հայ ժողովրդի միակ գորավոր ու վստահելի պաշտպանը:

Հայկական կամ հակաբոլշևիկյան (հակառուսական) օրիենտացիան, ընդհակառակը, կմշակեն այն տարրերը, որոնք չեն ուզեր հաշտվիլ մեր երկրի քաղաքական ներկա կացության հետ, որոնք Հայաստանի անկախությունը կնկատեն անհրաժեշտ, կենսական նախապայման մը հայ ժողովուրդի ապահովության ու զարգացման համար և որոնք, վերջապէս, ոչ միայն Ռուսիո մեջ չեն տեսներ պաշտպան ուժ մը, այլ ընդհակառակը զայն կհամարեն խոշոր վտանգ մը հայկական գանգվածի ֆիզիքական գոյության համար, ինչպէս նաև մեծագույն արգելք մը հայ ազգի քաղաքական ազատության ճամփուն վրա:

Կարելի չէ չխոստովանիլ, որ առաջին հոսանքը, այսինքն՝ ռուսական օրինատացիան մեր քաղաքական ամբոխի մեջ իշխող մտայնության արտահայտությունն է: Այդ մտայնության ուժ կուտա, նախ, բնագոյային և կույր վախը թուրքեն, որուն դեմ հանձին ռուսին կկարծվի, թե կանգնած է պահապան ուժ մը: Եվ, երկրորդ, ամբոխը միշտ հակում ունի տիրաբար ազդվելու ներկայէն. իրերու ներկա վիճակէն, գոր տրամադիր է ընդունելու իբրև կայուն և անփոփոխելի փաստ մը, որուն հետ ուրիշ բան չի մնար ընել, բայց եթե հաշտվիլ:

Ռուսական օրինատացիան որոշ կուսակցության մը կամ որոշ կուսակցություններու ամբողջական սեփականությունը չէ: Հայկական բոլոր կուսակցությանց մեջ ալ անխտիր ներկայացված է ան ավելի կամ պակաս ուժգնությամբ և ծավալով:

Իրերու քմահաճ բերումով այսօր ան առանձնապէս շեշտված է բոլշևիկներու և ռամկավարներու մեջ: Բայց կասկած չկա, որ, երբ տապալվի խորհրդային իշխանությունը, բոլշևիկներու օրինատացիան ալ պիտի փոխվի ու դառնա հակառուսական անվերապահորեն, — ինչպէս էր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, այսինքն՝ մինչև 1917 թ. հոկտեմբերի 24-ը: Նույնը մասամբ կվերաբերվի և ռամկավարներուն: Ասոնք հայության այն տարրն են, որ միշտ տիրոջ մը պետքը կզգան: Ամերիկայէն և Դաշնակիցներէն հուսահատված անոնք կուզեն կառչիլ այսօր Խորհրդային Ռուսիո փեշերուն: Վաղը, եթե հանգամանքները փոխվին և ուրիշ հարմար տեղ մը գտնեն, ապահովաբար պիտի լքեն Ռուսիան ալ այդ նոր տիրոջ սիրուն, մանավանդ որ Ռուսիո հետ ոչ մեկ տեսակի կապ ունին և ոչ ալ ոնէ չափով ծանոթ են անոր կյանքին, ձգտումներուն, ուժին:

Այս կուսակցություններէն շատ ավելի խոր արմատներ ունի ռուսական օրինատացիան մեր չեզոք, արտակուսակցական խավերու և մասնավորապէս ռուսահայ բուրժուազիայի մեջ, որ տնտեսապէս և կուլտուրապէս ամենասերտ կապերով կապված է ռուսական աշխարհին հետ և ոչ մեկ պարագայի տակ կուզէ բաժնվիլ անկէ:

Ռուսական հակումէ գուրկ չեն դեռ Հ. Յ. Դաշնակցության շարքերն ևս թե Կովկասի մեջ և թե արտասահման: Այդ հակումը որոշապէս հրապարակ եկավ վերջին անգամ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, երբ Դաշնակցության ղեկավար մարմինները, շարքերու

ամբոխային տրամադրություններէն ազդվելով, առանց դիմադրության հանձնեցին իշխանությունը բոլշևիկներուն:

Բայց հազիվ երկու և կես ամիս անց, այսինքն՝ 1921 թ. փետրվարին պայթեց ապստամբություն մը, որ տարերային թափով արդէն կարտահայտեր մեր ժողովրդական զանգվածներու խորունկ հուսախաբությունը բոլշևիկյան և ռուսական իշխանութենէն: Եվ հուսախաբ զանգվածներու զլուխն էին կանգնած Դաշնակցության ճիշտ այն տարրերը, որոնք առաջ ամենէն ավելի գորավոր ռուսական և բոլշևիկյան հակումներ ունեին: Կյանքի դաժան փորձը անսպասելիորեն կարճ ժամանակի մեջ անոնց մեջ սպաններ էր ամեն պատրանք ու հավատ հանդէպ Խորհրդային Ռուսիո, որուն տաժանելի լուծը ոմանց մոռցնել էր տվեր նույնիսկ թուրք փաշաներու արյունաբեր իշխանության սարսափները:

Այսուհանդերձ ռուսասիրությունը դեռ այնքան գորավոր է մեր քաղաքական շրջանակներու մեջ, որ փետրվարի 18-ի ապստամբութենէն հետո ալ, նույնիսկ Հ. Յ. Դաշնակցության շարքերուն մեջ, քիչ չեն անհասներ, որոնք Խորհրդային Ռուսիայէն կակնկալեն հայ ժողովրդի փրկությունը, ապրելով նախապատերազմական օրերու միամիտ և դառնադետ պատրանքներով:

Այսպէս, Դաշնակցության խմբապետներէն Դրոն և քանի մը դաշնակցական մտավորական երիտասարդներ երկու ամիս առաջ հրատարակէր են հայտագիր մը, որով իրենց բոլոր քաղաքական հույսերը կուզեն կապել Խորհրդային Ռուսիո հետ: Եթե անկասկածելի է, թե այս հայտագրի հրատարակության գործի մեջ Դրոն և իր համախոհները ազատ չեն եղած ու ենթարկված են ուղղակի կամ անուղղակի կերպով բոլշևիկյան ճնշումներուն, այնուամենայնիվ անվիճելի կրճի նաև, որ Դրոն ու Թիֆլիսի խումբ մը դաշնակցականները իրենք ևս տակավին չեն կրցած ազատվիլ ամբոխային քաղաքական այն մտայնութենէն, որ 1914 թ. հայությունը, գիտակցաբար թե անգիտակցաբար, գործիք դարձուց ցարական փոխարքաներու ձեռքին:

Սակայն անտարակուսելի է, որ Դրոյի պէս մտածողներու թիվը դաշնակցական ղեկավար շրջանակներու մեջ հետզհետէ նկատելիորեն կպակսի, և Հ. Յ. Դաշնակցությունը իր ամբողջությամբ որոշապէս կընթանա հակառակ ուղղությամբ մը, որ հակաբոլշևիկյան է իր էության մեջ և մասամբ նաև հակառուսական:

2. 3. Դաշնակցության Վիեննայի քոնֆերանսը, որ տեղի ունեցավ քանի մը ամիս առաջ, որդեգրեց այդ ուղղությունը, ձևակերպելով իր ընթացքը իբրև հայկական ուրույն և անկախ օրինակագրություն: Քոնֆերանսը որոշապես ընդունեց այն տեսակետը, թե հայ ժողովուրդը, իր ֆիզիքական գոյությունը կարենալ պահպանելու և իր քաղաքական իդեալները կարենալ իրականացնելու համար, պետք է ազատագրվի ոչ միայն Դաշնակիցներու, այլև Ռուսիո աղետաբեր խնամակալութենէն ու կախումէն: Քոնֆերանսը կտրականապես շեշտեց, թե հայ ժողովուրդը, անցյալի դաժան փորձություններէն զերծ մնալու համար, պետք է խուսափի ամեն տեսակ արկածախնդրություններէ, որոնք կրնան մեծ պետությանց հակամարտ շահերու բախումէն և խաղերէն, բայց աղետաբեր են հայ ժողովուրդի գոյության և ազատության պայքարի համար: Քոնֆերանսը անհրաժեշտ գտավ, որ հայությունը, ամեն բանէ ավելի, համերաշխ գործակցության մը զետիւն մշակէ իր բախտակից կովկասյան ազգերուն հետ, ավելի լայն ճակատի մը վրա կարենալ պաշտպանելու համար մեր ազգային դատը:

Եթե անհերքելի իրողություն է, որ հայ ժողովրդի մանկամիտ հավատը Դաշնակիցներու հանդէպ ողբերգական հուսախաբություններու պատճառ դարձավ, ավելի ևս ակներև փաստ է, որ մեր ռուսական օրինակագրական միշտ կործանարար հետևանքներ է տված միջազգային բոլոր տազնապներու, պատերազմներու և հեղափոխությանց ատեն: Ռուսական օրինակագրական գործած ավերները ալ ավելի մեծ են եղած այն պատճառով, որ մեր մեջ գրեթէ միշտ պակսեր է քաղաքական կազմակերպված հակահոսանք մը, որ կարենար զսպել, կասեցնել մեր ժողովրդի տարերային ռուսասիրական պոռթկումներն ու անխորհուրդ չափազանցությունները և ապահովել մեր ազգային թիկունքը ռուսական թշնամիներու հաղթանակի պարագային:

Իրերու պատմական բերումով Հ. Յ. Դաշնակցությունն է, որ կկոչվի դառնալու այդպիսի հակադիր ուժ մը ընդդէմ ամբոխային այն հոսանքին, որ կմղէ հայությունը կուրորէն Խորհրդային Ռուսիո աղետաբեր գիրկը:

Եվ աստիճանաբար, միշտ ավելի հրամայական կերպով, Հ. Յ. Դաշնակցությունը կբյուրեղացնէ իր մեջ անկախ քաղաքական ուղղություն մը, որ հիմնված է ոչ թէ խուժանային զգացումներու, արյունոտ անցյալէն մնացած կիրքերու և անոնց վրեժխնդրական

թելադրություններու վրա, այլ ազգային շահերու հստակ ու առարկայական ըմբռնողության, ինչպէս նաև ողջմիտ, զգաստ ու շրջահայաց հաշիվներու վրա:

XLIII

ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՍԸ

Երբ կովկասյան սահմանի այն կողմը, տաճիկ փաշաներու և քուրդ ցեղապետներու տաժանելի լուծին տակ կհեծեր հայկական խոշոր գանգված մը պատմական Հայաստանի մեջ, բնականաբար հայ քաղաքական պայքարի գլխավոր առարկան ալ այդ գանգվածն ու այդ երկրամասն էր: Մեր ամբողջ ճակատը ուղղված էր այն ատեն Թուրքիո տիրապետության դէմ:

Ողբերգական դեպքերու հետևանքով սակայն Թուրքիո սահմանները այսօր գրեթէ իսպառ դատարկված են հայութենէ, եթէ չհաշվենք Պոլիսը: Կամենանք թե չկամենանք հաշտվիլ այս սարսափելի իրողության հետ, ամեն պարագայի տակ պարտավոր ենք հաշվի առնել զայն՝ մեր հետագա քաղաքական ուղեգիծը ճշտելու ատեն:

Այդ հսկա փոփոխությունը, որ կատարվեր է հայկական իրականության մեջ, չէ կարող հիմնապես չփոխել նաև մեր գործելակերպն ու ազգային քաղաքականության ճակատն և ուղղությունը:

Անոնք, որ կշարունակեն մտածել ու շարժիլ այնպէս, իբր թե ոչինչ է փոխված հայկական երկնքի տակ, կապրին դեռ անցյալի իրերու և գաղափարներու աշխարհին մեջ, չկարենալով հաղթահարել իրենց դառնագույն զգացումները և ազատել իրենց միտքը այդ զգացումներու և կիրքերու խեղդող կապանքներէն:

Մեր քաղաքական ամբոխը կարծես անընդունակ է ըմբռնել, թե փոխված է հիմնովին մեր ազգային շրջապատը և թե մեր զգացումներու թելադրությունները և անցյալի ուղիները կարող են տանիլ մեզ դեպի անդունդ, ինչպէս որ անգամ մը, մեր աչքին առջև, արդեն տարին:

Զգացումները և կիրքը քաղաքականության մեջ ամենէն անվստահելի, ամենէն վտանգավոր խորհրդատուներն են: Հակառակ

այս ծանոթ ճշմարտության սակայն մեր ազգային ամբողջ քաղաքականությունը, տասնյակ տարիներու ընթացքին – շատ կարճատև բացառիկ շրջանները մեկ կողմ թողած – առաջնորդվեր է ամբոխային զգացումներով, տրամադրություններով և կիրքերով: Ատոր հետևանքն է մասամբ 1915 թ. ազգային մեծ աղետը և մեր ներկա ողբալի, անել վիճակը:

Ըստ երևույթին, պետք է դեռ երկար ժամանակ, մինչև որ մենք կարենանք մեր մտքով առարկայորեն գնահատել մեր կյանքի մեջ կատարված մեծ փոփոխությունները և անոնցմե հանել անհրաժեշտ և միակ բանավոր եզրակացությունները: Մեր ազգային կյանքի ընթացքը, սակայն, դժբախտաբար, կանգ չի առներ ու սպասեր, որ մենք հավաքենք մեր ուժերն ու կազդուրվինք, բուժելով մոտիկ արյունոտ անցյալի վերքերը, և ճշտենք մեր ընելիքը: Դեպքերու գահավեժ ընթացքը շուտափույթ պատասխան կպահանջե մեզմե այն հրատապ հարցումներուն, որոնք կենաց և մահու նշանակություն ունին մեր ժողովուրդին համար:

Ինչ ալ ըլլա պատասխանը հայության առջև դրված ներկա կենսական հարցերուն, մեկ բան սակայն այժմէն իսկ պարզ և որոշ կը վի՛նք.– այն, որ հայկական զանգվածի չքացումով Թուրքիո սահմաններէն մեր ապագա շփման ու հակամարտության կետերը թուրքերուն հետ զգալապես տկարացած են և հայ-թրքական հարաբերությունները առարկայորեն մտած են նոր փուլի մը մեջ: Խոշորագույն քաղաքական իրողություն մըն է, որ հայ ժողովուրդը այսօր փաստորեն քաշված է Փոքր Ասիայէն և դարձած է ամբողջովին կովկասյան ժողովուրդ մը, ինչպէս եղած է միշտ, օրինակ, վրաց ազգը:

Մինչև 1915 թ. մեծ կոտորածը փաստորեն և մինչև Լոզան միջազգայնորեն մենք դեռ ավելի փոքրասիական ժողովուրդ մըն էինք, քան կովկասյան ազգություն մը: Այժմ, Լոզանի քոնֆերանսէն հետո թերևս երկար ժամանակով – մենք դատապարտված ենք քաղաքականապես ամփոփվելու Կովկասի սահմաններուն մեջ և կապվելու ամբողջովին կովկասյան ազգերուն հետ ամենասերտ կերպով, ենթարկվելով անոնց ճակատագրի անբաժանելիորեն:

Այսպիսի պայմաններու մեջ բնական է, որ մեր ազգային քաղաքականությունն ալ ավելի քան երբեք պիտի թելադրվի Կովկասի պայմաններէն և ներդաշնակե մեր բախտակից կովկասյան հարևաններու շահերուն ու մղումներուն հետ: Եթէ առաջ հայությունը տակավին որոշ հիմեր ունէր չուզելու սահմանափակվիլ Կովկասի

մեջ և ձգտելու ապրիլ նաև Կովկասէն դուրս, կիսով չափ միայն կապելով իր բախտը իր կովկասյան հարևաններուն հետ և ինքզինքը բավականին խորթ զգալով կովկասյան միջավայրին մեջ, այժմ երկու ոտքով ալ մենք կանգնած ենք Կովկասի մեջ: Եթէ առաջ հայությունը քաղաքականորեն երկու երես ունէր.– մեկը՝ ուղղված դեպի Փոքր Ասիա, մյուսը դեպի Կովկաս, այժմ մնացեր է մեր մեկ երեսը միայն – կովկասյանը:

Կովկասը ինքնին մեկ խոշոր և յուրահատուկ ամբողջություն է և անոր մասերը սերտորեն կապված ըլլալով իրարու ուզեն թէ չուզեն հարկադրված են մեկ ճակատ կազմել իրենց գոյությունը պաշտպանելու և մանավանդ իրենց կորսնցուցած ազատությունը տնականորեն նվաճելու համար: Ինչ ալ ըլլա վրացիներու, հայերու և թաթարներու վերջնական նպատակը, դառն փորձով ապացուցված անժխտելի իրողություն է, որ անոնցմե է ոչ մեկը կրնա զուտ ազգային ճակատի մը վրա վերականգնել և ապահովել իր երեկի անկախությունը:

Անհերքելի ճշմարտություն է, որ Կովկասը միացյալ ուժերով անպարտելի է, իսկ բաժնված ուժերով՝ միշտ դատապարտված է քաղաքական ստրկության կամ Հյուսիսի, կամ Հարավի կողմէն:

Ահա թէ ինչու կովկասյան ժողովուրդներու համագործակցությունը միակ ճամփան է անոնց ազատագրության: Միմիայն Կովկասի միջոցով և իր բախտակից հարևան ազգերու հետ է, որ հայությունը կրնա օր մը նորէն տիրանալ իր անկախության և հաջողությամբ պաշտպանել իր ֆիզիքական գոյությունը: Այլապէս ան միշտ պիտի մնա Հարավի ֆիզիքական բնաջնջման սպառնալիքի տակ և Հյուսիսի քաղաքական ստրկության մեջ:

Կովկասը իր աշխարհագրական և քաղաքական պայմաններով Զվիցերիո դիրքն ունի: Իրերու երկաթէ անհրաժեշտությամբ վաղ թէ ուշ ան պետք է անջատվի Հյուսիսէն և ինքզինքը ապահովէ Հարավէն, անկախ գոյության մը տիրանալու համար:

Այդ է այն միակ միջին ճամփան, որ կարող է վերջ տալ արտաքին ուժերու սպառնալից հակամարտության, չեզոք պատվար մը կանգնեցնելով անոնց միջև: Այդ է նաև այն միակ միջոցը, որ կարող է գոհացում տալ Կովկասի ժողովուրդներու ներքին կենսական

պահանջներուն, ազատելով զանոնք օտար բռնակալությանց խեղդող լուծէն:

Մեր հարևանները – վրացիներն ու թաթարները – Թուրքիո հետ քաղաքական վեճեր չունին և դյուրությամբ կարող են համաձայնության գալ իրարու հետ Կովկասի անկախության մասին: Մինչդեռ թե վրացիները և թե թաթարները չեն կրնար իրենց անկախությունն ու ազատությունը վերստանալ առանց պայքարելու Խորհրդային Ռուսիո դէմ:

Կովկասը զինու զորությամբ նվաճած ըլլալով՝ Խորհրդային Ռուսիա անխուսափելիորեն դարձած է մեր հարևաններու անհաշտելի թշնամին: Եվ որքան ատեն որ ան Կովկասի մեջ է, այլապէս չի կրնար ըլլալ:

Մեր հարևաններու քաղաքական ճակատը այսպիսով ուղղված է Հյուսիսի դէմ, որովհետև այդ կպահանջեն իրենց կենսական շահերը, որովհետև այդպէս միայն կրնան տիրանալ իրենց ազգային ազատության և անկախության և որովհետև, վերջապէս, վախ չունին Հարավի վտանգէն, ինչպէս մեր ժողովուրդը:

Ուստի առարկայական պայմաններու և ոչ ենթակայական հակումներու թելադրություն պետք է նկատել մեր հարևաններու հակաբոլշևիկյան կամ հակառուսական ընթացքը:

Շրջապատված ամեն կողմէ հակաբոլշևիկյան և հակառուսական ուժերով՝ մենք մեզ մահացու վտանգի պիտի ենթարկենք, եթէ չհարմարվինք մեր շրջապատին և շարունակենք մեր հարևաններու գլխուն վրայով ձեռք մեկնել անոնց թշնամի Խորհրդային Ռուսիո: Որովհետև հայ ժողովուրդի ֆիզիքական գոյության տեսակետով իր անմիջական հարևաններու թշնամությունը անհամեմատ ավելի վտանգավոր է, քան Խորհրդային Ռուսիո թշնամությունը: Մինչդեռ մեր կովկասյան հարևաններու բարեկամությունը և աջակցությունը, բացի ֆիզիքական որոշ ապահովություն տալէ, ստիպողականորեն անհրաժեշտ են մեր քաղաքական ազատության և անկախության համար:

Այսպիսի պայմաններու մեջ մեր քաղաքական ընթացքը կգծվի առարկայական ստիպողականությամբ մը, այնպէս, որ մեզ ազատ ընտրություն ալ չի մնար: Ինչ ալ ըլլան մեր զգացումներն ու նախասիրությունները, մենք չենք կարող ըլլալ մեր կովկասյան հարևաններուն դէմ և չպետք է ըլլանք Խորհրդային Ռուսիո հետ:

Քաղաքականապէս մտածող ամեն հայու համար ասիկա պարզ պիտի ըլլա արևի լույսի պէս:

Ահա թե ինչու հայկական օրիենտացիա ըսել այժմ՝ կնշանակէ իրականին մեջ ըսել կովկասյան օրիենտացիա, բայց ոչ երբեք ռուսական կամ բոլշևիկյան:

XLIV

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՆԱՉԱՆԱՎՈՐՈՒՄ

Մեր խորին համոզումով, հայ ժողովրդի դժբախտությանց կարևորագույն պատճառներէն մեկն ալ այն էր, որ հայությունը 1914 թ. ենթարկված չէր քաղաքական զանազանավորման (դիֆերենցիացիա): Մեր ամբողջ ազգային զանգվածը մեկ հոտ կներկայացներ և ոչխարային մղումով մը հետևեցավ մեկ օրիենտացիայի, որ ճիշտ է, կհամապատասխաներ մեր զգացումներուն, բայց ոչ երբեք մեր կենսական շահերուն: Ավանդական ատելություններն ու նախասիրություններն էին, որ վճռական դեր կատարեցին, անվերապահորեն նետելով բովանդակ հայությունը Ռուսիո գիրկը ու անոր բախտին հետ ճակատագրորեն կապելով և մեր ազգի բախտը:

Ռուսական օրիենտացիայի հիմը ուրիշ բան չէր, բայց եթէ ծայրահեղ լավատեսություն մը: Ան կենթադրեր, թե Ռուսիա պիտի հաղթէ ամեն պարագայի տակ, ամենակարճ ժամանակի մեջ և առանց ունէ նահանջի: Մակայն բավական էր, որ այդ ենթադրություններէն ունէ մեկը չիրականանար, և ռուսական օրիենտացիան անխուսափելիորեն աղետաբեր հետևանքներ պիտի ունենար մեզի համար, ինչպէս որ եղավ:

Դժբախտաբար, եղերական կուրությամբ մը մեր ազգային ամբողջ եռանդը մենք կսպառենք ու սպառեցինք շահելու համար բարեկամությունը ճիշտ հյուսիսային այն ուժին, որմէ վախ չունեինք: Եվ, ընդհակառակը, կարծես ոչինչ խնայեցինք ծայրահեղ աստիճանի հասցնելու թշնամությունը հարավային այն ուժին հանդէպ, որմէ ամենամեծ վտանգը կսպառնար մեր ազգին, անոր գոյության իսկ:

Մենք արհամարհեցինք ճիշտ այդ ուժը, որուն հետ պարտավոր էինք ամեն ճիգ թափել համաձայնության մը գալու մեր

ժողովրդի գոյությունը ապահովելու համար վատթարագույն պարագային:

Մենք ստորագնահատեցինք անոր գեթ ժամանակավոր հաջողության կարելիությունները և այդ կարելիություններեն բխող մեծագույն վտանգները: Նահանջի և ոչ մեկ գիծ մենք թողուցինք մեր ետև, կուրորեն և ազգովին իննալով Հյուսիսի «քեռիին» գիրկը: Եվ բնականաբար տուժեցինք ու չարաչար տուժեցինք:

Սակայն, ինչ որ ամենեն զարմանալին է այժմ, այն է, որ հակառակ մոտիկ անցյալի այնքան դաժան փորձությանց, մեր քաղաքական ղեկավար տարրերու մեկ որոշ մասը դեռ կշարունակե խարխափիլ ռուսական օրիենտացիայի լաբիրինթոսի մեջ: Տակավին ուժեղ է ամբոխային մղումը դեպի Ռուսիա և ռուսական օրիենտացիան, որ շատերու այքին դեռ քիչ կորսնցուցած կթվի իր նախկին հմայքը: Եվ հատկանշական է, որ այդ հմայքը դեռ գորավոր է ոչ այնքան Հայաստանի ժողովրդին, որքան գաղութներու մեջ, ոչ այնքան մեր աշխատավոր զանգվածներու, որքան հայ բուրժուազիայի ու «բարձր» դասի մեջ:

Ասիկա անտարակույս, մեր ազգի անուղղելի քաղաքական կարճատեսության, ապիկարության և տհասության ամենեն պերճախոս արտահայտություններեն մեկն է, - բան մը, որ չի կրնար մեծագույն մտահոգություն չպատճառել մեզի, քանի որ կսպառնա մղել հայությունը դեպի նոր աղետ մը - նման 1915 թ. մահասարսուռ աղետին:

Քաղաքականությունը մեզ պես տկար ազգի մը, որուն ֆիզիքական գոյությունն իսկ մեծագույն վտանգի ենթակա է, ամեն բանն ավելի և ամեն բանն առաջ պետք է ընթանա այնպիսի ուղիով մը, որ հարթե, դյուրացնե համաձայնությունը մեր գլխավոր թշնամիին հետ: Մինչդեռ ռուսական օրիենտացիան անկարելի կդարձնե ունե տևական իրավախոսություն, ունե լուրջ մերձեցում այդ թշնամի ուժին հետ:

Տարրական ողջմտությունը մեզի կըսե սակայն, որ, եթե հայ ժողովուրդը կուզե ապրիլ Կովկասի մեջ ապահով ու ազատ, պարտավոր է հաշտվիլ Թուրքիո հետ ունե կերպով, - վաղ թե ուշ - ավելի լավ է վաղ, քան ուշ, որպեսզի չափազանց ուշ չլինի: Ուզենք թե չուզենք մենք պետք է օր մը ամենայն լրջությամբ և անկեղծությամբ փնտրենք Թուրքիո հետ հաշտության ճամփան, որ

անխուսափելիորեն պիտի դառնա նաև համագործակցության ճամփա:

Գիտենք, որ անսահման վրեժի զգացումներ են լեռնացած մեր սրտերուն մեջ, և անոնք հարկավ կխանգարեն մեզի այժմ առարկայական հստակությամբ տեսնելու իրերու մերկ պատկերը և ընդգրկելու անոնցմե բխող դաժան անհրաժեշտությունները:

Գիտենք, թե, մեզմե անկախ պատճառներով, մեծագույն արգելքներ են ծառացած մեզի դեմ մեզի համար փրկարար միակ ճամփուն վրա, որ կարող է տանիլ հայ ժողովուրդը դեպի տևական հաշտություն իր դարևոր թշնամիին հետ: Գիտենք, թե որքան մեծ կորով, համբերություն, երկաթե կամք, խիզախ վճռականություն, հարատև նախապատրաստական աշխատանք, անվիատ տոկունություն և ժամանակ է պետք հարթելու համար այդ ճամփան: Եվ սակայն պարտավոր ենք ոչինչ խնայել այդ նպատակին համար, որովհետև հայությունը ուրիշ ելք չունի:

Եվ ոչ թե այսօրվա կամ վաղվա, այլ երկար տարիներու համար է, որ պետք է պայքարինք և համառորեն ու քայլ առ քայլ երթանք այդ ուղղությամբ՝ հայկությունը հարաբերությունները հասցնելու համար գեթ այն բարեկամական հուսատու աստիճանին, որուն վրա կգտնվին այժմ վրաց-թուրքական հարաբերությունները:

Անկասկած, 1921 թ. փետրվարյան ապստամբությունը նոր էջ մը բացավ հայ ազգի նորագույն քաղաքական պատմության մեջ: Ասիկա իսկապես ժողովրդական ըմբոստացում մըն էր Ռուսիո և ռուսական օրիենտացիայի դեմ, որուն հանդեպ երկրի մեր զանգվածը լեցվեր էր աննախընթաց ատելությամբ մը: Իր ազատության և անկախության համար կռվող հայությունը տարերային մղումով մը զենք էր բարձրացուցեր Խորհրդային Ռուսիո դեմ: Եվ դեպքերու բերումով, հակառակ նույնիսկ իր ցանկության, Շ. Յ. Դաշնակցությունն էր անցեր այդ հակաբոլշևիկ կամ հակառուսական շարժման գլուխը:

Բոլշևիկյան կարճատև տիրապետությունը հոգեբանական խորունկ հեղաշրջում մը առաջ բերած էր երկրի հայ ժողովրդական զանգվածի հոգիին մեջ, մեծ վիհ մը բանալով Հայաստանի և Ռուսիո միջև:

Փետրվարյան ապստամբությամբ հայության մեկ խոշոր մասը Շ. Յ. Դաշնակցության հետ միասին մղվեցավ բռնելու այնպիսի դիրքեր, որոնց աննահանջ պաշտպանությունը - տարբեր զենքերով

թեկուզ – անհրաժեշտ է հայ ժողովրդի գոյության և ազատության համար: Վերջապես Փետրվարյան ապստամբությունը ենթարկեց հայությունը քաղաքական այն զանազանավորման, որուն բացակայութենեն այնքան մեծ կորուստներ կրեցինք համաշխարհային պատերազմի ատեն: Հայ ժողովուրդը այլևս առաջվա պես համակված չէ քաղաքական մեկ հակումով – օրինեստացիայով: Արդեն հստակ կերպով կգծվին ու կցցվին անոր ծոցին մեջ երկու հակամարտ, ներհակ ուղղություններ, որոնցմե մեկը կտանի դեպի Խորհրդային Ռուսիա, մյուսը՝ ընդդեմ Խորհրդային Ռուսիո:

Հետագա հայ քաղաքական կյանքի առանցքը անտարակույս պիտի կազմե, ինչպես կկազմե այսօր ալ արդեն, պայքարը հիմնական հարցի մը շուրջը, որ է՝ Խորհրդային Ռուսիո հետ, թե անոր դեմ:

Իրերու պատմական բերումով դերերը որոշապես և ստիպողաբար կբաժնվին մեր քաղաքական կուսակցությանց միջև:

Առաջին դերը գործակցությունն է Խորհրդային Ռուսիո հետ – դեր մը, որ կկապե մեր ժողովրդի բախտը Ռուսիո հետ, կգոհե հայության ազատությունը անոր և կապավինե անոր պաշտպանության: Այդ դերը կոչված են կատարել բոլշևիկները ու անոնց հետևող հայ քաղաքական խմբակցությունները:

Երկրորդ դերը՝ պայքարն է հայ ժողովրդի ազատ և անկախ գոյության համար կովկասյան բախտակից հարևաններու հետ միասին ընդդեմ Խորհրդային Ռուսիո բռնակալության: Պատմական այդ դերը վիճակված է կատարել Հ. Յ. Դաշնակցության, որ իր Վիեննայի վերջին քոնֆերանսի գծած քաղաքականությամբ որոշապես կընտրե հայկական անկախ ուղի մը:

Բոլշևիկները և անոնց ետևեն քարշ եկող Հնչակյաններն ու Ռամկավարները կքարոզեն անվերապահ ու անպայման համակերպություն, անձնատվություն Խորհրդային Ռուսիո լուծին և փաստորեն կիրաժարին մեր ազգային քաղաքական իդեալներեն, որոնց իրականացման համար հայությունը տասնյակ տարիներ է պայքարեր և հարյուր հազարավոր զոհեր է տվեր: Հ. Յ. Դաշնակցությունը, ընդհակառակը, կենսապես անհրաժեշտ կգտնե անփաստ ու աննահանջ կերպով շարունակել մեր ազատագրական պայքարը հանուն Անկախ Հայաստանի: Նետվիլ Խորհրդային Ռուսիո գիրկը կնշանակե նվիրագործել ստրկության այն շղթաները, որոնք

ձգված են հայ ժողովրդի վզին, կնշանակե նաև վտանգել հայկական տարրի ֆիզիքական գոյությունը Կովկասի մեջ:

Ոչխարային խելակորույս մղում մը՝ կնկատվի, մասնավորապես Լոգանի անփառունակ քոնֆերանսեն հետո, դադրեցնելու ամեն քաղաքական պայքար և հայության բախտը ամբողջովին հանձնելու Խորհրդային Ռուսիո ձեռքը: Ստրուկներու հոգեբանությունն, մերոնք՝ ապստամբական անհաջողութենե հուսահատած՝ անձնատուր կըլլան նորեն իրենց տերերուն: Շատ քիչերը սակայն հստակորեն կըմբռնեն, որ բացարձակ վնասե գատ հայությունը ոչ մեկ շահ կրնա ունենալ իր հավաքական անձնատվութենեն Խորհրդային Ռուսիո: Թեև արևի լույսի պես պարզ է, որ, եթե մեր ամբողջ ազգովն իսկ մոլեռանդ բոլշևիկներ դառնանք, ոչ մեկ բարիք պիտի ավելնա Հայաստանի և հայ ժողովրդի ներկա վիճակի վրա: Մինչդեռ նույնպես արևի լույսի պես պարզ է, որ մեր այդ ընթացքով մենք մեծապես պիտի վտանգած ըլլանք մեր ազգի մերձավոր ապագան: Որովհետև ով կրնա երաշխավորել, թե բոլշևիկները Ռուսիո և մասնավորապես Կովկասի մեջ հարատև կյանք մը ունին: Ով կրնա երաշխավորել, թե Մերձավոր Արևելքի մեջ նոր բարդություններ չպիտի ծագին այլևս և մեր անմիջական հարևանները փորձեր չպիտի ընեն, թեկուզ ժամանակավոր հաջողությամբ, ազատագրվելու Խորհրդային Ռուսիո լուծեն: Ով կրնա վստահացնել, թե Խորհրդային իշխանությունը ոչ մեկ պարագայի տակ պիտի քաշվի Հայաստանի սահմաններեն և չպիտի թողու հայկական զանգվածը գեթ ժամանակավորապես բոլորովին մինակ իր հարևաններուն դիմաց: Ով կրնա, վերջապես, երաշխավորել, թե Խորհրդային Ռուսիա ամեն գնով անընդհատ և մինչև վերջը պիտի պաշտպանե մեր ժողովուրդը տաճկական նոր արշավանքի մը պարագային, որ շատ հնարավոր է և հավանական նույնիսկ մոտիկ ապագային:

Ահա թե ինչու հայությունը կենսական պետք ունի ինքզինքը ապահովագրելու այն բարեբախտ թե դժբախտ պարագայի համար, երբ ուժերը դասավորվին և դեպքերը ընթանան ոչ ի նպաստ Խորհրդային Ռուսիո: Միմիայն հակաբոլշևիկյան օրինեստացիա մը կրնա տալ մեր ազգին այդպիսի ապահովագրություն մը: Որովհետև միմիայն այդ պարագային է, որ մենք կրնանք ունենալ եթե ոչ մեզի հետ, գեթ ոչ մեզի դեմ հակաբոլշևիկյան բոլոր ուժերը, սկսած

հակաբուլշիկ ռուս տարրերն մինչև մեր կովկասյան հարևաններն և նույնիսկ թուրքերը:


Ահա թե ինչո՞ւ ամբողջ հայ ազգը կենսապես շահագրգռված է, որ Հ. Յ. Դաշնակցությունը չլքե իր ներկա հակաբուլշիկյան դիրքերը, ամբոխային հոգեբանության չենթարկվի և ինքն ալ չերթա միանալու բուլշիկյան շարքերուն ու անոնց հետևորդներուն, որոնք առանց Դաշնակցության ալ կանեն արդեն այն, ինչ որ ընդունակ են ընել հայ ժողովրդի համար ներկա պայմաններու մեջ:

Հ. Յ. Դաշնակցությունը դավաճանած պիտի ըլլա իր պատմական առաքելության և հայ ազգի գերագույն շահերուն, եթե անհողողող կերպով չշարունակե պաշտպանել իր ներկա դիրքերը և չերթա իր սեփական ճամփով, որ բուրբովին տարբեր է բուլշիկներու գացած ճամփայեն:

Անոնք, որ չեն կորսնցուցած իրենց հավատը հայ ժողովրդի վերածնության հանդեպ. անոնք, որ փոքրոգիտրեն չեն ուզեր վայր դնել իրենց գեները հայ ազգի ազատության համար մղվող նվիրական պայքարի մեջ. անոնք, որ չեն հուսահատված ու ընկճված մեր ժամանակավոր անհաջողություններեն և իրերու անցողական աննպաստ դասավորումեն. անոնք, որ ողորմելի ստրուկներու պես չեն ուզեր խոնարհվիլ բռնության առջև և հզորներու ոտքին տակ նետել մեր ազգային սրբազան իդեալները. անոնք, որ ներկա մոայլ օրերու մշուշի մեջեն կընդնշմարեն լուսավոր ապագայի մը հուսատու ճառագայթները. անոնք վերջապես, որ իրենց հոգիներու մեջ վառ կպահեն Անկախ Հայաստանի պաշտելի գաղափարը,— պետք է շարունակեն Հ. Յ. Դաշնակցության դրոշակի շուրջը համախմբված անձևվեր ու անտեղիտալի ազատարար պայքարը, երկաթե կամքով նախապատրաստելու համար վաղվան Հաղթանակը, որ պիտի գա անպայման, իրերու և դեպքերու անխուսափելի գործությամբ...

Այդ խորունկ հավատով է, որ կփակենք այս էջերը:

«Հայրենիք» (Բոստոն)
1922 նոյեմբեր-1923 հոկտեմբեր



Լևոն Ղ. Շիրինյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ
Քաղաքական հետազոտությունների բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՓՈՒՄՆԵՐՈՒՄ
(XX-XXI դդ.)

Levon Shirinyan
Armenia in the Measurement of Legal and Political Realities
(XX-XXI centuries)

Левон Ширинян
Армения в измерении правовых и политических реалий
(XX-XXI вв.)

*Խմբագիր՝ Քոչարյան Տ. Տ., քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գրախոսներ՝ Մուրիսյան Հ. Հ., քաղաքական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Օրդուխանյան Է. Հ., քաղաքական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Տպագրություն՝ օֆսեթ
Չափս՝ 60x84 1/16
Թուղթը՝ 70գր. օֆսեթ
Ծավալը՝ 28 տպ. մամուլ

Տպագրված է՝ «ԼԻՈՆ ՓՐԻՆԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ տպագրատանը
Էլ. փոստ՝ aefcenter@gmail.com